891.99(6)-68
1121
Շ 30



ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ ԵՐԿԵՐԸ

891.99
Շ 30

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1896-1904

1998
1784
Ա II 27105

ՎԵՐՃԻՆ
ԴԱՐՁ
ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ
ԵՍԻ ՄԱՐԴԸ
ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ
ՃԱՄՐՈՒՆ ՎՐԱՑ

ՊԷՅՐՈՒԹ
ՏՊԱՐԱՆ ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԻ
1946

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՒԹԱՄՆԵՑԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԵՐԹԻՆ

Վէպ

Առաջին զրուխիւնը՝ Լայպցիկ 1896-ին
եւ առաջին տպագրուխիւնը՝ Թիֆլիս «Մուրճի»-ի մէջ

Վերջին

Ը

— Մէկ խօսքով չունինք. ո՛չ մեր գրականութեան, ո՛չ մեր հանրային գործերուն մէջ ժամանակակից զարգացում ունեցող մարդ չունինք,— եզրակացուց Արշակ։

Ամիսին վրայ չզուտ չարժուեմ մը ըրաւ, թէև յինից պատչգամի վանդակին ու հայեացքը սահեցուց խօսակցի դէմքէն, որ հազիւ կը նշմարուէր պատչգամը ղրկող բազմաներու թանձր առուերին մէջէն։

Տիրան աչինչ չառարկեց։ Անշարժ նստած էր՝ աչքերը սևեռած Մարմարայի ծալերուն, որուն վրայ լուսինը կէսը խաժուած, կէսը մնացած դունչովը կը յօրանջէր։

Եւ վայրկեան մը լռութիւն։ Միայն ծովն էր, որ վարը՝ պարտէզի չրմանքի աւազուտին վրայ իր զուարթ ու օրօրուն խչրտուքովը անվերջ կը չափէր։

Քանըհինգը անց, միջահասակ, խարտեաշ մազերով, մաքուր ածիլուած այտերով, չզուտ երիտասարդ մըն էր խօսակը։

Անար պէս չզային, բայց կարծես քիչ մը աւելի գեղատես, քիչ մը աւելի չէկ ու գանգուր երկար մազերով ազգայ մըն էր Տիրանը, որ լուռ ականջ կը դնէր ընկերոջ ճառին՝ պէտք եղած մէջէն առատաստաւոր մը առաւերագծերուն հետևելով. առատաստաւոր մը, որ ո՛չ չատ հեռուն լուսնի ցոլացումներուն վրայէն հանգարտ կը սահէր։

— Ի՞նչ կարելի է պահանջել այդ մարդիկներէն.— չարունակեց Արշակ իր խօսքին թելը։ - Բաւական է անգամ մը պատկերացընես, թէ որն է անոնց մտաւոր պաչարը։ Արտաստմանեան թերթի մը

յօդուածէն քաղուած դիտողութիւն մը, եւրոպական դրախօսի մը մէկ թռուցիկ եզրակացութիւնը, ֆրանսական վէպի մը կամ բոլոր մը դատողութիւններէն սեփականած տեսակէտ մը ընկերական այս ու այն հարցի վրայ. ահա բոլորը և ան ալ ամենէն լաւ պարագայնին. պատահական ու ցան-ցիր կրթութիւն մը։

— Սիրելի՛ս, կարելի՞ է նիւթերնիս փոխենք քիչ մը.— ընդհատեց վերջապէս Տիրան ժպտուն դժգոհանքով մը։— Այս հիանալի բնութեան դիմաց թողնենք, որ քիչ մըն ալ զգայարանքները խօսին. նայէ՛ ինչ սքանչելի դիշեր է. երկի՛նքը, ծո՛վը, օ՛դը։

— Տեսա՞ր դուն այս աչխարհիս արդարութիւնը. ամբողջ օրը տառապեցնելէդ ու վէպերէդ ինծի չունչ առնել չես տուեր. հիմա ալ երեր ես ինծի կը մեզադրես։

— Սակայն, հոգի՛ս, ընթրիքէն ամիչջապէս եաքը մարդու բաւարարքը կը խանգարի այդ դիտական դժուարամարս պահանջներէն։

— Ես՞ղ բանաստեղծիս տառարքը։

Եւ երկուքն ալ լռեցին։

Օգոստոսի բարակ հովիկը ծովուն վրայէն արագ վազեց, չաւպով մտաւ թաղնուեցաւ պատչգամի սալարմներուն գիրկը։ Եւ անոր բերած չարաճճի լուրերէն ուշադրամիա իրարանցում մը ինկաւ տերևներու խառնիճան մէջ ու ծածուկ փսփսուք մը։

Տիրան յափշտակուած ականջ կը դնէր այդ զուարթ փսփսուքին և աչքերը գացած տերևներու բաժին խմաստը բմբռնելու ճիգեր կ'ընէր, երբ ան վարի յարկէն լսուող աղմուկ մը իր աչքերը մէկէն բանալու ստիպեց։

Ու նոյն վարկեանին մութ նախասենեակէն գնդակի նման պատչգամ գլորուեցաւ Տիրանի փոքրիկ, գունդիկ-կլորիկ եղբայրը, որ նոր սանդուղներէն վեր էր վազեր չունչը կտրած.

— Բժիչկներ եկան, եղբայրի՛կ։

Ուրախ չարժումով մը Տիրան իսկոյն վեր թռաւ։

— Ո՞վ են.— հարցուց Արչակ անտարբեր։

— Բժիչկ Պապիկեանները։ Բժիչկը անչուչտ տեսած պիտի ըլլաս. քալէ՛ վար, քեզի ծանօթացնեմ ընտանիքին։

— Չէ՛. ես տուն պիտի երթամ. ամբողջ օրը հոս էի. մանր մունր գրելու բաներ ունիմ, երթամ այս գիչեր կարգի բերեմ։ Յետտեսութի՛ւն։

— Յիմարութի՛ւն։ Տեղդ կեցի՛ր։ Մէկ երկու ժամ ուրախ ժամանակ կ'անցընենք. բժիչկը հետաքրքիր մարդ է։

— Դուցէ՛. սէրէլի ճիչդը տարօրինակ, ինչպէս լսած եմ։

— Քոյրն ալ կրթուած աղչիկ։

— Գիտե՛մ, այդ Պոլսի կրթուած աղչիկներն ալ գիտեմ։ Յետտեսութիւն։

Տիրան կարծես վիրաւորուեցաւ ընկերոջ այդ արհամարհոտ վարմունքէն։

— Բայց կը սխալիս. քու դիտցածներէդ չէ.— առարկեց լրջութեամբ։

— Վա՛զ անցիր, եղբա՛յր։

— Ա՛յ, միշտ այդպէս ես դուն.— տաքցաւ Տիրան.— ուրիշի խօսքին բնաւ կարեւորութիւն չես տար։ Եկո՛ւր, աչքերովդ տե՛ս, որ հաւատաս։

— Ցո՛ւ։

— Արշա՛կ, ճչմարիտ կը վշտանամ, եթէ երթաս։

— Խե՛նթ է։

— Ո՛չ. այսօր ալ իմ խօսքս պիտի ըլլայ։

Արշակ զարմացած ու ժպտուն ակընթարթ մը նայեցաւ լուռ ընկերոջը երեսին և ըսաւ.

— Աղէ՛կ. այսօր ալ քու խօսքդ թող ըլլայ։

* * *

Տիրանի ծնողքը հազիւ հիւրերը դահլիճն էին առաջնորդեր ու դեռ նոր էին նստեր, որ երկու ընկերները հասան դահլիճի դրան սեմին։

— Ահա՛ և մեր բանաստեղծը.— բացականչեց բժիշկը խոշորաձայն. և մեծ ու ոսկի ակնոցներուն մէջէն հայեացքը դամեց քովի անծանօթ դէմքին։

Իր ձայնին պէս ինքն ալ հաստ մարդ մըն էր, կարծես իրեւ ծագր իր Պզտիկեան անունին։

Տիրան ծռեցաւ և լուռ ընդհանուր բարեւ մը տուաւ. չակուհեցաւ և նոր միայն խօսք առաւ.

— Թոյլ տուէք ծանօթացընեմ ձեզի ընկերս՝ Արշակ Սմբատեան, որ գերմանական համալսարաններէն չափչփուէ յոգնած, եկեր է այս ամառ հոս իր խիստ քննադատութիւններովը մեր համբերութիւնը չափելու. առաջընէ՛ դուշացընեմ։

— Հետաքրքիր է.— խնդաց բժիշկի բամբ ձայնը։

— Տիկին, օրիորդ և բժիշկ Պզտիկեաններ.— չարունակեց Տիրան ներկայացման արարողութիւնը։

— Ուրախ եմ ծանօթանալուս.— ըսաւ Արշակ թեթեւ խոնարհութեամբ մը։

— Ահա՛ ասիկա այն օրիորդ վերժինն է, որու մասին քիչ մը առաջ քեզի այնչափ դէշ բաներ պատմեցի.— դիմեց Տիրան ընկերոջը։

— Կ'ներեսակայեմ ձեր չաղակրտանալը.— պատասխանեց օրիորդը թեթեւ ժպիտով մը։

Փոքր, նուրբ, արձանի մը համաչափութեամբ կերտուած, ճկուն

ու տակուն կերպարանք մըն էր վերժին։ Մինչև մէջքը հասնող չագանակի մազերը առանց հիւսքի, միայն ծոծրակին մօտիկ ժապաւէնով մը օգակուած, ազատ փռուած էին թիկունքին։ Սուր ծնօտը, փոքրիկ կծկուած բերանը իր չարժուն ու խելացի աչքերուն հետ դէմքին արտայայտիչ ու քննող շնչա մը կու տային։

Ամենքը նստեցան։ Հաստակառուցուածքը մէկ կողմ, իսկ երիտասարդները անհանգիստ մէջտեղը դրուած ձուաձև սեղանին շուրջը, որուն վրայ առաստաղէն կախուած լամպը ուժգին լոյս կը թափէր։

— Հիմա ալ ես հաճոյախօսութիւններ ունիմ ձեզի ընելու.— ըսաւ օրիորդը Տիրանի դէմքին ժպտելով.— ձեր ազատ վերջին պատկերը չատ ազուր էր։

— Մանաւանդ այն կտորը, ուր ձեր խելօք դիւզացին փիլիսոփայութիւն կ'ընէ. չատ ինքնատիպ է.— մէջ ինկաւ բժիշկը։

— Ինչպէ՞ս, պարո՛ն բժիշկ. ուրեմն իմ պատկերս կարդալու այդ մեծ բացառութի՞ւնն էք ըրեր. դո՛ւք, որ ինչպէս կ'ըսէիք, ձեր ախտաբանութեան երեք հատորներէն զատ երեք տարիէ իվեր ձեռքը ուրիշ գիրք առած չունիք։

— Չէ՛. չիտակը խօսելով ես անձամբ կարդացած չեմ ձեր գրածը. բայց երէկ իրիկուն սեղանին վրայ վերժինը այնքան խօսեցաւ այդ մասին, որ ակամայ կարդացած եղայ։

Արշակ խնդաց, իսկ Տիրան անհամբեր զգացումի ծամածռութիւն մը ըրաւ, բայց քովընտի երկար նայուածք մը դամեց աղջկայ դէմքին. չոյող ու փափուկ նայուածք մը։

Մինչ աղջիկը դարձաւ Արշակին.

— Իսկ դո՛ւք, պարո՛ն, հապա պատմեցէք մեզի ձեր չրջած, տեսած տեղերէն, եւրոպական կեանքէն։ Եղբայրս չատ ժլատ է այդ կողմէն և ընդհակառակը ինծի ալ այնպէ՛ս կը հետաքրքրէ այդ բոլորը։

— Ի՞նչ կ'ուզէք որ պատմեմ. պատմելու մանաւանդ բան մը չկայ։

— Ջարմա՛նք. ճիշդ եղբօրս պատասխանը։

Բժիշկը հեգնոտ ժպիտով մը ծխախոտի սմբողչ սմպ մը արձակեց չրմունքներէն։

— Ա՛յ. օրինակ, պատմէ.— մէջ ինկաւ Տիրան.— արդեօք հո՞ն ալ աղջիկները մարդու հոգին կը հանեն մինչև բան մը երգել յանձն առնեն, թէ՞ միայն հոս է այդպէս։

— Լռեցէ՛ք.— ձայնը երկընցուց վերժին ձեռքը թեթև մը սեղանին զարնելով Տիրանին առջևը. և նորէն խօսքը ուղղեց Արշակին.— հետաքրքիր է ինծի համար ձեր տպաւորութիւնը եւրոպացի կանանց մասին։ Մարդ ամեն կողմ կը լսէ եւրոպացի կնոջ մտաւոր ու հոգեկան բարձրութեան վրայ խօսուիլը, թէև որոշ գաղափար մը կազմել ես դեռ չեմ կրցած գլխուս մէջ։

— Եւրոպացի կրթուած կինն ալ նո՛յն մեր հասարակութեան մէջ ձեր ակռած ու «զարգացած» կոչուող արարածն է, ձեզի չատ լաւ ծանօթ. դուք քանի մը մանր անգլական արտաքին տարբերութիւններ։

— Նորէ՞ն քննադատութիւն։ Ես ձեզի չըսի՛։— դիմից Տիրան միւռնեռուն։

— Մի՛ ընդհատէք։— բացականչեց Վերժին հրամայական կատակի չեչտով մը։

Տիրան ընդոստ չարժուելով մը ձեռքը չրթունքներուն տարաւ, խնդաց ու լռեց։

— Հապա՛ այդ դրագիտուհիները, վարչական կիները, ուսանողուհիները, կանանց կոնկրէսները, որոնց մասին մեր թերթերուն մէջ յաճախ կը գրուի։

— Հեռուէն, ինչպէս յայտնի է, թմբուկին ձայնը քաղցր կու գայ։— նկատեց պատասխանը.— մեր մէջ գովեստն ու պարսաւը ինքնին արդէն աժան է. մասնաւոր խնդճութեան ծանօթ ախտանիշներէն մէկը։

— Երևի այդ ճանապարհով մեր կիներուն դրդիչ օրինակ մը տալ կ'ուզեն.— նկատեց բժիշկը ճակատ կնճռանքներն ու յօնքերը խաղցընելով։

Դիմացինի կարծիքը կը փորձէր։

— Կարծեմ չատ աւելի օգտակար է ու կրթիչ ցոյց տալ երևոյթի մը իրական վիճակը ու պատմական պատճառները, քան հրապարակ դնել անճիշդ չափազանցումներ։ Իրազեկութիւնը գոնէ այն է, որ իրապէս դեր խաղացող ու հանրային կամ գրական կեանքի մէջ լրջօրէն բանի պէտք եղող կինը Եւրոպայի մէջ ալ մասի վրայ համբերելիք բացառութիւն մըն է։

— Ուրեմն հա՞ն ալ կնոջ կեանքը այսպէս կաչկանդուած է ու ապարդիւն, ինչպէս հոս. ևզրակացուց աղջիկը տարօրինակ ախուր չեչտով մը ու մոլորուն խօսուածքով։

Արչակ քննող ուչադրութեամբ մը սկսաւ դիտել իր աչքերուն օգակուած աղջկան հայեացքը։ Վերժին բնազդօրէն աչքերը փախցուց։

— Կը ցաւիմ, օրիո՛րդ, որ պատասխանս ձեր ուզածը չէր։

Տիրան, որ մօր կանչով վայրկեան մը սենեակէն ելած էր, նորս մտաւ և դեռ սեմէն դիմից օրիորդին.

— Է՛, այսօր մեզի քան մը պիտի չերգէ՞ք։

— Թողէ՛ք, խնդրեմ, հետաքրքիր խօսակցութեան վրայ ենք։

— Դիտե՛մ, գիտե՛մ, բայց Արչակին որ ձգեմ՝ քար քարի վրայ չի մնար մեր ազգային ու հանրային չէնքէն. պէտք է արգիլել այդ ասերուսը ազուսր երգով մը։

— Կարծեմ, օրիո՛րդ ազատում չունիք.— խնդաց Արչակ.— պէտք է երգէք։

Աղջիկը դեռ կը վարանէր։

— Ելէ՛ք։ Ես ալ ջութակով ձեզի կ՚ընկերակցիմ։— կրկնեց Տիրան տեսակ մը պահանջկոտ և ընտանի խնդրանքով։

Ջութակի քանի մը նախնական յարդարումներէ ու երգի ընտրութեան վրայ փոքրիկ վէճէ մը եաքը՝ սկսան։

Տիրան դործիքը փոքրիկ սուր մօրուքին տակ սեղմած՝ կը նուագէր լարումով. մազերը եկեր թափուեր էին ճակատին, իսկ աչքերը յառած էին չէշտ ձայնատուփին։

Վերժին քայլ մը անկէ հեռու, չիփ-չիտակ կեցած ու ձեռքերը ետին կապած՝ կ՚երգէր. կայծկլտող աչքերը անհանդարտ ներկայ եղոդներուն վրայ պտտցնելով։

Արշակ գլուխը յենած ձեռքին, արմուկն ալ սեղանին, անթարթ կը նայէր անոր։

«Վա՜ս աղջիկ է»։ կը կրկնէր մտովի ամեն անգամ, որ անոր գրաւիչ ձայնին ալիքներուն մէջէն աղջկան վառ նայուածքը իր դէմքին վրայէն կը սահէր։

* * *

Արշակ ու Տիրան հին ընկերներ էին, դպրոցի ընկերներ։ Իրարու հանդիպեցան Ղալաթիա, կեդրոնական վարժարանը։

Նոյն տարիքի պատանիներ, նոյն դասարանէն, երկուքն ալ բան մը դառնալու, գործ մը տեսնելու տենչովը բռընկած՝ չուռով յարեցան իրարու և մտերմացան։

Այդ մտերմութիւնը քանի մը տարուան մէջ սկսաւ ճաճիլ դասարանէ դասարան՝ հակառակ իրենց մշտական վէճերուն։ Արշակ աւելի ձեռներէց ու գործունեայ՝ չարունակ կը ծաղրէր Տիրանի երազկոտ անհոգութիւնը ամեն բանի մէջ. Տիրան աւելի դիւրազգաց ու ինքնամփոփ՝ միշտ կը հեգնէր ընկերոջը կարուկ վերաբերումը և ամեն գործի խառնուիլը։

Հազիւ ընչացքը սկսեր էր վերին չրջունքին վրայ բծաւորուիլ, երկուքին ալ, որ իրարմէ բաժնուեցան։

Արշակի մօրեղբայրը Վիէննա կ՚ապրէր գործով։ Տղան վարժարանի բարձր կարգերը աւարտելուն չհամբերեց. գնաց անոր քովը։ Հոն տարուան մը չափ լեզուին վարժուելէն ու քիչ մըն ալ պատրաստուելէն եաքը՝ անցաւ ուղղակի համալսարան, առանց ականջ դնելու իր ազգականի յորդորներուն, որ տգան իր առևտրական գործերուն մէջ առնել կ՚ուզէր։

Ընտրեց ընկերական գիտութիւնները. կ՚ուզէր վերջը այն տեսակ գործի մը ձեռք զարնել, որ անմիջապէս մեր հասարակութեան վրայ ազդել կարողանայ։

Երկու ամսուն եկաւ Պալիս իր մօրն ու քրոջը հետ ըլլալու. և ասկէ հասուն, ասկէ դիտակից կերպով սկսաւ նայիլ չըշապատող կեանքին վրայ և ասկէ ալ ատքցաւ անպատճառ կարևոր հանրային դեր մը խաղալու իր ձգտումը։

Հիմա ալ նորէն եկած էր Պալիս մօրը պահանջով հոկտեմբերին նորէն վերադառնալու համար Վիէննա, վերջին անգամ. դեռ երեք կիսամեակի չափ աշխատանք ունէր ասարտական քննութիւններուն ներկայանալու համար։

Իսկ Տիրան մնաց Պալիս իր վարժարանը։ Ու քանի վերի կարգերը բարձրանալ սկսաւ՝ այնքան ասկէ չհետաքրքրուեցաւ մէջը դրականութեան սէրը։ Եւրոպական գրեթէ բոլոր արժէքաւոր գրական երկերը կարդացած էր արդէն ու կը կարդար, մանաւանդ ֆրանսականը. և բո՛ւն երկերը և անոնց քննադատութիւնները ու վերլուծումները։

Միւս կողմէն ալ ինքը գրիչ չարժելու սկսաւ. և փորձերը յաջողեցան։ Ընկերներու դրդումով դեռ դպրոցէն քանի մը կտոր տուաւ տպելու. մամուլի մէջ գովեստի ակնարկներ եղան. և այդ օրէն դարձաւ ինքն ալ գրագէտ։

Եւ ընկերոջը ուսանողական վիճակէն ասկէ ևս դրդուած, որուն հետ չարաճնակ թղթակցութեան մէջ էր, վճռեց ինքն ալ երթալ Եւրոպա մէկ-երկու տարի բարձրագոյն գրական դաստիարակութիւններուն հետևելու։ Բայց իր հայրը տղու գաղափարով չատ ոգևորուած չէր և հարկ եղած ծախքերուն դիմանալու համար ալ բաւական ուժ չունէր։ Տիրան փորձեց հետևիլն քիչ մը ազգական եղող մէկ-երկու հարուստներէ փոխ առնել, արդիւնք չտուաւ։ Ալրիշներէն յոյսը կտրած՝ վճռեց ինքն իր աշխատանքովը հասնի իր նպատակին։ Որչնչոց մէկ-երկու տարի լեզուի ու գրականութեան դասեր տայ և սակ խնայէ։ վատահ էր, որ պակասը հայրը կերպ մը կը գտնէր։

Այդպէս ալ բրաւ։ Այս երկրորդ տարին էր, որ Պալսի քանի մը դպրոցներուն մէջ գրականութեան ու աշխարհաբարի դասեր կ'ասանդէր. ունէր նոյնպէս մէկ-երկու մասնաւոր դասեր. և յոյս ունէր տարի մը վերջը աշնան փարիզ ըլլալու։

Միևնոյն տաին Պալսի գրական հրապարակին վրայ սրոշ դիրք մը գրաւած էր արդէն։ Անընդհատ կը տպուէին իր փոքրիկ պատկերները. առանաւորները, իր կարճ վիպակները ընթացիկ չարաթաթերթերուն մէջ և ընդհանրապէս ախորժով կը կարդացուէին։

* * *

Վերջին տարին Տիրանի ծնողքը փոխադրուեր էին Մաքր-գիւղ, ուր էր Արշակենց տունը դեռ տղու մանկութենէն։ Եւ հետ էր, որ

Տիրան ճանչցած էր Պզտիկեան ընտանիքը և առաջին օրէն վերժինը գրաւած էր անոր մանաւանդ ուշադրութիւնը։

Վերժինի ու Տիրանի ծնողները սկսան իրարու հետ յարաբերութեան մտնել. ծուռ ու մուռ դիմով ազգականութիւն մը կար մէջերնին. իսկ Տիրան առանձին չատ աւելի յաճախ կ'երթար անոնց տունը, մանաւանդ վերջին առիթներուն։

Վերժին արդէն առաջուց լսած էր Տիրանի մասին և երիտասարդին կը վերաբերուէր մեծ հետաքրքրութեամբ ու համակրանքով։ Ուշադիր կերպով կը հետեւէր ընդհանրապէս մեր ընթացիկ գրականութեան և մանաւանդ կերպով ալ Տիրանի գրածներուն։ Տղուն հոմար չափազանց չողոքորդիչ էր ազջկան այդ բացայայտ հետաքրքրութիւնը դէպի ինքը և դէպի իր մտքին արտադրութիւնները։ Վերջապէս Վերժին սիրուն ալ էր և գրաւիչ իրեւ անձ։

Տիրան գիտակից էր այս բոլորին և կ'ըզգար, որ սկսած էր տարուիլ։ Իր «բանաստեղծի» հոգին տակաւին չատ կառուլէն ծարաւ ունէր ու որոնում։ Եւ քանի-քանի անգամներ ունեցեր էր հոգւոյն միամիտ խոր խոհրհոհրդումներ։ Վերջերս միայն կարծես աւելի լուրջ ըզգացում մը ունեցած էր. և տիկին իր աշակերտուհիներէն մէկն էր. ընդունակ ու տպաւոր ազջիկ մը խոչոր-սեւ աչքերով ու Տիրանի դասերէն անհուն ոգեւորուած և դասերէն աւելի հաւանօրէն Տիրանով ոգեւորուած։ Տղան կը տեսնէր. կը տեսնէր նաև իր կրծքին տակ բարձրացող խլրտումը։ Սակայն ազջիկը չատկարծ հաներ էին զգրոյցէն և ձախորդ վէպը մէկ անգամէն պատռելեր էր։

Եւ երբ հիմա ալ նշմարեց, որ վերժինը սկսած էր բռնել իր սրտին մէջ բաց մնացած զգացումները, որոնք չափչտակուած ըլլալու խոր պահանջովը կ'եռային, Տիրան ակամայ հարց կու տար իրեն.

«Արդեօք ան ալ նախորդներէն չէ՞. հովի անուշ չունչ մը գարնան տապ օրին. կը չոյէ ճակատդ ու կ'անցնի»։

Ու իր տարակոյսները, չոյսերը, վարանքն ու տենչանքը և վերժինի հոգին այնպէս, ինչպէս ինքը կ'ըմբռնէր, այդ բոլորը ան երգած էր իր առանուաւորներուն մէջ։ Բայց հպարտ ու ինքնամփոփ, դէռ ոչ մէկ ակնարկով զգալ չէր տուած ազջկան իր հոգիին մէջ գարձածը։ Մանաւանդ ազջիկն ալ իր կողմէն իր բոլոր մաերմութեան հետ ինքզինքը միշտ պարզ ու տատարքեր կը պահէր։ Ազգականի մը պէս։

«Ան ալ ինծի պէս է. և՛ ինքն իր մէջ և՛ հպարտ». կը մտածէր Տիրան եսը չոյող բացատրութեամբ մը. ու լուռ կ'ըսպասէր, թէ այս բոլորը ո՞ւր պիտի յանգի։

Ահա՛ այդ միջոցին էր, որ չաբաթ մը առաջ, առանց նախապէս ոչինչ գրկելու, ամրան զուարթ առաւօտ մը հնարամտու Արշակ յանկարծ Տիրանի սենեակը ու կարօտի համբոյրներով հետաւեցաւ ընկերոջը վիզը։

Ա 4710
1308

Իրիկուն էր։ Մաքր-գիւղի կայարանին առջև բազմաթիւն կար։ Ոմանք անհամբեր չարաւնակ գնացքի գալուն ուղղութեանը կը նայէին, միւսները կ'երթևեկէին զբօսնոզի անտարբերութեամբ։

Աղմկող խումբերէն քանի մը քայլ անդին, հարթակի ճիշդ եզերքին անփոյթ դիրքով մը կեցած էր վերժին աւանդին և ձեռքի՝ ծաի ճիւղէ մը տաչուտած՝ բարակ գաւազանին ծայրովը գետինը փռուած աւազը կը խառնէր դանդաղ չարժուածով։

Յարգէ գլխարկին լայն եզերքը արեւի հեռուհեռէ ժպտուող ճառագայթներէն կը հովանաւորէր անոր դէմքը։ Եւ քրեմ բարակ չրջազգեստին վրայէն մուխ-կապոյտ թեթև ժաքեթ մը անոր մէջքն ու կուրծքը սեղմ կը դրկէր՝ զովացող օդի իրիկուան քմահաճոյքներէն պաշտպարելով։

Գնացքին սպյը յանկարծ լսուեցաւ, որ օդին հանդարտութիւնը սուր զարկով մը ծակեց։ Ու քիչ մը հեռու ձիգ փռուեցաւ ճերմակ մուխին մէջէմէջ օգակուռդ ոլորումը, կծիկէն քակուած թելի կտորի մը պէս։

Վերժին բնազդօրէն քայլ մը եա քաչուեցաւ. և կառախումբը յաղթական մօտեցաւ ու թափով կեցաւ։ Աղջիկը որոնող հայեացքով վակոններէն դուրս թափուող բազմութիւնը կը դիտէր ուշագիր, երբ դէմ դէմի գտնուեցաւ վակոնէն իջնող պարոն Արշակին։

Ձեռք տուին իրարու և Արշակ գարձաւ իր եաւէն վակոնէն նոր իջած աղջկան.

— Մանո՛կ, օրիորդի հետ ծանօթ չես կարծեմ։

Պաչօնապէս ո՛չ.— եղաւ պատասխանը։

Տգան իր քոյրն ու վերժինը իրար ներկայացուց։

— Շատոնց կը յանկայի ձեզի ծանօթանամ.— ըսաւ վերժին նոր բարեկամուհիին ձեռքը երկար ու ամուր սեղմելով։

— Ինչո՞վ եմ արժանացեր այդ պատուին։

— Ձեր ընտանիքի մասին մեր ծանօթներուս չրջանին մէջ շատ է խօսք գարձած և մանաւանդ պատ ձեր մասին։ Պարզ խօսելով միկին և օրիորդ քննադատներուն կարծիքը այնքան ալ նպաստաւոր չէ ձեր վերաբերմամբ։ Աղջիկ մը, որ չարունակ մինակը մինչև Զալթիա կ'անցնի իր մանաւանդ պատկերը ստանալու, որ իր պարտաճանաչ հիւրերու կանոնաւոր այցելութիւնները չերմռանդութեամբ չի վերադարձներ, որ իր···

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԽՈՒՏՅԱՆ
ԾՈՎԻՆՅԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Աղօսքը կիսաա ձգեց, խնդաց ու ձեռքը կրկին անգամ անոր երկարելով՝ կցեց լրջօրէն.

— Մենք լաւ բարեկամուհիներ կ'ըլլանք, չէ՞։

Եւ յանկարծ մոռցած բան մը յիշողի ընդոստ չարժումով դարձաւ դէպի վակոնները.

— Եղբայրս իրիկուններըը սովորաբար այս գնացքով կու գայ. եկայ դիմաւորելու։

Երեքն ալ պահ մը սպասեցին, մինչև աղջիկը համոզուեցաւ, որ վակոններէն այլևս իջնող չկար։

— Եթէ Թոյլ տաք՝ այս իրիկուն ալ մենք ձեզի կ'ընկերանանք մինչև տուն.— առաջարկեց Արշակ։

— Ուրախութեամբ։

Եւ տղան երկուքին մէջը մտած՝ ևման կայտառնէին։

Մանրիկ տասնըվեցի մօտիկ աղջիկ մըն էր։ Մէկ նայուածք մը հերիք էր անոր դէմքին վրայ եղբօրը արձուռի քիմն ու խոհուն աչքերը ճանչնալու համար։

Երաժշտութեամբ ոգևորուած ու վարպետի հակումներով ամրապնդուած էր իր դաշնակի դասերուն, որուն կ'առաջնորդէր խաղացի երաժիշտ մը։ Եւ քոյր ու եղբայր արդէն չատոնց ծրագրած էին, որ Արշակի եւրոպացին դարձին՝ անմիջապէս աղջիկը պիտի մեկնէր Միլան՝ իր ուսուցչին հայրենիքը։ Միւս կողմէն ալ եղբայրը թէ՛ անձամբ, թէ՛ նամակներով չարունակ կը ջանար հնար տալու քրոջը, որ իր մասնաւոր զարգացումը աւելի հիմնէ ու ընդլայնէ։

— Ըստ երևոյթին նպատակ կու գաք.— նկատեց Վիլժին՝ աչքով Մանրիկի անուրթին տակի նոթևրուն փոթոթը ցոյց տալով։

— Այո՛։— ժպտեցաւ Մանրիկ։— Ես ուսուցչիս մօտէն, եղբայրս խմբագրատուներէն. Դալաթիա իրարու հանդիպեցանք։

— Հա՛, իրա՛ւ. ես ձեր գաղտնիքը արդէն բացած եմ.— զարմաւ յանկարծ Վիլժին երիտասարդին։

— Ի՞նչ գաղտնիք.— հարցուց տղան կէս կը զարմանքով կէս մը հետաքրքիր։

— Պարոն Տիրանը երէկ դիշեր մեզի էր և ամէն բան պատմեց և թէ ո՞վ է «Սլաք» ծածկանունին տակ թաղնըւած յօդուածներուն հեղինակը։

— Եթէ տիկա է բոլորը՝ խիստ չանհկան բան մը չէ ձեր բացած գաղտնիքը։

— Սլաքի «եւրոպական նամակները», ներեցէ՛ք, ես ճանչցած եմ իրենց հեղինակը ճանչնալէս առաջ. և միշտ ոիրած եմ իրենց բաց, պարզ ու անկեղծ չեշտը։ Թէև պիտի ըսեմ, որ ձեր սպասումները մեր երիտասարդ սերունդէն չափազանց խոշոր է, մանաւանդ պէս պէս կը վերաբերի աղջիկներուն։

— Ցաւդա՞նց կը դանէք։

— Ի՞նչ կ'ըսպասէք դուք մեզմէ։ Ոչ մէկ հատարակական խնդիր մեզի խակապէս չի հետաքրքրեր։ Անչուշտ երբեմն կը խօսինք ընկերական ու գրական այս ու այն հարցի մասին, բայց միայն չնորհքի համար. և ընդհանրապէս կը կրկնենք ինչ որ մեծամասնութիւնը կը պահանջէ. ի՞նչ սեփական համոզում կ'ակընկալէք դուք մեզմէ։

Արշակ, որ հետզհետէ քաղուածքը ծանրացուցեր էր, վերջապէս բոլորովին կանգ առաւ փողոցին մէջտեղը։

— Ի՞նչու կեցաք. ճիշդ չե՞մ ըսեր, օրիո՛րդ Մաննիկ։

— Բացառութիւնները մէկդի դրած.— պատասխանեց Մաննիկ։

Ու երեքը միասին նորէն առաջ չարժուեցին։ Եւ Արշակ ակընթարթ մը վարանելէն հաքը՝ իր մտածումը զսպել չկրցաւ.

— Ներեցէ՛ք համարձակութեանս, օրիո՛րդ. բայց գիտէ՞ք, այդ կերպով խօսող անհատ մը մարդ ակամայ պահանջկոտ կը դառնայ. և ակամայ հարց մը կու գայ լեզուիս ծայրը...

Ու չդիտեր ինչ ձեւով արտայայտէ, որ քաղաքավարութեան սահմաններէն դուրս ելած չըլլայ։ Բայց աղջիկը խօսքն ինքը ելաւ օգնութեան.

— Թէ ինչո՞ւ ես ինքս ալ նոյն հոգանքով կը քալեմ. ա՛ս քսել կ'ուզէք։

— Մտաւորապէս։

— Անշուշտ, ատոր համար է, որ կ'ըսեմ, թէ չափազանց բաներ կ'ըսպասէք մեզմէ։ Հոս սա խմորը չկայ։

Եւ ձեռքի փայտին ծայրովը ուժով մը զարկաւ ու մայթին վրայ ինկած քարի կտոր մը նետեց փողոցին մէջտեղը։

Պահ մը քալեցին առանց խօսելու, մինչև Մաննիկ լռութիւնը խզեց՝ յայտնելով որ լսած էր վկայինի աղաւնի ձայն ունենալը և խօսքը դարձաւ նորէն երաժշտութեան վրայ։

Պարիկաններու դրան առջև կանգ առին. վկայինի գանգը քաշեց ու բաւ.

— Պարապ ձեւականութիւն մը ըրած չըլլալու համար՝ չեմ համարձակիր հիմա ձեզի նեթս հրաւիրել. թէև մայրս չատ կ'ուրախանար, եթէ նեթս գայիք։

— Ո՛չ է.— առարկեց Մաննիկ։

— Ուրիշ անգամ մը.— վրայ բերաւ Արշակ։

— Ակէ՛կ. բայց ակէ՛ք, խնդրեմ. և ձեւականութիւններու չատ չնայինք։ Եղբայրս ալ խիստ գոհ կը մնայ։ Ան սրտէն ձեր վրայ հիացած է. լրացուց խօսքը Արշակի դէմքին ժպտելով։

— Հիացա՞ծ։

— Այո՛, ուղղակի հիացած.— խնդաց աղջիկը երկաւքին ալ ձեռք տալով։ — Ուրեմն կ'ըսպասե՛նք։

Ցատկեց բացուած դուռնէն ներս, անգամ մըն ալ գլխով բրաւ ու դուռը գոցուեցաւ։

* * *

— Ի՞նչ կ'ըսես նոր բարեկամուհիդ.— հարցուց Արշակ ճանապարհին քրոջը թեւը մտնելով։

— Շատ համակրելի ու սիրա-բաց աղջիկ է. արդէն առաջուընէ գիտէի։

— Անշո՛ւշտ. դուն որ ամեն բան գիտես.— հեգնեց եղբայրը։

— Այո՛, գիտեմ նաեւ, որ քու վերջին յօդուածդ մեծապատիւները զայրացուցեր է. մանաւանդ այդ տող ուտելու խնդիրը։

— Ուրիէ՞ք իմացար։

— Արագքին ըսաւ. կը յիշե՞ս, ո՛ն, որ ազուոր կատաւի կը նմանի կ'ըսէիր։ Անցած դիշեր անոնց տունն են եղեր բոլորը, այդ մասին խօսք է դարձեր. սասիկ զրգռուած են եղեր, թէ այդ հայիւները ուրիէ՞ք ինկեր են քու ձեռքդ. և քեզի համար՝ ալ ինչ կ'ուզես՝ ըսեր են։

— Շատ չնորհակալ ենք.— պատասխանեց եղբայրը։

— Դեռ լսէ.— չարունակեց քոյրը հեգնոտ անտարբերութեամբ մը.— ոտնիւ տիկին մըն ալ բարեհաճեր է յայտարարելու, որ իբրեւ թէ ես բնաւ ելլելու կը պատրաստուիմ եղեր։

— Եթէ չիտակ ալ ըլլայ՝ ի՞նչ վնաս։

— Ես գիտե՞մ։ Այս բոլորի մէջ իսկական յանցաւորը մայրիկն է եղեր, որ մեզի փողոցներն է նետեր։

Տղան ոչինչ չպատասխանեց. գէմքը մխայն մռայլեցաւ. իսկ քոյրը վրայ տուաւ ոգեւորուած չեչառով մը.

Բայց դրամը իր հակառակ կողմն ալ ունի։ Անցած օր Սիրքեճիի կայարանէն ներս պիտի մտնէի դրան մէջ ուխը-ինը երիտասարդ տղաք էին կեցեր. դեռ բոլորովին չէի մօտեցեր, որ մէջերնին փափուկ մը ինկաւ։ «Քոյրը» հոտաւ ականջիս. և տեսնելու էիր՝ ինչ համակրանքով կը նայէին երեսիս և ինչ յարգանքով ճամբայ տուին ինծի։ Ամօթէս ու յուզումէս հազիւ ինքզինքս կայսրատը նետեցի։

Եւ այս բոլորը ըսուած էր այնպէս մխամբա հպարտութեամբ մը, որ Արշակ խնդալը բռնել չկրցաւ։

Մայրիկը տան դուռն էր. կ'ըսպասէր։

— Ինչո՞ւ այսչափ ուշացաք, գնացքին տանիը մնցաւ. վախցայ, որ նորէն վերջին գնացքին կը մնաք. ո՞ւր հանդիպեցաք իրարու.— հարցուց մայրը իրեն մօտեցող ժպտուն զոյգին վրայ երջանիկ ու հպարտ նայուածք մը նետելով։

Հազիւ էին ներս մտեր, որ Մանիկ մօրը վիզը ցատկեց.

— Մայրի՛կ, ահռելու էիր՝ նորէն ինչպէս ոգեւորուած էր այսօր խոսլացիս. ինչպէս գովելը չդիտէր: Հապա երէկ դիշեր որ չնուագե՛ի՞: «Հերիք է»· «Հերիք է» կ՚ըսէիր:

— Ալ առչափն ալ չեմ ուզեր.— առարկեց մայրը:— Մէյ մըն ալ անոր գովեստին չատ ականջ մի՛ դներ. իր աչակերտն ա՝ կը գովէ.— ասկէցուց անտարբեր չեչտով մը, թէեւ ինքը ազջիկէն աւելի կարեւորութիւն կուտար ուսուցչի խօսքերուն և ազջիկէն աւելի ուրախ էր այդ վայրկեանին:

. . .

Պզտիկաններուն պարտէզը, ծառերուն տակ փոքրիկ կլոր սեղան մը, վրան բարձրահասակ լամպ մը լայն լուսամփոփով ծածկուած, որուն եզերքներէն սակայն լոյսին ճառագայթները փունջերով կը սպրդէին չրջակայ ծառերու և թուփերու թաւուտին մէջ՝ լոյսի ու ստուերներու չարժուն դրկոխտունութիւն մը յօրինելով:

Սեղանին վրայ կիսախում գաւաթներ և փոքրիկ զամբիւղով մը նարինջ: Իսկ սեղանին չուրջը Պզտիկաններն ու Արչակ. Արչակի քոյրը գալ չէր կրցած:

Կենդանի խօսակցութիւն մը կը գառնար: Բժիշկն ու Արչակ իրար ընդհատելով, իրար լրացընելով, իրարու քերնէ խօսքը խլելով կը պատմէին ուսանողական կեանքէ յուշեր:

Եւ բաւական երկար ժամանակ. բժիշկի արամադրուած օրերէն էր: Վերժինն էր լուռը. ծանր-ծանր նարինջները կը կեղեւէր ու կը հրամցընէր հիւրին ու եղբօրը և ուշադիր կը հետեւէր անոնց պատմութիւններուն:

Բժիշկը նորէն տաք-տաք բան մը պատմելու վրայ էր, որ մայրը նեղս մտաւ ու յայտնեց, թէ հիւանդի կը կանչէին:

— Ահա՛ ատ ալ ձեզի իմ արհեստս.— բացականչեց բժիշկը. կերպ մը պատմելիքը լրացուց ու ելաւ ոտքի:— կը ջանամ չուտ վերադառնամ. ամէն պարագայի մօտ օրերս կուգանք ձեզի. ես բժիշկ մարդ եմ ու վարժուած եմ ամէն գուռ առջեւս բաց տեսնելու:

— Բաց իր երկու փեղկերովը.— լրացուց Արչակ անոր խօսքը:— ես ամբողջովին ձեր արամադրութեան տակ. թէեւ խելացի բան չէ ինքզինքը բժիշկի մը արամադրութեան տակ դնելը:

Բժիշկը խնդաց մեծաձայն ու մօրը հետ մտաւ տունն:

— Մեր յիմար պատմութիւններով ձեր գլուխը ցաւցուցինք.— դիմեց Արչակ օրիորդին մինակ մնալնուն պէս:

— կը հետեւէի մեծ հետաքրքրութեամբ.— պատասխանեց աղջիկը:— Բայց չափազանց ուրախ եմ դիպուածէն, որ եղբայրս կանչեցին: Երկու օր է, որ ձեզի անպատճառ տեսնել կ՚ուզէի և տատիս:

— Ինչո՞վ կրնամ ձեզի ծառայել։

— Նախ հարցո՛ւմ մը։ Պարոն Տիրանի խօսքերէն լմացայ, որ ձեր ընկերները Թաղի մը դպրոցը առած են իրենց ձեռքը։ Այդպէ՞ս է

— Այո՛. երեք հոգի են. իմ ընկերներս. ի՞նչ կայ որ։

— Եւ անոնք կը փնտռեն երկու չնորհքով վարժուհի։ Այդպէ՞ս է։

— Ինչո՛ւշա. ահագին դպրոց է։

— Եւ գտա՞ծ են իրենց փնտռած վարժուհիները։

— Չե՛մ կարծեր. այդ ապրանքը այդքան չաւտով գտնուելիք բան չէ։ Սակայն ինչո՞ւ կը հարցընէք։

— Որովհետեւ ձեզի համար ես մէկը գտեր եմ։

— Իրա՞ւ։

— Միայն առաջուընէ ըսեմ իրմէ չատ խստապահանջ ըլլալու չէք։ Օտար դպրոցի մէջ միջնակարգ կրթութիւն ստացած աղջիկ մըն է, բոլորովին անփորձ. այդ տեսակ գործերու մէջ բնաւ չէ եղած. բայց սրտանց նուիրուելով կ'ուզէ գործին ու կը խոստանայ բոլոր ճիգը թափել ձեր ընկերները բաւարարելու։

— Հրաշա՛լի է. ընկերներս չատ պիտի ուրախանան։ Եւ ի՞նչ է այդ աղջկան անունը. գուցէ ես ալ ճանչնամ։

— Ճանչնալը ճանչնաք պիտի անչուշտ. այն պարզ պատճառով, որ մարդս չի կրնար իր խօսակիցը չի ճանչնալ։

Արշակ վայրկեան մը լուռ ու անշարժ մնաց և վերջը դանդաղ եղաւ ոտքի ու հարցուց մատնելով.

— Դուք կ'ուզէք մտնէք ընկերներուս դպրոցը իբրև վարժո՞ւհի։

— կարծես թէ դժգոհ մնացիք առաջարկէս։

— Դժգո՞հ. ո՛չ։ Բայց կը խորհիմ, որ պէտք է նախապէս պիտակ ըլլաք ձեր դէմ գալիք դժուարութիւններուն։ Գիտէ՞ք որ ձեր չուրջը բոլորը ձեզի հակառակին պիտի սկսլով ձեր մօրմէն ու հայրօրմէն։ Պիտի կարողանաք դիմադրել։

— Գիտե՛մ։ կը դիմադրեմ։

— Գիտէ՞ք թէ մեր հասարակութիւնը ինչ սոսկ գազափար ունի մեր վարժապետներուն ու վարժուհիներուն վրայ։ Պիտի կարողանաք տակայ ու արհամարել։

— Գիտե՛մ։ կը տակամ։

— Գիտէ՞ք որ դպրոցն ու ուսուցչութիւնը ինքնին դիւրին գործ չէ, մանաւանդ փոքրիկներու հետ զբաղուիլը և յատկապէս առաջին տարիներուն։ կը պահանջէ մեծ աշխատանք և ամբողջական նուիրում։

— Կ'ենթադրեմ ու կը լարեմ բոլոր ուժերս։

Արշակ յափշտակութեամբ նորէն նայեցաւ վայրկեան մը լուռ աղջկան վճռական ու ոգևորուած դիմագիծերուն. և ըսաւ յուզումով ու սրտանց.

— Իրաւ որ սքանչելի աղջիկ մըն էք։

— Թողէ՛ք ամէն դժուարը. և այդ աքանչելի աղջիկը, դիտցէ՛ք, որ իր յոյսը դրած է մանաւանդ ձեր վրայ, եթէ այս տեսակ քայլ մը առնել կ՚ուզէ: Ես անտեղեակ եմ բոլորովին մեր պարոցական ու վարչական պայմաններուն. դո՛ւք պիտի խօսիք ձեր ընկերներուն, որ ինձի միջոց ու դիւրութիւն տան. դուք պէտք է օգնէք ինձի, որպէս խորհուրդ ու դրքեր, որ գտնէ քիչ մը պատրաստուիմ:

— Բնականաբա՛ր: Ես խորապէս ուրախ եմ, որ ի՛մ վրիս էք դրեր այդ սարսափելի ծանր բեռը.— պատասխանեց տղան խնդալով:

Ներս եկաւ մայրը ու խօսակցութիւնը փոխուեցաւ:

Ինչ մը եաքը մուխ փողոցին մէջտեղէն Արչակ միւսմինակ կը քալէր դէպի տուն: Ու կ՚ըզգար զարմանալի ուրախութիւն մը հոգիին մէջ: Բնական էր ենթադրելը, որ այդ ուրախութիւնը կը բղխէր ազկան տուած ազուր որոչումէն: Բայց տղան չուտով նկատեց, որ ճիշդ էլ այդ ենթադրութիւնը. իր ուրախութիւնը չատ աւելի կենդանի ապրիւրէ մը կու գար: Կու գար աղջկան ոգևորուած դիմադծերէն, անոր նուրբ ու թարմ շրմունքներուն չարժումէն, անոր չարաճճի ժպիտէն և մանաւանդ աւատ ապրիւրալ կը հասէր աղջկան համակիչ նայուածքէն, երբ անոնց երկու զոյգ աչքերը իրարու կը չաւէին:

Գ

Պզաիկեաններուն հայրը գաւառէն Պոլիս եկած, տասղչ գոտազուխտեան տէր, գործունեայ ու ձեռներեց մարդ մըն էր: Փոքրէն քսկսելով կարճ տանուլտան մէջ չաղոզած էր նիւթական կարողութիւն ու հասարակական դիրք ձեռք բերելու:

Ուսումէ զուրկ, բայց ուսման ուժը գնահատող՝ ուզած էր զաւակներուն լաւ կրթութիւն տալ: Երբ Յակոբ Ֆրանսական վարժարանի մը մէջ իր միջնակարգ կրթութիւնը աւարտեց Պոլիս՝ հայրը անմիջապէս ճամբեց Փարիզ բժշկութիւն սորվելու:

Ագատ, ձեռքը բաւական դրամ, մեծ քաղաքի մը հոսանքին մէջ ինկած, ալ ինչ քաջագործութիւններ ըսես չէին պատմեր ընկերակիցներուն անոր մասին: Բայց ընդունակ տղայ՝ չաջողցաւ չորս հինգ տարի եաքը իր վկայականը առնելու: Ու մաւր հիւանդանոյ մը իբրև բժիշկի օգնական: Տարիքը լեցած, չրջապատին վարժուած և իր ուսուցչապետ բժիշկի ազդեցութեանը ենթակայ՝ սկսաւ լուրջ աշխատանքի: Հետևանքը ան եղաւ, որ երկու-երեք տարի աւելի ուշ, երբ Պոլիս վերադարձաւ, ո՛չ միայն իր գործին տեղեակ բժիշկ մըն էր, այլև ընդհանրապէս լայն մտքի հարիզոնով մարդ մը:

Ան գուցէ դեռ երկար Ֆրանսա մնալ ուզէր, եթէ հօր մահը իր դարձը չպարտադրէր:

Պալխա սկիզբը չատ խորթ էր իրեն ամեն բան. ինքզինքը բոլորովին կտրուած կ'ըզգար իր շրջապատէն։ Իր ձեռք բերած սովորութիւնները ալ, ապրելու, մտածելու, զգալու եղանակն ալ դարձեր էին բոլորովին տարբեր. որքա՜ն «ասիական» էր դեռ իր չուրջը հասոզ կեանքն ու հասարակութիւնը։

Նախ տեսակ մը բարձրէն ու արհամարանքով սկսաւ նայիլ, վերջը խղճալ սկսաւ, երբեմն զայրոյթ տածել իր չարուեստակ լսած ազգա ու ազգմակից հայեացքներուն դէմ։ Բայց Թոյլ բնաւորութեան տէր և իր հանդիսաը չափազանց սիրող՝ մաքէն անգամ չանցուց այդ հասանքին դէմ քայլ մը առնել։ Շուտով ձեռք վերցուց և ընթերցումէ. բացի փարիզեան մէկ-երկու ընթացիկ պարբերաթերթերէ՝ գրեթէ ոչինչ էէր կարդար լրջօրէն։ Արդէն օրէ օր աճող փրատիկը կը կլանէր իր ժամանակը. ազատ մնացած պահերն ալ՝ բնականէն քիչ մը ծուլութիւն սիրող իր ջիլերուն համար հազիւ հերիք էր հանդստանալու։ Երբ տունն էր, կը փոուէր սովորաբար բազկաթոռի մը դիրկը, աքերը կը դնէր դէմի աթոռին ու կը թաղուէր ծխախոտի մուխին ու մտածումներուն մէջ։

Բժիշկի վերադարձին վերժին տասերկու-տասերեք տարեկան ապջնակ մըն էր։ Եւ հօրը մահէն իվեր քանի մը ամիս մայրը դպրեցուցեր էր ազջիկը դպրոց զրկելէ. և նորէն զրկելու ալ միտք չունէր. մինչ Վերժին տասնիկ կը ցանկար անպատճառ ամերիկեան դիչերօթիկ վարժարանը մտնել, մանաւանդ զրկուած իր քանի մը նախկին ընկերուհիներէն, որոնք հիմա հոն էին արդէն և առատպէլի գոյներով կը նկարէին այդ կեանքը։ Մայրը սկիզբները ընդխմացաւ. տունը մինակ էր մնալու. բայց վերջը սոխպուենցաւ դիչելու անոր անվերջ լացերուն ու խոհանոցին, մանաւանդ երբ Յակոբն ալ գալուն վրայ էր կոմմ անցաւ։

Վերժին չատ չուտով վարժուեցաւ դիչերօթիկի իր նոր կեանքին։ Խելացի ու համարձակ՝ սկսաւ չուտով ամենուն ուշքը գրաւել դպրոցին մէջ։ Ընկերներու չրջանակին մէջ կարգապրզի դերն էր իր վրայ. ամեն աշակերտական ձեռնարկներու կա՛մ պարագլուխն էր կա՛մ պրիչը և իր վարժուհիներու մչտական գլխու ցաւը. բայց և այնպէս բոլորն ալ կը համակրէին այդ աչքարաց աղջիկը, որ իր աչխատասիրութիւններուն մէջն ալ միչտ առաջիններէն էր։

Ինքը չատ լաւ կ'ըզգար իր մասնաւոր դիրքը թէ՛ դէպի ամեն ազգէ եկած ընկերուհիներուն հանդէպ և թէ՛ դէպի իր ամերիկեան ուսուցչուհիները. և այդ ներքին գիտակցութիւնը իր չարժուձևերուն վրայ հպարտութիւն մը դրոչմած էր, որ կը վայլէր իր դէմքին։

Տարիները կը սահէին անկասելի կերպով։ Վերժին ամեն չաբաթ իրիկուն, այլև բոլոր տօներուն տուն կ'երթար դիչերը։ Թէ՛ տունը և թէ՛ դպրոցը բաւական ազատ ժամանակ ունէր ընթերցանութեան։

կը կարգար անոյշ բոլոր ձեռքը ինկածը։ Այդ ընթերցումը մանաւանդ թափ և ուղղութիւն առաւ երբ վերժինի աւարտելէն երկու տարի առաջ գպրոց եկաւ նոր ուսուցչուհի մը՝ միսս փեթըրս։

* * *

Երեսունի մօտիկ, նիհար, երկարահասակ, միչտ պարզ ու սեւեր հագած աղջիկ մըն էր միսս փեթըրս, Ամերիկայէն դէպ նոր եկած, որուն պատմութեան ու գրականութեան դասերը յանձնուեցան։

Բոլորն ալ իսկոյն սիրեցին այդ ոգեւորութեամբ պատմող ու մանուկն հետ վերին աստիճանի ընկերաբար վարուող նոր դէմքը։ Նրբիկը չատ չուտով ուշադրութիւն գրաւեց և վերժինի վրայ, որ իր ընկերակիցներէն աչքի իյնալու չափ առաջ էր անցած։ վերժին խոկոյն նկատեց և կրնակի ջանքով աշխատեցաւ իր նոր համակրողը գոհացընելու. և հետեւանքը այն եղաւ, որ սկսաւ մտնաւանդ կերպով հետաքրքրուիլ գրական ու պատմական խնդիրներով։

Վերժին չարունակ անոր խորհուրդին կը դիմէր գրքերու ընտրութեան համար, անոր սեփական գրքերէն կը խնդրէր կարդալու, իր մտնաւանդ մէկ-երկու աշխատութիւնները կու տար, որ աչքէ անցընէ ու իր գնահատանքը տայ։ Նման պատրուակներով չատախօս կ'երթար անոր մտնաւանդ սենեակը. պարէզը չատախօս միսին կ'ըլլային. և վերժին հետզհետէ կապուեցաւ բոլորովին իր այդ հասուն ու բարի ընկերոջը և այդ ընկեր-ուսուցիչն ալ իր կոմէն սիրեց ու կապուեցաւ այդ թարմ ու խելացի աղջկան։

Միսս փեթըրս դժբաղդ մըն էր։ Աղքատ հօր մը սիրելին, մայրը մանկութենէ կորսնցուցած։ Մինչնակարգ ուսումովը անբաւական՝ աղջիկը անցած էր համալսարան, կէս մը հօրը, կէս մը իր սեփական աշխատութեան գնով։

Ծածուկ զրկանքներու, լարուած աշխատանքի օրերն էին առօնք բայց անոնց օրերը։ Նոյն համալսարանը հանդիպած էր ուսանողի մը և իսկոյն չարեր էին իրարու։ Տղան չատախօս իրիկուններուն կու գար աղջկան փոքրիկ սենեակը միսին կարգալու. կարդա՞լ. ա՛յն գիշերները։ երիտասարդը կենդանաբանութեան ուսանող էր և մեծ վըստահութիւն ունէր իր ապագային. և փեթըրս հպարտութեամբ կը ժըպտէր, որ դառնալու էր չատոնց փրոֆեսորի մը կինը։

Բայց երազը ցընդեցաւ։ Մեծ Ովկիանոսի հարաւային կղզիներուն վրայ գիտական արչաւանքի մը ատեն նշանածը մեռաւ դեղին տենդէ։ Ալ ամեն ինչ սեւ էր միսս փեթըրսի համար։ Մեռաւ չուտով և հայրը։ Երկար ատեն բոլորովին բեկուած էր իր վշտին մէջ. գպրոցի մը մէջ դասեր ունէր իր վրան ու կերպ մը կ'ապրէր։ Ժամանակի հետ, հրը քիչ մը ուշքի եկաւ՝ մտածեց երթալ ուրիչ աշխարհ մը։ Իր բա-

բնականութիւնը խորհուրդ տուին դիմել Մեծաւոր Արեւելքի Ամերիկեան Ընկերութեան: Հեռաւոր ժողովուրդներու մէջ լոյս ու դիտութիւն տանելու գործէ քաղաքակրթութեան տարածմանը նպաստելու գաղափարը սըրտին մօտիկ եկաւ. և այդ նոր առաքելութեամբ ոգեւորուած՝ պայման կապեց, առաւ իր երկու անուռուկ զրքերը ու դէպի Պոլիս:

Դպրոցական վերջին տարին վերժինն ու վարժուհին ալ իրարմէ անբաժան դարձան: Անոր չունչին տակն էր, որ վերժին սկսաւ հետաքրքրուիլ նաեւ հայ գրականութեամբ. տունը կը հետեւէր հայերէն թերթերուն, ուշադրութեամբ կը կարդար նոր գրական երկերը և հին հեղինակներուն ալ ծանօթանալու համար չարունակ գիրք կը խնդրէր իր ծանօթ ազգականներէն, որոնք աղջկան հաճոյանալու համար աներեւակայելի անկիւններէ գրքեր կը ճարէին:

Եւ աղջկան մէջն ալ կինը սկսեր էր արագ հասուննալ: Դիչկատին գաղտուկ, առանց պատճառի լացեր, անզուսպ ուրախութեան խնդի պոռաքումներ մէջէմէջ կը կրկնուէին պարբերաբար: Իր այս կամ այն աւելի մօտիկ ընկերուհիին հետ ծուռ մը տակ քաչուռած կէս մը կարմրելով, կէս մը համարձակ կը խօսէին «կանանչի գազանիքներուն», «սիրոյ յուզումներուն» վրայ կամ միասին ապագայ երազներ կը հիւսէին: Բայց և այնպէս չատ քիչ կարեւորութիւն կու տար ընդհանրապէս իր շուրջը գարձող երիտասարդ դէմքերուն. որքան հասկնար էին անոնք իր հոգիին համար: Ինքը հեռաւոր, սիպար դէմք մը ունէր իր գլխուն մէջ. կորովի բնաւորութեամբ, գիտական խոհեմութեամբ համարձակ ու ձեռներէց երիտասարդի մը սիպարը, միսս փեթըրսի նշանածին եղբայրը:

Զգացումի ու մտքի այս կազմով, տասներկուն տարիները լրացուցած աղջիկ մը՝ վերժին գպրոցը աւարտեց: Ճերմակ գգեստներուն մէջ ատացաւ վկայականը և իր փեթըրսին չուռ-չուռ այցելել խոստանալով՝ մօրն ու եղբօրը հետ հեռացաւ իր սիրած գպրոցին ուժէն:

Եւ ահա՛ ճիշդ տարի մըն է՝ տունն էր:

Սկիզբը չատ ծանր եղաւ գպրոցի աղմկոտ կեանքէն հաքը ընտանեկան այդ լուռ ու միօրինակ անդորրութիւնը. միակերպ ու պարապ: Բան մը ընելու պահանջը ատատկացաւ. կը գայրանար մօրն ու եղբօրը դէմ, մանր ու անվնաս կռիւներ տան մէջ անպակաս էին. ինքն ալ չէր գիտեր իսկապէս ինչո՞ւ. այնպէ՞ս, պարզապէս ձանձրոյթէն. և սկսաւ քմահաճ դառնալ ու դիւրագրգիռ:

Ջուր ինքզինքը կարգալու առաւ. ժամանակ մըն ալ տարուեցաւ երգով. ամբողջ օրով գաշնակին առջեւէն չէր հեռանար: Բանի մը անգամ, մասնաւորապէս Տիրանի հետ ծանօթանալէն հաքը, փորձեց նոյնիսկ գրելու, բան դուրս չեկաւ: Անգլերէնէ բան մը թարգմանել ուզեց, Սքոթէն, անկէ ալ հաճոյք չառաւ: Աւելի չարժուն, աւելի խոր ու կենդանի գրաղմունքի մը կը տենչար: Իսկ Արչակին

հանդիպելէն իվեր կ'ըզգար, որ այդ անունը յանկարծ սուր ու վճռական չեչա մը առացաւ։

Ահա՛ այդ ներքին հին խայթի և տղու խօսքերուն ու յօդուածներուն հիւսուած ընդհանուր տպաւորութեան տակ էր, որ կանգ առաւ վարժուհի դառնալու եզրակացութեան վրայ։

* * *

Եզրակացութիւնն ու որոշումը կար, բայց գործադրումը սպասուածէն չատ աւելի կը դանդազէր։

Վերժին քանի մը անգամ արդէն հարցուցած էր Արշակին մեկուսի, թէ ի՞նչ վիճակի մէջ էր գործը։

Արշակ առաջին երկու չաբաթները կու տար միևնոյն պատասխանը, թէ իր ընկերներու հաստատման ձեւականութիւնները դեռ վերջացած չէին և օր-օրի կը ձգձգուէին, ցրուած էին հոգաբարձուները. և մինչև իր ընկերներու այդ դպրոցին մէջհաստատուիլը վերջնական ու պաշտօնական ձև չըստանար՝ վազաժամ էր բնականաբար ուրիշ ուսուցիչներու մասին կարգադրութիւններ ընելը։

Իսկ վերջին անգամ ալջկայ տուած նոյն հարցին Արշակ տուած էր նոյն պատասխանը, բայց զարմանալի ժպիտով մը նաև աւելցուցած էր.

— Եւ գուցէ աւելի լաւ է այս ուշացումը, օրիո՛րդ. մի՛ աճապարէք։

— Բայց ես կ'ուզէի, որ չուտով կարգադրուի.— պնդած էր աղջիկը։— Եւ գիտէ՞ք, մեկ-երկու անգամ մօրս խօսք բացի, անչուչա չատ զգուշ, իբրև նախապատրաստութիւն։

— Ե՞ւ.— հարցուց ազան ժպտուն։

— Լա՛ւ անգամ չուզեր. լացարձակապէ՛ս։

Իսկ այդ միջոցին նոր բարեկամներուն մօտիկութիւնը կ'աճէր արագ ընթացքով։ Արշակի առաջին այցէն հազիւ էր անցեր երեք չաբաթ, բայց այդ միջոցին անգամ մը քրոջը հետ, անգամ մըն ալ Տիրանի հետ նորէն եղած էր Պզտիկեաններուն. անոնք ալ քոյր-եղբայր եկած էին Արշակենց դէմ-այց։ Հազ մը բոլորը միասին հանդիպեր էին իրար Տիրանի տունը. անգամ մըն ալ խմբովին գացեր էին Սան-Ստեֆանօի ճամբուն վրայ բնակած այդի մը զբօսնելու։

Անոնց այս խմբումները միշտ քաց և զուարթ չեչտ մը ունէր իր մէջը։ Ամենքը կը խօսէին իրենց գլխուն փչածը, կ'երգէին. վէճ, կատակ, նուագ ու ազմուկ։

Երկու աղջիկները իրարու դէմ էին եկած սրտագին համակրանքով.

«Որչա՛փ ուրախ եմ ձեզի ծանօթանալուս» կ'ըսէր Վերժին երեխայի նման Մաննիկի հետ գրկընկալ։

Բժիշկը կէս-կատակ, կէս-լուրջ մէջլմլջ կը հեգնէր Արշակի ոգևորութիւնն ու յոյսերը ապագայով, կը սիրէր Տիրանի հետ իյնալ, թէև սրտանց կը համակրէր և «գեղ երեխայ է» կ'ըսէր հօր մը ներողամիտ չեշտովը, երբ տունը խօսք գառնար անոր մասին։

Արշակ ալ փոխադարձաբար կը յարձակուէր բժիշկի ուելի կամ նուազ անտարբերութիւն ըուրդ հայեացքներուն վրայ. ընկերական սրգի կազմի կեղծիքներուն ու ձևապաշտութեան վրայ կը յարձակուէր, կը դատապարտէր մեր հասարակական «ողորմելի» գիտակցութիւնը և «կրէական» դանդազկոտութիւնը. և այս բոլորը միշտ թեթև հումորով մը համեմած, որ բժիշկին չատ դուր կու գար։

— Չէ՛, մենք իրար հասկընանք պիտի.— կ'ըսէր մտերմօրէն Արշակի ուսը ծեծելով։— Միայն թէ ընկերական հարցերու վրայ իզուր տեղը այդքան սիրտ կը հատցընէք. հարցո՛ր, որոնք ա՛չ ձեր ձեռքէն, ա՛չ ալ ձեր կամքէն կախում ունին. որոնք իրենց բնական ընթացքով առաջ պիտի երթան, ինչպէս մինչև հիմա առաջ են եկեր։ Դոն-Քիխոտի պէս հզմտազացներու վրայ յարձակուելէն ի՞նչ կ'ելլէ։

— Բայց, պարո՛ն բժիշկ, կրնա՞ք հերքել, որ մարդկային ընկերական զարգացումը իր մտաւոր զարգացման հետ զոյգ կ'երթայ, որ մեր բոլոր անգիտակից ու բնազդօրէն կատարած գործերը քիչ-քիչ գիտակցական գործունէութեան կը վերածուին. և մի՞թէ բնական զարգացման ընթացքը սխալ չէ՞։

— Այնուհետև որ առանձ ազատ խօսքեր են, ի՞նչ ըսել կ'ուզէ.— կը խնդար բժիշկը։

Վերջին ուշադիր կը հետևէր վէճերուն։ Ինքը մասնակից կամ ոչ՝ միշտ Արշակի կողմն էր։ Իրեն այնպէս կը թըւէր, որ ազան կու տար միշտ այն պատասխանը, որ ինքը տալ կ'ուզէր, միայն ուելի սուր և ուելի խոր արտայայտութեամբ մը։ Տզուն կարծիքներն ու համոզումը կարծես թէ իր համոզումներն ու մտածումները ըլլային. կարծես ինքն ալ միշտ այդպէս էր խորհած ու դատած, գուցէ քիչ մը ուելի նուազ յստակութեամբ, մշուշով։

Արշակ չէր կրնար չնկատել իր ու ազկայ հոգիներուն մէջ գործուղ այդ զուգահեռութիւնը. կը տեսնէր այդ բոլորը գգուող զգացումի մը ջերմութեան մէջէն։

Մէկ-երկու անգամ առանձին էին մնացեր քիչ մը ուելի երկար տևողութեամբ։ Եւ այդ բացառիկ պահերուն պահանջ մը կը թառէր անոնց վրայ ուելի մտերմօրէն ուելի սրտաբաց իրար հետ խօսելու։

— Եթէ գիտնա՛ք՝ որչա՛փ կը ցանկայի, որ անգամ մը նորէն ձեզի հետ առանձին ու երկար խօսիլ կարողանայի.— բացականչեց վերջին այդ տեսակ մեկուսի վայրկեանի մը մէջ իր մտածումը զսպել չկարողանալով։

— Իսկ ես դուցէ ձեզմէ ուելի.— եղաւ ազուն կարճ պատասխանը։

— Այն ատեն... այն ատեն իրիկուն մը ակէք նորէն մեզի միանակ.— վրայ բերաւ ազջիկը վճռաբար։— Իրիկունները, ընթրիքէն մէկ-երկու ժամ առաջ նպարտյրա միշտ առուր չըլլար, իսկ մայրս ընդհանրապէս զրաղուած. և ան մեզի չի խանգարեր։

Բայց յանկարծ իր այդ սրամիտ բզիաած խօսքերուն կարծես նոր անդրադառնալով՝ կարմրեցաւ թեթև մը, նայուածքը զետին ձգեց ու ապրցաւ.

— Ո՞վ գիտէ՝ հիմա ինչ պիտի մտածէք իմ մասին։

* * *

Բայց Տիրան ալ սկսեր էր բաներ մը նկատել։

Վերջին օրերը կ'զգար, որ իրենց խմբակիները հետզհետէ հատազ գրաւիչ կը դառնային իրեն համար։ Թէև ինքն ալ գեռ միշտ մտանակից երգին ու ազմուկին ընդհանուր հոսանքովը կ'երթար, սակայն ներքուստ որդի պէս բան մը սպրդեր էր կուրծքը ու գաղտուկ կը կրծէր։

Վերժին հիմա աւելի լուրջ ու մտածկոտ կը թուէր իր աչքին, տեսակ մը կեդրոնացած։ Իր հայեացքէն չէին վրիպեր անոր Արչակին ուղղած փոքրիկ ժպիտ մը, ծանուկ նայուածք մը, որոշ մտերիմ վերաբերում. ինքնին այնքան չնչին համակրանքի արտայայտութիւններ, որ ուրիշ ժամանակ երեւի քնաւ իր ուշադրութիւնը պիտի չգրաւէին. բայց հիմա ինքն ալ չէր հասկընար ինչու՝ իր աչքին կարևորութիւն կ'ըստանային։ Ճիգ կ'ընէր կատակի տալու. իզո՛ւր. ընկերոջ ու աղջկան ներկայութենէն միշտ կը հետանար հոգեկան զապուած անհանգստութեամբ մը։

«Սակայն ծիծաղելի է։ կը նախանձի՞մ. և ուրկէ՞. Արչակէն»։ մտածեց անգամ մը որոշ կերպով, երբ գլուխը կախ կէս-գիչերին տուն կը վերադառնար։

Յաջորդ մաքէն անցան, թէ ինչ լաւ կ'ըլլար, եթէ Արչակ չուտով իր համալսարանը վերադառնար, որ այս յիմար պատմութիւնները մէկընդմիշտ վերնային։ Բայց կայծի մը պէս իր մտածումներուն մէկէն չոզացող այս գազափարը աստիճ զարկաւ իր ինքնասիրութեան։ Ինչպէ՞ս. ինքը ուրիշն բան մը չէ՞ր արժեր. այդքան դիւրի՞ն էր ուրիշն իրեն մէկ կողմ հրելը, որ ինքը հիմա իր ընկերոջ մենակը կը ցանկայ հին վիճակը պահել կարողանալու համար։

Հին վիճակէն անչուշտ գեռ ոչինչ փոխուած չէր ըստ էութեան. միայն պարզ էր, որ ընկերը սկսած էր ազդել վերժինի վրայ. և զարմանալու ալ բան չի կար. Եւրոպային նոր սկսած, ուսանողի հրապոյրով, ինքն ալ ընդունակ ու կենդանի խառնուածքով աղջիկ մը. բնական է, որ ամենուն վրայ ազդեցութիւն ընէր։

Տիրան վատահ էր բացարձակ, որ Արշակ անչուչա ամէն գուսպ և զգուշ կ'ըլլար, եթէ իրեն յայտնի ըլլար ընկերոջը զգացումները. բայց Տիրան մինչև այդ օրը ոչ-մէկ խօսք չէր ըսած։ Եւ յանկարծ մտածեց՝ արդեօք ամէն ի՛նչ վարուած չէր ըլլար և ամէն ալ ընկերական, եթէ թեթև մը զգուշացնէ ընկերը և իր զգացումներու մասին ակնարկութիւն մը ընէ։

Բայց ի՞նչը ակնարկէ և ի՞նչպէս։ Ըսէ՞, որ այդ աղջկան հետ մի՛ խօսիր, մի՛ խնդար, որովհետև ինքը կը նախանձի. հասկըցնէ՞, թէ հեռու կեցիր ու մի՛ գրաւէր աղջիկը, որովհետև ինքը գրաւել կ'ուզէ. այսինքն մուրա՞յ։

Տիրան այն տարիճան խոր զայրոյթ մը զգաց ինքն իր անփառկան մտածումէն, որ անդին հրեց գլխէն բոլոր յուշերը և որչեց ալ չի մտածել ո՛չ ընկերոջը մասին, ո՛չ այդ աղջկան և ո՛չ ալ անոնց ենթադրական կապին։

Եւ վերջապէս իր ինչի՞ն էր պէտք այդ տեսակի աղջիկը, երբ իրաւ որ այդ տարիճանի թեթև ու փոփոխական էին անոր զգացումները։

* * *

Յաջորդ օրերը սկսաւ Տիրան քիչ մը այլ կերպ դատել։

Ջափաղանցութիւններու ի՞նչ կարիք կար։ Մթէ՝ քիչ՞ը կան, որ մեզի կը գրաւեն իրենց այս կամ այն առաւելութեամբը. տակի ի՞նչ վնաս։

Բայց ամէն պարագայի կը խուսափէր թէ՛ Պզտիկեաններու և թէ՛ ընկերոջը տունը երթալէ։ Եւ ինքզինքը զբաղման տալ կ'ուզէր։

Ջո՞ւր քանի մը անգամ փորձեց գրելու. ցրուած բան մը կար հոգիին մէջ և կարծես ծուլութիւն։

Այդ օրն ալ նորէն ամբողջ օրը տունն էր եղեր։ Քիչ մը կարգացեր էր, քիչ մը իր հին տետրակներն էր աչքէ անցուցեր և իրիկուան դէմ ամէն ինչէ ձանձրացած նստեր էր պատշգամը և ծովը կը դիտէր, երբ հեռո՞ւն Մարմարայէն Ոսիփոր մտնող չոգենաւի մը սուր սոյլը, որ ուժասպառ և յուսահատ մարդու մը ճիչը կը յիշեցնէր, յանկարծ ոտտնաւորի մը գաղափարը բերաւ գլխուն մէջ։

Արագ մտաւ սենեակ, անցաւ գրասեղանին առջևը, քաշեց երես մը թուղթ ու սկսաւ գրել։ Սակայն հազիւ հինգ-վեց տող, որ գրիչը կանգ առաւ, ո՛չ մտածումը, ո՛չ ալ յանդերը չէին ուզեր հնազանդիլ։

Նստած էր անշարժ, արմունկը սեղանին ու կը նայէր հեռուն, ծովուն առանց որոշ բան մը մտածելու, երբ նախասենեակը ոտքի ձայներ լսուեցան և վրայ երած դուռը կռնակի վրայ բացուեցաւ։

— Վախնամ մուսագ եկեր է. կ'ուզե՞ս հետանամ.— բացականչեց Արշակ սեմէն խնդալով և ետ դառնալու չարժուեցաւ մը ըրաւ։

— Եկո՛ւր.— պատաց Տիրան ոտքի ցատկելով։ — Փորձեցի գրեմ՝ բան դուրս չեկաւ։

— Գրածդ ի՞նչ է։

— Պարապ բան։ Լուրջ աշխատանքի տրամադրութիւն չկայ։ Յրուած եմ։

— Ես ալ յրուած եմ. կեդրոնանալ չեմ կրնար, բայց պարապ չեմ։ Այսօր ամբողջ օրը ոտքի վրայ էի. ուր ըսես եղեր եմ։ Տեսակ մը չարժուելու, տպաւորութիւններ կրելու, տպաւորութիւններ փոխանակելու պահանջը ունեմ։ Դիտե՞ս, Տիրա՛ն, վերջինը կ'ուզէ վարժուհի դառնայ։

Տիրան ամբողջ մարմնով ցընցուեցաւ ընկերոջը բերնէն այսպէս յանկարծ առանց կապի վերջինի անունը լսելով, բայց իսկոյն ինքզինքը ժողվեց։

— Վարժուհի՞. ո՞րկէ ուր. և ո՞վ ըսաւ։

— Հին պատմութիւն է, բայց ինքը խնդրած էր, որ առայժմ ուրիշներուն չխօսիմ այդ մասին։ Բայց այսօր անսովոր հոգեկան վիճակի մը մէջ եմ. պահանջ ունիմ ընդհակառակը ըսելու, խօսելու։ Ան՛ եկաւ, եկաւ քեզի։ Դիտե՞ս, Տիրա՛ն, այդ ազջիկը սովորական դէմք մը չէ մեր հասարակութեան մէջ։ Անոր վարժուհի դառնալու այդ յանկութիւնը իր առաջին ճիգն է անկախ Թուիչքի։ Վարժուհի կը դառնայ, թէ ուրիշ ինչ որ ուզենայ, տակաւ չէ կարեւորը։ Ինծի հետաքրքրողը իր հոգիին չարժուելն է, իր չրջապատի ծանծաղուտէն դուրս գալու ձգտումը, իր խոյանքը դէպի աւելի վեր։

— Ինչպէս կը տեսնեմ՝ այդ ազջկան գործը բոլորովին սրտիդ ես առեր.— ընդմիջեց Տիրան ձայնով մը, ուր քաց վէրքին վրայ չօշափում մը կրած հիւանդի չնչաղ կար և հեգնութեան մը թափթփուկը։

— Է՛, ևթէ կ'ուզես՝ այո՛. քեզմէ ի՞նչ ծածկեմ։ Առաջին անգամ օրէս մէջս խոր համակրանք մը կայ դէպի այդ ազջիկը։

Ու երկուքն ալ լռեցին։

Տիրան սոսկալի ճնշում մը ունէր կրծքին տակ. ու մէկ փոփոգ մը միայն. գո՛ւրս։ Ձգել ու փախչիլ կ'ուզէր, որ առանձին ըլլար, որ Արշակը իր դէմը չըլլար։

Եւ այդ ճնշման ու յանկութեան տակ արձանի մը պէս քարացեր մնացեր էր, երբ ընկերը մօտեցաւ ու մտերմօրէն բռնելով թեւէն չարունակեց.

— Դուն անշուշտ այս տեսակ խոստովանանքի մը չէիր սպասեր ինծմէ այն իրիկուընը, երբ գրեթէ բռնի ինծի ազջկան կը ներկայացընէիր։

Տիրան յանկարծ սկսաւ ծիծաղիլ. բարձրաձայն, չոր ու անառանձ, վայրենի ծիծաղ մը։ Այն տաիճան արտասովոր ու անախորժ, որ ընկերը ձգեց թեւը և քայլ մը ետ քաշուեցաւ.

— Ինչո՞ւ այդպէս կը խնդաս։

Տիրան կամքի լարուած ուժով խնդուկը կարից և զարմանալի հաչտ ու մեղմ ձայնով մը կցից.

— Միամտութիւնդ ինծի տարօրինակ կ'երեւի։ Բայց դիտե՞ս ինչ կայ. ընթրիքի ժամանակ է. աւելի երկար կը խօսինք ուրիշ առնն. անցած օր քոյրդ ինծի կը մեղադրէր, որ իրիկուններդ քեզի երկար քովս կը պահեմ ու առնը ընթրիքի ապասցընել կու տամ. կ'ի՛ր, դնա, որ նորէն յանդիմանութիւն չուտեմ։

— Երթա՛մ, քանի որ կը վռնտես։ Ես կը թողնեմ քեզի մուսայիդ հետ առանձին, կարելի է որ հաշտուիք. փորձէ՛։

Տիրան կեցած տեղը ակընթարթ մը անչարժ մնաց, մինակը. յանկարծ բուռն հեծկլտուք մը դուրս պոռթկաց կոկորդէն ու թեւ ու կուրծքով ինկաւ իր գրասեղանին վրայ։

Աբցունքները կը կաթկթէին դէմքին տակը մնացած թուղթին վրայ, կէսը դրուած, կէսը թերի ոտանաւորին դիրերը ազարտելով։

Երբ առաջին ուժգնութիւնը անցաւ, ազան կամաց մը գլուխը բարձրացուց, յենեց ձեռքին ու դառնութեամբ սկսաւ մտածել։

«Արժէ՞ լալ ազկան մը համար, որ ինծի հանդիպելուն պէս՝ ինծի սկսաւ սէր կապել, ընկերոջս դալուն պէս՝ նայն խաղը սկսաւ ա-նոր հետ»։

«Բայց ո՛չ. չեմ ուզեր անիրաւ ըլլամ. այդ ազկիկը դուցէ եւ երբեք ինծմով հետաքրքրուած չէ եղեր. ես եմ հիւանդ գլխուս մէջ այս ամբողջ երազանքը. յանցանքը իմ երեւակայութիւնս է, որ ամեն բան ուրիշ գոյնով կը ներկայացընէ աչքերուս, թէ՛ ընկերոջս ազատ վարմունքը, թէ՛ ազկան վերաբերմունքը։ Ազէ՛կ. ես սխալս սրբագրել պիտեմ»։

Եւ վճռական ու արհամարհոտ չարժուձեւով մը ելաւ լուացուելուս։

Միայն ո՛չ մէկ կերպ ուսերէն թօթուել չէր կրնար այն նուաստութիւն տուող ծանրութիւնը, թէ ինքը առանց այլեւայլութեան մէկուի էր նետուած ընկերոջը գալուն պէս։

Ջուր ինքզինքը համոզել կ'ուզէր, որ վերջապէս ամենքէն փոխադարձութիւն պահանջել կարելի չէ։ Չէ՞ որ ինքը դեռ ամենաթեթեւ ակնարկութիւն մը անգամ երած չէ ազկան իր զգացումներուն մասին։ Գուցէ ազկիկը իր այդ անփոյթ արտաքինէն խրտնեցաւ։ Եւ վերջապէս ի՞նչ նուաստութիւն կայ վիրաւորանք, քանի որ ո՛չ ազկիկը, ո՛չ ընկերը, ոչ-մէկը ոչինչ չգիտէ այդ բոլորէն։

Բայց այս դատողութիւնները չատ քիչ կ'օգնէին իր խայթուած ինքնասիրութեանը։ Թող ըլլայ պատահական, թող ըլլայ անգիտակից կամ ծածուկ, բայց հարուած մըն էր տակիս իր հպարտութեանը, իր եսի անդիմադրելիութեան վրայ ունեցած իր մեծամտութեանը։

Տիրան այդ զգացումը խեղդել չէր կրնար։

Պզտիկաններուն հիւրասենեակը, որ պարտէզին վրայ կը նայէր, ողողուած էր արեւով։ Իրիկուան արեւը իր վերջին չարաճճի ճառագայթներով խաղի էր ելեր ճաչակով կահաւորուած սենեակի իրերուն հետ. հայելիները, նկարները, չրջանակները, ապակի ու մետաղէ առարկաները, ամէն ձեւի զարդերը բոլորն ալ կարծես կը վառէին ու ամէն կողմ չողեր կ'արձակէին։

Եւ լայն բացուած պատուհաններու եւ նետուած ծանր վարագոյրներուն մէջէն ամառ իրիկուան բոյրերով ծանրաբեռնուած հաճելի չունչ մը կը խուժէր ներս, միջառներու իրարու հիւսուած խոլ բըզիւնի մը հետ։

Վերժինի ըսածին պէս քանի մը վայրկեանի խօսակցութենէ ետքը տիկին Պզտիկան ելաւ սենեակէն լռիկ հիւրը թողնելով ապչկանը խնամքին։

Եւ ապչիկը անմիջապէս սթռաւը քիչ մը ուելի մօտեցաւ դէպի տղան և հարցուց մանրիմ չեչառվ մը.

— Ամենէն առաջ ըսէ՛ք խնդրեմ նոր լուր մը ունի՞ք ձեր ընկերներու այդ նշանաւոր գպրոցէն։ Ե՞րբ պիտի վերջանան այդ ասրասիւլի պաշտօնական ձեւակերպութիւնները. ամառը արդէն վերջանալու վրայ է։

Տղան փոխանակ պատասխանի երկար ժպիտ մը միայն առաւ ապչկան։ Եւաքը դգուշութեամբ սրբեց ժպիտը իր դէմքէն, քիչ մը լուռ մնաց և վերջապէս ըսաւ հանդիսատ ու մտածկոտ.

— Ներեցէ՛ք, օրիո՛րդ վերժին, որ ըսեմ ձեզի իմ ամբողջ մտածումս։ Հետզհետէ սկսեր եմ քիչ մը ուրիշ կերպ մտածել։ Ես չէի ուզեր, որ դուք հիմա վարժուհի դառնաք. որովհետեւ ես չեմ ուզեր, որ դուք սովորական վարժուհի մը դառնաք։ Ես կը ցանկայի, որ դուք ամէն գործ սկսելէ առաջ նախ ձեր զարգացումը լրացընէիք, խորացընէիք և մտնտպիտասրէն պատրաստուէիք ձեր ձեռնարկել ուզած աշխատանքին համար։

Հեգնական ժպիտ մը խաղաց վերժինի դէմքին՝ երբ պատասխանեց դառնութեամբ.

— Աւելի ես ալ կ'ըզգամ, ես ալ կ'ուզեմ. բայց ըսէ՛ք խնդրեմ ես հոս ո՞ւր կրնամ այդ ձեր ըսած լայն ու խոր մտնտպիտական պատրաստութիւնը ձեռք բերել. կը կարծէք հոս ձեր Եւրոպա՞ն է։

— Եթէ հոս Եւրոպա չէ, գոցէ՛ք հոն, ուր Եւրոպա է։

Վերժին միայն երդիծանքով ժպտեցաւ։

— Ինչո՞ւ կը խնդաք. ես լուրջ կը խօսիմ։ Կ'երթաք քանի մը տարի համալսարան նախ ձեր ընդհանուր կրթութիւնը կանոնաւոր կերպով ամբողջացընելու, վերջն ալ մասնագիտօրէն կ'ուսումնասիրէք ձեր արհեստին ամենէն մօտիկ եկող աշխատանքը, օրինակ ձեր մանկավարժութիւնը։ Կը ծանօթանաք մօտիկէն եւրոպական քաղաքակրթութեան, կ'ապրիք արեւմտեան ժողովուրդներու կեանքովը, կը չրջիք, կը տեսնէք ուշի զարգացած ազգերու արուեստին ու արհեստին արտադրութիւնները, ընկերական կազմը, ոգին։ Մէկ խօսքով կ'ազատուիք այս նեղ կեանքի հորիզոնէն ու կ'իբացընէք ինչ որ օտարները մեզի տալ կրնան. և այդ զէնքերով և ինքնագլուխ գործելու կարողութեամբ կու գաք գործի ձեռնարկելու։

Աշխատութիւնը քովի բազկաթոռի թիկունքին յենած ու երեսն ալ ափին մէջ՝ վերջին առանց չարժուելու մը ընելու չնչաւոր ազուշ աչքերուն կը նայէր։

— Եւ պարզ է, որ այն առեն ձեր ձեռնարկած գործն ալ բոլորովին տարբեր հետեւանքներ կ'ըսանայ։ Այն առեն դուք կը յաջողիք ա՛յ միայն ինքզինքնիդ իրրեւ անհատ մը մեր հասարակութեան նուիրելու, այլ կրնաք ձեզի պէս շատ մը ուրիշ երիտասարդ ուժեր առաջացընել։ Եւ օրինակը վարակիչ է. ձեր քայլը կրնայ հետեւողներ ունենալ. ժամանակ է, որ մեր կանայք ալ բարձր կրթութեան հասնելու ձգտին։

Պահ մը չունչ առաւ։ Աղջկայ կողմէն և ա՛չ մէկ չարժուեցաւ։ Տըզան չարունակեց նոյն չերմ չեչտովը.

— Ձեզի բոլոր յարմարութիւնները, դուք պարտական էք օգտուելու։ Մտացի և ընդունակ աղջիկ էք, ունիք ձեռներէցութիւն. ձեր ամառնան անդրաժեչտ ծախքերը ձեր ընտանիքը չատ դիւրութեամբ կրնայ հոգալ. ես յոյս ունիմ պարոն բժիշկը ինքըս համոզելու։ Ուրիշ ի՞նչ է պակաս։ Անմի՛ջապէս ճամբայ իյնալ. հոս անդամ դիւրութիւն ունիք. կ'երթանք մխաին. ինքս անձամբ կը հասցընեմ ձեզի Զուիցերիա, օրինակ Ցիւրիխ։ Տասնամսեկու օր կրնամ ձեզի հետ մնալ անծանօթ կեանքի առաջին դժուարութիւններուն դէմ օգնելու համար, մինչև որ անդրանիկ պայմաններուն տէր դառնաք։ Եւ վերջապէս չատ ալ ձեզմէ հեռու չեմ. այս ձմեռ ըլլալու եմ Մխինխ, կանչեցնուդ պէս կը հասնիմ։ Է՛, այս սիրուն յատակագիծս ինչ կ'ըսէք.

Վերջին մասամբ ծանր չարժուձեով մը դէմքը ափէն հեռացուց, չակուացաւ և առանց աչքերը ազուշ հայեացքէն դատելու՝ արագաքայլ բացատրական հանգիստ չեչտով մը բաւ.

— Անցած ամառ գնչու կին մը ինծի գուչակեց, որ չատ բազդաւոր եմ ըլլալու։ Այն ժամանակ մեծ կարեւորութիւն չտուի. բայց հիմա հետզհետէ կարծես սկսեր եմ հաւատալու։ Գիտէ՞ք ինչ. այս բոլորը. . ինչպէս ըսեմ, այս բոլորը...

Խօսքը կէս ձգեց, ակընթարթի մը յափշտակուած նայեցաւ տղուն, յանկարծ մէկ ոտքիւնով ցատկեց վեր։

— Տուէ՛ք, տուէ՛ք ձեռքը։

Ալեց տղան ձեռքը, պինդ մը սեղմեց զոյգ թաթիկներուն մէջ, խակոյն ձգեց, քայլ մը ետ գնաց ու ներքին զսպուած յուզումէն աչքերը լեցան։

— Եկէ՛ք, նատեցէ՛ք, որ խօսինք.— առաջարկեց Արշակ։

Աղջիկը նորէն աթոռ մը առնել կ'ուզէր։

— Ո՛չ, հոս, քովս, քանապէին վրայ։

Վերժին առանց վարանելու նետուեցաւ քանապէին մէջ, գլուխը թեք կրծնցուց թիկունքին և տղուար ժպիտ մը նետելով իր աթոռակին հարցուց.

— Դո՞հ էք։ Խօսեցէ՛ք նայիմ։

Բայց երկուքն ալ լուռ էին. և երկա՜ր։

Արեւը իր վերջին ճառագայթները քաշեր էր ետ Պզտիկեանններուն տղուար հիւրասենեակէն. տուներուս անդորրութիւն մը փռեր էր իր փչերը և պատուհաններէն դուրս և պատուհաններէն ներս։ Տառնո՜ր, լռութիւն ու մինակ։

Եւ այնպէս լաւ էր այդ տուներուս իրիկունը, այդ լուռ անդորրութիւնը և այդ երկուքով մենութիւնը երկուքին համար ալ։

— Ուրեմն գնչուհին ըսաւ, որ դուք չատ բաղդաւոր էք ըլլալու.— խօսեցաւ վերջապէս Արշակ։

Աղջիկը ժպտաւ՝ գլխով դրական փոքրիկ չարժում մը ըրաւ։

— Ափսո՜ս գնչուհին չկայ, որ ես ալ իմ բաղդս նայիլ տայի.— ըսաւ տղան չինծու տրամաբանութեամբ մը։

— Ե՛ս.— բացականչեց աղջիկը արտասովոր աչխուժով մը.— ես կ'ըլլամ ձեր գնչուհին. ես ձեռքի գծերը կարդալ գիտեմ. դպրոցը չատերուն ձեռքն եմ նայած։ Եւ ըսածս կը կատարուի. չէ՞ք հաւատար։

— Իրա՞ւ։ Հապա կարդացէ՛ք նայիմ։

Ու ձեռքը պարզեց աղջկան. վերժին առաւ տղուն ձեռքը, քիչ մը դիտեց ափին մէջ և չարաճաճկելով դիտելը ըսաւ կարծես իր մատներուն մէջէն.

— Հրաշալի գծեր ունիք։

— Եւ ի՞նչ կ'ըսեն այդ հրաշալի գծերը։

— Կ'ըսեն որ... կ'ըսեն որ... ո՛չ, չե՛մ ըսեր. անկարելի է. կ'ըսեն որ...

Եւ առանց տղուն ձեռքը ձգելու, խանթակաթ նայուածքը նետեց տղու աչքերուն և սկսաւ սրտին խորքէն բարձրաձայն քրքջալ։

Արշակ յուզումէն, գրեթէ ակամայ, դարձուց յանկարծ ձեռքը, բռնեց աղջկան դաստակը և բոլոր ուժովը սեղմեց։

Վերժինի ծիծաղը վայրկենապէս կտրեցաւ և անսովոր կերպով

լրջացած նայուածքը իջևցուց վար։ Այնպէս միամիտ ու ամօթխած խոստովանութիւն մը կար այդ յանկարծական փոփոխութեան մէջ, որ Արշակ կարծես իր ըրածէն ամբջցած՝ անմիջապէս ձգեց աղջկան դաստակը։

Վերժին իսկոյն ելաւ ոտքի։ Դուրսէն ալ լսուեցան քայլեր ու մայրը մտաւ սենեակ. եաւէն ալ սպասուհին, որ ափսէի մը մէջ խըմիչք ու քաղցրեղէն կը բերէր հիւրին։

* * *

Ճիշդ յաջորդ առտուն էր։ Արշակենց փոքրիկ սեղանատանը դէմ դէմի նստած կը նախաճաշէին մայր ու աղայ, երբ տիկինը հարցուց։

— Տիրանը ի՞նչ ունի այս վերջին օրերը։ Տեսակ մըն է։ Բան մը չդիտե՞ս։

— Ոչինչ ալ չկայ. ի՞նչ պիտի ունենայ։

— Ո՛չ. չատ է փոխուած. այնպէ՞ս մտածկոտ ու տխուր։

— Ինչո՞ւ պիտի ըլլայ տխուր. երևի աչխատանքի մը վրայ է։

— Ո՛չ. ես գիտեմ. Վերժինն է պատճառը։

Արշակ յանկարծական ցնցում մը ունեցաւ, թեթև մը ժժգունեցաւ ու հարցական աչքերով նայեցաւ մօրը։

— Ինչո՞ւ զարմացար. — չարունակեց մայրը. — ժամանակ մը Տիրանի երկու խօսքէն մէկը Վերժինն էր. խնդալս կու գար. վերջերս անունն անգամ չի տար։ Ունևար տղայ չէ. երևի կամաց մը դուռը գոցեցին երեսին. բժշկենք հաչիւը գիտցող մարդիկ են. մայրը քաչեց երևի աղջկան փեչէն։

— Ինչե՛ր կը խօսիս, մայրի՛կ. պարապ խօսքեր են սոոնք։

— Խօսքերս ինչո՞ւ ըլլան պարապ, աղա՞ս։ Աւելի ազեկ է, որ դուն անգամ մը Տիրանը խօսեցընես։ Ան ալ զաւկիս պէս է ինծի համար. դուն երբ հոս չես ըլլար՝ քու կարօտդ անկէ կ'առնեմ։ Մեղք է տղան. անգամ մը որ ցաւը սրտին առնէ՝ գէշ է։

Տղան առանց մէկ խօսքի ելաւ ոտքի, անձեռնոցիկը դրաւ սեղանին ու ծանր քայլերով բարձրացաւ իր սենեակը։ Նստեցաւ անկիւն մը, ձեռքերով գլխքը գոցեց ու սկսաւ մտածել։

«Ժամանակ մը երկու խօսքէն մէկը Վերժինն էր». մօրը ըսած այս բառերը կարծես գամուեր էին գլխուն մէջ։ Միթէ իրա՞ւ էր։ Գուցէ և։

Սկսաւ մտաբերել բժիչկենց հետ ծանօթանալէն մինչև վերջին տեսակցութիւնը իրենց խումբին մէջ անցած-դարձածը։ Տիրանի, իրաւ որ, ոգևորութիւնը աղջիկով, երկուքի փոխադարձ սիրալիր վերաբերմունքը, յիշեց չատ մը մանր ու երկրորդական դէպ-

քեր, որոնք մինչև այդ վայրկեանը ո՛չ մէկ խորհուրդ չունէին, հիմա սկսան իմաստ հաղնիլ։ կարծես թէ իր աչքերուն առջևէն վարագոյր մը ծանր-ծանր ևս կ՚երթար։

Յիշեց Տիրանի վերջերը բռնած դիրքը և ճշմարիտ որ տխրութիւնը։ ինչպէ՞ս էր, որ ինքը այդ մասին բնաւ չէր մտածած։ Մտաբերեց վերջապէս իր քանի մը օր առաջուան խօսակցութիւնը, երբ ակնարկած էր ընկերոջը իր զգացումները։ եւ պատկերացաւ աչքերուն դէմ Տիրանի սեղմըւած-ճնշուած դիրքը, դէմքը և այն սոսկալի ծիծաղը։

Արշակի սիրտը սեղմըւեցաւ. երևակայութիւնը սկսաւ գործել, ու պատկերի թերի մնացած մասը լրացնել։ կը մտածէր, թէ վերջին քանի մը շաբաթներու ընթացքին ի՛նչ դառն տանջանք կրած պիտի ըլլար ազան։ Ալ չէր տարակուսեր, որ այդ երկուքը իրարու հետ կապեր ունէին և որ ինքը այդպէս բրտութեամբ երկուքի մէջը կը խրուէր։

«Բայց վերժի՞նը». հարց տուաւ յանկարծ. «հապա անոր բացայայտ համակրա՞նքը դէպի ինծի»։

Համակրա՞նք. պարզասիրտ աղջիկ է, հարցերով կը հետաքրքրուի, կը խօսի, կը խնդայ. ուրիշ ի՞նչ։ եւ որովհետև աղջիկ մը նըման մտածելու ձևեր ունի ինծի հետ և որովհետև գաղափարակից մարդու մը բնական համակրութիւնը ունի ինծի դէմ, ահա՛ ևս արդէն բռընկեր եմ, կ՚երևակայեմ Աստուած գիտէ ինչ։

Եւ նորէն պատկերացաւ աչքերուն դէմ նախորդ իրիկուան իրենց առանձին հանդիպումը, որ քանի՛-քանի անգամներ յիշեր էր դիշերը. միայն թէ հիմա բոլորովին տարբեր դառնաւորութեամբ։ Ուրիշ աչքերով կը տեսնէր հիմա ամեն ինչ. և աղջկան յուզուելը, և ամօթը, և հեռանալը։ Իսկապէս որ ինքը վարուած էր վայրենի կերպով։

Այո՛. կապեր է իր աչքերը, որ ոչինչ չտեսնէ և կոյր խաղալով կ՚ուզէ ընկերոջը ձեռքէն խլել աղջիկը։ Տիրան այս բոլորը կ՚ըզգայ, գիտէ։ Չէ՞ որ անցած օր ինքը գացեր էր մօտը և խօսեր էր աղջկայ մասին այնքան ջերմօրէն. իսկ ան իր ընկերը իր կապի ու զգացումներուն մասին տկնարկութիւն մը անգամ ըրած չէր։ Ահա՛ քեզի երկու ընկեր ու երկու կեցուածք։

Արշակ ժամերով կը դառնար իր սենեակին մէջ, մինչև որ խընդիրը ամեն կողմէն մտածեց, ինչպէս և հիմա իր վրայ ինկած պարտաւորութիւնը։ Ջիչ մը հանդստացաւ միայն այն ժամանակ, երբ իր ընկերքը վերջնապէս վճռած էր։

Պարզ էր. պէտք էր, որ ինքը հեռանայ։ Բայց իր եւրոպա մեկնելուն դեռ ամիս մը կար ու աւելի. պէտք էր կարճել այդ ժամանակը և իրենց հանդիպումները արգիլել, առանց արտաքուստ բան մը զգալ տալու։

* * *

Երբ քիչ մը եաքը քոյրը եկաւ ու ճաշի կանչեց՝ Արշակ անփոյթ դէմքով մը վար իջաւ և նոյն անտարբեր շեշտովը ուտելու միջոցին ըսաւ յանկարծ.

— Մայրի՛կ, որոշեր եմ ութը-տասը օր մը երթամ մօրաքրոջս Հալէբ։ Քանի անգամ է կ՚ըսեն ու կ՚ըսեն. անցածները կամուրջին վրայ նորէն Միհրանիկին հանդիպեցայ. կ՚ըսէր մայրս վրադ նեզացած է։

— Չէ ի՞նչ.— մէջ նետուեցաւ Մաննիկ. — Ամբողջ տարին հոս չես. հիմա ալ որ եկեր ես՝ չաբաթներով կղզի պիտի երթայ եղեր։ Մօրաքրոջ երթալդ պէտք է. գնա՛, գիշեր մը կեցի՛ր ու եկո՛ւր։

— Միտքս ուրիշ է, Մաննի՛կ։ Մինչև համալսարան վերադառնալըս վերջացնելու գործ ունիմ ձեռքս. հոս լուրջ աշխատիլ կարելի չէ. Տիրանը հետս է, միւս ընկերներս կը խանգարեն. ծանօթ ու բարեկամ ամեն մոզմէն. վերջապէս կը տեսնեմ հոս դժուար է կեդրոնանալը. երթամ կղզի, չուտ մը գործս կարգի բերեմ ու դամ։

— Արդէն դուն այդպէս ես. խելքդ դուբսն է. ինչ կ՚ուզես՝ ան ըրէ.— պատասխանեց քոյրը սաստիկ դժգոհ։

— Ե՞րբ երթալ կ՚ուզես.— հարցուց մայրը։— Երեք օր քեզի ժամանակ. աւելի չուշանաս։

— Կ՚երթամ այսօր. չուտ երթամ, չուտ ալ դառնամ։

Մաննիկ նորէն տրտնջաց։ Բայց տղան քոյրը հանդատացընելը վերջին թողնելով՝ ճաշէն անմիջապէս եաքը առաւ դէմարկը ու չիտակ Տիրանենց տունը։

Փոզոյը տեսակ մը ճնշում ունէր մէջը և վախ ու վարանումի նման զգացում մը, բայց երբ Տիրանենց դուռը զարկաւ, անդամ մը թոթըբեցաւ, իրանին ուղիղ դիրք տուաւ, դէմքին ալ զուարթ արտայայտութիւն մը։

Դուռը բացուելուն պէս ներս նետուեցաւ, աղմուկով ու խնդալով բարևեց սրահը կեցած տիկինը, կատակ մը ըրաւ Տիրանի փոքր եղբօրը հետ և նոյն աղմուկով վազեց սանդուղներէն վեր, ուժով մը եաև հրեց Տիրանի սենեակին դուռը և կէս մը չնչատ սեմին վրայ կանգ առաւ։

Տիրան տանու անփոյթ հագուստներով կեցած էր պատուհանին մօտիկ. Չութակը սեղմած ծնօտին տակ և աչքերը յառած լուսամուտին մէջ դրած ձայնատետրին՝ կը նուագէր։ Դուրսի դրան զարնուիլը, վարի աղմուկը և սանդուղներուն վրայի ոտնաձայնը ընդհա-

տեր էին իր նուագը, բայց առանց իր գիրքը փոխելու կ'ըսպասէր, որ խմանայ՝ ով էր եկողը։

Արչակ սկսաւ բարձրաձայն ծիծաղիլ։

— Սա ինչ չնարհք է, ինչ վիճակ։ Ճաշը դեռ կոկորդիդ գրկեր ես սիրուհիդ ու կը ճըզճըզացընես։ Մ'որդ, քիչ մը վազ անցիր առ քու չուխակիդ ու առանուարներդ։ դուրս ելիր անդամ մը այս ծակուռէն։ աքանչելի մեղմ օդ է այսօր։ մէյ մը հագուստիդ նայէ, մաղերուդ, չնարհքիդ։

— իմ սեննակս ալ զով է։— պատասխանեց Տիրան կարճ ու չոր։

— Աղէ'կ։ ևիկ չատ ես հաւնիր սեննակիդ՝ բարով վայլես։ Իսկ ես ո՞չ միայն առանը սիալ չեմ կրնար, այլ նոյնիսկ մեր արուարձանը։ բա'ցը, բա'ցը կ'ուզէ սիրտս։ ազա՜տ։ կը հասկընա՞ս։ Քանի մը օրով երթամ պիտի կզզի, Յակոբեաններուն։ Հալքի եզա՞ծ ես։ հիանալի է։ Ա՜, ես կչատցայ արդէն ձեր քաղաքէն ալ, ձեր քաղաքացիներէն ալ։ երթամ քիչ մը բնութեան ծոցը։

Տիրանի վրայ այս բոլորը տարօրինակ ապաւորութիւն կ'ընէր։

— Բարի ճանապարհ։— ըսաւ վերջապէս։— հոս բնութիւն չկա՞յ, ինչ է։ Շիտակը լաւ չեմ հասկընար ո'չ ըսածդ, ո'չ ուզածդ։ Նախորդ օրը բաընկեր էիր, թէ սիրահարեր ես, թէ չգիտեմ ինչ ես եղեր։ այսօր ալ եկեր ես, թէ բնութիւն, ազատութիւն...

— Ո՞վ է սիրահարեր։— ընդհատեց Արչակ բոլորովին ապշած դէմք մը չինելով։

— Անցած իրիկուն դուն չէի՞ր ըսողը։

— Ա՜հա, վերժի՞նը։

Եւ սկսաւ խնդալ բոլոր կրծքովը։

Տիրան մեծ զարմանքով ընկերոջը կը նայէր։

— Դուն ուրեմն տեղաւորեր ես գլխուդ մէջ, որ ես կը սիրե՞մ վերժինը։ Այո՛, իրաւ որ չատ լաւ աղջիկ է ու չատ կը հաւնիմ։ Բայց սէր, ամուսնութիւն ու չգիտեմ ինչ, առ տեսակ կապոյզ-կապկանդոյզ բաներդ ինծի համար չեն։ ազա՜տ, ազա՜տ։ և վրաս ամենևին սիրահարուածի չուշորդ կա՞յ։— վերջացուց իսկական սրտագին ծիծաղով մը։

— Անցած օր կար, այսօր չկայ։— խնդաց Տիրան իր հերթին։

— Ո'չ անցած օր, ո'չ ալ այսօր։ Եւ ի՞նչ եմ ըսեր անցած օր այդպէս երեւակի։ լաւ չեմ յիշեր։ և վերջապէս ինչ ալ ըսած ըլլամ առտր կ'ըսեն՝ խեղճը ըսաւ, խելօքն հաւատաց։ Դուն ինծի ան ըսէ՝ կզզի կու գա՞ս։ քեզի կը խոստանամ էչերու վրայ արշաւանք մը կզզիին չուրջը։ խելք ունիս՝ ակո'ջ։ Յառաջ եկեր եմ քեզի հրաւիրելու։ կէս ժամէն կը մեկնիմ։ Աչխատէ՛, որ գաս։ ազատ ժամանակ կ'անցընենք։

Երգ մը մրմնջալով սրացաւ սանդուղներէն վար, դոցից ուժով մը տան դուռը ու փակոց։

* * *

Երբ վարը դրան գոցուելու ձայնը լսեց՝ Տիրան կամաց մը չըտկուեցաւ և սկսաւ սենեակին երկայնքովը երթեւեկել, ըսա եւեւոյթին խոր մտածման մէջ թաղուած, բայց էապէս ոչինչ չէր մտածեր. տհասակ մը խառնակութիւն էր գլխուն մէջ, իրար չբռնող ենթադրութիւններու, յիշողութիւններու կտորներ, որոնք յորձանքի մէջ ինկած փայտի բեկորներու պէս մէյ մը երեսը կ'ելլէին, մէյ մը յետակը կ'իջնէին։

Ցանկարծ կեցաւ, արագ փոխեց հագուստը, առաւ գլխարկն ու գաւազան մը, լուռ առանց ոչ-ոքի ոչինչ ըսելու իջաւ վար, դուռը գոցեց հանգիստ չարժումով մը և վարանոտ քայլերով ուղղուեցաւ դէպի դաշտ։

Ցիր-ցան, բարակ ամպերուն մէջէն արեւը իր չոզերը վար կը մաղէր։

Մաքուր օդը և ազատ չարժումը կարծես ընթացք տուին ազատ մտքերուն։ Սկսաւ մտածումները իրարու կապել, հակասութիւնները հարթելու ջանալ և եզրակացութիւն մը հանելու աշխատիլ։

«Խնդիրը ըսաւ, խելօքն ալ հատաց»։ Տիրան փարեցաւ ընկերոջը ըսած առածին։ Եւ իրա՛ւ, Աբշակ խնդիր մը չէ՞ր, իր դաղափարներով չափչտակուած մէկը։ Անշուշտ ատ էր և անցած օրուան անոր տարօրինակ ոգեւորութեան պատճառը։ Վերժին ըսեր էր, որ վարժուհի է դառնալու և Աբշակ ուրախութենէն այլեւս ինչ ըսելը չգիտէր։ Եւ ինքը, որ յիմարի պէս կարեւորութիւն էր տուած այդ փախուկի խօսքերուն։

Թէեւ այս բացատրութիւնը երեւոյթի բոլոր հակասութիւնները լրիւ չէր դոցեր, բայց Տիրան ամենաւելն տպամտիր չէր կասկածելու։ Վերջապէս չէ՞ որ ընկերը ինքը ըսած էր քիչ մը առաջ, թէ իր հոգին սիրոյ կաչկանդումներուն համար առեղծուած չէ, թէ ինքը ազատութիւնը կը գնահատէ։ Դուցէ և խելացին ան է։

Ինչ կը վերաբերի վերժինին՝ պարզապէս ծիծաղելի էր. և Տիրան թեթեւ մը ժպտացաւ։

«Ինչ տարօրինակ է մարդկային միտքը. մեր զգայարանքները կ'ըզգան այնպէս, ինչպէս մենք ինքնին զգալ կ'ուզենք։ Մտածեցի, որ աղջիկը հակում մը ունի դէպի ընկերս և անո՛ր իր ամբողջ վարմունքը ուրիշ գոյն առաւ։ Եւ իսկապէս ուրկէ՞ հանեցի այդ անմիտ ենթադրութիւնը. ա՛ռ ալ վայրկեանի տրամադրութիւն. ամեն բան վայրկեան, վայրկեանի մը ծնունդ ու վայրկեանի մը համար»։

Հոս ալ տղաս յանկերէն թեթեւաւոի քանի մը դէպքեր անցան, որոնք քիչ մը աւելի՛ կշիռ ունէին կարծես, բայց այդ կէտերուն վրայ այնչափ դիւրին աչք դոցեց, որչափ որ մտածման այս եզանակը իր ինքնասիրութիւնը կը չոյէր։

Ուրեմն պարզ թիւբիմացութիւն մըն էր այս ամէնը, կոպիտ թիւբիմացութիւն մը. ուրեմն ոչինչ չկար կատարած, փոխուած կամ կտրուած։

Տիրան իր մէջը նայեցաւ այդ մաքին թողած ուրախութիւնը, վայելելու համար։ Բայց որքա՜ն եզաւ զարմանքը, երբ զգաց, որ իր կտրտած կարծածը կրկին իր ձեռքը ունենալը հազիւ թէ հաճոյք կը պատճառէր սրտին։ Եւ հոս առաջին անգամ որոշ գիտակցեց, որ ապրիկը կտրըննդելու գազափարը միայն չատ թևթեւ կերպով իր հոգին վչտացուցած էր և որ իսկապէս իրեն խայթողը ապտակուած ինքնասիրութիւնն էր։

«Մի՛թէ... »։

Ոտքի արտհաւը, որուն վրայէն մեքենարար կը քալէր, տարաւ ծովուն բարձր ափին բուսած ծուռումուռ թզենիի մը տակ, որ իր արմատներով պինդ մը հողը գրկած՝ բունն ու ոտները դատարկութեան վրայ կը կախէր։

Տիրան մատս ծառի առուերին մէջ ու ալ թեւով բունը գրկած, ճակատը յենուց երկու ճիւղերու միացման անկիւնին. և այդպէս կէս մը հողին, կէս մը ծառին, կէս մըն ալ օդին մէջ առկախ՝ անշարժ մնաց։

Վարը, ափին մօտիկ, ցիր ու ցան չեչոտ ժայռերու չրջանակի մը մէջ ձկնորսի փոքրիկ նաւակ մը կեցած էր։ Տիրան անսովոր հետաքրքրութեամբ մը կլանուած իր բարձունքէն կը դիտէր ձկնոթային դզդզուած մօրուքը, ճերմակ մազերը, այրուած դէմքը, բաց թաւ կուրծքը, մինչեւ սրունքները բոպիկ ոսկրուտ ոտքերը, մաչուած ու թաց չալուարին լայն ծալքերը ու կարկատուած մեներանին գոյնզգոյն կտորները։

Ծերուկը կը ծռէր, կը չոկուէր. թեւի վարպետ չարժում մը և ուռկանը, բացուղ հովահարի մը պէս, կը փռուէր օդին մէջ. չը՜ափ. ու կապարէ գնդակներու չրջանակը կ՚անձրեւէր ջուրին վրայ, իրեն հետ ցանցը դէպի յատակը քաշելով։

Երբեմն պարապ կ՚ելլէր ուռկանը ծովէն, երբեմն քանի մը ձուկ, որ ճարպիկութեամբ կը բռնէր ալիւորը ու կը նետէր նաւակին փորը, սակ ծովուն ջուրը նոյնս էր ծծուեր ու թևթեւ մը կ՚օրօրուէր։

Տիրան կը հետեւէր ուշադիր և ուրիշ ոչինչ մտածել չէր ուզեր։ Մտածման այս արուեստական ոչնչացումէն այն ատեն միայն սթափեցաւ, երբ ձկնորսը ուռկանը փռեց նաւակին քիթը, թիերը ձեռք առաւ ու քանի մը վարժ չարժումով ժայռերուն մէջէն ելաւ ու կոր-սըեցաւ փոքրիկ հրուանդանին հետեւը։ Տիրան նայեցաւ չուրջը. ափերուն հորիզոնին կը քսուէր։ Ժամեր էին անցեր։

* * *

Հեռացաւ իր թղենիէն ու յարմար տեղ մը, ուրիշներու ոտքի հետքերէն օգտուելով բարձր ափէն իջաւ ծովուն եզերը աւազին վրայ, որ արդէն բոլորովին ստուերի մէջ էր։ Եւ ժայռէ ժայռ ցատկելով առաջացաւ քիչ մը ծովուն մէջ ու նստաւ յարմար ժայռի մը եզերքին։

Արձանի պէս անշարժ ու իր գաւազանին վրայ կքած՝ կը դիտէր հեռուն, երբ իրմէ քիչ մը հեռու ծովուն մէջ բան մը ճողփեց և չուբի կաթիլներու ազուոր մանեակ մը չարաւեցաւ իր կրծքին և ուսերուն վրայ։

Տղան քնազդօրէն ետ քաշուեցաւ ցնցումով ու լսեց հնչուն քըրքիջ մը, որ բարձրերէն կու գար։ Թղենիին մօտիկ, ուր քսառորդ ժամ մը առաջ ինքն էր կեցած, հիմա կեցած էր Վերժին եզբօր քոլը ու կը խնդար ձեռքի փոչին մաքրելով։

— Բաղնիքն անո՛ւշ.— պոռաց բժիշկի զուարթ ձայնը։

— Կեցէ՛ք, ես ալ իջնեմ.— ճչաց Վերժին և ցամաքի մէկ չեղ էջքէն վար վազեց՝ եռևէն հող ու քար գլորելով։

Բժիշկը հետևեցաւ իր քրոջը միայն աւելի զգուշութեամբ։ Տիրան ալ իր ժայռերէն ետ եկաւ ափը։

— Այս ժայռերուն մէջ ի՞նչ կը փնտռէք. ամօթ չըլլայ հարցընելը.— կատակեց բժիշկը։

— Բանասաեղծութեան նիւթ.— պատասխանեց Վերժին անմիջապէս. և չարուճտկեց խօսքը ուղղակի Տիրանին ուղղելով.— Ձեր բանաստեղծները հիմա այնքան քիչ բանաստեղծական բան կը գտնեն ցամաքի վրայ եղածներէն, որ սոխպուած են ջուրերուն խորքը փնտռելու իրենց նիւթը։

Տիրան, որ դեռ բոլորովին կապզտրուած չէր այսպէս անակընկալ կերպով աղջկան հետ հանդիպելէն՝ «Ի՞նչ ըսել կ'ուզէ» մտածեց ինքնին և իրեն այնպէս թուեցաւ, որ այդ խօսքերը ակնարկ մըն էին։ Ու աղջկան երեսը կը նայէր քննող նայուածքով։

Նոյն Վերժինն էր, նոյն դիմագիծերը, նոյն աչքերը, բայց զարմանալի կերպով բան մը պակսած էր կարծես։ Տիրանի դէմքին մէջ Վերժինի պատկերը ուրիշ տեսակ էր. աւելի ներթայնի, աւելի խորհրդաւոր, աւելի «բանաստեղծական». մինչդեռ իր դէմքը հիմա միսէ ու ոսկորէ իրական դէմք մըն էր, մարմին և արիւն. ազնիւ կամ անախորժ չէր, ո՛չ, բնա՛ւ. բայց ան հին հնքիաթական հրապոյրը չըկար. թուեր էր։

— Ինչո՞ւ այդպէս զարմացած երեսս կը նայիք.— յանկարծ հարցուց աղջիկը, բայց ինքն ալ իսկոյն վրայ բերաւ.— Ի՛նչ հիանալի ռեզոնանս ունի հոս։

Եւ անմիջապէս սկսաւ երգի կտոր մը, որ հազիւ յաջորդ պարբերութեան հասած՝ ընդհատուց.

— Չէ՛, առանց պաչնակի չեմ կրնար։

Աչխուժ պատյտ մը ըրաւ իր առանցքին վրայ և յանկարծ վազից դէպի ծովը երկարող ժայռի մը վերջին ծայրը ու ծռեցաւ ինքն իր վրայ։

— Պարոն Տիրա՛ն, զաւազանի՛դ, չո՛ւտ, չո՛ւտ։

Առաւ ազուն ձեռնափայտը, կռնեց երկաւ ժայռերու ճեղքին մէջը և ըստ երևոյթին բան մը հալածելով, մերթ կը ծիծաղէր, ակընթարթ մը կը լռէր ու նորէն կը պոռար ոգևորուած.

— Ի՜նչ ճարպիկ է անպիտանը. չէ՛. չես փախչելու։

— Վերժին, կամաց, չաւը կ'իյնաս.— պոռչացաւ եղբայրը։

Տիրան կը նայէր ազջկան չարժուելիներուն, բացականչութեան, յուզումին ու պարապ ոգևորութեան և այդ ամենը սաստիկ երեխայական կը գտնէր։

Աստուա՛ծ իմ, ի՞նչն էր, որ մինչև հիմա իր աչքին ու իր մտքին ալեկո՞ծ անտառն, այնպէս հասուն, խելացի, այնպէս կատարեալ ու անդիմագրելի կը ներկայացներ այդ ազջիկը։

«Պատրա՞նք ու ինքնանենգչո՛ւմ». առաւ ինքը իր հարցումին պատասխանը իր հոգիին մէջ։

Վերժին ծովէն գլուխը բարձրացուց, չակուճցաւ ամբողջ հասակով և կը նայէր հմայուած.

— Բայց տեսէ՛ք, տեսէ՛ք, ի՜նչ սքանչելի երկինք է։

Արդէն մարը մտած արևի վերջին չողերը արևմուտքի լեռնեբուն ետևէն կարծես ծածուկ դուրս էին սպրդեր և գիշերի, կարմիրի ու նարինջի ցոլտքեր կը սրսկէին նաբեր ու ցրիւ ամպերու փետթերուն վրայ, որոնց անրջային ձևերը դանդաղ կ'այլակերպէին դիտողի աչքերուն դիմաց։

— Բանաստեղծի մը գրչին կ'ըսպասէ անմահանալու համար.— ակնարկեց բժիշկը Տիրանի դէմքին ժպտելով։

— Անիկա այսօր ուրիշ յոռետես փիլիսոփայի մը կեցուածքը ունի, քան բանաստեղծի.— առարկեց վերժին եղբօրը։

— Եւ օրիորդը իրաւունք ունի.— հաստատեց Տիրան։

— Մի՞թէ. և ինչո՞ւ ...— հարցուց բժիշկը։

— Կան վայրկեաններ, երբ մարդու դէմքն մէջ կասկածի հարցեր կը ծնին։ Ըսէ՛ք խնդրեմ, ինչո՞ւ համար է այս պոռտ գոյներով չպարուած երկինքը. ինչի՞ կը ծառայէ այս ծուի հարթութիւնը, երբ իր հայելին այդպէս քծնանքով դէմ կը բռնէ քոքեթ ամպերու նազանքին. ի՞նչ խորհուրդ ունի այդ դիմացի լեռներուն անվերջ գլուխ-գլխի խորհրդակցութիւնը. ի՞նչ նպատակ ունինք մեզ, որ ժամ մը առաջ կ'ուտէինք, հիմա կեցեր ենք հոս և վազը, ո՞վ գիտէ, կա՞նք թէ ոչ. ինչո՞ւ համար է մարդկութիւնը ընդհանրապէս, մանրամասնութիւնը, սէրը իրենց ոգևորութիւններով, հիասթափումով ու պատրանքներով։

— Ատանք գուցէ բանատեղծական, բայց չիմար հարցեր են. ներեցէ՛ք արտայայտութիւնս.— առարկեց բժիշկը քաղաքավարին ու անքաղաքավարը իրար խառնելով։— Բնական երեւոյթներու համար գոնէ մենք՝ բժիշկներս՝ նպատակը չէ, որ կը հարցընենք, այլ կը փնտռենք պատճառները։

— Նպատակներն ալ ձեզի ըլլան, պատճառներն ալ.— բացականչեց Վերժին։— Բնութեան գիտնականութիւններու, կեանքի և հոգեկան ապրումներու նման երեւոյթներու դիմաց ինձի հետաքրքրողը անոնց գոյութիւնն է, որ կան։

— Ափսո՜ս ալ չատ խախուտ է.— պատասխանեց Տիրան խիստ կատաղած չեչոով մը։— Շատ մը գիտնականութիւններ կան մեր չուրջը և շատ մը ապրումներ մեր մէջը, որոնց գոյութեան երկար ժամանակ որևէ տարակոյս չունինք. բայց յանկարծ կու գայ ակնթարթ մը ու մենք կը տեսնենք, որ այդ բոլորի գոյութիւնը միայն մեր երեւակայութեան մէջն է եղած։

— Այսօր իրաւ որ չատ ձախորդ էք տրամադրուած, պարո՛ն Տիրան.— բացականչեց աղջիկը հաշտարար ժպիտով մը։— Աւելի ապէկ է, նկէք երեկով բան մը երգենք. բայց այնպէ՞ս կինդանի զուարթ ժիր բան մը. ձեր յոռետեսութիւնը կրնաք և վերջը չարտահայել, եթէ չատ կը ցանկաք։

Տգան իր մէջ պայթյումի նման զգացումի մը խլրտիլը զգաց, բնազդական հակազդեցութիւն մը աղջկան գոհունակութեան ու զբաղութեան դէմ։

Բժիշկը իր բամբ ձայնովը սկսաւ իր մէկ սիրած ուտանոզական երգը. գոյրը անմիջապէս ձայնակցեց. և միևնոյն ժամանակ ճանապարհ բնական խիճերուն վրայէն։

Տիրան կը քալէր լուռ. երբեմն քովընտի գազտուկ նայուածք մը նետելով վերժինի դէմքին. և երգելու ատեն անոր ըրած բերնի ու դէմքի չարժուձիները այնքան ալ ախորժելի չէր գտներ։

Բնակութիւններուն մօտիկ իրարու նետէ իրարու կապուղ երգերը ընդհատուեցան. կեցան և իրենք, իրարմէ հրաժեչտ առին. փողոցները կը բաժնուէին։ Տիրան մինակ ու գլխահակ կ'երթար մտախոհ։

Դատարկութիւն մը կար կրծքին տակ։ Այն հին նեղքին պատասպրութեան ճնշող զգացումը, որ ժամանակ մը վերժինով ոգևորուելն էր լեցուցեր, այս վերջին օրերն ալ կատածը, նախանձը, արհամարուած ըլլալու ճանկռտոզ զգացումը, ընկերոջը մեծ գոհացերութիւն մը ըրած ըլլալու հպարտութիւնը։ Եւ ահա՜ հիմա ատոնք ալ կը ցընդէին ոչինչին մէջ, աչքերուդ դէմ հալուող անյայտացող մառախուղի մը պէս։ Չէ՞ որ այդ բոլորը երեւակայութիւն էր միայն և թիւրիմացութիւն։

Պարապ էր հիմա հոն նեղքը։

Աստու մը որքան եզաւ Վերժինի ապրանաւթիւնը, երբ սպասաւոր մը իր հասցէին նամակ բերաւ և նամակին վրայ Վերժին իր Պետրոսի գիրը ճանչցաւ։

Մինչ Պետրոս, որ մայիսի վերջերը Ամերիկա էր գացած մէկերկու ամիսով՝ հիմա վերադարձեր էր նորէն գպրոց և Վերժինը գիշեր մը իր քովը կը կանչէր, ինչպէս քանի մը անգամ ըրած էր, երբ ինքը իր պարապմունքներուն պատճառով այցելութեան անկարող կ'ըլլար։ Վերժին անմիջապէս մեկնեցաւ և երկու ժամ չանցած իր սիրած գպրոցի սեմին վրայ նետուեցաւ Պետրոսի վիզը։

Ամբողջ իրիկունը զուարթ անցաւ իր վարժուհիներու ու մէկերկու ծանօթ ընկերուհիներու շրջանին մէջ։ Միս պատմեց իր ճամբորդութիւնը, Ամերիկա անցուցած օրերէն ու տպաւորութիւններէն հին ու նոր դէպքեր ու մանրամասնութիւններ։ Եւ կէս գիշերուան մօտիկ էր արդէն, որ երկուքով առանձնացան իրենց սենեակը հանդստանալու։

Փոքրիկ սենեակ մըն էր Միսի ննջարանը, որ միևնոյն ժամանակ իր աշխատանոցն էր և մանաւոր ընդունարան մանրիմներու համար։

Փոքր, կրկնայարկ թիկունքով պրասկան մը ամէն տեսակ գործիքներու, տուփերու, յախճապակիներու, ծաղիկներու և ալպումներու տակ կորսուած։ Պատերուն գամուած էին նկարչի հովանարներ, քանուած գոյնզգոյն թուղթէ դրպանակներ, ամէն դիրքի մնծ ու փոքր լուսանկարներ. ճապոնական խոշոր կոմիր հովտոց մը առաստաղին մէջտեղէն կախուած էր բոց. պատին տակ ճերմակ ու ցած մահճակալը. քիչ մը հեռուն սենեակին կեդրոնը սեղան մը, որուն վրայ կանաչ լուսամփոփով լամպն էր դրուած, իսկ սեղանին մօտիկ չեզոնը, որուն վրայ այսօր Վերժինի համար անկոպին էր պատրաստուած։

Երբ երկու աղջիկները ներս մտան՝ Պետրոս զուռը կղպեց։

— Վերջապէս առանձին ենք. խօսցո՛ւր հապաւանիդ ու ինծի գլուխ գլխի քիչ մը խօսինք։

Օգնեց Վերժինին չիփակը հանելու ու քովէն, հանեց ինքն ալ, իր ճերմակ պլուզներէն մէկը տուաւ հիւրին, որ հագնի. և երբ պլուզիկը հագնելին առջևը կնցած մնրկ թևերով իր մարիրը բռնող

կեռիկները կը հանէր, Մխ Պետրոս քայլ մը եա կեցած կը դիտէր անոր կիսադէմը կէս մը իրականին վրայ, կէս մը հայելիին մէջ, հետզհետէ ուսերուն թափուող չագանակի մազերը, և քորեէն ազատուած անոր իրանը։

— Բայց ինչպէ՞ս ազուորցեր ես, վերժին։— բացականչեց յանկարծ։

Նայեցան իրարու, խնդացին ու դրկըեւցան։

— Գանի մը ամսըան մէջ չատ ես փոխուեր. հասունցեր ես տեսակ մը։

— Իրա՞ւ։

Ու դէմ-դէմի նստեցան։ Մխ իր աչխատանքի սեղանին առջեւը աթոռին վրայ, վերժին ալ հայելիին քովը բազկաթոռին մէջ։

Մխ Պետրոս վայրկեան մըն ալ նայեցաւ հարազատի հպարտութեամբ ու խանդագատանքով վերժինին, որ անփոյթ դիրքով մը ընկերուհիին պլուզը ուսերուն նետած՝ անոր դէմքին կը ժպտէր։

— Պատմէ՛ տեսնենք դո՞ւն ինչ ըրիր այս ամառ, ինչպէ՞ս անցուցիր. նորէն երգի դասերո՞ւդ էիր զբաղուած.— հարցուց Մխ, արմատիկը սեղանին յենուց, բռունցքը դրաւ այտին ու ճկոյթն ալ բերանը։

Վերժին պահ մը լռեց և յանկարծ ըսաւ.

— Գիտե՞ս, կարելի է քանի մը չաբաթէն նորէն իրարմէ բաժնուինք և երկար, երկար ժամանակուայ համար։

— Այսի՞նքն թէ.— բացականչեց խօսակիցը և անակընկալի պատճառած զարմանքէն բռունցքը դէմքէն հեռացուց։

— Շատ հաւանական է՝ երթամ Եւրոպա։

— Ճամբորդութի՞ւն։

— Ուսումս չարունակելու։

— Համալսարա՞ն։

Ու աթոռին վրայ չտկուեցաւ։

— Այո՛. ի՞նչ խորհուրդ կուտաս։

— Բայց ի՞նչպէս եղաւ և ի՞նչ ճիւղի հետևիլ է մխածդ։

— Ես ալ կ'ուզեմ վարժուհի դառնամ, քեզի պէս. բայց նախ պէտք է նախապատրաստութիւն և համապատասխան կրթութիւն, քեզի պէս։

— Շիտակ է ատիկա. բայց այդ տեսակ դիտաւորութիւն մը ուենալուդ մասին ինծի քնաւ ակնարկութիւն մը չես ըրած մինչև հիմա. ինծմէ կը ծածկէի՞ր։

— Ես քեզմէ քան ծածկել կրնա՞մ. այդ տեսակ դիտաւորութիւն մը չունէի, որ քեզի յայտնէի։

— Ուրեմն համալսարան երթալուդ հարցը ի՞նչպէս ծագում առաւ։

— Գազափարը ինծի առաւ մեր ընտանիքի բարեկամներէն մէկը, որ ինքն ալ համալսարանական մըն է և ամրան արձակուրդը եկած է ծնողքին հետ անցընելու։

Եւ այս չափով այդ կնճռոտ խնդիրը դոցիլ կ'ուզէր և ուրիշ խօսքի անցնիլ. բայց Մխ Պետրոս սկսաւ քրքրիլ·

— Ի՞նչ կը սորվի ինքը այդ պարոնը։

— Ընկերական գիտութիւններ։

— Աւելի՞ չատ ընդհանուր անուն է· երևի՛ իրաւաբանութիւն։

— Ո՛չ· անոր ուզածը հանրային գործունէութիւն է, ո՛չ անհատական։ Աւտրանլուն պէս պիտի ձեռնարկէ գրական ու գիտական լուրջ ու մեծ ամսագրի մը հրատարակութեան։

— Այդպէ՞ս·— բացականչեց Մխ Պետրոս կարծես իր մտածումներուն մէջէն և յանկարծ հարցուց·— Եւ ի՞նչ է այդ ձեր բարեկամին անունը։

— Սմբատեան·— պատասխանեց աղջիկը կարճ, կարծես վրայէն նեռելով։

— Իսկ իր փո՞քր անունը·— հարցուց Մխ Պետրոս անզգոյշ հետապնդումով։

— Իր անունը Արշակ է·— պատասխանեց աղջիկը թեթև կարմրութեան մը մէջէն. կարծես իր արտասանած հնչիւնները չրթունքները կ'այրէին։

— Եւ ևբռպա ո՞ր երկիրը երթալ կ'ուզես։

— Կարծեմ գերմանական Ջուիցերիա կամ Գերմանիա, ուսանելիք յարմարութիւնը։

— Իսկ այդ պարոն Արշակը ո՞ր համալսարանն է։

— Վիէննայի համալսարանը· բայց կարծեմ ան ալ փոխելու է իր քաղաքը։

— Անշուշտ համակրելի, ազնիւ ու խելացի երիտասարդ մը, քանի որ այդ տեսակ բարձր խորհուրդ մըն է տուեր քեզի։

Վերժին զգաց, որ այլևս չի կրնար իր խօսակցի աչքերուն նայիլ· աչքերը գոցեց, գլխով թեթևակի դրական նշան մը ըրաւ և ջազգօրէն սկսաւ խազալ ճերմակ պլուզի չկապուած կապիճներուն հետ։

— Վե՛ր-ժի՛ն·— ըրաւ վարժուհին երկու վանիկրն ալ խորհրդաւոր չեչառվ մը երկընցընելով։

Վերժին գլուխը աւելի կախեց և յանկարծ ցատկեց ոտքի, նետուեցաւ իր մեծ քրոջը գիրկը ու դէմքը անոր կրծքին մէջ թաղեց։ Վերջին կեռիկն ալ մազերուն մէջէն վար ինկաւ և հագիւ փունջի մը միացած վարսը ազատուելով ամէն կապանքէ փռուեցաւ աղջկան կէս մը վար սահած պլուզին, մերկ ուսին, Մխ Պետրոսի թևերուն ու լանջին վրայ։

— Ա՛խ, արդէ՛ն, արդէ՛ն·— հծծեց վարժուհին ու ժպտեցաւ արտասուալոր դառն ու բարի ժպիտով մը։

— Հիմա կը հասկընամ բոլոր բանտերդ·— վրայ բերաւ խնդոյն, ծռեցաւ, գրկեց աղջկան գլուխը ու պագաւ։

Վերժինի թևերը ուելի թուլցան և մարմինը ուելի սահեցաւ վար. ծունկերը դէմ առին գետինը փռուած մոբիի թաւ մազերուն մէջ, կուրծքը ընկերուհիի ծունկերուն և թևերն ալ միչտ նետած թոյլ կերպով մը անոր մէջքը։

Մխ Պետրոս խնամոտ ձեռքով ազջկայ դէմքը իրեն դարձուց քիչ մը դէպի վեր, ճակտին թափած մազերը քնքչութեամբ հետացուց անոր երեսէն և գորովի նայուածքով նայիլ սկսաւ անոր աչքերուն։ Վերժին կը ժպտէր չիկնած, յուզուած և հայեացքին մէջ ուրախութեան չիք մը ամօթխած արցունք ո՛ր կողմ ինքզինքը ծածկելը չգիտէր։

— Եւ իրարու բացուա՞ծ էք արդէն։— հարցուց Մխ Պետրոս։

Վերժին գլխով բացասական նշան ըրաւ։

— Բայց ան ատեն վատո՞հ ես, որ ան ալ...

— Այո՛, գիտեմ։— խնդաց Վերժին չարաճճի ժպիտով մը։

— Անգամ մը անպատճառ կը բերես ինծի որ տեսնեմ։

— Մի՛ծ սիրով։— պատասխանեց ազջիկը իր երջանիկ յուզման մէջէն։

— Բազդաւոր եղէ՛ք։— չէչտեց վարժուհին։— ա՛խ, դուք բազդաւոր եղէք։

Վերջին նախադասութիւնը ուելի հառաչ մըն էր, քան խօսուածք։ Վերժին խորունկ ցաւ մը և կարեկս ամօթ զգաց իր բազդաւորութենէն և չգիտեր ինչ ընէ, որ քիչ մը սիրտը առնէ, մխիթարութիւն մը տայ։ Բայց ընկեր-վարժուհին իսկոյն խօսակցութիւնը իր վրայէն անդին տանեցուց։

Եւ դեռ երկար, երկար կը խօսէին երկուքով, մինչև որ պատին գամուած վոքրիկ, կլոր ժամացոյցը դիլ ու աւետարան հնչիւնով մը երեք հատ զարկաւ։

Ելան պառկելու։

Լոյսը մարած էր չատոնց։ Երկուքն ալ իրարու քունը խանգարելու վախով կը լռէին և ո՛չ-մէկ չարժուէր, բայց երկուքն ալ արթուն էին։

Վերժին երազանքներու մէջ, Մխ Պետրոս՝ յուշերու։

Քիչ մը ետքը սակայն քունը երկուքէն ալ գողցաւ անոնց մըտածումներն ու յուզումները, բայց չհամարձակեցաւ ո՛չ Վերժինի դէմքին դրոմըռած երջանիկ ժպիտը սրբելու, ո՛չ ալ Մխ Պետրոսի այտերուն թափուած յուսաբեկի լուղի արցունքը չորցնելու։

* * *

Շաբաթուան մը չափ էր, որ Ար. ակ կղզին էր, բայց իրեն կը թուէր, թէ ամբողջ ամիսներ էին անցեր։

Հետ արդէն քանի մը անգամ եղած էր նախադէպ տարինները և իրեն համար չուտ նորութիւն չունէր։ Մօրաքրոջ ամբողջ ընտանիքը չուտ սիրելի, բայց բոլորն ալ հասակը առած մարդիկ էին կամ դեռ ազայ։

Արշակ ինքզինքը առաւ աչխատանքի. առաւոտները մինչեւ կէս օր կ'ըզբաղուէր, իսկ ամբողջ ճաչէն վերջը կը թափառէր կղզիին զանազան մասերը սովորաբար իրենց դրացի յոյն երիտասարդի մը հետ։ Երբեմն ալ միասին նաւարկելու կ'ելլէին. յոյնը իր սանդալը ունէր և հիանալի թիավարել գիտէր։ Իսկ դիչերները նորէն կը նստէր աչխատելու։

Բայց իսկապէս ո՛չ իր աչխատանքէն համ կ'առնէր, ո՛չ իր զբօսանքէն։ Յօդուածը թէեւ կ'առաջանար, բայց ան չէր ինչ ինքը կ'ուզէր։ Յամառ բան մը դուրս կու գար, առանց ներքին չկիսմակիան. իսկ ամբողջովին կկզբնոնդալու չունքեր կ'ընէր։ Արդէն քանի մը անգամ անցած էր մտքէն ընդհատել, բայց կը վախնար պարապ մնալէ. և համբաւրտաուէն ալ խոստացած էր յաջորդ չաբաթուայ թուին համար։

Զբօսանքներն ալ մեծ հրապոյր մը չունէին։ Յոյնն ու ան կը չորչէին, կը խօսէին, կը կատակէին, բայց միայն Արշակի դէմքն էր, որ կը խնդար։ Վարը նաւամատոյցը ընկերը յաճախ խռպի կ'ելլէր յոյն ծանօթ ազչիկներու հետ, որոնցմէ մէկը Արշակի վրայ մտանուրտպէս ուչք էր դարձուցած։ Սուր դիմագծերով, արեւելքի խոչոր, սեւ աչքերով, թուխ, բոցոտ կակ մը, միչտ անուռոր հագուստներով, քալուածքն ալ յանդուգն, չարժուձներն ալ, օրիորդնել դէմք մը։

Տղան ամեն դուրս ելլելուն դրնթէ կը հանդիպէր անոր կամ փողոցը, կամ նաւամատոյցը, կամ անտառին եզրը ու միչտ հրաւիրող բան մը ունէր ազչիկը իր խոչոր աչքերուն նայուածքին մէջ։

Բայց չուտ հետու էր Արշակի հոգին այդ բոլորէն։ Արշակի համար հիմա աչխարհիս երեսին միայն մէկ ազչիկ մը կար և ճիշդ այդ մէկի պատկերն էր, որ ան ամեն կերպ մոռնալու կ'աչխատէր։ Սակայն ինքնագիտակցութեան կամ կամքի թոյլ վայրկեան մը և դեռ չուտ թարմ յուչերը կը խուժէին խկայն իր վրայ։ Եւ այդ վայրկեանները մտան կը զայրանար ինքն իր դէմ ու անմիջապէս կը փորձեր մտածումներու այդ փոթորկուղ ու համայող չղման։

Անօգուտ տեղը իր հպարտութիւնը խթանել կ'ուզէր. «Միթէ կարելի է այս ասիճան տկար ըլլալ և ան ալ ազչկան մը դէմ, որ արդէն կապուտած էր ուրիչի մը, իր մտերիկ ընկերոջը և որ պարզապէս համակրելի բարեկամի մը պէս կը վարուի ինձի հետ»։

Սակայն տկամայ կը յիչէր իրենց հանդիպումներն այս ու այն կէտը և յանկարծ կտկածը կը վազէր իր հոգիին մէջէն. «Աստուա՜ծ իմ, միթէ այդ բոլորը պարզ ընկերական էր. այն չնչտիրը, այն նայուածքը, այն յուզումը...»։

Եւ վերջապէս բնազդ ըսուած բան մը կայ ամէն մարդու հոգիին մէջ և այդ բնազդը կ'ըսէր՝ ո՛չ։ Տենդոտ չարժումով մը նա կը վանէր այդ բնազդական բաները, որոնք նորէն խարել կ'ուզէին իր սիրտը և որոնք երազական պատրանք մը տուեր էին իր զգացումներուն ամբողջ չաբաթներ։

«Տիրա՛նը, ա՛յ բազդատո՛ր ազայ. տաղանդ, գեղարուեստ, սէր, յաջողութիւն». կը կրկնէր սանձուած նախանձով մը, որ իզուր իր մէջէն արմատախիլ ընել կը ցանկար։

Շաբաթը դեռ չէրացած Արշակ սկսաւ անտանելի ձանձրանալ։ Ի՞նչ ճգնաւորութիւն էր ասիկա և ի՞նչ էր խմսասը։ Հոս ալ նոյնչափ իր ուղեղը աղջիկով կ'ըզբաղուէր, որչափ և տունը զբաղուելու էր։ Ալ օգուտ մը չէր սպասեր իր այս ուելորդ փախուստէն։ Եւ վերջապէս ուելի լաւ չէ՞ր հետզհետէ վարժուիլ «անոնց» փոխադարձ կապը մօտէն տեսնելով։

Եւ վճռեց յաջորդ օրն իսկ վերադառնալ տուն. արդէն անյարմար ալ էր իրենցմէն հանդէպ ուելի երկար կղզին մնալը։ Եւ կաթսաներ էր իրենները։

«Ես վերժինը, որ նորէն պիտի տեսնեմ». կը կրկնէր ուղեղին մէկ կտորը գանգին անկիւնէն։ Արշակ նախ այդ անկիւնէն ըսուածները չլսել ձեւացուց, բայց ո՛չ երկար։

Եւ ի՞նչ կարիք կար կեղծելու. անշուշտ որ ուրախ էր վերժինը նորէն տեսնելուն. բայց ինքը դիտէ սանձի տակ պահել իր զգացումներն ու իր վարմունքը։ Վերժինի հետ առանձին չի մնար երբեք. իրենց հանդիպումներու առին ալ զբաղուի միշտ ուրիշներով և ուրիշ բաներով, մինչեւ որ իր հոգին բոլորովին վարժուի ու իր անուղի զգացումը բթանայ վերջնապէս։

Ուրեմն ալ ի՞նչ կար վարանելու։

. . .

Յաջորդ օրը կէս-օրէն քիչ մը անց՝ Արշակ կ'երթեւեկէր Սիրքեճիի կայարանը հարթակին վրայ գնացքի պատրաստուելուն սպասելով. չիտակ կղզիի չոգենաւէն կու գար։

Կը բեռնէին վագոնները, կը կցէին իրարու ու կը կապէին։ Վայրկեան մը կանգ առաւ լոկոմոտիւին քովը ու գործաւորին աչխատանքը կը դիտէր, որ իր մերկ ու ջղուտ թեւերովը անագին թին չարժելով հնոցը հանքածուխ կը նետէր վարժ ու թեթեւ ճիգով մը։

— Այո՛, մեքենան ալ պիտի ուսէ, որ մեզի քաշել կարողանայ.— հնչեց հաւէն քիչիկի բամբ ձայնը։— Երեւի կղզիէն կը գառնաք։

— Այդպէ՛ս է։ Իսկ դո՞ւք ինչպէս էք։

— Շատ գէշ։ Նոր եմ ձաշեր և տասը վայրկեան է, որ կը վա-

զեմ. ժամացոյցս երեք վայրկեան առաջ է եղեր. Գաւմ-գաբու հիւանդ ունիմ. ամբողջովին քրտինքի մէջ եմ ու յոգնած. եկէ՛ք, մանենք վրան:

Մեան առաջին հանգիպած բժանմունքը, ուր խիտ բարակ ու խիտ երկար իրանով մարդ մը նստած էր չիփ-չիտակ, ձեռքերը կոնտուար կերպով ծունկերուն դրած եգիպտական արձաններուն պէս և Սան-Սանֆանօի առմատակ մը նչանակի պէս գլխարկին ճակատը անցուցած. ըստ երեւոյթին անգլիացի մը:

Երկու բարեկամները նստեցան իրարու դէմ: Բժիշկը գլխարկը նետեց գարակին ցանցը և անոգին թաչկինակովը սկսաւ դէմքին քրտինքը սրբել՝ անատնելի տաքէն գանգատելով:

— Իսկ ինչպէ՞ս են սիկիին ու օրիորդը.— հարցուց Արչակ քաղաքավարութեան իբրեւ առաջ:

— Շատ լաւ: Կիրակի հիւրեր ունէինք. սոսկալի ազմուկ էր տունը. իսկ երէկ չէ՝ նախորդ գիշերն ալ մենք էինք պարոն Տիրաննոց տունը. զուարթ ժամանակ անցաւ: Գիտէ՞ք, ա՛, քոյրս գեղարուեստի սիրահար է:

«Գեղարուեստի ու գեղարուեստագէտի». մտածեց Արչակ: Անոնք անգլին իրենց քեֆին կ'ուրախանային, երբ ինքը կզգին ինքզինքին հետ կը կռուէր:

Բարկութիւն մը, չարութիւն մը զգաց յանկարծ այդ բոլորին դէմ. ընկերն ալ, ազջիկն ալ, բժիշկն ալ, կարծես ամենքն ալ իր քիմին կը խնդային:

Գնացքը թեթեւ մը ցնցուեցաւ դէպի ետ և զգուշութեամբ դուրս սզոց կայարանի երկաթէ գծերու բարդ ցանցին մէջէն և ընթացք առաւ:

Ընթացք առաւ նաեւ բժիշկը: Ինչը ատիթ տալու՝ Արչակ լաւ մը չէմբռնեց, բայց բժիշկը սկսաւ չատ դանդաղ խօսուածքով բուռն յարձակում մը «հասարակութեան չիմար բարոյական հասկացողութիւններուն վրայ». և ճիշդն ու անճիշդը իրար խառնելով ընդհանրապէս բարոյականութեան վրայ:

— Առանց մը մարդիկները սոսանձներով կը վախցընէին, ատիկա արդէն հինցած է ու մաչուած. հիմա ալ բարոյականութեան անուանով սարսափ տալ կ'ուզեն: Բայց գիտէ՞ք ինչ է՝ իրենց բարոյական անուանածը, որով մեզի չարունակ կ'ըսպառնան: Այդ նչանաւոր բարոյականութեան առնուազն կէսը արդէն ապացուցուած զուտ անբարոյականութիւն է, իսկ մնացած կէսն ալ դեռ չապացուցուած անբարոյականութիւն է:

— Ուրեմն մնաց քառորդը.— խնդաց Արչակ:

Բժիշկը երկու ձեռքով լսել ու լսել հրամայեց ու չարունակեց իր այն արամագրութիւններէն էր, երբ մանաւանդ քներին կծիկը

կը քակուէր։ Ատ ալ կը պատահէր ընդհանրապէս այն օրերը, երբ մէկ-երկու գաւաթ ուելի կռնծած կ'ըլլար։ Այդ պարմանները առանց բժիշկը չատ կը սիրէր «քիչ մը փիլիսոփայութիւն» ընել, ինչպէս ինքը կ'ըսէր։ Եւ հիմա այդ «քիչ մը փիլիսոփայութեան» պաւանները թիւը լրացած էր արդէն բաւականին։ Աչքերուն տակ մը արտայայտութիւնն ալ նոյնը ներկայացնել կու տար։ Արդէն ըսեր էր՝ թէ չիտակ ճաշարանէն կու գար։

— Ահա՛ այդ տեսակ բորբոսնած ու քարացած բարոյական գաղափարներու վրայ է հիմնուած մեր ամբողջական անհատական կազմութիւնը իր կապիտալիստական, վաչխառուական ու պրոլետարական բոլոր բարդութիւններովը։ Կամ առէք ամուսնութեան արդի կազմութիւնը իր հոգեհոդերանական կնճռակցութիւններու, ընտանեկան կռիզքառքներու, սեռական չափազանցութիւններու և հասարակական անհատականութեան համադրամարին հետ։ Ուրիշ օրինակ մը կ'ուզէ՞ք. ահա՛ կրթական գործը աշխարհի ո՛ր կողմն ալ որ կամենաք. իր կղերական կամ չովինական ձգտումներովը և հոգեւորականութեան աչքակապուկներովը. այնպէս որ...

Արշակ, որ այս երկար մնոմխոսութեան մէջտեղին քանի մը անգամ ընդհատելու կամ խօսքը փոխելու ձիգեր էր ըրած և չարաչնակ բժիշկի կողմէն արգիլուած էր, վերջապէս ձանձրացաւ, աչքերը յառեց վակոնի պատուհանէն ետ-ետ փախչող ծովուն, թաղուեցաւ իր մտածումներուն մէջ և ալ կարծես չէր լսեր խօսակիցին ձայնը։ Իսկ բժիշկը կը խօսէր, անընդհատ կը խօսէր իր դանդաղ ու կանոնաւոր խօսուածքովը։

ՔԱ

Տիրան ընկերոջը կղզի մեկնելուն յաջորդ օրը կերպ մը ինքզինքը զբաղեցնելու և իր հոգեկան անրամադրակ վիճակէն ազատուելու համար նստաւ իր հին գպրոցական ընկերը տեսնելու գնաց, որ հիմա նկարիչ էր և Իսկիւտար կը բնակէր։

Երկաթուղիին ու չոգենաւին մէջ մտքերը ցրիւ, անորոշ ու բուռն զգացումներով քաշուելու նստեր էր մէկ կողմ։ Հոգեկան նոյն կապ տրամադրութեամբ ալ հասաւ ընկերոջ տունը։ Դուռը բացողը ընկերոջ մայրն էր, որ յայտնեց, թէ տղան վերը աշխատանոցն է։

Տիրան անհակընկալ մը ընելու համար՝ ոտքի մատներուն վրայ կամաց-կամաց բարձրացաւ սանդուղներէն ու մտնելու աշխատանոցի դրանը, որ կռնակի վրայ բաց էր։ Նմանապէս բաց էին բոլոր պատուհանները, ուրկէ առատ լոյս ու թարմութիւն ներս կը թափուէր։

Տիրանի առաջին զգացումը ախորժ զովութիւն մը եղաւ, որ անհնարին դուռնէն իր յոգնած ու տաքցած դէմքին զարկաւ։

Ընկերը երկարահասակ բարակ ազայ մը՝ կնցած էր կէս մը դէպի դուռը դարձած, ներկերով բծաւորուած գործ չապիկը վրան, երանդապնակը ձախ ձեռքի բութին, իսկ միւս ձեռքը վրձինը, որով խոթոտուզուած կ՚ուխտէր։

Տիրան հաճոյքով սկսաւ դիտել անոր դաստակին ու վրձինին վարժ ու ստատուն չարժուձիները և անոր սուր-մօրուք կիսագէմը, որ վիճինին զուգընթաց ջղուտ կծկուձներ կ՚ընէր։

Նկարիչը պահ մը կանգ առաւ. վրձինը բռնած ձեռքը դրաւ կուչին, քայլ մը ետ գնաց, գլուխը նեղեց ետ ու սկսաւ պատկերին նայիլ։

Եւ Տիրան նկարը տեսաւ։ Համալի մը գլուխն էր։ Այրած առնական դէմք մը խոր անկիւնաւոր դիմագծերով. արտայայտիչ ու մելամազձոտ աչքեր. խոշոր արծուի քիթ մը. ճակատը խոհ մազերուն տակ կէս մը ազօտուած, քողով մը գլուխը. և թաւ մազոտ լայն կուրծքին վերին մէկ մասը, որ բաց մինթանին տակէն կ՚երեւար։

Այնքան բնական ու տպաւորիչ էր նկարը, որ Տիրան չկրցաւ զգացմունքը զսպել։

— Կը չնորհաւորեմ, Խառա՛բա, հիանալի է։

Խառաբա ցնցուեցաւ, դարձաւ ետ և ուրախացած վազից ընկերոջը վրան։

— Ա՜ս ինչ ազուր բան. ես ալ առաուն քու մասիդ կը մտածէի։ Հա՛, կը հաւնի՞ս պատկերիս։

— Շա՛տ. կարծես կ՚ապրի։

Առանց «կարծես»-ի. անշուշտ որ կ՚ապրի. իմ հոգիս է մէջը։ Գրեթէ վերջացած է արդէն. վիզը քիչ-մը արբագրել կ՚ուզէ. սա մէկ-երկու երակները աւելի դուրս ցցակեցընելու է։ Ինչ հաճոյք է Տիրա՛ն, երբ մարդ գործ մը արտադրած է, բան մը ստեղծած և ինքը իր աչքառանքէն գոհ է։ Ստեղծո՛ղ. չէ՞ որ ատիկա է աստուածութիւնը. այն աստուածը, որ մարդկութիւնը պաշտեր է միշտ. ստեղծող, արտադրող ուժը։ Ստեղծելու յափշտակութեան հետ գուցէ միայն սիրելու յափշտակութիւնը չափուիլ կարողանայ։ Բայց կեցիր...

Ձեռքը օդին մէջ պարզած, աչքերը մոլոր վայրկեան մը մնաց անշարժ ու մտախոհ. և յանկարծ ուժգին չարժումով մը ձեռքը իջաւ ու զարկաւ ճակտին.

— Չէ՞ որ սէրն ալ ինքնին ստեղծել է. գիտակից թէ քնազդական, նայն է ատիկա. սերո՛ւնդը, մարդու ստեղծագործութիւններէն ամենէն վեհը, իր նմանին ստեղծագործութիւնը։ Ինչպէ՞ս է որ մինչև հիմա չէի խորհած սիրոյ ու արուեստի մէջ եղած այդ նեղքին խոր կապը։

Տիրան լուռ մտիկ կ'ընէր գետ ոտքի վրայ։ Խռովարար չփնց անդամ մը իր սուր մօրուքը և խնդալով քաշեց ընկերոջը թեւէն.

— Եկո՛ւր, եկուր նստէ՛. ու պատմէ՛ տեսնեմ դո՞ն ինչ վիճակի ես. նոր բան մը գրա՞ծ ես. վերջին ոտանաւորներդ ես չատ համ չտաի չիտակը. մելամաղձոտ բան մը կայ մէջը։ Աւա՛ղ, ուժով բաներ գրէ՛, հոգիդ սիրես. այդ սանդխմնոգալ հիւանդները բանաստեղծութիւնը հիւանդանոց դարձուցին։

— Աւաղ բան գրելու համար առաղջ հոգի ունենալու է.— պատասխանեց Տիրան տեսակ մը չարացած դառնութեամբ։— երբ արբամադրութիւնդ մոխրագոյն է, գրածիդ գոյները բնական կերպով կը գորշնան։ Զգիտես, ինչ անյատակ պարապութիւն մը բացուած է հոգիիս մէջ. և խոր դժգոհութիւն մը ինձ ինծմէ, աշխարհքէն, ամենքէն։

— Որուն տակը անատրակոյս ապրկան մը պատմութիւնը կայ։

Տիրան զարմանքով նայեցաւ վայրկեան մը դիմացինի աչքերուն և պատասխանեց կարծես ինքնիրենը խօսելով։

— Պատմութեան նման բան մը կայ. գոնէ կը կարծէի, թէ կայ. յանկարծ փլաւ, չքացաւ. մնաց մէջս տարօրինակ պազութիւն մը։

— Աւոր կ'ըսեն դիւրագրգիռ չիղեր, լեցուղ տարիք, իրրև արեւեստաւոր գեղեցիկի որոնում ու սիրելու պահանջ։ Բայց եկուր տես, որ սէրն ալ ներքին, արտաքին ու կողմնակի հազար պայմաններէ կախումն ունեցող բան է։ Եւ քանի որ իրական սէրը կ'ուշանայ՝ ասպարէզը կը մնայ զգացմունքի խաղերուն։ Բաւական է քիչ-չատ գրաւիչ ապրկի մը և անմիջապէս գլխուդ մէջ պատրանքը իր տատայնը հիւսելու կ'ըսկսի։ Քանի մը հաճոյախօսութիւն, մէկ-երկու նայուածք, ախորժելի կատակ մը և երեւակայութիւնդ այդ չնչին առաղձէն անագին չինք մը կառուցած է արդէն։ Միայն միշտ տարտամ վախով մը ապրկան չատ մօտէն նայելու։ Դուն զգացումներուդ մասին բան մը հասկըցուցած ես ապրկան։

— Ո՛չ մէկ բառ.

— կը տեսնե՞ս. երկիւղ ունիս, որ յանկարծ խաղի թուղթերէ կառուցած չինքդ թեթև հովէ մը կը փլչի։ Փոքրիկ ատիթ մը և դուն մէկ նայուածքով կ'ըմբռնես, որ այդ բոլորը քու ուղեփիք խաղն էր, որ այդ ապրկիկը քեզի այնչափով հետաքրքրած է իրապէս, որչափ քու ծանօթ ուրիշ չատերը։

— Շիտակ է։

— Եւ կ'ըսկսիս զայրոյթ զգալ ինքդ քու երեխայութեանդ դէմ, կը մեղադրես քու երեւակայութիւնդ. քեզի կ'տեսնես զգայուտ և անատուղ հոգիի տէր. և ներսը կը գոչանայ այն դատարկը, որ լեցուիլ կ'ուզէ բանով մը և որ անպատճառ լեցընելու ես։

— Սակայն դուն ո՞ւրկէ գիտես իմ պատմութիւնս այդպէս մանրամասն.— հարցուց Տիրան զարմացական ժպիտով մը։

Խոսարտ առանց պատասխանելու հեռացաւ երկու քայլ և եռոտանիի մը վրայ դրուած պատկերին երեսէն ճերմակ պատառը անդին նետեց։

— Ի՞նչ սիրուն ազջիկ է. ո՞վ է տիկա.— հարցուց Տիրան աչխոյժ ոտքի ցատկելով։

— Ձի՞ս ճանչնար. քոյ սիրած ազջիկդ։

— Իմ սիրա՞ծ։

— Ջո՛ւ կամ իմ, միևնոյն է. մենք նո՛յն տարիքի, նո՛յն միջավայրի, նո՛յն կրթութեան ու նոյն նկարագրի տղաք ենք։ Ա՛ս ալ քոչ սիրուհիդ քո՛յրն է. ա՛ն, որ ես ճիշդ քեզի պէս սիրեր եմ և բազանքի մէջ և երբ ինծի անրջանքէս արթընցուցեր են, առնչուեր եմ քեզի պէս, պարապութեան, դժգոհութեան և անհամի զգացումներով, մինչև որ...

Լռութիւնը ընդհատակ, աչքերը նկարին, ժպիտը չրթունքին մնաց անշարժ։

— Մինչև որ... մինչև որ ի՞նչ.— հարցուց Տիրան լարուած հետաքրքրութեամբ։

— Մինչև որ ինքզինքս համոզեցի, թէ այդ իմ երևակայութեանս խաղն ալ կրնար բանի մը պէտք գալ և թէ այդ հոգեկան կեղեքումին սիրուն վերջակէտ մը կարելի էր դնել։

Եւ Խոսարտ ցուցամատով նկարը մատնանիշ ըրաւ։ Նոյն վայրկեանին Տիրանի մտքէն կայծակի պէս գազափար մը սլացաւ։ Մինչ Խոսարտ կը չարունակէր.

— Թարձո՛ւ, արատարո՛ւ, տեղծո՛ւ. տիկա է միայն, որ վիշտերը կ՛ամոքէ, կը սրբէ ինքնամեղադրանքը ու կը լեցնէ գատարկութիւնները. հոգեկան ամենաբաւժը։ Իմ երազանքիս գեղեցկացուցած դէմքը տուի կտաւին ու փոխարինը հանդարտեցաւ. վհատութը ծնած էր ծովէն։

* * *

Շոգենաւը ալ ու ձախ ջուրը ծեծելով կ՛երթար արտորանքով ուշացած հսկայի մը պէս. ծովուն վրայ դրեթէ մարթ էր արդէն։

Տիրան շոգենաւին վերնայարկը քաչուեր էր անկիւն մը, երեսը դարձուցեր ծովուն և մելամաղձոտ հանած գրքիւնին ու ծովուն և ցայտքերուն չբմոցին տակ օրօրուն լարուած մարթով կը մտածէր։ Կ՛ըսահզծէր։

Վէպի մը ծրագիրը չատոնց կար գլխուն մէջ. հին ու նոր սերունդի ու գազափարներու ընդհարման պատկերացում մը. միայն նոր սերունդի ներկայացուցիչները ընտրելու կը դժուարանար. նո՛ր տիպարները և վիպական գօդուածքը, գեղարուեստօրէն ամենագժուարը. և հիմա արդէն ըրեր էր գիւտը։

Երկու նոր դէմքեր իր աչքերուն դէմ էին իրենց ամբողջ թարմութեամբ. մէկը եղեւարդը, երիտասարդ ոգեւորուած նկարիչ մը նոր գաղափարներով ու ազատ գլխով, որու հոգին այնչափ նման էր իր հոգիին և նկարելու ազատութիւն չունէր:

Ու եղեւարդին քով վկրժինը, իր հոգիին մէջ այնքան փայփայած և խանդավառուցած վկրժինը, թարմ ձգտումներով, հասարակական գործունէութեամբ ոգեւորուած, բացառիկ կանացի անձնիկ դէմք մը:

Եղեւարդ ու վկրժին գրաւ Տիրան իրարու քով հին բարեկական կաշկանդումներու ու հնամենի հայեացքներու դէմ և վէպը պատրաստ էր իր արամատիզմով:

Հրապուրած երեւակայութիւնը սկսաւ խրիլ ու մխրճիլ մանրամասնութիւններու մէջ. ծրագիր, դասաւորութիւն, դէմքեր, դէպքեր, տեսարաններու կազմութիւն. մինչ այս պատկերին այն պատկերը կը թռչէր, հոգիկան մէկ վիճակի նկարագրէն դէպի միւսը. գիտակցութիւնը հազիւ կը հասնէր իր սահզծագործ մտքի ընթացքին: Ու ինչ տասա նիւթ կայ եղեր իր գլխուն մէջ, որ ինքը բնաւ տեղեկութիւն չէ ունեցած, և ինչպէ՞ս պատրաստ:

Ամենէն չդիտէր, թէ ինչպէս քաղմութեան հետ երթալ չգիտնաւէն, անցաւ կամաւորջը, Սիրքէճիէն, ինչպէս մտաւ երկաթուղիին պետքը, ինչպէս հասաւ իր գիւղը, իր տունը, իր դրասեղանին տակը, ուր նորէն ձեռքը դրած ճակտին՝ տարուած ու տւզուած կը մտածէր:

Գիշերաչրջիկի մը կը նմանէր. ոչինչ էր լսեր իր չուրջէն. կ'ապրէր ինքն իր տեղծած աշխարհին մէջ, իր մտածած տիպարներուն հետ, որոնք արագ տեւլի ու տեւլի գոյն ու ձև կ'առնէին և տեւլի բնորոշ կը դառնային:

* * *

Ատկէ քանի մը օր յետոյ Արշակ մտամոլոր կեցած էր իրենց տան դուռը. իրիկուան տաւերնները սկսեր էին թնդանոթել: Յանկարծ քովի փողոցէն գալ Տիրան և ընկերը նշմարելով՝ ուրախութեամբ վրան վազեց:

— Այս ո՞րը կս վերադարձեր:

— Հազիւ քանի մը ժամ է. ընթրիքէն առքը քեզի պիտի գայի:

— Երեւի մխնակութիւնն ու ազատութիւնն ալ մեկ չարութէն տեւելի անատանելի է:

— Դո՞ն ինչու օր մը չեկար:

— Ո՞ւր գայի. և ի՞նչ ընելու: Եթէ գիտնար՝ ինչ փոփոխութիւններ է անցեր մէջս քու երթալէդ իվեր. ուժ, եռանդ, ոգեւորութիւն ու աշխատանք, բոլորը գործեր են ետեէն ինծի:

Արշակ կամաց մը չրմունքը խածաւ։

— Հիմա ես ամբողջ եկեղեցականացած եմ. ձեռք որ պպջընես կայծ դուրս կու պայ. պը՛ռռ։

Ու թեթեւ մը ընկերոջը թեւէն քաշելով՝ սկսաւ խնդալ։

— Սկսած եմ նոր վէպ մը։ Ոչ միայն սկսած եմ, այլ երեւակայէ՛, չորս-հինգ օրուան մէջ տասը հատուած քան եմ գրած, գրեթէ քառորդը, խոպոլիքի պէս։ Վազը եկո՛ւր, քեզի կարդամ. վստահ եմ, որ չուտ պիտի հասնիս. քու սիրած ժանրէդ դուրս եկաւ. մանաւանդ հերոսուհին գէմքն ալ քեզի ազէկ ծանօթ է։

Արշակ նորէն չրմունքը խածաւ։

— Հապա՛, գիր՛ը նայիմ։ Բայց հիանալի սիպ է. քանի կը գրեմ՝ այնքան կ'ոգեւորուիմ. անչուշտ գուշակեցիր։

— Չէ՛։

— Ուզեցի չուտ է բծացիր. երեւի կզգիին օգը քեզի չեկաւ։ Վերժի՛նը, Վերժի՛նը։

Արշակ վայրկեան մը չպատասխանեց. կը վախնար, որ ձայնը մատնէ։

— Է՛, ի՞նչ կ'ըսես.— հարցուց Տիրան անհամբեր։

— Հետաքրքիր է։

— Չէ՞։ Գալէ՛. քեզի հիմա մէկ-երկու կտոր կարդամ.— վրայ բերաւ ազան հետզհետէ աւելի ոգեւորուելով։

— Ո՛չ. հիմա գործ ունիմ ներսը. ուրիշ օր մը։

— Ափսո՜ս։ Ուրնմն ես ալ երթամ. բայց նայէ որ առաուները ինծի չգաս, զբաղուած եմ եկո՛ւր միայն ճաշէն առաջ։ Յո՛։

— Յո՛։

Եւ ձեռքի հատ գաւազանը օդին մէջ խաղցընելով անցաւ դէմի փողոցը։

Արշակ կեցած տեղէն երկար ընկերոջը կը հետեւէր, մինչեւ տաւերաւ հոն անհետացաւ եզաւ։ Ակամայ մտաբերեց իր մեկնելու օրը անոր խնդճ ու ճմլուած վիճակը ու նեղիայի հետ համեմատեց։

«Եթէ պիտնաս՝ ի՞նչ փոփոխութիւններ են անցեր մէջս» հնչեց գանգին տակ։ «Երեւակայելը գժուար չէ. գործը վէպի հերոսութեան է հասեր։ Բանտասեղծ սիրահար ուենալը, անշուշտ, գէշ բան չէ. մարգս կ'անմահանայ»։

Ու գէմքին հեգնութեան ժպիտ մը՝ քաշուեցաւ հոս, տան դուռը գոցեց ու մտաւ իրենց նստելու սովորական անկիւնակը, ուր քոյրը պատահանին տակ նստած, օրուան լոյսի վերջին մնացորդները օրօրելով՝ ձեռքի կարը վերջացընելու կ'աշխատէր։

Գնաց չիտակ քրոջը քովը, նոյն նեղ բազմոցին վրայ ու նստեցաւ լուռ և սկսաւ չոչոլ անոր մազերը. պէտք ունէր մանրիմ հոգիի մը մօտիկութեան։

Յաջորդ օրերը Աբչակ չարունակ դարան էր կ'ա՛մ Սամպուլկամ Դալաթիա, ընկերներուն հետ. վերջին գնացքով գիշեր կու գար և առնէն ալ դարս չէր գար գիշերը եղած սանը. կը չանար զբաղուիլ կամ գոնէ ուշադրութիւնը ցրուիլ։

Անգամ մը միայն գնաց Տիրանին, բայց անար բոց, գոհ ու աշխուժ հոգևկան արամադրութենէն այն անսակ ճմլում մը զգաց իր հոգիին խորքը, որ պատրաստակով մը իսկոյն նա դարձաւ։

Քաղաքավարութեան համար անգամ մը Պզտիկասներուն երթալը անհրաժեշտ էր. քոյրը յիշեցուց և մէկ-երկու անգամ առաջարկեց, որ իրիկունը երթան. բայց ազան միշտ կ'ա՛մ զբաղում կ'ա՛մ յոգնածութիւն պատճառաբանելով օր օրի կը յետաձգէր։

Կիրակի օրը ճաշէն նաքը Տիրանը եկաւ. և քոյր ու եղբայր առնր հետ ելան պատյի։ Թէ՛ Տիրան, թէ՛ Մաննիկ չատ ուրախ արամադրուած էին, սքանչելի ալ եղանակ էր։ Աբչակ գնաց անոնց հանդիպակ կէս մը անոնց արամադրութիւնն ալ չփճացընելու համար, կէս մըն ալ անոնց ընթարկուելով։ Վազեցին, երգեցին, ծովեզն ափը քար նետելու փորձեր ըրին ջուրին երեսովը, երկար քալեցին դէպի Սան-Ստեֆանո և ախորժակնին բաց վերադարձան տուն. ընթրիքին ալ Տիրանը իրենց պահեցին։

* * *

Հազիւ էին սեղանէն ելեր, որ դուռը զարնուեցաւ և բացուելուն պէս լուեցաւ բժիշկի հասա ձայնը.

— Այս պարոն Աբչակ մը կար, ո՞ւր է տեսնենք։ Դուք ձեզի չատ սուղ սկսաք ծախել. գոնէ անգամ մը գալու էիք, գոնէ մեր կիսատ ձնացած վէճը աւարտելու համար։ Տեսէ՛ք, նորէն ես չհամբերեցի։

— Եւ չատ ալ ազէկ ըրիք, պարոն բժիշկ։ Ներող եղէք. վերջին օրերս չատ եմ զբաղուած։

— Բարե՛ւ ձեզի, պարո՛ն Աբչակ. բարի էք եկեր ձեր կղզիէն.— ըսաւ վերժին առնդաւածային ձեւով մը և ձեռքը տղուն մեկնելով։

Աբչակ բարեւեց, չնորհակալութիւն յայտնեց ու կմկմաց քանի մը քաղաքավարական նախադասութիւններ։ Եւ բոլորը միասին դիմեցին վերին յարկը, ուր հիւրասրահն էր ու հիւրասենեակը։

— Օրի՛ւդ Մաննիկ, չատ ձախորդ ընկերուհի էք. այս չարթնաւ առնն իրիկուն յոյս ունէի, որ անպատճառ մեզի կու գաք.— կը գանգատէր վերժին՝ ընկերուհիի մէջքէն փաթթուած՝ ոտրուն սանդուղքն վեր ելլելով։

— Ինձի մի՛ մեղադրէք. յանցանքը եղբօրս է. քանի անգամ ասացի՝ եկէք. անիկա վերջին տասնեակը մնուամոլ է դարձեր. ոտքով-գլխով ինկեր է իր գործերուն տակէն։ Ինչ և է, տեղը կը տանենք։

— Պարո՛ն Արշակ, դուք հոս հրամեցէք.— ըսաւ բժիշկը իրեն մօտիկ աթոռ մը մատնանիշ ընելով.— Եկէ՛ք փիչ մը փիլիսոփայութիւն ընենք նորէն: Ի՞նչ կ՚ըսէք, պարո՛ն Տիրան. կ՚ընտրենք բանաստեղծական փիլիսոփայութիւնը մը. չէի՞ք ուզեր մասնակցիլ:

— Շատ չնորհակալ եմ, պարո՛ն բժիշկ, ձեր այդ շատ սիրելի հրաւէրին համար: բայց ես կը գերապատուեմ զուտ բանաստեղծութիւնը առանց փիլիսոփայական խառնուրդի: Ներեցէ՛ք, որ ինծի համ սիրելի օրիորդներուն հասարակութեան մէջ, նէթ ալնիւ օրիորդները ինձի իրենց չրջանին մէջ առնելու հաճին:

— Ա՜, դուք անուղղելի էք.— բացականչեց բժիշկը ծիծաղելով:

— Միայն թէ իրրեւ մեր ընկերութեան մուտքի վճար յանպատրաստից զուարճալի բան մը պիտի պատմէք: Այնպէս չէ՞, օրիորդ վկայեցէք.— պատասխանեց Տիրան խորին լրջութեամբ գլուխը խոնարհեցընելով:

— Կ՚ըսպասե՛նք:

Տիրան բազկաթոռի մը հակառակ մէջքին կրթնած, կռնակը բժիշկին ու ընկերոջ, վայրկեան մը ճակատը չփնց ու սկսաւ պատմել:

Մինչ անդին բժիշկը իր խօսքը պահելով՝ բանաստեղծութեան ու փիլիսոփայութեան իրարու հետ ունեցած ընդհանուր դիծերը սկսած էր վերլուծելու և այն եղրակացութիւնը հանելու կը չմտար, թէ փիլիսոփայութիւնն ալ իսկապէս տեսակ մը բանաստեղծութիւն է:

Արշակ արտաքուստ իր խօսակից հիւրի ըսածներուն հետեւիլ կը ձեւացընէր իրրեւ քաղաքավարութեան պահանջ, մինչդեռ իր ամբողջ ուշքը միւս խումբի հետն էր:

Տիրան կը պատմէր անոսկի լրջութեամբ, որ շատ կ՚աւելցընէր իր պատմած կատակին ուժը: Աղջիկները կը խնդային հնչեուն ծիծաղով մը. կը խնդար և Արշակի մայրը, որ նոյնպէս մօտիկ նստած էր զով մը. կը խնդար և Արշակ մայրը, որ նոյնպէս մօտիկ նստած էր զով մը. կը խնդար և Արշակի մայրը, որ նոյնպէս մօտիկ նստած էր զով

ալքոսլին հոտը ներթափել կու տար, որ այդ տրամաբանական դրդուած գործունէութիւնը այնչափ ալ չուտով վերջնանալու դիտաւորութիւն չունէր։

Ինչ մը վերջը խումբի առաջարկով՝ Մանիկ նստեցաւ նուագելու։ Տիրան ալ ջութակը ծնոտին տակ պատրաստ կեցած էր քովը։ Նուագը սկսաւ։ Ամենքը լռեցին. բժիշկն ալ։ Եւ Արշակ երջանիկ ատիթէն օգտուելով ելաւ ու մտաւ կից հիւրասենեակը, որուն դռները կռնակի վրայ բաց էին, բայց ներսը լոյս չէր վառած։ Բաց պատուհանակէն լեցուն լուսնի ամոյն լոյսը առատօրէն կը հոսէր կահավրան ու գետնի գորգին վրայ։

Արշակ մտեցաւ պատուհանին, անշարժ կեցաւ՝ հայեացքը վեր լուսնին նետած։ Նախորդ զսպուած կատաղի նախանձին յաջորդած էր կրծոտ թուլութիւն մը. լքուած ու միայնակ ըլլալու զգացում մը։

Դուրսը անոնք կը խնդային, կը նուագէին, կը զուարճանային, իսկ ինքը հոս կը տանջուէր. դուրսը որո՞ւ հագն էր ատիկա. ո՛վ պիտի մտածէր իր մասին։

«Ի՜նչ եսական են մարդիկ»։

— Պարո՛ն Արշակ. — լսուեցաւ եսէն ցած ձայն մը։

Եւ Արշակ ամբողջ մարմնովը դողաց։

— Ի՞նչ կը մտածէք հոս, այսպէս առանձին. — հարցուց կամաց նոյն կանացի ձայնը։

Տգեղ դողալով, իր դողը զսպել ջանալով, զարմանքով ու հիացումով կը նայէր աղջկան բոլորովին չուսրած։

— Ինչո՞ւ այդպէս ցրուած էք։

— Հիանալի գիշեր է. պայծառ լուսին. — կմկմաց երիտասարդը իր մտքերը ժողվել ջանալով։

— Ես կը հարցընեմ՝ ինչո՞ւ տխուր էք. — կրկնեց աղջիկը, մէջքով կրթնեցաւ պատուհանի եզրին, աչքերը տղու կիսադէմին դարձած։

— Տխո՞ւր. ե՞ս. ամենևին։ — Ու բռնադրօսիկ խնդուքով մը չարունակեց. — Ի՞նչպէս կարելի է տխուր ըլլալ, երբ դուք մեր տունը հիւր էք, երբ ձեր եղբայրը այնպէս սքանչելի կերպով կը խօսի գրաւիչ ու վսեմ խնդիրներու վրայ և երբ դուրսը այդպէս ուրախ-զուարթ կը նուագեն, կը խնդան։ Այս տեսակ ընկերութեան մը մէջ կարելի՞ է տխուր ըլլալ։

— Բայց դուք ձգեր էք այդ ընկերութիւնը և առանձնացեր էք հոս։

— Հոս աւելի զով է։ Եւ վերջապէս ի՞նչ կապ ունի. էհ՞ որ դուք ալ հոս էք հիմա։

— Ես եկայ ձեզի փոքրիկ նկատողութիւն մը միայն ընելու։

— Նկատողութի՞ւն. ինծի՞. կը լսե՛մ։

— Ես բնաւ չէի կրնար մտածել, որ դուք կրնաք խօսք առ ու ձեր խօսքը չպահել։

— Ինչպէ՞ս. ձեր հանդէպ ես ի՞րը խօսքս չեմ պահած. — բացականչեց ոգեն մեծ յուզումով և ինքզինքը զսպելու անկրնդունակ։

— Կատակ է ըրածս. — կցկց աղջիկը իսկոյն ինքն ալ վախնալով իր խօսքերու թեզած տպաւորութենէն։ — Ես ուզեցի միայն յիշեցընեմ, որ դուք օր մը խօսեր էք ինծի հետ իմ համալսարան երթալու մասին. և ճիշդ այդ օրէն այլևս ձեր երեսը տեսած չունիմ։ Ես հիմա ալ, որ կը տեսնեմ, այնքան լուրջ ու մտածկոտ դէմք մըն էք չիներ, որ մարդ հետերնիդ խօսելու կը վարանի։

— Համալսարա՜նը. իրա՜ւ. նկրեցէ՛ք. — ըսաւ Արշակ անկապ։

— Մոռցե՛ր էիք արդէն։

— Մոռցե՞ր։

Ու չգիտէր ի՞նչ պատասխանել։ Վերժին պարզ ըմբռնեց, որ ոգու հոգիին մէջ տարօրինակ բան մը կը պատահար։

— Գոնէ ասկէ ետքը կրնա՞մ ձեր վրայ յոյս դնել. — հարցուց աղջիկը ակընթարթի մը վերջը։

— Պատրա՛ստ եմ. ինչով որ կրնամ։

— Ուրեմն վաղը կու գա՛ք մեզի այդ մասին խօսելու։

— Ձեր հրամանին։

— Մ՚չ հրաման. խնդի՛րք. ուրեմն վաղը կու գա՛ք.— չեչաւց աղջիկը կրկին։

— կու գամ։

— Օրհո՛ւդ Վերժին, ո՞ւր էք.— լսուեցաւ սեմին վրայէն Մանոիկի ձայնը, որ նոր էր ձգեր դաշնակը։

— Հեռուէն նուագը ուժգի ախտժելի է.— պատասխանեց Վերժին։— Ինչ ալ սիրուն դիչեր է։ Տեսէ՛ք, այդ ամպերու կոյտին վրայ սիրահարեր է ձեր եղբայրը. աչքերը հոնկէ հեռացընել չի կրնար։

— Ի՞նչ բանի էք հոս.— հարցուց Տիրան նայնպէս հերս մտնելով։

— Պարո՞ն Արշակ, մեր վիճաբանութիւնը սակայն նոքէն կէս ճնաց.— թեզաց սրտէն բժիշկին ձայնը։

— Բժիշկը ձանձրացաւ. գո՛ւբս երթանք.— բսաւ Մանոիկ։

Ու չորսը միասին ելան սրահ։

Ը

Արթընուելուն պէս առաջին միտքը Վերժինին երթալը եղաւ և ալ ամբողջ օրը այդ հետանկարը գլխէն դուրս չէր ելլեր։ Նորէն մէկ-երկու ժամ աղջկան հետ միասին։

Բայց չէ՞ որ վճռած էր կարելիին չափ հեռու պահել ինքզինքը. ա՞ս էր իր վճիռը. արդէն խօսք էր առած և ինչպէս ալ ուրախ էր՝ խօսք առած ըլլալուն։ Բայց ի՞նչ կրնար ընել. ամէն ինչ կատարուած էր անկախ իր կամքէն. խնդրողը ինքը աղջիկն էր և համաձայնարանի հարցը կար մէջտեղը. միթէ իր պարտքը չէ՞ր իրեն դիմող աղջիկան մը առաջացմանը օգնել՝ ով ալ որ ըլլար։

Հեզնօրէն ժպտեցաւ. կը հասկընար, որ համալսարանը ազուր պատրուակ մըն էր միայն իրեն համար. կը դիտակցէր, որ հիմա իր ըրածը գաղութեան պէս բան մըն էր։

Գաղութիւն թէ պարտաւորութիւն՝ իրիկուան դէմ ելաւ գնաց արդէն հինէն գաւազրուած ժամուն, երբ ամենէն աւելի հաւանակա-նութիւն կար առանձին ըլլալու. չէ՞ որ առանձին խնդրի մասին պէտք է խօսէին։

Եւ յաջողեցաւ։ Մօրը երեսր հազիւ տեսաւ. իսկ աղջիկը ժպտե-բես դէմ ելաւ սպասուած հիւրին և առաջարկեց ուղղակի պարտէզ իջնել.

— Հոն աւելի ազատ կը խօսինք և հաճելի է։

Աւազէ արահետներով առաջնորդեց իր հիւրը ծառերու առաւերին տակ պահըպտած փոքրիկ աւազանի մը քով, ուր ոտաբէկ հիւսուած նստարան մը կար և մօտն ալ նոյնպէս անոյշ բուներէ չինուած սե-ղան մը։ Շոյող զովութիւն մը զարկաւ Աբշակի դէմքին։

Ծառերը նազանքով վար կը կախէին իրենց ճիւղերը աւազանի ալեծանկիւնի հայելիին վրայ և պչրանքով կը սարսռային իրենց ձևերուն քիչ մը ծալծլուած անդրադարձումը տեսնելով ջրին մէջ, ուր շատ փոքրիկ կոհակները ժպտող և ժպիտը զսպել ուզող չրթունք-ներու կծկումովը կը դողդողային։

Ջիւռ մը զարձուցած անհաւատ հոգին ջուրը անուշ խոխոջով կը թափուէր աւազանը և հակառակ կողմէն խոզովակներով ու առու-ներով կը վազէր պարտէզին հեռաւոր անկիւնները ջրելու։ Եւ հեռուն տանձենիներուն տակէն յայն պարտիզպանին տխուր երգին միօրի-նակ ելևէջը կը լսուէր։

— Ի՞նչ սիրուն է հոս.— բացականչեց ազան ախորժանքով չուր-ջը դիտելով։

— Եթէ այդ տատիճանի մեր տունէն չի փախչիք՝ կարելի է դեռ ուրիշ սիրուն բաներ ալ կը գտնէիք հոս. — պատասխանեց վերժին կատակի ձևով։

— Դուբս է ամէն կատակէ. — վրայ բերաւ ազան անմիջապէս չեշտով մը, որուն լուրջ թէ հեգնոտ ըլլալը անկարելի էր որոշել։

— Ըսէ՛ք ինծի պարզապէս՝ ինչո՞ւ կը փախչիք մեր տունէն։

— Բայց դիտէք, որ կղզին է։

— Գրեթէ չարաճճի մըն է ձեր վերազարթը։

— Ես ու քոյրս գալ կ'ուզէինք չարաւնակ. մեր պարտքն է արդէն. մանր-մունր արգելքներ, որոնք ...

— Թողէ՛ք, խնդրե՛մ, այդ չոր քաղաքավարութիւնը մէկդի. — ընդհատեց ազջիկը պահանջկոտ չեչոտով մը:

Աբչակ զարմանքի, համակրանքի ու չուարանքի խառն զգացումով մը անոր աչքերուն կը նայէր, երբ վերջին չարաւնակեց.

— Եւ վերջապէս չիտակը ինծի հասկնալի չէ՝ մի՛թէ այդ ատիճան հետաքրքիր էր ձեզի համար Հալքին ու ձեր մօրաքրոջ ընտանիքը: Զիտամ, բայց գոնէ ինծի այնպէս կը թուէր, որ հոս, ձեր բիններուն քովը, ձեզի համար աւելի գրաւիչ պիտի ըլլար:

— Ձեզ ալ ատգրութեան խոստացուած աշխատութիւն ունէի. պահ մը առանձնանալը անհրաժեշտ էր:

— Աղիկա անչուշտ ուրիշ խնդիր է. բայց ինչո՞ւ ինծի նախապէս չըսիք. ըսելու պարտաւորութիւն մը չըզգացի՞ք: Ամէն պարագայի չափէն աւելի է այդ աշխատանքը: ամբողջ ձմեռը համալսարանն էք. ամառուան այս երկու ամիսները կրնայիք քիչ մը աւելի ազատ անցընել: Գուցէ կը սխալիմ, բայց մի՛շտ ուրիշներու և ընդհանրութեան մասին մտածելն ալ չափազանց կը թուի ինծի:

Աբչակ յանկարծ բուռն ամօթի մը զգաց: Ինքը ինչպէ՞ս բոլոր ժամանակը պարապ միայն իր եսովը էր զբաղուած և ինչպէ՞ս հիմա ինքզինքը ազնկան կը ներկայացընէր, գործի նուիրուած մարդու ձևեր ու անձնազոհութեան հովիւ կ'ուռնէր վրան: Եւ կեղծող, չըպարուող մը ըլլալու գազափարը այնպէս զարկաւ սրտին, որ ամէն հաչիւ մոռցած ըսաւ չիտակ.

— կը սխալի՛ք, օրիո՛րդ: Ես երբեք ո՛չ այդչափ աշխատասէր եղած եմ, ո՛չ ալ ձեր ըսածին պէս ինքզինքս մոռցող: Եւ հիմա ալ աշխատելու համար չէր, որ կղզի գացի. սո՛ւտ եմ. պատճառը բոլորովին տարբեր բան էր:

— Որը ինծի չէք կրնար յայտնել:

— Ձեզի համար քնաւ հետաքրքիր չէ. ներող եղէք:

Վերժին չէր ուզեր աչքերուն կը նայէր: Անոր կիզող հայեացքէն կերպ մը խոյս տալու համար՝ ազան ծռեցաւ գետնէն տերեւ մը վերցընելու:

— Բայց գուցէ կրնաք յայտնել, թէ ինչո՞ւ այդպէս ցրուած էք, մտածկոտ ու անբնական: Միևնոյն բանը եղբայրս ալ նկատած է. երէկ իրիկուն ձեր քոյրն ալ նոյնը ըսաւ:

— Բայց ինչո՞ւ կ'ըզբաղիցընեն այս բոլոր աւելորդ բաները ձեզի. — բացականչեց ազան յանկարծ յուսահատ ու նեզսրատած: — Ձերինին պէս լեցուն և ուրախ հոգիներու համար այնքան հարցեր կան ձեր չուրջը հետաքրքիր:

— Այդ՝ ո՛ւրմէն. հետաքրքրութիւս աւելորդ կը գտնէք:

Վերժին գլուխը ետ նետեց, չունչը բռնեց վայրկեան մը, կարծես

կը մտածէր ըսելիքը. և չարունակեց խիստ վճռական խօսուածքով մը.

— Դուք իրաւունք ունիք՝ այդ բոլորը հարցնելը իմ կողմէս անհամեստութիւն է։ Միայն այս մէկը գոնէ դիտնալը կարեւոր իմ իրաւունքս է։ Ինչո՞ւ համար դէպի ինծի յանկարծ այդպէս փոխուեցաք։ Ես գիտեմ առաջ որչափ յօժար կու գայիք ինծի և ինչպէ՛ս սիրով հետս ըլլալ ու խօսիլ կ՚ուզէիք, ո՛չ թէ այսպէս ակամայ ու քունի։ Ըսէ՛ք, խնդրեմ, ի՞նչ ըրի ես ձեզի. ամեն կողմէն մտածեր եմ՝ խելքս ոչինչ կարել չկրցաւ. ինչո՞վ կրնամ ես ձեզի վիրաւորած ըլլալ։ Չգիտեմ ի՞նչ հիման վրայ, բայց ինծի այնպէս կը թուի, որ ձեր կզզի երթալուն հետ անսովոր բան մը կապուած է, որուն մէջ ե՛ս ալ դեր ունիմ։

Տղան լուռ գլուխը կախեց, իսկ ազջիկը չարունակեց կարուկ՝ ամեն ինչ մէկ-անգամէն ըսելու, մէկ անգամէն իր հոգին բանալու բացայայտ որոշումով։

— Ներեցէ՛ք ինծի, ես կողմնակի ճամբաներով քալելու անվարժ եմ. ես լուռ չեմ ուզեր, ինչ որ սրտիս վրայ ծանրացած է։ Ձեր վերադարձէն իվեր ես ամեն վայրկեան ձեզի եմ սպասած. ամեն դուռը զարնուելուն ցատկեր եմ տեղէս կարծելով թէ դուք էք ըլլալու։ Երբ չատ ուշացաք՝ վշտացայ, բայց նորէն չհամբերեցի. երկկ իրիկուն եղբայրս դրդռզը ես էի՝ գոնէ անգամ մը հետերնիդ խօսիլ կարողանալու համար. նոյն մտադիր էի, քիչ մը ինքզինքս սուզ ծախեմ, բայց դուք այնպիսի ցրուած դէմք մը չունեիք էիք եղբօրս դիմացը, որ չդիմացայ ու ետևնուդ ներս սմնեակ եկայ. դուք միայն պարապ քաղաքավարական երկու նախադասութիւն նետեցիք երեսիս։ Եւ հիմա ալ, որ նորէն ես եմ ձեզի մօտս բերեր գրեթէ բռնի և այս այլակերպութեան պատճառը վերջապէս հասկընալ կ՚ուզեմ, դուք պարզապէս ինծի կ՚ըսէք, որ ուելորդ է ձեր գործերով հետաքրքրուիլս։ Ընդհակառակ եմ, չ՚ա չնորհակալ. որչա՛փ ազնիւ էք, որ ինծի ուելորդ մտածումներ տալ չէք ուզեր։

Աղջկան ամեն մէկ նոր խօսքին Աբչակ կ՚ըզդար, որ իր հասկացողութեան մէջ չինուած ու բարձրացուած չէնքէն քարեր, սիւներ ու պատեր կը թափէին և տանիուվրայ կը դառնար հոն ամեն ինչ. երկրաշարժէ առաջացած ուերակ մը և ինքը չուարած մը։ Բայց այդ ամեն խառնակութեան ու տանիուվրայութեան վրայ կը թագաւորէր մէկ հաստիկ յստակ ու պայծառ և ամբողջ մարմնին դող պատճառող դիտակցութիւն մը, որ վերժինի հոգին կապուած էր իր հոգիին։

Վերջին օրերու իր բոլոր դատումներն ու ըմբռնումը սխալ էին ու յիմար և իր վարմունքը յիմարութիւն. վերժինը ի՛րն էր, իրը։ Եւ մոխրներու տակ խորունկ պահուած սէրը, այսքան օրեր զսպուած

ու խեղդել, սանձել չանացուած զգացումները յանկարծ պայծառ բոցով մը վառուիլ սկսան տղու նայուածքին, պէմբին ու ամբողջ արտայայտութեան վրայ. իր ձեռքերը իր կամքէն անկախ պէպի աղջիկը կ'ուղղուէին։

— Վերժի՛ն... — կրցաւ արտասանել իր դողացող շրթունքները։

— Ասկո՞րդ, հա՞, ուրկո՞րդ... — կը շարունակէր աղջիկը տղու այդ յուզուած ու յուժկատած վիճակին դէմ ինքն ալ իր ինքնաշնորհումը պահելու անկարող. — բայց գիտէ՞ք, որ ձեր կղզին եղած ժամանակը իմ բոլոր ուշքս պատուհանէս նշմարուող այդ սեւ հողի կտորին վրայ է եղած. և այդ բոլոր ժամանակը ես միայն ձեզի եմ մտածեր ու ձեզի հետ անցուցած պահերս։

Տղան բռնեց աղջկան երկու ձեռքերը միաժամանակ և սկսաւ սեղմել։ Վերժին լռեց. առանց ձեռքերը քաշելու՝ աչքերը նախ ձգեց գոգը, վերջը քնքշանքով բարձրացուց, գամեց տղու վառուող հայեացքին մէջ և հազիւ լսելի ձայնով մը իր շրթունքներուն մէջէն չընկնեց.

— Ի՞նչ ըրի ես ձեզի։

Տղու դլուխը պոյտ եկաւ և թևերը սկսան կծկուիլ. ո՛չ-մէկ դիմադրութիւն, մինչև որ վերժինի դլուխը եկաւ ու ինկաւ տղու ուսին։ Եւ համբոյրներուն տարափը կ'ուռնձուէր աղջկայ մազերուն, ճակտին, քունքին ու այտերուն, մինչ՝ աղջկայ կուրծքը բարձր ու անկանոն կ'ելևէջէր տղու ամուր գրկած թևերուն մէջ։

Կամաց մը ետ քաշուեցաւ վերժին և անոր թևերէն կերպ մը ինքզինքը ազատեց։

— Ասիկա իրա՞ւ է, թէ երազ։— եղաւ Արշակի առաջին հարցը։

— Մի՛ խօսիր։— չընկնեց աղջիկը։

Երկու ձեռքով բռնեց տղու դլուխը, յոգնած հայեացքը ձգեց անոր աչքերուն. կամաց մը մօտեցուց իր դէմքին և շրթունքներովը յարեցաւ անոր զոյդ շրթունքին։

Դեռ առաջին յուզումէն չկազդուրուած, դեռ չնորհքով մտածելու, կապով խօսելու անկարող՝ նստած էին լուռ, ձեռք-ձեռքի, աւազանին դէմ, երբ հեռուէն

— Վերժի՛ն.— լսուեցաւ։

— Եղբա՛յրս.— բացականչեց աղջիկը, ցատկեց օտքի, բնազդաբար սկսաւ մտածել չակել ու դէպի ձայնի կողմը դառնալով՝ պոռաց.

— Հո՛ս ենք, հո՛ս։

Եւ բոլոր ուժովը վազեց եղբօրը դէմ՝ հնար եղածին չափ իր յուզումը սքօղելու համար։

— Հանգի՛ստ, հանգի՛ստ.— պոռաց բժիշկը քոյրը տեսնելով։— Այդպէս խենթ-խենթ չեն վազեր։ Տե՛ս, չնչասեր ես բոլորովին։ Պարո՛ն Արշակը ինչո՞ւ մինակ ձգեցիր։

— կարծեցի թէ ձայնս չլսեցիր. — պատասխանեց քոյրը երկու ձեռքը կրծքին սեղմած՝ չնչառութիւնը կանոնաւորել ջանալով։

* * *

Բժիշկը նկատ ուրախ-ուրախ Արշակը բարևեց։

— Մայրս ըսաւ, որ պարտէզն էք։

— Եւ ի՞նչ գեղեցիկ է եղած ձեր պարտէզին այս անկիւնը.— նկատեց Արշակ բան մը ըսած ըլլալու համար։

— Այս վայրկեանիս աւելի գեղեցիկ կը դառնայ. վարկեա՛ն մը միայն. ա՛յ, տրդէն եկաւ։

Ու մատովը մօտեցող սպասուհին ցոյց տուաւ, որ ձեռքը ափսէ մը դէպի աւազանը կու գար։ Ափսէին մէջ չիչ մը օղի և ապտակեր։

Սպասուհին բերած բաները չարեց սեղանին վրայ ու հեռացաւ։ Երեքն ալ նստեցան. բժիշկը երկու փոքրիկ դաւաթիկները լեցնելով դարձաւ հիւրին.

— Է՛, բարո՛վ եկաք. ձեր կենա՛ցը։

— Շատ չնորհակալ եմ. բայց ես օղի չեմ խմեր։

— Ա՛խ, անմիտ բաներ մի՛ ըսէք. գաւաթ մը խմեցէ՛ք։

— Ինչո՞ւ կ՚ըսաիպես, Յակո՛բ, եթէ սովոր չէ։— մէջ նետուեցաւ քոյրը չնչոտով մը, ուր խանդավառանքը կը զգար։— Պարոն Արշա՛կ, մի՛ խմէք։ Սպասեցէ՛ք, ես ձեզի հիմա մսաերա կը բերեմ. թեթև, հրաշալի մսաերա։

— Եւ առանց ազա մերժումներուն ականջ դնելու՝ վազեց դէպի առուն։ Արշակ վայրկեան մը մտածկոտ մնաց և յանկարծ դարձաւ սեղանակցին.

— Պարո՛ն բժիշկ, ձեր քոյրը խելացի աղջիկ է և միջնակարգ կրթութիւնը աւարտած. ինչո՞ւ չէք զրկեր Եւրոպա բարձր կրթութիւն առնելու։ Դիտէ՞ք մեր հասարակութեան մէջ ի՜նչ դեր կրնայ խաղալ վերադարձին։

Բժիշկը նայեցաւ խօսողի դէմքին և օղիին դաւաթիկը բերանը տանելով՝ պատասխանեց քմծիծաղ.

— Այդչափ հեռուները երթալու բարեբաղդաբար պէտք չկայ. քոյրս մտադիր է անմիջապէս գործի սկսիլ. ան չուտով վարժուհի պիտի դառնայ։ Հապա. քանի մը չարաթ մօրը հոգին հանեց, թէ վարժուհի պիտի դառնամ։

— Բայց դո՞ւք, պարո՛ն բժիշկ, աւելի կարևոր չէ՞ք գտներ, որ նախապէս հարկ եղած պատրաստութիւնը ձեռք բերէք։

— Վարժապետ դառնալու համար ի՞նչ նախապատրաստութիւն.— պատասխանեց բժիշկը կատարեալ անտարբերութեամբ։

— Բայց ձեր քույրը յոյսիս է ինձի, որ Եբրայա երթալու և ուսումը շարունակելու մեծ փափագ ունի։

Բժիշկը, որ վերջին ասեղները վարժուհի դառնալու պատմութիւնը և իր մօրը գանգատները իրենց ատեն մէջէն ընդհատուած ըլլալուն մէկ կողմէն ուրախ էր, միւս կողմէն զարմացած, յանկարծ լոյս առաւ և ժպիտը չրթունքին դարձաւ խօսակցին.

— Ուրիշ խօսքով ձեր մէջ հին ծրագիրը փոխուած է արդէն։

Արշակ այդ անակընկալ նկատողութենէն վիրաւորանքի պէս բան մը զգաց։

— Ի՞նչ ըսել կ՚ուզէք։

— Ա՛խ, դո՛ւք, տաք-գլուխ բարեկա՛մս. — խնդաց բժիշկը մատը ազուն դէմ թափ տալով։

— Բայց, պարո՛ն բժիշկ...

— Գիտէ՞ք, սիրելի՛ս, քույրս վերին տասիճանի մխիթարիչ ու անփորձ աղջիկ է և...

— Եւ հասկըցող ու կամքի տէր. — ընդհատեց ազան կարուկ։

— Հասկըցո՛ղ ու կամքի տէ՛ր. — կրկնեց բժիշկը հեգնօրէն։ — կա՛մք. և մանաւանդ պակս կանանց կամքը. այսօր կարելի է վարժուհի դարձընել և վազը համալսարան ղրկել։

— Ներեցէ՛ք, պարո՛ն բժիշկ, ո՛չ ձեր քույրը այդ խազալիքն է և ո՛չ ես...

— Իզո՛ւր, բարեկա՛մս. — ընդհատեց բժիշկը. — ես ձեզի վիրաւորելու համար չըսի։ Եւ վերջապէս, որ քույրս և՛ սիրուն և՛ գրաւիչ աղջիկ մըն է, ատոր կասկած չկայ. արդէն մեր ցեղը գեղեցիկ է. զարմանալու պատճառ չունիմ քրոջս այդ ձգողական ուժին վրայ չրջապատող երիտասարդներուն հանդէպ։ Առաջ պարոն Տիրանն էր, որ դէպի քրոջս սիրտը ճամբայ բանալ կ՚ուզէր, մինչեւ երեք քսպէ չունէր, կամ հաւանօրէն դուք ուելի վարպետ էք այդ աեսակ գործերու մէջ։

— Բայց, պարո՛ն բժիշկ.— դոռաց Արշակ սրտին ցաւէն ուրիշ բառ չգտնելով։

— Ինչ վիրաւորուելու բան է ըսածս.— բացականչեց բժիշկը լուրջի ու կատակի, համակրանքի ու հեգնութեան տարօրինակ խառնուրդ մը։ — կանանց սիրտը գրաւել գիտնալն ալ արուեստ մըն է վերջապէս. և Եբրայա գացող երիտասարդ մը ուզէ-չուզէ առ ալ պիտի ուսումնասիրէ. մեր Աբեմատաք երթալուն նպատակը եւրոպական քաղաքակրթութիւնը իւրացնելը չէ՞։

Եւ սկսաւ ծիծաղիլ՝ օդին գաւաթիկը ձեռքը։

Արշակ սոսկալի ճիչով կ՚ըզդար։ Պատկերացաւ աչքին դէմ հարիւր քառորդ մը առաջ իրենց դիրքը վերժինի հետ այդ նոյն նստարանին վրայ։ Իսկ Տիրանի անունը մէջ գալը և այն գազափարը, թէ

նախիկ օտարները կը նկատէին իր ընկերոջը ձեռքէն վէրժինը խլելը՝ այնպէս զարկաւ խղճին, որ Աբչակ բոլորովին հաւասարակշռութիւնը կորնցուց։

Բժիշկը նշմարեց ազաւ դրդռուած վիճակը և ուզեց հանգստացընել։

— Մի՛ յուզուիք։ գուք ալ երեւի գէտ բաւական միամիա էք։ Միայն իրրեւ փարձուած մարդ, խորհուրդ կու տամ ձեզի, որ ձեր համալսարանով ու վարժուհիներով մեր առն մէջ անհամութիւններ չմացընէք։ Մօրը աւելորդ լացեր պատճառելէն ի՞նչ օգուտ։

Վէրժին վազվազ եկաւ. ձեռքը չբացուած ու գետ կնքուած չիլ մը գինի ու խցահան. իսկ մէջքը նոր կապած ճերմակ գոգնոցին մէջ քանի մը տանձ ու սերկեւիլ։

Գոգնոցին մէջինը սեղանին վրայ թափելով՝ գուարթ դէմքով դարձաւ երիտասարդին.

— Պարո՛ն Աբչակ, հանեցէ՛ք չիլին խիցը. և ձեզի հետ մխասին՝ ես ալ գաւաթ մը պիտի համեմ այսօր։

Բժիշկը գլուխը քիչ մը մէկ կողմ թեքած՝ կը նայէր անոնց։

Աբչակ աւրեց կնիքը, պատռեց կապար թևրթը, քաշեց խիցը և լեցուց օրիորդին ու իրեն, տեսակ մը բոլորովին մեքենաբար։

Բժիշկն ալ իր օղին վերցուց ու գաւաթները զարկին իրարու։

— Է՛, բարի ճանապարհ, վէրժի՛ն. լսեցի չուտով Եւրոպա երթալու մտաք ունիս եղեր. ինչո՞ւ մինչեւ հիմա ինծի ոչինչ չէիր ըսեր։

Ազջիկը ցընցուեցաւ, զարմացաւ ու նայեցաւ Աբչակի երեսը։

— Ուրեմն արդէն խօսեր էք այդ մասին.— հարցուց յուզուած, գաւաթը ձեռքէն դրաւ վար ու նետուեցաւ եղբօր վիզը.— Իմ մէկհատիկ եղբայրս, իմ անուշ եղբայրս, գիտէի որ պիտի օգնես ինծի. դուն քարի ես, չատ բարի. իմ մէկ հատիկ եղբայրս։

Բժիշկը մէյ մը ժպտուն կամաց մը ազատեց ինքզինքը քրոջը թևեւելէն ու միեւնոյն ժամանակ կը խօսէր.

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ. կ'երթաս Եւրոպա, կը տեսնես նո՛ր քաղաքակրթութիւն, նո՛ր տեսակի կեանք, կը յաճախես նշանաւոր համալսարաններ և աւելի նշանաւոր դիտականներու դասեր և այդ ամենը գլուխդ լեցուցած կը վերադառնաս հոս մեր հասարակութեան յառաջդիմութեանը ծառայելու, նոր սերունդին նոր ուժ և ազատ գաղափարներ ներարկելու։ Այս բոլորի մասին անշուշտ արդէն քեզի խօսած է պարոն Աբչակը։

Եւ ասիկա ըսուած էր այնպիսի լուրջ չեշտով մը, որ վէրժին զարմանքով կը նայէր եղբօրը՝ առանց ինչ մտածելը գիտնալու։

— Վերջապէս — չարունակեց եղբայրը հիւրին գաւաթը դնելէ լեցընելով.— վերջապէս պարոն Աբչակը այս քանի տարի է Եւրոպա կ'ապրի, կը ճանչնայ կեանքը, պայմաններուն ծանօթ է, կրնայ քեզի ամեն կերպ օգտակար ըլլալ. այնպէս չէ՞. վերցուցէ՛ք սա ձեր նշանաւոր գինին։

Եւ սկսաւ արտասուց խեղդալ։ Աղջիկը ոչինչ չէր հասկընար ո՛չ այդ անանգի ծիծաղէն, ո՛չ եղբօրը արտասովոր լրջամիտէն, ո՛չ ալ անոր անսպասելի համակերպումէն։ Անգամ մը տղուն կը նայէր, անգամ մը եղբօրը, կէս մը չուար, կէս մը ուրախ։

Իսկ Արշակ այդ կատակերգութիւնը չարունակելու այլեւս անկարող՝ ցասկից ոտքի և խօսակցութեան հնար եղածին չափ դրական գոյն մը տալու ջանքով՝ ըսաւ.

— Հերի՛ք է, պարո՛ն բժիշկ։ Մի՛ մոռնաք ասկայն, որ ձեր քրոջը տեսակ մը խօսք տալած էք արդէն և տակիկա իսկապէս ձեր պարտաւորութիւնն էր։ Փախանակ կնոջ կամքը հնդնելու և անոր անկարողութիւններուն վրայ դատ նսեմելու՝ միջոց տանք մեզի ճօտիկ եղող կիներուն, որ նեռաւին հասանքի մէջ։ Կը յուսամ նորէն տեսիլ կ'ունենանք այս նիւթին շուրջը խօսելու. իսկ հիմա արդէն ուշ է, նկատեցէ՛ք, որ մեկնիմ։

— Իզուր կ'ըսատպէք.— նկատց վերժին։

— Ոտքի վրայ դատաւ մըն ալ չէի՞ք խմեր.— առաջարկեց բժիշկը իր տեսական ժպտին մէջէն։

— Շնորհակալ եմ, ո՛չ։

— Խմեցէ՛ք. այսօր Թող բացառութիւն ըլլայ.— ըսաւ աղջիկը ինքը գաւաթը տղուն ձեռքը դնելով։

— Քանի որ քոյրս կ'առաջարկէ, ալ մերժել չէք կրնար. էէ՞։ Խմեցէ՛ք։ Եւ խմենք կեանքի յաւիտեան կրկնուող կատակերգութեան կենացը։

* * *

Քոյր ու եղբայր ճամբու դրին հիւրը պարտէզի դռնէն։

Առանձին մնալուն պէս բռնեց իրենց տան հակառակ ուղղութիւնը։ Պէտք ունէր չարժուելի, պէտք ունէր ամենէն առաջ իր հոգիին մէջ դարձածը պարզ ու յստակ գիտակցելու, որ իր ընելիքը գիտնար։

Բժիշկի հնդնութիւնը, բայց ու դոյ ակնարկները, վերժինի հետ իր ունեցած դիրքին հիմնական փոփոխումը, Տիրանի հանդէպ ստեղծուած նոր դրութիւնը, իր նախորդ որոշումները ոտքի տակ առած ըլլալու ներքին խայթը, աղջկան խօսքերուն ու գործունքին վիրաւորը և խորէն եկող մտածում մը, որ իր վարմունքը ազնիւ չէր և որ հիմա մեզք մը ունէր իր թեւերուն ու իր չրմտնքին վրայ իր մօտ ու մտերիմ ընկերոջ հանդէպ. այս բոլորը խուռն յորձանքով պատյկուա գային իր խռոված հոգիին մէջ։ Կը գիտակցէր, որ իր գաղտնութեան թելը ապուշ ու անբնական հանգոյցներ կ'առնէր ու կը խառնուէր և հետզհետէ աւելի կը խճճուէր կատաւի մը թաթիկներուն տակ ինկած կծիկէ մը քակուղ թելին պէս։

«Ես խելքէ կը հանեմ եղեր այդ անփորձ ազջիկը։ Է՞ս։ Հապա ո՞վ։ Ես ուրիշի վարժ եմ եղեր կանանց սրտերը գրաւելու։ Այդպէս կը պնդէր բժիշկը իր մեծ փորձառութեամբ»։

«Եւ իրաւութիւն է։ գիտէ ժամ մը չկայ, որ Թևերուս մէջն էր ան, իսկ Տիրանը բոլորովին մոռցուած։ Տիրա՜նը։ խե՜ղճ Տիրան։ հիմա նաեւ է անշուշտ ու ազջկան վրայ ոտանաւոր կը հիւսէ։ խե՜ղճ ազնիւ տղայ։ Չէ՛, պարապ բան է, աչխարհքը անազնիւ նեռուն է։»

«Անցած օր գացի, կեզծեցի, վատահացուցի, թէ ես ո՛չ ազջիկը սիրած եմ, ո՛չ ալ սիրելու ժամանակ ու տրամադրութիւն ունիմ։ Թէ՛ ուրիշները և թէ՛ ինծի կատարելապէս կուրացընելու համար քանի մը օր հեռացայ, որպէսզի վերադառնալուս պէս ազջկան դիրկը նետուիմ։ Խաբեցի, և վարպետ կերպով, բժիշկը իրաւունք ունի, թէ՛ ինքզինքս, թէ՛ ազջիկը, թէ՛ ընկերս»։

«Դուզէ իմ ամբողջ կեանքս այս ձեւով խաբել ու կեզծել եղած է միշտ, ո՞վ դիտէ։ Աղուոր ազուոր բառերով խաղալ, խոշոր սկզբունքներու անուններ ճառել, անպայման ազնիւութիւն, բարձր անձնապոհութիւն պահանջել ամէն տեղ ու ամէնէն։ բայց ահա՛ կեանքի իրական փորձ մը և ահա՛ արդէն կեցած է իր ամբողջ հասակով ներքին հզօր եսի իսկական ամարդի պատկերը»։

Պահ մը կարծես մտածումները ընդհատեցան։ Մեքենաբար նայեցաւ չուրջը։ գիւղէն դուրս էր եղած արդէն ու կը քալէր երկաթուղիի գծին կից գացող ոտքի ճամբով, որ եղերուած էր թուփերու ու չորցած խոտերու փշեթաթաւ ցանկով մը։

«Այո՛, պէտք է դուրս գալ այս փուչերէն ու տաստակէն. պէտք է դուրս գալ այս հոգեկան լաբիւրինդոսէն։ Պէտք է բռնել իր հոգիի բնական ճամբան, ևթէ իրաւ որ ևնոգ ու սրիկայ մը չէր։ ճամբան մէ՛կ էր. գիտէր. մէկ անգամ ընդմիշտ վերջ դնել իր ու ազջկան մէջ եղած կապին. փախչի՛լ, փախչի՛լ, ինչպէս ըրեր էր մինչև հիմա։ Բայց ասկէ ետքը միթէ կարելի՞ բան էր տակիա ուազանին դէմի այսօրուան անցած-դարձածէն ետքը։ Աստուա՜ծ իմ, հիմա գիտէր, որ կը սիրուէր։ դեռ կ՚ըզգար չրթունքներուն վրայ վերժինի թաւիշէ շոյանքը»։

«Դո՛ղ։ դո՛ղ»։ կը հնչէր հոգիին մէջ։ «Դողը» կը պոռայինր հոգիին բոլոր անկիւններէն։

«Ա՛խ, ի՞նչ սէր, ի՞նչ բաղդաւորութիւն կրնար բերել այս կապը իրեն, երբ ամէն վայրկեան Տիրանի անիրաւուած դէմքը պիտի կանգնէր իր աչքերուն դէմը, երբ չարաչուակ պիտի յիշէր, թէ ինչ գնով ձեռք էր բերեր այդ բաղդաւորութիւնը»։

«Մէրը աւելի ուժեղ է քան մահը։ գիտէ՛ր, այդպէս կ՚ըսէին. գիտէր որ մարդիկ յաճախ ծնող, մանրիմ ու բարեկամ և դեռ չատ

ուրիշ բաներ ուզի տակ կու տային իրենց սիրած էակին տիրանալու համար։ Գիտէր, բայց կը հաւկընար, որ ինքը այդ մարդոցմէն չէր։ Իր հոգին, իր կազմը, իր ըմբռնումները Թոյլ չէին տար իրեն, որ իւրէ իր ընկերոջը պնակէն, իր ընկերոջը բերանէն, անար բաժինը կեանքի սեղանէն»։

«Մէկը պէտք է գրկուէր, մէկը պէտք է տառապէր. ինքը իր ձեռքով չէր կրնար այդ հարուածը իջեցընել Տիրանի կրծքին. կը նախընտրէր իջեցընել իր կրծքին։ Իսկ վերժի՞նը։ Ա՜խ, Աստուած իմ, երբ ինքը մէջտեղէն չքաներ, հին առուն երեւի իր ճամբան կը գտնար։ Ու կը մռայլէր իրենց մէջի այս միջանկեալ կարճուկ վէպը։»

Տղան կը վախնար մխայն, որ իր այս վճռական կեցուածքը ամէն վայրկեան պահել չկարողանար, մանաւանդ երբ վերժինին նորէն հանդիպէր։ Եւ որոշեց այն աւտակ քայլ մը առնել, որ անկարելի դառնայ մէկ անգամէն Թէ՛ ամէն հանդիպում, և Թէ՛ նահանջի ամէն հնարաւորութիւն։

կեցաւ ճամբուն վրայ վայրկեան մը. վճիռը տւած էր. իսկոյն դարձաւ եա ու սկսաւ քալել դէպի գիւղ ու դէպի տուն։ Ալ չէր մըտածեր. ալ մտածելու ոչինչ չունէր. անձնասպանութիւն որոշողի պէս էր. մէկ մտածում մը միայն ունէր՝ երթալ ու անմիջապէս գործադրել իր որոշումը. ուրիշ ամէն մտածում աւելորդ էր։

Արագ ընթացքով հասաւ տուն, վճռական քայլերով բարձրացաւ իրենց սանդուղներէն, մտաւ իր սենեակը, ինքը վառեց իր լամպը ու նամակի մը Թուղթ քաշեց առջեւը։

Ցաւի սրտեր քոյրը կը նայուզէր։ վայրկեան մը ձեռքը ճակտին ու աչքերը ճերմակ Թուղթին յառած՝ իր մտքերը ամփոփեց և յանկարծ վերցուց գրիչը ու արագ սկսաւ գրել։

«Ազնի՛ւ օրիորդ, այս տողերը գրելը ինծի համար տանջանք է, բայց պարտականո՛ւմ եմ գրելու։

«Մեր փոխադարձ յարաբերութիւնը բոլորովին անսպասելի բարդութիւններ առաւ, որուն մենք ընաւ նախապատրաստուած չէինք։

Ես այսօր վերջնապէս համոզուեցի, որ ձեր ձայնի ու հայեացքի հրապոյրին դիմաց իմ կամքիս ուժը ինծի հերիք չէ ու ես կրնամ աններելի սխալներ գործել։

«Ես իմ կազմէս պիտի չկրնամ ատկէ եաքը աւելի խիստ կերպով ձեզմէ հեռու մնալու, ինչպէս ինքներդ չատ ճիշդ նկատեր էիք։ Իսկ դուք, սիրելի՛ օրիորդ, մոռցէք մեր մէջ եղած պզտիկ անցեալը և ներեցէ՛ք ձեզի պատճառած այս անախորժութիւնս։ Մորին յարգանքով՝ Արշակ»։

կարդաց անգամ մը, քիչ մը մտածեց, Թուղթին ճակատը հատիկ-հատիկ գրերով աւելցուց։

«Նամակիս հետ ուզարկած գիրքս պատրաստակ մըն է Թէ՛ մեր և

թէ՝ ձեր տունը ուշագրութիւն չդրաւելու համար։ Շարունակութիւնը կարդացէ՛ք առանձին»։

Ծալլեց, արագ չարժումով մը դրաւ ծրարի մը մէջ, դրեց վերժինի հասցէն, դրքերուն մէջէն քաշեց Իլէնի մէկ հատորը, նամակը կիսովին դրաւ մէջը ու իջաւ վար։

— Մայրի՛կ, մանչը ո՞ւր է։ այս դիրքն ու նամակը անմիջապէս Պզտիկեաններուն տունը ղրկէ։ խոստացայ տուն գալուս պէս այս դիրքը իրենց հասցընեմ։

— Բայց, տղա՛ս, հիմա չուտով ընթրելու ենք, մանչը ձեռքը դարձ ունի։

— Չէ՛, մայրի՛կ, խնդրե՛մ, անմիջապէ՛ս։

Մայրը վարանելով կանչեց սպասաւորը ու յայտնեց տղուն պատուէրը։

— Մէջի նամակը չձգե՛ս, վարդա՛ն.— ըսաւ Արշակ դիրքը սպասաւորին ձեռքը դնելով։

— Շուտով դարձի՛ր.— պատուիրեց մայրը։

Եւ երբ սպասաւոր տղան իր ճերմակ դոգնոցը ժողվելով ու մէջքը փաթթելով դուռնէն դուրս ելաւ՝ Արշակ ծանր-ծանր բարձրացաւ իր սենեակը։

Ներսը քոյրը հիմա վալս մը կը նուագէր։ Այդ զուարթ աքորտները իր սիրտը աւելի սեղմեցին։

«Վերջացաւ» մրմնջեց ակռաներուն մէջէն և զգաց, որ իր մէջի այն ամուր վճռակամութիւնը սկսաւ արագ հալիլ։ Իրեն այնպէս թուեցաւ, որ այս բոլոր իրարանցումը արդէն չափազանց էր. այս սահիճան ինքն իր դէմ զայրանալու ու ինքզինքը մեղադրելու պէտք չունէր։ Միմէ ինքը այս բոլորը ուզելով էր կատարած. միմէ ինքը իր ընկերոջ զգացումներու մասին որևէ բան գիտէր, երբ աղջիկէն սկսաւ հրապուրե՛լ, ո՛չ թէ հրապուրել։ Եւ ի՜նչ նենգութիւն կամ անազնըւութիւն, երբ ինքը իր զգացումները զսպել չկրցաւ, երբ աղջիկը այնքան պարզ, ջերմ ու սրտագին կախուած էր իր դէմքէն։

Ու նորէն կենդանացաւ իր աչքերուն դէմ վերժինի այն տաք ու միամիտ յանդիմանութիւնը, ամօթէն ու հաճոյքէն գետին նետուած հայեացքը. վերջը իր թևերուն մէջ . այն թեթև ու անորոշ ծանկի մը հատը, որ հագուստին ծոցէն կուգար. այտերուն հուրը, որ իր դէմքը կ'այրէր. և շրթունքներուն քնքուշ կծկումը...

Չի՛ մտածել, չի՛ մտածել. պէտք էր մոռնալ, մոռնալ ընդմիշտ. վերջացած էր։ Զսպուած չունչով ու դողացող ձեռքերով նետուեցաւ իր մահճակալին տաք փոքրիկ գորգին վրայ, դէմքը թաղեց անկողնին մէջ ու մնաց անշարժ. ո՛չ մէկ ծպտուն։ Գոլի սրահէն վալսին տաքտաքը գետ կը կայմռէին օդին մէջ զուարթ ու աշխուժ։

Ը

Սեղանատան դուռը կոնակի վրայ բաց էր և դրան զոյգ վարագոյրներուն մէջէն լամպի լոյսի դեղին խոշոր հաւասարաչափ քառանկիւնի մը ինկեր էր կից սենեակի յատակին վրայ։

Սենեակի մնացած մասը մութ էր և այդ մութին մէջ քանապէին վրայ ամբողջ հասակովը փռուեր էր վերժին, երկու թևերը գլխուն տակ կապած, աչքերը կէս մը գոց, կէս մը դիմացի պատէն կախուած նկարի մը փայլող մէկ կէտին յառած՝ խորհուրդի մէջ։

Ցանկարծ չուաք ներս վազեց սպասուհին սեղանատունէն, հոն մոռցէ՛ղէնով մաւռ կից սենեակը, մութին մէջ կծկած աչքերով նշմարեց իր տիրուհին, մօտեցաւ ու ձեռքի դիրքը անոր մկնեց։

— Ամբասանաններուն մանչը բերաւ։ — ըսելով։

Եւ արագ վազեց իր գործին։

Վերժին զսպանակէ նետուած պէս վեր թռաւ, դիրքը առաւ ու զարմացած չարժումով մը սեղանատան լամպին տակը չտապեց։

Իբսէն։

Ոչինչ հասկընալով՝ արագ բացաւ նամակը։ Առաջին արտայայտութիւնը ժպիտ մը եղաւ ձախ այտին. որ չուաւ սկսաւ աւերուիլ տեսակ մը լրջութեան տակի տալով և հետզհետէ բոլորովին կորսնցուց իր արտայայտութիւնը։

Նամակը ըստ երեւոյթին ծանր կը կարդացուէր։ Երբ վերջացուց ալ ձեռքը նամակին հետ սահեցաւ վար, ձախը մնաց սեղանին վրայ պատառաքաղի մը կոթին յենած։ Մոլոր աչքերով նայեցաւ անգամ մը չուրջը, վերցուց իբսէնը, նայեցաւ կազմին, դրաւ նորէն սեղանին վրայ, գնաց անգամ մը հասցէն և նորէն ալ ձեռքը բարձրացնելով սկսաւ վերսին կարդալ նամակը։ Բայց հազիւ քանի մը տող, որ նամակը ձեռքէն սահեցաւ, չրմունքներուն երկու ծայրերը պզտցին, կուրծքը ուռեցաւ և վայրենի հեծկլտուքով մը ինկաւ աթոռին վրայ։ Միևնոյն ժամանակ՝ ձայնը խեղդելու համար՝ սեղանէն վերցուցած անձեռնոցը դէմքին սեղմած։

Դուբաք ոտքի ձայներ լսուեցաւ։ Խենթի պէս վեր ցատկեց, գոցաց ձեռքերով վերցուց դիրքն ու նամակը և վազեց դէպի մութ սանդուղները, հանկէ վերի յարկը, չհասակ իր ննջարանը։ Նամակն ու դիրքը առանց ձեռքէն ձգելու՝ նետուեցաւ իր մահճակալին վրայ ու

գէմքը թագից բարձին մէջ. և վազքի ատեն զապուած լացը նորէն դուրս պոռթկաց բոլոր ուժով։

Գլխուն մէջ մէկ մտածում մը միայն մնխտած էր, թէ Աբշակէն մեռժուած էր. սուր ու խայթող զգացում մը, որ քիչ-քիչ սկսաւ բթանալ։ Ելաւ, նստաւ անկողնին վրայ, անդին նետեց ձեռքի գիրքն ու նամակը և լալը կարեց. կուրծքն ու ուսերը կը ցնցըէին մէչէմէչ, բայց այլեւս արցունք չկար։ Թոյլ մը կնած մէկ թևին, թաց թաշկինակին ծայրը ամուր խածած՝ մեռած հայեացքով կը նայէր մութին։

Քիչ մը ետքը ելաւ, վառեց մոմը, զատ նամակը, բերաւ լոյսին մօտ ու նորէն կարդաց ծանր-ծանր, ուշագիր ու մտածկոտ. վերջը դանդաղ չարժումով մը թուղթը դրաւ քովի սեղանին ու ձեռքը մը-նաց թուղթին վրայ։ Ուժասպառ ախտաթիւն մը սիրեր էր իր ամ-բողջ էութեան. և ուղեղին մէջ լայն ու անչարժ նստած էր միայն գիտակցութիւն մը, թէ Աբշակը ալ իրենը չէր և որ երբեք իրենը եղած չէր...

Եւ արցունքները նորէն սկսան խաչոր կաթիլներով հոսիլ աչքե-րէն, բայց առանց յուզման, առանց ազմուկի։

Վարէն լսուեցաւ մօրը ձայնը, հայի կը կանչէր։ Իսկոյն վեր թռաւ, մարեց մոմը, սրբեց գէմքը մեքենաբար և առանդուղի գլխէն հնար եղածին չափ հաստատ ձայնով մը յայտնեց, որ քիչ մը գլուխը կը ցաւի և քան ուտելու բնաւ ախորժակ չունի։

Փոխանակ պատասխանի մայրը եկաւ վեր։ Նախ նկատողութիւն ըրաւ, թէ ինչու մութի մէջ է նստած և ինքը վառել ուզեց լամպը, բայց աղջիկը չի ձգեց։ Մօտեցաւ, որ ճակատը բռնէ, աղջիկը հակա-ռակեցաւ. առաջարկեց օ-ը-քոլն քսել, վերջին նորէն մերժեց. յորդորեց յիմարութիւն չընել, գալ ընթրիքի, ելլել մաքուր օդը. աղջիկը այդ ալ ժխտեց ու խնդրեց որ իրեն հանգիստ թողնէ։ Մայրը տեսնելով, որ աղջկան քմահաճ ու կամակոր վայրկեաններէն է, ուրիշ ևս չեր-գռեւրու համար՝ դժգոհ իջաւ վար՝ քթին տակէն բաներ մը մռընտալով։

Վերջին ելաւ դուռը կղպեց, նետուեցաւ անկողնին վրայ ու մնաց պառկած անչարժ. ի՞նչ կը մտածէր և ինչո՞ւ։ Եւքը սկսաւ չուա-չուա դառնալ մէկ կողքէն միւսին վրայ. ա՞րչափ ժամանակ. ոչինչ էր գիտէր։ Տունը, դուրսը դպրած էր արդէն ամեն ձայն ու չար-ժում։ Շատ չտանջ էր, երբ ան լսեց, որ զգուշ քայլեր իր սենեակին մօտեցան, իմացաւ գրան կանթին թևիկ մը գարձրուիլը. դուռը բա-նալու իզուր ճիգ մըն էր սակայն. եւքը քայլերը նորէն կամաց մը հեռացեր էին դէպի դիմացի սենեակը, ուր մօրը ննջարանն էր։ Անկէ եւքը ալ ոչինչ էր լսած։

Յանկարծ պառկելէն յոգնութիւն զգաց. ելաւ ոտքի, սենեակի օդը կարծես քիչ կու գար, մօտեցաւ լուսամուտին. դուրսը պայծառ

ու ասոզապարգ դիչեր մըն էր. տաքուկ ու մեղմ. թարմ օդին չոյանքը դէմքին ու կրծքին չատ հաճելի կկաւ. և յանկարծ զուրսը, բացը կլլել ուզից բուռն պահանջով։

Եւ ալ առանց երկար մտածելու վառեց նարէն իր մոմը, կակծացող աչքերով նայեցաւ ժամը. երեքը անցած էր։ կամաց մը բացաւ անհնակին զուռը, մամկալը վերցուց և գոզի մը պէս գգաւշ, առանց որևէ ազմուկի իր բարակ մարչիկներով իջաւ սանդուղներէն և մեծ դգուշութեամբ ետ հրեց իրենց պարտէզը հանող դրան անագին նիգը. մոմը մարեց, դրաւ գետին ու նետուեցաւ դուրս։

•

Ծառերուն տակ անթափանց մութ էր. թեթև հովիկը կը խօսեցներ ասոերուն իւրաքանչիւր տերեւը։ Այդ մութին մէջ, ծառերու այդ փայփայազ չշխնին տակ ազջիկը արագ կը քալէր արահետ արահետ փոխուկ աւազին վրայէն։

Մինչև հիմա իր ամբողջ հոգին կը զառնար զոյգ մը գազափարի չուրջը, թէ ազան երբեք դէպի ինքը զգացում մը ունեցած չէ, ինչպէս ինքը թեթևամտօրէն երևակայած էր, թէ ինքը պարզապէս խաբուած ու չմարացած էր։ Եւ այդ անպատասխան մնացած սրտի կծու ցաւին կը միանար միւս կողմէն ամօթի խայթը, կանացի վիրաւորուած ամօթխածութիւն մը, որ այդպէս անտեղի իր զգացումները մերկացուցեր էր աղու մը դիմաց ու զրեթէ անոր վիզն էր նետուեր բռնի։

Հիմա զուրսի թարմութիւնն ու իր չարժուելն ու վազքը նոր ընթացք տուին անոր մտածումներուն և իր զառզութիւնը զուրս նկաւ վերջապէս այդ երկար սենեակն գազափարներու կախարդական չըրջանակէն։

Աւազուղին անկիւն կու տար աւազանին քով. ազջիկը հապիւ էր հասեր այդ անկիւնը, որ կանգ առաւ յանկարծ. և գրեթէ բռնի, իր կամքին հակառակ ու վարանոտ ոտքերով մտաւ ծառերու այն խումբին տակ, ուր աւազանի հալած ձիւթէ մակերևոյթը թեթև մը կը ցոլար։

Մութին գիրկէն նռատարանը հապիւ կը նշմարուէր. քայլ մը հեռու կեցաւ, արձանի մը պէս անշարժ, թևերը ծալած կրծքին ու հայեցքը յամառ կէտի մը յառած, ուր ցերեկը նռատ էին իրենք երկուքով։

Ճիշդ ազջիկան ծոցէն դուրս կը լզայէին թարմ պտուկերներ, խօսքեր, չարժուձիներ, նայուածք ու գգուանք, կենդանի, բոլորովին կենդանի. ցաւի ու հեշտանքի զոյ մը ցնցեց ամբողջ մարմինը. երազէ արթնցածի մը պէս, յուսահատ ու վայրի չարժումով մը մկկի հրեց

իր վրայ խուժող այդ թարմ ու խայթող յուչերը ու դուրս ելուս ատոգանի անկիւնէն։ Բայց դուրս ելուս բոլորովին տարբեր հոգեբանութեամբ։

Տգեղ իր նամակով այն գաղափարը տալ կ'ուզէր, թէ այսօրուան իր վարմունքը սխալանք մըն էր, թէ ինքը չէր սիրեր։ Մ'է, հոն, այդ ծառերուն տակ սխալմունք չկար. հոն ամէն ինչ ճշմարիտ էր ու անկեղծ. սխալն ու սուտը այդ նամակին էր, ա'է թէ մինչեւ հիմա իրենց մէջ եղած չկրճատ կապը, ա'է թէ այս ծառերուն տակէն...

Ու չգիտեր ինչպէս անուանել այն անտարանը, որուն վրայէն պիտի չէր մը գեռ չէր անցեր, բայց որ արդէն այնքան հեռու էր, հեռու։

Այս նոր միտքը, թէ ազան կը սիրէր, թէ դէպի ինքը անտարբեր եղած ըլլալ չէր կրնար, սեսակ մը հոգեկան բարձրացում հասեցուց աղջկայ զգացումներուն մէջ։

Անտարբե՞ր։ Մի՞թէ անտարբերը այդպէս դողալ, այդպէս գրկել ու գգուել գիտէ. և այդպէս երկիւղ ու փախուստ իրմէն, ինչպէս ինքը կը սեսնէր չառոնց և որ նամակը բացայայտ կը խոստովանէր։ Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ ուրեմն այդ փախուստն ու այդ նամակը։

Տգեղ կապուած էր իրեն, այո՛, ու կը սիրէր. գեռ սեւիկն, ան համոյսած էր իրմէն ու սիրահարած, ինչպէս նամակն ալ կ'ըսէ պարզօրէն, ինչպէս և իր կզակի փախուստը կ'ըսէ, ինչպէս և այսօրուան անոր գգուանքն ու յափշտակութիւնը նոյն բանը կ'ըսեն յստակօրէն։ Իրրեւ աղջիկ, իրրեւ կին խորապէս սիրուած էր ինքը Աբշակէն. բայց այդքանը բաւակա՞ն էր Աբշակի համար։

Վերյիշեց անոր այնքան-այնքան անգամներ գծած պահանջները կնոջ մը զարգացման, գերի ու գործունէութեան մասին։ Եթէ ուրիշ կանանց վերաբերմամբ այդչափ պահանջոտ էր, արդեօք սեւիկ ըլլար իր զգացումներու, իր կեանքի ու գործունէութեան ընկերուհիին համար։

Հիմա կը հասկնար նաեւ նախորդ իրիկունը իր եղբօր խօսքերը, եղբօրը խօսուածքը ընդհանրապէս իր համարատան երթալու մասին, լուրջ ու ծաղրի այն խառնուրդը, ուրկէ աղջիկը ոչինչ էր հասկրցած և խոհին ալ մոռցեր էր իր յափրեցընող զգացումներու յորդումին մէջ։ Բայց հիմա կ'ըմբռնէր. անոնք խօսած էին իր մասին և երկուքն ալ երեւի մեծ վատահութիւն մը չունէին իր վրայ։ Որ եղբայրը այդ կարծիքն էր ըլլալու՝ զարմանալու բան մը չկար։ Բայց Աբշա՞կը. երեւի՛. չէ՞ որ այնքան կ'ընդգծէր, որ ուսումը նախ լրացընէ. ա'ն ալ ուրեմն կը տարակուսէր. յոյս կամ վստահութիւն չունէր արդիւնքին վրայ։ Եւ ա'ն, և եղբա՛յրը և բոլոր չրջապատողները, ամէ՛նքը, ամէնքը կարեւորութիւն չէին ուզեր տալ իրեն։ Ինքը ի՞նչ էր սր. տունը նստած հասարակ աղջիկ մը...

Եւ մէկէն իշձ մը, պահանջ մը, վճիռ մը գամուեցաւ գլխուն մէջ։

Մե՛ծ, մե՛ծ կին մը դառնալ. բացառիկ ու կարեւոր դէմք մը. բոլորի կարծիքին հակառակ։

Եւ այդ մարդն աչքերը վառեցան. դէմքը բոց առաւ. ձեռքը ուժգին բարախոզ սրտին սեղմած՝ խոր մը ներշնչեց առաուտան դէմի մեղրածոր օդը. ձախ ոտը խոիտ տուզ գնդաւոր մը մեքենաբար ականջին հասաւ անցաւ և սկսաւ նորէն քալել. բայց այս անգամ աւելի վազք էր, քան քալել։ Ծառերը հա-հա կը փախչէին երկու կողմէն, իսկ ան ոչինչ չէր տեսներ։

«Մե՛ծ, մեծ կին մը, լուրջ ու կարեւոր գեր մը խաղալու, բոլոր ուժերը նուիրելու, կենդանի գործ մը ստեղծելու. հանրային մեծ դէմք մը, ծանօթ, յայտնի, յարգուած կին մը ամենքէն. և «ան» ամէն կողմ իր անուանին հանդերպի, տեսնէ իր գործն ու արժէքը և հասկընայ, թէ ինչ սխալ ու սուր է գնահատած իր ուժերն ու կարողութիւնը. և ինչպէս չէ կրցեր գնահատել նաեւ իր սէրն ու զգացումները։ Տառերի մը պէս հեռուէն հետեւի իրեն, աքանչանայ, յափշտակուի. իսկ ինքը անտարբեր. երբեք անոր ցոյց չտայ իր հոգին, իր իսկական հոգին, ինչքան ալ որ հոն տիրոջը միշտ ալ ըլլայ «ան»...

Վրէժի, սիրոյ, ցաւի, հին ու նոր յափշտակութիւններու այս թափին տակ ամբողջ մարմինով կը դողար։ Պառկելէն, վար վազելէն ու հովի չարաճճի չունէին մազերը բոլորովին քրքրուելու ու խառնակ թափուելու էին ուսերուն։ Ընչաւութիւնը քիչ մը դիւրացընելու համար քակեց չփակին մէկ-երկու կոճակները, ուրկէ ճերմակութիւն մը դուրս ցատկեց։

Ու կը վազէր ծառերուն տակ, փափուկ աւազին վրայ, կարծես անտառի յաւերժահաս մը լաւագոյնի մասնիներուն մէջ։

«Մե՛ծ, մե՛ծ կին մը»։

* * *

Եւ ալ սա էր միայն իր ամբողջ մտածումը, իր միակ մխիթարութիւնը և իրեն ուժ ներշնչողը։ Միւս բոլոր յիշողութիւնները, անցեալը, ներկան, սէրը, Արշակի պատկերը, բոլորը այդ գազափարի չուրջը կը դառնային ու իր որոշումը աւելի կը սրէին։

Եւ յաջորդ օրը և հետեւեալ օրերը կ'առանձնանար ժամերով կա՛մ իր սենեակը կամ նորէն պարտէզը ածուներուն մէջ. միշտ անտարբեր ու ցրուած դէպի ուրիշները։

Մայրը հիմա բացարձակապէս ոչինչ չէր հասկընար աղջկայ վարմունքէն. մէջէմէջ զգուշութեամբ արուած հարցերուն անմիտ ու նեղսիրտ պատասխան մը կ'ընտանար սովորաբար ու կը լռէր աւելի չըզրգռելու համար։ Բայց սաոր փոխարէն քանի մը անգամ խօսեր էր պաղուն հետ։ Բժիշկը կը չահար լուրջի չառնել, որ մօրը անհանգստութեան

թիւնը սեւլի չմնծցընէ, բայց ինքն ալ կ'ըզդար ու կը տեսնէր, որ քրոջը մէջ ծանր բան մը կը զառնար. և պարզ էր իրեն, թէ ինչ էր այդ ծանր բանը. պարզ չէր միայն, թէ ինչ պէտք էր ընել. կը հասկընար սակայն, որ բան մը ընել պէտք էր։

Իրիկուն մը, երբ առանձին էին, վերջապէս որոշեց քայլ մը առնել ու զարձաւ քրոջը կէս լուրջ, կէս կատակ չեչտով մը.

— Վերժի՛ն, ի՞նչ է պատահեր քեզի. բալրամին փոխուած կ'երեւիս աչքիս։ Հիւա՞նդ ես, ի՞նչ է։

— Ինծի ոչինչ ալ չէ պատահած։ Բայց ուրախ եմ, որ խօսք բացիր. հարցի մը վրայ քեզի հետ խօսիլ կ'ուզէի։

— Ամբաղձալին տրամադրութեանդ տակն եմ.— վրայ բերաւ եղբայրը պաշտօնական կերպով մը։

— Բայց ամենէն առաջ, խնգրեմ, այդ արհամարհական ձեւերդ մէկ կողմ դիր, որոնք բալրամին անտեղի են։

Բժիշկը ոչինչ չտատրակեց։

— Լա՛ւ, Յակո՛բ. ես վերջնապէս որոշած եմ, ինչ գնով ալ կ'ուզէ ըլլայ, քանի մը տարի հրմամ պիտի ելբտպա։ Ես ամեն բան հաշուեր եմ արդէն, մի՛ զարմանար. ու ամենաւելին քու վրադ բեռ ըլլալ միտք չունիմ. բայց վերջապէս ես ալ ունիմ ժառանգական իրաւունքներ, որոնցմէ պատրաստ եմ միանգամ ընդմիշտ հրաժարուելու, միայն թէ հիմա ինծի ամսական չնորհքով գումար մը ուզարկես հինգ տարուան չափ։ Կատակ չեմ ըներ, Յակո՛բ. այս գործը դլուխ պիտի գայ անպատճառ։

Այնպիսի ամուր ու վճռական կամք մը կար այդ խօսքերուն տակ, որ բժիշկը զարմանքէն պահ մը լուռ քրոջը երեսը նայեցաւ և վերջը մտածկոտ ուսերնուց.

— Ինծի՛ նայէ. հոս դրամականը չէ, որ միայն պէտք է մտածուի. գուցէ դրամը դեռ ամենէն նեղինն է։

— Ուրիշ մտածելիքներդ դուն ինծի ձգէ.— ընդհատեց աղջիկը։

Բժիշկի դէմքէն ցնցում մը անցաւ։

— Վերժի՛ն, խնդիրները գլխէդ դուրս հանէ. համոզուած եղիր, որ մայրդ կը մեռնի ու չի թողներ. և ճշմարիտ ես ալ չեմ ուզեր, որ օտար ազգ մը հետ օտար երկիրներ քաշքշուիս։

— Ի՞նչ օտար ազգ.— հարցուց Վերժին չար չեչտով մը։

Եղբայրը նոյնիսկ պատասխանելը սեւլորդ համարեց և հեղնական ժպիտը նորէն ձեւցաւ չրմունքներուն ձոխ անկիւնը։

— Ուր բոլոր հասկըցածդ ան՝ այդչափ է.— պատասխանեց աղջիկը ինքնագիտակից ու զոռոզ կեցուածքով մը։— Դուն սկիզբէն մինչեւ հիմա գլուխդ խոթեր ես, որ ես Արշակի վրան խնդրի պէս սիրահարած եմ և բոլորը ինչ որ կ'ընեմ՝ միակ չարժառիթը ատ է։ Ապ՛կ. գիտցի՛ր ուրեմն, որ իմ ու այդ ազգ մէջ եղած կապը նոյն-

չափ է, որչափ որ է փառ և անոր բարեկամութիւնը։ կասկած չկայ, որ այդ ազան ինձի բաւական դրդում առաւ ու աչքերս բացաւ, որ առ համար անչափ չնորհակալ եմ իրեն. զարմանալու ի՞նչ կայ. մի-թէ ամենքը քեզի պէս անասրբե՞ր պիտի ըլլային։ Իսկ ինչ կը վե-րաբերի անոր հետ եւրոպա երթալուն՝ այդ ձրի ենթադրութիւնները պզէկ կ'ըսես, որ զլխէդ դուրս ընես. ես պիտի երթամ առանձին, բո-լորովին առանձին, բոլորովին անկախ։

Բժիշկի դէմքէն ժպիտը սրբըւեր էր։ Փորձեց իր վերջին առար-կութիւնը.

— Անկա՛խ, առանձի՛ն, սիրուն բառեր են. բայց դիտե՞ս ինչ ը-սել է եւրոպական քաղաքակրթութեան ու բաց կեանքին մէջ աղջիկ մը առանձին ինկած, ամեն հրապոյրներու ու գայթակղութեան են-թակայ. մանաւանդ քեզի պէս գեղեցիկ ու դիւրին յափշտակուող աղ-ջիկ մը։

— Դուն իմ դիւրին յափշտակուող ըլլալս ո՞րտեղէն գիտես։ Ին-ձի՛ նայէ. եթէ ես հրապուրուիլ ու գայթակղուիլ ուզենայի՝ կը կար-ծես հոս յարմարութիւն ու առիթ է պակաս։ Թէ՞ կ'ենթադրես դուն, որ քու ներկայութիւնդ ինձի արգելք պիտի ըլլայ կամ եզեր է։ Դուն իզուր տեղը ինքզինդ ամենազէտ ու ամեն բան տեսնող ու հասկցող կը կարծես, սիրելի՛ս։

Եւ ասիկա ըսուած էր այնպիսի զուտ կանացի, երկմիտ, հեգնոտ ու ժպտող չեչառվ մը, որ բժիշկը ճչմարիտ որ խանգաւեցաւ։ Իրենց տան մէջ բաներ մը գտած ըլլալու էին, որուն ինքը բնաւ տեղեակ չէր։ Բայց անշուշտ ոչինչ չհարցուց, միայն հարցական նայեցաւ քե-րոջը աչքերուն։

— Յակո՛բ, հասկցի՛ր, որ ես այլևս երևիայ չեմ. իզուր դուռ այդ աչքով կը նայիս վրաս.— աւելցուց վերջին։

Բժիշկի գլխէն արդէն քանի մը անգամ վազիր էր մի՛ևնոյն մը-տածումը այս խօսակցութեան միջոցին։ Եւ նորէն ոչինչ չպատաս-խանեց։

Արշակ չարաթի մըն է կորսուեր էր բոլորովին հանգիստն ու հաչիւը։ Իր նամակը գրած օրէն ազջիկը չէր տեսած և անոր մասին ո՛չ մէկ լուր չունէր։

Նամակի յաջորդ առտուն Պզիկեանեներու տպատան էր

բերեր Իքսէնի հատորը, որուն մէջ ծալլուած բաց թուղթի կտոր մը վրայ մատիտով գրուած էր.

«Բոլորի փոխարէն ընդունեցէ՛ք իմ խորին չնորհակալութիւնս. Վերժին»։

Այս երկտողը ազուն համար դարձաւ հանելուկ մը, մինչ չարչըրկող աւ չի լուծուող հանելուկ մը։ Հեգնութիւն էր, ծա՞ղր թէ՞ կսկիծի արդիւնք։ Ամենէն հաւանականը կը թուէր իրեն՝ ծածկել ցանկացուած ցաւի մը հեգնոտ արտայայտութիւն։ Եւ այն դաղափարը, որ հիմա ազջիկը լուռ տառապանք կը կրէր՝ ազուն սոսկալի ցաւ ու խղճի խայթ կու տար։

Ինքը չատ բուռն ու կոպիտ էր վարուած, գուցէ նոյնիսկ ամարդի։ Եւ յիմարութիւն չէր արդեօք ընկերոջ մը համար իրենց մէջ եղած այն ջերմ ու սրտագին կապը ըզըկտիլը, երբ երկուքն ալ վոհաղարձաբար իրարու կը ձգտէին։ Եւ մի՞թէ խելքի մօտիկ բան է, որ ազջիկը ամէն հաքը Տիրանի զգացումներուն պատասխանել կարողանար։

Մտածման այս եզրակը իր անիմաստ վարուած ըլլալու մասին ուղղակի տեսակ մը տանջոց կսկիծի վերածուեցաւ Տիրանի հետ ունեցած իր մէկ-երկու տեսակցութենէն հաքը, երբ խօսքը զգուշութեամբ միշտ վերժինի վրայ կը ծռէր։ Տիրանի պատասխաններուն տակ անտարբերութիւն մը կար, առարկայական վերաբերում մը դէպի ազջիկը. անոր մասին կը խօսէր, ինչպէս նկարիչ մը իր մտածի մասին։ Արդեօք ընկերոջ այդ վերաբերմունքը բացատրել կ՛ուզէր Տիրանի իր նոր վէպովը կլանուած ըլլալէն. բայց, Աստուա՛ծ իմ, մինչեւ այդ կերպով կրնա՞յ խօսիլ սիրով թրթռացող խորունկ սիրտ մը։

Մէյ մըն ալ կը մտածէր, որ այդ հին սատանան էր իր մէջը խլրտողը, որ ինքը իր ներքին մաքառումէն կատացած՝ ընկերոջը խօսքերուն ու վարմունքին մէջ անպատճառ պաղութիւն տեսնել կ՛ուզէր՝ իր ըրածին վրայ ղղջալու ու դեռ մինչ բացավառ պատցուածները արդարացընելու համար։

Վերջապէս եզածը եզած էր։ Հիմա կը չանար ցրուէ իր հոգին, իր ուշադրութիւնը. ամբողջ օրը հոս էր ու հոն. արդէն վերադարձն ալ հազիւ չաթաթ մըն էր մնացած ու կարգադրելու անագին գործ ունէր։

Բայց և այնպէս գժուարին պահանջ մը կ՛ըզգար վերժինը գոնէ տեսնելու, գոնէ հեռուէն իր կերպարանքը նչմարելու։ Գիշեր մը ուշ տանն իր կամքի ու արժանապատուութեան բոզոքներուն հակառակ, չկրցաւ ինքզինքը զսպել և անգամ մը ծածուկ և զգուշ անոնց տան առջևէն անցաւ. նկարը լուռ էր, թէև լոյս կար։ Ոչինչ տեսնել չկրցաւ։

Այս անյաջող փորձի հետևեալ իրիկունն էր, որ բազդը ինքը օգնութեան հկաւ։

Արշակ երկոյեան Պոլսէն վերադարձին տեսաւ գեղ բաւական ժամանակ կար ընթրիքին. տուն ալ երթալու տրամադիր չէր. մըտաւ ծովանիստ սրճարանի մը պարտէզը սուրճ մը խմելու։

Ժայռերու հակայ կառուակում մըն էր, որուն չիտակ ծովուն գիրկը կ'իջնէին սեպ. և այդ ժայռերու ուսին նստած էր սրճարանին փոքրիկ չէնքը. քովն ալ սիրուն ու պզտիկ պարտէզը՝ ծովուն եղերքէն ժայռի ճիշդ եզերքին վանդակով մը չրջապատուած, որուն հետևյան կիսափուռ փայտերուն հետ իր հազարաւոր կենսայորդ ոստիկներով պինդ կը գրկըէր պատուտակը ու կը մագլցէր վեր պարտէզին վրայ ցանցըուած քառակուսիներուն մէջ կը ոլորուէր։

Արշակ քաշուեցաւ վանդակին մօտիկ ամենէն ծայրի սեղանը. ձեռնափայտեան ու վերարկուն նետեց կից աթոռի կռնակին, ոտքը գըրաւ նոյն աթոռին նեցուկ ձողերուն և թիկը յենած սեղանի եզրին սկսաւ դիտել ծովը։ Ծովն ալ վարը քծնող ճոզիփնով մր կը նետուէր ժայռի կուրծքն ի վեր, նորէն կը սահէր վար, քիչ մը հետևտ կ'երթար և ուժ առնող բաշտ կատաւի մը ճարպիկութեամբ իր յորձակող ոստումը կը կրկնէր։

Տղան խորասոյզ կը հետևէր ալիքներու այդ խաղին, երբ հանէն մէկը ձայն տուաւ.

— Պարո՛ն Արշակ, դուք դեռ Պոլի՞ս էք։

Արշակ ցնցումով գլուխը դարձուց ու ամուր զարկով մը սրտին կծկուիլը զգաց։ Իր սեղանին կից կեցած էր բժիշկը, մինչ քիչ մը հեռուէն իր վրայ էին յառած մէկ անգամէն երեք կանանց աչքերը. անոնք նոյնպէս իր սեղանին կը մօտենային. տիկին Պարիկեանն էր վերժինի ու անծանօթ ուրիշ օրիորդի մը հետ։

Տղան իր յուզումը զսպել չկանալով դուրս նկաւ աթոռներուն մէջէն և նկողնները հրամցուց։ Թէ ի՞նչ անցաւ իր հոգիին մէջէն՝ ինքն-ալ որոշ չգիտէր, երբ ամենքը բարեւելու ժամանակ վերժինի ձեռքին չօշափուեմը զգաց։

Միւս օրիորդը ազգականուհի մըն էր, ներկայացուցին. երկու օրիորդները նստեցան իրարու քով վանդակին առջևը, բժիշկն ու Արշակ երկարաձուն սեղանին միւս ծայրը, իսկ տիկինը երկու զոյգին մէջտեղը։

— Ուրեմն դուք Պոլիս էք դեռ.— կրկնեց բժիշկը երբ տեղաւորուեցան։ — Այնքան երկար տասն է՝ չէք երեւար, որ կարծեցի մեկնած կ'ըլլաք։

— Աւանդ ձեզմէ հրաժեշտ առնելո՞ւ.— տատրակեց ազան քաղաքավարութեամբ։— կը մեկնիմ հինգշաբթի իրիկուն. բայց այնքան մանր-մունր գործեր ունիմ, որ...

— Բնակա՛ն է, անշո՛ւշտ.— վրայ բերաւ բժիշկը հաչտարար չեչտով մը։

Տղան մէջտեղ չերեսալը բժիշկը իրենց վերջին անակնկալութեան կը վերագրէր. կը կարծէր, որ Աբշակ քիչ մը վշտացած պիտի ըլլար և մեզի դէմ իրենց վերաբերմունքին կերպ մը այդ ապատրանքը մեզմէր։ Այնպէս որ չատ մտերիմ ու դէմ-դիմաց զարկով մը սկսաւ խօսիլ ալէկոն ու ձախէն։

Աբշակ ալ հետզհետէ սկսաւ ինքզինքը գտնել. նոյնիսկ երկու անգամ աղջկան խօսք ուղղեց՝ աչքատեսով իր ձայնին սովորական քաղեցկամական չեշտը տալէ։

Արտասովոր լրջութիւն մը կար աղջկայ դէմքին վրայ ու զարմանալի հանդիսաւորութիւն մը անոր ձայնին ու չարժուններուն մէջ. և իր նայուածքը գրեթէ չէր հեռացընէր ծովուն հետզհետէ դարչացող մակերեսէն։

Եւ խօսակցութիւնը ամենուն կողմէն ալ սառն էր ու չինծու։ Աբշակ սկսաւ նեղսիրտ։ Բարեբաղդաբար երկար չտևեց։ Քիչ մը ետքը տիկինը զով զգաց ու ամենքն ալ ելան մեկնելու։

Արդէն սկսած էր մթնել։ Վերժին ձեռնոցները չտկելով՝ հովանոցը թևին տակ դէպի պարտէզին ելքը ուղղուեցաւ, մինչդեռ միւսները իրենց ժպտերեսութեամբ կը սպասէին։

Աբշակ նշմարելուն պէս՝ առաջ նետուեցաւ։

— Օրիո՛րդ, ձեզի ըսելիք երկու խօսք ունիմ. քիչ մը արագ քալեցէք.— կմկմաց իր յուզումին մէջէն, երբ Վերժինին հասաւ։

Աղջիկը թովչանի նայուածք մը սահեցուց ազուշ դէմքէն և քայլերը արագացուց առանց ոչինչ ըսելու։

— Ես չգիտեմ ինչպէս վարուիմ,— ըսաւ ազան վճռաբար,— որ ձեզի պատճառած անախորժ զգացումներս գոնէ քիչ մը մեղմել կարենամ։ Խորապէս կը ցաւիմ...

— Աւելորդ աշխատանք է.— ընդհատեց աղջիկը յանկարծ հպարտ չեչտով մը։— Անցած անմտութիւններու մասին չեն խօսիր. և ցաւելու ոչինչ կայ. կեանք էր. բան մըն էր եկաւ ու անցաւ. մոռցէ՛ք։

կանգ առաւ ու նայեցաւ հա, մինչեւ որ երկու քայլով միւսները հասան իրենց։

Սրճարանի դրան դէմ Աբշակ բարեւեց խումբը ու բաժնուեցաւ. և գլուխը կախ կը քալէր մխիթարիչ իր չուար ու խառնակ մտածումներուն հետ։

Ուրիշն վերժին այնքան ալ կատարած չէր, ինչպէս ինքը կ'երեւակայէր։ Բայց չէ՞ որ մինչեւ հիմա Աբշակի ուղածն ալ սակայն էր միայն. կարել իրենց մէջ եղած կապը, առանց աղջկան մեծ վիշտ մը պատճառելու։

Ո՛չ։ Հիմա ան կ'ըզդար, որ իրեն համար մեծ մխիթարանք ու

քաղցր էր եղած այն մասածումը, թէ ազջիկը պիտի վշտանար, խոր ցաւ պիտի պատահածին համար ու մոռնալ պիտի չկրնար։ Հիմա ազան կը գիտակցէր, որ իր վարմունքին մէջ նոյնիսկ անպիտանութիւն ալ կար, կ'ուզէր որ ազջիկը նկատէ ու հասկնայ Արշակի ըրած հակայ զոհաբերութիւնը և երկուքի համար ալ թանկագին յուշ մը ըլլայ իրենց մէջ պատահածը։ Բայց ահա՛ ինչ արդիւնք էր ատացուած. վկրժին ըսած երեւոյթին այնքան ալ ազդուած չէր երեւար իրենց մէջ եղած կապի խզումէն։ Եւ այս մասածումը չատ ծանր ու դժուար կրելի բան մը ունէր իր վրայ։

Միւս կողմէն վկրժինի հպարտ կեցուածքը, հատու խօսուածքը և անոր նայուածքին ու չարժուելուն լուրջ հանգիստը ներքին առաւելութեան մը վատահութիւնը կը մատնէր. և ազջկան ձայնը հիմա կարծես բարձրէն կու գար։ Այս ամենը վկրժինի վրայ նոր էր Արշակի համար. պատկառանքի պէս բան մը կ'ըզգար. մինչեւ հիմա միայն համակրանք էր ուներ, համակերպում և ընդառաջում. մէկ կողմէն միայն ուներ էր ազջկան հոգին։

Ազջիկը կը բարձրանար ու կը բարդանար իր աչքին, մինչ ինքը կը պզտիկնար ու կը խռնարհէր բոլոր իր զոհաբերութեամբ, բոլոր իր ազնիւ վարուելու բծախնդրութիւններով։ Այո՛, կ'իյնար ինքն իր աչքին. ինչ մեծ ազնըւութիւն ու քաջութիւն էր վկրժպէս ըրածը. իր ընկերը չհարուածելու համար, հարուածեր էր իր ընկերուհին։

* * *

Արշակենք դեռ ընթրիքի էին, որ եկաւ Տիրան։

Ճաշի սեղանին մօտիկ աթոռի մը վրայ ձիու պէս հնծաւ, սկսաւ խօսիլ ու ձեռքի փայտին հետ խաղալ։

— Ինչու այդպէս քիթդ կախ է.— հարցուց ընկերոջը խօսքի ընթացքին։

— Ծոգնած եմ։

— Գործերդ կարգադրեցի՞ր։

— Դեռ ո՛չ բոլորովին։

Հազիւ էին սեղանէն ելեր, որ Արշակ առաջարկեց քրոջը դաշնակ նուագել, ինչպէս միշտ կ'ընէր, երբ տրամադրութիւնը տեղը չէլլար։

Ելան վերի յարկի սրահը. առանց լոյս վառելու քոյրը անցաւ նուագարանին առջեւը. իսկ ազաքը մատն քովի հիւրասենեակը ու փուռեցան մէկ-մէկ բազկաթոռի մէջ իրարու քով։

Նուագը սկսաւ։ Անոնք երկուքով լուռ էին ու կը լսէին։ Բայց երկար չտեւեց. Տիրան յանկարծ նորէն դարձաւ ընկերոջը.

— Ուրեմն հիշարիի իրիկուն մեկնիլդ վերջնականապէս հաստատ է։

— Տմամակ ուռած եմ։

— Այսօր ի՞նչ է։

— Երկուշաբթի։

— Երանի՛ քեզի. նորէն կ'երթաս. մենք փախցանք։ Մեզքս ինչ պահեմ՝ կը նախանձիմ. չան բաղդ ունիս։ Եւ քեզի նախանձողը միայն ես չեմ. վերժինի զաւեն ալ պոռայ ես ուռեր. դն ալ հիմա իրար է անցեր համալսարան երթալու համար։

— Ո՞վ ըսաւ քեզի։

— Անցած իրիկուն անոնց էի. չուռնց կը՛ էեի գացած, պէտք էր անգամ մը երեւալ։ Բժիշկը յայտնեց ինծի կատակով, բայց քրոջը խօսուածքը այնքան ալ կատակի նմանութիւն չունէր։ Եւ ընդհանրապէս, էն՞ս նկատած, այդ ազգիկը վերջին ժամանակները չատ է փոխուեր. տեսակ մը վհատութեան, վանմութեան հովեր կը փչեն վերայէն, պաղ հովեր. տեսակ մը այնպէս լուրջ ըսեմ, մտազբաղ ըսեմ, քիթը բարձրացած ըսեմ. չիտակը չե՛մ ախորժիր։

— Այսինքն՝ իբրեւ թէ։

— Ինչո՞ւ համար «իբրեւ թէ». ուռնց «իբրեւ թէ»-ի։

Արշակ բազկաթոռին մէջ յանկարծ չակուեցաւ, մանթին մէջէն նայեցաւ ընկերոջը և կարուկ չեչառվ մը ըսաւ.

— Սիրելի՛ս, այս կատակերգութեան պէտք է վերջ մը դնե՞նք թէ չէ. չէ՞ որ երկուքս ալ իրար չատ ազէկ կը հասկընանք։

— Ի՞նչ կատակերգութիւն.— հարցուց Տիրան յանկարծ բոլորովին լրջանալով։

— Հիմա դուն ինծի հաւատացընել կ'ուզես, որ այդ ազջիկէն ա՛չ հիացած ես եղեր, ա՛չ ալ կը հիանաս. հա՞։

— Հիացա՞ծ։ Որ ժամանակ մը իրմով քիչ մը յափշտակուած էի՝ չիտակ է. երեւի նկատեր ես. արդէն ծածկած ալ չունէի. բայց ատկէ ի՞նչ կ'ելլէ։ Չէ՞ որ ատեն մը դուն ինքդ ալ յափշտակուած էիր. կը յիշե՞ս ան իրիկունը, ինչեր ըսես չէիր ըսեր, որ վերժինը մէկ հատիկ է, անոգին ուժ կայ իր մէջը և ալ ինչ գիտեմ։ Վերժինի կըթութեան և բնաւորութեան ազջիկները այդպէս են արդէն. ամէն հանդիպողի վրայ ապաւորութիւն կ'ընեն և երեւի ատոր համար ալ քիթերնին կը մանցայ. միայն դժբաղդութիւնը հոն է, որ այդ ապաւորութիւնը քանի մը չաբաթէն ուրիշի մը տուած ապաւորութեան տեղի մը չի տեւեր։

— Աղիկա իզուր կը պնդես.— նկատեց ընկերը սանձուած ձայնով մը։

— Ինչո՞ւ «իզուր». ան՝ քեզի հետ ալ նոյնը եղաւ, ինծի հետ ալ։ Արշակ չարժուեմ մը ըրաւ և անսովոր խորունկ ձայնով մը, որ կը դողար, կսկծ.

— Տիրա՛ն, հերի՛ք իրար խաբեցինք. ալ չարաւնակել չեմ կրնար և չեմ ուզեր այս ապուշ խաղը։ Իրիւ ընկերդ կը պահանջեմ քեզմէ և չեմ ուզեր այս բոլոր ըսածդ քու անկեղծ գաղտուկդ է։

— Անչա՛էա. ատ ի՞նչ աւելորդ հարց է. և այդ հանդիսաւոր խօսուածդ ինչա՞ս է։

— Ազէ՛կ. այն ատեն դիտցիր, որ կը սխալիս։ Ես ինքս սիրած եմ այդ ազջիկը, լա՛ւ, և մինչեւ հիմա ալ կը սիրեմ. և՛ս. կը հասկընա՞ս։

— Ա՛խ... — դուրս թռաւ Տիրանի կրծքէն։ Եւ մութին մէջ ընկերոջը դարձած աւելցուց վարանոտ.— բայց չէ՞ որ, կ'ըսէիր...

— Թո՛դ, եղբա՛յր.— ընդհատեց Արչակ.— հերիք է. թողնե՛նք այդ անիծած «կ'ըսէի-կ'ըսէիր»-ները։

Տիրան վայրկենաբար հասկըցաւ ամեն բան, ընկերոջը մաքառումները, իր զգացումները զսպելը, կրած տանջանքը. չէ՞ որ ինքն ալ դեռ նոր էր անցեր այդ դպրոցէն։ Եւ բա՛ռ մը, մէկ բառ մը միայն դուրս սայթաքեցաւ իր սիրտներուն մէջէն։

— Ներե՛ցէք։

Եւ այդ մէկ բառին մէջ արչափ կարեկցութիւն, սրտակցութիւն ու դառնութիւն կար միեւնոյն ժամանակ։

Դուրսը նուագը կը չարունակէր։ Լուռ էին երկուքն ալ։ Վերջը Արչակ պատմեց համառօտ այդքան ժամանակ իր սրտին վրայ դիզուածը, միայն լռեց կզզիչն դարձէն իվեր պատահած դէպքերու մասին։

Տիրան թազուեր էր իր բազկաթոռին ու մտածումներուն մէջ։ Նոր լուրի առաջին ազդեցութենէն կազդուրուած՝ հիմա իր վրայ տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընէր ընկերոջ խոսավանութիւնը։ Եւ ինքը, որ այդ աղջկան մասին վառ զգացումներ ունենալէ սրդէն դադրած էր բոլորովին, յանկարծ նոխանձի պէս բան մը զգաց։

Եւ այդ ուշ մնացած զգացումը կտաւակի մը մէջ խեղդել ուզելով՝ դարձաւ ընկերոջը։

— Չ՛, սիրելի՛ս, ուրեմն բարի յաջողում։ Իսկ եթէ պատահի, որ դարձին Թումոյ պաշտօնական ձեւեր տալու միտք ունենաս՝ չմոռնա՛ս, որ ես մինչեւ հիմա ինչպէս իր վիպահայրը եղայ, կրնամ ասկէ եւս ալ իր կնքահայրը դառնալ։

— Ցիմա՛ր — ժպտեցաւ Արչակ և նայն վայրկեանին սրտչեց ինքն իր դէմքին մէջ, որ առաուն կանուխ կ'ներկայ ու ամեն ինչ բաց ու պարզ-սիրտ կը յայտնէ վերժինին ու կը սրբագրէ այս ամեսր թիւրիմացութիւնը։

* * *

Բայց երբ առանձին մնաց և երբ ամբողջ անքուն գիշեր մը ամեն ինչ ու ամեն կողմէն հիմնովին նորէն մտածեց, տեսաւ, որ հարցը այդպէս պարզ ալ չէր։ Եւ որ իր սրտաց խոսավանութիւնը աղջկան

վրայ, ընդհակառակը, աւելի դէպ ապաւորութիւն պիտի ընէր։ Զի՞ որ խորքին մէջ ազնիւ սէրն ու սիրան էր, որ առքի տակ էր տուեր ընկերոջ մը համար։ Եւ հիմա ինքն ալ կը դժուարանար հասկրնալու, թէ իրաւ ինչպէ՞ս կրցեր էր տալ այդ տաիճան անմիտ քայլ մը։

Մտքին մէջէն ամէն կերպ դարձուց ու դարձուց, թէ ի՞նչ ըսէ, ինչպէս ըսէ, ինչ բառերով, որ իր անմեղութիւնը գոնէ քիչ մը մեղմէ։ Այո՛, կ'ըզգար հիմա, կը հասկրնար, որ իր ընկերական պարտաւորութիւն ու անձնազոհութիւն անուանածը պարզապէս յանցանք մըն էր. յանցանք մը ազնիւ դէմ, յանցանք մը իր դէմ, յանցանք մը կեանքի ու սիրոյ դէմ։

Աստուա՛ծ իմ, ներում ունենալ կրնա՞յ այդ տեսակ յանցանք մը։ Կարելի՞ բան էր, որ նորէն կարենալ կարողանար ինքն իր ձեռքով պատռած ու փնթռտած այն նուրբ զգացումները։ Կարելի՞ բան էր վերադարձը հին բազդաւորութեան։

Բայց ինչ կ'ուզէ ըլլայ, կը գիտակցէր, որ իր պարտքն էր յայտնել Վերժինին ամէն ինչ առանց որևէ աքօղամի ու վերապահութեան և անմիջապէս։ Եւ առաւ վրայ էր նաեւ իր միակ յոյսը. դուցէ՛. ո՞վ գիտէ։ Իր բոլոր սխալներուն, իր բոլոր տուա ու ծուռ վարմունքին մէջ կ'ըզգար որ ունէր գոնէ մէկ ճշմարիտ ու խոր առաւելութիւն մը. ինքը սիրած էր միչտ խոր ու սրտագին ու ամբողջ ժամանակը տառապած էր ինքն ալ. և որ հիմա ալ կը սիրէր խոր ու սրտագին և իր իսկական բազդաւորութիւնն էր կշիռքի գրուած. այդ կշիռքի նժարին վրայ այս ճշմարտութիւնը լուրջ արժէք մը կը ճնար դեռ միչտ։

Նախաճաչի ժամանակէն քիչ մը ետքը Արշակ վճռական քալուածքով ուղղուեցաւ դէպի Պոսիկեանններուն տունը ու իր վճռակատութիւնը տեսակ մը վստահութիւն ներչնչեց ազուն։ Եւ ներքին զբաղում լարումով մը քաշեց դրան պանդը։

Դուռը բացողը ինքը Վերժինն էր, որ զարմացած ու հարցական դէմքով մը ազուն կը նայէր, ձեռքը բնազդօրէն կրծքին դրած։ Տակաւ պարզ չրջազգեստ մը հագած էր, սև գոգնոց մը վրայէն. մէջքը լայն կաշի գօտի և մազերը թոյլ հիւսք մը ըրած՝ նետած էր թիկունքին. կարծես զպրոցէն կու գար։

— Բարի եկա՛ք, խնդրե՛մ.— ըսաւ վերջապէս լուրջ ու քաղաքավար բարեւով մը և ետևցաւ.— Մայրս այսօր դժբաղդաբար Պալէտ իջաւ սպասուհիին հետ. իսկ եղբայրս կարծեմ դեռ նոր եկեղեցւոյ է անկողնէն. գիշերը հիւանդի էին կանչած։ Հրամեցէք ներս մինչև եղբայրս գայ։

Եւ առաջնորդեց կից սենեակը։

— Օրիո՛րդ Վերժին, ես եկած եմ ձեզի համար.— եղաւ ազուն առաջին արտասանած խօսքը, դեռ առքի վրայ, սենեակ մտնելուն պէս.— եկած եմ ձեզի շատ կարևոր երկու խօսք ըսելու։

Վերժին կանգ առաւ դէմը ապառազական։

— Ինչպէս դիակ՝ երկու օրէն մեկնելու եմ հս.— սկսաւ ըսել,— բայց չեմ կրնար մեր յարաբերութիւնները այսպէս բզկտած ձգել ու երթալ. պարտք կ'ըզգամ բացատրելու ձեզի այս բոլոր անհամատեղութիւններուն իսկական պատճառը, որ ամեն ինչ պարզէ...

Վերժին յանկարծ բոլորովին դադրած մէկ ձեռքը յիշեց կից սեղանին, և ալ ձեռքի կարուկ չարժուելովը ընդհատուց անոր խօսքը.

— Խնդրեմ, ո՛չ-մէկ բացատրութիւն չեմ ուզեր ես ձեզմէ. և ո՛չ մէկ բացատրութիւն պարտական չէք դուք ինձի տալու։ կը խնդրեմ ես ձեզմէ միանգամ ընդմիշտ, այլևս ո՛չ-մէկ խօսք այդ արդէն չատոնց մէկին գրուած անցեալի մասին։

Արշակ քարացած նայեցաւ ապշկայ դիրքին, դէմքին ու խօսուածքին և անփախաբրենելի կորուստի մը ճանկռտուքը զգաց սրտին վրայ. բայց և այնպէս յաւատացած ձիգ մը ըրաւ.

— Թոզէ՛ք խօսիմ, գուցէ...

— Խնդրե՛մ, ո՛չ-մէկ խօսք.— կրկնեց ապշիկը հառաչ։

Այս անգամ արդէն ազատ ինքնատիրութեանը դիպաւ։ Վերջացած էր ամեն ինչ. իր կողմէն օրևէ նոր քայլ նուաստացում մը պիտի ըլլար։

Ակընթարթ մը լուռ երկուքն ալ կը նայէին իրարու։

Վերժին զգաց, որ իր վարմունքը չափէն աւելի խիտ եղաւ և կարծես ապաւորութիւնը քիչ մը մեղմելու համար և փիչ մըն ալ տիրոջ անախորժ լռութիւնը պատռելու համար ըսաւ քաղաքավար ու կէս յամառ կերպով մը.

— Ես միշտ ու խորապէս չնորհակալ պիտի մնամ ձեզի, որ գըրգռեցիք ուշիք իմ համալսարան երթալուս։

— Թոյլ կու տաք ինձի, որ հետաքրքրութիւմ. ի՞նչ վիճակի մէջ է հարցը։

— Մեծ դժուարութեամբ, բայց եղբայրս վերջապէս գրից իր ընկեր զերմանացի բժիշկի մը, որ հիմա Հայաստանի ընտանիք ունի եղեր, խնդրելով որ կա՛մ իրեն մօտիկ ընտանիքի մը մէջ ինձի տեղաւորել կարողանայ։

— Անչա՛փ ուրախ եմ, օրիո՛րդ Վերժին.— բացականչեց ապան սրտին խորքէն. իր ամբողջ յուզումն ու բոլոր չբռնուած բաներն էին խառնուած այդ բացականչութեան մէջ։

Ապշիկը ակամայ թեթեւ մը գլուխը թեքեց։

— Անչուչա մեկնելէս առաջ կու գամ ձեր ընտանիքին յարգանքս յայտնելու։ Թող տուէք, որ ձեզի այլեւս նեղութիւն չպատճառեմ։

Գլխով խոնարհութիւն մը ըրաւ ու ելաւ սրահը։ Վերժին քնկեւբացաւ մինչեւ ատեն դուռը, ուր երկուքն ալ նորէն անգամ մը գրե-

խավ թեթեւ մը բարեւեցին իրար առանց բառ մը արտասանելու և դուռը զոցուեցաւ։

Եւ միայն այդ ժամանակ վերժին ազատ ընթացք առաւ իր կեղեքուած հոգիի ամբողջ ցաւին։ Քայլ մը եա դնաց դուռնէն, ինկաւ առաջին պատահած աթոռին վրայ և յուսահատ սկսաւ լալ առատ արցունքներով՝ իր ակռաներուն ու շրթներուն մէջ ամուր սեղմած այդ անպիտան ազգն անունը։

* * *

Սոսկալի իրարանցում էր Սիրքէճիի կայարանը. արեւելեան ճեպընթացը մեկնելու վրայ էր։ Հրմշտուք, վազվզոց, պոռալ, ազմուկ, ծխաղ, արցունք։ Կայ-կայ խումբեր վակոններու պատուհաններուն առջեւը կեցած իրենց ճամբորդին վերջին կտաւակ մը, վերջին նուէր մը, վերջին ձեռքի սեղմում մը կու տային։

Հնչեց երրորդ զանգը։

— Արշա՛կ, ծուլութիւն չընես, հա՛. ամեն գլխաւոր կայարանէ բացիկէդ կ'ըսպասեմ և մանրամասն.— կրկնեց անգամ մըն ալ Մանիկ՝ աչքերովը եղբօր դէմքը գրկած։

— Վիէննա Լևոնին անմիջապէս կը հանդըպիս. ըսէ՛, որ գրածս չուտով գրկէ.— յանձնարարեց Տիրան։

— Չգուշ եղի՛ր, ազա՛ս, երկու պատուհաններուն մէջ մի՛ կենար, քաց պատուհանի առաք չքնանա՛ս.— կը պատուիրէր մայրը աչքերը սրբելով։

— Բառարանը չմոռնաս, բառարա՛նը.— պոռաց անդիէն ուզարկ եկող ընկերներէն մէկը։

Գնացքը շարժըւեցաւ։

— Մնաք բարով, մնաք-բարով.— բացականչեց Արշակ պատուհանէն կախուած, յուզումէն դողացող ձայնով մը, նուազկոտ ժպիտ մը շրթունքին։

Եւ պատուհանի եզրին յենած՝ կը նայէր խումբին, որ կայարանի առաստաղէն հասող լոյսերուն տակ ոզոզուն, բարակ սիւնի մը քով իրարու սեղմուած՝ իրեն ձեռքով ու գլխով կ'ընէին։ Վերջին տեսածը մօրը թաչկինակն էր ու քրոջը ձեռքը, որ օդէ համբոյր մը կը ղրկէր։

Ճեպընթացը կայարանի լոյսերէն դուրս սողաց ու մէկէն խրեցաւ գիշերուան մութին մէջ։ Տղան ընդարմացած կեցած էր անչարժ ճակատը պատուհանի եզրին։ Իր առջեւէն եա կը սահէին երբեմն լապտեր մը, երբեմն երկար շարքերով պարապ կեցած վակոններու սեւերթագծեր, որոնց ապակիները սակայն իր վակոնի վառ լոյսերուն մէջ կը ցոլոլային։

Բայց Արշակ ոչինչ չէր անոնք, դեռ միշտ նայն պատկերն էր աչքերուն դէմը. ան գլխարկին տակէն մօրը ճերմակ մազերն ու արցունքոտ աչքերը և ճերմակ գլխարկին տակէն քրոջը սև մազերն ու վառվռուն աչքերը։

«Բաց պատուհաններու մէջ չկենաս»։ Հնչեց յանկարծ մօրը ձայնը ականջին։ Արշակ նայեցաւ ետին. քուպէի դուռը գոց էր և ինքը մենակ էր իր բաժանմունքին մէջ։ Նետուեցաւ բազմոցին անկիւնը աչքերը գոցեց. սոսափիկ յղնած էր ամբողջ օրուան վազվզուքէն ու ապուռորութիւններէն, որոնք հիմա խառն հոսանքով ու իրար ընդհատելով կ'անցնէին ուղու յիշողութեան մէջէն։

Բայց բոլոր յուշերը խակայն ետ քաշուեցան, երբ նորէն իր դէմն եկաւ վերժինի իրեն նետած վերջին հայեացքը և այդ վերջին հայեացքին հետ ցնծագուշան ճնաք-բարովի անասարանը պզտիկանոցներուն առջեւը։ Եւ ուզեց ուշիլ կնդանիի ամեն ինչ պատկերացնելու համար երկու ձեռքով ալ ամբաւ սեղմեց իր գոց աչքերը։

Տիկինը, որ սենեակի դրան կրճտած, բարի ճանապարհ ու յաջողութիւն կը ցանկար և իր խոր հարկագութիւնը կը յայտնէր Արշակի մօր համար, վստահացընելով որ շատ ազէկ կը հասկընար անոր այսօրուան հոգեկան վիճակը. «քաշողը գիակ»։

Բժիշկը կեցած էր սրահին մէջ ու ժպիտը չրթունքին խորհուրդ կու տար օգտուիլ ուսանողի տարիներէն, որոնք ալ երթիք հո չեն գառնար. կը պնդէր, որ անպատճառ գոնէ ձմեռ մը փարիզ երթայ ու յամառութեամբ կը յանձնարարէր հիւրանոց մը, որուն անունը արդէն թեւեր էր ուղու գլխէն։

Մինչ վերժին ճիշդ իր դէմը և իրեն պէս սենեակի դրան առջեւ կեցած՝ առանց բառ մը ըսելու, ձեռքը դրան կանթին, չրթունքները պինդ կծկած, քանի մը ըմբոստ գանգուր ճակտին, որոնց տակէն այն գոյգ մը հրաշալի ու խելացի սև աչքերը անթարթ իրեն կը նայէին՝ չնչատակի, թափանցող, չոյզ. սիրայորդ նայուածք մը։ Ո՛չ, այդպէս չէ նայիր անդին նետուած զգացումը։ Այդպէս կրնայ նայիլ միայն խորունկ սէրը։

Ամբողջ կէս օր էր անցեր այդ վայրկեանէն և այդ կէս օրը յուզումներու կարաւան մըն էր եղած, բայց այդ բոլոր ցնցումներուն ու տակնուվրայութեան մէջ այդ նայուածքը ալ իր տոգին չէր բաժնելու ու կը խայթէր, չարունակ կը խայթէր ուղուա տկընթարթ մը գառածին պէս. և՛ ցաւցընող և՛ անուշ խայթ մը։

«Ո՛չ, ո՛չ. դեռ ոչի՛նչ վերջացած չէ։ Վերջացա՞ծ։ Ալ վերջ չկա՛յ մեր հոգիներու այս կապանքին»։ բացականչեց յանկարծ բարձր, բացաւ աչքերը ու թռաւ ոտքի։

Գնացքի երկու կողմէն առաս լոյսեր հաւասա կը փախչէին. զուր-

սէն բազմութեան, առուծախի խառն ու խուռ աղմուկ մը սկսող վակոնի պատուհանէն ներս կը նետուէր։

Արշակ դուրս նայեցաւ, Սամաթիայի մէջէն կ'անցնէին։ Ձիւները արագ մաքրեցան, հազիւհազ և լոյսերը և մուխը գրկեց նորէն չջնջած։ Քանի մը վայրկեան վերջ Մագը-գիւղի առջևէն էին անցնելու։ Տգոն մնաց պատուհանը. և հոէն պատպարուելու համար քիչ մը քաշուեցաւ եա քաչուած՝ դէպի իրենց գիւղին կողմը կը նայէր, մինչ գլխուն մէջ մտածումները իրենց նոր ոսոհումը կը հիւսէին։

Հիմա ան՞ղ հասնելուն պէս կը նահ ու կը գրէ։ Ի՞նչ. ո՛չ. գրել պէտք չէ. անձա՛մբ, աչք-աչք. աղջիկը Հայաէլպէրկ հասնի թէ չէ, կ'իմացընէ ու կ'երթայ հանէն. հոն ամէն ինչ կը խօսին, բաց, առանց դժուարութիւնները դիմակաւորելու։ Հաւանօրէն յաջորդ կիսամեակը, փոխանակ Միւնխէնի, ինքն ալ կ'անցնի Հայաէլպէրկի համալսարանը կամ գուցէ աղջիկը կը բերէ Միւնխէն և ալ կ'աշխատին ձեռք-ձեռքի. ինքը անձամբ կը տանի դասախօսութիւններուն իր թևը առած. և ուսանողները աքանչացած աչքերով կը դիտեն անցնելու առեն «գեղեցիկ հայուհին»։

«Ի՜նչ տարօրինակ են սա Արևելքի աղջիկները. իրենց համալսարանները թողած՝ այսչափ հեռուները եկել գալ՝ ուսուցած դիտէ ո՞ր փրոֆեսորը լսելու համար»։

Դուրսը վակոնի նեղ միջանցքին մէջ ուժով մը մէկ-երկու դուռ բացուեցան ու գոցուեցան։ Տգոն ցնցուեցաւ, նայեցաւ չուրջը և խոյն չքացան աչքերուն առջևէն Միւնխէնի համալսարանին հին ու լայն կամարները պահող հսոա սիւնները, անոնց տակ խռնած ուսանողները դոյզնդոյն գլխարկներով, անթափանցելի սեւ-կափարիչ տետրակները թևերնուն տակ և «գեղեցիկ հայուհին» ալ իր թևին տակէն։

Վակոնին մէջն էր, մթայնակ, իսկ «հայուհին» ո՛ւր, իր գիմացը փայփայող ճրագներու խումին մէջ, դէպի ուր ճեպընթացը կը սլանար։ Երեսակայեմներէն իրականին պառնալը սթափեցնող ապատրանքին բերաւ ազատ վրայ և նախորդ վայրկեանի զուարթ վատահութեան վերայէն երկմտութեան ամպը անցաւ։

Այն վերջին նայուածքն ալ արդեօք պատրանք մը չէ՞ր, որուն վրայ հիմա իր նոր վատահութիւնը կը ծլէր։ Գնացքը կը սուրար ծանօթ չէնքերու քովէն։ Արշակ աչքերը իրենց թագի կողմերը նետեց։

Մայրն ու քոյրը, գիտէր, որ դեռ տուն հասած չէին։ Իսկ «ան», ո՞վ գիտէ, նստած էր հիմա գուցէ անզուգարէն գիրք մը ձեռքը, սեղանին ծայրը, լուսամփոփի լոյսին տակ և արդէն մոռցուած էր տգոն գոյութիւնը։ «Մեկնի դրուած անցեալ մը»։

Իրենց գիւղի լուսաւորուած փոքրիկ կայարանը ահագին չափով նուեա վազից իր առջևէն։

«Մոռցո՞ւած. իրա՞ւ. մինչ կարելի՞ բան է»։

Եթէ միայն տեսնել կարողանար քանի մը քայլ իրմէն հեռու...

... Ուր կայարանի չէնքէն քիչ մը վար, լամպերէն հեռու, ցած ծառի մը տակ քաչուած՝ կնոջ եր աղջիկ մը քառորդէ մը իվեր՝ մինչև ոտքերը հանող կրկնոցը վերէն վար կոճկած. գլխուն ձգած բարակ մետաքս չալը եւս էր գոցեր ու հովը ազատ կը խաղար գունդերուն թափած մազերուն հետ: Աղջիկը ոչինչ էր զգար իր դզացող անհամբերութեան մէջէն:

Ահա՛ չոգացին վարը մութին մէջ զոյգ մը հեքիաթային աչքեր, որոնք կարծես չիտակ իր վրայ կու գային: Սիրտը սկսաւ տերեւի պէս դողդղալ:

Ուժգին հով մը փչեց յանկարծ գէմքին, գլխուն վրայ ձնացած չալը սահեցաւ ուսին: Ու իրարու եւեւէ արագ իր աչքին առջեւէն պատան լուսաւորուած վակոնները: Եւ անցան: Հիմա կլոր կարմիր լոյս մը միայն գնացքին եւեւէն կը նայէր. ուրիշ ոչի՛նչ: Աղջիկը ուժասպառ մէկու մը պէս կամաց մը կրթնեցաւ ծառի բունին: Կարմիր լոյսը կը հեռանար, կը պզտիկնար, կէտ մը դարձաւ ու մարեցաւ:

«Գնա՛ց». բացականչեց լսելի ծառին տակի սառեալը, արագ գըլխուն քաչեց բարակ ծածկոցը և կայարանի քովէն փողոց անցաւ:

Կայարանի մէջ աղմուկ կար, փողոցը տեղ-տեղ երթեւեկ, խանութի մը առջեւ առուտուր կ'ընէին, տան մը բաց դռնէն բարձրաձայն ծիծաղ կը լսուէր:

Վերժին տեսակ մը զարմանք զգաց. ի՞նչպէս կրնար այս կեանքը, այս չրջապատը մարդոց հաճոյք տալ, զբաղում ու ծիծաղ. իրեն համար ալ ո՛չ-մէկ հրապոյր չկար հոս, ո՛չ-մէկ իմաստ:

«Շուտո՛վ, չուտով հո՛ն, ուր մարդ իր ուժերուն տէր գտնուել կրնայ. աչխատելու ու զարգացման. հո՛ն, ուր է և «ան»:

Եւ գլխու ծածկոցին երկու ծայրերը ծնոտին տակ ուելի ու ուելի ամուր անցմելով՝ մութին մէջէն տուն կ'ըչտապէր վճռական քայլերով:

Շուտո՛վ, չուտո՛վ:

ԴԱՐՁ

Ի Յ Ի

Գրուած է 1897-ին Միսկինէն
եւ տպուած է Թիֆլիս «Մուրճ»-ի մէջ

Գ ա ր ձ

Ը

Յորևհուան տաքը դեռ կտարուած չէր բոլորովին ու ձին դբժուար ու ծանր կը բարձրանար։

Ճամբան պինդ փակած էր ձորի ձախ պատին ու պատին հետ միասին ինքն իր կողին վրայ կը ծուռէր չերքեզի սուրին պէս. ու միևնոյն ժամանակ քիչ-քիչ վեր կը սողար, միչտ վե՜ր, ձորի յատակէն դէպի ծծկանքի վանքը։

Մինչ ձիուորը քրտինքը սրբելով՝ ճամբու իւրաքանչիւր կտրատուն՝ ձիուն վրայէն դէպի առաջ կ'երկարէր կիսանդրին վանքին դմբեթները նչմարելու յոյսով։

Ճանո-քանչորսի մէջ երիտասարդ մըն էր ան. ճերմակ առօք պարզ հագուստ մը վրան. ճերմակ ալ քազըրօք մը գլխուն, որուն տակէն դուրս կը ցայտէին գանգուրի մօտցող սև տատ մազերը. մօրուքի տեղ փոքր չեկ փունջ մը գոնչէին. ինքը միջահասակ ու նիհար. զոյգ մը կնդանի, արտայայտիչ աչքերով, որոնք կը սահէին հիմա ձորի երկու վայրի պատերն իվեր, որոնց վրայ երկնքի տաքկապոյտ կտոր մը եկեր իր վրանն էր քաշեր։

Թեթև ոլոր մըն ալ և վերջապէս դէմն էր վանքը. հինգ մանրանկար եկեղեցիներ, գրեթէ իրարու կից, իրարու թեւի տակ, իրենց մէջ ամենէն մեծի չուրջը խոնըլած. և աստղ փոքր ու փոքրիկ գըմբեթներու ամբողջ երամը՝ չրջապատող ծառերուն մէջէն վիզերնին վեր երկնցուցած՝ հետաքրքիր նայուածքով եկուորը կը դիտէին։

Կարծես լեռնական հսկայ ուրուր մը իր ձագերուն հետ, որ ձորի

ձախ կուրծքին, հո՛ն, դուրս ցցուած ժայռոտ հարթակին վրայ դրեր էր իր ամենէ բոյնը ծառերու արցունքին մէջ։

Ու չհասկ այդ ամենի բոյնը կը մանէր հիմա ձիւնորը՝ փնաքաղով նայուածքը իր չորս պին յածելով։

Եկեղեցիներուն ոտքը հին ու ցած պատ մը կ'երկննար, որուն դրան առջևը հագիւ էր հասած ձին, երբ զզդզուած մազերով երկրատասակ, բոպիկ ու գլխաբաց պատանի մը սեմէն դուրս նետուեցաւ։

— Բարև՛, հայր-սուրբը վա՞նքն է։

— Հրամանք ես։

Ու մօտեցաւ առաւ ձիուն սանձը։

Երիտասարդը ցասկից թմբկէն վար ու մատ արագ բակը, որու մէկ կողմը խոմբի աւազ եկեղեցին էր, միւս կողմն ալ մէկ-երկու հինեկէ հազէ սենեակներ։

Եւ ճիշդ այդ սենեակներէն մէկու դուռն էր, որ ճրագաց յանկարծ իր առնիներուն վրայ ու սեմի չորնանակին մէջ երեցաւ պարմիկ հատակով թիննել ծերուկ մը։ Երկնին սև, իսկ հիմա գեղինի ու կանաչի տարբեր տատիճանի բոլոր բազապերիչ երանգները ներկայացնող կապայ մը վրան. և խաչար, կոշտ, գանուածոյ երեսսրբիչը ձեռքը, որով իր մինչև կուրծքը հասնող ալեխառն մօրուքը կը չորցնէր։

Կէս-օրուան քունէն նոր եկած ու դեռ բոլորովին չսթափած ուղեղով կը լուացուէր մեքենաբար, երբ իր մենաթիռան վարժուած ականջը դեռ հեռուէն ամբակներու արտիը լսեց. և ուխտաւորներու հանգիստ գալափարը իր գլուխը վերջնականապէս թմրեցուց։

Եւ հիմա դոհ ու բարեացակամ դէմքի արտայայտութիւնով մըն էր, որ իր խուցի սեմէն դուրս ելաւ հիւրին դէմ, երբ իր անուան տարցուիլը լսեց։

— Աստուած օգնական, հա՛յր-սուրբ։

— Աստուած օրհնէ՛, որդիս։

Երիտասարդը ծունկս համբուրեց ծերուկի աջը. ու գրպանէն մեծկակ նամակ մը հանելով տուաւ անոր։

Նամակը բան երեսփին ախտժելի ապաւորութիւն չըրաւ վարդապետին վրայ. ալ ու ձախ դարձուց անգամ մը, դրաւ մօտակայ քարին ու ծանր չարժուձեվ մը տանեց ծոչէն մաշուած ու ազատ պատեան մը, որուն մէջէն անագին ապակիներով հին ձևի ակնոցը դուրս քաշեց, ծանր-ծանրակ սկսաւ ականջներուն անցընել։

— Ո՞ւրկէ կուգաս հրամանդդ. — հարցուց այդ բարդ ու դժուար աշխատանքի միջոցին։

— Էջմիածնէն, հա՛յր-սուրբ. չաս բարևներ ունիմ ձեզի։

— Հը՛մ, չնորհակալ եմ. զրկող, բերող ալ ըլլան։

Ու դէմքը աւելի խոժոռեցաւ. այդ նամակէն լաւ հոտ չէր գար։

Վարժ ձևոքով դրուած տողերը կարդալու քանի մը իզուր ջանքերէ վերջը՝ նամակը մեկնեց երիտասարդին.

— Մէկ հրամանքդ կարդաս, տեսնենք ինչ է գրած. ես ծերացեր եմ, աչքերս ալեկ չեն ջոկեր:

Տգեղ կարդաց. ընդամենը չորս-հինգ տող էր ու թուղթ պաշտօնական դարձուածքներով չորագրուած: Երեք վարդապետացուներ քանի մը օր խմկանք էին ձեռնու, և Մայր-Աթոռի վարչութեան տեղեակ կը յանձնարարուէր, որ հայր-սուրբը անոնց ամեն կերպ լաւ հիւրասիրութիւն ցոյց տայ:

Շերուկի դէմքը քիչ մը պարզուեցաւ. չարիքը իր կարծածին չափ մեծ չէր:

— Ա՞ռ է բոլորը.— հարցուց տարակուսանքով:

— Այո՛, հա՛յր-սուրբ:

— Տիրացուներէն մէկը դո՞ւն ես:

— Այո՛. վարդապետացուներէն մէկը ես եմ.— սրբագրեց տղան «տիրացու» բառէն չատ չխորժելով:

— Իսկ միւս տիրացուները ինչո՞ւ ես ձեռքին.— չարունակեց վարդապետը կրկին իր ոճովը:

— Անոնք քանի մը օր առէլի ուշ պիտի գան: Ինծիրն այսպէս է. անգամ մը Շիրակը միասին պտոյտ տալ ու Անի երթալ էր միտքերնիս. անոնք որոշեցին կողբի ու երեւանգակերտի վրայով գերնիս. անոնք որոշեցին կողբի ու երեւանգակերտի վրայով գերնիս. Ախուրեանէն վեր ելլեն. բայց այդ կողմերը ես անգամ մը եղեր եմ. վճռեցինք, որ ես Ալեքսանդրապոլի վրայով հոս գամ ու սպասեմ. վերջը հոսկէ միասին երթանք Անի ու Հառիճի վրայով անցնինք Ապարան:

— Բայց Շիրակը պտոյտ տալու միտքերնիդ ի՞նչ է.— հարցուց վարդապետը կասկածամտութեամբ:

— Ա՛յնպէս, չըշիլ անգամ մը:

— Չէ՛. երեւի, էչմիածնէն պաշտօն մը կ՚ունենաք. հէ՞.— ժպտեցաւ ծերուկը ձախ ուչքը կծկելով:

— Ի՞նչ պաշտօն, հա՛յր-սուրբ, մենք դեռ միտքան ալ չենք. դեռ երկու-սմս վերջը պիտի ձեռնադրուինք: Իսկ Շիրակը պտիլը, դեռ էրկու-սմս վերջը պիտի ձեռնադրուինք: Իսկ Շիրակը պտիլը, է՛, մեր հայրերնիդի հին պատմական կեդրոններէն է. կ՚ուզենք ծանօթանանք:

— Հապա՛, նշանաւոր վանքեր կան. մեր վանքն ալ չատ հին է, ու չատ յայտնի: Որքա՞ն ժամանակ հոս մնալ է միտքերնիդ:

— Մինչև ընկերներս գան ու հանգըստանան քիչ մը, մինչև հոս չուրջը պտտինք, երեւի տասը օր կը տևէ:

— Լա՛ւ.— ըրաւ վարդապետը կոտրած ձայնով մը:

Եւ ակընթարթ մը թաւ, ճերմակ ունքերը խազընելէն վերջը աւելցուց.

— Միայն թէ, որդի՛ս, այս տարուան ուրօանները այնքան ալ ապէկ չեն հոս. անասուններն ալ տնական մը ինկած են. կամերնիս ալ ապէկ չեն հոս. անասուններն ալ տնական մը ինկած են. կամերնիս ալ

քիչ է. ասիկա ալ առաջ ունեցէք. Թէև իմարիէ Աստծու տուած ձէն մը որ ունիմ ձեզմէ չեմ խնայեր։ Ա՛ս ալ կայ, որ վգիա արդէն ամբողջ տուն մը հիւր ունիմ. անշուշտ իրենց ուտելիքը իրենք կ՚եփեն, բայց վերջապէս...

Եւ չգիտեր ինչպէս վերջացընէ իր կրած քեռի ծանրաբեռնութիւնը հետզհետէ չափ խաչը ցոյց տալու համար. Թէև այդ «իր վիզը» ունեցած տունէն ամենէն ուժէի ուրախ էր. նախ վտահ էր վերջը մեծկակ գրամական նուէր մը առնելու, այլեւ յաճախ կ՚ըսուէր անոնց խոնարհցնէն քաղքի կերակուրներ։

— Ի՞նչ հիւրեր են.— հարցուց երիտասարդը։

— Ալեքսանդրապոլէ՛ն. ուսուցիչնակա՛ն մարդ է. ունքի ցաւ ունի, ակռ է ծծուեմբի ջուրը լռզալու. սիրուն կնիկ մը ունի. չա՛տ լաւ մարդիկ են. չատ ալ երեւելի. լեզուն բերնին մէջ կը դառնայ, բոլոր օրէնքները խորը տեղեակ։ Ան որ չըլլար վերի դաշի արուտաներին արդէն հիմա ձեռքէս խլած կ՚ըլլային Սալօի լոմուկները. անցած աշնան էր. գուտարանը վերջապէս մեր վանքին վրայ վաւերացուց։ Ջէ՛, չատ յայտնի մարդ է. կարելի է լսած ըլլաս՝ Նիկոզոս Քանեան։

— Քանեա՞ն. էջմիածին ընակեր մը ունիմ Ալեքսանդրապոլէն՝ Քանեան. կարելի է անանցմէ է. վերջը երթամ տեսնեմ։

— Գնա՛, գնա՛. ուսուցիչնական մարդ է.— վրայ տուաւ ծերուկը աչխուժ ու պոռ չեչտով մը

Այս խօսքերուն հետ առաջնորդեց ազան իր խուցին կից ցած առնակ մը ու զուռը եա հրեց։

Փոքրիկ հաղարատակ սենեակ մըն էր, ուր փայտէ երկար տախտէն ու փորիքրած հատարակ սեղանէ մը զատ ոչինչ չկար։

— Ահա՛ աս ալ քեզի ձեր սենեակը. եա հիմա կ՚երթամ ճնացած պէտք եղած բաները կ՚ուղարկեմ։

Երիտասարդը առանց ոչինչ ըսելու հայեացք մը ձգեց իր չուրջը այդ զով, հոգ հատոզ ու քիչ մըն ալ փըլփըլած խրճիթին մէջ. և իսկոյն մտածեց սենեակի միակ պատուհանը բանալու, որու ապակիին կէսը թուղթ էր փակցուած։

Հոգիս պատուհանը բացած՝ կանգ առաւ յափշտակուած։

Սենեակը նայած էր սեպ ու ամհկի ապառաժի չրթունքին ու չհասկ ձորի գատարկութեան վրայ կը նայէր։ Հանդիպակաց ձորափէն ժայռի անապին բնակրնները իրենց խառնչներէն դուրս կը նետուէին յոխորտանքով՝ հարուա տալու սպառնալիքով մը իրենց մամռոտ գըլուխները քիչ մը վար հակած. մինչ այդ գատարկ սպառնալիքին արդէն չսասնց վարժուած, նոյն այդ ժայռերու տակին, ցիրուցան ծառերու խումբ մը հանդիսա կ՚օրօրէին իրենց վերին ճիւղերը՝ վերադարձող տուներուն զովութեան մէջ խլրտուն։ Ախորժ լուռութիւն մը վերն ու չուրջը, որուն մէջէն ուժէի թռունդ ու ուժէի յստակ չեչտերով կ՚որոչուէր գետակի մխրճտղալ ու ճռռալ մինոտաստութիւնը, որը երբեմն կը սուէրին ծառերը անդիին՝ ուժէի ձանձրոյթէն զան հեզնելու համար։

— Հաւնեցա՞ր.— հարցուց վարդապետը ժպտուն։

— Հիանալի՛ է.— բացականչեց տղան աչխուժ ևս դառնալով իր հիւրընկալին։— Այսպէ՛ս ձորերուն մէջ, դեռին վրայ ժայռերուն դէմ, ջրերու օրօրին տակ. չէ՛, աս ալ ուրիշ բան է, ամբողջովին բնութեան գիրկը. ճշմարիտ, հա՛յր-սուրբ, կը նախանձիմ ձեր կեանքին։

— Հը՛մ.— ըրաւ վարդապետը անտարբեր չեչտով մը։— Հիմա հանգստացիր քիչ մը, յոգնած կ՚ըլլաս. ես ալ անգամ մը ելլեմ վեր պրծը. տեսնեմ չան գիւղացիք ի՞նչ բանի են. մարդ որ աչքը վրանին չպահէ՝ վանքը կը կողոպտեն ծայլ անպիտաններէրը։

Եւ սեմէն ևս դառնալով՝ պոռաց.

— Գրիգո՛ր, տիրացուներն իրենցները ձիու վրայէն ներս բե՛ր ու ձիուն տակը գարման նետէ՛։

Ու իր բարձրագոչ հրամանին արձագանգը ձորի պատերուն մէջ դեռ չկորըսած՝ մտաւ իր խուցը։

Ասով ալ վերջացաւ «տիրացու»ի պաշտօնական ընդունելութիւնը։

ԲԻ

Վանքէն դուրս, վանքէն քիչ մը աւելի բարձր և ըստ երեւոյթին նոր շինուած հիւրատեղիակներէն երկու ամենապատկառելը յատկացուած էր Ռահանեաններուն։

Անբիծ ճերմակ սփռոցով փոքր սեղանին մօտիկ, դէմ-դէմի նըստած էին պարոն Նիկողոսն ու տիկինը ու պարոնի մօտն ալ նորեկ վարդապետացուն։

Սամաւարը ուրախ կը չեչէր սեղանին միւս անկիւնը, ու չոգին բաժակներուն վրայէն թեթև-կոր գիծով մը դէպի բաց պատուհանը կը ձգէր։

Մուրթը սկսեր էր խտանալ, տիկինը լամպը վառեց։

Երեսուներհինգի սահմաններուն վրայ լայնաթիկունք, նիհար, երկար մարդ մըն էր պարոնը։ Առաջ սև մօրուքը՝ վար կախուած երկար պեխերուն հետ միասին՝ դէմքին խիտ արտայայտութիւն մը կու տար, որուն տարօրինակ կերպով կը հակասէին ժպտուն ու բարի աչքերը։

Հազիւ կէս ժամ կար, որ ծանօթացեր էին իրարու. միայն պարոն Նիկողոսի վարմունքին ու ձայնին մէջ այնպէս պարզ չեչտ մը կար, որ պաշտօնական յարաբերութեան անմիջական մտնն է։ Խօսեր էին վանքի կեանքի, պրոցի ու իր եղբօր գործի մասին. վարդապետը վանքի կեանքին, պրոցի ու իր եղբօր գործի մասին։

պետացուի անցեալէն, ներկայէն ու անոր ապագայի դիտաւորութիւններէն։ Դուրս էր եկեր, որ պարոնը ծանօթ էր մեր արդի գրական-հասարակական կեանքին. եղած էր նաև չատ մը վանքեր ու անձամբ գործ էր ունեցած բազմաթիւ հոգևորականներու հետ. և ինչպէս կ'երևար, այնքան ալ մեծ համակրանք չունէր դէպի այդ դասակարգը։

Խօսակցութեան տաք առենն էր, որ դուրսէն կանացի սուր ձայն մը լսուեցաւ. ձիպ երգող ձևով մը սիկնոջ անունը կը կանչէր.

— Մ՛րի։

— Եկո՛ւր, եկո՛ւր, ո՞ւր մնացիր այսքան ուշ։ — պոռաց սիկինը դէպի պատուհանը դառնալով։

Երգ մը մրմռլտալով սուուիր մը անցաւ արագ պատուհանին առջևէն և ակընթարթի մը վերջը սենեակ մտաւ դեռատի աղջիկ մը իր երգին հետ միասին. նկատեց անծանօթը ու կանգ առաւ խոհյն առնական կեցուածքով մը։

Մինչ հատակ, լեցուն, առույգ մարմին մը. չափազանց սիկնոջ նմանող կլոր դէմքով, միայն ուռկի թարմ ու ուռկի հպարտ արտայայտութեամբ. առանց գլխարկի ու մանչու պէս մազերը կարճ կտրած. մութ գոյնի չրջազգեստ մը վրան ու մէջքը լայն կաշի գօտի։

— Եկո՛ւր ծանօթացընեմ. մեր կարօտ ընկերն է. — դարձաւ Ռանեան օրիորդին։

— Պարո՛ն Սիրաքեա՛ն։ Քեռիս՝ Շուշանիկ Մելինեան.

Աղջիկը համարձակ չարժուձևով մը ձեռքը մեկնեց.

— կարօտ ընկե՞րը. ուրեմն գո՛ւք ալ այս տարուան ընթացաւարանէն էք։

— Այո՛, օրիո՛րդ. — պատասխանեց տղան թեթև չփոթութեամբ մը։

— Եւ երեւակայե՛մ, Շուշանի՛կ, երկու ամիսէն կուսակրօն պիտի ձեռնադրուի.— կցնց Ռանեան մեզմ ժպիտով մը։

— Կուսակրօ՞ն. երա՞ւ. — բրաւ աղջիկը ու ձեռքի դրքերը պատուհանին մէջ դնելով՝ մտաւ քովի սենեակը։

Բայց նոյն վայրկեանին խոհ ներսը իր ազմուկը լսուեցաւ՝ մեկուն հետ կը վիճէր. և խոհյն ևս եկաւ նորէն երկու տարեկանի մօտիկ երեխայ մը պինդ գրկած, որ գրեթէ մերկ էր։

— Այս կինը երեխան փճացընէ պիտի, Մարի՛. անկանոն կը վարժեցընէք. տո՛ւս, դեռ մինչև հիմա պատկեցուցած չէ, իսկ երէկ հինգին քնացուցեր էիք արդէն. այդպէս անկա՛րգ ու անչնորհք. խո՛ղճ թուչնիկս։

Ես իրաւ չոյանք երեխայի մերկ ազդրները ձեռնելով՝ քանի մը ուռևերէն ու հայերէն փաղաքշական ածականներ իրարու խառնեց,

«մեծերու քահանայքին գոհ» անուանելով չարաճակ. ու հնչուն-հընչուն համբուրելով անոր թևերը, վիզը, անրակը՝ մաս կրկին կից անհնակը։

Երկխոսի մայրն ալ գնաց քրոջը հանդչեցնելու. նախ ասելի սառոիկ իրարանցում մը բարձրացաւ ներսը, բայց խնդոյն բալորակին լռեց։

— Իսկ մեր խօսքը ո՞ւր մնաց.— գարձաւ Գանիան երիտասարդին։— Չա՛, ձեր նոր ուղղութեամբ վարդապետանալու մասին կը սրտմէիք. ուրեմն կը կարծէք, որ խնդիրը այդպէս մեծ ծաւա՞լ է առնելու։

— Շարժումը սկսաւած է. ես ու իմ ընկերներս բացառութիւն չենք, այլ ամբողջ խումբ մը, որ չատով կրկնապատիկ պիտի գառնայ։

— Եւ ի՞նչ է այդ խումբին գծած նպատակը։

— Օժանդակել մեր հոգևորականութիւնը բարձր կրթութեան տէր անհատներով, նորոգել հայ եկեղեցին ու ծառայել հայ ժողովուրդին։

Գանիան մտածկոտ գլուխը կախեց։

Մինչ երիտասարդը տաքցած վրայ տուաւ՝ հետզհետէ ասելի ոգևորուելով.

— Ա՛խ, չգիտէք, պարո՛ն, թէ ի՛նչ տաթիճանի անպէտք է դարձած մեր հոգևորականութիւնը ժողովուրդի զարգացման գործին համար։ Անտարբե՛ր, չտեմա՛ղ, նախանձո՛տ. ո՛չ մէկ գաղափարական ձգտում, ո՛չ անձնազոհութիւն, կամ գէթ մտքուր զգացում։ Եւ չէ՛ք կրնար երևակայել, թէ ի՛նչ հաճոյք է մտածելը, որ այդ փքուտած մարմինը պտտիս պիտի, որ այդ ճանճացած կեանքին մէջ թարմ հասանք, նոր ձգտումներ պիտի մտցընես, որ պիտի կռուիս, մաքառիս ու հալածուիս, բայց պիտանի և օգտակար ըլլաս։

Գանիան յափշտակուած կը նայէր ազուռ ոգևորութենէն կայծկըլտուղ աչքերուն։ Ու ակնթարթի մը լռութենէ վերջը՝ ըսաւ տեսակ մը վարանոտմամբ.

— Գանի՛ ձեզի կը լսեմ, այնքան ասելի ցաւ կ'ըզգամ։ Ձեր այդ ազնիւ ոգևորութեան համար ասելի արժանի նպատակ մը կը ցանկայի, քան ձեր ընտրած հոգևորականութիւնը։

— Ի՞նչպէս թէ.— հարցուց ազան բալորակին պազած։

Ու Գանիան չարաճակին՝ ինքն ալ տեսակ մը պազած ու ամօթ խօստանգաւ։

— Հոգևորականութեան գարերը անցած են, բարեկա՛մս։ Եւ բնական մահուան դէմ բժշկութիւն չկայ։ Կ'ընդունիմ, որ այս կամ այն անհատը իր բնածին տազանդով կամ իր բնաւորութեան բարձրութեամբ օգուտ կրնայ տալ նաեւ իբրեւ հոգևորական, ինչպէս նաեւ ուրիշ որևէ կոչման մէջ պիտի տար։ Բայց այդ միյտ ալ բացառիկ անհատական ուժերը ինչ ալ որ ըլլան, հոգևորականութիւնը իրրեւ ամբողջութիւն մը առած՝ ապրած է իր ժամանակը։ Անիկա հիմա

յետադիմական գործօն մըն է իր էութեամբը, որ ո՛չ նորել կարելի է, ո՛չ բարձրացընել։

— Ինչո՞ւ այդպէս կը կարծէք.— հարցուց երիտասարդը բաղաքի չնչաւոր մը։

Այդ միջոցին՝ արդէն երրորդ անգամ՝ ազջիկը մատաւ աննեակ, և սոմսաարէն իրեն բաժակ մը թէյ լեցընելով՝ առանց անոնց խօսակցութիւնը ընդհատելուն կարեւորութիւն տալու՝ գարձաւ Քանեանին.

— Լսեցի՞ր, կո՛ւտա, Գայիանէն ծներ է։

— Մի՞թէ.— բացականչեց մարդը զարմացած։

— Մարին դեռ քեզի չըսա՞ւ. քիչ մը առաջ սայլապանը նամակ բերաւ։ եւ իսարկէ նորէն մեռած։ Ասկէ ամիսուկէս առաջ, ես դեռ նոր էի եկեր Ալեքսանդրապոլ, որ քիչ էր մնացեր նորէն պիտի վիժէր. արդէն ո՛չ ինքը խելքը ունի, ո՛չ մարդը. անոնք զաւակ ունենալու չեն, պարապ բան է, թո՛ղ քանի տարի ապասին։

— Ես՛ղճ կին, աա ալ անոր բաղդը.— բացականչեց տիկինը ցաւակցաբար։

— Բա՛ղդ, ի՞նչ բաղդ, ըսէ՛ ապուշութիւն, ըսէ՛ ապիտութիւն.— պատասխանեց Շուշանիկ բարկացած ու նստաւ իր թէյի բաժակին առջեւը։

Բացաւ հետը բերած առւսերէն ամսագրի մը համարը, զբաւ սեղանին և սկսաւ թերթել։

Վարդապետացուն տեսակ մը ամբչցած ու անյարմար զգացումով կը նայէր ազջկան։

«Սա ի՞նչ տեսակի մարդիկ էին»։

— Ինչ կ՚ըսէի՞.— պարձաւ Քանեան երիտասարդին։— Հա՛, ըսել կ՚ուզէի, որ մեր ժամանակի ձգտումն է արհնցընել մարդկութիւնը հանդիպեցնել կեանքի տափակ երեւակայութիւններէն. բարձրացընել մարդու իր անձին վրայ ունեցած ինքնավստահութիւնը՝ մէկդի նետելով բոլոր գերբնական հաւատալիքները, չար ու բարի ոգիները, արքայութիւնները. դիտակցութիւն ու հպարտութիւն նեչնչել մարդուն իր ուժերուն ու կարողութեան վրայ. հասկցնել, որ բնութիւնէն դուրս ոչինչ կայ, որ մարդն ու ընկերութիւնն ալ այդ բնութեան մէկ մասն է։ Եւ յառաջդիմութիւն, քաղաքակրթութիւն ըսուածն ալ ուրիշ բան չէ, եթէ ոչ ուսումնասիրել ու իրեն օգտին ծառայեցնել բնութիւնը. բնութիւնը, որ մե՛ր մէջն է, բնութիւնը, որ մեր չո՛ւրջը։ Արդ, բարեկա՛մս, եթէ ձեր նոր խումբի քարոզածն ալ ա՛ս պիտի ըլլայ, այլ ևս ի՞նչ հոգեւորական. իսկ եթէ նորէն հի՛ն աւանդական երգերը պիտի կրկնէք՝ այն ատեն դուք ալ խոչընդոտ մըն էք ժողովուրդի հառաջադիմութեան։

Սիրաքեան գլուխը կախ՝ թէյի գդալին հետ կը խաղար։ Տեսակ մը լարում զրոչմուած էր իր դէմքին. ու զրաւիչ, պղնուական բան մը կար պիմագնութեան այդ կծկումին մէջ։

Օրիորդը դիրքը թողած, ճակատին տակէն աղուն կը նայէր չհչտակի՛, նախ անզիտակից ու մեքենական էր նայուածքը, բայց չտեսով սկսաւ ուշադրութեամբ դիտել այդ նիհար, դժգոյն դէմքը ու յանկարծ խղճաց։

«Ինչ՛ըն աղայ», մտածեց ինքնին ու նորէն կախեց գլուխը գրքին վրայ։

— Կը չափազանցէք.— ըսաւ վերջապէս աղան՝ թեթեւ մը դէմքը դէպի խոսակիցը դարձընելով։— Նախ կը մոռնաք մեր արդի պատմական պայմանները. բազմաթիւ հասարակական գործեր կան, որոնք սերտ կապուած են հոգեւորականութեան հետ. երկրորդ ալ դուք չատ անիրաւ կը վարուիք, երբ մտաւոր զարգացման աէր ու որոշ ձըգտումներով նոր հոգեւորականները հիներուն հետ միասին մէկ ջրով լուալ կ՛ուզէք։

— Ներեցէ՛ք, երիտասա՛րդ բարեկամս, բայց եթէ իմ անձնական զգացումս լսել կ՛ուզէք, ձեր այդ կրթուած կրօնաւորները իմ վրաս չատ աւելի անախորժ տպաւորութիւն կ՛ընեն, քան գուցէ հինները։ Կրօնաւորութիւնը հաւատք ու միամիտ զգացումներու վրայ միայն կրնայ հիմնուած ըլլալ. բարեր ուսումնականութիւնը մէջ եկածին պէս կա՛մ կը քայքայուի, կա՛մ դէպի ճիզուիթութիւն կը տանի։ Ի դէպ, այդ ճիզուիթական գիծը արդէն սկսած է աչքի իյնալ ձեր կրթուածներուն մէջ. մէկ երկուքը ես ալ կը ճանչնամ։

— Սակայն, կո՛ւտա, ի՛նչ քաղաքավարութիւն է ասիկա.— նկատեց ափիկինը։— Պարոնը մեզի հիւր է եկեր, դուն ոտաեր ես գլխուն գայլի ուտաստան կը կարդաս։

— Ոչի՛նչ, ափիկի՛ն. այդ բոլորը լսելը ինձի համար հետաքրքիր է.— պատասխանեց վարդապետացուն՝ հնար եղածին չափ ինքզինքը անփոյթ ցոյց տալու ճիգով մը։

— վաղը մեր վրայ հալիւ պիտի գառնայ. աղէկ է, որ այսօրըներ իր ոչխարներուն կարծիքը գիտնայ.— աւելցուց պարոնը ծիծաղելով։

Ու կատակի չհչտավ մը երիտասարդի ձեռքին զարկաւ թեթեւ։

Վարդապետացուն լոյսին հետ ելաւ անկողնէն. իջաւ դէպի ձորը, ուր գետակի քովէն սողսկող նեղ արահետով սկսաւ վեր քալել։ Ծա՛նր, հանգա՛րտ ու տեսակ մը ցրուած։

Մտածումները իր գլխուն մէջ մօրացեր էին, կանգ առած չուրի

պէս. ու տարտամ ախորժքին մը ծանրացեր էր իր հոգիին վրայ. նախորդ գիշերուան ապաւորութեան տակն էր միշտ։

Արդէն գիշերն ալ չա՛տ ուշ և չա՛տ անհանգիստ էր քնացեր, թէև իսկապէս լուրջ ոչինչ մտածած չէր։ Քանեանի մկկ-երկու նախատաւթիւնները կը կրկնըէին չարունակ իր գանգին տակ և այն գաղափա՛րը, թէ ինչպէս մարդիկ չէին ուզեր հասկընալ իրենց նպատակներուն արժէքը, իրենց անձնազոհութիւնը. նոյն իսկ այսպէս կրթըւած մարդիկ։ Մանաւանդ Քանեանի վատահ ու վճռական խօսուածքը, անոր տեսակ մը ցաւած չեչոը ազու կոչմանն ու ապագայի վերաբերմամբ՝ կը սեղմէր, կը վրդովէր երիտասարդին սիրտը. մանաւանդ կ՛ըզգար, որ իսկապէս անոր ըսածներուն մէկ մասին դէմ ինքը հազիւ առարկել կրնար. չէ՞ որ ինքն ալ երկար ժամանակ ատոնց նման հարցեր իր գլխուն մէջ չուռ էր տուեր դեռ վարպետանալու վերջնական խօսքը տալէն առաջ։

Գեղակը ժայռերուն մէջ ջրվէժ մը կազմեր էր, որ ահագին չառաչով կը խուժէր վար ու իր մէջքի ճերմակ գոգնոցէն բուռով փերփռուր կը ցանցըներ չուրջը։

Տղան կեցաւ ու պիչ նայուածքով սկսաւ նայիլ. յանկարծ ըսթափեցաւ, անդրադարձաւ իր ցրուած վիճակին վրայ ու տեսակ մը զայրոյթ զգաց իր այդ ընկճըւած տրամադրութենէն։

«Բաւակա՛ն է, որ ես իմ ըրածս գիտեմ,— մտածեց.— բաւական է, որ ինքս գնահատեմ իմ վարմունքս. ինծի ի՞նչ ուրիշներուն դատաստանները. արդէն ո՞ր գործի վերաբերմամբ ժամանակակիցներուն կարծիքը չհատակ է եղեր. արժէ՞ զուռա ցաւցընել»։

Եւ մտածումները բանի ընդհատակով՝ վազց ձորէն վեր, ելաւ ոտքի նեղ ճամբան, որ ձորի լանջէն ժայռերու ու ծառերու մէջէն կ՛ոլորտէր։

Արեւը արդէն եկեր էր ու ձորի ալ չրթունքէն ներս սահելով՝ դիմացի չեչոտ ու խոժոռ ժայռերու ճակտին իր բարի-լոյսի համբոյրը կու տար։

Տղան վանքին մօտեցեր էր բոլորովին, երբ իր ղէմը քանի մը տատնակ քայլ հեռու նշմարեց օրիորդ Միւիննեանը։

Աղջիկը նստած էր խոշոր քարի մը վրայ՝ ոտքը ոտքին նետած, ճանապարհին զբաղէ կից. և իր քովի թնդ ու քիչ մը աւելի բարձր ժայռին վրայ գիրք մը դրած կը կարդար։ Այսինքն գիրքը բաց էր իր առջեւ ու գիրք կարդացողի մը գիրքը ունէր ինքը, բայց աչքերը գրքին վրայէն տակաւ բնական էին վարը գետի փրփուրուն եռմանը, ուրկէ տխուր ժխոր մը անոր մտածումները կ՛օրօրէր։

Սիրաքեանի առաջին ըրածը եղ դառնալու չարժում մը եղաւ. դժկամութիւն մը կ՛ըզգար այլեւս այդ մարդոց հանդիպելէն. ամենքն ալ կարեկցութեան ժպիտ մը ունէին կարծես իրենց չրթունքներուն ու տեսակ մը բարձրկն նայիլ մը։

— Ինչ յիմար բան էր. ինքը նկար էր այդ լեռներուն մէջ խօսքէ ու ոտքմուկէ կարըւած քանի մը օր առանձին բնութիւնը վայելելու. և ահա՛ այդ անմիզ հաճոյքն ալ չէին ուզեր իրեն տալ

Բայց ետ դառնալը անյարմար էր. ազգիկը անչուչա պիտի նկատէր. և վերջապէս ուրիշ ճամբայ ալ չկար. ձորի մէջէն նորէն երկար պտոյտ ընելը անխուսափելի էր:

«Բարև մը կու տամ ու կ'անցնիմ». վճռեց ու քայլերը արագացուց:

— Բարև՛ ձեզի, օրիո՛րդ:

— Օ՛, բարև՛. դո՞ւք էք, պարոն: Ո՞րկէ կու գաք այսպէս կանուխ:

Ու նկաւ ոտքին:

— Ձորի մէջ փոքրիկ պտոյտ մը. հիանալի թարմ օդ է, կազդուրիչ ու առողջարար:

— Աչխարհքը սկսեր է փոխուիլ. — ժպտեցաւ ազգիկը երկու ձեռքը կարճ մազերուն մէջ խրելով: — Հիմա հոգեւորականներըն ևրեւի առողջապահութեան մասին կը մտածեն, քան աչխարհականներս:

— Ինչո՞ւ չէ. — պատասխանեց տգան չոր:

— Իսկ ես, տեսէ՛ք, նաեւր կ'աչխատիմ. այսինքն պէ՛տք է որ աչխատիմ. — աւելցուց դժգոհութեամբ:

— Այդչափ սահպզակա՞ն. կարգացածնիդ ի՞նչ է որ:

— Խնդրե՛մ, ևթէ կը հետաքրքրուիք:

Ու դիրքը տգան մնկնեց:

Վարպետացաւն առաւ գիրքը ու բացաւ առաջին պատահած էջը. ուռնիլի նման երկար ու կեռ գործիքի մը նկարն էր. քանի չհասկըցաւ ու նոր երես մը դարձուց. բայց հազիւ պատկերը նչմարեց, որ ամբողջ դէմքով կարմրեցաւ ու արագ թուղթը չուռ տուաւ:

Ազգիկը ձեռքերը մէջքին կեցեր էր անչարժ ու ժպտուն:

Երիտասարդը նայեցաւ գրքին ճակատը. «Ծննդաբերական օգնութիւն»:

— Դուք բ՛իչկութիւն կ'ուսանի՞ք. — հարցուց վերջապէս:

— Դժբազդաբար ո՛չ. — նկաւ ազգկան հառաչի մը նմանող պատասխանը: — Մանկաբարձուհի եմ. այսինքն կը պատրաստուիմ քննութիւն տալու:

— Ո՞ւր:

— Թիֆլի՛ս: կը զարմանաք էջ՞, որ քսան-քսանըմէկ տարեկան ազգիկ մը սիֆիլիսի նչաններով և չդիտեմ ինչերով իր ուղեղը կ'ըզբաղեցնէ. այնպէս չէ՞: Դուք միչտ զբաղուած էք բարոյական, հաւատքնիդ. մենք շնութեան ու ատտուածաբանական բարձր պրոպլեմներով. մի՛չտ

վերերը: Մե՛նք, կը տեսնէ՛ք, համեստ ենք. մի՛չտ ցածը. հիւանդութիւններու, ազատութիւններու ու առաւպանքներու մէջ:

Աղջիկը կը քաքնիմանար իր արեւեստովը:

— Հապա՛, վարպետութեան չի համեմիր. բուրվառ տալով ու ազօթք ընելով չի վերջանար. պէտք է աշխատիլ ու չարչարուիլ. — վերջացուց յանկարծ լուրջ դարկով մը և բոլորովին անապահով կերպով ուսերէն. կարծես դիմացինը բոլորովին չուսումնասիրելու համար:

Բայց ոգին հանդարտ ու մաքուր զուտ ուսումնական արտայայտութեամբ պատասխանից ինքն ալ ուսերէն.

— Կը զարմանամ, օրիո՛րդ. ի՞նչպէս կրնաք այդպէս արհամարհանքով խօսիլ ուրիշի մը գործի մասին, որ մանկաբարձուհիի մը համար միայն այնքան ծանօթ է, որքան վարպետի մը համար «Մննդաբերութեան օգնութիւնները»:

Այս համարձակ ու արդար բողոքը ապշեցուց վրայ տարօրինակ տպաւորութիւն մը ըրաւ. և մանաւանդ այդ վարժ ուսուցիչը. ոգին յանկարծ կարծես ուրիշ գոյն մը առաւ իր այդ ուսուցչուհիով:

Ու ալ խօսակցութիւնը չարունակուեցաւ ուսուցչէն:

— Ձեր համեմատութիւնը չիտակ չէ.— պատասխանեց աղջիկը.— ես ակնկալեցի ալ չատ եմ եղած, գոնէ մանկաբեմանոց. և վերջապէս դուբան ալ հոգեւորականներ միշտ կարելի է տեսնել ու անոնց մասին լսել: Մինչդեռ դուք ո՛չ թէ իմ արհեստիս, այլ նոյնիսկ մարդու ու իր ֆիզիքական կազմի մասին չնորհքով տեղեկութիւն չէք կրնար ունենալ, երբ ամբողջ ձեր կրթութիւնը տարիներով վերացական խնդիրներու ու կրօնական դասերու չուրջն է դարձեր:

— Կը տեսնէ՞ք, օրիո՛րդ, ի՞նչ ըսել է առանց դործին ծանօթ ըլլալու խօսիլը: Նախ դպրոցը կրօնի դասերը միայն քանի մը ժամ է. և որոնք, փակագիծի մէջ ըսած, ինձի ո՛չ հետաքրքրած են, ոչ՛ալ մանաւանդ պրազեցուցած, իսկ ընդհակառակը բնական գիտութիւնները ես միշտ սիրած եմ ու ձեր կարծածէն ալ՛քիչ մը աւելի ծանո՛թ. մանաւանդ կենդանաբանութիւնը ու բիոլոժին: Մի՛ կարծէք, թէ միայն ձեզի են ծանօթ Դարուինի, Սպենսէրի ու Հիւքսլէյի երկերը:

Աղջիկը սեղմուած շրթունքներով ու աչքերը լայն բացած խօսակցին կը նայէր բոլորովին զարմացած: Հիւքսլէյէն միայն փոքր դրքոյկ մը կարդացած էր. Սպենսէրի, մէկ աշխատութեան բովանդակութիւնը լոկ յայտնի էր իրեն ամսագրի մը գրախօսութենէն, իսկ Դարուինի անունը, թէև չատ լաւ գիտէր, բայց բնաւ ծանօթ չէր մօտէն:

Ու կարճ լռութիւն մը. որ ընդհատեց աղջիկը ետք.

— Այն ատեն ես բոլորովին կը զարմանամ. ուրեմն ինչպէս կըր-

նաք դուք այդ բոլորին հետ հաշտեցընել կրօնական մարդ ու մեծ նախապաշարումները, անոխակալութիւնները, ձիակատարութիւնները, պահքերը, ձեռքն ու առաուտները. ինչպէ՞ս կրնաք հաւատալ այդ բոլորին:

— Ես ձեզի ո՞վ ըսաւ, որ ես կը հաւատամ այդ ամէնուն:

— Բայց չէ՞ որ վարդապետ դառնալ կ'ուզէք, չէ՞ որ ամէն օր պիտի կրկնէք նոյն ազօթքները, նոյն արարողութիւնները, նոյն հաւատալիքները, և ալ ի՞նչ գիտեմ:

Տգեղ թևիկ մը գլուխը կախեց. դիմացինը ամէնէն հիւանդոտ տեղին վրայ էր գրեր մատը:

Եւ պատասխանեց, կարծես տեսակ մը իր մատնուածներուն մէջէն.

— Իրա՛ւ է, ժամանակները իրենց հետ բերած են բաւական բաներ, որոնք մեր արդի ըմբռնումներուն լաւ չեն յարմարիր. պիտաններ, որոնք մեր արդի ըմբռնումներուն լաւ չեն յարմարիր. պիտաններ ու սուխրերը, գլխաւորն ու երկրորդականը խառնուած են աներօրէն կրօնական ըմբռնումներուն. այդ ամէնը իրարմէ զատել ու մաղել դեռ կարելի չէ. ժողովրդական մտքի հասունացում կը պահանջէ: Այնպէս որ գործի բարձր ու կարևոր մասերու սիրուն ըսիպուած ենք յարմարուելու այդ հինցած ու անախորժ կազմերուն:

— Բայց, պարո՛ն,— առարկեց ազջիկը.— ամէն օր և անագին բազմաբնեներու առջև ու կատարել հանդիսաւորութեամբ բանել խօսքեր ու ազօթքներ, որոնց չէք հաւատար, կատարել ծէսեր ու արարողութիւններ, որոնց կարևորութիւն չէք տար. չէ՞ որ սիրկա կը դառնայ խարէութեան պէս բան մը: Ամէնէ բան չէ ձեր ընել ուզածը, սիրելի պարո՛ն:

— Դժբաղդաբար իմ կամքէս կախուած չէ ուզած մասերս ընտրել և չուզած մասերս անդին նետել. անքաժան անբողջութիւն մըն է, կա՛մ պիտի չունենա ամբողջը կա՛մ հեռանաս:

— Հեռացէ՛ք. գո՞րծ է պակաս. ինչո՞ւ անպատճառ հոգևորական:

— Որովհետև ամէնէն չիսակ ու ամէնէն չարմար ճամբան է մեր ժողովուրդին ծառայելու. ժողովուրդին մէջ խրուելու, ապրելու, անոր վէրքերը մօտէն չօշափելու և բուժելու համար:

— Ա՛յ, եթէ ձեր միտքը ժողովուրդի վէրքերը չօշափելն ու բուժելն է ես ձեզի ամէնէն կարճ ճամբան ցոյց տամ. ճամբայ մը, որ պիտութիւններուն վրայէն կ'երթայ, և ո՛չ թէ ժողովուրդի նախապաշարումներուն կրծքնեղով: Ըսիք թէ բնական պիտութիւնները մտնուազարապես կը սիրէք, վարժ ալ առսերէն կը խօսիք ատա՛. գացէ՛ք քանի մը տարի Ռուսաստան, սովրեցէ՛ք թժկութիւն, գործէ՛ք ձեր ժողովուրդին միջին և թժկեցէ՛ք ինչքան վէրքեր որ կ'ուզէք:

— Իմ խօսքս հիւանդի վէրքերու մասին չէր. — նկատեց ազան մխիթարելով ժպտելով:

Ժպտացաւ և ազջիկը:

— Այդ չափը կը հասկընամ. բայց մինչ գ՛չ է ձեր ըսած հիւանդութիւններուն հետ նաև մասնաւոր հիւանդութիւններ բժշկելը. վերջապէս բոլոր բարոյական հիւանդութիւնները ֆիզիքական ու անատոմական հիւանդութիւններու զուգահեռներն են միայն։ Եւ մի՛ մոռնաք, որ բժիշկը անխաիր ամէն տեղ յա՛րգ ունի, մա՛տաք ու դի՛բք. և մանաւանդ բացարձակապէս անկախ է թէ՛ բարոյական և թէ՛ գրամական առումէն։

— Եթէ այդչափ յաջողակուած էք բժշկութեամբ, ինչո՞ւ ինքներդ ուղղակի բժշկութեան չէք հետեւիր. կարծեմ այդ ասպարէզը չատ աւելի լայն պիտի ըլլայ, քան ձեր ընտրած մանկաբարձութիւնը.— հարցուց երիտասարդը դիտմամբ խօսքին ուղղութիւնը ծռելով։

— Ոչիչ են, պարո՛ն, իմ ընտանեկան պայմաններս. ինծմէ փոքր չորս քոյր ու եղբայր ունիմ. և երկու տարի կայ՝ մեռաւ հայրը. պէտք է հնար եղածին չափ չուռաով անկախ դառնամ մօրս վրայէն բեռ մը պահպանելու համար. պէտք է այդ փոքրիկները մեծցընել, կրթութիւն տալ. դիւրին բան չէ։ Ընդարձակ ծրագիրներ մեծցընել, կրթութիւն տալ. դիւրին բան չէ։ Ընդարձակ ծրագիրներ մտածելու ո՛չ ժամանակ ունիմ, ո՛չ միջոց. թէ՛ չէ՛ այդ ծրագիրները ես ալ եմ ունեցած. իմ բաղդէս է. հայրս մեռնելու չէր։ Հապա՛, աչխարհի կեանքը վանքի չորս պատերուն չի նմանիր, հա՛ն ոչինչ չի կայ պատռատ ու ձրի. նոյն իսկ ապրուստի տարրական պէտքերուն համար պիտի կռուիս չարունակ՝ ծրագիրներ ու բաղձանքներ բոլորը մէկդի դնելով։

Տգեղ անթարթ խօսակցի չարժուն դիմագծերուն կը նայէր, մինչեւ տարօրինակ զգացում մը իր մէջն էր սպրդեր. կարծես ըսկսաւ սիրել։

«Ահա՛ ո՞ւր է իսկական անձնազոհութիւնը». կը մտածէր ակամայ։

— Բայց ըսէ՛ք, խնդրեմ, ի՞նչպէս է, որ դուք այդպէս մատչելի ուսանէն կը խօսիք. կրօնաւորներու մէջ խի՛ստ հազուագիւտ բան է տիկին.— հարցուց յանկարծ ազջիկը իր հետաքրքրութիւնը այլեւս զսպել չկարողանալով։

— Ես Եւրիպիդ եմ, օրիո՛րդ. տակէ գոռ գոչոցը ուսանէն չատ եմ կարդացած. ուսական գրականութեան գրեթէ բոլոր յայտնի երկերը. և թարգմանութիւնն՛ր ինքնին հասկընալի է։

— Եւ բանաստեղծութիւննե՞ր, և ռոմա՞ն.— հարցուց ազջիկը կանացի փորձերով հետաքրքրութեամբ։

— Այո՛. անոնք, որոնք գրական արժէք մը ունին։

— Կա՛մ վարդապետներու մասին ես չափազանց սխալ գաղափար ունիմ, կամ դուք չատ տարօրինակ վարդապետացու էք.— պատասխանեց ազջիկը վարանոտ չեչառվ մը։

— Զղիտեմ. ինչպէս որ կ՛ուզէք։

Ու երիտասարդը գլխարկը ուզեց ինքնաբուխաբար. սկընթարթ

մը լռութիւն. վերջը ուշդուշ.

— Բայց ներեցէ՛ք. ձեր ընթերցումը խանգարեցի. յանսութի՛ւն:

— Ընդհակառա՛կը, ես չատ ուրախ եմ այդ խանգարումէն: Ցը՛:

Ու ձեռքը մեկնեց ազուն: Երիտասարդը թմռուեց, ու դէպի վանք ուղղուեցաւ:

Մուքը սկսեր էր իր կծիկը ձորին վրայ փաթթելու, որ Սիրաքեան ամբողջ օրուան թափառելէն յոգնած՝ վերադարձաւ ու չիտակ մտաւ վանահօր սենեակը:

Նոյն միջոցին անտեսուհին, երեսունը անց ագիլ ու խոչոր կին մը ամուր ու փայտէ կազմըւած քով, մէկ ծունկի վրայ գետինը չոքած՝ սամաւարէն ջուր քաշելով էր զբաղուած. իսկ վարդապետը անոր դլխուն վրայ ծռած՝ ձեռքը կնոջ թուչին բան մը ըսելու վրայ էր, որ սենեակին դուռը հանկն ճղընչաց:

Հայր-սուրբը իսկոյն չակըռևցաւ, արագ դուրս քաշեց գօտիէն ոսկիին կապոյտ թաշկինակը ու սկսաւ պինդ-պինդ հազալ որքան իր թոքերը կը նեբէին:

— Աստուած օգնական, հա՛յր-սուրբ. — բարևեց ազան ոչինչ չհանկնել ձևացընելով:

— Դո՞ւ ես, տիրացո՛ւ. ո՞ւր էիր, տեսնո՛նք, ամբողջ օրը:

— Հա՛յր-սուրբ, այնպէս յոգնած եմ ու անօթի:

— Նստէ՛, ազա՛ս, հանգստացի՛ր: Եղսօ՛, չուտով մեզի մէյ-մէկ բաժակ թէյ տուր ու տիրացուին գնա՛ քիչ մը մածուն ու ձու բե՛ր:

Երկու ճամբառած ու տարբեր ձևի բաժակներով թէյը տրգէն փայտէ սնձոտիկ սեղանին վրայ էր: Վարդապետը նստեցաւ լայն տախտի ծայրին, իսկ վարդապետացուն դիմացը կոչտ ու խոչոր աթոռի մը:

Խօսքը սկիզբը ծծկոնքի մասին էր, վերջը դարձաւ Սիրաքեանի ու իր ընկերներուն վրայ:

— Իսարկէ՛, այդպէս չա՛տ լաւ է՝ ուսում առած հոգևորականներ. — վրայ բերաւ վարդապետը թէյի բաժակը շրթունքներէն չհեռացընելով: — Բայց պիտի՞ տիրացուն մը պէտք չէ. քիչ մը խորամանկութիւն ունենալու է և մեծաւորներուն կողքը մտնելու չնարհքը. թէ չէ ոչինչ դաբա չի դար. տասը տարի սարկաւագ կը

պահեն. վերջն ալ երբ մազերդ ճերմըկին՝ կը չինեն վարպապետ ու կ'ուզարկեն փլած վանք մը։

Վարպապետացուն ոչինչ չառարկեց։

— Ա՛յ, իմ ընկեր սարկաւագներըդ հիմա բոլորն ալ կա՛մ եպիսկոպոս են, կա՛մ առաջնորդ, մէկը նայնիսկ Սիսոյ անգամ։ Ինչո՞ւ կը կարծես դո ամենէն վա՞տն էի մէջերնին. եթէ գիտնայ՝ ինչ զգուշալեզներ էին. մա՛ռաւանդ մէկը. և ճի՛շդ այդ մէկը հիմա N թեմի առաջնորդն է. սրովհետև իր հաչիւը գիտցաւ մարդը. իսկոյն մտաւ եպիսկոպոսի մը փնչերուն տակը. իւղոտ պաչօններ ձեռք անցուց. առաջ մտառնապետ էր, ետքը չգիտեմ ինչ կապալի գործերն էր իր վրան, վերջերն ալ կարծեմ հաչուի մտանաններուն մէջ մտած ունէր. կարճ խօսքով քիչ-քիչ իւզառեցաւ. և անգամ մը որ տտակը կայ՝ ալ ամէն բան կայ։ Հապա՛. մ'իմն ես էի մէջերնին էլը. ո՞վ կ'ըսէր ինծի ուբիշներու գործերուն խառնըւիմ. չիտակ խօսքի գլպանը ծակ կ'ըլլայ. ինծի սկսան հաւտա ձգել, ես ալ իմ կատղցայ ու բերնիս կապը բոլորովին քակեցի. սկսայ ամէնքի երեսին ըսել ինչ որ ճշմարիտ էր. թէ անառակ, գող, կաշառակեր, լիրբ մարդիկ էին. հաւէն ինկայ մէկ-երկուքի գողութիւնը բռնեցի. Աբրահամ եպիսկոպոսի անհնակէն ագլխիկը գործս քաշեցնիք. ահագին խայտառակութիւն գործս եկաւ. բայց այդ պատմութիւնը ինծի ալ տուգի նամուցաւ. «գիժ սարկաւագը» բռնեցին, չտապ չինեցին վարպապետ ու ղրկեցին հա՛ս, ա՛յս աշխարհքի անմարդ ծայրը, գիհ, նաէ՛ ու մնգքերդ քաւէ՛։ Հապա՛, արբացու չան։

Երիտասարդը հետաքրքրութեամբ կը լսէր, թէև ինքնին այդ պատմութիւնը իրեն համար ոչինչ նորութիւն չունէր։

— Որդի՛ս, ականջիդ օզ չինէ, — կը խրատէր վանահայրը, — եթէ առաջ երթալ կ'ուզես՝ մեծաւորներուդ խոնդ օխէ՛. մէյ մըն ալ նայէ՛ ինչ ճամբով կ'ուզէ ըլլայ՝ չաւտով գրպաններդ իւղոտես. այս չորերուն մէջ ճերմկած մօրուքս փիգի խրատս։

— Հա՛յր-սուրբ, առաջ երթալու ուրիշ ապնիւ ճամբաներ ալ կան. անշուշտ խելացութիւն չէ մեծերու թշնամութիւնը ուրիշով տեղը գրգռելը. մինչ նորերս կ'աշխատինք ուրիշ ապնիւ ըլլալու, ուրիշ գործունեայ ու մաքուր. . . սակը-սահմանիկս տարիէն չէ՞ որ մեծաւորները մենք ենք գահնալու։

— Կը կարծե՞ս դուք եպսկոպոսներն ալ իւղիկ էք ըլլալու. երիտասարդութիւն է, որդի՛ս. ես ալ այդպէս կը մտածէի։ Վանքի կեանքը իր առանձին ճամբան ունի. ամէնքն ալ անպատճառ այդ ճամբով պիտի երթան. ով այդ ճամբէն ծռիլ ուզէ, անոր բոլորը միասին աքացի կու տան ու մէկ կողմ կը նետեն։

— Չէ՛, հա՛յր-սուրբ, պիտի՞ք, ժամանակները սկսած են փոխուիլ.

և հիմա կրճատած կրօնաւոր մը առանց այլեւայլութեան բըռնել մէկուն նետելը դժուար խնդիր է։

— Երեք ամիսի չափ առաջ էջմիածին էի, որ Սիմոն վարդապետը նոր-վիրապ աքսորեցին. ահա՛ քեզի ուսուցա՛ ասած վարդապետ։ Իսկ անցած օր լսեցի, որ Աչոտ եպիսկոպոսն ալ Քիշնև են ուղարկեր. ձեր սմենէն ուսումնականը։

Երիտասարդի մէջէն տարօրինակ զգացում մը անցաւ յանկարծ. ետ քաշուեցաւ անզանէն ու մատաղը կրծընեցաւ իր սմոռի խորխոռալ թիկունքին։

Այդ Սիմոնն ու Աչոտը գործերէ հեռացընելու համար սմեն ճիգ թափողը բնաւ հին գլխաւ մարդիկը չէին եղած, այլ իրենք. այսինքն կրծըտած նոր սերունդը, որոնց մէջ ինքն ալ չուտով մտնելու էր։ Եւ չէ՞ որ ինքն ալ ուրախացեր էր այն ժամանակ «իրենները» յաջողութեանը. բայց ինչո՞ւ այդ հալածանքը։

Վարդապետացաւի մարքին առջևէն կարծես սկսաւ թանձր բան մը եռալ քաշուիլ ու երիտասարդը սկսաւ անսովոր պայծառ գոյնով մը եղելութիւնները տեսնել։ Նախ անձնական մէկ-երկու հաշիւներ կային, որուն ինքն ալ, իր ընկերներն ալ չատ ազէկ տեղեակ էին. երկրորդ որ այդ մարդիկը իրենց չրջապատողներուն մէջէն կամքի ու խելքի ուժովը աչքի կ'իյնային և իրենց ազդեցիք դիրքին մէջ հպարտ՝ մխանիրուն չատ ախանջ կախելու տրամադիր չէին։

«Վանքի կեանքը իր ճամբան ունի. սմենքն ալ անպատճառ այդ ճամբէն պիտի երթան»։ Արդեօք ներուկը իրաւո՞ւնք ունէր։

Տղուն մտածումները ընդհատեց անտեսուհին, որ պզինձէ սմանով մը մածունը բերաւ, առջևը դրաւ։

Վանահայրը կը չարունակէր դեռ իր պատմութիւնները. իր քաջագործութիւններէն, յաջանութիւններէն, այս-ինչ ու այն-ինչ եպիսկոպոսի կեանքէն։

Սենեակը թաղուած էր ծխէն խաւարի մէջ. բաց պատուհաններէն սխոտ ճռինչ մը կը լսուէր հեռուէն ու գետակին իրարանցում մը վարէն։

Երիտասարդը հազիւ էր իր ընթրիքէն ետ քաշուած, որ վարդապետի ծառան, գպիրն ու ժամկոչը միանգամայն ներկայացնող տղան՝ մտաւ վանքի բակը և, մօտենալով ցած պատուհանին, յայտնեց, որ «մեծ ազան» պարոնը կը կանչէր։

Վարդապետացուն անսովոր յուզում մը ունեցաւ. տարօրինակ խառնուրդ մը զժգոհութեան ու տարտամ հաճոյքի մը. զժգոհութիւն՝ երևի այդ մարդուն կրկին հանդիպելէն. բայց այդ ախորժի զգացումը ուրիշ՞ էր։

Երբ ծանօթներու սեմէն ներս մտաւ, գաւ նորէն նոյն մաքուր ճերմակ փոքրիկ սեղանը սենեակին մէջտեղը, ու նոյն ցոլցլուն սամաւարն ալ վրան. և ընտանիքն ալ սեղանին չուրջը։

— Բարև՛ ձեզի.— ըսաւ ազան ընդհանուր կերպով՝ ձեռքը իր դէմը եղող պարոն Ռանեանին մեկնելով։

— Մենք կարծեցինք, որ ինքներդ պիտի գաք. սակայն տեսնելով որ չատ ուշացաք՝ ծառան ղրկեցինք.— բացատրեց Ռանեան սիրալիր տոնով մը։

— Շատ չնորհակալ եմ։

Ու երկու կիներուն ձեռք տուաւ։

— Նստեցէ՛ք, խնդրե՛մ.— առաջարկեց տիկինը՝ մատնանիշ ընելով իր ամուսնոյն ու քրոջը մէջտեղի աթոռը։

— Նո՞ր, ի՞նչ եղրակացութեան եկաք իմ այս օրուան առաջարկիս մասին.— հարցուց Շահչանիկ խնդալով։

— Ի՞նչ առաջարկ.— զարմացաւ ազան բոլորովին չուսարած։

— Ձեր մասնագիտութեան փոքրի՛կ փոփոխութեան մասին ինչ որ ըսի.

— Հա՛, այս առտու ամբողջ ժամ մը քենիս պրոպագանդ է ըրած յօգուտ բժշկութեան, ինչպէս լսեցի.— ուսկլցուց պարոնը։

— Եւ այնպէս յաջող, որ եթէ հոգևորական չըլլայի արդէն՝ անշուշտ բժիշկ դառնալ պիտի ցանկայի.— իր կողմէն կատակել ուզեց Սիրաքեան։

— Թէյը կսպասվ կը խմե՞ք, թէ...

— Շատ չնորհակալ եմ, տիկի՛ն. ես խմած եմ արդէն հայր-տուբրի մօտ։

— Չէ ի՞նչ.— բացականչեց Ռանեան դժգոհ և իսկոյն ուսկլցուց.— Եւ դիտե՛ք ի՛նչ. տիկինս կը խնդրէ, որ քանի հաս էք՝ ամէն իրիկուն մեզի գաք թէյի, առանց ձեւականութիւններու. անշուշտ չէք մերժեր։

— Սրտանց չնորհակալ եմ. ճշմարի՛տ...

Ու չդիտեը ինչ ըսէ։

Այս բոլորը ազան վրայ քաշող, փայփայող ազդեցութիւն մը կ'ընէր. կ'զգար, որ իր մասին խօսք էր գարձած տան մէջ և որ անոնց վրայ նպաստաւոր տպաւորութիւն ըրած էր։

— Ի՞նչ ըրիք, նայի՛նք, այսօր ամբողջ օրը։

— Շարունակ թափառեր եմ. ձորի մէջը, վրան, չուրջը, բոլորովին ուժասպառ էի, որ վերադարձայ։

— Ես ձեզի տեսայ հեռուէն.— մէջ նետուեցաւ տղիկը։— Կէս-օրի մօտերն էր. վարը՝ գետի ափն էի. դուք ժայռերուն մէջէն վեր կը մագլցէիք։

— Այո՛. Ագարակ գիւղը գացի. անշուշտ եղած էք արդէն։

— Ա՛խ, ո՛չ.— արտնջաց տղիկը։ — Դուք, տեսէ՛ք, օր մըն է հաս էք, արդէն անոգին տեղ չդիտցաք. մենք երկու չաբաթէն ուսկլի է հաս նստած ենք. ու դեպի վար չպտցեն անդին անցած չեմ դեռ, դեպի վեր ալ մինչև ծծումբի բաղնիքը. քոյրս երեխայն բժշկելու

չի կրնար. իսկ կոլիային արդիլուած է չատ քալելը, մանաւանդ այս պժոխքի ճամբաններուն մէջ։

— Տրանջալդ սևլորդ է. ամբողջ օրը դուբան ես. — նկատեց քոյրը։

— Դո՛ւբաը. այո՛, տան չորս կողմը։ Եթէ գիտնաք, պարոն Սիբաքեա՛ն, ինչպէս նախանձեցայ այսօր ձեզի. ձեր գլխուն, ազատ, ժայռերուն մէջէն գաւազանիդ քարերուն զարնելով կը բարձրանայիք։ Վերէն տեսարանն ալ չատ սիրուն ըլլալու է ձորի բերնէն։

— Այո՛, հիանալի է. մանաւանդ իրիկուան դէմ։

— Եթէ այդչափ կը ցանկաս՝ ելիր անգամ մը պարոնի հետ միասին գնա՛. — նկատեց Քանեան։

Աղջիկը երիտասարդին նայեցաւ։

Սիրաքեան չէր հասկընար, թէ իրեն հետ ինչ կը դառնար։ Նախ թեթև մը կարմրեցաւ և վերջը իբրև քաղաքավարութեան պարագ համարեց կրկնելը.

— Եթէ կը ցանկաք, օրիո՛րդ, խնդրեմ։

— Շնորհակա՛լ եմ. օ՛, չատ կալան վարդապետացու էք։ Բայց մի՛ վախնաք, ես ձեզի չատ նեղութիւն չեմ պատճառեր. քալելու ալ վարժըւած եմ, չատ ալ քնքուշ չեմ։ Ուրեմն վազը ճաշէն վերջը, այո՞։ Ճաշէն առաջ չեմ կրնար. թէ՛ կարգալու գործ ունիմ և թէ տունը զբաղած։

— Ինչպէս որ կը կամենաք, օրիո՛րդ. ճաշէն վերջը կ'երթանք։

Խօսքը դարձաւ պարոն Քանեանի զբաղումներուն վրայ. ու դուբս եկաւ, որ պարոնը իր այս պաշտօնէ ազատ օրերէն օգտըւելով այժմ ձեռնարկած է երկար ժամանակէ իվեր սրդէն մատղըւած աշխատութիանը. սկսած է թարգմանել ռուսաց օրինագրքի մասերը, որոնք անմիջապէս կապ ունին ժողովուրդի առօրեայ կեանքին հետ, ու հանրամատչելի բացատրութիւններով ապագրութեան տալ կ'ուզէ։ Եւ սկսաւ երկար-բարակ պարզել այդ տեսակ գործի մը անհրաժեշտ պահանջը. թէ ինչ տատիճան անհեղեակ է ժողովուրդը սիրող օրէնքներուն, թէ նոյն իսկ ժողովուրդի գլուխ կեցած մարդիկը որոշ ու հաստատ չգիտեն։ Եւ այս ամէնը այնքան երկար ծամծմից, որ Սիբաքեան սկսաւ յոգնութիւն ու ձանձրոյթ զգալ։ Այնպէս որ իսկապէս սրտանց ուրախացաւ, երբ տիկինը առաջարկից քիչ մը թուղթ խաղալ ժամանակ անցընելու համար։

Երկար ընտրութենէ վերջը կանգ առին փրեֆերանսի վրայ. սըզան ո՛չ մէկ խաղ չնորհքով չգիտէր օրիորդը նմանապէս, բացի այս վերջին խաղէն։

— Սակայն, ճշմարիտ, ես փրեֆերանս ալ կարգին չգիտեմ. կը ձանձրանաք.— նկատեց երիտասարդը։

— Ոչի՛նչ, եկէ՛ք. դուք խաղացէք երկքով. ես ալ կ'օգնեմ ձե-

զի.— վրայ բերաւ օրիորդ Շուշանիկ։

Այդպէս ալ ըրին։

Երեքը անզաւորուեցաւ սեղանին երեք կողմը. ապչիկն ալ ամառը քաշեց ազուն քովը մէկ ոտքը գետինը, մէկ ծունկը ամոռին՝ ամբողջ կուրծքովը ինկաւ սեղանին վրայ. ու դէպի ազուա բռնած թուղթերը հակած՝ սկսաւ ցոյց տալ, թէ ո՞րը խաղալու էր և ինչո՞ւ։

Սիրաքեան սկսաւ տանիլ. թուղթերը անսովոր կերպով յաջող կուգային. Բանեան հետզհետէ աւելի կը զայրանար և ճիշդ ատ էր, որ սմենէն աւելի զուարճութիւն կը պատճառէր մխաներուն։ Դժգոհութենէ ու յաղթանակէ ծնած սրախօսութիւնները իրարու կը յաջորդէին ու երիտասարդը կը չահէր չարունակ։ Երեք փարթի իրարու վրայ։ Ուշ էր արդէն, որ վերջ տային։

— Չէ՛. ձեզի հետ խազալ կարելի չէ. բազդի սիրականն էք. — եղրակացուց Բանեան ձեռքի թուղթերը թափելով։

— Հապա՛, ինչ գիտցար. — պատասխանեց Շուշիկ. — երբ վարդապետ ու մանկաբարձուհի դլուխ-դլխի տան՝ ալ անոնց յաղթելը քիչ մը դժուար խնդիր է։

Ու առղջ ծիծաղ մը բարձրացաւ։

Ջերմ զգացում մը երակներուն մէջ՝ ազան ուղղուեցաւ դէպի իր խցիկը։ Այնպէս ախորժելի էր այն պայծառ լուսաւորուած փոքրիկ սենեակը, քառակուսի ճերմակ սեղանը մէջտեղը. մէկ անկիւնը լամպը. և իրենք չո՛րսը սեղանին չուրջը. ինչպէ՛ս զո՛ւարթ ու ընտանի՛։

Անմիջապէս հանուեցաւ, սահեցաւ անկողինը ու աչքերը պինդ գոցից. բայց փոխանակ քնանալու՝ սկսաւ այդ իրիկուան բոլոր մանր-մունր դէպքերը իր յիշողութենէն անցընել։ կը յիշէր ինչպէս օրիորդը չէր թողներ կզր իջնելու, ինչպէս անգամ մը ուժով բռնեց իր ձեռքէն՝ արգիլելով կարմիր բացուիլ. ինչպէս իր ուսին ծռած՝ թուղթերը կարդալ չարիլու կ'օգնէր, պահանջելով որ անպատճառ իր ուզած ձեռվը կարդի բերուին՝ նման դէպքերը իրարու քով ու կարմիրները սևերէն վեր և ինչպէ՛ս հնչիւն-հնչիւն կը ծիծաղէր Բանեանի անզօր զայրոյթին վրայ։ Ու կարծես աչքերուն դէմն էր դեռ, ինչպէս ոգևորուած վեր ցատկեց ապչիկը սեղանէն ու սկսաւ ուրախութենէն ծափ տալ, երբ երկրորդ փարթին ալ իրենք էին չահեր։

Բայց յանկարծ սթափեցաւ ու մտաբերեց, որ քնանալու էր։

«Երևի թղթախաղը անվարժ ուղեղս գրգռեց». մտածեց ազան, դարձաւ կողքին վրայ ու մտածումները մէկդի հրելով՝ փորձեց քնանալու։

Բայց իզուր էր այդ կռիւը. քունը գա՛լ չէր ուզեր, իսկ այդ պատկերները՝ երթա՛լ։

Ե

Ջրի վերի անկիւնը դեռ կը նեղնար։

Եւ մէկ եղերքէն միւսը անցնելու համար ծառի երկայն բուն մը ձգեր էին ափէ ափ իբրեւ կամուրջ, որ անմիջապէս կը հանէր փայտարմով պատած ծծումբի փոքրիկ աւազանը։

Եռեւի քարակոյտէն վար ցատկռտուղ դեռատիը փայտարմին կռնակէն ոյր կու տար, կը սեղմուէր պահ մը ծառ-կամուրջին տակ, ու անմիջապէս ի՛ջչտապէր ցան-ցիր լերկ ժայռերուն մէջ իր վրիժուրէ բանուածքը նորէն փռելու։

— Օրի՛րդ, զգո՛ւշ։— ըսաւ Սիրաքեան։— կամուրջնիս քիչ մը նոհմապատական է։

— Աւելի՛ ազէկ։— բացականչեց ազջիկը, վազեց թափով բունին վրայէն ու բաղնիքին ոտքը կանգ առաւ։

— Ուժերնիդ ժողուեցէ՛ք· ալ բարձրանանք պիտի չարաչնակ։— նկատեց ազան՝ քարքարոտ ու բաւական սեպ ելքը մատնանիշ ընելով։— Եւ դեռ ասիկա համեմատաբար հանդիստ մոտն է։ Զեզի առաջնորդել ըսեմ, որ այս ճամբան մեր երէկուան Տիկոր իջնելը չի նմանիր· քիչ մը ոտոտակը պիտի քարէ քար։

— Դուք ձեր քարերովը ինծի չէք վախցներ։ Մա՛րշ։— եղաւ պատասխանը։

Ու քով քովի սկսան բարձրանալ։

Կէս օրէն վերջն էր։ Ցանի մը ժամ է՝ արեւը պինդ մտեր էր ամպերու կարաւանի մը հետը և ոչ մէկ կերպ նորէն զուրս հլլելու տրամադրութիւն չէր ցոյց տար։ Որով ախորժելի թարմութիւն մը կարծես դեռ կրցեր էր պահպանիլ մամռոտ ժայռերուն մէջ։

Հակայ ու թզուկ ժայռերու ամբողջ ամբոխ մըն էր չուրջը, ոմանք իրենց դիրքերուն մէջ անչարժ՝ իրարու ուսէ ծամածուռ գլխքերով վար կը նայէին լուռ· հո՛ն ձորին մէջի ալիքներուն կեզրըռտուքը դիտելու, որ ո՛չ վերջ ունէր, ո՛չ գադրում։

Եւ այդ խառնած հոծ բազմութեան մէջէն ոտքի նեղ արահետը դժուարով իրեն ճամբայ կը բանար՝ չարաչնակ ծռուելով, կարուելով, կոր տալով ինքն իր վրայ։

Այլ եւս զոյգ երթալ հնար չէր։ Յարմար ելքը ընդհրուհին թողած՝ ազան մէյ մը ետ կը նայէր, մէյ մը քովի քարերուն վրայէն կը ցատկէր։

Սկիզբները դեռ կը խօսէին առ-առ. բայց վերկէքի պատճառած չնչառութեան դժուարութիւնը չտուաւ կարեց ամէն խօսակցութիւն. հազիւ մէջէմէջ չնչաս բառ մը կը փախանակէին իրարու հետ. անկապ ու փրթած կտոր մը իրենց մտածումներուն:

Այս երրորդ օրն էր, որ միասին պատյան կ'ելլէին: Առաջին անգամ ամբողջ ձորի երկայնքով չրջան մըն էին ըրած վանքի տակէն: Նախորդ օրն ալ եղած էին Տիկոր գիւղը, ուր օրիորդը տնօթևցիկ էր. տգան առնէ մը ճարեր էր լաւաչ ու պանիր ու պատէգի պէս անոյշ մը ծառի մը տակ նստեր կերեր էին միասին. վերջը չրջեր էին գիւղը, ուշերակ եկեղեցին, և ուշ տանն վերադարձեր առէն՝ հետերնին գիւղացիներէն գնած բաւական հաւկիթ ու երկու հաս բերելով ընտանիքին համար:

Այս բոլորը սկսած էր տեսակ մը ընտանեկան կապ առաջացընել տղու ու ֆռանսահներու մէջև: Իրիկուններըը արդէն միշտ անոնց էր թէյի. վերջի օրն ալ հրաւիրեր էին ճաշի՝ միասին բերած հաւը միասին ուտելու պատրրաակով:

Սկիզբը տգան տեսակ մը քաշուեր էր ու վարաներ, երբ աղջկան հետ առանձին մտեր էին ձորը. անորոշ վախ մը անդադար կամ անպատճառ բան մը ընելու. ինքզինքը ի՞նչպէս պահէ և ի՞նչ խօսի: Բայց Շուշիկի պարզ, կարուկ և անմոգ վարմունքը չուտաւ փոխանցուեր էր և անոր. քիչ-քիչ սկսեր էր սիրտ առնել, մինչև որ հետզհետէ բոլորովին ատացեր էր իր չարժուձևներուն ու լեզուին բնական ազատութիւնը:

Ալ կծիկը բացուած էր. անցեալ, ներկայ, ապագայութիւններ, դրացիներ, գիւղեր, հակառակներ բոլորը խառնըելեր էին իրարու այդ երկու օրուան մէջ: Մէկ խօսքով հիմա գործեր էին արդէն «լաւ բարեկամներ», ինչպէս աղջիկը կ'ըսէր:

Շուշիկ ելքէն չնչասպառ վերջապէս նստեցաւ քարի մը վրայ:

Տգան մօտեցաւ ու կեցաւ դիմացը:

— Յոգնեցա՛ք: ես ձեզի չըսի՞:

Օրիորդը խոր չունչ մը առաւ ժպիտը չրթունքին. և ձեռքը դրաւ կաթծքին չնչառութիւնը կանոնաւորելու համար:

Լեցուն ու թուխ դէմքը հաճելի կարմիր մըն էր առեր ու պարզ յորդի զլխարկին տակէն ցոլաններ սիփ-սև աչքերը խնկեր էին երիտասարդի նիհար դէմքին:

— Խմկանքի օգը ձեզի ալէկ եկաւ, պարոն Սիրաքեա՛ն.— նկատեց աղջիկը յանկարծ:

— Ի՞նչպէս:

— Դէմքերնիդ սկսեր է արիւն չրջան առնել և կարծես լեցուիլ:

— Մի՞թէ.— կմկմաց տգան ու իր դէմքէն քիչ մը աւելի ուժով սկսաւ «արիւն չրջան առնել»:

— Կը հաւնի՞ք ձորիքաւս.— հարցուց ապան և դեռ պատասխան չառած աւելցուց.— Եթէ գիտնաք, օրիորդ Մելինա՛ն, թէ ինչպէս կը սիրեմ այս բնութիւնը: Լեռները, ձորերը, այս չէզոտ ժայռերը, այս ազմկոտ խելագար գետակը, վե՛րը գիշատիչ հարթութիւնը, տրտնջուն ծաժանուտ ծովը: Եւ իմ մխիթարութիւնս ու հաճոյքս բըռնութիւնն է տրդէն. երբ կտրած է սիրտս՝ կ'երթամ անոնց. ու ծառերու չշուխին տակ թափառելն՝ կը մոռնամ, կը հանգստանամ կարծես. չատ կը սիրեմ բնութիւնը:

— Բայց, գիտէ՞ք, տարիկ քիչ մը վտանգաւոր նշան է վարպետութեան մը համար:

— Բնութիւնը սիրե՞լը:

— Այո՛, բնութիւնը սիրե՛լը.— կրկնեց ազջիկը ժպտելն:— Գիտեմ ուր լսած եմ, որ բնութեան այդ բուռն սէրերուն կնոջ փոխարէտ սէրերը կը յաջորդեն սովորաբար: Զուր եղէ՛ք այդ նախերգէն:

— Է՛հ.— բրաւ ապան ուսը թոթուելով ու խնչափառի պէս կարմրելցաւ:

— Իրա՞ւ, պարոն Սիրաքեա՛ն, ներեցէ՛ք հետաքրքրութեանս, տմենևին սիրա՞ծ կ'ք:

— Ո՛չ:

Ու գլուխը խոր վար կախած՝ սկսաւ ձեռքի փայտովը երկու ժայռի ճեղքին մէջ գորգ կապած մամուռը ուրըշտել:

— Եւ սիրելու պէտքը չէ՞ք զգար:

Երիտասարդը քիչ մը մտածեց ու թեթև մը գլուխը բարձրացուց:

— Շիտակը չգիտեմ ինչ պատասխան տամ: Նախ վերջին քիչ-չատ հասուն տարիներս միշտ կանոնց չրջանէ հեռու եմ ապրած, որպէս զի արդէն ինքնին առիթ չկայ այդ զգացումներուն: Երկրորդ մը՝ երբ մարդ անգամ մը գլուխը գրեր է կուսակրօն գառնալ՝ այլևս բնականաբար մէկ կողմ պիտի նետէ այդ հարցերը, եթէ նայն իսկ մէջէմէջ անորոշ բաներ մը իր մէջը գառնան:

— Բայց եթէ այդ անորոշ բաները յանկարծ որոշնան, եթէ, օրինակի համար, ազջկան մը սիրահարիք, ի՞նչ կ'ընէք:

— Այդ մէկը անկարելի՛ է:

— Ինչո՞ւ:

— Ջնի՛ թողներ, որ խնդիրը այդչափ հեռուները երթայ: Այդ առեակ զգացման մը արթընցելը նշմարելուս պէս՝ ամեն կերպ կ'աշխատիմ առաջը առնեմ, կը հեռանամ, ինքզինքս կ'ըզբաղեցընեմ. վերջապէս կը մոռնամ, կը խղդեմ:

Աղջիկը դէմքի հեգնական ցնցում մը ըրաւ:

— Կը կարծէ՞ք: Բայց ենթադրենք, որ այդ ամենուն հակառակ յաջողեցաք ձեր զգացումները մարել:

— Ալ ի՞նչ գիտեմ. երևի ինքս իմ մէջս կը տանջուիմ: Ինքնին

հակաբնական ու անմխիթար բան է կաւսակրօնութիւնը անչուշտ. բայց ի՞նչ կարելի է ընել. եթէ յանձն առէր՝ խաչդ պիտի կրեա։

Շաւշանիկ լուռ վայրկեան մը չնչա նայեցաւ տղու գլխահակ դէմքին, ուր տխուր մը համակերպութիւն, դժգոհութիւն ու վճռակամութիւն իրարու էին փարած. ու վերջապէս ըսաւ.

— Ուրիշ խօսքով կնոջ մը սէրը, կենակցութիւնը, ընտանիքի կեանքը ու իր մանր ու խոշոր բաղդատորութիւնները դուք կամքով կը զոհէք ու ձեզի կը պատապարտէք մչտական մենակեցութեան. միևնոյն ժամանակ համոզուած ձեր վարմունքի անիմաստ ու հակաբնական ըլլալուն։ Եւ այս բոլորը միա՛յն հատարակութեան ծառայել կարզանալու համար. չէ՞. մէկ բառով՝ կատարեալ անձնազոհութիւն։

— Անուանեցէ՛ք ինչպէս որ կ՚ուզէք։

— Ձեր գիտակցութեան ու ձեր գործունէութեան մէջ միչտ հակառակութիւն մը կայ, որուն ես չեմ համակիրը. ձեր ընել ուզածը և ձեր համոզումները իրար չեն բռներ, չեն բղխիր իրարմէ. այդ ճամբան վա՛ր, չա՛տ վար կրնայ տանիլ, բայց վո՞ր. օ՜, երբե՛ք, չեմ հաւատար։

Բայց նկատելով, որ տղան միչտ գլուխը կախ իրեն ոչինչ էէր պատասխաններ՝ յանկարծ անդրադարձաւ.

— Սակայն, պարո՛ն Սիրաքեան, չըլա՛յ թէ խօսքերս իրեւ վիրաւորանք ընդունիք. գուցէ կը սխալիմ. մեզի դժբաղդութիւն մը ունիմ, որ իմ կարծիքս լուել չեմ կրնար։

— Եւ չատ ալ կ՚ընէք, օրիո՛րդ։ Վիրաւորուելու բա՛ն մըտք չունիմ. վատահ եղէք. — պատասխանեց երիտասարդը լուրջ ու դառն ժպիտով մը։

Ու խոր չունչ մը առնելէն առքը չարունակեց.

— Իսկ ինչ կը վերաբերի ձեր նկատողութեան, մէջը անչուշտ ճշմարտութիւն մը կայ. բայց կայ և կարծեմ փոչ մը անորդարութիւն ու երեսանց դատողութիւն. միևնոյն անկեղծ խօսելով՝ ես ինքս ալ չեմ կրնար որոչել, թէ ուր կը վերջանայ ճշմարտութիւնը և ուր կ՚ըսկսի անորդարութիւնը։

— Ազէ՛կ։ Հիմա որ փոխադարձաբար իրարու հայհոյեցինք ու կշտացանք՝ եկէ՛ք հաչութինք նորէն ու ճամբանիս չարունակենք. այո՞։

Նայեցան իրարու, ժպտեցան, ու չարժըւեցան առաջ։

Մօտեցեր էին արգէն ձորի բերնին, ուր արահետը յանկարծ սկսաւ ուելի սեպանալ. ժայռերը խառնցան՝ պիղատած իրարու վրայ՝ տեսակ մը մռայլ ու անհանդն սանդուղ կազմելով։ Սանդուղ մը, որուն տասիճաններուն հետիհետէ կը խոչորնային՝ վերելքը դժուարացնելով։

Աղջկան չրջազգեստը ուելի ևս կը խանգարէր տասիճանէ տասիճան տաք փոխելը։

— Ձեւ քերնիդ տուէ՛ք ինծի· — ըսաւ տղան։

Յաւակից սանդուղի վերի ոտքը, բռնեց ամուր անոր մեկնած ձեռքէն և քաշեց իր կեցած ժայռին վրայ· յաւակից ինքը յաջորդին վրայ ու դարձաւ խոյին ընկերուհիին օգնելու։

— Ա՜, ի՛նչ հանգիստ է այսպէս·— բացականչեց աղջիկը՝ ոտքը ժայռի եզերքին յենած կէ՛ս մը օդին մէջ, կէ՛ս մը տղաս թեւէն կախուած·

— Եւ ի՛նչպէս ալ ուժով էք։

Երիտասարդը բառն հաճոյք մը ըզգաց յանկարծ այդ գովեստէն։ Սիրտը սկսաւ բաբախել ու ա՛լ աւելի պինդ բռնեց աղջկան մերկ դաստակէն։

Նո՛ր զգացում մը, կարծես անզո՛ւսպ հպարտութիւն մը սկսեր էր չրջան առնել իր ջիղերուն մէջէն։

Հպարտութիւն մը իր առնական ուժին, հպարտութիւն մը իր այդ ուժերէն աղջիկ մը կախուած ըլլալուն։

ՀԻՆԳ

Գլխաւոր ճամբուն մօտիկ, խոշոր սալորենիի մը տուներին տակ, թաւ խոտերուն մէջ, կռնակին վրայ փռուեր էր վարպետաուցուն։ Երկու թեւերը գլխուն տակը, բարակ ու երկար ձողուն մը ակռանեռուն մէջ ու աչքերը յառած դիմացը։

Դիմա՛ցը ձորի չեզ եզերին, ուր խիտ, չեչոտ ու փոքր ժայռերու ամբողջ հօտ մը արեւի բարկ ճառագայթներուն տակ, տոթակէզ ոչխարներու նման, գլուխներն իրարու չուքին մէջ թաքցուցած՝ կարծես հիմա վար պիտի վազէին. վա՛ր դէպի գետակը իրենց տապն ու ծարաւը մարելու։

Բայց բոլորովին ուրիշ պատկերներ էին երիտասարդի յառած աչքերուն դէմ. ա՛ն իր մտքի ու ծոյլ դիրքին մէջ անշարժ՝ ո՛չ թէ կը դիտէր, այլ կը մտածէր։ Երկա՜ր։ Մինչև որ դանդաղ չարժուձեւով մը հանեց գրպանէն ժամացոյցը ու նայեցաւ։

Շուտով կէս-օր։ կամաց-կամաց երթալու էր վանք, պատառ մը բան ուտելու և անկէ օրիորդ Մելինեանին։ Այսօրուան պատրոյն անոր արդէն չատոնց ընտրած էր տղան։ Ընտրած էր ձորի ամենէն ժայռոտ ու ամենէն սեպ չափնարէն մէկը, որ վերը սրտերը կը հանէր. պէտք էր, որ վերելքը դժուար ըլլար· տակիկա անհրաժե՛շտ էր։

Ու երիտասարդը ժպտացաւ ինքնաբաւական. ու ներքին յուզուած անհամբերութեանը ալ չդիմանալով՝ կռնակին վրայէն մէկ չարժումով զարձաւ դէմքին վրայ և յինուելցաւ ալ արմուկին։

Նոյն վայրկեանին էր, որ հեռուէն ճամբուն վրայ ամբակներու արագ մը լսուեցաւ. տղան մտացիր ալ կազմ նայեցաւ մեքենաբար. բայց յանկարծ չկուելցաւ, կնճռոտեցաւ ճակատը ու դէմքին գծուելցաւ մաղձոտ զգոհութիւն մը, անսխալ անակնկալի մը ծամածռութիւնը։

Իսկոյն ճանչցեր էր իր երկու ընկերը։

կամաց մը ևս ոտքի ու ծառերուն հանուէն դուրս եկաւ ճամբուն վրայ։

— Արտաչէ՛ս.— պոռացին երկուքը միասին, ձիերը խթեցին ու ճիղ անոր առջևը թամբելէն թռան վար։

— Հը՞, ի՞նչպէս ես. ի՞նչ ըրիր նայինք։

— Ալեքսանդրապոլ մեքինաներէն մարդ տեսա՞ր։ Բագրատը ինչո՞ւ միասին չառիր. չէ՞ որ Անի գալ կ՚ուզէր։

— Վախնամ մեզի չա՛տ ապասելիր։

— Վանահայրը ի՞նչ բանի է. հո՞ս է։ Ջխօսի՞ս։

Վրայ թափեցին Մինասն ու Սերոբ խառն ու արագ՝ երկու կողմէն տղու ձեռքերը պինդ թափ տալով։

— Վանահա՞յրը. ա՛յ, հո՛ս է. ա՛յսինքն... չգիտեմ. այս առտու քիչ մը ուշ եմ ելեր քունէս ու-դիտ երեսը տեսած չեմ.— կմկմաց վերջապէս։

— Ա՛խ, գո՛ն ծոյլ.— բացականչեց Մինաս, իր հատ ձայնովը։ Սա երկարահասակ, թիկնեղ, կարմիր ու ալրած դէմքով, կլոր ու ցանցառ մօրուքով, փոքր ու սուր աչքերով երիտասարդ մըն էր։

— Իակ մենք ժամը հինգէն իվեր ապասդակներուն վրան ենք։

Վրայ բերաւ Սերոբ, որ նախորդի հակապատակերն էր. փոքրահասակ, թաւ մօրուքով, ուելի նուրբ կազմով. ու տեսակ մը մեզմ, մելամաղձոտ հայեացքով, որ ակնոցներուն ապակիին հանուէն ուելի մեծուր ու ուելի մթապատող կը դառնար։

Արտաչէսը մէջերնին առած՝ ձիերու սանձերէն քաշելով՝ երեքը միասին դէպի վանք գիմեցին։

— Ի՞նչ տեսակ մարդ է վանահայրը։— հարցուց կարճահասակը։

— Քիչ մը կծծի, քիչ մը չատախօս, քիչ մը խորամանկ, քիչ մըն ալ յանդուգն. ուերակի մը վանահա՛յր։

Տղու ձայնին մէջ արհամարանքի ու հեգնելու այն աստիճան պարզ չեչտ մը կար, որ երկու ընկերները անգամ մը ակամայ իրարու նայեցան։

— Երեւի, նեղացուցեր է քեզի.— նկատեց երկարը։

— Ընդհակառա՛կը. մինչեւ անգամ ինձի սօրվեցուց չուառով եպիսկոպոս դառնալու խորունկ գաղտնիքը։

— Վա՞յ, ո՞րն է ասոնցնէ այդ գազանիքը։

— Շիտակը հիմա տրամադիր չեմ։ Աւելի ապէկ է նայէն իրեն կը հարցնէք. իրիկո՛ւնը։

— Ինչո՞ւ անպատճառ իրիկունը։

— Ցորեկը սաստիկ զբաղած է, երկար պատմութիւններու գլուխ չունի. և լուրջ է զբաղուած. պէտք է վազել արագ արագ, պէտք է գիւղացիները հակել ու հայհոյել. պէտք է մառանը լեցնել. մառա՛նը, կատակ չէ։ վանքի մառա՛նը։

— Այդ մարդը քեզի բան մը ըրեր է. ի՞նչ տարօրինակ խօսելու եղանակ է.— կրկնեց երկարահասակը խոժոռած դէմքով մը։

— Տարօրինա՞կ.— հարցուց Սիրաքեան անփոյթ։

— Հա՛, Սմբատը քեզի բարեւ ըրաւ.— ընդհատեց յանկարծ ակնոցաւորը։

— Սմբա՞տը ով է։

— Քանի՞ Սմբատ կայ մեր ընկերներուն մէջ.— պատասխանեց ընկերը տեսակ մը սրտնեղած։

— Ա՛խ, ա՛ն. նայէն նոյն դատարկախօ՞սն է։

— Դատարկախօսը դու ինքդ ես։

— Ահիկա արգելք մը չէ՛ որ ան ալ նոյն արհեստը ունենայ։

Եւ ասիկա ըսուած էր այնպէս լուրջ ու պարզ չեչոռավ մը, որ ընկերները չկրցան ծիծաղնին զսպել։

— Երեւակայէ՛, ան ալ վճռեր է չաւոռավ սակաւագ ձեռնադրո՛ւ.— աւելցուց Մինաս։

— Մ՛թթ։ Այդ մե՛ծ զոհաբերութիւնը չիտակը անկէ բնաւ սպասելի չէր։

Ու «մե՛ծ զոհաբերութիւնը» արտասանուած էր ինքնայատուկ չեչոռավ մը։

— Ի՞նչ ըսել կ՛ուզես։

— Չէ որ չորեւնակ կը կրկնէր, թէ ինքը վանական կեանքի յարմարութիւն չունի, թէ իր կոչումը...

— Կոչումը ապէկ, բայց քննութեանը կարեւոր է։

— Հա՛, առանկ ըսէ. հիմա կը հասկընամ. անչուշտ գիւղէ գիւղ անանձնական ու անօթի թափառելէն աւելի ապէկ է դիւցազնական անձնազոհութիւն մը ընելը։

— Իրաւունք չունի՛ս ուրիշները այդպէս հեգնելու.— յանդիմանեց երկարահասակը վրդոված։ — Ան ինչո՞վ է մեզմէ պակաս, որ քիչ մը պարզ ու միամիտ բնաւորութիւն ունի. ուրիշ ոչինչ։

— Ուրեմն մինչեւ անգամ մեզմէ բանավ մը աւելի է.— կսկծաց Սիրաքեան հանդարտ։

Երկու ընկերները նայէն նայեցան իրարու ու լռեցին։

Կէս ժամուան չափ վերջը վանահայրը դարձաւ վանք։

Արտաչէս իր երկու ընկերները ներկայացուց ու պարպուած ամանին վրայ կեցած խօսակցելու վրայ էին, որ անդին Քանանաններու սենեակին առջևը երեւցաւ տիկինը պայտակին հետ։

Սիրաքեան բարեւեց հեռուէն։

— Ո՛վ են.— հարցուց Սերոբ։

— Քանանան կարօյի հօրեղբայրն է հոս իր ընտանիքին հետ. չատ համակրելի մարդիկ են. անկե՛պծ, հիւրասէ՛ր. իրիկնանները թէյի հոն եմ սովորաբար. այս իրիկուն միասին կ՚երթանք՝ չատ գոհ կը մնան։

— Լա՛ւ. իրիկուանը ժամերգութենէն վերջը երթա՛նք.— համաձայնեցաւ Մինաս։

— Ինչ ժամերգութիւն. հոս ամեն օր ժամերգութիւն չկայ։

— Ինչո՞ւ.— պնդեց երկարահասակը։— Եկեղեցի կայ, անա՛ հայրսուրբը հոս է, մենք ալ դպիրները։ — Եւ դիմեց ուղղակի վանահօրը.— Հա՛յր-սուրբ, փառաւոր եկեղեցի մը ընենք. քանի օր է սիրտս կարօտցեր է։

— Ի՛նչ կարիք կայ ատրճոտ իրիկուանով.— մրմռաց Արտաչէս դժգոհ։

— Ախորժակը կիրակի առաւօտեան պահէ, որդի՛.— կցեց վարդապետը։

Ու արագ մկկ-երկու քայլ առաջ վազելով՝ վերցուց գետնէն քարի կտոր մը ու վարժ թափով մը նետից դիմացի կանանչեղէնի ածուներուն մէջ, ուր հաւեր էին նետս մտեր։

— Ըլ՛ըչա, անիծածնե՛ր.

— Շիտակ է, Մինա՛ս. այսօր եկեղեցի ընելու ի՞նչ կարիք կայ. միա-մինակ. մէջտեղ ա՛չ մարդ կայ, ա՛չ ժողովուրդ.— ուսկզցուց իր կողմէն ակնարկութիւնը ու նտեցաւ սեմին վրայ։

— Եկեղեցական կարգերն ու պաշտամունքները ժողովուրդին ցոյց ընելու համա՞ր են նշանակուած։

— Ժողովուրդին ցոյց ընելու համար չէ, տիրացո՛ւ ջան, բայց իսարիկ ժողովուրդին համար է. ալ ի՛նչ ժամերգութիւն, եթէ մէջտեղը ժողովուրդ չկայ.— վճռեց հայր-սուրբը հաւերու արշաւէն ետ դառնալով։

— Կարծեմ ազօթքն ու ժամերգութիւնը Աստուած փառաբանելու համար է, հա՛յր-սուրբ.— ըսաւ երկարահասակը դէշ քօղարկուած կչտամբանքով մը։

— Ա՛ որդի՛, Աստուած քու փառաբանութեա՞նդ է կարօտ։ Եւ վերջապէս մինչեւ հիմա արդէն ձանձրացած կ՚ըլլայ ամեն օր մի՛ւնոյն բանը լսելէն.— կատակից ձեռքուկը ճերմկած պեխերուն ու մօրթուքին մէջէն։

Մինաս բոլորովին կընճռտուց ճակատն ու դէմքը։

— Ուրեմն ի՞նչպէս արտայայտենք մեր հաւատքը, մեր կրօնա-

կան սուբը զգացումները. չէ՞ որ ժամերգութիւնը մեր նեղքին յուպումներու խաստավանութիւնն է սիրոյ խօսքին առջև:

— Տիրացո՛ւ, հաւատքը ուրիշ բան է, եկեղեցին ու ժամերգութիւնը ուրիշ բան: Նեղքին հաւատքը, ինչպէս որ կ'ըսես, երկարաբարակ արտայայտութիւններու պէտք չունի. իսկ եկեղեցական արտաբոզութիւնները հնարուած են ժողովուրդի սրտին համար. «ի սփոփանս և ի մխիթարութիւն հաւատացելոց»:

Ու վերարկուին թևը նետելով իր ամուր քալուածքովը մտաւ վանքին բակը:

— Այսպէ՛ս է որ բոլորի սիրտը պատիցուցեր են. — կանչեց Մինաս՝ վարդապետի հետաքրքրուն պէս՝ իր վրդովուած հոգիին բռնադատ մաղձովը: — Ո՛չ. մենք նորերս պարտական ենք նորէն հաշիւ ու ազնուութիւն մտցընելու այդ սուբը կարգերուն ու ազօթքներուն մէջ և բծախնդիր ճշդութեամբ ամէն ինչ կատարելու:

Սկսաք ձեռքով ու գլխով տատամսոտ ծամածռութիւն մը բրաւ ու կնոջ խորհրդաւոր ցած ձայնով մը.

— Սկզբունքով քեզի համաձայն եմ. սակայն ժամերգութիւն մը ունկի կամ պակաս, սակէ ինչ վնաս: Եկեղեցին ու դասանանքը ինծի համար ամենէն առաջ վանան մըն է մեր ազգային գոյութեան:

— Սիրելի՛ս, քանի սակ արժէս դուն ու քու վանդ, երբ ժողովուրդը հետզհետէ սառն ու անտարբեր կը դառնայ դէպի հոգևոր ակառնութիւնն ու կրօնը:

— Յաւելի է, հոգի՛ս, յաւելի. բայց ի՞նչ կրնանք ընել:

— Ի՞նչ. ա՛յ, նա քեզի ըսեմ: Եթէ կ'ուզես, որ ժողովուրդի մէջ նորէն ազգութիւն ձեռք բերես՝ պէտք է ամենէն առաջ իր հաւատքը, իր կրօնական զգացումները արծարծես: Եւ որպէսզի իր այդ զգացումները բորբոքիս յաջողիս՝ պէտք է ինքդ ամենէն առաջ այդ ջերմ հաւատքը քու մէջդ վառես. միայն ճշմարիտ ոգևորութենէ ու խորին համոզումէն բղխած խօսքը ժողովուրդի սրտին կ'ազդէ:

— Պատմանաւ, որ այդ համոզումն ու ոգևորութիւնը քնածին ըլլան. — նկատեց, Սկսաք իր մտածումներուն մէջէն:

— Քնածին թէ ա՛չ. քնածին պիտի ունենաս: Հոգևորականներուս պայմութեան խմասը, մեր ազգութեան ապրիլը հաւատքն է միայն: Հոգևորականութիւնը բարձրացընե՞լ կ'ուզես՝ պէտք է հարցնիս նմանակուած դիմես: Հաւա՛տք քու պաշտօնիդ վրայ վերա՛ւոտ նշանակուած ըլլալու, հաւա՛տք մեր պատմական գոյարիկ ձեռներէն ու ազօթքներուն, և ասոնց սուբը հոգիին չնորհքովը կարգադրուած ըլլալուն, հաւա՛տք հանդերձեալի արդար հատուցման յաւիտենական գեհենին ու մշտնջենական երջանկութեան, որուն դէմ ինչ է մեր երկրաւոր վաղանցիկ կեանքը:

Այս խմասի ճառեր Սիրակեան յաճախ էր լսած Մինասի բեր-

նէին, բայց կարեւորութիւն չէր տուած՝ «Մարդը հաւատք ունի, ինչ ընենք» մտածելով. դեռ անակ մը պատկառանք ալ էր զգացած կարծես։ Բայց այսօր ինքն ալ չէր դիտեր ինչպէս՝ քանի աչքերը ընկերոջը դէմքին դամած՝ անոր խօսքերուն ականջ կը դնէր, այնքան ուշի ուշի անախորժ ճմլոց բան մը ու վրդովմունք կ'ըզգար իր մէջը. ոչ մէկ կերպ ինքզինքը չէր կրնար ազատել այն ըզգացումէն, որ այդ ամբողջ ոգեւորութիւնը չինծու, փքուն ու անիրական բան մը ունէր իր մէջը։

Եւ իր այդ տպաւորութիւնը ընկերոջը երեսին նետելը չուտով պահանջ դարձաւ իրեն համար, բայց ինքզինքը զսպել ուզեց. վիճել չէր ուզեր. «իրե՞ն ինչ ուրիշներըը»։

Արդէն ընկերը՝ Սերոբն ալ խօսքը դարձուց կատակի.

— Բայց քանի որ այս երկրաւոր վազանցիկ կեանքին մէջն ենք դեռ՝ ուշի լաւ է որոշենք՝ թէ ո՞ր պիտի երթանք հացէն առքը պատելու. և խօսքը Արտաչէսինն է։

— Հացէն ա՞ռքը.— հարցուց Սիրտքեան ու ցնցուեցաւ. այլեւս ջուրն էր ինկած Շուշիկի հետ պատյոը։

— Այդէսի զժուար է ընարե՞լը։

— Տեսնե՛նք. երեւի տեղ մը կ'երթանք.— պատասխանեց վերջապէս զժկամ։

ԸՆ

Դուբոյի նորածին լոյսը եկեղեցիին նեղ ու երկար փոքրիկ պատուհաններէն հազիւ ներս կը սպրդէր. և թանձր խաւար էր դիզուեր անկիւններըը, սիւներուն տակը ու գմբեթի փոսին մէջ։

Խորանին վրայի զոյգ մը մոմերուն ուժասպառ լոյսերը վարպապի արտասանած խրատքանչիւր բառէն կարծես կը սարսռային, տեսակ մը հիւանդոտ դեղնութիւն թափելով իրենց անմիջական մօտիկ փոքր տարածութեան մը վրայ, որ հետզհետէ օրքան հեռու այնքան ուշի կը գունաթափէր, կը մարմրէր, մինչեւ որ մութի չերտերուն մէջ վերջնականապէս խեղդուէր։

Վարդապետը սիւնին տակը արձանացած՝ իր աղօթքները կը ծամծմէր իրարու ետեւէ. դպիրը ազատ ու զուրչ եկեղեցական չապիկը վրան, ժանգոտ ու զոզանջոտ բուրվառը ձեռքը սեղանին դէմ կեցած՝ վարդապետին արտաբերմունքը հասնելու կը ջանար. մինչ ախթացուները՝ նոյնպէս մամռտ ու զուրչ չապիկներու մէջ՝ գմբեթին ճիշդ տակը

Գիրք էին բռնած պրակալին առջևը. ու բարակ մամիրով չարականը լուսաւորած կ'երգէին իրենց կարգին՝ իրենց առաւելութեան ու արուեստին գիտակից հասառտ ու լեզուն չնչաբով:

Երեքէն միայն Սիրաքեանն էր, որ կէս քայլի մը չափ ետ քաշուած, ձեռքերը ծալլած կուրծքին ու գլուխը քիչ մը ալ ծռած անշարժացեր էր:

— Տղա՛յ, չերգե՞ս.— դարձաւ Սերոբ յանկարծ ընկերոջը դազաթի մը վայրկեանին:

— Գիտես որ ա՛չ ձայն ունիմ, ա՛չ ալ եզանակներէն բան կը հասկընամ.— պատասխանեց ազան կարճ:

— Բայց վերջապէս պիտի սորվի՞ս, թէ չէ՞.— վրայ տուաւ երկարահասակը չատպ ու սկսաւ «ալելուիա»-ն:

«Սորվի՛լ...»:

Աբռաչէս աչքերը խորանի մամիրէն մէկուն լոյսին յառած կը մտածէր:

Ընկերը իրաւ՛ունք ունէր. այդ բոլոր երգերը, սաղմոսները, մաղթանքները, ազօթքները, չէ՞ որ այդ իր արհեստն էր դառնալու չուտով. իր արհե՛ստը, գիտա՛լ այդ ամենը և ամեն օր կրկնե՛լ: Յանկարծ սկսաւ հաշուել, թէ տարեկան ընդամենը քանի՞ ժամ է իր այդ պարտականութիւնը: Առաւօտները մօտ երկու, ժա՛մ մը իրիկունը, ուր օրերն ու պատարագը միասին առնելով՝ մինչև հաչիւ օրական չորս ժամ. ան ալ օրուան ու աշխատանքի ամենաթարմ ժամերէն»: Ու մտքով սկսաւ երկար-բարակ 4-ը 365-ով բազմապատկել. եղաւ 1460:

«Օրիորդ Միլինեանը գուցէ իրաւունք ունի. մեզք չէ՞ ձեւական պարտականութեան մը համար ապահոված այչա՛փ ժամանակին»:

Տիտակ մը սրահազութիւն եկաւ վրան, ու մտածումները ընդհատուեց:

Մինաս անոր առջևը կեցած՝ ազօթքի խօսքերուն հետևելով՝ չուտ-չուտ կը ծռէր ու կը խաչակնքէր երեսը. խոշոր, փոռաւար ու ծանր խաչեր ամբողջ կուրծքին ու դէմքին վրայ:

Աբռաչէս սկսաւ դիտել. նախ չրթունքը խածաւ միսին և ուշից կարեւորութիւն չտալ. բայց չուտով սկսաւ ջղային դառնալ ու զայրանալ:

Այդ մէկոջին էր, որ եռեւէն եկեղեցիին դրան թեթեւ ճռինչը լսուեցաւ:

«Քահանաններն են». անցաւ ազու գլխէն, ամօթի պէս բան մը վազեց մէջէն ու առանց ետ դառնալ համարձակուե՝ ականջները սրեց:

Ներս մտնող չկար. գուցէ հոգի էր, կամ դուռը ինքնին: Միսին ազուն մէջ ա՛լ գամաւած մնաց այն համոզումը, թէ ուր որ է հիմա քահանաները ներս պիտի մտնեն: Ընկերները նախորդ իրիկունը յայտնած էին անոնց այս առաւ ժամասացութիւնն ըլլալու մասին, և կիները չատ հաւանական է, որ հետաքրքրուէին:

Դուրսէն լսուղ ամէն ծպտուն ազու սիրտը նետել կու տար ու լսելիքը կը լարէր։

Անգամ մը նայեցաւ իր վրան. երկար չապիկը մոմոտ ու ազոտ կախուած էր ուսերէն, կուրծքի բացուածքէն իր հագուստները կ'երեւային. իրաքանչիւր թեւին վրայ վեթըռատած ոսկեթելով բանուած խաչ մը. նոյն վեթըռատած ոսկեթելը նաեւ վարը չապիկին եղերքը, որուն տակէն տաբատին ոտքերը չատ ծիծաղելի կերպով դուրս կը նետուէին։ Նայեցաւ երկար իրեն, վերջը փորձի համար նայեցաւ իր ընկերներուն վրայ և յանկարծ չա՛ս, չա՛ս տարօրինակ թուեցաւ իրեն այդ հագուստները, այդ դիրքը։

«Ո՛վ գիտէ ա՛րչափ մեզի մեզքնան պիտի ծանեւաններըը»։ անցաւ մտքէն. ու ամօթէն ու զայրոյթէն կարմրեցաւ։

Ո՛չ, չէր ուզեր, որ իրեն այդ դիրքին մէջ տեսնէին. պէտք չէր։

— Ես կ'երթամ.— չսպասեց կամաց մը ընկերներուն և առանց անոնց չնաւարած դեմքերուն ուշ դարձընելու՝ մաու պահարան, հանեց չապիկը ու պահարուն տակէն արագ դուրս սպրդեցաւ եկեղեցիէն։

Դուրսը պայծառ օր էր արդէն։ Արեւը ձորի ձախ չրմունքին վրայինի մէկ չարժումով ոսկիի գոյնն էր քաւեր. ու թո՛րմ, զո՛վ նոտան օդ մը։

Բոլոր կրծքովը խոր չունչ մը առաւ. վազեց իրենց տեսնակէն վերցուց իր սրբիչը ու նետուեցաւ վանքի դուռնէն դուրս, մինչ ձորի պահարուն մէջ վանքի դիլ փոքրիկ զանգակը սկսաւ կատակասէր արձագանգներուն հետ խաղի ելլել՝ ժամասացութեան մէկ նոր բաժանումը ազդարարելով։

Ծանեւաններու բնակարանին դուռն ու պատուհանները բաց էին, թէեւ մէջտեղ ոչ-ոք չկար։

Տղան չտագ ձորէն վար վազել կ'ուզէր, որ հասնէր իր անուանը տուին.

— Պարո՛ն Սիրափեան։

Ծանեւանն էր տան պատուհանէն։

— Ո՞ւր կ'երթապէք այդպէս առաւձին։

Տղան դիմաց դէպի պատուհանը։

Օրիորդն ալ հոն պատուհան.

— Բարի լոյս։

— Բարեւ։ կ'երթամ լողանալու։

— Մինա՞կ. ո՞ւր են ձեր ընկերները.— հարցուց Ծանեւան։

— Անոնք եկեղեցին են։

— Եւ դուք ո՞չ.— հարցուց աղջիկը զարմանքով։

— Ես ալ հոն էի. ներսէս օգը քիչ մը չատ ճնշուած էր. և սիրտս լողալ կ'ուզէ.— պատասխանեց երիտասարդը անտեսանելի համարձակ չնչառով մը ու անտակ մը քամեցաւ։

— Իսկ մեր միտքին պատմանիրը ալլեւս վերջացան իմաբկէ.— վրայ բերաւ Շուշիկ ժպիտը չթմռնելին։

— Պարոնը չի կրնար ընկերները ձգել, պէտք է անոնց հետ երթայ, երեւի զարթ ալ կ'ուենտան միտքին։— արտասանեց Քանեան։

— Չէ՛, այդ չէ պատճառը. բայց պարոն Սիրաքիանը անշուշտ ալ ինձի հետ ըլլալէ կը քաշուի։

— Ինչո՞ւ, օրիո՛րդ։

Ու չփոխուեցաւ ձեռքերը ուր դնելը չէր գիտեր։

— Նո՛ւ, պարզ է. ձեր ընկերներէն կ'ակնածիք։ Արդէն երէկ, իրիկուն նկատեցի, որ ձեր չարժուձեւերը բոլորովին ուրիշ էին ինձի հետ, անոնք մը պաշտօնական։ Եւ ձեզի չեմ կրնար մեղադրել. կը հասկընամ, որ ինձի մօտիկ ըլլալը ձեր յարգը պիտի ձգէ ձեր պաշտօնակից ընկերներուն աչքին։

Տղոս աչքերը յանկարծ բոցավառեցան։

— Զրի՛ն ենթադրութիւններդ, յարգելի՛ օրիորդ, դրէք մէկդի։ Եւ պատրաստ եղէք ճաշէն առաջ, որ երթանք պատյան. եւ՛ այսօր, եւ՛ վաղը, եւ՛ ամէն օր, քանի որ ես հոս եմ. եւ՛ առաձին, առաջուան պէս, ո՞ւր որ կ'ուզէք, ինչպէս որ կ'ուզէք, ե՞րբ որ կ'ուզէք։

Այդ ոգեւորութեան ու տղոս աչքերուն այդ կայծկըլտումին դէմ Շուշանիկի այտերը յանկարծ հաւր առին ու կուրծքը սկսաւ թեթեւ մը զողալ։

— Շնորհակալ եմ.— ըսաւ վերջապէս ազջիկը գլխաւ թեթեւ չարժումով մը ձեռքը պատուհանէն դուրս պարզելով։

Տղան բռնեց ու թողուց։

— Ուրեմն կ'ըսպասեմ. ժամը երկուքին։

— Ժամը երկուքի՛ն, օրիո՛րդ. ցտեսութի՛ւն։

Ու գլխարկովը անոնց վերջին բարեւ մըն ալ տալով դէպի ձորին էջքը վազեց։

Շուշիկ աչքերովը հետեւեցաւ տղուն, մինչեւ անար ժայռերուն ու ծառերուն եռուը անհետացաւ ըլլալը. վերջը ծանր ու հանգարտ քաշուեցաւ քիչ մը ետ, վերցուց իր պատուհանին մէջ ձգած կարը, նստեցաւ ու սկսաւ արագ աշխատիլ. սեռակ մը անդադար չարժուձեւերով. հազիւ կարելի էր ասեղը նշմարելը։

— Մե՛ղք այդ տղաքը — բացականչեց սիկիներ սենեակին խորքէն. — խելքս չի հասնիր, ինչպէս են հոգեւորականութեան այդպէս սէր տուեր։

— Ի՞նչ կայ չհասկընալու.— պատասխանեց ամուսինը:— Երիտասա՛րդ, յոյժ տակուռ տղաք են. ամէն բան տակն ու վրայ ընելու, անուն, ազմուկ հանելու պահանջը մէջը կ'եռայ իրենց թարմ արիւնին հետ. ու գիտ չի՛ զգծածուած ուժեր ունին իրենց ջիլերուն մէջ. տարր կ'ըսեն գործունէութեան ծարաւ։ Վանքի մէջ ականջնին

լեցուցեր են, թէ գլխուն վնասուն ունեցողն է ազդին փրկիչը. խնդճ ազաքն ալ հաւատացեր են։

Մինչ «խնդճ ազան» նոյն թափովը կ'ըշտապէր ուրքի նեղ չափէն վար, որ նեղ ու երկար ժապաւէնի մը պէս ինկեր էր ժայռերուն մէջ ծուռ ու մուռ։ Խիճ ու աւազ կը գլտորէին անոր տրտիկ քայլերուն տակէն. և հո՛ս ու հո՛ն այդ ալմուկէն խըրտնած մէկ-երկու խլէզ ժայռերու մէջ ծերպ մը կ'ուռճապարէին իրենց երկար պոչերը եաեւնուն քարչ տալով։

Ժապաւէնը կ'երկարէր ու միւս եզերքը անցնելու համար կը մնար նոյն իսկ գետակին մէջ, ուր չուրէն դուրս ցըցուած քարերու չարք մը բզըկտած ժապաւէնին փեսթիերը կը ներկայացընէին։

Չուրին վրայ ազան Թոզուց ժապաւէնը. ու քալէ քալ ցատկելով՝ իջաւ հո՛ն, ուր սովորաբար լողալու կու գար։ Ահագին ապառաժներուն գրկին մէջ սեղմըւած գետակի ամենէն խոռոչն ու ամենէն ընդարձակ տարածութիւնն էր, ուր մէկ կողմէն չուրը բիւրեղ չրվէժով ներս կը խուժէր յանձնապաստան ազմուկով մը, մինչ միւս կողմէն իր նախորդ ալիքներուն նման լ'նքն ալ հանգարտած ու հիասթափ ճամբան կը չարունակէր ժպտհութեան մրմունջը չրթունքներուն վրայ։

Երիտասարդի հանուելին ու չուրը նետուիլը ակընթարթի մը գործ եղաւ, վերին ատիճանի զըւարթ ու կայտառ արամադրութեամբ մը։ Չուրը սառն էր ու գանակի պէս կը կարէր. և ազան կը պռատր ցաւէն ու հաճոյքէն՝ անոր յստակ ու հնդուկ մկանները մէջ ձուկի մը պէս գալարելով։

Երբ վանք դարձաւ՝ ընկերները եկեղեցիէն նոր ելած նահոր էին իրենց սենեակը նախաճաշի՝ լուրջ ու մտահոգ դէմքերով։ Սենեակին դուռը կռնակին վրայ բաց էր։

Սիրտքան մէկ ոտաւոմով ցատկեց ներս՝ թևթև ու աչխոյժ։

— Բարի լո՛յս ձեզի։

— Աստծու բարի՛ն։

— Ո՞ւր էիր.— հարցուց երկարահասակը կարճ ու չոր։

— Լոզալո՛ւ. ախնպէս հիանալի պաղ է չուրը։

Թոթուեց երևսբիչը ու վեռց սենեակի ղրան քովը մամռոտ քարի մը վրայ։

— Աստո՞ւ համար եկեղեցիէն ելար.— հարցուց նոյն հանդարտ ու չոր ձայնը, որուն տակէն գալիք փոթորիկը իր ղլուխը ցոյց կու տար։

— Գրեթէ՛. քիչ մը սիրաս նեղ էր ներսը։

— Ա՜խ, այդպէս չըսե՛ս, մարդ Աստծու.— մէջ նետուեցաւ Սիրտքն՝ ուրախ խնդիրի այդ հաչատարար ձևը առնելէն։ Երևի չնչառութեան գժուարութիւն. խոնաւ են հոս սենեակները։

— Իմ չնչառութիւնս ոչ-մէկ դժուարութիւն չունի.— պատասխանեց Սիրաքեան ինքն ալ հետզհետէ զբղռնալով այս հարցաքննութենէն։

— Այն տան՞ն.— չնչաց Մինաս խլաց։

— Այն տանն անպատճառ իմանա՞լ կ'ուզես, թէ ինչու ակռնցիչէն ելայ. իմացի՛ր. որովհետեւ ինծի անտանելի էին քու անվերջ խոչոր խոչերդ ու մեր միջավայրը երգերուն յաւիտենական կրկնութիւնը. գո՞հ ես հիմա։

— Եւ գո՛ւն քանի մը չաքմէն սարկաւագ պիտի ձեռնադրուիս, հա՞։

— Սարկաւա՞գ...

կարծես այդ բառը կեանքին մէջ առաջին անգամը կը լսէր։ Բաւական վերջն էր, որ կատարած չնչառով մը ուելցուց.

— Յամենայն դէպս ո՛չ տարին 1460 ժամ այդ մեծայլ պատերուն տակ ազօթք մրմնջելու համար։

— Երանի՛ մեզի։ կը լսե՞ս.— դարձաւ Մինաս Սերոբին։

Իակ Սերոբ անհրաժեշտ համարեց այս տուր խօսակցութեան վերջ դնել ու բացականչեց բարկացած չնչառով.

— Ես հոս եկեր եմ թարմանալու ու պտտելու, և ո՛չ թէ ձեր տխմար վէճերը լսելու. հերիք է վերջապէս։ Ի՞նչ ենք ընելու ճաչէն հաքը. կ'ուզեմ որ բարձրանանք Ագարակ։

— Այո՛, արժէ որ երթաք Ագարակ.— հաստատեց Սիրաքեան անտարբեր չնչառով մը ներքին անհանգստութիւնը հնար եղածին չափ քօղարկել ջանալով.— թէև ես այսօր ձեզի հետ գալ չեմ կրնար։ Նախ որ վե՛րը Ագարակի կազմերը ես արդէն եղած եմ քանի մը անգամ, և երկրորդ՝ օրիորդին խոստացեր եմ այսօր մրսախին Տեկոր երթալու։

— Որո՞ւն.— հարցուց Մինաս, կարծես ականջին չհաւատալով։

— Օրիորդի՛ն, օրիորդ Մելինեանի՛ն։

Երկար ու կարճ ընկերները ակընթարթ մը չնչա իրարու երես նայեցան։

Եւ ո՛չ-ոք ոչի՛նչ չպատասխանեց։

ԺԲ

Արեը արեւմուտքի առաւիտաւոր լեռներէն մէկուն ուսին չեռած՝ խոչոր ղէմքովը կը ծիծաղէր ընդարձակ լեռնագաշտի լայն մէջքին

վրայ, որուն մէկ կողմը ինկած էր Ալեկանքի ձորի երկար ու խոր ճեղքը. ճն՛ղք մը կարծես նժդրակով բացուած ծերուկ բարձրաւանդակի թիկունքին՝ վիհարի վիրաբուժի մը հակայ ձեռքին տակ. որուն արդիւնքն էր բացուածքին ծուռ ու մուռ չրթունքը:

Շրթունքի այն մասին վրայ, որուն տակ ձորին պատը սեպ վար կը սահէր դէպի անդունդը, վիրը ճեղքի ճի՛շտ եզերքին, գիտի՛նը չորցած խտասրուն վրայ ինկեր էին երկու վարպետաշատանները:

Առաւօն անոնք Արտաչէսի վարմունքէն վրդովուած ու զայրացկոտ՝ նոյն իսկ պատրի արամադրութիւնը կորսնցուցեր էին: Իրիկուան դէմ միայն՝ «քիչ մը բացուելու համար»՝ բարձրացեր էին ձորէն դուրս լեռնադաշտը: Այդ ելքը վտանգաւոր էր արդէն անոնց արամադրութիւնը և Արտաչէսն ու «իր յիմարութիւնները» վերջապէս մէկ կողմ թողած՝ ակներ էին կրկին իրենց սովորական խօսակցութիւններն ու ոգևորութիւնը, մինչև որ յոգնած նետուեր էին հոս պահ մը հանգստանալու:

Մինաս ամբողջ երկայնքով փռուած կռնակին վրայ, աչքերը երկինքի մաքուր կապոյտին յառած՝ կը մտածէր:

Կը մտածէր և Սերոբ նստած, ոտքին մէկը դէպի կուրծքը ծալած, դէմքը դրած ծունկին ու հայեացքը վա՛րը ձորի մէջէն վեր սլաքող գմբեթներու կոյտին դամած:

Յանկարծ կէս մը ընկերոջը դառնալով՝ բացականչեց.

— Աչե՛ն, տմե՛ն լեռան կողքին, տմե՛ն ձորի մէջ հետք մը կայ. կայ ճեպորդ մը ուրեմն կամ չէն, ո՛ր կողմ ալ որ նայիս: Թագաւորի մը յիշատակը, իշխանի մը նըւէրը իր ժողովրդին: Մարդ տմեն վայրկեան ակամայ այդ հպարտաւեներու տուները իր չուրջը կ'ըզգայ. այդ խելացի, խորամանկ ու հայրենասէր թագաւոր-նախարարներու: Ե՛ւ գիտե՞ս, տարօրինակ զգացում մըն է. կարծես հիւր եկած ըլլամ այդ իշխաններուն տղը. տմեն աւերակ, քար, ընդ կամ ևկեղեցի պատմութիւններ կը բանայ իր ծոցին: Ա՛խ, ինչե՛ր, ինչե՛ր պահուած չեն այդ թափթփած սիւներուն ու քարերուն տակ և տանց տրամադրութիւններուն մէջ: Եթէ այդ բլլորը փորուէր, հաւատալու էր, որչափ թանկագին հնութիւններ դուրս պիտի ելլէին, ի՛նչ պատմական գանձ:

Ու ոգևորուած աչքերը հպարտութեամբ փայլեցան: Ակընթարթի մը մտածեց, ու կրկին վրայ տուաւ.

— Արդէն ի՞նչ բանի վրայ ուշք են դարձուցեր մեր հոգևորականները մինչև հիմա: Բոլո՛րը ծայրէն սկսելու է. ժողովո՛ւրդ մեր հին դրականութիւնն փչրանքները, հանո՛ւր մեր իշխաններու ու կաթուղիկոսներու պատմութիւնը այդ հպարտաշատ արձանագրութիւնէն, հետզհետէ հաւաքել այդ հնախօսական բեկորները, ձեռագիրները: Էջմիածինը կարելի է առաջնակարգ կեդրո՛ն մը դարձնել այդ ժողովածոներուն

ու մեր պարծանքը։

— Կ'ըլլայ, կ'ըլլայ,— պատասխանեց Մինաս վստահ ու հաւատքի խօսքին չնչաւոր մը՝ կռնակի վրայէն քիչ մը կռիւին գառնալով.— Արշալոյսը ծագած է արդէն մեր կամաղիկէ ամառոյ մթաթնութեան վրայ։ Կարգապա՛հ, արթնցող հոգեւորական մթութի՛ւն մը նար. բոլո՛ր միաբան նըւիրուած մեր սրբութիւններուն, գաղեաց ատենութիւններուն ու պատմական բնկորներուն նախանձախնդիր պաշտպանութիւնը։

— Անշուշտ։ Միաբանութիւն մը չա՛տ ուժգին, քան վիէնան ու վճռակիը. ան ալ մեր բուն ժողովուրդին մէջ, մեր բուն հողին վրայ։

— Եւ մանաւանդ մեր բա՛ւն առաքելական ու կամաղիկէ սուրբ եկեղեցիին ծոցը։

Ակընթարթ մը լռութիւն տիրեց։

Մինաս յանկարծ եղաւ նստեցաւ. ու մատը թափ տալով ընկերոջ վրայ՝ բացականչեց.

— Պէ՛տք է, պէտք է հասկըցընել այդ կամուխիներո՛ւն, բազաքականներո՛ւն, որ մեր եկեղեցին քրիստոնէական առաջին գարերու կազմակերպութեան ամենէն անոգարտ նմանն է. հիմնուած երկու առաքեալներու ձեռքով. ամենազուտ, հերետիկոսութիւններէ վերծ մնացած ամենահին եկեղեցին։ Մինչեւ հիմա ծանր, խեղամխըւեր են փոտաները, պատմութիւնը. աչխատեր են մաւաք գործել մեր փորագրութիւնները ու միամիտները գայթակղեցնել. իրենք խօսեր են չորեւնակ ատտուածաբանական դիտութիւններու, ուսումնասիրութիւններու առնուով, իսկ մերինները երեխայական բաներ են միայն պատասխաներ։ Բայց հիմա չդիտես ի՞նչպէս սիրտս կ'ուզայ անհամբերութենէն. վայրկեան մը առաջ ե՞րբ պիտի ինքզինքիս Գերմանիա նետանք. ատտուածաբանութիւնը հիմնապէս իւրացուցած գառնանք ետ. ու իրենց գինքերը իրե՛նց դէմ։

— Ինձի ճչմարիտ կոտակ կը թըւի, որ քանի մը ամիսէն արդէն հեռա՛ւ, հեռու պիտի բլլանք մեր հայրենիքէն, մեր այս հողէն ու ջուրէն։ Օտարութեա՛ն մէջ։ Ձիշդ Սահակ-Մեսրոպի ժամանակները. Եփրաեմներէն, ատրներէն, յուսարէնի խօսիրը թագուած...

— Եւ մա՛նաւանդ Աստուած աչուընէ պղերգներս համեմատութեան. էականը չմոռնանք։ Երբեմն պարզ «և» մը կամ «ուստի» մը ամբողջ դաւանաբանական վոստ մը կրնայ գառնալ և կրնայ յամառ վիճաբանութիւններու լավանդակ դէզ մը չաղչազել։ Կեցի՛ր գուն. այս երեք-չորս տարին ալ անչուշտ կ'անցնի. ու մե՛նք նորէն հո՛ս ենք՝ այս հողին վրայ՝ գինուած ու պատրաստ մեր հաւատքի ու ազգի գարգացմանն ու բարգաւաճմանը համար կռուելու։ Ելի՛ր, ելի՛ր։

Ու ինքը ոտքի ցատկած՝ սկսաւ ոտքովը ընկերը հրել։

Ելաւ Սիրոր ալ, և ուղղեցան դէպի ձոր։

Աբեւը արդէն «գիշեր-բարին» ըսեր էր չատոնց ու մութը խառնուելու վրայ էր, որ հասան իրենց անծանօթը։

— Աստուչէսը դեռ չէ եկած.— նկատեց Սիրոբ։

— Եւ գուբսը արդէն մո՛ւթ է.— չեչաեց ընկերը։

Ու վայրկեան մը վերջը աւելցուց.

— Ո՛չ, այս իրիկուն հնար չուրջ խօսելու է և այս անհամաձեռնհասին վերջ դնելու. ամէն բան իր չափը ունի վերջապէս ու իր սահմանը։

— Եղբա՛յր, այդչափ ալ հանգէին մի՛ իյնար. գիտե՛ս, որ բնաւորութիւնը քիչ մը յամառ է. քիչ մըն ալ իր խելքովը ազատամտութիւն ծախել կ'ուզէ. այնինքն թէ ինչո՞ւ օրիորդի մը հետ չերջնելու պիտի չերթայ, ի՞նչ վնաս, մինչ վարդապետը մարդ չէ՞։

— Յիմարութիւն է անխորհուրդ անդր իր վրայ ամէն տեսակ բաներ խօսեցընել տալը — պատասխանեց ընկերը խստօրէն։— Հիմա ի՞նչ ըսես չեն մտածեր, նմէ յանկարծ լուրը էջմիածին հասնի, թէ հա՛ս ձորկուան մէջ առանձին օրիորդ աղջկան մը հետ կը թափառի. ո՞վ պիտի հաւատացնէ, որ այդ բոլո՛րը մաքուր է ու թիւս ազատամտութիւնն հանուանք։ Ազատամտութի՛ւն...

— Բայց խելացի ու ազնիւ տղայ է, վերջ ի վերջոյ խելքի կու գայ. մի՛ր անգամ մը սարկաւագ դառնայ, քիչ մը տարիքն ալ լեցնայ...

Գուբսը ոտքի ձայներ լսուեցան. Մինաս ձեռքով նչան մը ըրաւ ընկերոջը. կարճահասակը խօսքը կարեց։

Ներս մտաւ Սիրաքեան հանգարտ քայլերով ու անտարբեր ըլլալ ուզող ձեւով մը բարեւեց։

— Ի՞նչ բանի էք այս նեղ սենեակին անկիւնը։

— Տնտեսուհիին կ'ըսպասենք, որ սամաւարը տանինք։

Պատասխանողը Սիրոբն էր։

— Բայց չէ՞ որ ֆանեանները երեկ գիշեր յատուկ խնդրեցին, որ թէյի իրենց երթանք նօթէն։

— Ի՞նչ կարեւորութիւն կայ ամէն իրիկուն. երէկ գիշեր հոն էինք՝ հերիք է.— հակառակեցաւ Մինաս։ — Ֆանեանը կը հրաւիրէ, իր հաշիւը ունի, իր փառած փիլիսոփայութիւնները դուբս տալու ու մտաներուն մէջէն հեգնելու համար։ Այդ մարդիկը այդպէս են արդէն. իրենք պահուներ, կնիկներն առնր նօթեր են ու իրենց փորէն անդին չեն մտածեր. իսկ ով ալ որ քիչ մը ուրիշ կերպ մտածելու ու գործ ունենալու միտք ունի՝ ան ալ կը ծաղրենն։ Հեզճուկնե՛ր, ծաղրել պիտին միայն։

— Ամէն մարդ իր համոզումը ունի.— նկատեց Սիրաքեան չոր։— Եւ ով որ իր համոզումը չի կիզծեր՝ ազնիւ մարդ է ան։ Իսկ մտաւորապէս ֆանեանի մտքին ազէկ կ'ըսէայ, բոլորովին լաւ. երանի՛

ամենքը անոր կէսին չափ սրտատրոփ ու կարեկից ըլլային. և քեզի ո՞վ ըսաւ, որ ան գործ չի անանիր. իսկ իր կին ունենալու մասին այդպէս արհամարհանքով խօսիլը ուղղակի ապիղ է։

— Դուն սիրահարիր ես երեւի այդ ընտանիքին վրայ։

— Արտանց ուրախ եմ այդ ընտանիքին հետ ծանօթացած ըլլալուս։ Դուք ալ որ քիչ մը մօտենաք՝ դուք ալ կը համակրիք։ Անոնց պարզ խօսելէն պէտք չէ որ խրտնիս. մի՞թէ քեզի համար ցանկալի է կեղծաւոր ու խարամանկ մարդոց հետ գործ ունենալը։ Քալեցէ՛ք երթանք։

— Ո՛չ. — եղաւ վճռական պատասխանը։

Արտաչէս կրծքնեցաւ դրան սեմի չբջանակին ու աչքերը մութին մէջէն ընկերոջը դէմքին չեչաւց։

— Ինծի՛ նայէ, Արտաչէ՛ս, դուն դեռ չատ պարզամիտ ու միամիտ ես և ըրածդ ինքդ ալ չես հասկընար. ես քեզի խորհուրդ կուտայի քիչ մը աւելի զգուշ ըլլայիր. առաուն չուզեցի խօսիմ դըրդռուած էիր. հիմա կը յուսամ աւելի պատ մտածես։

— Եւ ի՞նչ է անանկը պատ մտածելիքս. — հարցուց ապան ծաղրածու չնչաւ մը՝ երկու ձեռքերը երկու կողմէն դրպանները դնելով։

— Երեխայ չես վերջապէս. պէտք է հասկընաս, որ կրնան վրադ խօսիլ։

— Ի՞նչ կրնան վրաս խօսիլ։

— Սիրելի՛ս, մի՞թէ ա՞յդ աստիճան միամիտ ես. վարդապետացու երիտասարդ ազգ մը ու սիրուն աղջիկ մը չարաւնակ առանձին ձորի ժայռերուն մէջ։

— Է՛ է՞.— հարցուց ապան հազիւ իր ուռած զայրոյթը զսպելով։

— Ամէն բան կրնան եզրակացընել վերջապէս։

— Եւ այդ կրցողը, այդ եզրակացընողը ո՞վ է.— կրկնեց ապան սեղմբուած ակռաներուն մէջէն զոզացող ձայնով մը։

— Վերջապէ՛ս. այս վանքին մարդի՛կը։

— Վանքի՛. հա՛հա՛հա՛հա՛. հայր-սուրբիկս ու անառեսուհին. իհարկէ՛, իհարկէ. վա՛տըր՛։

— Հոս խնդալու բան չկայ։ Ծնռեսուհին բաւական ակնարկութիւններ ըրաւ արդէն այսօր. երեսի ծամածռութիւնները տեսնելու էիր. առաուն ալ հայր-սուրբը բաներ մը հասկըցուց, որ քեզի գանի մը անգամ ապշկան հետ տեսեր է, մանաւանդ մեր գալէն առաջ։

Ջգան կարծես սկսաւ մտածել. և վերջը վերին աստիճանի լըրջութեամբ ըսաւ։

— Ուրեմն Բրիատասուր հայր-սուրբը և եզոս անառեսուհին չէն բաւեհաճիր, որ ես ալ իրրև մարդ, իմ բարեկամներս ունենամ, տեսնեմ, խօսիմ։ Եւ երեւի, եզոս անառեսուհին այդ փառասիրութե-

թիւնը դուն ես վրաց սահը. ոչի՛նչ: սրտանց կը չնորհաւորեմ նոր պաշտօնդ:

— Աբաւչէ՛ս, հագի՛ս, այդպէս թեթեւ կարելի չէ վերաբերուիլ.— մէջ նետուեցաւ վերջապէս Սերոբ, որ մինչեւ հիմա լուռ մաիկ կ'ընկէր միայն:— Չէ՞ որ այդ բոլորը էջմիածին կը հասնի. և հոն արդէն սահի կը վերադառնան վրանիս յարձակուելու համար: այդ սրտաբին ձեւականութիւնները պէտք է հաշուի առնել:

— Ձեւականութի՛ւն ու ձեւականութի՛ւն: Ձեւականութեան համար առաու-իրիկուն ժամ երթամ, ձեռ՛ համար երգեմ, ապօթեմ, խաբեմ, ձեւի համար գղուխ-գլուխ եպիսկոպոսի մը առջեւ խոնարհիմ, իմ կարծիքներս ծածկեմ, իմ համոզումներս ծռեմ ու կիզծեմ, ձեւի համար յարաբերութիւնս կարեմ մարդկութեան կէսին հետ. ձեւի համար... Չէ՛, ինծի նայէ՛, ես չնորհակալ եմ քու այդ ձեւականութիւններէդ:

Եւ ընդոստ չարժուածով մը դարձաւ իր առանցքին վրայ ու ցատկեց սեմէն դուրս:

— Ո՞ւր կ'երթաս.— պոռաց հաւէն Մինաս:

— Հո՛ն, ուր ձեւականութիւններ ընելու պէտք չունիմ:

Ու վանքի դարպասէն դուրս՝ ուղղուեցաւ չիտակ ճանապարհներուն բնակարանը:

❧

Ամռան ժայռը իր լերկ կռնակը արեւին տուած՝ նստեր էր գետի ոտքին մէջ լայն ու ծալապատիկ: Փոթորիկներէն խորշոմած ճաւոտքի մէջ ժայռերուն այդ վիթխարի ճգնաւորը:

Եւ գետակին կենսատրախ կոհակները զըւարթ ու կայտառ երթ ազմուկով իրենք իրենց ու իրարու վրայ գլորելով այդ խոժոռ փիլիսոփային առջեւը կը հասնէին՝ ակընթարթ մը կանգ կ'առնէին զարմանքնուն. սակայն իսկ՛ն այդ խոր լըռութեան դիմաց ծիծաղնին զսպելու այլեւս անկարող՝ անոր երկու կողմէն վար կը ցատկէին որքան կարելի է չուտ. և իրենց չարաճիճ ու հնչուն քրքիջը կը լսուէր դեռ երկար, նոյն իսկ վա՛րը՝ հեռուէ՛ն:

— Նստի՛ր հոս:

Ու չրջապտոյտ քիչ մը ժողվելով՝ ինկաւ աղջիկը քարի մը վրայ, փիլիսոփայութեան աուտերին տակ, Ջուրին ճիշդ եզերքը:

Աբաւչէս լուռ՝ նաեւցաւ անկէ քիչ մը վար, ուրիշ քարի մը վրայ, հանեց գլխարիկը ու նետեց քովը։

Երեկոյանալու մօտ էր. յոգնութենէն չիկնած արեւը տեսակ մը նարինջի ճառագայթներ միայն կը թափէր չեզոքի ձորի բերդէն վար։

Յոգնած էր զայդն ալ երկար քալելէն ու խօսելէն. յոգնա՛ծ ու հրահրա՛ծ։

— Օ՛խ, ինչպէս զո՛վ է հոս, և ինչպէս սիրա՛ւն նայեցէ՛ք անդամ մը վեր, պարո՛ն Սիրաքեան. չէ՞։

Պատասխանը ուշացաւ։

— Չէ՞ք պատասխաներ։

— Օրիո՛րդ, ի՞նչ պատասխանեմ. այս ձորին մէջ ինձի համար ամեն բան դեղեցիկ է։

Ու գաւազանը ջուրին մէջ կոխած սկսաւ խառնել։

— Խնդա՛մ բարեկամս, դուք զժգոհ էք ձեր վանքի կեանքէն։ Ձեր ըրջապատը նեղ ու գոց կու գայ ձեզի, ինչպէս կը տեսնեմ։

— Գո՛յ, գո՛յ, այո՛, բառի ճիշդ գլխուն զարկիք. գո՛յ։ Այդ գգացումը ես առաջ ալ տարտամ կերպով մէջս ունեցած եմ, բայց այս քանի օր է որոշ կը գիտակցիմ արդէն։

— Այս քանի օ՞րը. ինչո՞ւ ուզեցիր այս քանի օրը։

Ու ճակտին թափած կարճ մազերուն տակէն՝ խորամանկ հայեացքը գամեց խօսակցի դէմքին։

— Այս ձորին մէջ, ինչպէս ըսի, տեղն բան այնպէս սիրուն է ու այնպէս մարդը մտածելու կը մղէ՛մղէ. — եղաւ խուսափող ու ժպտուն պատասխանը։

— Այո՛, ձեր մտածկոտ ըլլալը ես ալ նկատած եմ. մանաւանդ ձեր ընկերնեռաւ գալէն իվեր։ Ի դէպ. ինչո՞ւ երէկ իրիկուն անանձ մեզի չեկաք։

— Այրդէն ըսի երէկ. յոգնած էին քիչ մը։

— Աւիկա քաղաքավարութեան պատասխանն էր. ինձի ճչմարիտ պատասխանը տուէք դուք։

Տգեղ լուռ գլուխը կախեց։

— Կ՚ուզէ՞ք ես ձեզի ըսեմ։

— Հապա՛։

— Որովհետեւ ձեր ընկերնիրը զայրացած էին, որ ժամերով ինձի հետ էիք առանձին։

Տգեղ նորէն չպատասխանեց։

— Չէ՞։— պնդեց ազջիկը ինքնավստահ ժպիտով մը։

— Ենթադրե՛ք թէ։

— Եւ այդ բոլորէն վերջը այսօր դուք նորէ՛ն ինձի հետ էք։

— Ինչպէս որ կը տեսնէք։

— Աւելի՛ է որ ինձի կը պարմացընէ։

— Ինչո՞ւ։

— Զի՞ որ այս իրիկուն ձեր վերապարձին նայն անհաճոյ պատահարները պիտի ունենաք ձեր ընկերներուն հետ։

— Չեմ կարծեր. բայց և պիտի՛ւք։ Զեզի անցած օր ի՞նչ ըսի, օրիո՛րդ. իմ գլխուս սէրը ե՛ս եմ։

— Եւ այս բոլոր գլխուս ցաւն ու տհաճութիւնները միայն ինձի համար, իմ պատճառո՞վս։ Զգիտեմ, ճշմարիտ, ի՛նչպէս չնարհակալութիւն յայտնեմ ձեզի կամ ինչպէս վարուիմ, որ ձեզի անախորժութիւն չպատճառեմ։ Գուցէ աւելի լաւ է, որ վերջ տանք մեր պատահարին։

— Վերջ տանք մեր պատահարո՞ւն.— կրկնեց ազան երազկոտ անկարելի բաներու չնչաւոյ մը և աւելցուց.— Եթէ դիտայիք, օրիո՛րդ, թէ դուք և թէ ընդհանրապէս ձեր ընտանիքը իմ վրաս ինչ տպաւորութիւն կ'ընէ, այն ատեն այդ պարապ ու աւելորդ խօսքերը չէիք ըսեր։

— Ի՞նչ տպաւորութիւն։

— Ի՞նչ կարիք կայ ծածկելու.— բացականչեց ազան յանկարծ ջերմ ու կարուկ չնչաւոյ մը։— Իմ մինչև հիմա ճանչցած մարդիկներէն ո՛չ ոք վրաս այն տաք ու յափշտակող ազդեցութիւնը ըրած է, ինչպէս ձեր քեռայրն ու դուք։ Պարոն Քանեանի ամբողջ խօսուածքին մէջ արդէն այնպէս վատահութիւն ու անկեղծութիւն մը կայ, որուն անկարելի է չը համակրիլ։

— Քեռայրս ալ ձեզի չատ է համակրած. ձեր ամէն մեղմէ մեկնելուն նայնը կը կրկնէ, թէ դուք չատ խելացի ու մարքուր բնաւորութեան տէր ազա՛յ էք։

— Իրա՞ւ. անչափ ուրախ եմ իր այդ կարծիքին համար։ Ի՞նչ և է։ կը տեսնէ՞ք, օրիո՛րդ, ինքս վարպապետացու մարդ նասեր եմ ձեր դէմը խոստովանանքի։

— Բայց ինձի համար ամենէն էականը չխոստովանեցաք դեռ։

— Այսի՞նքն։

— Թէ ե՛ս ինչով ձեր այս վատահութեանն ու համակրանքին արժանացայ։

— Դո՞ւք, դո՛ւք... — կմկմաց ազան բաղդատար ժպիտով մը.— հոս չատ բաներ կան իրարու խառնըւած.

— Օրինակի համա՛ր։

— Օրինա՛կ, ձեր տեսակ մը քնական հպարտութիւնը ինձի չատ դրաւած է, մինչդեռ ժամանակ և պարզութիւնը. վերջապէս ձեր մըտածումներն ու հայեցքները կեանքի մասին, ձեր անկախութեան ձգտումը, և ա՛յն որ ձեր մօրն ու փոքր եղբայրներուն համար աշխատիլ կ'ուզէք. և այլն և այլն. այսչափը հերիք չէ՞։

Ընդհատեց յանկարծ ու խնդաց։

— Ուրախ եմ անչուշտ, որ մեր միտքին անցուցած ժամերը ձեր վրայ անհետանյ ապաւորութիւն չեն թողած։

— Մեր միտքին անցուցած ժամերը, օրիո՛րդ Մելինեան, ես իմ ամբողջ կեանքիս մէջ ա՛լ չեմ մոռնալու. ո՛չ այս ձորը, ո՛չ մեր թափառումները, ո՛չ խօսակցիս, ո՛չ իսկ ձեր ձայնն ու չարժումները։

Ագջիկը գլուխը քիչ մը ալ ծռած՝ լուռ ու անթարթ կը նայէր երիտասարդին։

Մինչ ան կը չարաչահէր նոյն տաք ու բաց չնչառվը.

— Անտարակո՛յս տարիկ ինքնիրդ ալ չատ ազէկ գիտէք. բայց կ'ուզեմ որ դուք էք ալ կրնաք հակընդդէմ, թէ մինչ տարիքնի համար հիմա անհրաժեշտութիւն մը գտած է ձեր մանրամասնութիւնը, ձեզի հետ խօսիլը, ձեր տակէն իմ մտածումներս ու ապագորութիւններս յայտնելը։

— Կը կարծէ՞ք արդեօք, որ չեմ հասկընար։

— Այո՛. որովհետև դուք իմ զգացումներս ալ ձեր զգացումներուն վրայ պիտի չափէք. իսկ իմ բարեկամութիւնս իմ՞նչ մասնաւոր արժէք մը կրնայ ունենալ ձեզի համար։ Պատահական հանդիպում մը, գուցէ զուարճալի ժամանց մը այս ձորերուն մէջ. բան մը, որ վազը մոռցած էք արդէն։ Իզուր մեղմիլ մի՛ փորձէք. ես գիտեմ։

Ագջիկը կարծքը չիտակ, յամառ նայուածքը յառած երիտասարդին վայրկեան մը լուռ մնաց. վերջն ալ սկսաւ խօսիլ բարկացած չեչառվ մը.

— Ուրեմն կը կարծէք, որ առանց ձեր մտերմութիւնը մտանուագրաւէս գնահատելու, առանց ձեր կեանքով ու մտածումներով հետաքրքրուած ըլլալու, առանց դէպի ձեր ընկերութիւնը մտանուագ հակում մը ունենալու, ես այսպէ՛ս ժամերով ու օրերով կը թափառիմ ձեզի հետ առանձին այս ձորերուն մէջ ու այսպէս սրտանց կը լսեմ ձեզի և կը պատմեմ ամէն բան։ Ձէ՛, ճշմարիտ ինձի չատ ազէկ ճանչցեր էք. ու քիչ մը առաջ կ'ըսէիք, որ իմ հպարտութիւնս է ձեզի մտանուագ դուռ եկած։

Տգեղ կարծես հրապոյր մէջ էր. չրջապատը մոռցած, մոռցած ինքզինքը, ամբողջ յափշտակութիւնովը կը նայէր Շուշիկի բացատ, բարկացած ու մռայնիացնող աչքերուն։

Ագջիկը ընդհատեց ու կարծես ատելութիւնն կ'ըսպասէր։

— Շարունակեցէ՛ք, օրիո՛րդ, չարաւնակեցէ՛ք ձեր այդ յանդիմանութիւնը. կ'ապաչեմ։

Եւ այնպէս անքօղ ուրախութիւն մը գրաչմանեցաւ դէմքին, այնպէս հմայուած չնչո՛ մը կը զգար իր ձայնին մէջ, որ ագջիկը ըսպիսպուելու ժամանակ ու ձեռքը ապուն մնչնեց։

— Եկէ՛ք, միանք նորէն հին բարեկամներ. այո՛։

Երիտասարդը յափշտակից այդ ձեռքը։ Վայրկեան մը ձեռքերը իրար սեղմած մնացին Կիմ ու բամնուհեցան։ Ու երկուքը քավ-քավի ճամբայ-լինկան նորէն գետակին քովէն դէպի ձորն իվեր։

Նախ լուռ էին. ո՛չ մէկը խօսելու տրամադիր չէր, երկուքի մէջն ալ յուզում մը կար ու իրարու նայիլէ կը խուսափէին։

Վերջը սկսան խօսիլ յատկապէս իրենց այդ անյարմար դիրքը կերպ մը սքօղելու ջանքով ու հնար եղածին չափ անտարբեր նե-թիւրու վրայ։

Շուշիկ իր հիւանդանոցի կեանքէն բան մը պատմելու վրայ էր, որ յանկարծ կանգ առաւ ու հազուստին փնչերը ժողվեց։

Ձորի պատէն, ժայռերուն ծերպերէն, հինգ-վեց տեղ ջուր վար կը ծորէր հոնդարտ, մամռոտ կանանչութեան մը մէջէն. և ձորի պատէն մինչև գետը եղած տարածութիւնը, որուն վրայէն զոյգը կը քալէր. քանի մը կանգուն երկարութեամբ բոլորովին թաց էր ու ջուր։

Սերաքեան նախ փայտը այդ ջուրը խրեց, վերջը փարձեց մէկ ոտքովը. խոր չէր։

— Հողը պինդ է ու քարոտ. քիչ մը պէտք է կօշիկները թրջին, ուրիշ ոչինչ.— վատահութիւն ուզեց տալ ընկերոջ։

— Անշուշտ եթէ ես ալ ձեր հասակ կաշխէ կօշիկները ունենայի.— առարկեց աղջիկը ու ճնաց անչարժ։

— Ագէ՛կ. վերադառնանք։

— Ոչ. չարունակե՛նք. ձորի այս մասը մտնուանդ դեռ չնորհ-քով չեմ եղած։

— Լա՛ւ. հանեցէ՛ք կօշիկները։

— Ո՜հ, երկար-բարակ պատմութիւն։

— Այն ատեն, օրիո՛րդ, եթէ կ՛ուզէք կարճ պատմութիւն...

Տղան ժպտեցաւ ու խօսքը կարեց։

— Այն ատեն ի՞նչ։

— Այն ատեն... այն ատեն կը ճնայ, որ ես ձեզի այդ կտորի վրայէն անցընեմ։

— Ի՞նչպէս կրնաք դուք ինծի անցընել.— հարցուց աղջիկը զարմացած դէմք մը չինելով։

— Ինչո՞ւ չեմ կրնար. կը կարծէք ձեզի բարձրացընելու չափ ուժ չունի՞մ։

— Ինծի գրկէք, տանի՞ք. դո՞ւք, վարպապետ մարդ, է՛, դուք դժոխք երթալէ էի՞ք վախնար.— բացականչեց աղջիկը վերին ա-տիճանի դէմքի քամիկ արտայայտութեամբ մը։

— Հապա ի՞նչ ընեմ, քանի որ ոտքերնիդ թրջել չէք ուզեր. կօշիկները հանել չէք ուզեր. և ես դառնալ չէք ուզեր.— կմկմաց ազան կէս մը կատրուած, կէս մը վարանոտ։

Ու մինչդեռ ժամանակ անար աչքերուն մէջ այնպէս պա՛րզ կը վառէր խնդի՛րը մը, ազատե՛նք մը իրեն չհակառակելու։

Աղջիկը ակնթարթի մը չունչը բռնեց, յանկարծ քայլ մը բրաւ դէպի տղան ու վեր բարձրացընելով թևերը՝ ըսաւ.

— Հապա՝ փորձեցէ՛ք տեսնեմ, քանի որ այդչափ ձեր ուժովը կը հպարտանաք։

Վարպետացուն երկրորդել չը տուաւ. ծանցաւ քիչ մը գրկից ու մէկ թափով բարձրացուց։

— Առ՛ւ.— պոռաց աղջիկը վախցած, երբ յանկարծ ոտքը գետնէն կտրուեցաւ։

Ու երկու թևերը բնազդօրէն նեռից տղուն վիզը։

Աքառչէս իր դէմքին տակ աղջկան գոգացող կուրծքը զգաց և անար բազուկներուն մէջ իր դիմադն օգակռիլը։

Սիրտը թմրատաց, կոպրնցուց ինքզինքը։ կը քալէր։

Ո՞ւր, ո՞ր կողմ, ի՞նչպէս։ Ոչինչ չէր տեսներ։ Աչքին տակ թաց քարերը կը գլտարէին, ջուրը կը ցայտէր, մրջած խոտերը կը ճողբէին ան ոչինչ էին գոյ։

Ու ջուրին մէջէն դուրս էին ևկած արդէն, բայց ան կը չարունակէր գնա։ և գուցէ դեռ չ՞ա երկար, եթէ աղջկան հնչուն ծիծաղը չըսթափեցընէր։

կանգ առաւ ու աղջկան ոտքի դրաւ դետին։

— Տեսէ՛ք, թաց տեղը ուր է մնացեր։— ժպտեցաւ աղջիկը իր այլայլած դէմքովը, քանի մը քայլ անդին մատնանիշ ընելով։

— Է՜, ի՞նչ ընենք, ի՞նչ ջնաս։— պատասխանեց տղան անսովոր համարձակ չեչտով մը։

— Շնորհակալ եմ. երեւի յոգնեցաք. ես բաւական ծանր եմ.— ըսաւ աղջիկը խօսակցութեան լուրջ ձև տալով։

— Յոգնի՞լ. ես ձեզի այդպէս կրնամ տանիլ ամբողջ ժամերով, մինչև... մինչև ձորին ծայրը, մինչև ուր որ ուզէք։

Ու դէմքը նորէն հրահրեցաւ։

— Եթէ կրնայիք՝ ինչո՞ւ չտարիք.— հարցուց Շուշիկ յանկարծ։

Տղան չգիտցաւ ինչ պատասխանէ. և չհասկըցաւ ալ իսկապէս, թէ աղջիկը ինչ ըսել կ՚ուզէր։

— Նո՛ւ, բարեկամս,— ըսաւ աղջիկը ծանր խօսուածքով ու արտասովոր արտայայտութեամբ մը.— երբ նորէն ձեր վանքը դառնաք, երբ առաուն կանուխ ժամերգութեան տակն մուտի կամարներուն տակ ու ձեր սև զգեստներուն մէջ վարդապետներուն չարքը կենաք և երբ հոն սրտերնիդ նեղանալու սկսի, այն տեղն մտածեցէ՛ք այս հարցիս վրայ. խոկ հիմա տա՛ւէն երթանք. արդէն ուշ է։

Տղան բոլորովին լրջացաւ։

— Բայց ի՞նչ ըսել կ՚ուզէք, օրիո՛րդ։

— Ինչ որ ըսի։

Եւ սկսաւ խնդալ։

Ա

Աղջիկը հագիւ տուն ձգած՝ Աբաջէս ծանր քայլերով ու տեսակ մը ակամայ ուղղուեցաւ ընկերներուն քովը։

Վանքի բակը քարի մը վրայ նստեր էին երկուքն ալ քով քովի, լուռ ու լուրջ. ըստ երեւոյթին իրեն կ'ըսպասէին։

Մօտենալուն պէս՝ ելան ոտքի։

— Ջալէ՛, մխսին քիչ մը դէպի վար երթանք, ևթէ չսա յոգնած չես.— ըսաւ Մինաս վերջին նախադասութեան երգիծանքի չնչո մը տալով։

— Երթա՛նք.— եղաւ կարճ պատասխանը։

Դուբս ելան բակէն, լուռ ու հանդիսաւոր տռամջ չարժըւեցան։

«Ճիշդ Շուչիկի բանէին պէս». մտածեց Սիրաքեան ու կամաց մը ժպտեցաւ քմին տակէն։

Երբ դարպասէն բաւական հեռացեր էին, վերջապէս նայեցաւ Մինաս խզից լուռթիւնը.

— Գիտե՞ս, Աբաջէ՛ս, մենք որոշեր ենք վազը առաւս մուխին ճամբայ ելլենք դէպի Անի։

Ու բոլոր բառերը հատիկ-հատիկ չեշտուած էին։

Սիրաքեան չրթունքը խածաւ, քիչ մը մտածեց և իր տպաւորութիւնը չեշտը պահել չկրնալով՝ պատասխանեց.

— Աղէ՛կ, դուք մեկնեցէ՛ք. երեւի ուխը-ինը օրէն ե՛ս ալ ձեր հետէն կը հասնիմ։

— Ի՞նչ.— բացականչեց Սկրտը դող ելած։

— Ո՛չ. գո՛ւն ալ հիմա մեզի հետ պիտի գաս.— չեչտեց Մինաս պաշտօնական խօսուածքով մը։

Սիրաքեան ժպտեցաւ ու նայեցաւ անոր։

— Այո՛. ես ատիկա կը պահանջեմ քեզմէ։ Եւ ո՛ն իրաւունքով, որ քու վարմունքդ ու յիմարութիւններդ ո՛չ միայն քեզի, այլ մեզի ալ հաւասարապէս անպատուութիւն կը բերեն. գո՛ւն քու անունիդ հետ մեր անունն ալ կը կապես։ Գիտե՞ս այս իրիկուն հայր-սուրբը ի՞նչ ըսաւ. «ԵՒոր սերունդները մեր ժամանակուան աչքը գոց ազնխարները չեն, կ'ըսէ, դեռ վարպետ կամ եպիսկոպոս դառնալու ալ չեն սպասեր. միայն ինծի կը թուի, որ գործը քիչ մը չսա բաց կը բռնեն, կ'ըսէ»։ Հիմա կը հասկընա՞ս, թէ ինչ իրաւունքով քեզմէ կը պահանջեմ. դուն իրաւունք չունե՛ս մեր վարկը, մեր պիրքը կոտրելու։

Սիրաքեան յանկարծ կանգ առաւ, դարձաւ խօսակին ու զայրուած ձայնով մը բառաւ.

— Ինծի նայէ՛. ինծմէ ա՛յնաք ոչինչ պահանջելու իրաւունք չունիս. իսկ ով կը կարծէ, թէ իմ մերձաւորութիւնը իրեն անպատուութիւն կը բերէ՝ կրնայ անմիջապէս հեռանալ. արգէն մեկնիլ կ՚ուզէք. բարի ճանապա՛րհ։

— Ներեցէ՛ք. ազէ՛կ, միայն դիտցի՛ր, որ այդ հեռացողները պարտական են բոլոր նկելութիւնը հանգամանօրէն պատմելու ուր որ հարկ է։

— Աւելի հետաքրքիր չէ ինծի, պատմեցէ՛ք, խօսեցէ՛ք ի՛նչ և ո՛ւր որ կ՚ուզէք։

— Բայց հետեւա՛նքը։

— Ի՛նչ հետեւանք։

— Պիտի հարկադրըւի քեզի ձեռնադրըւողներուն ցանկէն դուրս ձգելու։

Սիրաքեան ամբողջ մարմնով ցընցուեցաւ. դէմքին վրայէն բան մը անցաւ արագ. և երկա՛ր, լո՛ւռ, թանձրացող մութին մէջէն ընկերոջը հայեցքին մէջը նայելէն վերջը՝ պատասխանեց յաւտակ պարկով մը։

— Եւ չա՛տ ալ խելացի բան կ՚ընես։

— Ա՛խ. — հառաչեց Սիրոբ ապշած ու նայեցաւ երկարահասակին։

— Ներեցէ՛ք ձեր ատենաբանութիւնը դադրեցուցի. արդէն մրմնջեց վերջինս ակռաներուն մէջէն, գլուխը ցաւակցաբար շարժելով։

— Այո՛, այո՛, այս վայրկեանիս ես պարզ, չա՛տ պարզ կը տեսնեմ, որ իրաւունք ունիք։ Ո՛չ, իմ բանս չէ, իմ բնաւորութեանս բանը չէ այդ չզիջողուած ճշգրտուած կեանքը. այդ իր նեղքին համապատասխանողներուն, իր բնածին զգայունութեանդ դաւաճանութիւնը. չա՛տ խելացի բան կ՚ընէք, նեռնեցէ՛ք ինծի ձեր ցանկէն դուրս։

— Ջէ՛, բարեկամ, — ընդմիջեց Մինոս խոհարէն. — իմ կարծածս չատ աւելի խորն է թափանցիր մէջդ թողը։ Անհիգծ խօսելով՝ ես քու բնաւորութիւնդ մասին չատ աւելի բարձր գաղափար ունէի։ Ինչու չէի կրնար երեւակայել, որ ազգկան մը կատրը քեզի այդպէս անմիջապէս խելքէ հանել կրնայ, այդպէս բոլոր արբութիւններդ առքի տակ տալ, տուած խոստումդ արհամարհել, մինչեւ հիմա փայփայած ծրագիրներդ ուրանալ ու մեր բարձր նպատակները պատռել ու անդին նետել այդպէս։ Այդ տեսիլքդ ազդեցիկ, թոյլ ու զգայարանքներուդ դէմ չէի երեւակայեր ես քեզի։ Ապուշի մը պէս սիրտս բերկրութեամբ առաջին հանդիպած ազգկան. մանաւանդ կատաղաւեր մը. արհեստ ալ իրեն պէս հիանալի. չնորհքէն յայտնի

է ինչ բլլալը. խօսուածքը, քալուածքը, մանչու մազերը. ո՛չ համակեցութիւն, ո՛չ պարկեշտութիւն։

Սիրտքեան վերջին խօսքերը չլսուեցաւ անգամ։

«Սիրտատա՞ծ» կը մտածէր. և ակամայ գլուխը քիչ մը վար թեքուցաւ. «սիրտատա՞ծ, իրա՞ւ»։

Տղոյ այդ կտրած դիրքը ընկերներուն սիրտ տուաւ. ու Մինաս ձայնը փոխեց.

— Կը տեսնե՞ս, սիրելի՛ս, որ նորէն քու ընկերներդ քեզի ձեռք կու տան տատանումի փորձութեան վայրկեանին։ Այդ տեսակ փորձութեան ենթարկուելը իսկապէս յանցանք չէ, ո՛չ ալ մեղք, բայց էակատը յաղթելն է, տակէն յաղթական ելլելը։ Դուն ընկերներո՛ւդ ակամայ դիր մխայն, չե՞ս զղջար։ Ուրեմն վազը առաւ կանաչ կը մնկնինք. տա՛ր ձեռքդ։

Ու ձեռքը մանրմօրէն տղոյ գլուխին պպցուց։

Աբաւչէս թոթռըւեցաւ, թեւը ետ քաշեց արագ ու գլուխը հպարտ վեր բարձրացընելով՝ ըսաւ արհամարհոտ.

— Իմ ընկերս ա՛ն է, ով ինձի կը հասկընայ։ Վազը առաւ կըրնաս երթալ՝ ուր որ կ՛ուզես. ինձի հետ գործ չունիս։

Եւ առանց ընկերներուն քարացած դիրքին ուշք դարձընելու արագ հեռացաւ ու անհետացաւ եղած մօտակայ ծառերուն ետեւը։

Այս վերջին օրերը տղոյ մտքին մղձէն քանի մը անգամ անցեր էր թեթեւ, թէ ինքը իր ընտրած կոչումին յարմար չէ կարծես, թէ ինքը իր ամանին մէջը չէ ինկած, թէ իր հակումները կրօնաւորի պարտականութիւններուն հետ զոյգ չեն երթար։ Բայց տակի տարտամ զգացումի մըն էր եղած միայն. իր ձեռնադրութեան վրայ կը նայէր իբրեւ կատարուած որոշ իրողութեան վրայ. արդէն խօսք տուած վերջացած բան էր, որու մասին ա՛յս կամ ա՛յն պատճառով դուրս կարելի եր քիչ մը ցաւիլ, բայց միայն այդչափ. ետ դառնալու զօրութիւնը անգամ գլուխը եկած չէր։ Բայց գազափարի փոխարէն ետ դառնալու ցանկութիւնը, առանց իր գիտակցութեան, այն աստիճան զօրեղացած ու հող էր գրաւած իր մէջը, որ ընկերոջ կազմէն թեթեւ ակնարկ մը ետ դառնալու հնարաւորութեան մասին, ու իր վարպետանալու ամբողջ չէնքը վտանգ էր մէկ անգամէն։ Շէնք մը, որուն հիմքերը առաջուընէ խախտած էին արդէն վերջին օրերու խօսակցութիւնները, դէպքերը ու իր անվերջ առանձին մտածումները։

Ժայռի լերկ գագաթ մը հոգի ներքին չհասկընար հետաքրքրութեամբ գոռըտ էր երկնցուցեր իր վիզը մութին մէջ, ձորի գաստրկութեան վրայ. կարծես իր խաւարի վարժուած տեսողութեամբը պիտելու համար վարն ու չորջը ու տեսնելու, թէ գոնէ հա՛ տայրերկրի ծոցին վրայ՝ գոյութիւնը որ եւէ խորհո՞ւրդ մը ունի՞, թէ՞ հոս ալ նո՛յն գործառոյթ օրէնքներու միակերպ, անխափան ու գանգրաչալժ կրկնութիւնն է, ինչ որ խո՛րը՝ մայր-երկրի ծոցին մէջ։

Եւ ճի՛չդ այդ դուրս երկընցած լայն ծոծրակի արմատին մօտիկ՝ վեր կը սլանային երկու քոյր նրբամէջ բարդի։

Հո՛տ, ձորի ելքին, այդ գոյզ բարդիներուն տակ Սիրաքեան ճեռուեցաւ գետին՝ ժայռի լերկ ծոծրակին վրայ։ Տխուր էր ու դժգոհ։ Ընկերներուն հետ ուղեցած այդ առաջին թաց ընդհարումը անախորժ, ճնշուղ տպաւորութիւն մը թողեր էր վրան, որուն կը միանար խառնակ ու իրար հակասող զգացումներու պատճառած անհանգստութիւնը։

Երկար մնաց ան հոնտա՝ այդպէս խոժոռ ու անշարժ. մինչեւ որ սրտին մօտերը ուղղակի ցաւի նման ճմլում մը սկսաւ գլուխը բարձրացընելու. խոր չունչ մը առաւ ու հայեացքը ինկաւ գիմա՛ցը, վե՛ր։ Հո՛ն, ձորին բերանը գոգաւոր ժայռի մը ետեւէն լոյսի բարակ երիզ մը կը ցոլար. երիզը քիչ-քիչ լայնցաւ, պայծառացաւ. ու անոր հետեւէն հանդարտ գետը սահեցաւ լիւս լուսինը ու ակընթարթ մը կանգ առաւ կարծես ժայռի այդ գոգաւոր չրթունքին վրայ՝ ակիհին վրայ բռնուած նշխարքի մը պէս։

Եւ ապան յանկարծ մտաբերից, որ ինքը այլեւս հոգեւորական չէր. վեզարաւոր ապագա՛ն, խուցի չոր կեա՛նքը, միայնա՛կ ու միակնո՛ւթիւն, եկեղեցական պաշտամունքները իրենց խանդիպումին ու ապրումներովը, այդ բոլո՛րը ալ երազ մըն էր իրեն համար. անցած եւ բա՛ց մը, ուրիկ հիմա կ՚արթննար։

Եւ այդ մտածումէ նախ ահարկու թեթեւութիւն մը թափեց իր զգացումներուն վրայ. յանկարծ սիրտը ուժգին զարկաւ ու վայրկեանութիւն մը խուժից իր կուրծքը. էՙ որ ալ ազա՛տ էր ինքը. ազա՛տ իր յանձն առած պաշտօնի անհաճոյ պարտականութիւններէն ու անիմաստութիւններէն. ազա՛տ վանքի դոց ու ճնշուղ կեանքէն. ազա՛տ իր զգացումն ու հայեացքները վարագուրելու անհրաժեշտութենէն. ազա՛տ ինչպէս գետի բնական մարդիկն էին։ Դա՛ւրս. չո՛ւտ գետի աչխարհը, գետի կաթիներուն ու ամպուկին մէջ, գետի կանաքին ու աչխատանքովը, գետիններուն հետ... ու գետի ազջկան։

Եւ յուզման ներքին թափէն ցաւակից ոտքի. նայեցաւ չուրջը։

Մութը փարատած էր։ Լուսնի գունաթափ լոյսին տակ ձորին բնակիչ ապառաժները մրցումի էին ելեր, թէ ո՞վ իրենցմէ իր չուքը ամենէն ուշի հետուն, ամենէն ուշի վար նետել կրնայ. վա՛ր, մինչեւ հո՛ն, ուր գետակը ոտորտալով փնչերը ժողված կը վազէր. փնչերը իր արծաթաթիթ չպարչին, որ միայն լուսնի այցելութեանը պատիւտի սնուցուկէն կը հանէր։

Աչքերը այդ փայլփլուկին՝ ազան ալ սկսաւ գետակին հետ վար վազել՝ վերի ճամբուն վրայէն։

«Ուրեմն ինքը կը սիրե՛ր այդ ազջիկը»։ Իրեն այդպէս էին ըսեր։ Ինքը մինչեւ հիմա յատած այն գաղափարին, թէ կուսակրօն մըն է,

առանց որոշ ոչինչ խորհելու՝ իր բոլոր զգացումներուն վրայ կը նայէր, իբրեւ պարզ բարեկամութեան, մանրամութեան վրայ. թէեւ կ'ըզգար, որ չատ տարօրինակ ու խախտ տուեզ թելեր կային բարեկամութեան այդ հիւսուածքին մէջ. բայց չէ՞ որ արդէն ինքնին բացառիկ բան մըն էր այդ մանրմութիւնը. մանրմութի՛ւնը գեւատի ազգկան մը հետ։ Եւ հիմա մէկ անգամէն իր երեսին կ'ըսէին, թէ ինքը կը սիրէր, թէ իր վարմունքը ո՛չ այլ ինչ էր, եթէ ոչ պարզ սէր, որու մասին այնչափ լսած էր ու կարգացած. սէ՛ր դէպի հակառեւ մը։ Եւ այդ նորութիւնը իսկապէս քիչ զարմանք կը պատճառէր հիմա իրեն. չէ՞ որ իրազութիւնը նոյնն էր, ինչ որ առաջ. անունն էին փոխեր միայն. ձգտո՛ւմ մը դէպի ազգիկը, յոյչատակութի՛ւն մը, ոգեւորութիւն մը անոր մօտիկութենէն, պահա՛նջ մը ըսելու, խօսելու, իր մըտածումներն ու տպաւորութիւնները անոր յայտնելու. և այդ բոլորի դէմքը, որ մինչեւ հիմա «տարօրինակ բարեկամութիւն» էր, ուրիշները անուաներ էին «սէր». պիտո՛ւք. ինքը համաձայն էր և այդ նոր անուանակոչութեան։

«Անուանակոչութի՛ւն». իր մտածած բառը իրեն ալ տարօրինակ եկաւ. խեղդուց։ Ու մէկէն բուռն պէ՛տք մը զգաց խօսակցելու, երգելու, ազմկելու։ Ի՛նչ այդպէս մխա-մխիակ կը թափառէր լռութեան տակ. մի՛շտ մինակ. հերիք չէ՞ր։ Եւ յիշեց, որ Քանեանները հիմա Թեյի վրայ էին և անշուշտ կը զարմանային իր ուշանալուն։

Ոեժգին թափով մը դարձաւ կրունկին վրայ ու երգ մը սուլելով ետ չտապեց։

Ինքը աներեւոյթ եզաւ չուտով ձորի պատին ձգած թանձր տուներին մէջ, բայց իր սուր ու զուարթ սոյլը կը հնչէր դեռ երկար. և բարձր քարանձաւներու խաւար խուռչներէն արձագանգները քնկոտ ձայնով մը իրենց նիհոլը խանդարողի սուր շեշտերը կը կրկնէին. մէկը չարացած, մի՛սը հեղնելով ու բոլորն ալ զժգոհ։

ԺԱ

Երբ Սիրաքեան աչքը բացաւ՝ պայծառ օր էր. անհնակը մարդ չկար։ Սամի վրայ դեպի գուբս նստած էր Սերոբ և գլուխը գրան չրջանակին յենած կը նայէր հեռուն՝ մտքերու մէջ թաղուած։

Երբ ներսը չարժուեմ լսեց՝ դարձաւ եաւ։

— Արթնցա՞ր, ծո՛յլ Մարաիրոս.— ըսաւ մեղմ ու կատակով չհշտալ մը։

— Ի՞նչ կ'ընես հոս.— հարցուց ազա քնկատ ձայնը։

— Կ'ըսպասեմ քեզի, որ գլխես, երթանք միասին լոզալու։

— Մինասը ո՞ւր է։

— Չգիտեմ. գո՛ւբս կլաս։

Արտաչէս ցասկեց անկոզնէն, արագ հագուեցաւ, զարկաւ սրբիչը ուսը, որ ձորը իջնէ։

— Հապա այս առաւօտ մեկնե՞ք պիտի. ի՞նչ եղաւ.— հարցուց երբ վանքի բակէն կ'ելլէին։

— Անհա՛յթ ըսածիդ ինքդ կը հաւատա՞ս. առանց քեզի ո՞ւր կըրնանք մեկնիլ։ Այդ տեսակ խօսքեր տարբցած առեն կ'ըսաւին, բայց միթէ՞ հնար է իրագործել։

— Ինչու՞ չէ։

— Քեզի ձգենք՝ հետաքո՞ւնք. կը վայլէ՞ տակիկա պաշտօնակից, սրտակից ու նպաստակակից ընկերներուս։

— Բայց մակդիրներդ ա՛յնմէկ հառը այլևս իմ վերաբերմամբ ճիշդ չէ։

— Ինչպէ՞ս թէ։

— Չէ որ ա՛լ ցուցակէ դուրս նետուած մարդ եմ հոս։

— Դադա՛ր. կարծես Մինասի չափազանցութիւնները սիրտդ բնաւորութիւնը չեն պիտեր. ա՛ն ըսաւ, դուն ալ սրտիդ տուիր, երևի, հա՞։

— Ամենևի՛ն, բլալիքը տակիկա է. այս ձևով թէ այն ձևով։

— Վե՛րջ տուր, Արտաչէ՛ս, այդ անհամ կատակին.— ըսաւ Մերոբ տեսակ մը գժկամած։

— Հոս կատակ չկայ. իմ վարդապետութիւնս այլևս ծալլուած ու գարակը գրուած խնդիր է։

Մերոբ կանգ առաւ դէպի ձորը վազող նեղ արահետին վրայ ու կծկուած գիմագծերով՝ չէշ ընկերոջը երեսը նայեցաւ։ Ու ակընթարթ մը լռութենէ վերջ՝ հպարտ ու յստակ չէշով մը կցկց.

— Եթէ քու անձնական երջանկութիւնդ ծառնալու չափ բարձր չէիր կրնար ուրիշ, եթէ մէկդ այդ մարդկային գերագոյն զոհաբերութիւնը ընելու չափ ուժ չէիր զգար, ինչո՞ւ խօսք տուիր կուսակրօնութիւնը։

— Զոհաբերութի՞ւն։ կարծես գուրսը քի՛չ կան այրիներ ու մայրեր։ Սիրելի՛ս, չխաբենք ինքզինքնիս. հիմա սկսած է ալ մտնէն բան ինծի ուրիշ գոյնով երևալ. այդ անձնազոհութիւն ըսածնիս պարզապէս խուսափումն մըն է գուրսի կեանքի գժուարութիւններէն ու նիհարկան մաքառումներէն, ուրիշ ոչի՛նչ։

— Անխիղճ կը խօսիս, Արտաչէ՛ս։

— Ճշմարտութիւնը կը խօսիմ։ Վրան ուելցո՛ւր նաեւ աժան փառասիրութիւնը. ա՛յ քու ուժերուդ առաւելութիւնէն, ա՛յ քու սեփական արժանիքդ, օր մը կը դառնաս եպիսկոպոս, գուցե և ուելի.

սարքին պաշտօնեաները խուճապ կը ձգեն փիլոնիզ չուրջը, կը վայելե՞ մնծաւարի անուն, կը դառնան մե՛ծ մարդ։

— Բայց լա՛ւ. ամօ՛թ է, ամօ՛թ։

— Մի՛ վրդովուիր, սիրելի՛ս. իհարկէ այս բոլորը մերկ կերպով ո՛չ գուն մտածած ես, ո՛չ ես. բայց կրնա՞ս ձեռքդ խղճիդ վրայ դնել որ այս ամէնը, անշուշտ աւելի անարդ կերպով ու աւելի բռնատեղծական անուններու տակ, քեզի համար հրապուրիչ չէ եղեր ու քու վարպետանալուդ վրայ չէ ազդեր։ Վերջին օրերս այս հարցերուն վրայ ես չատ եմ խորհեր, խորհէ՛ և գուն։

Սերոբ խոժոռ ու անթափանց ընկերոջը կը նայէր։

Երկուքն ալ կեցեր էին դէմդիմի երկու ժայռերուն մէջ ինկած նեղ անցքին վրայ։ Սերոբ թևթև մը ժայռի մամռոտ կողին յենած. Արտաչէս արտեսնին ճիշդ մէջտեղը՝ ատաք ու կրքոտ խօսուածքով մը անզգաստ ձեռքի սրբիչը օդին մէջ չարժելով։

— Հիմա իմ անհչանդս է կախուած, կեանքի՛ մէջ, իմ սեփակա՛ն ուժերովս ինձի համար ճամբայ բանալ։ Կատակերգի այդ պատրաստ, լայն ու հանդիստ ճամբէն քալելը քաջալերիչ չէ։

— Ուրիշն քեզի համար գոյութիւն չունի՛ն այլևս մեր հոգևոր ականաւթեան դերը, ժողովուրդին կարիքները։

— Կը յիշե՛մ, մեր վերջնական խօսք առու առաններն էր, թէ ինչպես ուզեց կը չարչըրկէի իրօք կենսական բաներ մը գտնելու համար, որոնք իմ հոգևորական դառնալս աչքիս անհրաժեշտ դարձներէին. պէտք էր անպատճառ ինքզինքս համոզէի և ճարտեցի իհարկէ թուքով փակցուցած քանի մը բաներ, որոնք ոտ՛ թուքի չորնալուն պէս սկսան վար թափիլ։ Իրականութի՛ւնը կ՛ուզես. հոգևորականներու ձեռքը հիմա չա՛տ քիչ բան կայ կենսական, այսինքն իսկապէս ժողովուրդի համար անհրաժեշտ։

Սերոբի դէմքը կարեկցող արտայայտութիւն մը հագաւ. նայնիսկ չպատասխանեց։

Իսկ ընկերը չարունակեց.

— Մեր ոգևորութեան ու մեր ծրագիրներուն մնծագոյն մասը, եկո՛ւր քեզի հետ անկեղծ խոստանանինք, որ միայն մե՛ր դիւրութեան համար է, մե՛ր օգտին, վերարտադրնելուս. աւելորդ տեղը ժողովուրդի հաչէն չգրենք։ Կալուածական բարեփոխումներ, անհատական կանոնաւորութիւն, վարչական կեդրոնացում, փոքրաւոր չնչին, բարձրագոյն ուսում, դրագարան և ուժեղ միաբանութեան մը հիմնարկումը. ասոնք չե՞ն։

— Է՛, այդ բոլորը ժողովուրդին համար չէ՞։

— Ո՛չ։

Երկուքն ալ պահ մը լուռ էին։

Սիրաբեան հանեց գլխարկը, մտաներով մկկ-երկու անգամ սանրեց մազերը, ծածկեց նորէն գլուխը ու կրկնեց.

— Ո՛չ. ժողովուրդը մեզմէ խելք չունի. մենք կարըւած ու կըզպիտացած մարմին մըն ենք հասարակութենէն զատ։ Այդ կողմէն քահանան մեզմէ անագին առաւելութիւն ունի՝ մինչեւ վերջը գոնէ իր ժողովուրդին մէջն է. անոր նեղ ու լայն օրերուն, խինդ ու վշտին մասնակից։ Իսկ մենք, տե՛ս, քահանայութիւնը չենք ընտրած։

— Ամէն մարդ իր տեղը. չա՛տ աստղէն չա՛տ կը պահանջուի։ Վերջապէս տիկա պատարկ պատճառաբանութիւն է. եթէ բամնեբուդ համոզուած ես՝ եղիր տէրտէր։

Սիրաքեան ծիծաղեցաւ զառն ու հեգնոտ ծիծաղով մը։

— Ո՛չ. պատմութիւնն այդ գլուխը ինծի համար փակուած է. ես կը գտնեմ ուրիշ ճամբայ մը ժողովուրդի վարի խաւերուն մէջ մտնելու։ Ես ատանց որևէ հոգեկան բռնադատումի, ատանց որևէ սուտի ու կեղծիքի։

Սերոբ ձեռքի կատարի չարժումով մը առաջ նետուեցաւ զայրացկոտ։

— Ինչ բառի մը պոչէն բռներ կ'երթաս։ Հոս ո՛չ խաբել կայ, ո՛չ սուտ. ինչ կեղծիք։ կեղծե՛լ. մեր ըրածին կ'բանն պարզապէս ժողովուրդի ըմբռնումներուն յարմարում. կարելի չէ ամբոխին ամէն կարգի ճշմարտութիւններ բսել. և վերջապէս ան քու ճշմարտութիւններուդ պէ՛տք ալ չունի։

Սիրաքեան ակընթարթ մը. ապշած կանգ առաւ, աչքերը չեզած ընկճոյքը զէմքին յառած։ Բայց մտաներու ջրտձգական անընդհատ կծկուածէն, որով սրբիչը կը ճմռթքէր, պարզ էր, որ ներսը իրարանցում կար։

Վերջապէս ձայն հանեց. միայն անապահով կերպով հանդիսա ու մեզմ ձայն մը.

— Այդպէս ուրեմն. ան պէտք չունի իմ ճշմարտութիւններուս. ամբոխը պէտք է պահել իր նախապաշարումներուն ցանցին մէջ պինդ սեղմած. չէ՞ որ Աստծու կամքով այդպէս եկեր է ու այդպէս ալ պիտի երթայ. ի՞նչ ամբոխի բանն է գիտութիւնն ու ճշմարտութիւնը, որը միայն մե՛նք հասկընալ կրնանք։ Ահա՛, սիրելի՛ս. ժողովուրդի անուանով մեր իրարու գլուխ ուռեցընելը արատաբին ծանկոցն է միայն. զարուս պահանջած վերարկուն որ ամէն խօսող իր վրայ պիտի նետէ յարգանք ու անձնական յաջողութիւն վաստակելու համար. բայց նեղքուստ մեզի համար ան միշտ նոյն ամբոխն է, որ ո՛չ բան հասկընալ կրնայ, ո՛չ ալ հասկընալու պէտք ունի։

— Ինծի սխալ հասկցար.— սրբագրեց Սերոբ իր ըսածը.— Ես միայն ըսել ուզեցի, որ մատան կամաց-կամաց պէտք է իր հասկացողութիւններէն զատ քաշել. իսկ մինչև այդ՝ ստիպուած ենք յարմարուելու ու քօղարկելու որոշ բաներ։

— Այդ անսակ պարապ խօսքեր գլուխս չի մաներ.— բացակա-

կանչեց Աբաջէս տաքցած։ — Ես հիմա բոլորովին ուրիշ կերպ կը մտածեմ. ճշմարտութիւնը որքան պարզ ու բայ ըսուի, այնքան ուժեղ ազդէ. այս անբուռնը չի հասկըցաւ՝ կը հասկընայ յաջորդը. իսկ այդ լսելու ու սանելու ծայրը ո՞ւր պիտի երթայ։ Ո՛չ. ես այլեւս ճառկատս բայ կ՚ուզեմ, կ՚ուզեմ անկաշկանդ իմ համոզումներս ամենքին բանմ։ Այդ յաւիտենական յարմարուելու ու քօղարկուելու սկզբունքը վախկոտներու, զառամածներու և ես ձեռացողներու քաղաքականութիւնն է։ Բա՛յ է. ա՛վ կ՚ուզէ թող երթայ այդ ճամբէն. իսկ ես այլեւս ա՛չ վեզարին երկար ծածկոյթը կ՚ուզեմ մատնութիւններուս վրայ, ա՛չ ալ փիլոնին կաշկանդող փիչերը քայլերուս չուքը։

Եւ ուժով մը քաշեց սրբիչը ձախ ուսէն ու զարկաւ ալ ուսը։

Կարկամ արտայայտութիւն մը պրպտուած էր Սերոբի դէմքին ու քարացած կեցեր էր քարին տակ։

— Դէ՛, Սերո՛բ, ես իմ խոստովանութիւնս ու ապաշխարանքս վերջացուցի. քալէ՛, երթանք մըկըրտիչը։

Ու թեթեւցած աշխուժով մը արագ առաջ չարժըեւցաւ։

Բաւական ցաւակեր էր քարէ քար, երբ նոր նշմարեց, որ եռեւէն եկող չըկար։ Նայեցաւ ետ. ընկերը ծանր-ծանր կը բարձրանար վեր, դէպի վանք. նայն արտեւտուքը, որով իջեր էին։

«Իսարկէ, հեթանոսին հետ մրեւնոյն աւազանը չի կրնար մտնել»։ մտածեց ինքնին՝ ժպտիլ ուզելով։ Բայց ժպիտը տուեցաւ չրթունքին վրայ ու ցաւ մը զգաց. տարիներով ընկեր էին եղած և հին ճամբանները կը բաժնուէին։

Սերոբ երբ սենեակ մտաւ՝ ճակատ ճակատի գանըեւցաւ Մինասի հետ, որ անհամբեր կ՚երթեւեկէր։

— Բան գտա՞ր. — եղաւ առաջին հարցը։

— Ի՞նչպէս չէ. և տեսնէիր ի՛նչ բաներ գտա հոն։

— Ետօքը ետ տանելու մասին նորէն ակնարկութիւն ըրա՞ր։

— Ակնարկութի՞ւն. լմնցած-վերջացած խնդիր է։ Ատա՛ւած իմ։ Ի՛նչ խաչտառակութիւն. ի՛նչ ապուշութիւն պիտի ընէ այս բոլորը վանքի ու ամենուն վրայ. առաջին քայլին այսպէս թեթեւ վերաբերմունք ու խօսքի դրժում. մարդիկ հիմա ի՛նչ ըսես վրանիս մըտածելու իրաւունք ունին։

— Ո՛չ. անկարելի է. պարզապէս չենք թողներ։ Միայն ի՛նչ գնով ալ որ ըլլայ այդ ախմարը հոսկէ հեռացընելու է. անմիջապէ՛ս։

— Անօգուտ է. մէյ մը լսելու էիր, թէ ինչեր կը խօսէր. ալ զո՛ւր բան է։

— կարծես անոր յիմար-յիմար խօսելը առաջին անգամը ըլլայ. Թո՛ղ անգամ մը նայէն վանք տանինք՝ ես խելքի կը բերեմ։

— Մի՛ յուսար։ Եւ վերջապէս հոսկէ հեռացընելն ալ դիւրին

խնդիր չէ. քանի որ աղջիկը հոս է, ան հոսկէ չի հեռանար: Ի՛նչ խայտառակութիւն, Աստո՛ւած իմ, ի՛նչ խայտառակութիւն:

— Մի՛ յուսահատիր. միայն պէտք է քաղաքականութեամբ վարուիլ:

Ու այդ բառերուն մէջ վճիռը տուած մարդու մը ինքնավստահութիւնը կար:

Սերոբ ակամայ ընկերոջը երեսը նայեցաւ հարցականո:

ԺԲ

Մինաս ձեռքովը ուսի փոչին թափ տալով՝ վանքի դուռնէն դուրս ելաւ, դէպի Բանեւաններուն կողմը:

Նախ ծանր կը քալէր՝ գլխուն մէջ բոլոր հնարաւորութիւնները տակնուվրայ ընելով, մէկ ինչ միջոցով աղջկան հետ վայրկեան մը առանձին մնալու յաջողի. վերջը քայլերը արագացուց, մտածելով որ հոգին-սուրբ անչուշտ կերպ մը կը ներշնչէ յարմար վայրկեանին յարմար ընելիքը:

Տանը քանի մը քայլ էր մնացեր, որ փիչ մը անդին, ծառի մը չուքին տակ նշմարեց օրիորդ Մելինեանը: կարած կտցի մը վրայ նստած, չինած ծառի բունին, գլուխը կախ կը կարդար, թիկունքը դէպի ազան:

Մինաս ուրախութենէն խոր չունչ մը առաւ. «Աստուած հետս է» մրմնջեց. ու չտապեց դէպի աղջիկը:

Մօտեցած ոտքի ձայնը Շուշիկի ընթերցումը ընդհատեց. և ան թեթև մը դարձաւ նոքին:

— Բարե՛ ձեզի, օրիո՛րդ Մելինեան:

— Օ՛, բարե՛, պարո՛ն. ի՞նչ կ'ընէք, բնաւ մէջտեղ չկաք. պարոն Սիրաքեանը բաւ, որ չորեքշաբթի կը չքնաք. հիմա ալ երեւի նորէն չքնելու կ'երթաք:

Վրայ առաւ աղջիկը աչխուժ, ազու անունը կուլ տալով, որը չէր յիշեր:

— Ո՛չ, օրիո՛րդ, պատրաստ չեմ եղած. եկած եմ մասնաւորապէս ձեզի հետ խօսելու. և բարեբախտաբար ձեզի ալ հոս առանձին կը գտնեմ:

Աղջկան առաջին զգացումը վախի պէս բան մը եղաւ. անակընկալի մը անորոշ վախը: Բայց խելօք դուրս ելաւ, որ խնդիրը իր ու

Արտաշէսի յարաբերութեան չափը էր պահպանել ու հետաքրքրութիւն մը յաջորդեց նախորդ տարաձայնութեան։

— Ինձ՛, մանուկս ըսելի՛ք մը, և ան ալ առանձի՛ն. — հարցուց իրարու հետէ խորին զարմանքի արտայայտութեամբ մը։

— Այո՛, օրիո՛րդ։

— Հապա՛, խնդրե՛մ։

Վարդապետացուն չգիտեր ինչպէս սկսի։ Մարմնին ծանրութիւնը մէկ ոտքէն միւսին անցուց, վերջէն ալ ոտքին տուաւ գերակշռութիւնը և յանկարծ ըսաւ.

— Դիտե՛ք, օրիո՛րդ, վազը ես ձկնորքէն մնկնիլ կ՚ուզենք։

— Մի՞թէ. արդէն կշտացա՛ք. ըսենք իրաւունք ալ ունիք. մարդ մէկ քանի մը օր այս ձորին մէջ կմնայ՝ ա՛լ անհնարաւ բան չի մնար. հասկնալի՛ կ՚ըլլայ, որ մենք ալ չաթախ մը մկկնինք։

Մինաս նորէն կանգ առաւ. պղչիկը խօսակցութիւնը գիծէն հաներ էր։ Ակընթարթ մը խառնեց մօրաքը ու ատկցուց.

— Զո՛րը ոչինչ, բայց մենք ստիպուած ենք վերադառնալու։

— Անշուշտ զօրծո՛ր ունիք վանքը։ Այդչափ մի՛ չտապէք, պրո՛ն, քիչ մը ազատ օդ չնչեցէ՛ք։

Շուչիկ խօսակցութիւնը կարծես դիտմամբ կը չհզէր, կարծես հաճոյք զգալով դիմացինը նեղ դրութեան մէջ դնելէն։

— Աստծու աշխարհքին վրայ օդը ամեն տեղ ազատ է. — պատասխանեց ազան լրջութեամբ։

— Իրա՞ւ.— ժպտեցաւ պղչիկը տեսակ մը նուբը երգիծանքով։— Այն տանն բարի ճանապարհ կը ցանկամ ձեզի և յաջողութիւն ձեր գործերուն։

— Շնորհակալ եմ։ Միայն կէտ մը կայ և այդ կէտի համար է, որ եկած եմ ձեզի հետ խօսելու։

— Եւ այդ կէ՞տն է։

— Որ մեզի օգնէք հոսկէ հեռանալու։

— Ձեզի օգնե՞մ. ե՞ս. չեմ հասկըներ։

— Այո վարկեանին։ Մեր գործը խիստ անհրաժեշտ է՝ բայց խնդիրն ան է, որ Արտաշէսը համոզել չենք կրնար. անպատճառ դեռ ճամբայ կ՚ուզէ։ Մտածելի պիտիմ ձեզի. ա՛ն, ըսա երեւոյթին, ձեզի կը յարգէ ու ձեր խօսքին կարևորութիւն կու տայ։ Մէկ դուք անգամ մը անոր ըսէիք, որ անիմաստ յամառութիւն չըներ, հաւանական է որ համոզուի։

Պարզ էր այդ բառերուն տակի իմաստը։ Բայց Շուչիկ ոչինչ չը հասկընալ ձևացուց.

— Կը ներէ՛ք տակաւին, պարո՛ն. ինձի ինչ կը վերաբերի ուրիշի գործերուն մէջ խառնըելիւ։ Պարոն Սիրաքեանը երեխայ չէ. եթէ երթալ չուզէր՝ երեւի իր պատճառներն ունի։ Եւ վերջապէս եթէ իր

մահրիմ ընկերներուն կը հակառակի, ի՞նչ ըսելով օտար աղջկան մը խօսքին կարևորութիւն պիտի տայ։

— Դուք անոր վրայ ազգեցութիւն ունիք.— հնչեց ապու չոր ու կոպտուկ պատասխանը։

Շուշիկ բռնազբօսիկ ծիծաղով մը սկսաւ խնդալ բարձրաձայն։

— Ինչո՞ւ կը խնդաք, օրիո՛րդ. ինքնի՛րդ ալ չատ լաւ գիտէք, անշուշտ։

Աբիկա արդէն չա՛տ նման էր յանդիմանութեան ու ազջիկը լըռեցաւ։

— Ես ոչինչ չդիտեմ և ոչինչ ալ գիտնալ չեմ ուզեր ձեզմէ. ուրիշի գործերուն մէջ խառնըւիլ չեմ սիրեր. վերջ տանք այս անհամ խօսակցութեան։

Ու նեղսրտած վերցուց գիրքը ծունկներուն վրայէն ու նետեց քովի բարին վրայ։

Վարդապետացուն մտածեց վայրկեան մը և իր պարտականութիւնը կատարելի մը անզգոյ չեշտովը ըսաւ հատիկ-հատիկ.

— Այո՛. գործի մէջ չէք խառնըւիր, երբ կատարուած սխալ քայլը կերպ մը ուղղել պէտք է. իսկ երբ այդ սխալ քայլը պիտի կատարուի, այն ատեն գործի մէջ կը խառնըւի՛ք, օրիո՛րդ։

Շուշիկ պայթյումէն ցատկեց ոտքի։

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, պարո՛ն. և ո՞վ էք դուք. ի՞նչպէս կը համարձակիք երեսիս պայլի աւետարան կարդալու։

— Ես Արտաչէսի պաշտօնակիցն եմ ու ընկերը. — եղաւ ատոն ու հանդարտ պատասխանը։

Ազջիկը կարծես անակ մը սթափեցաւ. ու հպարտ արհամարհանքով մը ուսերուն.

— Չի հետաքրքրեր ինծի, թէ դուք ինչ էք։

— Սակայն պէտք է, որ հետաքրքրէ։ Մինչ իրա՞ւ չէք հասկըցած, օրիորդ. որ ընկերս ձեր պատճառով մեզմէ հատիկ հեռանալ չուզեր։

— կը հասկընա՛մ թէ ո՛չ՝ ձեր գիտնալու բանը չէ։

— Իմ գիտնալու բանը չէ՞. երբ ընկերս ձեր պատճառով ամէն արթութիւն ոտքի տակ տալ կուգէ, իր առած խօսքը, իր ապագան, իր ծրագիրները, իր կոչումը, իր ընկերները։

— Ա՛խ.— թառաւ յանկարծ ակամայ աղջկան զսպուած չրթունքներէն։

Քայլ մը ևս գնաց ու կանգ առաւ քարացած՝ ձեռքը ծառի բունին. և խաչոր աչքերը լայն բացած գամեր էր խօսակցի դէմքին։

Շուշիկ ամենևին չէր երևակայած, որ խնդիրը արդէն այդ աստիճանի հեռուները հասած ըլլար։ Իսկ վարդապետացուն սիրտ առաւ ու մեզմացած ձայնով մը շարունակեց.

— Կը տեսնե՞ք, օրիո՛րդ, վախցաք. և տակա պատիւ կը բերէ ձեզի։ Ես արդէն կ'ըզդայի կարծես, որ այս բոլորի մէջ դուք դիտակցաբար չէ որ մեզմակից էք. ես արդէն կը զուշակէի, որ դուք ոչինչէ տեղեակ չէք։ Ատրաչէսը քիչ մը դիւրագրգիռ ու չա՛ւտ զբաւուող ազգ է. այսօր ա՛յս բանով, վաղը մէկ ուրիշով. հանդիպիցաւ ձեզի. կրթուած, պարկեշտ, համեստ աղջիկ մը ու սկսաւ երեւակայել. պէտք է հետացընել մեզմէ ու անմիջապէս խելքը գլուխը կուգայ։ Յաւը հոն է, որ մենք հիմա անոր աչքին իր թշնամիներն ենք դարձեր. ինչ որ ըսենք՝ կը հակառակի, կ'ընդդիմախօսէ. սատկայ ձեզի ու ձեր խօսքին պիտի լսէ անպատճառ։ Ահա՛, հիանալի առիթ մը, օրիո՛րդ. ցոյց տուէ՛ք, թէ ի՛նչպէս կը վարուի պարկեշտաւուն հայ օրիորդը։

Իսկ պարկեշտաւուն հայ օրիորդը հայհոյքը ծոռևրաւն մէջէն հեռուն փայփլուղ կէտի մը յառած՝ թաղուեր էր ինքն իր մէջ. ոչի՛նչ չէր տեսներ, չէ՛ր ալ լսեր ոչինչ. մինչ կրծքին տակ կ'եռար հաճոյքն ու հպարտութիւնը։

Հապա՛ բա էր. բարձր կ'ըզդար ինքզինքը, չա՛տ բարձր այդ դիմացը կեցած «խեղճուկ» մարդէն. այդ խոչոր, հսկայ մարդը իր ցանցառ մօրուքին ու պեխերուն մէջէն նկած էր անկէ իր ընկերը մուրալու։ Հաճելի գիտակցութիւն մը սկսաւ ողողել Շուշիկի հոգին. գիտակցութի՛ւն մը, թէ իր հմայքին ու ազդեցութեանը տակ ազան արդէն մէկդի նետել կ'ուզէր այդ վարպապետութիւնը, որ այնքան տհաճօրէն էր ազդկան։ Այն զգացումն ունէր, որ ինքը մեծ կոչումի մըն էր կատարած, որ փրկիչ մըն էր ինքը ու հոգի մը ազատած. ազատա՛ծ «այդ կեղծիքի ու միջնադարեան չրջանէն», ազատա՛ծ «այդ խելացի, ազնիւ ու ձեռնարէց ազան»։

Հաճոյքն ու հպարտութիւնը վառ կը ցոլար իր աչքերէն ու կարմրագած այտին ծերը էր անգիտակից ժպիտ մը։

Յանկարծ իր այդ նեղքին յուզման տակ ա՛լ հանդիստ կենալու անկարող՝ սկսաւ արագ երթեւեկել վարպապետացուին դիմաց, որ իր խօսքը վերջացուցած անհամբեր պատասխանի կ'ըսպասէր և ազդկան դէմքի փոփոխութիւններն ու յուզումը որոշ չէր գիտեր ի՞նչի վերագրել։

Քիչ մը տաեն երկա՛րն ալ լուռ կին։

— Ուրեմն, օրիո՛րդ, կրնա՞մ ձեր օգնութեան վրայ յոյս դնել։

Աղջիկը կարծես նոր արթընցաւ, ձեռքերը եռուէն խաչաձեւեց մէջքին ու կուրծքը դուրս՝ կանգ առաւ ազան դէմ։

— Հիմա դուք ի՞նչ կը կամենաք ինծմէ, պարո՛ն։

— Կը խնդրե՛մ, աշխատիք Ատրաչէսը համոզելու, որ հնար եղածին չափ չուտ հասկէ մեկնիլ կարազանէն։

— Ա՛յդչափ։

— Այո՛, օրիո՛րդ։

Շուշիկ ակընթարթ մը չհշա նայեցաւ ապուն ու յստակ ձայնով մը պատասխանեց հառաւած.

— Վազը առաւ ձեր ընկերը ձեզի հետ միասին հասկէ կը մեկնի։

— Ուրեմն կը խոստանաք հասկըցնելու, որ իր ըրածը անխելքութիւն է ու համոզելու...

— Վազը առաւ ձեր ընկերը ձեզի հետ հասկէ կը մեկնի.— կըրկնեց աղջիկը հրամայական ու արհամարհական չեչառվ մը։

Տեսակ մը յարգանք ու ակնածանք ապրեցաւ յանկարծ Մինասի հոգին դիմացինի այդ խրոխտ ու ինքնավստահից խօսուածքին ու վիրքին դէմ։

— Սրտագին չնորհակալութիւնս, օրիո՛րդ Մելինեան. ես ձեր այդ պղնիս վարմունքը երբե՛ք...

— Թողէ՛ք, խնդրե՛մ։ Ուրիշ բանի՞ք մը ունի՞ք։

— Ո՛չ, օրիո՛րդ։

— Այն տան... ներեցէ՛ք։

Ու վերցուց վիրքը գովի քարին վրայէն։

— Անշուշտ, Սրտաչէսին ալինէ չէք ըսեր մեր այս անսակցութեան մասին. թէ չէ գործը բոլորովին կը ծռի։

— Ապահով եղէք։

Ու սկսաւ արագ վիրքը բանալ։

Վարպապետացուն ձեռք տալ կ'ուզէր, բայց տեսնելով որ աղջիկը իր կողմն անգամ չէր նայեր, զվարթկամ թևթև մը բարեւեց ու հեռացաւ։

«Ալ չատ չեմ զարմանար,— կը մտածէր,— թէ ինչպէս Սրտաչէսը խոհեմ խելքէ ելաւ. այս աղջիկը ամեն բան կրնայ ընել. գեւ կայ այդ աղջկան մէջ։ Բայց... ի՛մ առջեւս, արդարամտութեան և ճշմարտութեան առջեւ ա՛ն ալ այդպէս կը խոնարհի»։

❧

Քանեանններուն սենեակը նոյն լամպի լոյսին տակ, նոյն մաքուր սեղանին չուրջը նստած էին պարոն Նիկողոսը և իր նոյն երիք հիւրերը։

Առատ կը բարձրանային նոր լեցուած թէյերուն գոլորշիները և կը հոսէր աչխուժ խօսակցութիւն մը։ կը խօսէին ազգային ու քաղաքական հարցերու չուրջ. կարծես խօսք մէկ էին ըրած. ոչ-մէկ

ակնարկութիւն վանքի, կրօնի ու հոգեւորականութեան մասին, որ նախորդ հանդիպումներու ժամանակ բնական կերպով խօսակցութեան առանցքը կը կազմէր։

Խօսակցութեան մասնակից չէր միայն Արտաշէս։ Անգամին մէկ անկիւնը քաշուած, գլուխը կախ, ուսերը-ուսերը իր թէյը կը խմէր, նոյնիսկ առանց անոնց խօսքին հետեւելու։ Տհասկ մը ցրուած էր, նեղսիրտ և անպատրաստ ոտքը կը շարժէր։

Աբգէն ամբողջ օրը անասելի տրամադրութեան մը մէջ էր եղած։

Յորնիկը գացեր էր Շուշիկը պառկի տանելու, բայց փոխանակ սովորականին պէս գլխարկին տակը անցընելով ազջիկը իր դէմը չառաջնորդելու, դուռը ելեր էր տիկինը երեխան գրկած ու տարօրինակ ժպիտ մը շրթունքին յայտներ էր, թէ քոյրը այսօր քիչ մը անհանգիստ է ու պահերը է կազդուրուելու։

Տղան գլխահակ դարձեր էր ետ ու ձորին մէկ խուլ անկիւնը նետուեր էր գետին։ Ալ ինչե՜ր ըսես չէր անցեր մտքէն. ենթագրութիւն ենթագրութեան վրայ։ Աբգենօք Շուշիկը վչացա՞ծ էր իրմէն. ինչո՞վ կրնար վիրաւորած ըլլալ. գուցէ երկուսան իր վարմո՛ւնքը ձորին մէջ. բայց չէ՞ որ այնպէս զուա՛րթ ու կատակով բաժնուեր էին նախորդ գիշերը իրարմէ։

Իրիկուան դէմ հազիւ մութը գետինն առած՝ կիզիչ անհամբերութեամբ Բանեանններուն երթալու կը պատրաստուէր, երբ Մինաս յայտնեց, թէ այս իրիկուն իրենք ալ միսային գալ կ'ուզեն, թէ ինքն ու Սերոբ վճռեր են արդէն յաջորդ առաւ անպատճառ Խծկանքէն մեկնիլ, որպէս զի քիչ մը անբաղձալիորէն կ'ըլլար առանց մեծաքանակ բարի հետանալը։ Արտաշէս դժգոհութենէն ակռաները սեղմած, առանց ոչինչ առարկելու, միացաւ ընկերներուն։

Եւ ահա՛ կէս ժամէն ուրիշի էր նստած էին հոն ու կը խօսակցէին։ և Արտաշէս իզո՛ւր ամեն գուռը չարժուելուն այն կողմ կը նայէր։ Շուշիկ ներս չէր դար։

Երբ անգամ մը նորէն, իր սպասածին հակառակ, փոխանակ ազջկան կրկին տիկինը սենեակ մտաւ, տղան ալ համբերել չի կրցաւ ու հարցուց.

— Օրիորդի անհանգստութիւնը դեռ չանցա՞ւ, տիկի՛ն։

— Իրա՛ւ, Շուշիկը ո՞ւր է, մէջտեղ չկայ։— հարցուց Բանեան իր կոգմէն։

— Ներսը նստեր կը կարդայ։— պատասխանեց կինը։

— Ի՛նչ, ի՛նչ կարդալու տանն է հիմա. ըսէ՛ թող գա՛յ թէյը խմէ։

— կարծես անոր բնաւորութիւնը չգիտես։ Ըսի՝ չեկաւ. ախորժակ չունիմ, կ'ըսէ։ Պնդելը աւելորդ է. ան որ չէ ըսաւ, չէ պիտի ըլլայ։

Ու Բանեան զժգոհ դէմքով մը դարձաւ նորէն իր հիւրերուն։

Քիչ մը վերջը խօսակցութեան տակ միջոցին էր, որ տիկինը նորէն երեսցաւ միջանցքի զաւակին ու կանչեց.

— Պարո՛ն Սիրաքեան, վայրկեան մը դուրս կու գա՛ք։

Տղան սիրաը նետեց. արագ վար դրաւ ձեռքէն դգալը, որով թէյին երեսի երկու-երեք փրփուրի հատիկներուն հետ կը խառնար ու ցառկեց դուրս։

— Ինչո՛ւ այդպէս խոժոռ նստած էք և ոչինչ չէք խօսիր.— հարցուց տիկինը սենեակին դուռը կրկին գոցելէ վերջը։

— Այսօր խօսազներ չա՛տ կան, խօսակցութեան նիւթն ալ չատ մաչուած է.— պատասխանեց ազան քմայնոտ։

— Եթէ այդպէս է՝ անցէ՛ք դուրս. Շուչիկն ալ դուրսն է.— ըսաւ տիկինը չատ մտածուար ժպիտով մը։

— Դո՛ւրս.— բացականչեց ազան մտաւիզ տան դուռը ցոյց տալով։

— Այո՛.— պնդեալ բրաւ տիկինը։

Աբտաչէս երկար ատեանով սեմէն դուրս նետուեցաւ, բայց թափով կանգ առաւ խոհին։

Գիչերաւան Թարմ զովութեան մէջ, լեցուն լուսնի ոգոզուն լոյսին տակ կեցած էր ազջիկը, ժապեքը ուսերուն, թեւերը ծալլած կրծքին, գլխաբաց ու աչքերը ազուն, արձանի պիրքով մը, ուրկէ Թունդ-ոհւ տաւեր մը ինկեր էր գետին՝ լուսնի Թափած ճերմակութեան վրայ։

Ծանր քայլերով մօտեցան իրարու ու ձեռք տուին։

— Այսօր հիւանդ էի՛ք.— առաջինը ազան խզեց լուութիւնը ցած ու ախուր ձայնով մը։

— Իսկ դո՛ւք ինչ ըրիք։

— Ի՞նչ պիտի ընեմ միամիտիակ. ձանձրացայ։

— Միամո՛ւկ, ինչո՛ւ. ձեր ընկերները հոս չէի՞ն։

— Ես ընկեր չունիմ այլևս, ո՛չ ընկեր, ո՛չ բարեկամ, ես միամուկ եմ, բոլորովին միամուկ։ Երէկ գոնէ կը կարծէին Թէ բնկերուհի մը ունիմ, բայց այսօր համոզուեցայ, որ չարաչար սխալած եմ. այդիմ միակ բնկերուհիս ալ տաւ-հիւանդ կը դառնայ ու ինծմէ խոյս կու տայ։

Ու ասիկա ըսուած էր այնպիսի ուռուած, քմայնոտ ու արտունչի չեչտով մը, որ Շուչիկ չի կրցաւ ինքզինքը զսպել, խնդաց ու նայելն բանից ազուն ձեռքը։ Եւ առանց բաց Թողնելու՝ ըսաւ անոսկ մը մայրական խօսուածքով.

— Ինծի նայեցէ՛ք, պարո՛ն Սիրաքեան. որ այսօր տաւ-հիւանդ ձեւացայ՝ չիտակ է. և ասկէ վերջն ալ չարունակ նոյն տաւ-հիւանդը պիտի ձեւանամ։ Արդէն ատոր մասին խօսելու համար ձեզի դուրս կանչեցի։ Մէկ խօսքով՝ մեր յարաբերութեան պէտք է վերջ դնել. կա՛րճ ու կտրո՛ւկ։

— Ի՞նչ...

Ու անդամալոյծ չարժուամոլ մը ձևաքը ապչկան ձևաքէն առ քաշեց։

— Ինչո՞ւ այդպէս զարմացաք, բարեկա՛մս. չէ՞ որ մեր յարաբերութիւնը կարըւի պիտի երկու օր ուշ կամ կանուխ։ Վազը կամ միւս օրը դուք պիտի երթաք ալ, ես՝ ձախ. որքան չուտ կարենք, այնքան լաւ։ Վերջապէս մտածեցէք անգամ մը ի՞նչ ապահովութիւն ունենալ մեր մէջը. վարդապետի մը ու մանկաբարձուհիի՛ մը մէջ։

Ու վերջին երկու բառերը շեշտուեցան մանաւանդ պարզ։

— Ա՛խ, եթէ սա է բոլորը.— բացականչեց Արտաչէս զբաղթ զարկով մը։— իմ վարդապետութիւնս, օրիո՛րդ, ինծի՛կնոջ ոտք դրած օրս միտս ու երէկ թաղեցի. մնացեր է հոգեհանդիսաը միայն։

Շուչիկ հազիւ կը զսպէր խնդուքը։

— Ի՞նչ ըսել կ'ուզէք։

— Ձեր ցանկութիւնը կատարուեցաւ, օրիո՛րդ։ Այլ ևս ես ինքս ալ կրծնաւոր ըլլալու մէջ հրապոյր չեմ գտներ։ Իմ կազմիս ու հակումներուս բանը չէ. վճռած եմ թողնել։

— Ա՛խ, սառնաք սիրուն խօսքեր են, որոնք չեն իրագործուիր։

— Ինչո՞ւ կը կարծէք։

— Դուք խօսք էք տուած. ձեր զգայարանները ունիք և ժողովուրդին ծառայելու ծրագիրներ։

— Շատ բան է փոխուած, օրիո՛րդ։ Տուած խօսքս արդէն կատարած եմ. իմ զգայարանս ունիմ միշտ, նեղած եմ մէջէս իմս չեղող զգայարանները. իսկ ժողովուրդիս ծառայելու կը փնտռեմ նոր ճամբայ։

— Այդպէ՞ս. և ի՞նչ ընել է հիմա ձեր նպատակը. ի՞նչ գործի կ'ուզէք ձեռնարկէք. դուբսը ոչինչ պատրաստ չէք գտներ. դուբսը պէտք է հոգ տանիք ու մտածէք։

— Ես մտածած եմ արդէն ամէն բան. պիտի գրեմ մեծ եղբօրս, որ ինծի քիչ մը օգնէ. հասկէ կ'երթամ էջմիածին. վերջնականապէս կը մտքերմ հաշիւներս ու կ'ըլլամ չիտակ Թիֆլիս.

— Ինչո՞ւ անպատճառ Թիֆլիս.— ընդհատեց ապչիկը խորամանկ նայուածքով մը։

— Նախ կը կարծեմ հոն ինծի համար աւելի գիւրին կ'ըլլայ հաստատութեան համար պատրաստութիւնը և երկրորդ... — Ու լռեց։

— Եւ երկրո՞րդ.— հարցուց ապչիկը։

— Եւ երկրորդ մօտիկ կ'ըլլամ իմ սուտ-հիւանդ եղոյ միակ բարեկամուհիս։

Շուչիկ ժպտեցաւ։

— Խնդացէ՛ք դուք.— բացականչեց ապան մեծ ոգևորութեամբ։— Ինարկէ հիմա իրաւունք ունիք վրաս արհամարհանքով նայելու. սը-

դա՛յ մը, որ այսօրուան պաշտպանածը վազը կը հերքէ. երէկուան առած խօսքը այսօր առքի տակ կու տայ. ես հիմա ինձմէ աղէ՞կ ու անպէտք մէկն եմ ձեր աչքին, չէ՞: Ազէ՛կ. իսկ ես կ'ըսեմ ձեզի, որ ես երբեք այս ստոխանի վատահաւատութեան զգացած չէի իմ մէջս իմ անձական ուժերուս վրայ. ես հաստատ գիտեմ այս վայրկեանիս ու կրնամ ձեզի խօսք տալ, որ ինծմէ բան մը զուրս պիտի գայ: Եթէ կ'ուզէք նայէն խնդացէք զուք, բայց ես ատրակոյս չունիմ. չատ չանցած ձեր սրտի յարգանքն ու մտերմութիւնը խլեմ պիտի ամբողջովին: Եւ երբ տակէ տարի մը վերջը նայէն այսպէս իրիկուն մը դամ ձեզի ճաք-բաթով ըսելու, որ յաջորդ առաւս մեկնիմ Մոսկուա բժշկական ֆաքիւլտէն, դո՛ւք այլևս առանց վարանելի ձեր ամբողջ սրտովը ձեր ձեռքը մեկնէք պիտի ինծի:

— Ճի՛շդ, ինչպէս այս վայրկեանիս.— կսկծ ապչիկը ջերմ ու սրտագին չեչտով մը՝ երկու ձեռքը ազատ մեկնելով:

Տղու թաթը բեկաւ իսկոյն. ակընթարթ մը վարանաւ նայեցաւ չեշտ ապչկայ աչքերուն և յանկարծ անզուսպ ուրախութեամբ մը խլեց անոր պարզած ձեռքերը ու սկսաւ խննթի պէս սեղմել:

Վայրկեան մը միայն:

Վերջը երկուքն ալ իրենց հայեացքը ձգեցին գետին. ու զլուխները թեթև մը վար խոնարհեցան. բայց ձեռքերը դեռ ամուր բռնած էին իրար:

Առաջին սթափողը ապչիկը եղաւ. կամաց մը ազատեց ձեռքը, ու մեղմ ձայնով մը հարցուց.

— Ուրեմն վազը առաւս կը մեկնիք էջմիածին:

— Վա՞զը. երբե՛ք: Քանի զուք հոս էք, հոս եմ և ես:

— Բայց որքան չուտ վանք վերադառնաք, այնքան աւելի չուտ կ'ելլաք Թիֆլիս, ձեր մխակ բարեկամուհիին մօտ.— կրկնեց ազատն իսօսքերը պրտիչ հնչեցնելով մը:

Ժպտացաւ Աբգարչէս ալ. մինչ ապչիկը ձայնի չափազանց խաղով մը աւելցուց.

— Հո՛ն, զո՛ւք ձեր համալսարանի պատրաստութեան, և՛ս ալ իմ աչխատութիւններուս մէջ. վերջապէս իրարու օգնել ալ կրնանք, հիմա մեր մասնաճիւղերը իրարմէ այնպէս հեռու չեն, ինչպէս առաջ:

— Այդ պատմանով ես կը մեկնիմ այս վայրկեանիս.— բացականչեց ազատ ձեռքի ուժգին ու աչխուժ չարժուձով մը:

— Մինչև վազը առաւս կարելի է ուչացընել.— կատակեց ապչիկը:— Բայց վազը առաւս անպատճառ, ձեր ընկերներուն հետ միասին: Եւ մենք այլևս հոս իրարու չենք հանդիպիր:

— Ուրեմն ցտեսութի՛ւն. Թիֆլի՛ս:

Նորէն սեղմեցին իրարու ձեռք. ապչիկը գլխով բրաւ. և լուսնի առատ լոյսին մէջէն իր սենեակ առաւերին հետ մտաւ առաւ:

Սիրաքեան գեղ վայրկեան մը քարացած մնաց իր կեցած տեղը, աչքերը յառած գրան, ուրկէ Շուշիկ նոր էր անցեր։

Յանկարծ արթընցաւ կարծես ու խայտացող անհամբերութեամբ մը մտաւ սենեակ ու զարձաւ ընկերներուն։

— Հայր կարծեմ ժամանակ է պառկելու, քանի որ պէտք է կանուխ ճամբայ իյնանք, արեւը չելած։

— Ուրեմն հասա՛ւ կը մնկնիք վաղը։— հարցուց Քանեան մխա երկուքին դիմելով։

— Այո՛։— պատասխանեց Արտաշէս անոնցմէ առաջ։

Երկու վարդապետացուները իրարու նայեցան։

Երկարատեւակի դէմքին գոհունակութեան ժպիտ մը կը խաղար։ Եւ աչքովը թեթեւ կծկում մը ըրաւ ընկերոջը. «Տեսա՞ր»։ ըսել կ՚ուզէր կարծես։

Ելան ոտքի ու հրաժեշտ առնելու սկսան։

Քանեան ընկերացաւ մինչեւ տան դուռը. հրաւիրեց պարոններըը անպատճառ իր տունը այցելել, երբ Ալեքսանդրապոլ գալու ըլլան։

Տղաք վերջին անգամ մը ձեռք տուին, օրհորդին իրենց բարեւը տալ խնդրեցին, և ուղղուեցան դէպի իրենց սենեակը։

Երբ առանձին էին մնացեր, Մինաս տեսակ մը քնքշութեամբ գարձաւ ընկերոջը.

— Արտաշէ՛ս, ես դիտէի, որ ընկերներուդ սիրտը պիտի չհատես ու միասին պիտի գաս. ես դիտէի, որ պիտի մտածես՝ դուն տղոց ու խնդացի տղայ ես։ Ա՛լ օդին տանք մեր մէջ եղած բոլոր յիմար խօսակցութիւնները։ Ուրեմն վաղը առաւ կ՚իջնենք Տեկոր, կը վերցնենք ձիերը ու անմիջապէս ճամբայ կ՚իյնանք։

— Այո՛։— ըրաւ ոգեւն կարճ.

— Ձեզի բան մը ըսեմ, ես այլ ևս յոդնեցայ այս թափառելէն. մանաւանդ Անին ու չրջակայքը սւելի երկար ժամանակ կը պահանջէ. յառաջիկայ գարնան կու գանք. իսկ հիմա չիտակ երթանք էջմիածին։ Հէ՞, ինչ կ՚ըսես, Արտաշէ՛ս. — հարցուց Սերոբ՝ Մինասի հետ կանխապէս պատրաստած դերը վարպետութեամբ կրկնելով։

— Այո՛, չիտա՛կ էջմիածին։

Սերոբ յաջողութենէն չլսցած՝ գոգոռուկ մը Մինասի ձեռքը սեղմեց քովէն։

Երեքը միասին մտան վանք։

Արտաշէս առջևէն մտածկոտ քայլերով, գոյգն ալ անոր հետևէն։

Եւ երբ իրենց սենեակի սեմէն նոր պիտի մտնէին՝ Մինաս ծանօթաւ կամաց մը ընկերոջը ականջին.

«Ազատեցինք»։

ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

Վ. Ի. ՊԱՅ

Գրուած է Մխէխէն, 1898-ի սկիզբը.
տպուած է Թիֆլիս «Մուրճ»-ի մէջ եւ Պալիս «Ոսատճ»-ի մէջ

Դ ե ր ա ս ա ն ո ւ հ ի ն

Ը

Պառաւը մինակ էր անհակին մէջ։

Փաղոցին կողմը, նեղ պարտէզի մը վրայ նայող գեանայարկ պառաւհանին քով կծկուած էր բազմոցին անկիւնը ու ձեռքի երկար գնդին սաթէ համրիչը կը դարձնէր հատիկ-հատիկ. մինչ իր անմրմունջ ու անդադար երերցող չրթունքները իրենց առաջուան ազօթքը կը կրկնէին մեքենական արագութեամբ։

Յօրանջները սկսան չո՛ւա-չուա իրարու յաջորդել. ուրիշն ազօթքը արդէն մօտ էր իր վերջին, երբ յանկարծ անագին դղրդուժով կառք մը անցաւ փաղոցին վերէն ու եկաւ չիտակ պարտէզին վանդակոտրմին առջեւը թափով կեցաւ։

— Հա՛րս, նայէ՛ ալ է.— կանչեց պառաւը ու չտապեց իր ազօթքին վերջին տուները հնար եղածին չափ համառօտ ատարանալու։

Կից անհակէն ափիկնին ու սպասուհին միասին գուրս վազեցին սրահը. ուրկէ սպասուհին աճապարեց պարտէզ վանդակոտրմի գուռը բանալու։

Յարգէ գլխարկի մը լայն եղերքին ու ճերմակ վուալին տակ կարսուած դէմք մը կառքի պատուհանէն անհամբեր օդէ համբոյրներ կ'ուղարկէր դէպի պառաւին լուսամուտը։

Կառապանը կառքին գռնակը բանալուն պէս՝ վանդակէն ապասուած թռչնակի մը նման՝ աղջիկ մը թռաւ վար թեթեւ ու աչխուժ, կարմիր չրջազգեստին բարակ ծալքերը հովին տալով։

Թոթուեց արագ դէմ եկող ափիոնջ ձեռքը ուժով մը, բարեւեց, խնդաց ու սլացաւ ներս։ Մինչ ափիկնը կ'ըլտապկր դէպի գուռը կառքէն իջնող սեւազգեստ ու սպիտականեր կինը դիմաւորելու։

կինը իր այրի քոյրն էր. իսկ երիտասարդուհին ուրիշ արդէն մեռած քրոջ մը ազջիկը, որ հիմա որբևայրիին քովը կ'ապրէր:

— Իսկ քուդէ՞նս. քուդէնս տունը չէ՞.— հարցուց ազջիկը խոժոռած, երբ սեմէն ներս նետուելով սենեակին մէջ պատուէն զատ մարդ չտեսաւ:

— Հո՛ս է, հո՛ս, խնկեմ: Անոր գործը չգիտե՞ս. վերը իր սատանայի խուցն է, ծառեր կը կարգայ.— պատասխանեց պառաւը կէս զժգոհ, կէս հպարտ շեշտով մը:

— Կարգա՛յ ու կարգա՛յ. ես հիմա անոր կարգալ կը սորվեցնեմ.— բացականչեց ազջիկը ու վազեց սանդուղներէն վեր:

«Սատանային խուցը» տան ետեւի կողմէն պարտէզին վրայ նայող լուռ, զով ու լուսաւոր սենեակ մըն էր, որ հիմա առժամապէս Հրանտի ընախօսական աշխատանոցը կը ներկայացնէր:

Պատերէն կախուած էին ուղղի պահազան հատուածները պատկերացնող քարտէզներ, ջղային կնդրուկական թելերու ահագին ձեռանակար մը: Պատին քով, քառակուսի անծածկ հատարակ սեղանին տակ նստած էր անմեհն չիչ մը, ուր լեցուն ապրանքին մէջ կընճռռուտներ էր երկար-բարակ մսի զանգուած մը: Նոյն սեղանին վրայ ապակի նուրբ ամաններու մէջ, քանի մը ծովային պուլխներ, զանգակի կամ հովանոցի նմանող, որոնք իրենց մարմնի մէկ ծայր մասը չարուշտակ կը բանային ու կը գոցէին չուբին մէջ: Բովը նկարարական գործիքներ: Ներքի տափակ կտորի մը վրայ գնդասեղներով պրկըւած էր խխունջի մը բացուած մարմինը: Ու այս բոլորի վրան ու չուրջը ծովային խեցիներ, ժժմակներ, սպունգներ խառն ցան ու ցիր: Պարզ էր, որ տղու ամէն պատրաստ գործին բան մը միասին էր նկած: Անգին ուրիշ սեղան մը, պատուհանին ճիշդ առջեւը, որուն մէջտեղը մանրապիտակ էր գրած. ու բոլորտիքը անդամահատական ունելիներու, կեռներու, փորձի սրուակներու, ապակիներու, գոյնզգոյն փոքրիկ շիշերու սոսկալի խառնակուփթին մը: Ատոնց քովէն ալ քանի մը բաց ու գոց գրքեր, որոնցմէ մէկուն բաց երեսին վրայ ինկած էր նորածինի մը գեհ ամբողջովին չկազմակերպըւած գանգը կէսը արդէն ոսկոր, կէսն ալ գնդնած մագաղաթի նման:

Կարճ խօսքով «սատանայի խուց», ուր անեցիք բոլորն ալ սենեակ մը պատկառանքի ու վախի խառնուրդ զգացումով ներս կը մտնէին: Իսկ պառաւը բացատրականապէս ո՛չ մէկ պատմառով ներս մըտնելու չէր համաձայներ. և առջևէն անցնելու համար ալ ամէն անգամ ու ատիճանի սանդրները օդնութեան մը կանչըէին չարին ճամբան գոցելու համար:

Ահա՛ այդ սենեակի վրայ էր հիմա անխոնջ հագուստներով, օրրան ալիտի մը մէջքին փաթաթած էր Հրանտ:

Մարմնի լեցուն գծերով, վայելչակազմ երիտասարդ մը. դէմքը

մաքուր ածխած, մօրուքի փունջ մը մխոյն ծնոտին ծայրը, արծուի քիթ ու խոշոր թուխ մաղոյ աչքեր։

Դիրքը ձեռքին հետ ծանրկերան դրած՝ զգուշացած անհանգստութեամբ մը վարի ազմուկին կը հետեւէր ժպիտը չրմռնչքին, երբ ազջիկը հովի մը պէս սենեակէն ներս խոյացաւ։

Նետուեցաւ չխուկ ազուն վրայ, խլեց դիրքը ձեռքէն, նետեց քովը աթոռին, ու գայրացկոտ վրայ առաւ։

— Ելի՛ր, չո՛ւտ, ելիր ոտքի՛։ դո՛ւն, անպէ՛տ, անչնա՛րհք, փիլիսոփա՛յ։ Ո՞ւր ես այս երկու չաբսի է։ ի՞նչ պիտի պատահի քու եւ տեւէդ։ արդէն հազ խօսիլը չարժէր։ Քալէ՛ չուտ դո՛ւրս այս գարշելի ֆուռւսի սենեակէդ։

Տգեղ կը ժպտէր մխոյն նոյն դահ ու հնդնոտ ժպիտովը։ Եւ ձգեց, որ քաշէ թեւէն, հանէ ոտքի։ Եւ առանց սչփնչ խօսելու թեւ-թեւի արագ գայթեցան սանդուղներէն վար։

— Տե՛ս, մօրսթո՛յր, ինչպէս խելօքցաւ։ կեցի՛ր, ես անոր կը սորվեցընեմ, թէ ի՛նչ ըսել է չարաբնակ թազուիլ բզկտած ուղեղնուրս ու դրքերս մէջ, և օրերով Գասը-գիւզ մնալի ոտք չդնել։ Ի՞նչ այդպէս պատճառ, չխօսի՞ս։— գարձաւ յանկարծ երիտասարդին, վեւալին տակ սմսլուած դէմքը անոր յամառ հայեացքին դէմ բռնելով։

— Երբ քու լեզուդ բացուի՝ ալ ուրիշներուն խօսելու կարգ կը հասնի՞։— եղաւ վերջապէս Հրանտին հանդարտ պատասխանը։

— Ազ՛կ։ եմէ խօսելու ժամանակ չկայ, գոնէ փչ մը գործ տե՛ս։ հանէ՛ նայիլ սա վուալս։ վա՛յ, կամա՛ց, տե՛ղը։ Դեռ չվերջացա՞ր, ի՞նչ կը տնաքնաս։

Բայց Հրանտ դիմամբ սկսաւ տ՛լ ուելի ծանր չարժիլ։

Ազջիկը ցասկոտ նետ քաշից գլուխը անոր ձեռքերուն մէջէն, նետեց վուալը սեղանին վրայ, հանեց իսկոյն գլխարկն ալ, ու անթիւ խոպոպիկներով դէմքին չորջը թափուած մանչու կարճ մազերը, ափսեծի քայլի պէս, թափ տուաւ։

Շարժուն դիմագծով, փոքր, ամէն բանով հետաքրքիր ու հետաքրքրքրուող միչտ ժպտուն դէմք մըն էր։ Պզտիկ բերան մը նուրբ ու սեղմ չրմռնչքներով։ կապտաւուն ճերմակ փոնին մէջէն չոգանակի բիծեր, որոնք կարծես ամէն վայրկեան իրենց փայլը կը փոխէին։

Ամառուան պարզ ու թեթեւ կարմիր չրջազգեստը ճաշակով զբրկած էր ճկուն հասակը։ ու վրայի բարակ ճերմակ ժաքեթին կոճակները բաց էր բոլոր։

— Եւ ինծի նայէ՛, ես հաս տունը նետելու համար չեկայ։— գարձաւ նորէն երիտասարդին։— Գնա՛ չուտով հագուստներդ կարգի բե՛ր քիչ մը, անճոռնի գլխարկդ ալ դի՛ր, երթա՛նք փարոսը։

Ու մինչեւ սրմուկը հասնող բարակ ձեռնոցները վարժ չարժուելով մը ձեռքէն հանելով՝ զարկաւ ազուս դէմքին։

— Ա՞ի՛կա ըսելո՞ւ համար ինծի վար բերիր։— հարցուց Հրանտ ու հառաչանքի նմանող, կեղծ-յուսահատ, ծպրտչարժ չեչառվ մը ա-ւելցուց։— արդէն քու ձեռքդ իմդողը ազատում չունի։

Աղջիկը ակընթարթ մը նայեցաւ անոր եաեւէն ժպիտը այտին։ վարի շրմունքովը թեթեւ կծկուած մը ըրաւ։ ու յանկարծ դարձաւ, նետուեցաւ անկիւնը նստած պառաւին գիրկը։

— Է՛, մայրի՛կ, ի՞նչպէս ես, ազէ՞կ ես։ Տղաքդ խելօք կը կենա՞ն, թէ՞ քեզի նորէն չատ կը բարկացընեն։ այդ քու խոչոր, մօրուքաւոր ազաքդ։ հը՛ը՛մ։ քու տեղդ և՛ս ըլլալու էի։ Երեւակայէ՛, մայրի՛կ, այս առաւօ բիսքուիթի խանութը դէռ գոց էր, որ առջեւէն անցանք։ իակ ես, գիտե՞ս, որ քեզի համար ուրիշ տեղ չեմ առներ։ հո՛ն միշտ թարմ է ու փափուկ։ ճի՛շդ քու դոյութիւն չունեցող ակռաներուդ համար։

Ու կնոջ վրայ հասած՝ անոր խորշոմած այտերը կը չոյէր։ Մինչ պառաւը կը խնդար ներողամիտ ու բարի խնդուքով մը, որ սիրած ճահիլին ամեն կատակ ներելու պատրաստ է։

— Դո՛ւն ըսէ, մայրի՛կ, ես ազէկ ազջիկ եմ, չէ՞։ չա՛տ ազէկ։

— Ազէ՛կ ալ, ազուռ՛ր ալ, դեռ ուելի՛ն ալ։— պատասխանեց պառաւը ծանր-ծանր։— Ու գիտե՞ս, Մինէ՛, անհամեմ, մէկ-հատիկ կ'ըլլայիր, եթէ...

— Նո՞ւ, եթէ՞...

— Եթէ այդ քու Թատրոնը խաղալէդ ձեռք վերցընէիր։

— Աա՛, այդ կէտին չդպչի՛նք։— բացականչեց Մինէ, ցատկեց ոտքի ու վազեց դէպի սեղանատունը։

— Բայց, մօրաքո՛ր, չկարծես թէ փոքս կուշտ է։

Երկու քոյրերը հոն էին արդէն։

Աղջիկը հազիւ սեղանին առջեւն էր անցեր, որ սեմին վրայ եւ-բեւցաւ Հրանտ ու Թեւովը ձեռքի փափուկ սեւ գլխարկը մաքրելով՝ ազնիւ խանարհութիւն մը ըրաւ։

— Եթէ ապնուաչուք օրիորդը կը բարեհաճի...

Մինէ արտորալով մէկ-երկու պատառ ալ կերաւ, ու Թաւ ոտքի։

— Հապա անօթի էի՞ր։— նկատեց տանտիկինը։

— Ա՛խ, անոր անօթութիւնը։— պատասխանեց քոյրը։

— Սա քու պրոֆեսորի խոչոր հովանոցդ նորէն հետդ ա՛ռ. գլխարկ չեմ դնելու։— հրամայեց ազջիկը։

— Ծալէ՛ դուն. ես գիտեմ արդէն, որ առանց իմ հովանիիս վերջ իվերջոյ քայլ մը ընել պիտի չկրնաս։— առարկեց ազան երկմիտ։

— Շատ չուշանա՛ք, Մինէ՛։— պատուիրեց որբեւայրին։

Պարտէզը Հրանտ բացաւ հովանոցը։ Աղջիկը մտաւ անոր Թեւը. ու երան փողոց։

Ճանապարհը բնակութիւններէն դուրս նկաւ չուտով, ու ծովի

սիզուա եղերքէն մաու Ֆէնէռ-պահչէի կարճ թերակղզին, որուն ծայրը ճերմակ փարոսը կը ցցուէր վեր, կարծես անդղկիւթի դանչը եղջիւրը քթին։

— Ո՞ւր ես այս քանի տանն է, ամօթ չըլլայ հարցընելը։— բացաւ Մինէ խոստակութեան ծայրը։

— Գիտե՛ս, սիրելի՛ս, իմ զբաղումներս։

— Ա՛, քու զբաղումնե՛րդ. իհարկէ՛։

— Ազէ՛կ, դուն ի՞նքդ ուր ես. — նկատեց Հրանտ։

— Գիտե՛ս, սիրելի՛ս, իմ զբաղումներս.— պատասխանեց աղջիկը՝ հնար եղածին չափ ազու ձայներն ու չնչաին նմանցընելով։

Հրանտ խնդալու սիրտ ունցաւ։

— Ինչո՞ւ կը խնդաս. եթէ խնդիրը զբաղումին գայ՝ ես քեզմէ աւելի զբաղում մը ունիմ վրաս. բայց, ա՛ս, նոքին եղեր ակեր եմ։ Ի՞նչ զբաղում. քու անչնորհքութիւնդ։ Արդէն վերջին ժամանակները քանի կ'երթաս այնքան եսական կը դառնաս գլխուս։ Էրիկ-մարդ ես վերջապէս. ձեր ամենէն լաւը իր տեղը կենայ։

Ու ձեռքի արհամարհա չարժուձմ մը ընելով՝ լռեց։

Թերակղզիին կեդրոնը ցած ու փոքր գեղջուկ սրճարանն էր նստած՝ ծերուներ ծառերու հովանիին տակ։ Տարիքոտ թուրք մը բնկար աւելը ձեռքին ասագին փոչի էր բարձրացուցեր գրան առջևը, ուր ցածլիկ սիմառակներու ամբողջ բլրակ մը կար իրարու վրայ դիզուած։

Ջոյջը անխօս անցաւ սրճարանին եսակէն ու անդին փարոսի ճերմակ պատին տակ կանգ առաւ։ Գետինը ամբացած էր հոս ու մինչև ծովը հարթակ մը կը կազմէր, որուն ոտքը ցիր-ցան ժայռեմինչև ծովը հարթակ մը կը կազմէր, որուն ոտքը ցիր-ցան ժայռերու խառնուկ չրջանակի մը մէջ ծովուն մէկ կտորը բանտարկուած սրանզուխնէն անդադար կ'երթար գայրոյթի ճոզբիները չրթունքին։ Մինչ հեռուն ընդարձակ ու ազա՜տ կը փռուէր ջուրի անդորը մակերեսը արեւի ոսկեհոս հայեացքին տակ։

Տղա՛ն գոց հովանոցին կրճընած, աղջիկը երկու ձեռքերը մէջքին, կեցած էին իրարու քով. երկուքի աչքերն ալ այդ անծայր տարածուխնան վրայ սեւեռուն։

Ջո՜վ, անո՜ւշ ու ծովուն չունչը գոցցած հովիկ մը կու գար կու մաց բացերէն՝ Մինէի ցրիւ գանգուրներուն ու ազու փազպատի թոյլ կոպին հետ խաղալու։

— Գիտե՞ս, Հրա՛նտ.— գարձաւ յանկարծ աղջիկը։— Գալ ամիս նոքին հայերէն ներկայացում մը պիտի ունենանք. իրաւունք գրեթէ առնուած է արդէն.

— Մի՞թէ.— ըրաւ երիտասարդը անտարբեր։

— Ինչո՞ւ կը խնդաս. եթէ խնդիրը զբաղումին գայ՝ ես քեզմէ աւելի զբաղում մը ունիմ վրաս. բայց, ա՛ս, նոքին եղեր ակեր եմ։ Ի՞նչ զբաղում. քու անչնորհքութիւնդ։ Արդէն վերջին ժամանակներդ

թէ մեր սովորական, օտար ու թափթփուկ, միշտ կրկնըւող խաղերուն մէջ, որոնց մեծագոյն մասը զառամ մելոդրամներ են միայն, հիմա ինծի որչա՞փ կ'ոգեւորէ այս նոր, մե՛ր կեանքէն, թարմ հայեացքներով հոգեբանական պիէսը, ուրկէ գերասանը իրական ու ապրըւած բան մը դուրս բերել կրնայ։ Ինչ. եթէ սակայն չըլլար, դուն կը կարծես քա՛ւ այս երկու չարաթեաւան աներեւոյթանալդ այդպէս աժան կը ներէի՞ քեզի։

Գայլ մըն ալ մօտեցաւ տղուն, ձեռքը թեթեւ մը դրաւ անոր ուսին. յանկարծ ետ քաշուց ու մատտոյդ տարածեց դէպի ծովը։

— Արդէն կ'երեւակայեմ ինծի բեմին վրայ. ա՛խ, ինչպէս կաթոցներ եմ. այն տեսակ մը թատրոնին յատուկ մթնոլորտը, ինքս սեղտուած խաղիս նրբութիւններուն մէջ ու այն անհանգիստ, բայց դուրեկան անուշ յուզումը կրծքիս տակ...

Եւ կարծես այդ բոլորը աւելի խոր դգալու համար՝ աչքերը գոցեց. ձեռքը դեռ միշտ պարզած ծովուն վրայ, թեթեւ մը ժժգունած, և պինդ խածած ծնոտին ու կիսաբաց շրմունքներուն հնչականի արտայայտութիւնը ձեռնուած։

Հրանտ անթարթ կը նայէր անոր, տարօրինակ խոժոռ ու չոր նայուածքով մը։ Վերջը խիստ պիտական ու պաղ չնչաւով մը պատասխանեց.

— Թէ մեզի յարմարուղ սմեն աչխատանք ինքնին հաճոյք մըն է՝ չատ ալէկ կը հասկընամ. կը հասկընամ նաեւ, որ մարդ ամբողջովին իր գործին վրայ կեդրոնանայ. բայց այդ ատիճան վերանալ, էքսթազի հասցընել ինքզինքը, չէ՛, ատիկա արդէն պարզապէս ջղային հիւանդութիւն է. քանի անգամ ըսեր եմ քեզի։

Մինէ աչքերը բացաւ ու ժպտեցաւ հազիւ նշմարելի ժպիտով մը։

— Այդպէս կը խօսիս, որովհետեւ չես ապրած այն ներքին գոյն ու զգացումները, որոնք ոգեւորուած արուեստագէտի մը հոգին կը փոխարկեն։

— Ա՛խ, փոխարկի՛կ, արտի՛ստ, ոգեւորութիւն. — բացականչեց տղան տաքցած ու կրքոտ։ — Նո՛ր-խոչոր, դառա՛րկ բառեր, որոնց տակը փոքրիկ զգացումներ են ծածկըւած միայն։ Բնաւ վերլուծո՞ւ ես անգամ մը քա՛ւ սեփական յուզումներդ, որ անուշ դող, արիւնաթաւ անհանգստութիւն, բեմական տենդ և այլն կ'անուանես չարունակ։ Մինչ գիտնականներս ուրիշ անուններ ունինք այդ բոլորին համար, որոնք թէեւ այդքան բանաստեղծական չեն հնչեր գուցէ, բայց աւելի որո՛շ ըլլալու առաւելութիւնը ունին։ Սկսիլ մը ընելու վա՛խ, ուրիշներուն հաճոյանալու ձգտո՛ւմ, գովասանք լսելու հաճո՛յք, ու սոսկալի փառասիրութի՛ւն, ուրիշ ոչինչ։

Ու տաքցած ուժով զարկաւ քարի փոքրիկ կտորի մը, որ հարթակին վրայ գլորելով՝ ցատկեց ծովէն դուրս ցցըւած ժայռի մը կտրծքը, հոնկէ ալ ճոպրեց ջուրին մէջ։

Մինչ նոյն հանդարտ դիմագծերով կը նայէր աղուն. վերջը վայրկեան մը հայեացքը ձգեց վար իր փոքրիկ կօշիկին ծայրը. և ուղղաբևով պատասխանեց.

— Շիտա՛կ է. քու բառնալդ կան ու մնձ գեր կը խազան քուլիսներու կեանքին մէջ: Բայց այդ բոլորը, այսպէս ըսած, առաջինն սահիճանն է միայն. սարին սահիճները, որուն վրայ իսարիկ կանգ կ'առնեն չա՛ս չատերը: Սակայն կայ և երկրո՛րդ սահիճանի զգացում մը. ա՛ն, որ իսկական առեղծագործող ուժը կը զանազանէ գեղարուեստի սովորական պաշտօնեաներէն:

Աչքերը վառեցան, ակընթարթի մը չունչ առաւ և յանկարծ արագ վրա՛յ առաւ ուխլի ու ուխլի կըրքոտող չնչառով մը.

— Ի՞նչ. երբ ես բեմին վրայ դերիս մէջը խրած՝ իմ յուզումներուս և ուժերուս հետ կը նկըրտիմ, կը կարծես մէջս վա՞խ կրնայ առաջ գալ: Վա՞խ. ուրկի՞. այդ դիմացի բազմութենէն. անկի՞ պիտի զովասանք մուրամ ինծի: Ա՛հ եթէ դիտնաս երբեմն ինչպէս սպաննիչ ու զայրացընող են այդ ծափահարութիւնները, որոնք ինծի իմ զգացումներուս բարձրութենէն վա՛ր, վա՛ր կը քաշեն անխնայ: Ո՞վ են առնոք, այդ ծափողները, այդ իմ խազալիքներս, այդ իմ խազիս առուկները:

Ու արհամարանքի առարկա մը պահ մը խօսուածքը կարճեց: Եւ ըղձրտալին փոխուած, ուխլի հանդիսատ թռնով մըն էր, որ չարունակեց. մինչ աչքերուն բոցը ա՛լ ուխլի վառիլ սկսաւ:

— Իմ ճշմարիտ ոգևորուած վայրկեաններուս մէկ զգացում մը միայն ծծուած է ամբողջ կազմիս մէջ. կէ՛ս գիտակից, կէ՛ս քնազդօրէն: Թէ՝ այդ բոլոր բազմութեան վրայ հիմա սիրոզը և՛ ես, թէ հարիւրաւոր աչքեր կախուած են իմ աչքերէս, թէ կուրծքս ցոյտող ամէն մէկ ճիչը անոնց կուրծքը կը խրի սո՛ւր, թէ դէմքիս թեթև մկն մէկ չարժումը յոյս, վախ, անդչանք ու սոսկափ կը թափէ անոնց վրայ: Դուն ի՞նչ գիտես այն յուզումը, որ մարդուս չիշերէն կը վազէ, երբ քեզի նման հարիւրաւորներ քեզի հետ կը չնչեն, քեզի հետ կը տանջըւին ու քեզի հետ կը խնդան. անոնց հոգին դո՛ւն ես այդ վայրկեանին: Աղդե՛լ, ներչնչե՛լ, սիրե՛լ. տո՛ւր ինչ անուն որ կ'ուզես: Ուրիչները իր հոգեկան ուժի՛ն, իր առեղծագործութեանը ննջասրկելուն մէջն է գեղարուեստի էական հաճոյքը. և այդ իր ուժի գիտակցութենէն բղխող հպարտութիւնն ալ իր զովասանքն է ու փառքը, որ բնաւ կարիք չունի զուրսէն մուրալու:

Լուեց վերջապէս, ու մտածկոտ կեցաւ քիչ մը. հաքը կամաց մը դարձաւ երիտասարդին և նոր նչմարեց, որ Հրանտ դէմքի ցրուած արտայայտութեամբ մը կոհակներէն դուրս ցցուած ապառաժի մը կը նայէր պիչ նայուածքով: Անտաղոր կատրուած ու վչտոտ բան մը կար իր անչարժ պիրքին մէջ, որ ապչկան սիրտը խոցոտեց:

Մօտեցաւ կամաց մը անոր. ու ոգին սթափեցաւ իր կաչկանդումէն։

— Նո՛ւ, այդ ի՞նչ դէմք ես չինես։ Երևի այս բաներս ալ քեզի համար հիւանդութեան նոր նշաններ են միայն։ Հա՞, պարո՛ն գործատէր փիլիսոփայութեան ու բնախօսութեան։

Եւ չրթունքներու կատակի ծամածռութեամբ մը դէպի անոր դէմքը ծռեցաւ։

— Ո՛չ։ Տիրո՛ւ և ո՛ւժ. երկու բառ, որ բոլոր քնոզէաները իսկոյն պիտի փախցնեն։ Բնութիւնը ո՛ւժ է միայն, բնութեան երեւոյթներն ալ տիրելու կոչ. և դո՛ւն ալ այդ առողջ բնութեան առողջ զաւակը. դնա՛ և տիրէ՛։

Ան բռնած էր տեսակ մը հանդիսաւոր ձայնով. ու չեչոտ՛վ մը, որ կարծես այդ խօսքերը արտասանելը ահագին ու վճռական գոհացում մը ըլլար արտասանողին համար։

Մինչ չատ ազէկ հասկցաւ այդ բոլորին եւևի իմաստը։

Աչքերը երիտասարդի աչքերուն՝ երկու ձեռքերը կողքերուն դրած՝ յամառ դիրքով մը կեցաւ անոր դէմը. ու չարաճճի վատահ ժպիտով մը կցկց.

— Բայց ամենէն առաջ քեզի։

Ը

Հրանտ կիրակի օրուան նոր զգեստներով, արմուկը իր աչխատութեան սեղանին կնռած, ձգտագիտական ամսաթերթի մը նախորդ էրիկնը առած վերջին համարը կը թղթատէր. ձեռքի անփոյթ ու թափառ չարժումով մը, կարծես բանով մը զբաղած ըլլալու համար միայն։

Հատորը վերջացաւ։

Գոցեց, նետեց անդին միւս գրքերուն վրայ, դրաւ աջ արմուկը ալ սեղանին, ու գլուխը առաւ ափերուն մէջ։ Բաւական երկար մտերձեցաւ գոռչ՝ մանրադիտակի հպարտ ու փայլուն վզին։

Ու Հրանտ երկար ձնաց այդպես անշարժ. մինչև որ յանկարծ խիտ մօտիկէն հնչող սարեակի մը սուր ճիչը անոր գլուխը ակամայ բարձրացընել տուաւ։

Թռչունը պատուհանին մէջէն դուակեց սեղանի գրքերուն վրայ, հոնկէ ալ նորէն պատուհանը. ուր զորձի-մարզու մը կատարեալ

հապճեպով մաքրեց կոստիկովը կոշիկի փնտռրտանքէն մէկ-երկուքը, իսկոյն նետուեցաւ պատարկուեանի մէջ ու թաւա պէպի պիմացի բարձր թմբնին՝ իր ապպայիններու փաթրիկ խումբին միանալու, որ հոն ճիգերին մէջ սոսկալի ազմուկ էին բարձրացուցեր։

Հրանտ դեռ արմուկները ականին, աչքերը գոց, լսուած ականջով կը հետեւէր այդ ճըլըզլուցին։

«Սեռական ընտրութիւն. ախ՛ր... նա՛յն բանը, ամէն անգ, ամէնքիս համար... և յաւիտենական զգացում. միայն հոն մեր թմբնիին վրայ առանց փիլիսոփայութեան...»

Թը՛ռ՛ռ՛։

Ու փոքրիկ հոյլը աներեւնելուն թաւալգէն գալս խոյացաւ դէպի նոր ապաստէզ մը իրենց «սեռական ընտրութեան», իրենց «յաւիտենական զարգացման»։

Երիտասարդը չսիրեցաւ, զոյգ ականջը պարզեց ձիգ առաջ, կրծքնեցաւ ամուսի թիկունքին ու ձեռքերը գլխուն հանը կապած՝ հայեացքը դամեց երկրնքի տաք-կապոյտ մէկ կտորին։

Ու պահերացաւ աչքերուն դէմ այն գով ու մամռոտ խոռոչը՝ ուս-ուսի տուած ամենի ժայռերու հովանիին տակ. ուր ծովը, մաքրամաղ կաուսի մը պէս, իր հակայի լեզուովը անդադար կը լիզէր գետինը փռուած նաբրը ու փոփոկ աւազէ մարթիին եզերքը։

Եւ հոն խոռոչի պատը կազմող ապառաժի մէկ բնկուածքին վրայ նստած իրե՛նք. ինքն ու Մինէն։ Ինքը չնոտ պատին. իր ուսին ազդկայ ձեռքը. ա՛յնպէս պատահաբար խօսելու ատեն գրուած. ու ազդկայ գլո՛ւխը. երեւ տաքէն ու երկար քալելէն յոգնած։ Թէ ի՞նչ կը խօսէին այդպէս անվերջ՝ ոգան այլեւս չէր յիշեր բոլորովին. պիտէր սակայն որ շատ երկրորդական բաներ էին։ Միայն կ'ըզգար գետ մի՛շտ, ու ի՞նչպէս որոշ, ազդկայ անուռակ գանգուրներէն այն օրոմբուն փունջը, որ իր ացին ու չրթունքներուն վրայ ինկած՝ Մինէի ամէն չունչ առնելուն իր գէմքին վրայ կը գալարէր. ու կ'ըզգար այն օրօրոց, զգացումները չոյող բոյրը, որ այդ մազերու խառնիճնէն կը հոսէր։ կ'ըզգար, կարծես գետ հիմայ, այն ախորժ ու փափուկ ջերմութիւնը իր ուսին ու թեւին վրայ՝ ազդկայ լանջին, ձեռքին ու հետզհետէ ծանրացող գլխուն տակ։ Եւ կը յիշէր իր զգացումներուն մէջ մազուած այն անհուն ձգտումը հնար եզածին չափ աւելի մօ՛տ, աւելի սե՛ռմ միանալու այդ ջերմութեան, աւելի խո՛ր, աւելի պի՛նդ թաղելու իր դէմքը մազերու այդ զգաւանքին մէջ. միայն... առանց չսա նշմարելու տալու։

Հրանտ յանկարծ սթափեցաւ, ու ընդոսա չարժուեմ մը ըրաւ սթռուին վրայ։ Այս երկու օրը գուցէ քսան անգամ մը բռնած կ'ըլլար ինքզինքը այդ նա՛յն մտածումներու, այդ նա՛յն պատկերի իր յուզումները արտացոլ ուղեղին մէջ։

Փարսին տակի դպարէն վերջն էր, որ անոնք նորէն անընդհատ խօսակցելով՝ չարունակեր էին իրենց պատյալ ծովին ափովը երկա՛ր, մինչև այդ հովտաձն խռովչը, որ հիմայ ազատ համար ճակատագրական էր դարձեր ու անոր ուղեղէն ո՛չ մէկ կերպ դուրս դալ չէր ուզեր։

Ամօթէն ու զայրոյթէն գարկաւ բռունցքը սեղանին, ցատկեց աթոռէն վեր։

«Ինչ յիմար բան. աս ալ նո՞ր եղաւ. օրէ օր պատյ աւելի երեխայ դառնալ»։

Ու արագ քայլերով ուղղուեցաւ դէպի սանդուղը, վա՛րը, իրենները քալ կերպ մը տրամադրութիւնը փախցուր։

* * *

Հրանտ երկու տարի առաջ մեծ յաջողութեամբ տաւեր էր իր փիլիսոփայի դոքտորութեան քննութիւնը Հալէի համալսարանին մէջ, ուր պատրաստած էր երկար տարի, և արդէն չատոնց դրաւած քննութեան ուսուցչապետի համակրանքը իր կանոնաւոր ու լուրջ աշխատանքով, մանաւանդ ուղեղի վրայ։ Մեծ գովեստով էր ընդունուած իր ատարտականի չարադրութիւնը, որը «մեծ ու փոքր ուղեղի գործ կեղևները իրարու կապակցող թելերու մասին» մանրադիտակի վրայ ծռած երկարատև ուսումնասիրութեան արդիւնք էր։ Դեռ ատարտկէն վերջն ալ մնացեր էր ան նոյն համալսարանը՝ ուսուցչապետի տուած դիւրութիւններուն տակ իր փորձնական աշխատութիւնները չարունակելու. և նո՛յն ուսուցչապետի դրդմամբ ալ չուտով յաջողեր էր հրապարակային մրցում բռնելու, և տասնե՛ր համալսարանին մէջ գասախօսելու իրաւունք իրեն պրիվատ դոցենտ չգային կեդրոնի մասնագիտութեամբ։

Այս գարնան եկեր էր Պոլիս, մինչև ձմեռուան կիսամեակը մնալու դիտաւորեալ. մասամբ իր մօրն ու եղբօրը անվերջ կսկիծն քաւարարութիւն տալու համար, մասամբ իր ծննդավայրին մէջ քիչ մը հանգստանալու, մասամբ ալ ցօկէնռէյներուս գանգլի-հանգոյցներուն վրայ գրած իր նո՛ր աշխատութեան համար թարմ ու առատ փորձ նիւթ ունենալու ծոլուն մտածիկ։ Եւ այս չորս ամիսն աւելի էր, որ իրեններուն քովն էր արդէն։

Անկէ քիչ մը միայն առաջ եկած էր Մինէ Թիֆլիսէն, ուր նախորդ ձմեռը գերատանական խումբին մէջն էր եղած։ Խումբին մէջ պատահաբար էր ինկեր։ գերատուհիները մեծ մասով ցրուեր էին գո-

տառները. իսկ Մինէ գժգոհ ձգեր ևկեր էր Պոլիս՝ մտածելով կերպ մը մխիթարել հոտահոտ նոր ուժերուն ու հոս գործի կապուիլ։

Մինէ որբ էր. մայրը կորսուսեր էր գնե իր մանկութենեն իրենց Պոլիս ապրած ժամանակը. իսկ հայրը մնացեր էր քանի մը տարի առաջ Օդեսսա, երբ ինքը Մոսկբա էր գնե գրամատիկ քուրսերուն հետևելու։ Պոլսի մէջ իր ամենեն մանրիմ ազգականը իր աւագ մօրաքոյրն էր, որբևայրին, որը հիմա իր մէկ-հատիկ գնե գպրոցական ազջկանը հետ Գատը-գիւղ կ'ապրէր։ Եւ արդէն անհրաժեշտ տաղտուկներ մը գտած էր, որ Մինէ ամեն Պոլիս գալուն անպատճառ այդ մօրաքրոջը մօտը իջնէ, որը իրօք մօր մը պէս քրոջը որբին վրայ կը դուրգուրար։ Վերջին անգամ հինգ-վեց տարի առաջ եկած էր Մինէ հօրը հետ։

Եւ հիմա իր խոշոր ծրագիրներովը տաքիւ տաքը Պոլիս էր գրեր, որ սիրուն երազները ցնդեր էին իսկոյն։ Ո՛չ այն հասարակութիւնը, ո՛չ այն պայմանները, ո՛չ իր երևակայած գերասաններն կային հոս։ Եզածներուս ու քանի մը գրագիններուս հետ մտեր էր կապակցութեան և տաքիւ յաջողեր էին հազար ու մէկ գժուարութիւններով վեց ամսուան մէջ երկու հայերէն ներկայացում տալու «մտանուտը թոյլտուութեամբ»։ Խազացողներուս ալ մէկ խոշոր մասը սիրողներ։ Թնդանութեամբ» մէջ քիչ մը գովեր ու խօսեր էին «տազանդաւոր, չնորհալի Թնդան

— Այո՛, բացարձակապէս։

Ու իր ձեռքը ջերմ չարժուեցաւ մը պարզեր էր ազուն։

— Համբուրուիլ, համբուրուիլ։ Ա՛լ զուարճութիւնը մէկդի։— հրամայեր էր Հրանտի եղբայրը։

Հրամանը կատարուած էր անմիջապէս ու նոյն վայրկեանէն ալ սկսեր էր այն կէս-լուրջ, կէս-կատակ, հնգնոտ, իրար չարչըրող ու մինչեւ ժամանակ իրարմով խենթ ելլող մանրմունքները։ Հրանտենց տունը ոտք դնելուն պէս՝ Մինէի առաջին բառը «քուզէնս» էր։ Եւ միայն քուզէնի տունը չէր որ անոնք իրարու կը հանդիպէին. չաթթը մէկ-երկու անգամ միասին էին սովորաբար, երբ չրջակայքը կամ ծովեզրն վրայ պտոյտի կ'ելնէին միասին։ Ու ալ այնպէս սկսեր էին տարուիլ իրարմով, որ հարսը սկսեր էր չնորհքով նախանձիլ։

— Ի՞նչ է սա. միեակ «քուզէնս ու քուզէնս» մնաք ալ մարդ ենք հոս։

Պատասխանը ծաւալ ծիծաղ մըն էր խմորիկ։

Միայն վերջերը հետզհետէ սկսած էր առեակ մը զուսպ ու անբըռնելի չեչտ մանել անոնց փոխադարձ վարմունքին մէջ։ Տղան կարծես ճնշող, կասեցնող կապ մը ունէր լեզուին վրայ. ու զանազան պատրուակներով սկսեր էր խուսափիլ իրենց չատ չատ-չատ միասին ըլլալէն։ Աղջիկը չատ լաւ կ'ըզգար, բայց ոչինչ չնշմարելու կը ձեւանար. մանաւանդ նկատած էր, որ հիմա ինքն ալ երբեմն իր բոլոր ճիգերուն հակառակ անսովոր կերպով կը լրջանար անոր քովը։

Իրիկուն մը թէ-թէեւ լեցուն լուսնին տակ չրջած էին ամբողջ ժամ մը, գրեթէ առանց բառ մը իրարու հետ փոխանակելու. բայց երկուքն ալ գոհ, իրարու մօտիկ ըլլալու հնչեին զգացումով մը, և քնաւ այդ խօսակցութեան պակասը զգալու։ Տունն մտնելու առանմիայն անգրաղարձեր էին յանկարծ երկուքն ալ ու կանգ էին առեր իրարու ձեռք բռնած. մինչեւ որ աղջիկը սկսեր էր բարձրաձայն խնդալ ինքզինքը հնգնելով.

— Ջէ՛, Հրանտ, հարս դառնալու հասունցեր եմ արդէն. արդէն սկսայ չխօսկան դառնալ։

Այդ գիշերէն վերջն էր, որ դիտմամբ, թէ պատահմամբ երկու չաբաթուան չափ իրար չէին տեսներ, մինչեւ փարոսի օրուան իրենց վերջին հանդիպումը։

* * *

«Յիմարութիւն է». կը կրկնէր հիմա Հրանտ առանդուզնէրէն վար իջնելով։ «Քանի օր է գործին վրայ լուրջ կեդրոնացած չեմ՝ սա է. պէտք է գործուիլ»։

Ու մտաւ սրահ։

Պարտէզի դրան գոյզ փեղկերը բաց էին կռնակի վրայ։ Եւ քայլ մը միայն ապին, խաղի կանանչ փոքր սեղանին երկու կողմը, դէմ-դիմի նստած էին երկու հոգի լո՛ւռ ու լո՛ւրջ. ամբողջովին խորասուզուած իրենց քաշած ու նետած խաղի թուղթերու հաշուին մէջ։

Մէկը երիտասարդի եղբայրն էր. քառասունը անց, քիչ մը ճերմըկած, բարեկազմ ու դէպի գերը հակուող մարդ մը։

Ընդակիցն ալ դրացի մըն էր, իրենց դիմացի ամարանոցէն ու Հրանտի եղբօր կիրակնօրեայ մշտական ընկերը։ Ծանր աչքերով, չէկ, կարճահասակ, բաւական տարիքոտ, բայց չիք հազուստ ու խուզուստ լըւանդէն մը։

— Ահա՛, վե՛րջապէս. մեր խլուրդը գո՛ւրս է ելեր իր բունէն. — բացականչեց Օհաննէս կտրած ֆրանսելէնով մը, երբ եղբայրը սրահ իջաւ. — Դո՛ւք ըսէք, խնդրեմ, պարոն Ռէնեա՛կ, ինչի՞ է նման այս ազուն կեանքը. քաշուէ՛ ծակի մը մէջ ու անվերջ կարդա՛ ու դծէ՛։

— Բարև ձեզի, պարո՛ն. — դիմեց Հրանտ հիւրին, առանց եղբօր խօսքերուն չատ կարեւորութիւն տալու։

Ֆրանսացին իր բարակ ու ճերմակ ձեռքը ճկուն չարժուձեւով մը տուաւ երիտասարդին. ու թեթև մը ունքերը ժոպռելով կցից.

— Ձեր եղբայրը իրաւունք ունի, պարո՛ն Ալիմեան։ Հաւատացէ՛ք ինծի, տարիները կ'անցնին ու ձեր այդ գրքերէն ու մանրադիտակէն ձեզի ոչինչ իսկապէս չի մնար։ Եթէ մարդուս ձեռքին արժէք ունեցող բան մը ես կը մնայ, ան ալ ապրած կեանքին յիշատակներն են միայն. բայց ապրա՛ծ, ո՛չ թէ կարդացած կամ գծած։ Ինչ մըն ալ երիտասարդական յիմարութիւններ ընելու է. փոթռըտած մարդու խորհուրդին ականջ դրէ՛ք. երջանկութիւնը երիտասարդութեան մէջն է, երիտասարդութիւնն ալ յիմարութեան։

Ու աչքերովը նշանակիչ կծկում մը ըրաւ։

— Այո՛, արդէն խոշոր անիմաստ յիմարութիւն մըն ալ կեանքը ի՛նքը. — նկատեց Հրանտ ժպտելով։

— Ա՛, ո՞վ ըսաւ ձեզի այդ անիմաստ փրազը։ Ո՛չ. անիմաստ յիմարութիւնը սպրիլ չդիանալն է միայն. և ամենախոշոր յիմարութիւնն ալ յիմարութիւններ ընելէ խուսափիլը։

— Նորէ՛ն իրաւունք ունիք. — պատասխանեց տգէն իրեւ թէ հեգնելու համար, բայց իր կամքին հակառակ պատասխանը պէտք եղաւ ձեզի լուրջ հնչեց։ Մատիկոտ հետացաւ խաղի սեղանէն ու ձեռքերը մէջքին կապած իջաւ պարտէզ։

«Փորձուած մարդուն» խօսքերը տակնուվրայ ու պարապ հողի մէջ էր ինկած։

Ներսը քիչ մը տակն լուռ խաղը չարունակուեցաւ նոսրին, մինչև Օհաննէս խօսք առաւ յանկարծ՝ թուղթ մը ամաւ սեղանին գարնելով.

— Հապա՛, պարոն Ալենա՛կ։ Մենք գրկացինք, որ մարդ գառնայ. ան գնաց գվառնուս փիլիսոփայ կարնցաւ. փիլիսոփա՛յ—ա՛ւղ ապրանք. վրաս ամսական նօթը ալթը ոսկի է նստած. չարաւնակ նօթին ալթը տարի. տա՛ւղ, ա՛ւղ ապրանք այդ փիլիսոփայութիւնը։

— Բայց ինչո՞ւ Թոյլ տուիք. չէ՞ որ առաջ կարծեմ կ'ըսէիք թէ բժիշկ է գառնալու։

— Բժիշկ չնզաւ. ըսենք հոս փղոցը Թափած բժիշկներ լեցուն. հիմա բժշկութենէն ալ խեր չկայ։ Մէկ ալ՝ իմ լառծովս այդ պրոֆեսորները դէշ ամսական չեն առնուար. Թող առաջ երթայ, վերջապէս մեր անունին ալ պատիւ մըն է։

— Այո՛, ի հարկէ։ Երկու հարիւր ֆիւռն.— կցնց Ֆրանսացիներ անտարբեր՝ քանի մը Թուղթ տեղանին Թափելով։

— Արդէն. ախտցո՞ւնք նայէն։

— Երկու հարիւր ֆիւռն.— կրկնեց մարդը ժպտուն՝ Թուղթ մըն ալ նետելով։

Օհաննէս խոժռուեցաւ. ու կեդրոնացաւ խաղին վրայ։

Գ

Գառը գիւղի չոգենաւը նոր էր մօտեցեր Մեծ-կամուրջին. և բազմութիւնը երկենարանգ հասանքով պատրաստ կը յորդէր չոգենաւի նեղ կամրջակէն։

Բազմութենէն քիչ մը հեռու, ծովեզրն ու նաւին նայող վանդակին մօտիկ կեցած էր Մինէ երիտասարդի մը հետ։ Վերջինը փոքրահասակ, սեւ-գառազ մազերով, նուրբ ու քնքուշ կազմով, գրեթէ կանացի գիծերութեան, քան-քսաներկու տարեկան տղայ մըն էր. Թեթեւ ու չարժուն։

— Ապշտուակութիւն է, ասկից ճշմարիտ խայտառակութիւն.— կը խօսէր տղան հազուագիւտ արտայութեամբ մը։— Գազափարը տափակ, հազար անգամ կրկնուած. իսկ ձեւն ու կազմը գաղջուած է, եւ ևս ականջներէդ, Ֆրանսուա կոպէն. անշուշտ կարդացած էք Ֆրանսուա կոպէն. չէ՞. կը կատակէք։ Ինչպէս ըսի՝ բացարձակ խայտառակութիւն. ո՛չ ճաշակ, ո՛չ յղացում։ Վաղը լրագրին մէջ կը կարդաք քննադատութիւնը. բայց կէսառկէս վերլուծած եմ. գդած՝ բամպակի պէս։ Սակայն մտածեցէ՛ք, այդ ուղղակի հասարակութեան քըթին խնդալ ըսել է. անունն ալ դնել բանաստեղծութիւն, ան ալ

քնթնաւած. և անգամ մը իրարու փակցուցած անճոռնի յանգերը սեռնէ՛ք. քուրիօ՛զ։

Ու ներքին եռացող յուզումէն իր կեցած տեղը մնալու անկարող սկսաւ երկու քայլ տեղ ապչկան պիմացը չտապ երթևեկել՝ ձեռքերը ժաքէթին գըրպաններուը գրած։

Մինէ լուռ կը հետեւէր խօսակցին՝ չզննաւի նոր գնած տամասկը մատներուն մէջ խաղցընելով։

— Եւ անկէ վերջը. գնա այդ բոլորը չէ...

Կ'ուզէր չարաւնակէ երիտասարդը, երբ Մինէ յանկարծ անակընկալի զաւարթ «ա՛հ» մը ըրաւ ու նետուեցաւ դէպի տամասվաճառի պատուհանիկին կողմը։

— Բարե՛. այս ի՛նչ հրաչք. Պալի՞ս ես իմկիր։

Հրանտ ձեռքը մեկնեց ապչկան ու ձեռք-ձեռքի մտուցան երիտասարդին։

— Իրարու ծանօթ էի՞ք.— հարցուց Մինէ։

— Դժբազդաբար պատիւ չեմ ունեցած.— եզաւ երիտասարդի պատասխանը, գլխու թեթեւ խոնարհումեամբ մը։

— Ֆուզէ՛նա, Հրանտ Ալիմեան, դոքտոր Ֆիզիոլոգ.— ներկայացուց ապչիկը։— Եւ պարոն Գրիգորիկ Չեսարեան. հրգեհի դէմ ապահովագրական ընկերութեան գործակատար, բանաստեղծ, հրապարակախօս, նկարիչ, քննադատ և պէտք եղած ժամանակը դերասան.— սրտանց խազացող դերասան։

— Օ՛, այդպէս սիրուն բազմակողմանի.— նկատեց Հրանտ։

— Ա՛խ՝ պարոն, օրիորդը կատակել կը սիրէ.— պատասխանեց Գրիգորիկ գլխի սիրուն ու հպարտ շարժուձեվ մը։

— Եւ, հա՛, մոռցա՛յ,— աւելցուց Մինէ.— իմ մտանուոր գրաբերս. Ռուսաստանէն նամակներս պարոնի հասցէին կու գան։

— Իմ պաշօններէս ամենէն նախանձելին.— կեցց երիտասարդը։

— Իսկ դո՞ւն.— գարձաւ ապչիկը Հրանտին։— Ինծի գալու ժամնակ չունիս, բայց այդպէս գազանակ Պալիս կ'իջնես. ապէ՛կ։ Երկիրիկուն անգամ մը միասէս անցաւ եղեամ Ֆէնէր-պահճէ գամ. ա՛հ, չերեւակայես քեզի չատ կարօտցած ըլլալուս համար. սիրոս նուաղկել կ'ուզէր միայն, ուրիշ ոչինչ։ Շատոնց է նուաղկած չեմ, ըսի նորէն անգամ մը միասին ծովուն վրայ կը բացուինք. թէև իմարկէ ինքնին այդ չնորհին բնաւ արժանի չես։

— Եթէ այդչափ կը ցանկաս, կարելի է անգամ մը թիավարել նորէն մտուելս. միայն յամենայն դէպս պայմանով մը։

— Ի՞նչ պայման։

— Որ ծովուն վրայ խելօք պիտի կենաս, և բացարձակ հնազանդիս պիտի իմ ծովակալի հրամաններուս։

— Հրամաններուդ... ես պայմանով գործ չեմ սիրեր. ան ալ

քու ծովակալութիւնդ. կամ մակոյկը ժայռին կը պարնես կամ ծանծաղը կը նստեցընես, մեզի ալ չուբը։

— Այո՛, այո՛, օրիորդը իրաւունք ունի.— մէջ նետուեցաւ երիտասարդը։ — կառավարութեան զեկը պէտք է քիչ-քիչ կանոնց ձեռքը տալ. ժամանակները սկսած են փոխուիլ. ապագան ամազոնեներուն է. և Ամազոնի ափերը արդէն իսկ մասած են կանայք իրենց այդ նոր գերին մէջ։

Ու ծիծաղեցաւ բառախաղէն կատարեալապէս գոհ։

— Կրնամ երեւակայել, թէ ինչ պիտի ըլլայ կանանց կառավարած աշխարհը։ — Հեգնեց Հրանու։ — Եւ եթէ ձեր մարգարէութիւնը չիտակ է, այն ատեն պէտք է մտանուրբապէս փառք տանք բնութեան, որ այդ քաօսի դարուն մէջ ծնած ըլլալու դժբաղդութիւնը չունինք։

— Ի՞նչպէս. հապա կանանց ազատ ապագա՞ն, հապա անոնց վիճակուած պատմական մեծ դե՞րը. ուրեմն պարտը դեռ հին փիլիսոփայական ուղղութեան կը պատկանի. իսկ ես կ'ըսպասէի, որ իրրև գոքատր... Պարոնը գոքատր է ըսիք, կարծեմ, չէ՞, օրիո՛րդ։

— Մտանագէտ փիլիսոփ.— բացատրեց Մինէ։

— Ա՛հա, մտանագէտ, ոչի՛նչ, հետաքրքիր է։ Ֆիլիսոփա—գիտութիւններու մայրը. արիւն ու սիրտ, և որքան գրացի բանաստեղծութեան։

— Սակայն, դժբաղդաբա՛ր, ես գլխաւորապէս չիկերով կ'զբաղուիմ.— առարկեց ազան հազիւ նշմարելի ժպիտով մը։

— Ընդ՛, չիգե՛ր. դարաւկրչիկ է։ Զգայնի դար, չզգային. այո՛, իրաւունք ունիք. ուսումնասիրելու ժամանակակից նիթէ «Ռըւիւ Լիթերէր»-ի վերջին համարը կարդացա՞ծ էք. չատ սիրուն յօդուած մը կայ մէջը արդի դրական երկերու չզգայնոտութեան վրայ. ա՛յ, օրինակ, բաւական է միայն յիշել վեռլէն, Իբսէն, Նիցչէ, Դաստաեւսկի. այո՛, այո՛, համաշխարհային հիւազութիւն։

— Բայց երեւակայեցէք, քուկինս այդ ձեր ըսած մեծ հիւանդութեամբը չէ որ կը հետաքրքրուի, այլ պարզապէս չզգային կերպոնի կազմութեամբ.— կցեց Մինէ՝ սեռակ մը դղրդղ-դրդռազ չնչաւոյ։

Կրակի վրայ իւղ լցընել կ'ուզէր։

— Կ'ըմբռնեմ. զուտ քնապիտական սեռակէտէն. խիստ օգտակար ուսումնասիրութիւն, իհարկէ։ Միայն գիտէ՞ք, ազնիւ պարոն, կը փոփոգէի իմանամ... անչուշտ եթէ անհամեստութիւն չէ հարցընելը, ի՞նչպէս է, որ այդ սեռակ աշխատութիւն մը ձեզի ընտրած էք։ Մարդ եւրոպա երթալէն վերջը չատ ուշի.. այսպէս ըսած, գրաւիչ նիթէ մը կրնար ընտրել իր ուսումնասիրութեան։

— Ինչո՞ւ կը կարծէք, թէ ուղեղի ուսումնասիրութիւնը անդրբաւիչ է։

— Անդրաւի՞չ. ո՛չ, ո՞վ ըսաւ. քա՛ւ լիցի։ Միայն քիչ մը ինծի

կը թուի... չա՛տ միակողմանի. անոնք մը չեր ու պակիւէ գնուրկ։ Ա՛յ, բոլորովին ուրիշ բան է գրական կեանքի ուսումնասիրութիւնը, կամ բեմը, կամ փիլիսոփայական մտքի արտադրութիւնները. ի՛նչ կեանք, ի՛նչ պակէի այդ բոլորին մէջ. այո՛, կեանքի պակին։

— Է՛, պարո՛ն, ի՞նչ ընենք, ամէնքին առած չէ կեանքի պակիվով զբաղուելու ընդունակութիւնը.— պատասխանեց Հրանտ վերին ստիճանի ծիծաղաշարժ խոնարհ կէտ մը չինելով։

Շոգենաւը սուլեց։

— Տաղտո՞ղ ըսել կ՚ուզէք. իսկապէս, սակաւաթիւ են անոնք, որոնց ճակտին վրայ իր մասը գնելով կ՚ըսուզէ Աստուած, ինչպէս կ՚ըսէ անմահն վիկտոր Հիւգօ։

— կը սեռնէ՞ք, բարեկա՛մս, անմահն վիկտոր Հիւգօն ալ ինծի համակարծիք է եղեր։

Իր բառերու այդ չնչաւոր կրկնութիւնը Գրիգորիկին անախորժ եկաւ. սակայն առանց ոչինչ նշմարել տալու, ժպիտով մը ու թեթեւ մը ծռելով՝ ձեռքը մեկնեց Մինէին։

— Օրհո՛ւդը կը նեղէ. այս իրիկուն ես իւակիւատար եմ անցնելու ու չզլենաւս արդէն մեկնելու տրամադրութիւններ ցոյց կու տայ. սիրուած եմ անշառուելու, թէեւ գիտէ՛ք, թէ որքան ծանր է ինծի համար ձեր ներկայութիւնէն զրկըւիլս։ Յոյս ունիմ, որ ձեր ըսած ներկայացումը վայելելու ամէնամեծ երջանկութիւնը պիտի ունենանք չուառավ։ Ահա՛, պարո՛ն, սեսէ՛ք, որս ճակատին է Աստուած իր մատը գրեր. կը նախանձիմ ձեզի ճշմարիտ, որ այսպէս քուդին մը ունիք։ Օրհո՛ւդ, յափշտակութիւննե՛րս։ Պարո՛ն։

Ու մինչեւ մէջքը ճկուելով, լայնեզր փոփոկ գլխարկը ճարպիկ չարժուամով մը երերցուց օդին մէջ, անցաց նորէն գառ մազերուն ու արագ նետուեցաւ դէպի միւս չզլենաւին կողմը։

Գառը-գիւղի չզլենաւը նորէն սուլեց։

— Տամսակ ունի՞ս.— հարցուց Հրանտ։

— Այո՛։

Տգան չտալ գնաց իրեն համար ալ. միտքին իջան չզլենաւ ու մտան կոչնակի խցիկներէն մէկը, ուր միայն երկու գինուորական անկիւնը քաշուած տաք-տաք կը վիճէին թուրքերէն թերթ մը ձեռքէ ձեռք անցընելով։

Շոգենաւը ճամբայ ելաւ։

Գուբաը սկսած էր զարշանալ։ Ցցիկը մութ էր գրեթէ։

Մինէ ծնօտը ձեռքին յենած ու արմունկը փոքրիկ լուսամուտին՝ ծովուն կը նայէր ուշագիր, ուր նուիրաբեր ու նուագներու ամբողջ ամբոխ մը իրարու գլխու էին խառներ։ Եւ երբ վերջապէս ազդիկը հայեացքը նետս գարձուց՝ իր առաջին սեռածը ազու խոշոր աչքերը եղան, որոնք յամառ իր դէմքին էին գամուեր։ Մինէ խնդաց։

— Եա՞, երեւի Աստծու մասին անդը կը փնտրեմս ճակտիս վրայ։

— Դրի՛թէ։

— Է՛, ի՞նչ կ'ըսես իմ գեղատիպ երկրպագութիւններուն։

— Ոչի՛նչ։ Այդ դաստղութիւնները միայն անորը չեն. ինծի համար քնաւ նորութիւն չէ լսելը, թէ գիտութիւնները մանր, չոր, մասնաւոր, երկրորդական խնդիրներ են. գործատերի մը աշխատանք, ուրիկ իսկապէս կարելի է օգտուիլ, քայլ մըն մէջ ինքնին կանոք չկայ, «կանոքի պոէզին» չկայ, ինչպէս քիչ մը առաջ այդ սիրուն երեխան կ'ըսէր։

Պահ մը լռեց, ջղուտ ձեռքով ժամացոյցի շղթային հետ սկսաւ խաղալ ու յանկարծ կրծոտ նշոյով մը վրայ տուաւ.

— Պոէզի՛։ Եթէ վայրկեան մը միայն այդ մարդիկը կարգադնային թափանցել քիմիագէտի հոգին, երբ ան իր աշխատանոցի տակնուվրայութեան մէջ փորձի սրուակը ձեռքը, փշուր մը մրուրի կամ գոյնի ամենաչնչին փոփոխութեան մը մէջ իր հաշիւներուն ու նիթագրութիւններուն հաստատումը կ'որոնէ. վայրկեան մը միայն. և ա՛րքան մեծ պիտի ըլլար իրենց զարմանքը, երբ այդ հատիրս, թոյներս ու կազերս մթնոլորտին մէջ յափշտակութիւնն ու հաճոյքը, մաքի թռիչքն ու սրտի յուզումը իրարու ժամադիր եզած տեսնէին։ Է՛, մ'ինէ՛ս, եթէ պահ մը միայն զգային, թէ ի՛նչ բերկրանք, ի՛նչ հպարտութիւն ու ընկերական-հասարակային կեանքի ի՛նչ ապագայ յոյսեր կը թեւածին դիանոականի մը զգացումներուն վրայ, երբ ան իր ընկեր մանրագիտակին վրայ ծռած՝ ուշիզի մանր կաթիլի մը մէլիոնաւոր բջիջներուն ու թելերուն քաօսին մէջէն քիչ-քիչ դուրս կը կորզէ անոնց ճիւղաւորման ու հպարտկացութեան օրէնքները, երբ գտնեու «անհրաժեշտ ու անբաժանելի» համաձուած հոգին իր աչքերուն տակ որո՛շ ձեւի ու կազմի սքանչելի մեքենայի մը կը վերածուի։ Կամ ըսէ՛, խնդրեմ, աշխարհի ո՞ր գիտաբանական ասեղծագործութիւնը արագրել կրնայ գոնէ քիչ-միչ նմանուող բան մը ա՛յն ակարին, որ մարդուս երեւակայութեան դէմ կը պարզուի, երբ օրգանական մարմնի միլիարդ-պարեան կեանքի ու զարգացման պատմութիւնը քեզի պատկերացընելու կը փորձես. իր յաւերժական փոփոխութիւնովը, իր անհամար ձեւակերպութիւններովը, ստեղծանէ ստեղծան, իր միրգին երեխայութենէն սկսած մինչեւ ոզնաչարաւորներուն այս քարդ ու կուտակ օրգանիզմը։ Կեանքի ու զարգացման այդ հսկայ պատմութեան դէմ ի՞նչ բան է մեր հազիւ քանի մը հազար տարի հաշուող «մարդկային քաղաքակրթութեան» ուսումնասիրած պատմութիւնը. արագի-կոմիկ էպիզոդիկ մը միայն այդ անծիր ու խորունկ սիտան դրամային մէջ։ Հնչեցո՛ր, որ չգիտեն, թէ ո՞ւր է իսկապէս կեանքի մեծ պոէզին...

Զինուորականներու վէճը խցիկին մէջ գաղրած էր չատոնց. ու

Խցիկէն զաւակ բազմաթիւներ խուլ ժխորը միայն կը լսէր մեքենաներու խլացուցիչ թնդումին մէջէն. իսկ պատուհանիկին տակ վայրագ ձեռկըռուքը կամակոր ալիքներուն, որոնք իրենց զայրոյթէն ուռած կրծքերովը պիտի ջարդէին չոգենաւի պատուող ահեղներուն:

Այնպէս հաճոյալուր էր այդ բզկտուոյզ ցուրտի չիթերուն ու փետրներուն չառաչը, որոնք նորէն ծավուն ծոցը կ'անձրեւէին. այնպէս օրօրուոյ՝ զաւակի ամբոխի անորոշ խժլատուքը. այնպէս մեղկացուցիչ՝ չոգիի թափին տակ նաւի յարատեւ թնթռիւնը. այնպէս ախորժկէս-մտքը, որ խցիկի անկիւնաքէն հետզհետէ ուելի ուռած վար կը ծորէր: Ու այդ զգացումներ չոյող չրջանակին մէջ Հրանտի ոգեւորեալ բուքնէն կայծկլտող աչքերը, անոր ջերմ ու յուզումէն անդադար ելեւէջող կիսաձայն խօսուածքը:

Անշարժ ու յափշտակուած կը լսէր ազջիկը: Ա՜, ինչ անուշ՝ հնքխոխի մը մէջ կոծնել:

Հրանտ կարճց վերջապէս իր խօսքը. ինքն ալ ազջկան պէս արմուկը դրաւ պատուհանիկին ու նորս ձեռց լիսեռք՝ ծովի զով ու թարմ չունչը:

— Խօսէ՛, Հրանտ, խօսէ՛.— հաճոյ Մինէ իր զսպուած յուզումին մէջէն. թարթիչները քիչ մը դոցից, ազատ ձեռքովը խարխափելով գտաւ ազուն ձեռքը ու բռնեց:

Հրանտ ժպտեցաւ. ու լուռ էին երկուքն ալ:

Ուշ իրիկուան երկընքէն թաւխ-ծուխի լոյս մը անոնց ծովուն դարձած կիսագիմը կը լուսաւորէր, գէմքին միւս կէսը խիտ առուերի մէջ պահելով:

Մինէ յանկարծ ուելի մօտ ծանեցաւ ազուն քնքշանքի թափով մը ու իր կէս-կատակ կէս-լուրջ ժպտուն փսխուքը ազու դէմքին քըսուեցաւ:

— Ցուզէ՛նա, իմ մէկ հատիկ քուգէնս. ինչո՞ւ քեզի այչափ կը սիրեմ, Հրանտ:

— Ցանկութի՛ւն.— կատակեց ազան անտարբեր ձեռ ուզող ձայնով մը:

Սակայն միւնոյն ժամանակ անկարող եղաւ իր մտածները գոպեղուլ, որոնք երկաթի ճմլուածով մը իր ափին մէջ հանգչող ձեռնոցաւոր թաթիկին գալարեցան:

— Հանեմ պիտի ես քու աչքերդ, Հրա՛նտ. այդ քու չքնաղ, վտանգ ու կաչառող աչքերդ, որոնք այդպէս ոգեւորիլ գիտեն: Եթէ տանեմ անգամ մը ինչպէս տարօրինակ կը վառին, երբ ղուն տաքտաք խօսելու կ'ըսկսիս: Եւ գիտես ի՞նչ. ես կարծես տեսակ մը կը նախանձիմ քու ունկընդիրներուդ, հո՛ն, համալսարանը, ամպիոնին վրայէն քու աչքերուդ, քու ձայնիդ դէմ: Ու քու գաղափարներդ տրդէն ինքնի՛ն. փո՛ղ չէ, ձչմարիտ, չուտ հետաքրքիր է ըլլալու:

— Եթէ այդչափ կը հետաքրքրըե՛ք նկուբ քեզի հետ ատենմ ու ներկայ եղիր որչափ կ'ուզես։

— Հը՛մ, տա՛ր.— ըրաւ ազգիկը կարուկ չնչառվ մը, աչքերը քթթելով ու գլխու դրական ուժգին ցնցումով մը։

— Հա՞. բայց մի՛ մոռնար, հոն ո՛չ Թիֆլիս է, ո՛չ հայ գերատոհականն խումբ կայ, ո՛չ քու սիրական պատռատած քուլիսներդ, ո՛չ ալ «վսեմ ղեպուտիներուդ» արտայայտութեան վայր։

Իր ձայնին տակ կծան չարաբաֆեն մը կար։

Մինչ թեթև մը ճակատը կնճռեցաւ. մտածկոտ ու հարցական նայուածքը յարեց նորէն խօսակիցին, որը իր կատակի չնչաը պահել ջանալով՝ սեւեցուց խոհն.

— Բայց, իմարիկէ՛, այդ բոլորը ի՞նչ նշանակութիւն կրնայ ունենալ, քանի որ ինծի այդչափ կը սիրես, ինչպէս ինքդ կ'ըսես։

— Լո՛ւ.— կցեց ազգիկը բռնազբօսիկ հանդարտ ձայնով մը ու կամաց մը ոտը ափէն ձեռքը ետ քաշեց։

— Տեսա՞ր, քու անէա՛փ սէրդ.— ծիծաղեցաւ ատեն։

Բայց ցաւագար ու կարկամ բան մը կար այդ ծիծաղին մէջ, որ անոր դէմքէն անցաւ։

Ու լռեցին նորէն երկուքն ալ. անյարմար ու լարուած լռութեամբ մը։

Շոգենաւը կեցաւ ու ուժով մը պոռնըւեցաւ նաւամատոյցին։

Սպանները իրենց սուրերու չրինգին հետ եկան խցիկէն։

Ելաւ և պոյդը։

Բազմութեան հետ հրմըշտուելով բարձրացան Գատը-գիւղի նաւամատոյցը, հանկէ ալ ծովեզրի առուծախ ընող ազմուկին մէջէն մտան կոզմնակի մօտիկ, նեղ փողոց մը, ուր քանի մը քայլ անդին Մինեն նէնոց առունն էր։

— Հրա՛նա, իմ արուեստիս ձեռք մի՛ տար. կը խեղդեմ քեզի, ճչմարիտ կը խեղդեմ. — ըսաւ վերջապէս Մինէ հատատա ու ամուր ձայնով մը, երբ իրենց տան մօտեցան։

— Է, ի՞նչ ըլտա. վարպետդը իջնելուն պէս կրկին տաքի կ'ելնեմ. — ծպտեց ատեն։

— Գնա՛, գնա՛, հեռացի՛ր քովէս։ — բացականչեց ազգիկը պայթուցիկ և ուժով մը քաշեց դրան գանգը։

— Ձեռքդ չի՞ս տար. — հարցուց երիտասարդը մեզմ ու հաչա չեչառվ մը։

Ներսէն թեւի մը ձգուելուն ձայնը լսուեցաւ ու դուռը կամաց մը բացուեցաւ։

Մինէ առանց հեռը նայելու՝ գժգոհ անփութութեամբ մը ձեռքը ոտքն կոմբը մեկնեց։

Հրանտ բռնեց, ծռեցաւ ու թեթև մը սեղմեց շրմունքներուն։

— Է՛, թո՛ղ, թո՛ղ, հոգիդ սիրես. — բղաւքնց ացէիկը կտրուած բարկութեամբ մը. քաչնց ձեռքը, նետուեցաւ իսկոյն ներս ու դուռը գոցնց։

Գոցնց. ձեռքը դեռ դրան լեզուակին՝ անչարժ մնաց յոգնած դիրքով մը մութին մէջ. միայն լսողութիւնը սո՛ւր լարած, մինչեւ որ դուրսը տղան քայլերը հեռացան, թուլցան ու հալեցան։

Մինչ չակուեցաւ ու բառնցքները պարպած՝

«Պիտի խեղդե՛մ, ճշմարիտ պիտի խեղդե՛մ ես այդ տղան». փըս-փըսաց նորէն սեղմած ակռաներուն մէջէն։

Բայց այս անգամ ոչ սպառնալիք էր, ո՛չ ալ զայրոյթ, այլ իր անսակի քնքշութիւն մը, փաղաքշանք մը։

❧

Բայց էր պառաւհանը։

Հազիւ փղոցէն մէկուկէս մարդաչափ բարձր՝ կը նայէր քարափին ու ծովուն վրայ, որուն կապոյտ այտերը քնկոտ ու յոգնած դեղնաթիւն մը առեր էին իրիկուան դալուկ երկընքէն։

Նուրբ չզարչէ լայն վարագոյրին եաւը քիչ մը ետ քաշուած՝ պառաւհանին մօտիկ նստած էր երիտասարդ ազիկ մը. իրանը բարձր ու լեցուն. չափազանց առատ ու թուղթ-սեւ մազերը անկարգ ու ոտգին չեղջով մը գագաթին դիզած. դէմքը կլոր, քիչ մը դեր ու ժպտուն, որ պառաւհանէն ներս յորդող չրջապատի գիշերին մէջէն բոլորովին ճերմակ կը թըւէր. նուրբ ու թափանցիկ հարեմական ճերմակութիւն մը ու այդ փոնին վրայ երկու խոշոր արեւելքի սեւ աչքեր։

Գլուխը կարծքին ձգած՝ վարժ մատներով ձեռքի ժանեակը կը հիւսէր, երբ Մարմարայէն ոսփոր մանող հակայ չոգենաւի մը խռպոտ սոյլը յանկարծ ժայթքեց ու ծանր աարածուեցաւ ամբողջ ծովուն վրայ։

Աղջիկը ակնարկը բարձրացուց ու նետեց խոշոր ճերմակ չոգենաւին, որ հանդիսաւ ու մեծափառ կը յառաջանար։ Արմուկը դրաւ թիկնաթոռի թեւին, առաւ գլուխը ափին մէջ, մինչ միւս ձեռքը ժանեակին հետ միասին դէպի գոգը սահեցաւ։ Ու մնաց անշարժ. ծոյլ ու յառաւ վերացման մը մէջ, սուզուած իր մտածումներուն խորը, որոնք ըստ երեւոյթին դիմացի չոգենաւէն ալ գանդաղ կը չարժէին իր գանգին տակ։

Բարակ հովանոցի մը տակ ծայրը կամաց մը վեր բարձրացաւ

պատուհանին տակէն ու քանի մը անգամ ամուր իրարու հանէ զարկաւ ներքի տախտակին։

Աղջիկը կէս մը վախցած, խոժոռ դէմքով նայեցաւ վար։ Բայց իսկոյն ժպիտը ցտակից դէմքը։

— Ա՜, Մինէ՛։

Ու մէկ ոստումով սենեակէն դուրս նետուեցաւ ուրախ՝ փողոցին դուռը բանալու։

Հազիւ դուռը դոցուած պինդ փաթթըւեցան իրարու վիզ՝ հընչիւն-հնչիւն համբուրուելով։

Իրենց մանկութիւնը անոնց առնները կից էր իրարու ու գրեթէ միշտ միասին էին եղած։ Մինէի ամէն պոյիս վերապարձին նորոգներ էին իրենց մանրմունքիւնը և իրենց երեւակը մինչև հիմա ալ կը չարունակուէր։ Միայն հետզհետէ չատ տարօրինակ դոյն մը առներ էր այդ բարեկամութիւնը։ Նախ կարծես խոյս կու տային իրարու յաճախ հանդիպելէ, թէև երկուքն ալ միշտ կատարեալ համակրանքով ու սրտանց իրար կը դիմաւորէին։ ԵՒ այն հին ու ջերմ չնչառը մէջերնուն երբեք չէր վերցած։ Սրտերը նոյնն էին մնացեր։ կեանքի սըւած հետաքրքրութիւնն ու իրենց մտածման առարկաներն էին փոխուեր միայն։ Աւելիա կ'ըզգային երկուքն ալ, սակայն փոխադարձաբար ոչինչ չէին ըսեր իրարու։

— Մինա՞կ ես։ — հարցուց Մինէ։

— Այո՛։ Մայրս Յովակիմեաններուն գնաց։ իսկ հայրս, գիտե՛ս վերջին չոգենաւով կու գայ միշտ։ Դուն ա՞ւր ես այս քանի առեն է։ ի՞նչպէս ես։

— Է՛։ — ըրաւ Մինէ գժգոհ ուսը ցընցելով։

— Հը՞, քէֆդ տեղը չէ՞։

— Այս վերջին օրերը տրամադրութիւնս ալրըւած է քիչ մը։

— Երեւի՛, դերասանական գլխացաւանք ներկէն։

Մինէ ակընթարթ մը չպատասխանեց։ վերջը մտածկոտ ղօսխը չարժելով՝ ըսաւ երկդիմի։

— Դերասանական գլխացաւ՛նք։ այո՛։

Բայց իսկոյն բան մը մոռնալ ուզողի ձեւերէ բացատական չարժուժ մը ըրաւ ու ուրկցուց։

— Ա՛ն ըսէ դուն ինծի՝ ի՞նչդ ինչ բանի ես։

— Ի՞նչ բանի պիտի ըլլամ։ չի՞ա անանկը։ քիչ մը կարէ՛, քիչ մը կարդա՛, կամ թեդ գի՛ր պատուհանին ու դուրս նայէ՛։

Եւ աթոռը ուժով մը քաշեց պատուհանին կից։

— Մա՛ռատնդ այս պատուհանը։ ա՛, եթէ այս պատուհանը չուներ։ Այս պատուհանը իմ ամէն բանս է։ իմ ամենասիրելի գիրքս, իմ թատրոնս, իմ պանորամաս, նոյն իսկ իմ ժամացոյցս։ չի՞ա հասատ։ Ես գիտեմ, օրինակ, ժամը քանիին մեր դրացիին աղան

պարոցէն կը դառնայ, որոշ մանրավաճառներ ժամը քանիին կու գան և վերջապէս չոգնաւորուն կանոնաւոր երթն ու եկը։ Հապա՝ կը նսեմ, կը դիտես անցորդները, անոնց դէմքերը, չարժուձևերը, խօսակցութեան կտոր մը կու գայ ականջիդ, մնացածը ինքդ երևակայութեամբ ամբողջացընելու կ'աշխատիս, կը դիտես փոքրիկներուն կռիւը, օրոնք քարափին վրայ իրարու կը հայհոյեն. նաւակները, նաւավարները, սեսնելու ես ինչ առոգ. կորովի մարդիկ կան մէջերնին. երիտասարդ քիւրդ մը կայ, երբեմն կ'անցնի իր նաւակովը, սեսնես ի՛նչ գեղեցիկ, հաժկու ազայ է։

— Հը՞մ. չելլես վրան սիրահարիս.— կատակեց ընկերուհին։

— Ա՛խ, ո՞վ է տուներ ինծի այդչափ քաջութիւն։ Միայն երբեմն իրաւ, բոլոր սրտովս կը ցանկայի, որ ես ալ իր փովը, իրեն պէս, իր նաւակին մէջ ըլլայի. ձկնորս մըն ալ ես։ Ա՛հ ի՛նչ սիրուն կեանք. մինչև վերջը ծովուն վրայ, մինչև վերջը ալիքներու, հովերու ու իրարանցման դէմ. չարունակ փոթորիկի ու աշխատութեան մէջ. այդ գեղեցիկ, ուժեղ ազան միշտ քովդ. ամբողջ կեանքդ կռիւ մը պատառ մը հացի համար...

— Է՛, արևդ սիրեմ, սատնք սանսիմնոսալ անուրջներ են։ կը կարծե՞ս լրջօրէն, որ չափազանց գրաւիչ բան է պատառ մը հացի համար ամբողջ կեանքդ ճանկըռտըելը։

— Զգիտե՛մ. այսքանը պարզ է ինծի համար, որ չատ անհամ, անբովանդակ բան մըն է իմ այս անյայտ ու անհոգ կեանքս։ Հայրիկը չուկայէն պէտք եղածը կ'ուղարկէ, մայրիկը կը պատրաստէ, դո՛ւն ալ նսեմ ու կեր. ապրի՞լ է ասիկա։

— Աղէկ որ ինքդ կ'ըսես.— բացականչեց Մինէ ոգևորուած։— Տուր ինքզինքդ գրամատնքի մը, սկսէ բանով մը լուրջ աշխատիլ։

— Ա՛, դուն ալ որ այդպէս կը խօսիս.— կրկնց Արուսեակ ձեռքի արհամարհոտ չարժուձևով մը։— Լուրջ բանով մը զբաղի՞լ. ի՛նչ բանով. տունը իմ աշխատանքիս պէտք ունեցող չկայ. մայրս հերիք է կատարելապէս. արդէն չի ալ թողներ ձեռքս չուրի դպցընեմ. և եթէ չիասկը կ'ուզես՝ ինքս ալ քնաս ա՛չ տրամադրութիւն ունիմ, ա՛չ ալ չնորհք անային գործերու։ Ա՛հ, Մինէ, եթէ դիտնաս ինչպէ՜ս քնի կը նախանձիմ. գոցիր դուրսերը, ուրիչ երկիրներ, ուրիչ մարդիկ. ազատ քեզի համար, ինքդ քու գլխուդ. կ'երթաս ուր որ ուզես, կ'ընես ինչ որ ցանկաս, առանց կարևորութիւն տալու, թէ վրադ կը խօսին, թէ կը բամբասին, թէ ի՞նչ։

— Աղէ՛կ. քու թևդ բռնողը ո՞վ է. դուն ալ կարևորութիւն մի տար։

— Ե՞ս. ժպտեցաւ Արուսեակ տարտամ։ ինչե՞ր կը խօսիս։ Ինծի պէս պարկեշտ ու ամօթխած աղջիկ մը. եթէ չես հաւատար՝ բոլոր դրացիներուս ու ազգականներուս հարցուր. համեստ ու պարկեշտ. հապա՛։

— Ես քեզի չեմ հասկընար, հոգի՛ս. ո՛չ ալ ի՛նքնահամ քու այդ չենք-չնորհք հարեմի կնոջդ։ Երկու քայլ չես կրնար գնալն գալ առանց մայրիկի, ծանօթ երիտասարդի մը հետ տեղ մը երթալու չես համարձակիր, նոյնիսկ չես յանդգնիր փողոցը գէմդ ելլալին երեսը չիտակ նայելու։ Ինչի՞ է նման ըրածդ, երբ ինքդ ծպրտանքով կը խօսես քու հանհատութեանդ մասին։ Ելի՛ր. ոտքի տակ տո՛ւր այդ բոլոր յիմար կապերը. պատասխանատուդ «բարոյական» հայեացքը, տարեկիցներուդ քամ նախանձը ու դրացիներուդ տգեղ քամահանքը։

Արտասուակ հեգնոտ ժպիտ մը չրթունքին պահ մը լռեց. ու յանկարծ չոր ու կարուկ չնչոտուկ մը ըսաւ.

— Ինձի նայէ. գուն ալ եթէ աչքդ բացած օրէն մօրդ թևին տակէն գուրս չգայիր, գուն ալ եթէ քեզի չրջապատողներու քաջալերէն ու սովորութիւններէն գատ բան չսանէիր, գուն ալ ինձի պէս «հարեմի կնոջ» պիտի վարէիր, ինչպէս որ կ՚ըսես. այդպէս խոչոր-խոչոր մի՛ փրթիր։ Դժգոհ ըլլալ, տրտնջալ, խարիլ, ուրիշ խնդիր է, բայց իրապէս մեզի չրջապատող կեանքէն գուրս գայ՝ մեզմէ ոչ-ոք չի կրնար. ի՞նչպէս գուրս գայ. և ինչո՞ւ, ի՞նչ ընելու համար. այդ բոլորի մասին ես չատ եմ մտածած։ Քու վերապահեդ առաջ ալ, այս վերջին ամիսներն ալ այդ ամենը գլխէս ի՛նգնին յաճախ, երբ այսպէս արմուկս պատուհանին հենուն ծուռն կը նայիմ. բայց այսպէս միայն մտածելու, ժամանակ անցընելու համար։ Ես ու գուն աշխարհքը չենք փոխեր. ան ատանկ նկեր է, ատանկ ալ պիտի երթայ։

Մինչ ոչինչ չառարկեց, քիչ մը ատեն երկուքն ալ լուռ նստած էին իրարու դիմաց հետզհետէ դորչցող երկընքին ու ծուռն պէմ։

Մինչ որ սկիզբը կարեկցութեամբ ընկերուհիին կը հետեր, քիչ-քիչ սկսաւ տարօրինակ զայրոյթ մը գգալ իր մէջ, ինքն ալ օրոշ չգիտեր ինչու. բայց այդ զգացումն ալ երկար չտեւեց, ու տեղի աբուսաւ ներքին խլրտող հպարտութեան ու գոհունակութեան չոյով յաղթական մը, որ իր մտածումներուն վրայ նկատ փուսեցաւ։ Գոհունակութիւն մը իր անկախութենէն, իր ազատ ըլլալէն, հպարտութիւն մը իր առաւելութեան, իր արուեսութեան։

Ու այդ զգացումներու թևին տակ իր խօսուն արտայդրութիւնը գարձաւ նորէն իրեն։ Եթէ իրենց մէջտեղ մանկութեան յիշատակներէն կը չաղակրատէր. վերջը պատմեց իր հօր հետ Օգոստոս անցնելուն հանգամանքները. հոնկէ ալ Թիֆլիս, իր կիմնազ մտնելը ու պատանութեան աշխուժ, արտասոս ընկերական կեանքը։ Եւ ոգևորուեցաւ։

Կը պատմէր ան երկար, պատմելու անհրաժեշտ պահանջով մը, մինչև ըստ ինքնին ունկնդրին համար մեծ նշանակութիւն չէին։ Եւ մանաւանդ իր ամենէն աւելի սիրած խնդրի մասին. իր հետզհետէ թա-

մով յափշտակութիւը, այն առաջին զգրոցական մէկ-երկու էնչին փորձերը, չրջապատողներուն զովասանքը, վերջը քանի մը անգամ սիրողներու խումբին մէջ ու արդէն հռատնքը տարեր էր։ Ա՛, այն լացերը, խնդրանքը, մինչտորդութիւնները ու այն անթիւ մաքառումները, մինչև որ հայրը գրեթէ բռնի վերջապէս տուեր էր իր համաձայնութիւնը։

Ու մինչ մէկ ոստումով ցատկեց Մոսկուայի կեանքին. իր առաջին ապատորութիւններուն, ոգևորութիւնը, գասերուն. այլ և նոր միջավայրի անսովորութիւնները, զաւեչտանքը. լուրջ ու կատակ իրարու խառնուած մէկ չունչով։ Յանկարծ յիշից հօրը մահը ու իր աչխատութիւններուն ընդհատիլը ամենատաք տեղը. տարիներ էր ձմեռուան կէսին թողնելու ամեն բան ու նա գառնալու։ Այն ի՞նչ բնկաւ. չէ՞ որ հարկադրըւած էր ալ ձգելու իր սիրած գործին չարունակութիւնը. ո՞երկէ էր այլևս իր դրամական միջոցը։ Ի՞նչ տանջանք էր փոխուած ծրագիրներէդ ձեռք վերցընելու երկրէ անհրաժեչտութիւնը. բայց և ի՞նչ անզուսպ բերկրանք, երբ տխանեռու վարանոտ յոյսերէ ու չանքերէ վերջ յաղթող էր կրկին ծառնօթ տիկնոջ մը օժանդակութեամբ ինքզինքը նորէն Ռուսաստան նետելու։

Շատ չանցած Թիֆլիս էր վերտաին, արդէն ուարտած դրամագլխի կուբանրը, արդէն բեմի վրայ։ Միթէ կարելի՞ է մոռնալ այդ առաջին քայլերը. կմոտ, յուսալից, երկիւղած, բայց և ինքնագիտակից ու վստահ իր ընդունակութիւններուն։ Այն տարօրէն համակրանքի ու յարձակումներու. այն խառն, ազմկոտ ու քաղցր մէկուկէս տարին. բայց և այնչափ հիասթափութիւններով ու գառն փորձերով լեցուն, որուն վերջին օզակը գերատաններու հիմնական պատասուումն էր և զած ու խմբի ցրուիլը։

Ալ կարգը նկաւ ապագայ ծրագիրներուն։

Պոլի՞ս. է՞, Պոլիս գալը անմտութիւն էր արդէն։ Նորէն որևէ տևական աչխատանք կռվկաս միայն կարելի է գլուխ բերել առայժմ։ Շուտով վերադառնալու է Թիֆլիս. լսած է, որ հոն նոր չանքեր կ'ըլլան թատրոնական գործը կրկին ոտքի հանելու. երևի, բան մը կը յաջողի։ Իսկ եթէ ո՛չ, է՞, հայկական բեմէն խոր չկայ. կը չանայ ռուսական չնորհքով խումբի մը մէջ մտնելու. կը դիմէ Մոսկուա իր սիրելի ուսուցչի օգնութեան, որ այնքան խոստումներ տուած էր իրեն և որ այնչափ կոպեր ու հեղինակութիւն ունի. հաւանօրէն բան մը գլուխ կու գայ։ Եւ ո՞վ գիտէ, գուցէ չատ չանցած յաջողի մեծ բեմի մը վրայ ոտք դնելու. գժուարը գժուար է, իսարկէ. բոլորը խնամքական հաչիւններու կապուած և պէտք է անպատճառ ազդեցիկ թևարկու մը ունենաս կամ բարձրաստիճան սիրելիան մը. մրցումն ալ մեծ, ամեն կողմ ինդրիկներ. բայց ո՞վ գիտէ, եթէ իրաւ իր մէջը

ուժ կայ, նեղ իրօք բանի մը պէտք է։ Ով ուժ ունի ու կամք՝ բազը անոր հետ է։

Մինասի էր բոլորովին, երբ Արուսեակի մայրը եկաւ ու փրցուց ոգևորութեան այդ չղթան։ Մինէ եկաւ, հրաժեշտ առաւ նախանձէն ու հիացումէն կաշկապուած ընկերուհիէն. և իր հրահրած յոյսերուն սկի կայծերէն ինքը բռնկած՝ վառուող այտերով հասաւ տուն։

— Ինչո՞ւ նորէն այսչափ ուշացար.— ըսաւ մթրաքոյրը դուռը բանալուն պէս։— Տե՛ս, Հրանտը հոս էր նորէն. ժամուան մը չափ կայ. քիչ մը սպասեց, անսաւ որ մէջտեղ չգաս, եկաւ գնաց։

Աղջիկը ամբողջ մարմնով ցնցուեցաւ ու ակընթարթ մը սեմին վրայ կանգ առաւ ակամայ։

«Հրանտը...»

Եւ իսկոյն արթընցաւ կրծքին տակ վերի ոգևորութեան թափին մէջ առաջմապէս թմրած այն զգացումը, որ վերջին օրերը չարաչար, սարդի ոտաոյնի մը թելերուն պէս բարակ ու կպչուն, գալարուած էր իր բոլոր մտածումներուն չուրջը. անակ մը ախորժ յուզում ու անորոշ երկիւղի պէս բան մը, խախ առուղ ու խրանոցը նոր զգացում մը, որուն Մինէ անուն տալ չէր կրնար և չէր ալ ուզեր տալ։

— Ինծի համար բան չըսա՞ւ.— հարցուց աղջիկը հանդարտութիւնը գտած ու կամաց մը տան դուռը գոցելով։

— Ի՞նչ պիտի ըսէ։ Հա՛, վերը սեղանին վրայ քեզի քարտ մը ձգից կարծեմ. գնա՛ նայէ։

Մինէ չտապ վառեց ճրագ մը ու վազեց վեր։

Հիւրասենեակի ճիշդ կեդրոնը դրուած կլոր սեղանին վրայ ինկած էր տուս այցեքարտը։

«Քեզի տունը հանդերպիլը հաղուագիւտ բազդաւորութիւններէն մէկն է արդէն, որ ամեն մահկանացուի չէ վիճակուած։ Եկայ որ խելքդ քիչ մը պատի ելլենք միասին. ինչ և է։ Վազը ճաչէն վերջը տունը քեզի կ'ըսպասեմ. նաւակնիս ալ պատրաստ կ'ըլլայ. մինչև անգամ բացառապէս կը համաձայնիմ այս անգամ զեկավարութեանդ ենթարկըելու։ Կնոջ մը զեկավարութեանը ենթարկըելիս... կրնաս երևակայել՝ ինչ տակալի յանդգնութիւն ու անճոռնութիւն է սիրկս իմ կողմէս. ուրեմն գոն ու սրտաւութիւնս գնահատել գիտցիր ու անպատճառ եկո՛ւր»։

Ժպիտը չրմռնչքին աւարտից ընթերցումը, հասնցաւ մօտ սթռնին, առաւ քարտը չեզակի երկու սուր ծայրերէն մատնեմատին ու բոյթին մէջ, բռնից իր դէմքին, սկսաւ փչել ու դարձնել. սրա՛դ, չունչի ներածին չափ արագ...։

Ե

Պառաւը պարտէզի դրան սանդուղին վրայ նստած, խոշոր պըտնակի մը մէջ զոգը դրած կանաչեղէնի տոպրին կոյտը կ'ըստակէր ձեռքի փոքրիկ դանակովը։ Լո՜ւռ, ծա՜նր ու մխակո՜րով։

Նայն միջոցին էր, որ գլօսնոզի հանգարտ քայլերով երեցաւ Մինէ ծառերուն եռեւէն, յորդէ գլխարկը բռնած ձեռքը ու ձեռքերը կապած ետին։

Նոյն հանգիստ քայլերով ալ մօտեցաւ պառաւին ու դէմը կեցաւ։

— Դեռ չնկա՞ւ.— հարցուց վերջինը։

— Է՛, թո՛ղ, մայրիկ, անոր հետ գործ բռնել չըլլար. անչնորհք ազայ է։

— Քիչ մըն ալ համբերէ, ազջիկս. երեւի գործ մը պատահեր է. ինքը ինծի ըսաւ որ չուտով պիտի գառնայ. ան ըսածը կը պահէ։

— Մայրի՛կ, չիտակ ըսէ՛, չա՞տ կը սիրես պզտիկ ազապ.— հարցուց Մինէ յանկարծ։

Պառաւը հայեացքը կանաչէն բարձրացուց ու խորչոմած այտերուն մէջէն ոչնպիսի ժպիտով մը նայեցաւ ազջկան, որ այդ տեսակ հարց տալն անգամ ծիծաղելի կը գարձընէր։ Բայց իսկոյն ա՛լ մը քաշեց թեթեւ, աչքերը ձգեց նորէն պնակին ու չարունակելով սոսկելը՝ աւելցուց.

— Մեզք որ հիմակուան ճահիլները քիչ մը ուրիշ ձեւի են. մարդուս խելքը բան չի կարեր։ Նկատի, հասկցայ ազայ. փոխանակ չէնք-չնորհք գործ մը բռնելու՝ ինկեր է այդ խնոխ-մնոխ գրքերուն ու պատկերներուն հետէն։ Խելքը-միտքն ալ չարաշահ գուբսերը. երեք-չորս տարին հազիւ անգամ մը երեսը կը տեսնենք քանի մը օր ու հա՛յտէ, կը ձգէ կ'երթայ նորէն օտարներուն մէջ, խորթ մարդոց ձեռքը. ոչ մենք խնդալ կրնանք իր վրան, ո՛չ ալ ինքը հանգիստ ապրիլ. օտարին հո՞գն է։ մարդ միսյն իրենները քովը ապրելու է։

— Է՛, մայրիկ, օտարներուն մէջէն ալ ազէկ մարդիկ կան. ինչո՞ւ։

— Սո՛ւս, ծուռ մըն ալ դուն. այդ բաներուն որ խելքդ հասնէր՝ դուն ալ ծանր գլուխ տուներ կը նստէիր ու գուբսերը չէիր քաշքշաւեր։ Լեզուս բանալ մի տար. դուն դեռ ազջիկ ալ ես. մինչեւ վերջը այդ անպիտան գերատաններուն ու կապը կարած ազջիկներուն հետ։

— Ուրեմն ես հիմա կապը կարա՞ծ ազջիկ եմ։

— Դո՞ւն, Աստուած չըներ. բայց անո՛նք։ Դուն դեռ անփորձ ես

միայն ու ըրածդ չգիտես. մէյ մըն ալ, որ պարապ ես: Հարաս, սըզաս, ամէնքը կը զժգոհին քու խաղալէդ. բայց զժգոհելն ինչ կ'ելլէ: «Շնորհքով մարդ մը գտէք, կ'ըսեմ, կարգեցէ՛ք ազջիկը ու վերջացաւ գնաց»– բայց որո՞ւ կ'ըսես: Հասած միս-միտակ ազջիկ մը, իհարկէ սիրտդ կը նեղանայ. ամէն բան իր ժամանակը ունի, ամէն տարիք իր պէտքը. քու տարիքիդ ես վեց մանչ ունէիր էրիկդ քովդ, սըզաքըդ փեչերուդ, ալ պարապ բաներու ո՛չ ժամանակ կը մնայ, ո՛չ սխրժակ:

Պառաւի այս կայտառ ու վստահ չնչառով մը կարգացած խրատականը Մինէի վրայ զուարթ ապատրաքիւն մը կ'ընէր: Մէկ ոտառմով ցատկեց անոր քովը, նամեցաւ առնդուզին ոտքը կնոջ կից, արմուկը դրած ծունկին, ու գլուխն ալ ձեռքին յենելով՝ խորհուրդ չունէր մը առաւ. հայեացքը պառաւին՝ ծիծաղելի լրջութեամբ մը հառաչեց:

— Այո՛, այո՛, մայրիկ, քու ժամանակդ մարդիկ խելացի են եղեր:

— Ապրի՛ս, ազջիկս. դուն ալ ես խելացի. ականջ դիր ձերմակած կնկան խօսքերուն. թէ չէ՝ ինչի՞ է նման հասած ազջիկը առանց մարդու. հաւատա ինծի, զաւակներուդ երեսէն միայն կը խնդաս...

Քիչ մը հեռուն, տան կից, պարտէզի տախտակէ դուռը յանկարծ ետ հրուեցաւ, և Հրանտ արտորուն քայլերով դիմից դէպի զոյգը:

— Հը՛, դո՞ւն ես.— բացականչեց պառաւը:— Ինչո՞ւ ուշացար. ազջկան սիրտը հաւատ սպասելէն:

Մինէ առանց դիրքը փոխելու՝ ճակտին տակէն տղուն կը նայէր: Հրանտ լուռ մօտեցաւ, ու ձեռքը անոր մէկնեց ժպտուն.

— Բարի իրիկուն. նոքէն բարկացո՞ր ենք:

— Բարկանա՛լ. արդէն քու պարանոցդ հորը իջնելը խնդիրքիւն է.— բացականչեց ազջիկը հեռ:

Ու յանկարծ ոտքի ցատկելով՝ աւելցուց.

— Չէ՞ որ պատրաստ պիտի ըլլայիր, նաւակը ապսպրած. մինդեռ հրամա՞նդդ. ելեր ես թափառելո՛ւս. ի՞նչ բանի էիր մինչև հիմա. քիչ մըն ալ որ երեքրկա՛ս արևը մայր պիտի մտնէ:

— Դրացի Ֆրանտացիին մօտ էի. պոչծ ունէինք. խօսքս կէս ձգել չէի կրնար. հրամանդդ բոլորը կը կատարուի. նաւակը ապսպրուած է արդէն. քու սիրած ձերմակ մակոյկդ. ես ալ այս վայրկեանիս քու սրամտապրութեանդ տակը, ուրե՞ն:

Պատասխանեց Հրանտ կատ-կատ, կեղծուած պաշտօնականութեամբ մը. և յանկարծ ծիծաղելով՝ քաշեց ուժով մը ազջկան թևէն ներս դէպի տուն ու հոնկէ ալ քանի մը վայրկեան վերջը փոպոց:

— Իսկ դուն չատո՞նց է որ եկեր ես.— հարցուց ճամբին:

— Հրամա՛ր ես. ժա՛մ մը կայ, անշո՛ւնդ մարդ:

— Խո՛ղճ Մինէս, ձանձրացեր ես երևի:

— Ձիշդը խօսելով ոչ այնչափ. գոնէ ժամանակս կարծածէդ

ուելի օգտակար կերպով անցաւ. նախ մօրաքոյրս սորվեցուց ինծի վարուելակը թխու դնելու ամենալաւ եղանակը, վերջն ալ մայրիկը սորվեցուց ինծի երջանիկ բլլալու ամենաչիտակ ճամբան։

— Մի՞թէ. կարելի չէ՞ այդ գազանիքին ինծի ալ մատնակից ընել. ո՛րն է այդ ճամբան։

Պահ մը առանց պատասխանելու քալեց Մինէ ազուն քովէն. եաքը թեթեւ մը ճակատը կընճռռելով՝ ըսաւ կէս-լուրջ, կէս-կատակ.

— Ահա՛ ա՛յս, որուն վրայէն մենք հիմա կը քալենք։

— Վա՞յ։

Ու երկուքն ալ այս չափով եա քաչուեցան վտանգաւոր հարցէն։

Թուրք նաւավարը երբ իր սովորական յաճախորդի մօտենալը տեսաւ, ձեռքին մակոյկը քաշեց նէզ ու փոքրիկ նաւամատոյցին. և ինքը չոքելով նաւամատոյցի թաց տախտակին վրայ՝ բռնեց մակոյկին եզերքէն, որ զայդը դիւրութեամբ մէջը իջնէ։ Եաքն ալ գնաց կապը քակեց և նաւակը քիթէն ուժով մը հրեց դէպի բացը. կեցաւ չփի-չփտակ ու հպարտութեամբ կը դիտէր երկար իր հեռացող ազուռը նաւակը։

Մակոյկը արդէն չատոնց անցեր էր Ֆէնէր-պահճէ փարոսին տակէն ու քիթը չիտակ դէպի արեւելքի ցամաքը ուղղած առաջ կը սահէր, միշտ կիսալայրի ափին զուգահեռ։

Իրիկուան արեւը նարինջի կարմիր մը քսեր էր տեղ-տեղ ծովու անծուփ այտին. որուն չիկնոտ ցոլացումներուն տակ ողողուած՝ Մինէ մեզկ ու անփոյթ դիրքով մը փառեր էր զլկին անկիւնը, փոքրիկ ու ցած նատարանի թիկունքին. մէկ ձեռքը դիրկը՝ զլկին թևերը բըռնած, մինչ ձախը՝ մինչեւ արմուկը մերկացուցած՝ մակոյկին եզերքէն ջուրին մէջն էր կախեր ու աչքերը կէս-գոց՝ կ'երգէր մեզմ ձայնով։

Ռուսերէն ոտանաւոր մը։

Եւ Հրանտ կը ծըռէր ու կ'ուղղուէր թիերուն հետ զուգընթաց. բոլորովին մեքենաբար, լո՛ւռ, առանց մը համայուա՛ծ թիերու կանոնաւոր ճոպիւնէն ու ծլծլուն կաթիլներու ախորժալուր գաչնակութենէն։ Ու այդ հոգիական օրօրման մէջէն անցագ աչքերով կը զննէր մասամբ իր դէմը փառուած ընկերուհիին. անոր ոզորկ, նուրբ ու ճերմակ գաստա՛կը, որ նաւակի սուր եզերքին վրայ թեթեւ մը ծալք էր ըներ. անոր քոքերի մը անզգուշօրէն զուրս ցայտող բի՛ւսաը, որ իր երգին հետ կ'ելեւէջէր. անոր չրջապտիտին տակէն հետզհետէ զուրս նայող իրարու վրայ ինկած փոքրիկ անհանգիստ ոտքե՛րը. ու անոր չագանակի մազերուն կարճ գանգուրները, որոնք ամեն կապանքի անհնազանդ՝ յարդէ լայնեզր գլխարկին տակէն ամեն ուզուելիամբ քունքերուն ու ճակտին վրայ կը պալարէին։

— Նո՞ւ, ուսուցիտիրեթիանդ արդի՞նքը.— խնդաց աղջիկը յանկարծ երգը կարելով, երբ ազան վերջապես գլխու գանգազ գարձումով մը՝ հայեացքը ծովուն ձգեց։

Հրանտ Ժպտեցաւ միայն։

— Զդէ՛ Թիւրդ ու ակո՛ւր քովս. մի՛զք ես, արեւը հոս աչքերուդ մէջն է չարաճնակ. ակո՛ւր, քով-քովի փիչ մը բանտասեղծուԹիւն խաղանք նորէն. սա՛նկ գլուխս նորէն ուսիդ։

— Ո՛չ, ո՛չ.— պատասխանեց ազան խիստ կարուկ ու վախցած. և առանց գիտնալու ինչու՝ Թիւրուն չափը արագացուց։

— Այդպէս լո՛ւրջ. հա՛, հա՛, հա՛, հա՛.— ծիծաղեցաւ Մինէ քա՛րձր ու ամբողջ կրծքովը։

Աչի ժայռերն ու ձերպերը ձայնակցեցան աղջկան՝ անոր ծիծաղին ամեն մէկ չեչոը կրկնելով ու երկրնելով հաւատարիմ։

Հրանտ աւելի լրջացաւ։

— Ինծի նայէ՛, Մինէ, մեր ըրածը վտանգաւոր խաղ է։

Ու ձայնը դողաց։

Աղջկան սիրտը սեղմըեցաւ. բայց իր յուզումը ընկճելու չանքով նորէն սկսաւ անսանձ ծիծաղիլ։ Այս ծիծաղը ալ առաջուա՛նը չէր սակայն. արձագանգն անգամ չհնձու կը հնչէր։

— Ես լուրջ կը խօսիմ, Մինէ՛։ Վերջապէս պէտք է մեր վիճակը տեսկրնանք, Թէ չէ՞. կեղծ քաղաքակրԹեանն կարիք չկայ. պա՛րզ է, որ մեր զգացումները չատանց են սկսած բարկըռիլ ու մեր յարաբերուԹիւնը քանի կ՚երթայ այնչափ տարօրինակ կը դառնայ. այդպէս չէ՞։

— Ներեցէ՛ք Թէ. վե՞րջը.— հարցուց աղջիկը աչքերը կծկելով։

— Վերջը ա՛ն, որ մեր վարմունքը բացարձակ անմտաԹիւն է։ Մի՞Թէ ինքդ համոզուած չե՞ս, որ ինծի հետեւիլ չես կրնար, որ մենք չենք կրնար իրարու կապուիլ։

Աղջիկը գլուխը տակ՝ ձեռա չարժուձով մը պնդին Թելը մատին էր փաԹԹեր։

— Ես ուզելո՛ւն կայ։ Ես քանի խորը կը մտածեմ, այնքան ինծի կը Թըւի, Թէ իսկապէս մեր փոխադարձ զգացումներուն մէջ կեղծ բան մը կայ. ճշմարիտ զգացումը ո՛չ այս տեսակ երկար-բարակ հաչիներ ընել գիտէ, ո՛չ ալ այդ հաչիներուն դէմ կանգ կ՚առնէ։ Մենք իրար չե՛նք սիրեր, Մինէ. և Թէ կ՚ուզես, ինծի համար չա՛տ հասկընալի է, որ մենք իրար չե՛նք ալ կրնար սիրել։ Իմ խելքս իմ գործերուս է, քանի որ էութիւնդ գերասանուԹիւնդ է եղած. իմ զբաղումներս քեզի հասկալու համար օտար է, քա՛նի ուզիզդ լարուզ աչխատութիւններն ալ իմ չըշահակէզ դուբս. մէկ խօսքով՝ ես գիտութեան մարդ եմ, դուն արուեստի աղջիկ։ Ուրեմն մեր մէջ գործածը կե՛ս մը ախմարութիւն է, կե՛ս մը զգացումի պատրանք. համաձայն չե՞ս։

— Կատարե՛լապէս.— եղաւ աղջկան վերին աստիճանի հանդարտ ու յստակ պատասխանը։

— Ուրե՞մն...

— Ուրեմն... այլեւս պարագ թիակարկուս պէ՛տք չկայ։

Հրանտ նեղստած ուսը ցնցեց։

— Այսօր երեք ձախ կողմէդ ես անկազնէն ելար։ Զգէ՛ թիերդ՝ կ՛ըսեմ քեզի. ու քովս եկուր։ Այդպէս ուելի յարմար կարելի է փիլիսոփայութիւններ ընել ու լսել։

Ու նեղ նաւարանին վրայ մէկ կողմ քաշուելով՝ անդ բացաւ։

Հրանտ իրաւ թիերը ձգեց, բայց փոխանակ անոր նաւարանը անցնելու՝ զժգոհ դէմքով մը նստաւնցաւ նաւակին յետակը ազգկան մօտիկ, արմուկը չեռնց միւսի անոր նաւարանին ու հայեացքը յառնց ծովուն։

Տղաս ընդոսա չարժուելին մակոյկը ուժով ճոճուեցաւ. ու բարակ կռնակներու երկար չարքեր՝ կարծես վախցած՝ արագաշարժ սկսան փախչիլ նաւակին երկու կողքերէն։

— Է՛, հիմա չարուճակէ՛ տեսնեմ, քու տափակ գաւազուքիւններդ.— ըսաւ Մինէ՝ ձեռքը կամաց մը անոր ուսին դնելով։

Հրանտ միշտ լուռ. նստած էր անչարժ՝ դէմքը միշտ անդին դարձուցած. ու ճիգ մը միայն նկարուած էր իր պինդ խածած ծնոտին՝ զայրացած չնչառութեան ու բռունցքներու սեղմուքին վրայ. ճիգ մը ակռ մնալու իր ուռոզ զգացումներուն, որոնք դուրս յորդիլ կը ձգտէին։

— Նո՞ւ, ի՞նչ ես յանցաւոր երեխայի պէս աչքերդ վար կախեր. քէ՞ խիղճդ մաքուր չէ գուցէ. մէյ մը ինծի նայէ՛, տեսնե՛մ. չիառա՛կ աչքերուս մէջ, այդ քու խելացի աչքերովդ։

կամաց մը բռնեց ազուն դանդրը ու անոր դէմքը իրեն դարձուց։

Ինչ կար Մինէի հայեացքին մէջ ազան չհասկըցաւ. միայն յանկարծ ամէն մաածում թռաւ գլխէն, բարձրացաւ քիչ մը մակոյկի յատակէն, քաշեց ազջիկը իրեն, թաղեց դէմքը անոր կրծքին վրայ ու զայդ թևերուն բոլոր ուժովը անոր մարմնին գալարեցաւ։

Մինէ դիմադրութեան չնչին չարժուձ մը անգամ չըրաւ. գլուխը ինկաւ ետ, թարթիչներուն ճերմակը փոքրացաւ, խառաւ վարի չրթունքը ու ժպտեցաւ։

— Աւելի ազէկ է անցինք նորէն փիլիսոփայութեանդ.— հծծեց վերջապէս անուժ ժպիտով մը՝ ազու ճմլուածին մէջէն հազիւ խօսիլ կարողանալով։

Եւ Հրանտ նոյն բաւն թափվը, որով ազջկան էր փարեր, եաւ քաշուեցաւ նորէն ու ծունկերուն վրայ նստած՝ կրթընեցաւ նաւակի կողքին։

— կը տեսնե՞ս հիմա ինքդ, որ այլեւս այսպէս չարուճակել անկարելի է։ Ես ալ չեմ կրնար քեզի հետ քուշէն ու քուշին խաղալ։ ալ չեմ կրնար խեղդել զգացումներս կատակի մը կամ սրախօսութեան մը մէջ, երբ ներսս ամէն բան տակն ու վրայ կը գառնայ, երբ սիրտս խեղճի պէս մէջս կը թըփըռտայ։

— Ա՜խ, զգացումներու պատրանք։

— Մինէ՛, ինծի նայէ. հաւատա՛, որ այս քանի տանն է ո՛չ չնորհքով աշխատիլ կրնամ, ո՛չ ալ տեղ մը հանդիսատեսիլ, ո՛չ ուշադիր կը հասկընամ, ո՛չ զգացումներս։ Չէ՛. այս ապուշ վիճակը ես չարուներկել չեմ կրնար. չե՛մ ուզեր։

— Սակայն ինչո՞ւ այդ բոլորը. չէ՞ որ մենք իրար չե՛նք սիրեր. չէ՞ որ մենք իրար չենք կրնար սիրել, դուն դիտաւորեալ մարդ ես արուեստի ազդիկ։

Ու այս բառած էր անչարժ պահուած դիմագիծերուն մէջէն ներքին անզուսպ յուզմական հեչտանքով մը։

— Զգիտե՛մ, Մինէ՛, ինչ ըսելս ինքս ալ չգիտեմ. յուշն ալ հոս է։

Պահ մը մնաց անշարժ. ապա հանդիսատես, մեղմ ու անրջոտ ձայնով մը չարաբնակեց՝ կարծես իր մտածումներուն մէջէն.

— Բայց ինչ կեանք կ'ըլլար, քու սրամիտ ու չարաճճի հոգիդ միշտ աչխատութեանս սեղանին չուրջը, քու ժպիտդ ու քրքիջդ անհանգիստներուս մէջ. հո՞ն ես երազական կեանքին մէջ միշտ ձեռք ձեռքի...

Ու մէկէն կրքի բուռն զարկով մը դարձաւ խլեց աղջկան պզտիկ ձեռքերը. և աչքերը անոր մոլոր հայեացքին սեւեռած՝ վրայ տուաւ խայտացող չեչտերով.

— Եկո՛ւր, Մինէ, եկուր, Թո՛ղ ալ խաղն ու թատրոնը մէկդի. ինչի՞ւ է պէտք այդ բոլորը. ի՞նչ երջանկութիւն կրնայ բերել բեմը քեզի։ Եկո՛ւր, Մինէ. եղի՛ր կեանքիս ընկերուհին, եղի՛ր կեանքիս ժպիտը։

Աղջկան դէմքը տարօրինակ ծամածռութիւն մը հագեր էր։ Շընչառութիւնը քիչ մը կանոնաւորել չանաց նախ ու ձեռքերը կամաց մը ազատելով—

— Ե՛ս դառնանք.— հծծեց նըւազկոտ ձայնով։

Տղան թափը կտրած՝ երես հանդարտ. առանց ոչինչ ըսելու անցաւ իր տեղը ու թիերը վերցուց։

Նաւակը դանդազ կիսաշրջան մը ըրաւ իր առանցքին վրայ ու ետ ճամբայ ինկաւ։

Մինէ չրթունքները պինդ սեղմած, ձեռքերը դոգը նստեր էր իր անկիւնը. տեսակ մը ամփոփուած, կծկըւած դիրքով՝ կարծես հնարք ուզածին չափ քիչ տեղ բռնելու համար։ Հայեացքը առնիր գամուեր էր հեռուն Մարմարայի բացերը ցոլան կէտի մը վրայ. կաթգին էր միայն, որ դեռ միշտ անհանգարտ ու բարձր կը շնչէր։

— Երթա՛ք, երթա՛ք, այդ գնա՛ք երթա՛ք.— հնչեց վերջապէս իր թոյլ, դողդոջուն ու մտածումներու մէջ խեղդուած ձայնը։

Հրաման ոչինչ չառարկեց. ո՛չ իսկ դիմագծերու թեթև ցնցում մը. միայն թիերը փոխանակ իրենց կանոնաւոր զարկովը ջուրը պատռելու՝ յանկարծ ճոպանցին մակերեւոյթին՝ կաթիլներու ամբողջ բուռ մը նաւակին վրայ սրսկելով։

2

Դուռը բացուելու կ'ուշանար։

Օհաննէս նորէն քաչեց զանգը քիչ մը աւելի ուժգին. և այդ ապասման ժամանակէն օգտուելով՝ հովանոցը զարկաւ անուէթին տակ, ծոցի տուփէն պատրաստ սիկառ մը հանեց, դրաւ ակռաներուն մէջ ու լուցկին բըռնկցուցած վառելու վրայ էր, որ դուռը բացին։

Բացողը ինքը որբեւայրին էր։

— Բարև՛, Սուրբի՛կ։

— Օ՛, բարև՛։

— Շոգենաւս փախցուցի, կէս ժամուան չափ պէտք է սպասել. ըսի՝ երթամ քեզիիս, ինծի աղուոր սուրճ մը կ'եփէ։

— Ուզածդ սա ըլլայ. քալէ՛ ներս։

Ու դուռը գոցեց։

— Մինէն տունը չէ՞։

— Ա՛խ, տունն է... — պատասխանեց կինը ձայնով մը, որ աւելի հառաչ մըն էր, քան խօսուածք։

— Հը՞, ի՞նչ է պատահեր նորէն։

— Տո՛ւնն է, տունը.— կրկնեց կինը ցաւակցաս ու յուսահատ գլխու չարժումով մը։

Եւ աւելցուց.

— Արդէն այս երկու օր է բնաւ դուրս ելած չունի. չգիտեմ նորէն ի՞նչ է տեսեր. գոցուեր է սենեակը, կա՛մ կը կարդայ, կա՛մ դիրը կը սորվի։ Ա՞խ, ես ինչ ըսեմ անոր հօրը. առաւ տարաւ դպրոցը, ձգեց ինքն իր գլխուն, ամեն ուզածը կատարեց, ի՞նչ է պզիկը, ձգեց ինքն իր գլխուն, ամեն ուզածը կատարեց, ի՞նչ է պզիկը ուսուցիչական դառնայ. անո՛ր քեզի ուսում. կարգա՛ ու կարգա՛ դե՛ր ու դե՛ր։ Այսպէս մէկ էմէկ կը վրէ խելքին. ալ հետը խօսիլ չըլլար. իր տարակներէն զատ աչքին բան չերևար։ Քալէ՛ վեր, ինքդ աչքերովդ տես։

Ու միասին սկսան սանդուղներէն բարձրանալ։

Սանդուղի գլխէն լսուեցաւ Մինէի ձայնը։

Ջղուշ քայլերով մօտեցան սենեակի կիսաբաց դրանը։

Դիրքերով ու թերթերով բեռնաւոր սեղանի մը քով՝ նստած էր որբևայրի տաս-տասներկու տարեկան խոնարհ աղջիկը, որ տեսարակ մը ձեռքը բռնած յուշարարի պաշտօնը կը կատարէր. մինչ Մինէ կը

կրկրէը բարձրաձայն նոյնը՝ անհնակին մէջ անընդհատ երթևեկելով՝ ձեռքի ու դէմքի դերին պահանջած չարժումնեբուվը։

— «... Ա՛ս գժոխք է արդէն, ի՞նչ կեանք։ Ո՛չ ևս խօսիմ պիտի կապալառուին հետ»։

—« Հեռեանքը ինծի՞ ինչ. Թող»... օգնեց փոքրիկ յուշարարուհին։

— « Հեռեանքը ինծի՞ ինչ. Թող ըլլայ ինչ որ կ'ուզէ. մինչ ուրիշները ինծի մատնեցին, մինչ ուրիշները խնայեցի՞ն ինծի...»

— Բայց գոնէ դուն պէտք է քեզի խնայես.— հնչեց ըրան մէջէն Օհաննէսի խնդացող ձայնը։

— Երկու ապրիկները մէկ անգամէն ևս նայեցան։

— Ա՜հ, քեռա՛յրս.— բացականչեց սեաչեայ յուշարարուհին մարդուն դէմը վազելով։

— Քեզի խանգարեցի, կարծեմ.— նկատեց վերջինը՝ պարզելով ձեռքը Մինէին։

— Փոյթ չէ. ուրիշ ապէկ. արդէն պէտք էր քիչ մը դադար առնէինք։ Ինչ'ոչ Արաքսիա. յոգնեցաւ արդէն։ Դէ՛, ազատուրիկս, դնա քիչ մը չունչ առ, իսկ յառաջիկայ ներկայացումէն ետքը ալ ինծի նայէ՛։

Ու քամիծուղ՝ մէկ ձեռքը ապրկայ ուսին դրած՝ միւսովը սկսաւ անոր սև մազերը չոյել մեղմազոտ քնքշութեամբ մը։

— Իսկ դո՞ւն ինքդ, չե՞ս յոգնած.— հարցուց մարդը։

— Է՛, ե՛ս.— ըրաւ Մինէ ձեռքը թափ տալով.

Դէմքին տարտամ ժպիտ մը թռուցիկ ու պահ մը մատնելէ վերջը՝ տաք-տաք վրայ տուաւ.

— Յոգնի՞լ· ասկի ապէկ։ Անվերջ անհնակիզ մէջ կ'երթիս ու կու գաս, կը կրկնես խօսքերը, չարժումները. տակէ որ ձանձրացալ կը նստիս կարգալու. ան'ս, հոս թափուած են ամսագիրներս, թատրոնական թերթերս. պէտք է հետևիլ չարաճնակ, թէ գործերը մնծ բեմերուն վրայ ի՞նչ կայ, ինչեր կը գտնուին, անոնց խազերը, անոնց քննադատութիւնները. թէ չէ մարդ խելքէն ետ կը մնայ. կը կարուի աշխարհքէն ու չորցած ընկոյզի մը պէս կը կծկուի իր կեղևին տակ։ Հապա՛, աշխատի՛լ· յոգնի՛լ, զբաղուիլ չարաճնակ. այդպէս պէտք է· թատրոնի գործ արուեստիդ մէջ, ապրի՛ս ու կեղրոնանաս միայն գործիդ· վրայ որով ինքզինդ այլևս ժամանակ չի մնար ամէն տեսակ կռմնակի պահանջներով հոգիդ անհանգիստ ընելու. ա՛չ անխորհուրդ մատնեցնիներ, ա՛չ այրող, անհետևանք զրպարտութիւններ...։ Դուն չդիտես· այսպէ՛ս, այսպէս ալ՛կ է։

Ու անիսկի, ուժասպառ չարժումով մը ինկաւ քովընտի աթոռի մը վրայ, թևերովը գրկեց աթոռին թիկունքը ու վերին ծնոտի ակառանները դրաւ աթոռին ցցի տուր եզերքին։

— Բայց ինչո՞ւ համար, ազջի՛կ։— մէջ ինկաւ տիկինը տեսակ մը խնդրոյ ու յանդիմանակա՛ն ձայնով։— Ամեն բան իր չափը ունի. պէտք է մարդ վերջապէս ինքզինքն ալ մտածէ ու իրենները. այդ խնդիր պէս...

— Ա՛խ, մօրաքո՛յր, ինծի հանդիստ ձգէ՛, գիտես որ պարապ բան չ՚սիրեր իրար չենք հասկընար։

Ու անհամբեր թռաւ տաքի։

— Զգիտե՛մ՝ չհասկընալու ի՞նչ կայ. անգամ մը տարուեր ես այդ խելառ գործովը. քեզի խելքէ հաներ են, և ալ տուն, ընտանիք, քուկիններդ ոչինչ աչքիդ չերեւար։ Օտարներու քեզի համար կ՚ելլես բեմը, կը խաղաս, հոգիդ կը հանես, իսկ քեզի սիրողներուն վրայ հոգդ անգամ չէ։ Գոնէ այդքան տանջանքիդ փոխարէն մէկ տունը չահ մը ըլլար. առածդ ինչ է. քանի մը փարա մէկէմէկ. ան ալ քսլարը այդ գոյն-գոյն թերթերուն ու խնդի ու խելառ հոգուստներուն կ՚երթայ. մեզքը չի՞ս, երիտասարդութեանդ մեզքը չի՞։

— Մօրաքո՛յր, հոգիդ սիրես, վերջ տուր.— ազաչեց Մինէ ձանձրացած՝ այդ քարոզներուն վարժուած համակերպող չեղաւ մը։

— Ի՞նչ վերջ տամ, երբ դուն ինքդ քու օգուտդ չես հասկընար։ Ազջի՛կ, միշտ այդպէս գեղեցիկ ու երիտասարդ չես մնար. վերջը չա՛տ կը զղջաս, բայց ալ ձեռքդ չիյնար։ Նա՛, Օհաննէս, Համբարձումեանին պատմութիւնը դիտե՛ս. ինչ չենքով – չնորհքով, հարուստ, պատուաւոր, նամած մարդ. անխելք ազջիկը այսօր որ փիչ մը քիմք կտաբէ, վաղը մարդը նչան պիտի բերէ։ Դուն անոր տրտաքին անկատարէ, վազը մարդը նչան պիտի բերէ։ Դուն անոր տրտաքին անհամաչափութիւնը մի՛ նայիր. դուրսեցի է իրաւ, քու գեղեցկութեդ չի նմանիր, բայց ոսկի սիրտ ունի։

— Եւ ոսկի ալ գրպան. ամենէն ազէկը.— կտրեց Օհաննէս խօսքը։

— Որ քու գեղեցկութիդ չունին.— աւելցուց օրիորդը։— Աչխարհքը հիմա ոսկիով կը գտնուի, խե՛նթ ազջիկ, քեզի քու թատրոնդ ալ կ՚ազատէ, այս տանջանքներէն ալ. կ՚ապրիս ուզածիդ պէս, տունէդ ալ կ՚ազատէ, հարո՛ւստ, փա՛ռք ու պատի՛ւ։

Մինէ սկսաւ ջղաձգօրէն խնդալ. չնչատոչ, բուռն, հեծկլտուքի գոյզը, հիւանդ ծիծաղ մը։

— Է՛, դուն որ քու ազկդ ուզողը չես ճանչնար։ Ինչպա՛ դուն. օր մը այս խօսքերս միտքդ կու գան, բայց չա՛տ ուշ։

Ու մէջքը կոպած գոգնոցին թելէն բռնալիներուն արցունքը ուժով մը գուրս քաշելով՝ սենեակէն ելաւ։

— Ի՞նչ կ՚ըսես այս փոքրիկ կատակերգութեան.— հարցուց վերջապէս ազջիկը լուռութիւնը խզելով։

— Անկեղծ խօսելով՝ մօրաքրոջդ բառերուն մէջ չիտակ բաներ չտա կան. ա՛յ, օրիո՛ր, որ այդ արհեստը ոչ մէկ դրական չահ չի բերեր։

— Շա՛հ. իսկա՛յն յայտնի է, որ պանքայի պաշտօնեայ ես. իմ փնտռածս չես էլ։

— Հապա՞, եթէ կարելի է հարցընել։ Փա՞ռք գուցէ։ Լ՛, սրժէ՞ այդ մանրապիտական փառքին եռեւէն վազել մեր այս ողբմելի կեանքին մէջ, մեր խեղճ ու կրակ թատրոնին վրայ, թէ՛ հոս և թէ հո՛ն այդ քու կովկասդ։ Չէ՞, անցած օր դուն ինքդ կը գանգատէիր. հիմա ելեր ես այդ տեսակ հասարակութեան մէջ փա՞ռք կը փընտռես։

Մինէ գլուխը կրծքին ձգած՝ նստեր էր գրասեղանին առջեւը ու չգաճգօրէն ծայրը կոտրած մատիտի մը հետ կը խաղար։

Մինչ խօսակիցը գոհ իր խօսքերուն թողած տպաւորութենէն՝ նոյն չէշտովը չարունակեց.

— Եւ վերջապէս ի՞նչ կեանք է ինքնին այդ մեր հայ թատրոնի գնչու գոյութիւնը. այսօր կայ, վաղը չկայ. անվերջ զրկանքներ, ներքին մա՛ներ կռիւներ, ազա՛տ անձնական հաչիւներ, նախա՛նձ, իրար վշտացո՛ւ, իրար կտրելո՛ւ զգուելի քօղարկուած ինտրիգներ, մեծամտութի՛ւն, գեղարուեստի պակա՛ս, բամբասա՛նք. և ալ ի՞նչ գիտեմ. փա՛ռք Աստծու, այս բոլոր չարածս քու սեփական բաներդ են։

— Ամէն գործ իր անախտիժ կողմը ունի։ Այդ ըսածներդ ու իմ տրտունջներս ամէն ժողովուրդի ու ամէն ժամանակներու թատրոնական կեանքին անբաժան մասն է։ Բայց իր կոչումովը ոգեւորուած մարդուն համար այդ անհաճոյ կողմերը ծանր չեն կշռեր։

— Կոչո՛ւմ. ինչ կ՛ուզես ըսէ՛ դուն, մէյն գիտցի՛ր, որ իրաւունքը մօրաքոյրներուդ առողջ բնազդինն է. պատուաւոր ու նրբազգաց ազգկան մը չի՛ յարմարիր դերասանի կեանքը, պարապ բան է։ Ե՛ս ալ կը գովեմ քեզի, քու կրթութիւնդ, քու ընդունակութիւններդ. բայց այդ չնարհքդ ու ուժդ, չիսա՛կը, արժէ որ ուևէի վա՛տ, էակա՛ն, սո՛ւրբ բանի մը գործադրես։

— Վա՛տ, սո՛ւրբ.— հեգնեց ազգիկը չրթունքներն ու վիզը ձռելով։ — Երեւի՛, կ՛ուզէիր կռիւ, որ Համբարձումեանի մը անկողնին կրանեմ, հա՞։

— Նայէ՛, ընտանիքի մասին այդ լեզուով խօսիլդ անգամ անվայել է։ Այսքանը պի՛տի հասկնաս, որ կզմայ ալ որ գործունէութեան իսկական առանցքը ընտանիքն է։ Տանը նաեւ կնոջ գործունէութեան իսկական առանցքը ընտանիքն է։ Տանը տիրուհի՛ն, իր զաւակներուն մա՛յրը, ամուսնին ուրախութի՛ւնը. ատ է իր կոչումը, իր սո՛ւրբ, իր միա՛կ կոչումը։

Որքեւայրին փոքր ափսէի մը մէջ սուրճը թրթռաւ ու դրաւ խօսդին առջեւը. և ինչպէս որ խոժոռ դէմքով ներս էր մտեր, ա՛յնպէս ալ դուրս ելլել կ՛ուզէր. բայց չդիմացաւ ու դրան մէկ կողմն դարձաւ քրոջը մարդուն.

— Թա՛գ. աւելո՛րդ տեղը սիրտ կը հատցնես։ Ան ամէն լրագիր գրպի ամէն պարապ խօսքին կը հաւատայ, մինակ իր ազգականներուն համար ականջ չունի. չէ՞ որ մենք իր դէչը կ՚ուզենք։

Ու սեղէն զատ։ Իսկ Մինէ ըսաւ կարեկ.

— Ինձի՛ նայէ. թէ կնոջ կոչումը ընտանիքն է, թէ ընտանիքը տունը է կամ վանք, տառնք այն տեսակի հարցեր են, որոնց մասին հիմա քեզի հետ վիճելու բնաւ ախորժակ չունիմ. Այսքանը միայն ըսեմ, որ ես իմ արուեստս սրտանց կը սիրեմ և որը ինձի համար չա՛տ ու չատ աւելի տունը է ու վանք։

Օհաննէս վայրկեան մը լուռ սկսաւ տուրքը խմել. կարծես ինչ պատասխանելիքը կ՚որոնէր։ Վերջը գաւաթիկը դրաւ փոքրիկ պըղնակին մէջ՝ ու կցկց չոյող ձայնով մը.

— Ջոս հոգիպէս բարձր կին մը ըլլալը, քու զուտ կանացիութիւնդ ալ ճ՚ չդ ա՛յդ կէսին մէջ պիտի ներէայ, որ ընտանեկան թիւնդ ալ ճ՚չդ ա՛յդ կէսին մէջ պիտի ներէայ, որ ընտանեկան կանքի սիրուն՝ զոհես նոյն իսկ քեզի համար ամենէն աւելի թանկ ու արժէքաւոր եղածդ բանը։

— Իսկ եթէ չզոհե՞մ։

— Պարապ խօսք է. վերջիվերջոյ զոհես պիտի։

— Մ՚թէ. ինչէ՞ն գիտես։

— Որովհետև կին ես։ Արդէն ըսի. կնոջ մը համար իր բոլոր մտածումներն ու ձգտումները իր սիրած մարդուն ու տունը համար զոհելը իր կանացի բնութեան ամենէն դիպուկ պ/ծն է. կնոջական ամենագրաւիչ հրապոյրը, իր հոգիին մեծութիւնը։ կնոջ մեծութիւնը իր անձնազոհութեան մէջն է։

Մինէ յանկարծ ցասկից առաւ ու սկսաւ սենեակին մէջ վազվզել՝ բանի ու չոր խնդուկով մը։

— Հոս խնդալու ինչ կայ.— հարցուց մարգը զարմացած։

— Հիանալի է, ճիշդ այդ-մարդու գաղտնութիւն։ Խնարկէ, ձեր հաչուին կու գայ. զաբելով կինը ձեր գերին էք զարձուցեր, ամէն իրաւունք, ամէն ազատութիւն խլեր էք իր ձեռքէն, կապեր էք քնքանը գնչկալով, առքերուն փաթթեր էք այս երկար փեչերը. և հիմա ալ որ քիչ մը ակներ է աչքերնիս բացալ, քիչ մը չարժանալու կ՚բակինք՝ անա՛ ձեր այդ բարոյական փառած խեչալներով դէմերնիս պատ քաչել կ՚ուզէք. կարծես անհամար ընկերական ու անհասական արգելքները հերիք չեն մեզի։ Անձնազոհութիւն. խնարկէ ձեր հաչուին կու գայ, որ կինը չարաճնակ մինակ ձեր գլխուն չոքչը գառնայ, մ՚թա՛յն ձեր մասին մտածէ, զոհէ ձեզի համար ամէն բան. և՝ ապառնութիւն, և՝ չարժում, և՝ գլուխով, և՝ կանք։ իսկ դո՞ւք, ա՛, զուք աչերուն էք խնարկէ. զուք միայն պիտի պահանջէք. ու այդ բանակալի կողիտ պահանջին անունը զրեր էք կանացիութեան գագաթնակէտ, կնոջ մը ամենամեծ առաքինութիւնը. ինչպես չէ։

Մինչև հիմակուան խօսակցութիւնը երկուքի համար ալ մասնաւոր նորութիւն մը չունէր. այդ ուղղութեամբ չատախօս էր մէկերին խօսքը անցած. միայն խօսքի այս վերջին դարձուածքը նո՛ր էր բոլորովին, նոր նոյն իսկ իրեն ալ՝ որուն չդիտէր, թէ այդ ի՞նչպէս իր սրտին դուրս խուժեց։ Իսկ Օհաննէս բոլորովին չըսարած, լայն բացած աչքերով կը նայէր անոր։

— Մի՛ չո, մի՛ չո մենք ամէն զոհողութիւն. անգամ մը վարժըւիր էք պահանջկոտ. մինչ ինքներդ ամենաչնչին զրկանք մը անգամ չանձն առնել չէք ուզեր։ Ինչո՞ւ, ինչո՞ւ անպատճառ մենք։ Ո՛չ։

Այլ ևս մօրաքրոջը մարզուն հետ չէր, որ կը խօսէր Մինէ, այլ ինքն իրեն հետ. երկու օրէ իվեր չարունակ իր գլխուն մէջ դարձող հարցերուն ու վարանման պատասխանն էր, որ տալ կ՚ուզէր. պատասխանը Հրանտի առաջարկին, որ իր բոլոր ճիգերուն հակառակ ո՛չ մոռնալ անդին նետել կրնար, ո՛չ վճռել ու համակերպիլ։

— Մինէ՛, այսօր քիչ մը չափէն աւելի տարօրինակ ես.— պատասխանեց վերջապէս Օհաննէս։ — Ի՞նչ դերութիւն, ի՞նչ կապանք. զրքերէ առնուած, միակողմանի, թերևսմիտ բաներ են ատոնք, խակ ուղղէ փչած բաներ։ Արդէն քանի մը անգամ ըսեր եմ՝ քեզի խօսքով համոզելը դժուար է. կեա՛նքը պիտի համոզէ քեզի. ու այն ատեն ինքզ պիտի տեսնես, որ բոլոր բաներդ օդէ խօսքեր են լոկ։ Իսկ ես մեր իրական աշխարհի մասին կը խօսիմ. անոնէ դուրս խելքըս չատ հեռուն չի կրնար։ Ինչ և է. ո՛չ չդիտեմ ալ ճիշդ ժամանակն է. նորէն չփախցընեմ։ Ըսածներուս վրայ մտածէ՛, կարելի է քիչ մը գոնէ համոզուիս։

Ու ժամացոյցը գրպանը կոխելով՝ ոտքի ելաւ։ Մինէ պահ մը քարացած կեցեր էր սենեակին մէջտեղը, մէկ ձեռքով միւսի արմունկը գրկած ու միւս ձեռքը դէմքին. մինչ հայեացքը գամուեր էր գետին՝ գորգի չքնաղ նկարներէն մէկուն ճիշդ կեդրոնը։

Յանկարծ նետուեցաւ դուրս, կանչեց չտապ Աբրաքսին, նամեցուց սեղանին առջևը ու վերսկսաւ անդադար աճապարանքով դերը սերտելու։

Բայց հազիւ էր քանի մը նախադասութիւն արտասաներ, որ կանգ առաւ պատուհանին տակ ու աչքերը երկնքի մաքուր կապոյտին մէջ սուզած՝ առանց նկատելու կարծ դերին թելը։

Յուշարարուհին օգնեց. կրկնեց անգամ մըն ալ. ապահոց քիչ մը. բայց Մինէ կանգնած էր անշարժ, պատուհանին յետ, կռնակը աղջկան, անձայն անդադար։

— Է՛, չըսե՞ս.— բղաւեց Աբրաքսի համբերութենէ ելած։

Մինէ քանէն բանի արթընցողի մը ընդոստ չարժումովը դարձաւ ետ, նայեցաւ չուրջը, աղջկան ու կտրած մոլորուն ձայնով մը հծծեց.

— Գնա՛, Աբրաքսի, գնա՛. ալ հերիք է այսօր։

Աղջիկը կէս-ապշած, կէս-ուրախ հեռացաւ։

Իսկ Մինէ գլուխը կախած կրծքին, ձեռքերը մէջքին կապած, անվերջ կը դառնար փոքրիկ սենեակին չուրջը. իր բոլոր մտածումներն ալ գաղափարի մը չուրջը։

«Ինչո՞ւ, ինչո՞ւ անպատճառ մենք...»։

Ը

Հիւո՜ւն, դիմա՜ց, ծովուն մէջ խրուած ցամաքի խաչոր կտոր մը, որուն վրայ Սուամբուլը մինարէներու սուսար տրցակ մը վեր կը ցցէ նիզակներու խուրձի մը պէս։ Եւ ատոնց ետէն ուելի հեռուն ժպգոյն ալտերը յագնած արեւին, որ ալ չի պաշպաներ իր միւսլիմանի դէմքը նայող աչքերէն. սիրուն թուրքուհիներէն սարսուած, երեւի՛, որոնք նոյնպէս իրիկուան դէմ այնքան խիստ չեն իրենց նամհրամը պահելու, մանաւանդ մենաւոր փողոցի մը անկիւնը պարտէզի մը վանդակին եռանէն, երբ երիտասարդ կեաւուրի մը մոլար աչքերը դուրսէն իրենց կը յառին։

Ձիւղ այնպէս, ինչպէս Հրանտի աչքերն էր հիմա յառած մինարէներու ցիցերուն եռանէն նազ ընող արեւին։

Մոտակի բարձր ծովափին, ուր ցամաքը սեպ վար կ'իջնէ ջրերուն գիրկը, եզերքէն քայլ մը միայն հեռու, սրճարանի աթոռներէն մէկուն վրայ նստած էր ազան անհանգիստ. թեւը յենած քովի սեղանին, բռնած գաւազանին կոթը շրթունքներուն ու ոտքը նետած ոտքին վրայ, որը անհամբեր կ'ևրեւրցներ։

Մինչեն առտուն երկտող մըն էր ստացեր, որ հա՛ս այս ժամին իրար հանդիպելու ժամադիր էր եղած։ Ու հիմա անոր կ'ըսպասէր։

Կ'ըսպասէր ու կ'ըմդգար, որ՝ այս իրիկուն վճռական բան մը պատահելու էր արդէն։ Վերջին երկու օրը գրեթէ ամեն ժամ յանացեր էր Մինէի դարձին. չա՛տ ազէկ կը հասկընար, որ աղջիկը իր վերջին խօսքը դեռ չէր ըսած։

Եւ՛, դեմինը ցանուած խիճերուն վրայ լսուղ ամեն ոտնաձայն տղուն գլուխը եռ նայելու կ'ըստիպէր։ Երբ այդպէս անգամ մըն ալ եռ դարձաւ, գիտց որ սիրտը բոլոր ուժովը սկսմըսեցաւ։

Մինէ դեռ հեռուէն սկզոնները չուրջը հայեցաք մը նետելով նչմարած էր երիտասարդը և աթոռներուն մէջէն դէպի ան կ'ընտապէր։

Մութ-կանանչ ու բծաւոր չրջագեստ մը հագած էր, մօտեւո-

քապէս նոյն գոյնի հալանոցը անուէին տակ. գլուխն ալ՝ ճերմակ պերճա մը գանգուրներուն վրայ ճմրթած։

Սովորական ժպիտը չթողուցքին մօտ եկաւ. միայն դէմքը շատ ժժգունած թուեցաւ ատոնց։

Հրանտ առանց տեղէն երկրելու՝ ձեռքը մեկնեց ընտանեբար։

— Տե՛ս, այսօր ալ գոն ուշացար։ Նստէ՛.

Ու դէմի աթոռը մատնանիշ ըրաւ։

— Չէ՛. ուրիշ տղեկ է երթանք չըջելու.— պատասխանեց Մինէ՝ մօտակայ սեղանին չուրջը շարուած խումբին վրայ դժգոհ ակնարկ մը ձգելով։

Տգան առանց այլևայլութեան կանչեց մանչը, վճարեց ու ա-թոռներուն մէջէն դուրս եկան միասին։

— Ի՞նչ էիր թազաւեր նորէն մտածումներուդ մէջ.— խօսք ա-ռաւ Մինէ։— Երեի, նորէն մեծ ուղեղին թևերը կամ...։

— Ո՛չ. այս անգամ բանաստեղծներուն ուրիշ սիրելի օրկանի մը թևերուն վրայ կը խորհէի։

— Այսի՞նքն։

— Այսինքն սրտի մը. ան ալ սրոչ սրտի մը. քո՛ւ սրտիդ։ Քու անչնորհ, քու տնպիատն, քու չար սրտիդ։

— Այդ ի՞նչ քնքուշ անուններ ունիս եղեր քու ուղեղիդ թևե-րուն մէջ իմ սրտիս թևերուն համար։ Եւ ի՞նչ կը մտածէիր, տես-նե՛նք, այդ անպէտք սրտի մասին։

— Կը մտածէի որ... իզուր տեղը բնութիւնը այդպէս սիրուն պատեանի մը մէջ է դրեր այդ տասիճանի անչնորհք սիրտ մը։

Ու ձեռքի հարուածի չարժումով մը ապչկան լանջը մատնանիշ ըրաւ քովնտիս։

— Գուցէ իրաւունք ունիս. բնութիւնը այդ կարգի սխալներ երբեմն կը գործէ։ Ա՛յ, օրինակ, քու այդ ընդարձակ գանգիդ տակ մի քիչ աւելի օգտակար ու գործնական ուղեղ մը չէր կրնար գտնուիլ։

Հրանտ խնդաց։

— Ոչի՛նչ. այսօրուան մեր փոխադարձ հաճոյախօսութիւնները իրաւ որ պէտք եղածէն աւելի չաղոքարդիչ են։

— Կարելի է քու ըսածդ հաճոյախօսութիւն էր, չգիտե՛մ. բայց գոնէ ե՛ս լուրջ կը խօսիմ։ Բանի՞ տասկ արժէ այդ քու զարգացած գլուխդ, երբ տակէ խեր մը, ուրախութիւն մը չկայ ո՛չ քուկիններուդ, ոչ քեզի սիրողներուն, ո՛չ ալ վերջապէս քու ժողովուրդիդ։

Ջսպըռած ժպիտով մը ու կծկած թարթիչներով տգան չէր ա՛ռներ կը նայէր. և Մինէ կարծես աւելի զրգռուելուս.

— Ի՞նչ քիմդ-բերանդ կը ծըռմըռես. սո՞ւտ է ըսածս։ Առանց ատոր ալ կարծես չատ մարդիկ կան մեր հասարակութեան մէջ լանի մը պէտք եկող. և ան՝ քեզի պէս քիչ-չատ պատրաստուած ուժերու

ալ կը ձգեն կ'երթան ուրիշ ժողովուրդներու համար աշխատելու. կարծես Գերմանիան քեզի չուտ կարօտ է մնացեր. քեզիպէսները լեցուն են հոն. քու ընկերդ համեմատաբար հոն ոչինչ է, իսկ հայ հասարակութեան մէջ անոգին դեր կրնաս խաղալ դուն:

Թէև այս բոլորը ազգկան սովորական խօսելու ու գաւեզը եղանակին չէր նմաններ, բայց և այնպէս Հրանտի համար մեծ անակնկալ մը չեղաւ: Մտանուր արտահայտութեան մը կարիք չկար գուշակելու համար, որ այդ ազգասիրական արշաւանքը ինքնին երկրորդական խնդիր էր ու միայն ճամբայ կը բանար հաւէն գալիքին. նոր նըւագի մը նախերգը:

Բայց և այնպէս Հրանտ լռել չկրցաւ, և լուրջ չեչտով մը պատասխանեց.

— Ինծի ալ անչուշտ համոզուած ես, սիրելի՛ս, որ ատոնք թէև հնչուն, բայց անտեղի գաւազութիւններ են միայն: Ես մեր հասարակութեան համար մտանուր օգուտ մը չունիմ, չիտակ է. սակայն հոս ո՛չ առաւելութիւն կայ, ո՛չ պակասութիւն. եթէ հասարակութեան անունով ինծի մեզադրելու ես ելեր, պէտք չէ մոռնաս, որ այդ հասարակութիւնը չի կրնար իմ ուժերս ու ընդունակութիւններս գործադրել. ամէն մարդ ամէն բանի պիտանի չէ. ինծի հեռաքրքրացնողը, ինծի զբաղեցնողը իմ մասնագիտութիւնս է. հո՛ս է, որ ես ուժ մըն եմ, ուր ես որևէ գործ տեսնել կրնամ. իսկ մեր ազգը ո՛չ կարողութիւն, ո՛չ ալ կարիք ունի իմ բնախօսութենէն օգտըւելու. գեռ չատ ուշի տարրական պահանջներ կան հոս պակաս:

— Իմ բառս ալ ճիշդ ատ էր. ա՛յդ կարգի գիտական գործի մը ձեռնարկէ. ինչո՞ւ անպատճառ բնախօսութիւն. ի՞նչ նեղ մասնմունք է ատիկա:

— Զգիտես ինչ կը խօսիս, Մինէ՛:

Ու լռեց. լռեց ազջիկն ալ խժռուած:

Ճամբան նեղցաւ. մէկ կողմը ընդարձակ պարտէզի մը հինկակ պատն էր. միւս կողմը ծովու բարձր ժայռոտ եզերքը, ուր մէկ-երկու փայտէ ձողով վանդակ էր չինուած վառնդի ոտքևը առնելու համար: Եւ այդպէս պատի ու ծովու դատարկութեան մէջ սեղմըւած ճամբան հոս ոտոր կուտար՝ գլուխը չուրին մէջ երկընցուցած հրուանդանի մը երիզը կազմելով:

— Ուրեմն մասնագիտութիւնդ այդ աստիճան կը սիրե՞ս:— հարցուց յանկարծ Մինէ՝ կանգ առնելով ծովուն դէմ ու բռնեց վանդակի կիսափուտ փայտէն:

— Ինչ հարցընելու բան է՝ առանց իմ աչխատանքին ի՞նչ խորհուրդ ունի կեանքս:

— Եւ ո՛չ մէկ ուրիշ աչխատութեան հետ չե՛ս փոխեր:

— Փոխե՞լ. չապիկ չէ՛, հոգիս: Տարեկոյս ուսուցիչութիւ՛ն, կեդրոնացո՛ւմ, սգևորութիւն. ի՞նչպէս թէ փոխեմ, և ինչո՞ւ:

— Ուրեմն և ո՛չ մէկ պայմանով։

Հրանտ միայն քննող աչքերով նայեցաւ անոր։

Աւելի չկար այլևս. հրդեհ մը կար միայն ասկի բոցերով վա՛րը ամպերուն մէջ. հրդեհ մըն ալ վա՛րը, խո՛ր, ծովու յատակին վրայ։

Իրենց բարձունքէն աչքերը ծովու այդ հնոցին յառած՝ Մինէ անշարժ մնաց ակընթարթ մը։

Իր բոլոր մտքերը մէկ հարցի մը վրդին էր գալարած հիմա. լարուած, կծկըռած հարցի մը, որ սաստիկ լարումէն յանկարծ փրթող զսպանակի մը պէս իր պատանդէն դուրս ցատկեց.

— Ո՞չ ալ իմ երջանկութեանս համար, ի՛մ աւ քո՛ւս։

Աղջկայ դէմքն ալ հրդեհ կար. վարդէ բոցեր կ՚այրէին հոն վառ կը վառէին և աչքերը։

Հրանտ աւելի մօտեցաւ, ափը կամաց մը դրաւ Մինէի ցողը բռնած ձեռքին վրայ և յուզումէն դողացող ձայնով մը կցնց.

— Մինէ՛, պարզ խօսէ՛ սեսնեմ, ի՞նչ կ՚ուզես ինծմէ։

Աղջիկը սիրտ առաւ, ամբողջ դէմքովը դարձաւ ալեւն ու ապաշող չեչտով մը վրայ առաւ.

— Հաւատա՛ ինծի, Հրանտ, դիտաւորութիւնը դիտաւորութիւն է վերջապէս իր բոլոր ճիւղերուն մէջ և ամեն աչխատանք ալ՝ աչխատանք. այս ձեռով չեզաւ՝ ոտք ըլայ միւս ձեւի տակ. այդ փոքրիկ գործը դուն կրնաս թերել ինծի. սաիկա դեռ գոհ ալ չէ. կովկաս դուն կրնաս լուրջ գործ գտնել, դիրք ալ, գիր ալ։ Եւ փոխարէնը պահանջէ ինծմէ ինչ որ կ՚ուզես. ամեն գոհ պատրաստ եմ ես քեզի. միայն մի՛ հեռացընար ինծի իմ թեմէս, ձեռք մի տար արուեստիս. այդ անկարելի է։

— Դիտէի. և ճիշդ սաոր համար ալ այս բոլոր խօսակցութիւնը աւելորդ է։ Արդէն սա էր պատճառը, որ ես մինչև վերջը ամեն կերպ աչխատեցայ փեզի հետ այդ մասին խօսք բանալէ խուսափելու. նաւակին մէջ իմ վարմունքս ազատամտութիւն էր։ Քեզմէն ու քուզին կէս-լուրջ, կէս-կատակ. սակէ անդին անցնելու չէինք իմ յիմարութիւնս։ Լսէ՛, Մինէ՛, մեր մէջ եղած կապին արգելքը ո՛չ իմ սրտաոտնման ապրելու անհրաժեչտութիւնն է, ո՛չ ալ քու հոս կամ կովկաս կապուած ըլլալդ. այդ սրտաքին դժուարութիւնները սրեւէ կերպ հաթելը անհնարին չէր։

— Ուրեմն...— բացականչեց աղջիկը յոյս առած։

— Միակ իսկական արգելքը քու դերասանուհի մը ըլլալդ է. դերասանուհի մը չեմ կրնար կեանքիս ընկերը ընել։ սաիկա իմ վարկութենէս վեր է։

— Ա՜խ, ուրեմն դո՞ւն ալ. նոյն իսկ դո՞ւն.— պոռաց աղջիկը թևերն ու աչքերը բանալով։

Բայց իսկոյն թուլցած, դառն չեչտով մը աւելցուց.

— Խմարիկ՛, անպատիւ, ինկած, ատրին արատած մը հետ. դեռատահուհի՛...

— Է՜, Մինէ՛ս, գոնէ այս վայրկեանին գերատահութիւն մի ըներ։ Դուն չատ ալեկոծ գիտես իմ քիր ու զէմ հայհոյգքներս քո՛ւ ալ, քու գեղարուեստիդ մասին ալ. ուրացմն պարապ խօսքերը մէկդի։ Սակայն ինչքան ալ որ այդ ամենը գնահատել կարողանամ, ինքս անձամբ չեմ կրնար գերատահուհիի հետ կապուիլ։

— Այո՛. գո՛ւա, զուտ ասիական գաղափարներ. հիմա կը հասկըցամ։ Բայց ատոր համար այսքան ատրիներ եւրոպա թափառելու բնաւ պէտք չունէիր։

— Անուանէ ինպէս որ կ'ուզես. բայց ես չեմ կրնար անոնել քեզի բեմին վրայ ամենքի դիտակիներուն առկ եւ քուլիսներուն ետեւը չարաճակ այդ գերատաներու ու «յարգոյ» պարոններու չրջանակին մէջ, որոնց մասին եմէ չատ խեղճական գաղափար մը չունիմ, անշուշտ ինծի չես մեղադրեր։ Դուրդ ծիծաղելի է այս խանդոտութիւնս. գուրդ նոյն իսկ ասիական, ինչպէս կ'ըսես, ու կիրթ զգացամունք. գուրդ նոյն իսկ ասիական, ինչպէս կ'ըսես, ու կիրթ զգացամունք չունիր վայելիր. չդիտեմ. այդ բոլորը ես ալ իմ խորհած, բայց խորհելէն ոչինչ չելլեր, ժառանգական բնազդներու է փոխնչուած։

Մինէ չատած հայհոյգքով կը նայէր վար ժայռերու խումբի մը մէջ, ուր երկու գլխատաց փոքրիկներ մինչեւ ազդրերը հագուստներն վեր ժողուած՝ մաներ էին չաբերն մէջ ու բաներ մը կը փնտռէին։ Մինէ անոնց կը նայէր անհամբեր առանց ոչինչ տեսնելու։

Հրանտ չարաճակից.

— Եւ վերջապէս քանի բեմի վրայ ես քու ուշագրաւմեանդ, անձնեւրուզ ու զգացումնիրուզ մնծագոյն մասը հոն է ու հո՛ն պիտի ըլլայ։ իսկ ես, ո՛չ, չեմ կրնար բաւականանալ սրտի մը ճռացորդ բնկերներովը ու կրքերու կիսատ թափթփուկովը. իմ կազմս այդպէս է անգամ մը, իմ էութի՛ւնս։ Եւ ճի՛շդ այդ կէսով ու փիչով չբաւականանալս է պատճառը, որ ես մինչեւ հիմա ապրիր եմ միայնակ։ կը հասկընա՞ս դուն ինչ ըսել է խոշոր քաղաքի մը անկիւնը կոճղի մը պէս մնալդ։ Եւ հիմա, երբ սիրտս յորդ, երջանկութեան երազներով քու գիրկդ կը վազեմ, անո՛ր դուն կու գաս ու այդ գերատահուհիութիւնդ քու գիրկդ կը վազեմ, անո՛ր դուն կու գաս ու այդ գերատահուհիութիւնդ խրտւիլակը թևերուս մէջ կը նետես։ Եւ կ'ըսես թէ ինծի կը սիրես. սիրե՛լ. այդպէ՞ս կը սիրէ կինը։ Է՜, մինչեւ հիմա ես ալ կը կարծէի, որ անատրակոյս բանես պիտի պարգած ձեւքս. Ի՞նչ լուրջ վարանում կրնայ գոյութիւն ունենալ սիրող կնոջ մը համար իր սիրած ազգն ու արուեստի մը մէջ։ Բայց չիմա... հիմա ալ պարզ է ինծի. քու սէր ըսածդ զգացումնիրու խաղ մըն է միայն, ժամանց մը գուցէ. դուն չես կրնար սիրել. յափշտակուելու եւ ձօնուելու կանացութիւնը նրւազկր, մարեր է սրտիդ մէջ՝ ուժ ու պիտացկաւորութիւն տալու համար քու արուեստի

ձգտումներուդ. կինը հալեր է քու մէջդ ու այդ հալուածքէն ձուլուելը է զերասանուհին...

— Ա՜հ, ի՜նչ անգութ ես.— լսուեցաւ ապչկան չշուկը իր սեղմած ծնօտներուն մէջէն:

Հրանտ ակամայ կտրեց խօսքին թելը ու չնչառութիւնը ճնշուեցաւ: Առանց դէմքը ծռվէն դարձընելու, բոլոր մկանները կծկած անշարժ կեցաւ:

Երկընքի բոցերը հանդեր էին արդէն. ու գորշացած ամպերը վերը մոխրակոյտ մըն էր հիմա, նախորդ հրդեհին մնացորդը. մոխրակոյտ մըն ալ վարը ծովուն խորքը:

Մինէ, որ նոյնպէս անշարժ կեցած էր՝ իր ներքին փոթորիկը սեղմած ակռաներուն տակ զսպել ջանալով, յանկարծ ձեւացաւ ժպտելուց փիշերը ու անդոռ հոգեվարով կ'ուզէր հեռանայ:

— Ո՞ւր:

Ու ապտն ոսոխոմով մը հասաւ բռնել պինդ անոր թեւէն:

— Ձգէ՛ ինծի, Թոզ.— չշնչեց ապչկիը թեը ազատել փորձելով:

— Վշտացա՞ր, Մինէ՛. ի՞նչ ըսի որ. ներէ՛, հաւատա՛, որ սրտիս ցաւէն է միայն: Ներէ՛, Մինէ՛, մի՛ երթար. ալ չեմ խօսիր, ալ չեմ վշտացըներ:

Ապչկան պրկըւած թեը Թուլցաւ. թեք ինկաւ թեթև մը պահին, կախեց գլուխը, հայեացքր գամեց գետին. վերջը քիչ մը բարձրացուց նորէն ու ըսաւ անչէզ ձայնով մը, կարծես, երազի մէջ ինքնիրենը խօսելով.

— Իրաւունք ունիս, բոլորովին իրաւունք ունիս. այր-մարդիկդ արդէն միշտ իրաւունք ունիք. գո՛ն ալ, եղբայրդ ալ. գոնը մնաք պահ տանք, միա՛յն մնանք. ալ կը վախնամ ես քեզմէ. դուն խելքէ հանես պիտի ինծի. ա՛խ, դուք ոչի՛նչ, ոչի՛նչ խնայել չգիտէք, ոչինչ հասկընալ չէք ուզեր:

— Անգի՛նս, Թո՛զ պարապ խօսքերը մէկդի. ի՞նչ գոհ. սէրը փոխադարձ նուէր մըն է միայն. և ամենաթանկագին նըւէրը, որ մարդ կրնայ ընել. ինքզինքը, իր անբծյած երջանկութիւնը, իր սրտին թըփրտուքը: Ա՛ռ, Մինէ, առ այդ բոլորը քեզի, քեզի ընդմիշտ ու եղիր խմա:

Ու անոր միւս ձեռքն ալ խլելով՝ սկսաւ բոլոր ուժովը սեղմել:

Հովանոցը վար սահեցաւ Մինէի անուէրին տակէն: Թեւերը յանձնած ապտն, աչքերը ապտ բոցոտ ու տենչոտ հայեացքին մէջ մոգնեցած՝ Մինէ կը գողար ու կը ժպտէր իր կամքին հակառակ, տնտակ մը վերացած ժպիտով: Ու իր խառնակ՝ իր ալ դժուար խլրտող մտածումներուն մէջէն միայն մէկը դեռ որոշ կը պիտակեր.

«Պէտք է փախչիլ»:

«Փախչի՛լ, փախչի՛լ»· կը կրկնէր դեռ ան իր մտքին մէջ անընդ-

հաս, երբ Հրանտ ազջիկը կրծքին քաշած ու պինդ փարած անոր մարմնին, անձրևի պես համբոյր կը տեղար այտին ու շրմունքներուն։

— Դուն իմս ես, Մինէ՛, իմս. ալ չեմ թողներ քեզի Թևերուս մէջէն.— կը փսփսար իր տաք չունչովը անոր դէմքին։

Աղջիկը յանկարծ սկսաւ հեծկլտալ։

Ու Հրանտ անմիջապէս ազատ ձգեց իր գրկէն. գունատ ու խճբճուած կանգ առաւ դէմը, Թևերը անոր պարզած, առանց ինչ ըսելը գիտնալու։

— Մինէ՛...— հնչեց վերջապէս իր վախցած, ազաչող ու չուար ձայնը։

Ու Մինէ արագ, վճռական չարժումով մը սրբեց աչքերը ձեռքով։

— Լսէ՛, Հրանտ, ես քու սիրուդ արժանի չեմ. ձգէ՛ հեռանամ։ Համոզուէ՛, որ ես չունիմ քու սպասած քաղաքիւնը՝ այսքան ժամանակ փայփայած ձգտումներս, ոգևորութիւնս անյողդողդ ձեռքով մէկդի նետելու. և սակայն վատութիւն, դաւ կ'ըլլար վերջապէս ինքս ինձի՛, իմ անուրջներուս դէմ։ Ո՛չ։ Ձգէ՛ հեռանամ, պէտք ունիմ առանձին ամփոփուելու. դուն իմ մտածելու հիմքերս անդամ տակն ու վրայ պիտի ընես. ձգէ՛, ձգէ՛...

— Ո՞ւր սակայն. և արդէն մութ է, դոնէ՛...

— Կ'ապաչեմ, թո՛ղ, եթէ կաթիլ մը յարգանք ունիս դէպի ինծի։

Տգեղ քարի պէս մնաց պատին տակ. ու խելառ արտայայտութեամբ կը նայէր աղջկան հեռուն, որ երկու ձեռքով կրծքին սեղմած գետնէն վերցուցած հովանոցը՝ արագ կը հեռանար. ու չուտով ալ անհետացաւ եղաւ պատին կորութեանը հետ։

Մութը արդէն իր մանուածքը փաթթելու էր սկսեր պատէն վար կախուած թզենիի մը լայնատերև ճիւղերուն մէջ։ Որոնց տակը կեցած էր հիմա Հրանտ՝ ամբողջ թիկունքովը պատին կրթնած. ո՛չ չարժում մը, ո՛չ ձպտուն. զգացումները քնկուն ու խառնակ, մտածումները ցրիւ ու անորոշ։

Ծերուկ մը իր գաւազանին յեց՝ ծանր քայլերով եկաւ անցաւ անոր առջևէն անընդհատ հազալով. ու հեռացաւ։

Ծառէն կախուած մութին թևերը խտացան, խճճուեցան ու հալեցին իրենց մէջ տգեղ մարմնին գծերը։

Ու ծանր էր միայն վարձէն, որ Թանձրացող խաւարի խորհրդաւորութեան մէջ կու գար իր կիսաճայն արտունչները մտայլ ժայռերու ձերակոյտին տակը գնելու։

Ե

— Մինէ՛։

Ու որքեւայրին՝ ալ անհամբեր՝ առնդուզնէրէն չտապից վեր, նո՛ր հրից Մինէի սենեակին դուռը.

— Աղջի՛կ, խուլցո՞ր ես. ժամ մըն է քեզի կը կանչեմ վարէն։

Մինէ յոգնած չարժումով մը կուրծքը բարձրացուց քիչ մը բազմոցին վրայէն. և ալ արմուկին կրթընելով՝ հարցական դէմքով մը դարձաւ դէպի դուռը։

— Ի՞նչ ես փռուեր նորէն քիթիդ-բերնիդ. առ ալ նոր մոռա հանեցիր։ Քալէ՛ չուտ վա՛ր. նայէ՛ ալ է ևկեր. պիտի ուրախանաս։

— Ո՞վ.— պոռաց աղջիկը վախի ու յուզման բացականչութիւնով մը։ Ու մէկ ոստումով ցատկեց տաքի՝ զոյգ ձեռքով ձախ սինքը սեղմած։

— Ինչո՞ւ վախցար. խե՛նթ է այս աղջիկը։ Պարոն Գրիգորիկն է. նամակ է բերեր քեզի։ Շուտ իջիր վար. ես գործ ունիմ ներսը։

— Ա՜խ.— ըրաւ աղջիկը խոր չունչ մը առնելով. կէ՛ս մը հանդարտած, կէ՛ս մը հիասթափ։

Եւ չիխակին մէկ-երկու քակած կոճակները կոճկելով՝ առնդուզներէն վար իջաւ։

— Ա՛, բարև ձեզի, աղնիւ օրիորդ, երեւի խանգարեցի. կը ներէք։

— Ամենևին.— պատասխանեց աղջիկը անտարբեր։

— Է՛, մի՛ ծածկէք, օրիո՛րդ, ձեր գժգոհութիւնը։ Չէ՞ որ ես ինքս անձնական փարձառութեամբս գիտեմ. մուսաներու այցելած պահուն մահկանացուներու այցը աւելի քան անտանելի է։ Ես պիտի այդ թանկագին վայրկեանները գնահատել. ուզեցի ձեր նամակը թողնել ու հեռանալ, բայց բոլոր չանքերս ապարդիւն անցան ձեր տիկին մօրաքոյրը համոզելու, որ ձեր զբաղումը չվրդովէ։ Ահա՛ ես ալ նամակիդ։ Պահիկորաքոյն է։

Ու ծոցի գրպանի դէպ մը թուղթերուն մէջէն փոքրիկ նամակ մը հանելով՝ ներկայացուց անոր։

— կը ներէ՛ք.— ըրաւ Մինէ ծրարը պառակելով։

— խնդրե՛մ։ խնդրե՛մ։

Ընթերցումը երկար չտեւեց։

Մինէ նամակը ծալլեց նորէն, անցուց ծրարին մէջ ու նետեց կից անպանին վրայ։

— Ըստ երեւոյթին դժգոհ ձեռքիդ··· նկատեց ոգին։

— Ո՛չ. ընկերուհի՛ մըն է··· պատասխանեց ազգիկը անփոյթ դէմքն ու ուսերը ցընցելով։

— Յամենայն դէպս չէր արժեր երեւի, որ ձեր աշխատանքը ընդհատէիք։

— Իմ աշխատա՛նքս··· հեգնեց Մինէ։

— Եթէ գիտնաք, օրիո՛րդ, ո՞րչափ կը հետաքրքրըւիմ այդ մասին. կարելի՞ է հարց մը տալ. քանի օր է ձեզի տեւողութիւն բաղդը չեմ ունեցած. ինչո՞վ էք հիմա զբաղուած։

— Ինչո՞վ եմ զբաղուած։

Վայրկեան մը պիչ նայեցաւ սեղանին վրայ թնկած նամակին. և վերջը դառն երգիծանքով մը ասկցաւ·

— Նոր գի՛ր մը կը սպրվիմ։

— Նո՞ր. մինէ՞. ինչ գիր է տարիա և որո՞ւ երկը։

— Ա՛խ, հեգինակը երկրորդական է. իսկ խաղը ինքը բաւական արտառոց բան մը։ Երեւակայեցէ՛ք գերասանուհի մը, որ կը սիրահարի. կը սիրէ ճշմարի՛տ, ա՛յ թէ այնպէս միայն բեմին վրայ հանդիսականներու զուարճութեան համար, այլ կը սիրէ ի՛ր, իր անձնական՝ զգացումներուն յաղուրդ տալու համար։ Չիմարութիւն չէ՞։ Բայց գաւեչտը հոն է, որ միեւնոյն ժամանակ իր արուեստէն ալ չուզեր ձեռք վերցընել. իսկ տարիա կը պահանջէն իրմէն։

— Ըհը՛, կ'ըմբռնե՛մ. փառատ հայեցքներու ներկայացուցի՛չ մը իր սիրեկանը. վե՞րջը։

— Վե՞րջը. ալ կրնաք ձեզի պատկերացընել այն անվերջ երկասպրի, հակասական ու չլսուող զգացումները, որ կը յաջորդեն անվերջ իրարու, կը ճնշեն, տակն ու վրայ կ'ընեն կուրծքս։

— Ձե՞ր կուրծքը··· հարցուց երիտասարդը կէ՛ս զարմացած, կէ՛ս սրախօսելով։

— Այո՛. խաղի գլխաւոր գերը իմ վրաս է։ Մտածեցէ՛ք անգամ մը այդ բոլոր հիւանդոտ տեսարանները, այդ ներքին երկուռմիւնը, այդ չըսար ու պատակատ մտատանջումները, այդ ապուշ, վարան ու անհետեւանք տատանումը մէկ ա՛լ, մէկ ձա՛խ։ Բայց գուք ի՞նչ գիտէք այդ անտանելի չարչարանքը. մարդ կրնայ խելագարիլ, իսկ հոգը՝ ոչ-ո՛ք. ոչ-մէկը իր գիմացինի հոգին ըմբռնել չուզեր։ Վայրենի, ամարդի, անխիղճ բան է՝ ըռնել մէկը այսպէս ու չիտակ ժամերուն մէջը նետել. ժամերի՛, ժամերի՛···

Ու երկու ձեռքով դէմքը գոցած՝ չոր հեծկլտուքով մը քալի աթոռին վրայ թնկաւ։

— Օրիո՛րդ··· օրիո՛րդ Մինէ, ի՞նչ ունիք, ի՞նչ եղաւ ձեզի. կ'ուզէ՞ք, կանչեմ ձեր մօրաքոյրը·— կը կմկմար ազան թոյլտուիին չփոթ ու վախցած։

Մինէ յանկարծ ցնցըւեցաւ, ձեռքերը իջեցուց ու սկսաւ ամբողջ կրծքովը խնդալ. Ղազա, բռնապետսիկ, ուժտապաւ ծիծաղ մը.

— Մօրաքոյրս կանչելու պէտք չկայ, բարեկա՛մս. մինէ չէ՞ք տեսներ, որ դերս կը խաղամ. տեսարաններէն մէկէն կարը մըն է ասիկա. հիւանդոտ բան չէ՞։

— Բայց գիտէ՞ք, օրիորդ, դուք կրկընքի պարգեւած չնորհները չարաչար կը գործածէք.— եղաւ ազուշ կարկամ պատասխանը։

Մինէ բուռն չարժուձմով մը ոտքի թռաւ նորէն։

— Արգեօք չէի՞ք ցանկար փոքրիկ պատմուճան մը ընել հետս. ամբողջ օրը տունէն դուրս ելած չունիմ. սիրտս նեղ է տասիկ։

— Սակայն ամենայն սիրով, օրիո՛րդ, ձեր այդ առաջարկը ինծի համար պատիւ մըն է, փա՛ռք մը, երջանկութիւն մը։

— կը նեղի՛ք ուրեմն, որ քանի մը վայրկեան ձեզի առանձին ձգեմ ձեր երջանկութեան մէջ. քանի որ առանց գլխարկի ու դուրսի զգեստներս այդ պատիւն ու փառքը ձեզի չնորհել չեմ կրնար։

— Ա՛, ձեզի համար պատրաստ եմ սպասելու մինչև աշխարհս գոյութեան վերջը։

— Չէ՛. այդչափ չեմ ուզեր։

— Իսկ ես այդ միջոցին կ'աշխատիմ մտքիս մէջ որոնելու չերջակայքի ամենէն գեղեցիկ վայրը, ուր ձեզի առաջնորդելու արժանի գտնեմ։

— Ուշադիր իզուր անհանգիստ մի՛ ընէք. կ'երթանք դէպի Մոտա. այն կողմերը ես ուելի կը սիրեմ.— վճռեց աղջիկը կարուկ ու անհեակի սեմէն դնդրս սլացաւ։

Կէս ժամու չափ վերջը Մինէ ու Գրիգորիկ ծուռ ու մուռ փողոցներուն մէջէն դէպի Մոտայի ծովեզր կը դիմէին։

Աղջիկը իր լայն գլխարկին ու թանձր քօղին մէջ կորսըւած գրլուխը քիչ մը առաջ հակած՝ կը քալէր տղուն քովէն. տեսակ մը խիտ լուրջ։ Մինչ Գրիգորիկ գլուարթ ու գոհ, հիանալի տրամադրութեան մը մէջ՝ բոլորովին լեզու էր կորեր։

Փողոցին ծայրը ծովը երեւնալուն պէս՝ խօսքը ծովուն վրայ դարձաւ.

— Ծո՞վը. ա՛, այդ իմ մոլութիւնս է, օրի՛որդ։ Աւազափի խըճըճուտն խիճերուն մէջ ես կը սիրեմ ժամերով լուռ թափառիլ, աչքերս սեւեռած ծովի ծուռ ծալերուն, մինչ ալեակներուն չղոփարար ծուռը ականջներս կը գոչէ։ Զգիտե՛մ. կարծես մտքերս բարձրիկ կ'ըսկսին հո՛ս, բա՛ց առնել, բա՛ց ու թեւե՛ր. ու կը սաւառնին հեռո՛ւ ու բա՛րձր կեանքի չնչին հոգիներէն, տափակ իրականութեան ժանգոտ ու պաղ չղթաներէն, կը ցընդին օրուայ մանր հոչիները, գրասենեակին տաղտուկը ու տեսարկներուն թիւերը։ Վե՛ր, վե՛ր դէպի երեւակայութեան եթերէ գաւառները, ուր խեչալներն են, ուր գե-

պեցկութիւն է ու պօղոսին. դէպի այդ անտառ, տարտամ, խուսափուկ պատկերները, դէպի անրջանքներու օրօրուն, համայիլ ուխտերը ուր քնքուշ ու անուշ պատրանքներուն ոգինները կը չրջին հովիկի մը պէս թեթև, տաւների մը պէս աննիւթ: Հեռո՜ւ, հեռո՜ւ այս առօրեայ չար ու անհրապոյր բուսական կեանքէն: Է՛, երանի ձեզի, օրիո՛րդ, որ չարուճակ գեղարուեստի մէջ կ'ապրիք ու չարուճակ գեղարուեստի համար:

Մինչ ժպտերես՝ կոշնակի կարկկոտ հայեացք մը ձգեց իր ընկերակցին վրայ:

Ու ևան Մոտայի սրճարանին առջևը:

— Եկէ՛ք այս կողմ, երթա՛նք դէպի վեր.— ըսաւ ազջիկը անտարբեր հնչել ուզող ձայնով մը ու նախորդ օրուան Հրանտի հետ անցած ճամբան բռնեց:

Տգեղ խօսքի թափէն տարուած՝ առանց այլևայլութեան հետևեցաւ անոր:

— Եթէ գրանաք՝ ինչպէս կը նախանձիմ ձեզի. կը նախանձիմ ու կը հիանամ. ունիք գեղարուեստ մը, գեղարուեստներու թագուհին մարդկութեան ամենալրիւ պատկերացումը, մեր կեանքի հայելին. և ընդունակութիւններ, որ բնութիւնը իր ամենաչքնաղ վայրկեանին թափեր է ձեր վրայ. գերասանի մը կի՛րքը, ձի՛րքը...

— Թողէ՛ք խնդրեմ. ի՛նչ ձիրք, ի՛նչ բան. քիչ մը պատրանք, քիչ մը չիզնելու դրդռում ու քիչ մըն ալ իրական կեանքը վայելելու անընդունակութիւն. ուրիշ ոչինչ:

— Սակայն, օրիո՛րդ, ինչպէ՞ս կրնաք ձեր բազդը այդպէս արհամարել. և ինչպէս ձեր չնորհները գնահատել չգիտէք: Կ'ըմբռնեմ՝ առաւութեան յագեցում. իսկ և՛ս, որ բազդի երես առած գաւակը չեմ, կը պաշտեմ ձեզի, ձեր ընդունակութիւնները, ձեր տազանդը:

— Ա՛խ.— ըրաւ ազջիկը ձեռքի հառաչ ու ամգոհ չարժուժմամբ մը:

Եւ յանկարծ կէ՛ս հեգնոտ, կէ՛ս քոքեմ ուղղուց.

— Ինձի՞, թէ իմ տագա՞նդը:

Գրիգորիկ ժպտեցաւ. այլայլեցաւ թեթև մը, ձեռքերը դնելու տեղ մը ակաւ փընտռտալ անհանգիստ ու վերջապէս պատասխանեց:

— Այդ երկուքը անբաժան են, օրիո՛րդ:

Հասած էին ճիշդ այն կէտը, ուր առջի իրիկունը Հրանտի հետ էր կեցած: Մօտեցաւ եզերքի փայտին, հայեացք մը ձգեց չուրջը ու ակամայ թագուհեցաւ մառմանի մէջ:

— Քալեցէ՛ք, օրիո՛րդ. քիչ մը անդին ուղի սիրուն է ծովուն տեսքը:

— Հո՛ս ալ ագէկ է: Հա՛, բայց դուք իմ հարցիս պատասխան չտըւիք.— ըսաւ ազջիկը տեսակ մը սթափելով:

Ուժով մը ցընդեց ուսերը, կարծես, վրան խուժող մտածումները թափ տալ կ'ուզէր ու չարուճակեց.

— Կեցէ՛ք, ես ձեզի օգնեմ։ Կը յիշէ՞ք դեռ քիչ մը առաջ մեր առնը ձեզի պատմած նոր դէպս. հիմա ենթադրենք, թէ իմ սիրահարիս դէրն ալ ձեր վրան է. և դուք դիտէք, որ ես ինկած եմ ձեր սրտին ու արեւուտիս մէջտեղը վարան, և որ ձեզմէ է կախուած զոհել ձեր զգացումները իմ ապագան ազատելու համար, կամ չարցընել իմ արեւուտս ինձի ուննալու համար. ո՞րը կ'ընտրէք։

Տգոն գլուխը կախեց։

Ջրաւ լարուածով մը սկսաւ դաւազանին ծայրովը մէկը միւսի հետէն անդին ցտակեցընել փարի փոքրիկ կտորները ճամբուն վրայէն, որոնք վայրկեան մը օդին մէջ կիսաշրջան մը կը գծէին արագ, ու պզտիկ ճաղիւնով մը կը ճանկէին ծովուն անխորշամ երեսը։

— Նո՞ւ. ո՞րը կ'ընտրէիք։

Դրիգորիկ վճռաբար բարձրացուց գլխիկը, ցոլան աչքերը գամեց ապլկան ու հանդիսաւոր, ոգեւորուած, վանեմ չեչառվ մը ըսաւ.

— Ես... ես կ'ազատեմ ձեր արեւուտը։

— Վա՞յ. ուրեմն ինձի՛, իմ կանոցիութիւնս, իմ իրական ըզգայուններս կը նետէք անդին իրեւ չնչին բան մը. այսինքն ինչ որ ես իսկապէս եմ։

— Մի՛ մոռնաք, խնդրեմ, ձեր պայմանը։ Միայն ձեր տագանդը փրկելու համար։ Այո՛. ևթէ խելապարի պէս ալ սիրահարած ըլլամ, հաւատացէք ինձի, իմ երջանկութիւնս ալ, իմ կեանքս ալ, բոլորը պատրաստ եմ զոհ բերելու։ Կ', ինչ արժէ իմ յուզումն ու երջանկութիւնը. մինչդեռ իմ զոհս ձեզի աւելի կը բարձրացընէ, կը դառնայ խթան մը աւելի վեր սաւառնելու։ Եւ ինչ աւելի վսեմ ու մարքար քան այն գիտակցութիւնը, թէ զոհեր ես ինքզինքդ բարձրացընելու համար սիրած էակդ դէպի մարդկային ուժերու գերազոյն արտայայտութիւնները, դէպի աստուածութիւնը։

Մինչ խանդագատանքի ջերմ արտայայտութեամբ մը ազու հայեցքին մէջ սուզուեցաւ. վերջը ակնթարթ մը զոցեց աչքերը. բացաւ, կարեկցօրէն նայեցաւ անոր ու յանկարծ անսակ մը բարկացած չեչառվ վրայ տուաւ.

— Դեռ ազայ էք դուք ու պատանեկան անոս զգացումներն են, որ ձեր չրմունքներովը կը խօսին։ Մէկ-երկու տարիէն կը գառնաք այր. այն ատեն ձեր բերնովը ձեր իսկական նը պիտի խօսի. այն ատեն, կոպիտ, անզութ, անխնայ նը։ Այն ատեն, բարեկա՛մս, ալ չկարծեմ, որ սրտերնիդ զոհել յանձն առնէք ձեր սիրած ազջիկը աւետաբերման մօտեցընելու համար, ինչպէս որ կ'ըսէք։ Ձեր ամլագէ մտածման եղանակը քիչ մը աւելի գործնական կը գառնայ։ «Ի՞նչ օգուտ ինձի— մտածէք պիտի— անոր աստուածութեան մօտենալէն. մինչ աւելի խելացի չէ՞ փոխանակ աստուածութեան՝ ինձի մօտեցընեմ. վերջապէս աստուած մըն ալ ես ինքս...»

— Սակայն, օրիո՛րդ…

— Այո՛, այո՛. և չատ չուշանար. կը սեանէ՛ք։

— Ո՞վ այդպէս անզգայ ու ամբարտաւան ըլլալ կրնայ, օրիո՛րդ։

— Ո՞վ…

Ու լսեց։ Անշա՛րժ աչքերը անթարթ յառած պատի այն կաւրին, որուն կից նախորդ իրիկունը այս սանն Հրանտի սմուռ թևերուն մէջն էր ինկած անոր կիզիչ ու անյագ համբոյրներուն սակ։

Շաբլջը սմին բան սկսաւ իրար խառնուիլ ու չփոթուիլ վուալին նուրբ ցանցին մէջ. ալ պատ չէր դէմը, այլ սմպերու կոյտի պէս բան մը, անարա՛շ, փափո՛ւկ, զգուա՛ղ, չոյա՛ղ· ու գազաւուկ ձայն մը, որ իր ատաք չունչովը անոր ականջն իսար կը փսփսար·

«Դուն իմս ես, իմս, իմս…»

Կրքի՛, ուժի՛, յափշտակութեան չերմ ու անուշ այն ինքնավըստահ փսփսուքը, որ չօշափելի հիւթի մը պէս, նորէն հասնցաւ սղջըկայ բոլոր անդամներուն մէջէն ու թուլցուց անոր մարմնին յօդերը։

Մինչ բնազդաբար բռնուց ճամբու եզերքի փայտէն, քթթեց արտեւանունները, նայնցաւ ընկերակիցին ու անրջոտ ժպիտով մը ասելցուց կիտաձայն·

— Բայց ինչո՞ւ կը վրդովիք… գուցէ նոյնիսկ, ո՞վ գիտէ, ճիշդ նո՛ւա այդ ուժի, այդ պահանջկոտութեան մէջն է այր մարդու հըրապոյրը, ձգողութիւնը։

Կրկին լռութիւն մը յաջորդեց, որ սկսաւ ազդն վրայ անսխորժ տպաւորութիւն ընել։ Ու յանկարծ ըսաւ անոմ·

— Բայց երթա՛նք, օրիո՛րդ, քիչ մըն ալ միւս կողմը։

— Ո՛չ, նո՛ւա. ի՞նչ կարիք կայ· նո՛ւա սւելի սիրուն է, նո՛ւա, նո՛ւա…

Ձայնը որ բուռն չնչուով մը սկսեր էր, նախապատրաստութեան հետ հետզհետէ թուլցաւ, ցածցաւ ու վերջին վանկերը արդէն հազիւ լսելի չչուկով մը մնասն իր չրմունքներուն վրայ։

Փայտէ ձողը փռնսած ձեռքը ջղաւ կծկուսմով սւելի պինդ գալարեցաւ և թարթիչներուն ճեղքերը սւելի փոքրացան։

«Դուն իմս ես, իմս, իմս…»

Մինչ երիտասարդը զարմացած կնեցեր էր քովը ու անվճռական դիրքով կ'ըսպասէր։

Բոլոր վարպետները ձգուսծ էին, որոնց իրարու քսուզ հպերքներու նեղ անցքէն սւելի պայծառ ճառագայթները յատակին վրայ ոսկի սպիներ կը գծէին։

Մեծկակ սիրուն սենեակ մըն էր ննջարանը։ Բաց հավահարնեբու, լուսանկարներու ու ժապաւէններու ամբողջ ցանցով մը բոլոր պատերը բռնուած։ Զարդի սեղան մը ալ անկիւնը՝ բոլորովին կոբսըած ժանեակներու, կնիքներու, տուփերու, անուշահոտ սրուակներու ու պճրանքի ուրիշ մանր մունր իրերու ահագին կոյտին տակ, որոնց վրայ ծաղր էր խաչոր ու հնաոճրքիբ աչքի մը նման պատին չեղ կախուած ձուաձև հայելին։

Մինչ չուրջը սենեակի մնացած բոլոր կահերուն ու գետնի փոբր գորգին վրայ թափուած էին անխաիր ներքին ու արտաքին հագուստի կտորներ, գլխարկ, կօշիկ, գուլպաներ, գորսէ. չրջագեսա մըն ալ կախուած մահճակալի գլուխին։

Ու այդ նեղ ու բարձր մահճակալին մէջ, փափուկ ու ճեպ-ճերմակ բարձերուն վրայ, մինչև մէջքը հագիբ վերմակին տակ, ինկած էր Արուսեակ կռնակին, թևերն ու կուրծքը հոլանի, մազերը խառնակ։

Թևին մէկը, որ գիրք մը բռնած էր, կախուած էր հիմա անկոզնէն վար, իսկ միւսը նետուած գլխուն վրայ, մազերուն մէջ։ Մինչ լարուած ու մատաղ դիմագծերուն մէջէն՝ ակնարկը առաստաղին մէկ ճեղքը կը չնչէր յամառ։

Դուրսը թևթև ազմուկ մը լսուեցաւ։ Մէկը վեր վազեց սանդուղներէն, առանց այլևայլութեան ևս հրեց սենեակին դուռը ու նետուեցաւ ազջկայ ննջարանը. բայց քայլ մը ընելուն պէս կանգ առաւ խկոյն։

— Ո՛հ, սոսկալի՛. սա ինչ խեղդըւած օդ է. գնա անկողնին ալ մէջը ինչ սենեակ, ինչ անկարգութիւն։

Ու Մինէ չսպասեց բացաւ պատուհաններէն մէկը՝ առանց վարագոյրները բարձրացընելու։

Արուսեակ փոխանակ պատասխանի ձիգ առաւ թևերը, կռնաբուեցաւ ու նորէն թուլցած ու խոժոռ՝ անշարժ մնաց բարձին վրայ։

— Ջե՛ս ամբչնար դուն, չուռավ կէս օր է ըլլալու. ինչ խայտառակութիւն. մարդ չնորհքով կը հիւանդանայ. առանց ասոր ալ պէմքիդ վրայ գոյն չէ մնացեր արդէն։

Ընկերուհին կրկին չպատասխանեց։

Սև մազերու խճճուած կոհակներուն մէջէն անոր դէմքին ու վզին նուրբ մարմը կապոյտ գարնող թևթև երանգ մըն էր առացեր. ու մօտա չրթունքները պինդ կծկած՝ փոքր քիթովը անհանգիստ կը չնչէր։

Անկողնին քովը սրձանացած՝ Մինէ դեռևս ակընթարթ մը լուռ այդ կենսալից առուտ մարմինը։

— Ջեսօ՛ս. ի՞նչ ես դէմդ թթուեցուցեր — բացականչեց վերջապէս չհամբերելով։

Արուսեակ ունքերը կիսած անոր կը նայէր միշտ մռնչալ, կրկ յանկարծ թափով մը բարձրացաւ իր փռուած դիրքէն, յենուց մէկ

սրմուկը բարձին ու չոր կարուկ չհչտավ մը ըսաւ.

— Գիտե՞ս, Մինէ՛, ես խնդրեմնամ պիտի. ճչմարի՛տ խնդրեմնամ պիտի. ալ ասիկա պա՛րզապէս անտանելի է։

— Ի՞նչ է պատահեր նորէն։

— Պատահե՞ր. ոչի՛նչ. ի՞նչ պիտի պատահի. ցաւն ալ ճիշդ հո՛ա է. ինչպէս երէկ, այնպէս ալ այսօր, այնպէս ալ վաղը։

Ուժով մը ձեռքի գիրքը նետեց մահճակալի գլխուն մօտիկ գրուած փոքր քամոնին վրայ. ու քիչ մը ետեւի մնամ ձայնով չարտնակեց.

— Երբեմն անտանելի յանդգնութիւն մը կու գայ վրաս։ կը մտածեմ թէ քանի բոլոր չըշտապահս վրայ, կարիմ քեզի պէս բոլոր կապեր, եղիմ երիտասարդ աղիւոր մը, աղիւ մարդոց մէջ. ինչ կ'ուզե ըլլայ. թող անօթի՛ ննամ, թո՛ղ չարքաշ ապրիմ, միայն թէ բան՛ մը ապրիմ։ Այդ վայրկեաններուն նէթ պիտաս մէջս ինչ կը դառնայ. բացատրելը դժուար է. ամբողջ էութիւնս նորութեան, յուզման ու չարժման կը ձգտի. կ'ուզեմ վազեմ, պոռամ, սեղմեմ. կարծես ամէն չունչ առնելուս բանի մը կ'ըսպասեմ, որ անպատճառ պիտի գայ, որ ինքս ալ որոշ չգիտեմ ինչ է, որ չի գար... Ու կ'ըսկսի հակազդեցութիւնը. կ'ըզգամ խկցին իմ անզօր, անկամք, իմ միտքիս ու ոգորմելի վիճակս. և արցո՛ւնքը, այդ ապո՛ւշ արցունքը անմիջապէս կը հոսի սրտիս տակնուվրան ու պապակը մարելու. և ջուրը թաթխած լաթի կտորի մը պէս, թուլցած, ճմըռթկած, ինքս իմ վրայ փակած կ'իյնամ անկիւնս մը վար։

Մինէ կարեկցութեամբ բռնեց անոր ազատ ձեռքը, նստեցաւ կատմայ մը անկողնի եզերքին, դեռ գլխարկը գլուխը, դեռ ձեռնոցները չհանած ու խորհրդաւոր ժպիտով մը հարցուց.

— Իսկա՛ մոքէդ անցած չէ՞, թէ այդ տակնուվրայութեանդ պիտը ինչ է։

— Ի՞նչպէս չէ. եթէ ես ինքս չհասկընամ, հո՛, այդ գրքերը գազանիք պահել չեն սիրեր։ Որ ներս մտար՝ նորէն այդ տեսակ տոպ կէտի մը վրայ էի. այդ վէպերը մեզի պէս աքրիւպիւներ չունին, հոգի՛ս. կը կարդամ ու կը նախանձիմ, տեսնես չափ կը նախանձիմ այդ եւրոպական կեանքին, այդ նկարագրուած ազգիկներուն։ Մե՛նք, փո՛ս, մենք սիրե՛լ մը անգամ չենք կրնար. էէ՞ որ անպարկեշտութիւն է. ատոր համար ալ ա՛ւժ պէտք է ու համարձակութի՛ւն. ուրիշ մեզի այդ քաղաքակրթութիւնը. տունը ու հասարակութիւնը կաթիլ-կաթիլ դուրս է քամեր մեզմէ ամէն ինքնուրոյնութիւն, սրտի ամէն ազատ չարժում։ Եւսէ՛ անկիւնը ու սպասէ մինչև որ ազգականներդ «չընորհքով դործի ակր» մարդ մը գտնեն քեզի համար ու դնեն չալակը։ է՛։ Իսկ դո՞ւն սիրած ես, Մինէ՛. իմարկէ՛. ազա՛տ ազգիկ, գեղեցի՛կ, գիրասահուհի. չիտակ ըսէ՛, ո՞ւր, ե՞րբ, չո՞ւտ։

Մինէ պահ մը լուռ ակամայ ու գլուխը դէպի կուրծքը հակե-

ցաւ, վերջը ժպտեցաւ ընկերուհիի դէմքին ու տարիքը առած, ապրած կնոջ մը մայրական չեչոտիը ուսկցուց.

— Լ՛, անուշի՛կս, իմ գործս ուրիշ է. ինձի մէկ կողմ դի՛ր։ Իսկ գուն չո՞ւտ կը ցանկաս սիրել։

— Ա՛յ ինչի՞ համ պէտք, եթէ սիրել ալ չի ցանկայիր։ Ցանկա՛լ, ի՛նչ բառ է տարիք. ես կ՛ապրըմիմ. ակնզնցին սուրբին առջևը վառ մոմ ցըւած կանթեղին պէս, ինքս իմ մէջս. անպէտք ու առանձին։ Գուն ըսածս չե՛ս հասկընար, ի հարկէ. գուն սիրա՛ծ ես. և վերջապէս քու կեանքդ ալ ուրիշ է. մի՛չտ զրաղուած. իսկ ո՞րն է իմ ընկերական չըլլանս, իմ զբաղումս. նա՛, այդ վէպե՛րը. կարդա՛, երազէ՛ ու տանջըէ՛։

— Դիտո՛ս, Արտեսա՛կ, գուցէ ազէկ չես ըներ չարունակ այդ Փըրանսական վէպերուն հետ։

— Թո՛ղ, հոգիդ սիրես, իմ մրակ զուարճութիւնս ինձի։ Եւ ըսե՛նք գիրքն ալ որ ձեռքէս խլես, սիրտս վերջապէս չե՛ս կրնար կրծքէս դուրս քաշել. մենք ապրիկնուրս այդպէս ենք՝ կրնա՞ս ուրանալ. սէ՛ր, սէ՛ր ու կարօ՛տ ու ծարա՛ւ ու սպասո՛ւմ. որու համար ամեն բան զոհելու պատրաստ ենք մեր սրտին խորքը։

Մինէ խոհուն՝ դէմքը ապրիկէն գարձուց. ու սև ձեռնոցով ցուցամատը բարձի եզերքի ժանեակին վրայ սահեցընելով՝ հարցուց գսպըւած ձայնով մը, առանց ընկերուհիին նայելու։

— Ուրեմն իրա՛ւ կը կարծես, որ ապրիկ մը ամեն բան զոհելու պատրաստ է։

— Ի՞նչ հարց. ալ ինչի՞ս է պէտք աշխարհը, երբ սէրէ զուրկ պիտի մնամ, երբ կեանքը վայելել պիտի չկրնամ։

— Բայց, հոգի՛ս, չատ նեղ կը մտածես. կեանքի վայելքը միայն սիրոյ մէջ չէ. մի՛միայն սէրը ի՞նչ է ինքնին, և ի՞նչքան պիտի տևէ։

— Ես այդ տեսակ հաշիւներ ընել չեմ կրնար. ու կը կարծեմ բոլոր կիներն ալ ինծի պէս են. ի հարկէ խօսքս չորցած սրտով ապրիկնուրս մասին չէ. ինքդ ըսէ, այդպէս չէ՞։ Ո՞վ է հարցնողը ինչուներ ու վերջը. թող ըլլայ վերջը ինչ որ կ՛ուզէ. ամենէն գէշը՝ նախա՛տձ, կռիւնե՛ր, պատահա՛ւմ. չէ՞. ուելի ապրիկ. մարդ գոնէ յուզումներ կ՛ունենայ, կիրք ու վիշտ. ի՞նչի է նման անշարժ ջուրի վրայ լեղի պէս նստած այս կեանքը։

Մինէ ճնշըւող կուրծքին տակ հեռուհեռէ ուելի դժուար կը չնչէր. կարծես մէկը հեծներ էր անոր ծոծրակին. իրանը քիչ-քիչ կը կորանար վար։

Իսկ ընկերուհին պահ մը լռեց. ակընթարթ մը յառած ու մասսոյդ նայեցաւ ձեռքը բռնած իր մազի երկար մէկ փունջին, ձգեց բարձին, չփնց մնքնաբար իր ատան ու վիզը, և յանկարծ պոռաց.

— Մինէ՛, Մինէ՛, յուզում կ'ուզեմ ես, յուզում. կեանք, ազմուկ, իրարանցում. ես կ'ուզեմ սիրեմ։ Տե՛ս այս մարմինը, որ ամենքը գեղեցիկ կը գտնեն, ինչո՞ւ, ինչո՞ւ համար է ասիկա. մրնակուկ անեակին անկիւնը թռռմելու համար. և երբ կը մտածեմ, որ կեանքիս ամենաթարմ, հասուն ու ամենէն գրաւիչ տարիներն են, որ այսպէս անխարհուրդ կը սահին կ'անցնին... Մինէ՛, չգիտե՛ս, չգիտե՛ս ինչպէս սիրել կրնամ. ա՜խ...

Ու մերկ թեւերուն ու լանջովը փարելու ընկերուհիին վիզը, մը-կաննեռան բոլոր ուժովը քաշեց իրեն՝ ուժգին համբոյր դամելով անոր դէմքին կրքի անզուսպ թափով մը։

Բաց ծոցէն հոսող կանացի բոյր մը, լեցուն կրծքին մերկ չօչափումը ու այդ գազազ-կպչուն չրթունքները Մինէին հակակրանք ազդեցին. կանացի հակակրանք մը կանացի կրքոտութեան դէմ. և ինքզինքը ազատել ջանալով՝ ոտքի ելաւ անկողնէն.

— Կամա՛ց, կամա՛ց, խե՛նթ, գլխա՛րկս բզկտեցիր։

Արեւսեակ քակեց թեւերը, քիթ ու բերնին ինկաւ նորէն անկողնին վրայ ու դէմքը պինդ թազած բարձին մէջ սկսաւ բարձր հեկկկալ։

Մինէ մօտեցաւ, աչքաւոցաւ հանգստացընելու, ջուր տուաւ՝ որ խմէ. և երբ քիչ մը հանդարտեցաւ՝ օդնեց անկողնէն ելլելու, գործ պատրաստակեց ու մեկնեցաւ։

Դուրսը պչեղաւ օր մըն էր. տա՛ք։

Մինէ կը քալէր առանց որ կազմ երթալը գիտնալու։

Ինքզինքը մոռնալու, իր մտածումներու կաշկանդող չրջանակէն կերպ մը դուրս գալու համար ակեր էր ընկերուհիին. և հիմա այդ ընկերուհին էր, որ աչքերուն դէմէն չէր հեռանար. անոր թեւերուն կծկումը կ'ըզգար դեռ վզին չուրջը ու չօչափումը անոր ուժգնչղ չրթունքներուն։

«Անա՛ ինչպէս կը սիրեն. անա՛ ահ է կինը. անա՛ կինը ի՞նչպէս կը սիրէ»։ կը կրկնէր չարաճնակ մտքին մէջէն։

«Զո՛ր սիրա, չո՛ր»։ Է՛, արդէն ինքը կին չէր որ. այդ կէսին վրայ ամենքը համաձայն էին իր դէմ. ամե՛նքը. չէ՞ մի օր ինքը արուեստի աղջիկ մըն էր միայն. արուեստի...»

Ու սկսաւ լեզի ծիծաղով մը բարձրաձայն խնդալ փոզոցին մէջ։ Իսկոյն սակայն իր խնդուքէն ինքը անդրադարձաւ, վախցած նայեցաւ չուրջը՝ մի՞ գուցէ սեմնոզ մը ըլլայ. և քայլերը արագացուց դէպի ծանօթ ընտանիք մը, ուր չորս-հինգ աղջիկներ կային, ուր աղմուկն ու իրար անցումը անպակաս էր. պէտք է ցրուիլ, ցրուիլ։

Հազիւ էր անոնց սեմէն ոտքը ներս դրեր, որ աղջիկները չորսը միասին «արեւսեակհին» վրայ թափեցան. ու Մինէ իսկոյն ոգեւորուած էր արդէն անոնց անդադրում չաղակրատանքին ու աղջկային զուարճութեանց մասնակից։

Ճաշի մսաերն էր, որ վերջապէս տուն վերադարձաւ. տեսակ մը անսովոր հանդարտութեամբ ու խիտ ծանր քալուածքով։

Դուռը դեռ չզարկած՝ ներսը բակէն խօսակցութիւն լսեց. կանացի օտար ձայն մը։

Զանգը կոխելուն պէս՝ դուռը բացուեցաւ։

— Ա՛խ, դուն ես, Մարիա՛մ. ես ալ կը մտածէի՝ ատ ո՞վ է։

Հրանտենց սպասուհին էր. տասնըհինգ-տասնըվեց տարեկան պատառոտի միամիտ ու գլուխը կախ ազջիկ մը, կարմիր թշերով, գըլխաբաց. ուրիկ մուրի պէս սեւ, հատ ու երկար հիւսք մը թիկունքէն վար կը սողոսկէր։

Դեռ նոր էր եկած անոյշին յանձնարարութեամբ մը։

Ընթացքին գնաց յանձնարարութիւնը կատարելու։

— Տունը ինչպէ՞ս են.— հարցուց Մինէ հանդարտ ձեռնոցները հանելով։

— Աղէ՛կ են. բարեւ ըրին. տիկինս ըսաւ որ այս քանի օր է ինչո՞ւ մեզի չես գար նորէն։ Այդքի հաւաղն ալ արդէն հասունցեր է գրեթէ. անցած իրիկուն...

— Իսկ ի՞նչ բանի է Հրանտը. տո՞ւնն է։

— Չէ՛, ան վերջին տեղեկութիւնները ամէն օր գալիս կ'իջնէ եւ ուշ ալ կը վերադառնայ. այնպէս տեսակ մըն է. տիկինս երէկ կ'ըսէր, որ երեւի գործերուն մէջ բան մը կարգին չէ։

Մինէ կախեց գլուխը. կատարեալ լրջութեամբ սկսաւ ձեռնոցին իւրաքանչիւր մատը ձիգ տալ. վերջը երկու ձեռնոցները դրաւ իրար վրայ ճի՛շդ իրար համաչափ. անգամ մըն ալ սկսաւ մատներէն քաշել զոյգը միասին. եւ վերջապէս կամաց մը դրաւ սեղանին վրայ։

Բարձրացուց գլուխը, նայեցաւ չուրջը եւ խօսակցին.

— Մարիա՛մ, այդ ի՞նչ ազատ մազեր ունիս. այդպէս սե՛, ատա՛տ, երկա՛ր— ըսաւ յանկարծ ատենց որեւէ կապիտ քայլ մը առաջ եկաւ մօտիկէն դիտելու։

Սպասուհին նախ թեթեւ մը չիկնեցաւ, վերջը ուզեց բան մը ըսէ չհամարձակեցաւ. տակայն ինքզինքը երկար զսպել չկրցաւ ու հարցը դուրս թռաւ չրթունքներէն.

— Եթէ այդչափ երկար մազեր կը սիրես, ինչո՞ւ համար կտրել կարեր ես։

Աղջիկ մը մանչու մազերով. Մարիամ արդէն առաջի օրէն խելք հասցընել չէր կրցած այդ «անճոռնիութեան». եւ հիմա ներքուստ ուրախ էր այսքան ժամանակ սրտին վրայ ծանրացածը անգամ մը արտայայտած ըլլալուն։

Մինէ նախ քիչ մը լուրջ մտածեց։

— Ե՞ս. ես ինչ պիտի ընեմ երկար մազերը. մազը ազջկան համար է, ազջկան չնորհքը։

— Է՜հ, դուն ազջիկ չե՞ս.— խնդաց Մարիամ։

— Ը՞ս... ե՛ս, իհարկէ, ո՛չ. ես պերասանուհի եմ։

Եւ դիմացինի միամիտ ու ապշած արտայայտութենէն զըւարճութիւն զգալով՝ հարցուց խոհուն, կարծես ուզի խառնակիլու համար.

— Գիտե՞ս ինչ բան է պերասանուհին։

Ազջիկը նախ ամբչցաւ պատասխանելու. վերջը ըսաւ կ'ե՛ս մը պարապաւի չեչտով, կէ՛ս մը քաչուելով՝

— Լսեր եմ, որ երեսին զանազան գոյներ կը քսեն և ուրիշ մարդիկներու ձևեր կ'ընեն։

— Նո՛ւ. քիչ մը նաաիւթալիտական է թարգմանուած, բայց ոչի՛նչ։

— Ի՞նչ։

Մինէ գրգռուած քանի մը անգամ գնաց եկաւ բակի երկայնքովը. վերջը եկաւ կեցաւ Մարիամի չիտակ դիմացը ու վրայ առաւ կարծես իր մտածումները չարաւնակելով, զայրացկոտ, գառն ու արհամարանքով։

— Ուրեմն դուն չդիտէիր, հա՞, որ ես ազջիկ չեմ։ Ա՜հա՛ միակ միամիտը, որ այդ ատիճան պարզ բանը չի տեսներ։ Ազջի՛կ. ազջիկը չառանց է մեռնիր իմ մէջս. ազջի՛կը իր կանացի բնական զգայուններով, հակումներով, մտածելու ու ցանկալու եղանակով։ Եւ այդ բոլորի փոխարէն գիտե՞ս ինչ է պերասանուհիի մը ներքը. ահագին հաւաքածու մը զանազան տարիքի, վիճակի ու բնաւորութեան կանացի դէմքերու. բայց, իհարկէ, բոլորն ալ նկարուած, ոչ իսկական. ան ալ կտորաննք, թերի կամ պատռած. հոգը փոշոտ սենեակի մը մէջ իրարու վրայ նետած քուլիսներու պահեստ դէզի մը պէս. ուրկէ նայելով օրուան պէտքին մէկ երկու հատը դուրս կը քաշես, կը սըրբես քիչ մը վրայի փոշին ու կը դնես բեմին վրայ հանդիսականներու զբաղեցնելու համար։ Օ՜, հանդիսականներու զբաղեցնելը. ամենաէականըատ է։ Ազջի՛կ... ո՞վ ըսաւ քեզի. քուլիսներուս ժողովածո՛ւ։

Ու ձեռքերը կոնքերուն՝ ձախցաւ սպասուհիին վրայ.

— Է՛, ի՞նչ այդպէս ապաշ-ապուշ երեսս կը նայիս, պատասխան չառա՞ս.— պոռաց յանկարծ ինքն իր վարմունքէն նեղսրտած՝ բարկութիւնը դիմացինէն առնելով։

— Ի՞նչ կ'ըսես. չե՛մ հասկընար քեզի. ինչո՞ւ բարկացար.— կըմկըմաց խեղճը վախցած դիմագծերով։

— Չե՞ս հասկընար. ա՜յ, քեզի երջանիկ սրտած։

Ու սկսաւ խնդալ։

— Մինէ՛, ի՞նչ բանի ես հոս. ինչ կընես խեղճ ազջկանը հետ.— լսուեցաւ սրբեւայրիին ձայնը սանդուղքին վերէն։

Մինէ ծիծաղը կտրեց, նայեցաւ վեր և զղուանքի արտայայտութեամբ մը հաճեց.

— Դիւրաանութի՛ւն, մօրաքո՛յր։

Դանդաղ ձեռքերով վերցուց սեղանին վրայէն ձեռնոցները ու ծանր քայլերով իր սենեակը բարձրացաւ։

Ը

Թանձր ու թուխ ամպերը առեր էին երկինքը։ Եւ իրիկունը թէեւ այնքան ուշ չէր դեռ, բայց պարտէզը՝ ծառերուն տակ՝ մութի նուրբ քօղ մը տարածուած էր արդէն ամպերէն ծորող. մանաւանդ հակայ էնտարի երկար ու խիտ ոտներուն ներքեւ։

Հո՛տ, ճիշդ ծառի բունին կից, լայն գորգի մը վրայ ծալապատիկ կուչ էր եկեր պառաւը. ու հնար եղածին չափ ինքն իր վրայ կըքաշ՝ ձեռքի խազի թուղթերը կանոնաւոր տողերով իրարու տակ կը չարէր. դանդա՛ղ, լո՛ւռ, լո՛ւրջ, խորհրդաւո՛ր ու թեթեւ մը դողդողացող ձեռքով։

Թուղթ կը բանար։

Իր աջ կողմը ամբողջ հասակովը դէմքին վրայ փռուեր էր Հրանոտ. և թէ ու կրծքով բարձի մը մէջ խրած՝ ուշադիր կը հետեւէր մօրը ձեռքերուն։

— Նայէ՛, բազդը նորէն թէեւ տակ ինկաւ.— նկատեց կիներ նոր բացած թուղթեր մատնանիշ ընելով։— Բազդաւո՛ր տղաս. մինակ գըլխուդ վրան քիչ մը նեղութիւն կայ. սա տղուար չէ. մէյ մըն ալ չեմ հասկընար՝ սա երկու չէկերը քեզմէ ի՞նչ կ'ուզեն. սա չէկ մարդը ու սա չէկ կինը, որ ձախ կողմդէդ չի հեռանար. չէկերէն զգուշ եղիր, մա՛նչս. ամեն կնկան ականջ մի կախէր. Աստուած պահէ քեզի սոնոց փորձանքէն։

Հրանոտ ժպտեցաւ. չատ ապէկ կը հասկընար մօրը ակնարկները։

— Իսկ ճամբորդելու մասին ոչինչ չէ՞ն ըսեր թուղթերդ.— հարցուց յանկարծ։

— Ի՞նչ ճամբորդել.— գոչեաւ կինը գլուխին՝ չնչա անոր դէմքին գամելով աչքերը։

— Նո՛, չգիտե՞ս. դէպի չէկերու աշխարհը։

— Չէ՞ որ գնա երկու-երեք ամիս ժամանակ ունիմ կ'ըսէիր։

— Այ՛. բայց, է՛, ո՞վ գիտէ, գործեր կրնան պատահիլ, անակընկալ պատահարներ. մարդ կ'ըսածիպես չատպիլը...

Բայց նչմարելով, որ մայրը անհանգստանալ սկսաւ, իսկոյն փոխեց լեզուն.

— Իմ հարցուցածս ալ ա՛տ է միայն, մայրի՛կ. կ՚ուզէի գիտնամ անանո՛ւնք, թուղթերդ ի՞նչ կ՚ըսեն։

— Ճամբա՛դ. ճամբադ դեռ չատ հեռու է. նայէ՛, չորքին միւս ծայրը.— ըսաւ պառաւը հաստատ ու վճռակամ։

— Հա՞. ուրեմն ազէ՛կ։

Մայրը չարիլը աւարտեց. երկու ձեռքերը իրարու վրայ գոգը դրած՝ պահ մը լուռ սկսաւ դիտել խորին ուշադրութեամբ աղջիկը փռուած թուղթերուն գազանիքը. և քիչ մը վերջը սկսաւ նորէն հաւաքել-հաւաքել մեկնիլ։

— Ինչպէս ըսի գլխուդ վերի դին չատ մամաուք կայ. մամաուքը սիրտ կը մաշէ, ճահիլի բան չէ. և այդ մամաուքն ալ, նայէ՛, հեռուներէն կուգայ վրադ. ա՛խ, եթէ անգամ մը ձեռք վերցընէիր այդ հեռուներէն։ Ուրիշ բան մըն ալ որ չեմ հաւնիր, աւ՛ս, չորս դիպ բոլոր ուրիչ գոյնի թուղթեր են. կարծես օտար, պաղ չրջանակի մը մէջ, որ քու գոյնիդ չի յարմարիր։

— Ի՞նչ ջնաս ունի, մայրի՛կ. աւելի ազէկ. զանազան գոյները իրարու քով աւելի սիրուն կ՚երևան։

— Կ՚երևան, այո՛։ Ա՛խ, զաւակս, մի՛ խաբուիր. մարդ իր չրջանակէն դուրս գալու չէ։ երջանիկը ա՛ն է, ով իր գոյնի մարդոց հետ՝ իրեն սովորական չրջանակին մէջ կը գառնայ։ Իր չրջանակէն դուրս չատ բան սիրուն կրնայ երևալ. միայն, հաւատա՛, ա՛չ իրեն համար։ Ամեն մարդ իր գոյնին մէջ։

Հրանտ որ մինչև հիմա անփոյթ՝ ժամանցի համար մօրը կը լսէր, վերջին խօսքերուն ակամայ բարձրացաւ քիչ մը բարձին. ուշքերը յամառ սևեռեց մօրը հանդարտ ու ախուր դէմքին, ուր վրաւերն ու անցեալը յարմարեցնելու ու համակերպելու անչինչ ըրոշմը զարկեր էին։

Առանց որդուն չարժմանը ուշ դարձնելու՝ կը չարունակէր ան իր գուչակութիւնները, որը աւելի իր սրտէն քան թուղթերէն կր կարդար։ Բայց Հրանտ ալ չէր լսեր ոչինչ։

Ամպերու ու ծառերու խորհրդաւոր կէս-մութին տակ, չուրջի դաշտ ու ճչղղ օդի լռութեան մէջէն մօրը հառաչ, յառակ ու տրտում չեչտերը պատգամի մը պէս իր ուղեղն էր թափանցեր։

«Երջանիկը ա՛ն է, ով իր գոյնի մարդոց հետ, իրեն սովոր չրջանակին մէջը կը գառնայ...»։

Շը՛չչ. տաք հովը չարձակեցաւ յանկարծ ծառի թաւ ճիւղերուն մէջը. ու կիսաչոր, դեղնակարմիր տերևներու անձրև մը տեղաց վարքանի մը հասը երերաբկալով ու դողդոջ եկան նատեցան թուղթերուն վրայ. հատ մըն ալ պառաւի քթան մազերուն։

Հրանտ ցտակից ոաքի։

— Մայրի՛կ, լաւ է նեբս երթանք. կարծես վոթորիկը փրթի պիտի,

— Գնա՛ Մարիամը ինծի գրկէ՛, սա լաթերը ժպտունք.— պատասխանեց կինը՝ անդին երկար պարանի մը վրայ փռուած ճերմակեղէնները մատնանիշ ընելով։

Հրանտ կատարեց մօրը պահանջը. ծնր ու մատղոխ բարձրաձաւ դէպի իր աշխատանոցը, որ վերջին ժամանակները չատ քիչ էր եղած. ան ալ միշտ պատահաբար՝ առանց աշխատելու։

Ու սեմին վրայ կանգ առաւ վայրկեան մը, բոլորովին թաղուած իր մաքերուն մէջ։

«Այս չրջանակէն դուրս չատ բան կրնայ սիրուն երեւիլ, միա՛յն ուրիշներուն համար, ո՛չ իրեն...»

Եւ ինքը խեղճ մը, որ կարծեր էր թէ ինքն ալ իրաւունք ունի ուրիշ գոյնի, ուրիշ բնաւորութեան մարդոց ուրախութիւնները ունենալու։ Ինքը լուրջ գիտութիւններու նըւիրուած աշխատաւոր մը, ի՞նչ կը յարմարէր իր զգացումներուն ելլել սիրահարիլ տասնըւեցի տարեկան պատանիի մը պէս. ա՛ն ալ Մինէի նման արտիստ անկայուն ու թռուցիկ բնոյթի տէր աղջկան մը վրայ։ Յիմարութիւն էր, այո՛. իսկ յիմարութիւն վայելել դիտնալն ալ ամէն մարդու բան չէ։ Ամէն մարդ իր գոյնին համեմատ, իր չրջանակին մէջ...

Ու երկու դանդաղ, վարանոտ քայլերով մտաւ այդ չրջանակէն ներս. մօտեցաւ գրասեղանին, յենուեցաւ թևին մը ու կեցաւ։

Փոքրիկ պնակի մը մէջ պատրաստուած գունաւոր հեղուկը ցամքեր էր բոլորովին. խիտի կտորին վրայ պրկուած թաղանթը չորցեր ու կծկըւեր. ու նուրբ ապակիները թափուած էին չուրջը ապառաս, ոմանք պինդ իրարու փակած, իրենց մէջ ճգմելով կանկիւի չորցած փոշի մը. և այդ բոլորի կեդրոնը մանրադիտակը, որուն վրայ փոշիի բարակ խաւ մը նստեր էր։

Երիտասարդը յանկարծ ցաւի, խղճի խայթի պէս բան մը զգաց. այսպէս մոռնալ, այսպէս լքել իր չանքերուն աշխատակիցը, իր ձըգտումներուն հաւատարիմ օգնականը, իր ընկերը...

Բուռն թափով մը դուրս քաշեց գրպանէն թաշկինակը, տարօրինակ ակնածանքով մը վերցուց, սկսաւ մաքրել դործիքը. ու տեսակ մը գուրգուրանքով գրաւ նորէն զգուշ տեղը վրայ։

Նոյն եռանդով ալ սկսաւ արագ մաքրել ու քիչ մը կարգի բերել չուրջը։ Վերցուց գրքերէն մէկը, բացաւ նշան գրած տեղը։ Վերջը ծռեցաւ իր կէսը գրուած կէսը նկարուած ճեռագիրներուն, չատ լաւ յիշել, թէ ո՞ւր էր իր աշխատանքը ընդհատուեր։

Եւ զգաց, որ վառ հաճոյք մը մէջը չրջան առնել սկսաւ. հաճո՛յք մը աշխատելու կարօտի, հաճոյք մը աշխատելու կարողութեան։ Ո՞վ ըսաւ, թէ ինքը այլևս չնորհք չունէր. ո՞վ ըսաւ, թէ իր սրտի անխորհուրդ ու անհետևանք զգացումներուն ձեռքը կապուած սարսուռ էր։

Ո՛չ։ Պէտք էր փեթռռանել այդ ոսկի անմիտ չղջիկները, որոնք

պէսափ ձիգ առաս, այնքան մարմնիդ մէջը կը խրին. պէտք էր թափ տալ ուսերէն վար այդ անբաղձ անխնամ պատմուճանը։

Ցընցըլեցաւ. արագ վազեց դարս, թարմ ջուր բերաւ, փոլիգոնները մեկուն չիշը մօտ քաշեց, չարեց իրարու քով պէտքի առերնարն ու գործիքները, մաքրեց մէկ-երկու փորձի ապակիկ՝ թարմ պրեպարատ պատրաստել կ'ուզէր։

Ու ինքն իր ոգևորութենէն ուրախացած՝ սկսաւ սուլել։ Սակայն սոյլը ընդհատեցաւ յանկարծ, ընդհատեցան սկըմթարթ մը և սրտին զարկերը. ձեռքը չիշին՝ քարացած մնաց. ճանչցած էր վարէն Մինէի ձայնը։

Սանդուղը թիքաւոց հապճեպ ու թեթև քայլերու տակ. ու ազջիկը հեռուէն նետուեցաւ սեմէն ներս.

— Բարև՛։

Տգան յամառ, անթարթ աչքերով կը նայէր անոր. ո՛չ բառ մը, ո՛չ չարժում։

— Բարև՛. չե՞ս լսեր. երևի սա ալ նորադոյն քաղաքավարութենէն է։

— Ի՞նչ գործ ունիս հոս.— հարցուց վերջապէս ազան կարուկ ու խնդրքուած ձայնով մը։

— Սա ի՞նչ անխելք հարցում է.— խնդաց Մինէ։

Քայլ մը ևս գնաց. բազուկները դրաւ սթաւի մը թիկունքին, կուրծքն ալ վրան. ու գլխարկին զարգերուն տակէն ինքն ալ լուրջ նայուածք մը չինեց. պիտամբ ազուն ձևովը, ազուն նմանութենէ։

Հրատ աչքերը փախցուց. ձեռքի փոքրիկ ուշելին զայրոյթով նետեց սեղանին վրայ ու մէկէն դիմեց խօսակցին.

— Գիտեմ, եկար նորէն աչխատութենս խանգարելու։ Ինձի նայէ՛, հերիք է, գոն ու ես սարքեր գոյնի մարդիկ ենք. գոն ինձի ոչինչ տալ չես կրնար, գոնէ ունեցածս ձեռքէս խլելու մի հեռապըն. դեր. հանգիստ թող ինձի իմ չրջանակիս մէջ. ալ ես քեզմէ ուրիչ ոչինչ չեմ սպասեր։

— Հրատ, չե՞ս ամըչնար. ամօ՛թ քեզի։ Մինչ երաւ չես ըմբռներ, որ վտանգդ կատարեալ երևութական է. տագին մարդ պիտի ըլլաս. ա՛ն ալ դոքտոր, ա՛ն ալ մտանագէտ, ա՛ն ալ ջղային կեղրոնի...

Աօսքին հետ հետզհետէ թևերն ու կուրծքը բարձրացուց սթաւի թիկունքէն, ոչ ամբողջ հասակովը չակըռեցաւ։

— Իակ ես կամըչնամ. գնա աւելին, այդ բոլոր չիմարութիւնները ինձի ուղղակի կը նըւաստացընեն. կ'ըմբռնե՞ս, կը նըւաստացընէ։ Մինչ չենք-չենորհք կը վախնանք իրարմէ ու կը փախչինք. և ինչո՞ւ. որովհետև կը համակրինք իրարու, իրար կը հասկընանք, մէկմէկու սիրտ տալ ու իրարու մօտիկութենէ օգտըվիլ կրնանք. մանաւանդ

մեր այս տափակ չրջապատին մէջ։ Լա՛, ես ալ չեմ կրնար հանդուրժել, որ մենք իրարմէ խոյս տանք, որ դուն երեսիս նետես, թէ ես կը խանգարեմ քեզի։ Ո՛չ. ո՛չ թէ քեզի խանգարել, այլ քու աչքատեսիդ թե տալ կ'ուզեմ ես. կ'ուզեմ որ իմ մօտիկութիւնս ու զգացումներս քու օդնականդ ըլլան, դրկիչդ, քու մուսադ։ Ա՛խ, դուն իրաւ մուսայի հետ գործ չունիս. նա՛, ի՞նչպէս կ'ըսեն ձեր բառախօսական ժարգոնով։

Ու ժպիտը աչքերուն, դլուխը քիչ մը թեքած ուսին, մօտ եկաւ տղուն։

— Բայց, Մինէ՛, սիրելի՛ս...

Հազիւ էր տղան բերանը բացեր, որ աղջկան ձեռքը բարձրացաւ իսկոյն ու ափովը գոցեց անոր չրթունքները։

— Ո՛չ Մինէ՛ ո՛չ սիրելիս. ո՛չ մէկ առարկութիւն. վերջացո՛ւ. ալ ո՛չ մէկ խօսք այդ ամենուս մասին. կը հասկընա՞ս։ Դէ՛, հիմա ինծի ըսէ նայիմ՝ ի՞նչ կ'ընես հոս. դուն հանդիսատ քու գործդ չարուշնակէ. ա՛յ, ես ալ քեզի կ'օգնեմ. կը կարծես չեմ կրնար. դուն ցոյց տուր միտակ, թէ ինչ պիտի ընեմ։

Հրեց աթոռը գրասեղանին առջեւը, նստեցաւ, մանրապիտակը քաշեց իրեն ու ձռեցաւ վրան։

— Հապա ուշինչ չերեւար մէջը.— բացականչեց յանկարծ խընդումարեա՝ տղուն դառնալով։

Հրանտ սիրտ չունեցաւ ինքն ալ ժպտելու՝ այնքան միամիտ էր այդ բացականչութիւնը։

— Իհարկէ. քանի որ տակը սեռնելու առարկայ չկայ։ կեցի՛ր, պատրաստներէն քեզի բան մը ցոյց տամ։

Մօտը խոչոր տուփ մը բանալով՝ արդէն պատրաստ, փակցուցած հին օբեկտներէն ապակիկ մը գտաւ, անցուց մանրապիտակին տակ ու գործիքին պտուտակը բռնելով ձռեցաւ խոզակին վրայ՝ տեսադրութեան ամենէն պայծառ դիրքը բերելու։

Աղջիկն ալ նորէն ձռեցաւ քիչ մը։ Հրանտ նախ անոր ուսը թեթեւ մը իր ուսին զգաց, վերջը աղջկան գլխարկին փետուրը, որ իր մազերուն քաշեցաւ և աղջկայ գանգուրներէն ոլոր մը, որ իր ճակտին ինկաւ։ Հրանտի պտուտակը կատարեալ ձեռքը թոզաց, պատկերը փախաւ խոզակին մէջէն, տղան խածաւ չրթունքը, գլուխը քիչ մըն ալ թեքեց իր կամքին հակառակ. ու երկուքի ալ այլեայլ ոյժերը իրարու էին փակած պինդ...

Վայրկեան մը միայն։

Երիտասարդը ետ քաշուեցաւ յանկարծ, բռունցքը դայրացկոտ զարկաւ սեղանին ու հեռացաւ երկու քայլ։

— Ահա, այդ բոլոր սիրուն ֆրազներուն եղրակացութիւնը։ Սիրուն բառերով մենք իրարու ճանկել չենք ազատիր, պարապ բան է,

պէտք է ամէնէն գործնական ու կարեւոր մէջտեղին դիմել. ան նոյնիսկ ա՛յս չաբթու կը մեկնիմ Գերմանիա. արդէն այսչափ կազդուրուիլն ալ հերիք է։

Եւ «կազդուրուիլը» չնչուած էր մանուկ օրապէս գառն։

Մինէ գլուխը վար կախած՝ գրքի մը թերթերը կը գարձնէր չգաձգօրէն։ Երբ ազան լսեց, առանց իր դիրքը փոխելու հարցուց հատու չհչտով մը.

— Որոչուա՞ծ հասա՞ա է։

— Այո՛, այո՛։

— Ուրեմն ըսէ՛ պատրաստութիւն տեսնեմ։

— Ի՞նչ պատրաստութիւն։

Մինէ աթոռին վրայ կէս մը դարձաւ դէպի ազան. ու յստակ, հանգիստ չհչտով մը կցկց.

— Ճամբորդելո՛ւ. քեզի՛ հետ։

— Թո՛ղ անհամ կատակներդ մէկդի. ան այլեւս ամէնեւին սիրտ չունիմ կատակելու. և եթէ ակընթարթ մը իմ հոգեկան վիճակս մըտնել կարողանայիր, դուն ալ կը կորանցընէիր կատակելու ցանկութիւնդ։

— Ես չե՛մ կատակեր.— եղաւ աղջկան կարճ ու լուրջ պատասխանը։

Հրանտ զարմանքով անոր նայեցաւ չհչտ։ Աղջիկը իր բոլոր ուժովը սեղանին մէկ սուր անկիւնը սեղմած ու զսպած իր չհչտուքիւնը՝ ազան կը նայէր անկեղծ ու պայծառ հայեացքով։

— Մինէ՛.— ըսաւ վերջապէս ազան։— Եթէ միտքդ խաղի եկել չէ, հասա՛տ, որ ինքզինքդ կը խաբես։ Հիմա չե՛ս գար դուն. չե՛ս կրնար գալ. այդ երազէն արթընցած եմ ան արդէն վերջնականապէս։ Մենք իրարու մէկ բանով մը միայն կրնանք օգնել. հնար եղածին չափ կարեւոր անջատուիլ իրարմէ։

Մինէ կապուած չարժումով կամաց մը բարձրացաւ աթոռէն. ձեռքը դեռ սեղանին՝ չիփ-չիփակ կեցաւ ազան գէմ. և նոյն անսովոր ծանր ու լուրջ խօսուածքովը պատասխանեց.

— Կը կարծե՞ս։ Սակայն գիտե՛ր, որ քու բոլոր չգային կեղծրանութիւդ հետ միասին չա՛տ ճախորդ հոգեբան ես։ Կը կրկնե՛մ քեզի. կ՚ուզե՛ս այս վայրկեանիս ճամբայ ելլենք. կ՚ուզե՛ս մինչեւ Գերմանիա, կ՚ուզե՛ս մինչեւ գժոխք։

Դէմքի, դիրքի ու ձայնի այդ լրջութեան ու վճռականութեան դէմ ազան զարմանքը իր գաղտնիակէտին հասաւ. յանկարծ իր կամքին հակառակ նոր յոյս մը պլպլաց սրտին մէջ. պլպլաց ու իսկոյն մարեցաւ և Հրանտ լեզի ժպիտով մը կցկց.

— Իսկ դերասանուհի՞նդ. երեւի այսօր ան՛էնն ես մոռցեր։

— Թո՛ղ.— բացականչեց աղջիկը ակռաներուն մէջէն։

Ու մինչեւ հիմա զսպած զգացումներուն ու ձայնին մէկէն ազատ

ընթացք առնով՝ առաջ նետուելուս, դէմքը հրահրած, բուռն չարժամներով ու խօսուածքը մոլեգնած.

— Դերասա՛ն, դերասա՛ն, ո՛ր կողմը գառնամ միևնոյն բառը ներսիս կը նետեն. ուրիշները ամենքը մարդ են, զգացումներ ունին, կ՚ապրին. իսկ ե՛ս միայն դերասան, մի՛չ, ամե՛ն տեղ, ամենքի՛ համար: Ո՞վ ըսաւ. ո՞վ ըսաւ քեզի, որ իմ մէջս բնութիւնը մեռեր է, որ արուեստն է միայն մէջս, որ այդ արուեստին ամե՛ն բան զոհեմ պիտի. ա՛, արուեստ: Արդէն պէտք եղածէն աւելիս ես զոհած եմ անոր. իմ երիտասարդութի՛ւնս, իմ թարմ երիտասարդութիւնս. և փոխարէնը ի՞նչ է տուած ան ինծի:

Դողդողացող լանջովը խոր չունչ մը առաւ:

— Լսէ՛. չուտով քանդուիմ տարեկան կը գառնամ և մինչեւ հիմա ես չեմ գիտցած թէ ի՞նչ բան է սէրը. թէեւ բեմին վրայ չարաւնակ նո՛յն զգացումն է, որ ներկայացուցած եմ ուրիշներու քեզին համար. ուրիշնե՛ր, մի՛չ ուրիշներու. իսկ ինքզինքիդ, քու սիփական պահանջներուդ համա՞ր ոչի՛նչ: Դուն չե՞ս կրնար երազել անգամ, թէ ի՛նչ հրայրք, ի՛նչ ծարաւ ունիմ սիրուելու. մինչ չըլսպատահներս կա՛մ ապուշ հաճոյախօսութիւններ են չսայլած ինծի, կա՛մ լկտի նայուածքներ քուլիսներուն ետեւը, պատահական դէմքի մէջ: Չէ՞ որ դերասանուհի եմ. հաճոյքի, զուարճութեան առարկա՛յ մը. խաղալի՛ք մը՝ բեմին վրայ բոլորին համար, բեմին ետեւը մեկնելու մտնելուընելու: Յո՛ւ այդ գայլելի դէմքերը, այդ հայրսատնայուածքները. ան ի՛նչ տեսակ սէր են առաջարկած ինծի, ի՛նչ տեսակ սիրով են հալածած ետեւէս փղոցէ փղոց բառիս բուն նշանակութեամբ:

Ու զգուանքի ծամածռութիւն մը դէմքին՝ գազար առաւ նորէն չնչառութիւնը կանոնաւորելու:

— Հրա՛շտ, ես ապրի՛լ կ՚ուզեմ. ապրի՛լ քիչ մըն ալ ինծի համար, ապրի՛լ իմ անձնացած յուզումներուս: Մա՛կ ըրէ. գեռ ո՛չ մեկ տղայ չէ մտածած ինծի քու զգացումներուդ այդ մաքրութեամբը, քու մտածման եղանակիդ այդ ազնուութեամբը, ուժովը. ես ո՛չ մեկ տղու դեմ չեմ զգացած, ինչ որ հիմա ինծի դէպի քեզի կը հրէ: Ի՞նչ կարիք կայ քաշքշուելու. գիտե՛ր, դիչերները երբեմն ամբողջ ժամերով քու համբոյրդ եմ անընդհատ մխայի. ալ հերի՛ք է որչափ ինքս իմ հակումներս կոտրել ջանացի. ալ չե՛մ ուզեր դիմադրել. ո՛չ. ալ յոգնեցայ. և ինչո՞ւ, որո՞ւ համար: Հրա՛շտ, ա՛ռ քաշէ՛, առ՛ր ինծի ուր որ կ՚ուզես, ըրէ՛ ինծի հետ ինչ որ կ՚ուզես. ես ապրի՛լ կ՚ուզեմ. ես կ՚ուզեմ սիրուի՛մ. սիրուիմ քու ամբո՛ղջ սրտովդ, երիտասարդի քու բոլո՛ր կրքերովդ: Ա՛ռ, քաշէ՛, առ՛ր ինծի, քու սիրասի՛դ, քու սարո՛ւկդ, կի՛նդ...

— Ի՞նչ կը կաւըտիք նորէն իրարու հետ.— լսուեցաւ դուրսէն մօտեցող սիկնոջ ձայնը, որ գանակի պէս Մինէի թոքը կարեց ու Հրանտի յափշտակուած կաչկանդումը:

— Հերի՛ք լեզուի տուիք. քալեցէ՛ք վար, մայրիկը պոռալ է չակեր ձեզի.— ուսկյուց կինը սենեակի սեմին վրայ կանգ առնելով։

— Ի՞նչ, ո՞վ.— հարցուց ազջիկը ցրտած։

Ու չառագաղնած գէմքը չփելէն վերջը կտրած ճայռով մը կցնց։

— Ա՛խ, ո՛չ. ես երթամ պլտի. գործ ունիմ, չեմ կրնար։

— Ձէ ի՞նչ.— բացականչեց կինը։— Աս ի՞նչ գալս էր, ի՞նչ երթալ. քալեցէ՛ք վար։

— Ինծի քիչ մը սեղ ճամբու կը դնե՞ս. գարձաւ Մինէ երիտասարդին։

— Մէյ մը գուրս նայէ, ազջի՛կ, ի՞նչպէս խաւարիր է. ուր որ է հիմա անձրևը կ'ըսկսի.— առարկեց աիկինը։

— Ոչի՛նչ. Հրանդը ինծի կառք մը կը ճարէ։

— Է՛, գուն խենթ ես.— ըրաւ կինը ձեռքի յուսահատ չարժուճավ մը։

— Խենթ էի՛.— չհաւանց ազջիկը։

Ճանապարհը կը ձգուէր հոս ու հոն ցանցրնած ամարանոցներու պոյդ չարքի մը մէջէն, որոնց կը յաջորդէր յաճախ պարտէզի մը երկար կիսափակ պատը կամ ընդարձակ խոպան տարածութիւն մը, որ գալիք չէնքերու սեղը մը փառէր։

Երկինքը սևցած էր բոլորովին. կապարէ ամպերը վար էին կախուեր՝ կովի հակայ ծիծերուն պէս՝ կաթկըթելու սպառնալիքով. հովը հարաւէն կատաղի կը փչէր, որուն գէմ պարտէզի պատէն փոշոտ կախուած ծառերը իրենց գլուխները կ'երերցընէին յուսահատօրէն։ Արդէն սակաւաթիւ անցուդարձը դադրեր էր բոլորովին։ Ու այդ մթնակութեան մէջ Մինէ ու Հրանդ թևթևի կը քալէին արագ։ Հովը կը փչէր եռանուն, ու սկամայ քայլերնին աւելի կ'արագացընէր։

Աղջկայ գլխարկը հովէն պատապարելու համար՝ Հրանդ բացեր էր հովանոցը իրենց ուսին, որուն տակ երկուքը հնար եղածին չափ իրարու սեղմըւած, կուրծ կուրծքի, գէմք գէմքի, ոտքի ոտքն չափուելը կը յուսալնանային։

Կըցխտուր, խռնտուկ, տաք, իրար քնդհատող, իրարու հիւսուող փըսփսուք մը հովանոցի խաւարտուտ փոռին մէջ, որ մէջընդմէջ համբոյրի մը խորհրդաւոր լռութեամբը կը մթնակիսուէր։

Այդպէս ալ գուէջ, առանց աչինչ նչմարելու, սեղ հասնէին իրենց յափշտակութեան, հովի թափին ու հովանոցին տակ, ևթէ յանկարծ փոթորիկը անսանձ չունչով մը գետնի ամբողջ աւազն ու փոշին օգը չհանէր։ Պահ մը սպիտակացան կենալու՝ կարելիին չափ հովանոցին հետը պաշտպանուիլ փորձելով ու ոտքերնին պինդ գետնին դնել առաջ։ Հովանոցին ճառագայթները կոտրտեր էին փրթիլու աստիճան։

— Ալ չարաչարկել անկարելի է.— նկատեց ոտան։— Փաչայի

պարտէզին քովը կառքեր կ'ըլլան կեցած սովորաբար. քալէ՛ քիչ մը աւելի արագ. հիմա կը հասնինք:

Ու թեթև մը գրկած ընկերուհիին մէջքէն՝ սկսաւ վազել հովի հրամին տակ, փոշիի ամպի մը ետևէն, որ անոնց առջևը ճամբան կ'աւլէր:

Տզան սխալած չէր. երկու կառք կար հոն կեցած՝ խոչոր ընկերակցութիւնի թաւ ճիւղերուն տակ պատսպարուած սպասնացող անձրևէն:

Երբ զոյգը այն կողմ ուղղուեցաւ՝ առջևի կառապանը սանձերը վերցուցած էր արդէն:

Հրանտ խոհոյն բացաւ կառքի դռնակը, օգնեց աղջկան նստելու ինքն ալ մէկ ոտքը կառքի ելակին՝ ծռեցաւ ներս:

— Վազը առաւ իսկապէս կ'ըսպասեմ քեզի.— նկատեց Մինէ տղու ձեռքը իր երկու ափին մէջ առնելով:

Համբուրուեցան:

— Դէ՛, ա լ այս գիշեր համբոյրս անրջելու պէտք չունիս.— խնդաց տղան:

Աղջիկը փոխանակ պատասխանի թաթը ծեփեց անոր բերնին. ու հոգատար չնչոտով մը կցեց.

— Դուն ալ մխա կառքը վերցուր. բաւական ճամբայ ունիս:

— Է՛, ինծի կ՛ուզը ինչ.— բացականչեց Հրանտ ձեռքի ուժգին ու բաղդատուր չարժումով մը:

Ամուր մը գոցեց կառքին դռնակը. ու առոյգ ու զուարթ ձայնով մը պոռաց կառապանին:

— Հա՛յտէ, չո՛ւտ:

Մինէ հազիւ կրցաւ օդէ համբոյր մըն ալ ձօնել ապակիին ետևէն, որ ձիերը չափ առնին:

Դանդաղ հովի գալարումներէն ու առնուելէն ապահով, անիւներու դղրդումէն խուլցած ու զապտակի անընդհատ ցընցումներուն մէջ օրօրուն, Մինէ ինկեր էր թոյլ մը անկիւնը, աչքերը գոց, հեշտանքի անծիր ազդման մը տակ: Իրմէ կը թուէր թէ կտրուած էր գետնէն ու վերը օդի ու ամպերու տարածութեան մէջէն կը սլանար. մինա՛կ ու երջանի՛կ. մինակ իր զգացումներուն հետ, իր վազած սրտին ու Հրանտի համբոյրներուն, որոնք իր չրթունքներուն վրայ դեռ կ'այբէին...

ԺԱ

— Արդէն վերադարձա՞ր.— բացականչեց որբևայրին, երբ աղջիկը կառքէն դուրս ցատքելով՝ ոտքը սեմէն ներս դրաւ:

— Փոթորիկը որ սկսաւ՝ ուշ մնալ չուզեցի. մէ՛կ ալ փոթորիկին հետ թաչիլը, ա՜, հիմնական է. մարդ կարծես թէ կ՚ուռնէ. չատոնց է որ այդպէս աքանչելի հով ու ազմուկ եղած չուներ։

— Արդէն քու ո՞ր բանդիդ մարդու խելքը կը հասնի. հովին քաքանչելին ո՞րն է. այս գժոխքի իրարանցումին աքանչելին էր պակաս. ննջասրանիդ պատուհանն ալ բաց ես ձգեր, գարկաւ ապակին ու կոտրեց. գիշերը բացը պառկէ՛, որ հասկընաս փոթորիկի աքանչելին։

— Ննջասրանի՞ս, իրա՞ւ.— բացականչեց ազջիկը, կարծես ալ ուրախանալով։— Աւելի ազէկ. և ձի՛չդ ժամանակին։

— Գնա՛, քեզի հետ խօսիլ կարելի չէ.— դժգոհեցաւ մօրաքոյրը դէմքը ցասկոտ անդին դարձընելով։

Մինէ բարձր սկսաւ խնդալ, յարձակուեցաւ կնոջ վրան, երկու ձեռքով կախուեցաւ անոր ուսերէն հծծելով.

— Մօրաքո՛յր, ձեր ննջասրանն ալ օգանցք մը բանալ տուր հոն. այդպէս ազէկ է. թո՛րմ, թո՛րմ օդ. նո՛ր, կը հասկընա՞ս, նո՛ր։

— Է՜հ.— բրաւ կինը արտունչի չնչաւով ու Մինէի ձեռքերը ուսերէն վար թօթուելով։— Դուն ինծի ան ըսէ՝ ի՞նչպէս են քոյրս, մայրիկը։

— Ազէկ են, ամենքն ալ չատ ազէկ. ի՞նչ հարցընելու բան է։

— Իսկ սերկեւիլներուն համար ի՞նչ ըսաւ։

— Ի՞նչ սերկեւիլ. հա՛ա, հարցընելու ժամանակ չեղաւ։

— Է՜հ, բանի պէտք չես։ ժամանակ չէ եղեր. այօքան ատեն է՝ աչք-կապո՞ւկ խաղացիր։

Ու գժգոհ մտաւ քովի սենեակը։

«Աչք-կապո՞ւկ խաղացիր»։

Մօրաքրոջը այս անտեղի արտայայտութիւնը Մինէին չատ ծիծաղելի եկաւ. չրմունքներուն մէջէն քանի մը հեղ կրկնելով՝ եկաւ իր սենեակը։

Իր սենեակը առաջին աչքին ինկածը փոչոտած արուեստական ծաղիկներու խոշոր զամբիւղ մը եղաւ, որ վերջին ներկայացմանն էր նըւէր ստացեր։

Վրան տարօրինակ տպաւորութիւն մը ըրաւ այդ կէսը թափթըփած, չորցած, թուղթերը գունաթափիլ սկսած զարդը, որ առհասարակ հաղիւ իր ուշքը կը գրաւէր ուրիշ ատեն։

«Անցեալի մը ուրուականը». մտածեց ժպտելով։

Ու հայելիին դէմը անցած անիոյթ չարժուձայ մը սկսաւ գլխարկը կը հանել։ Միայն կամքին հակառակ քանի մը անգամ սիրտ ուներ հայելիին մէջ հայեացքը զամբիւղին անկիւնը ուղղելու. տեսակ մը դողումի, որ կարծես մարդ չտեսնէ։

Վերջը յանկարծ կրունկին վրայ դարձաւ, մօտեցաւ գրասեղանին, որուն վրայ խառն ինկած էին իր գիրերը պարունակող քանի

մը տեսարանները, Թատրոնական մէկ-երկու ամսագիր ու դէզ մը լուսանկարներ, գլխաւորապէս հաչակաւոր դերասանուհիներու։ Նայեցաւ պահ մը, մտաին ծայրովը քանի մը հատը չարժեց զգուշ. ու անշարժ մնաց աչքերը իր տետրակներուն։

Նախ տարտամ անհանգստութիւն մը եկաւ վրան, վերջը սենեակը խորթ թըւեցաւ իրեն ու անտանելի. կահ-կարասին, գո՛րգը՝ սեղանը։ Ու այդ ամենը աչքին հեռացընելու համար՝ մօտեցաւ պատուհանին, բացաւ դուռը դիտել։

Պատուհանէն չեզոքի կ'երեւար ծովը, որ հիմա զայրոյթէն գունաթափ մարդու մը պէս գիշեր էր, ու դէմքին բոլոր մկաններովը կը ցընցըւէր ամբողջ ընդարձակ տարածութեան վրայ։

Աչքերը անթարթ չորի այդ չզուտ կծկումներուն յառած՝ կը մտածէր։ Ու իր յիշողութեան մէջէն արագ կը վազէին այդ տետրակներուն ու զամբիւղին կապուած տետրաններ, խօսքեր, բնմ, քուէյա, ընկերներու դէմքեր. ցիր-ցան ու ոտոստուն։

Աղջիկը բոլորովին տխրեցաւ, դէմքին կնդգանութիւնը թուաւ վերջնականապէս, ճակատը փակցաւ ապակիին ու աչքերը գոցուեցան։

«Չմտածել, չմտածել, մինչեւ կամաց-կամաց վարժըւիմ»։ փսիքսաց լսելի ձայնով, չակըռեցաւ, գնաց եկաւ սենեակին մէջ մէկ-երկու անգամ ու վճռեց բանալ մը ինքզինքը զբաղեցընէ։

Սենեակը արդէն մթնած էր ու հովը դուրսը կ'ազմըկէր։ Վառեց ճրագը, գրասեղանին առջեւը անցաւ. տետրակ, դիրք ու նկարներ աեղադոտ չարժուձով մը ժողվեց լեցուց անդին սեղանին միւս ծայրը. բացաւ վէպ մը, գտաւ իր նշան դրած տեղը, բայց կարդալ չկրցաւ. գիրքն ալ նետեց ու քաշեց սեղանին գզրոցը, սկաւ հոն թափուած հին նամականիները քրքրել. տխիկա զբաղեցուց։

Սակայն հազիւ քանի մը հատը արագ ու թեթեւ աչքէ էր անցուցեր, որ մէկուն վրայ կանգ առաւ լուրջ։ Թիֆլիսէն էր ընկերուհիէ մը, որ իրեւ սիրոյ երկու-երեք անգամ նոյնպէս եղած էր բնմի վրայ։

Ալ ու ձախ ամեն տեսակ նիւթերու մէջ խառն կը գրէր, թէ հիմա ինքն ալ որոշած է լրջօրէն գործին հետեւիլ և յոյս ունի տեսանպէս միանալու նոր խմբին, որ քանի մը աչքի խյնոզ գերասաններ կազմելու վրայ էին։ Ու երկար-բարակ կը պատմէր, թէ ինչպէս մէկ-երկու հարուստ երիտասարդներ արամադիր էին գրամագլուխ մը դնել իրեւ ֆոնտ, և թէ այս անգամ գործը հաւանօրէն քալելու էր. տղէն կը մտածէին նոր ւեպերտուարի, բեմային արհեստափոխականի նորմուծութիւններու մասին. նոյնպէս չանգեր կ'ընէին քիչ շատ յոյսերի գերասանական ուժերը մթացընելու. և ինչպէս ինքը լսած էր՝ հրաւիրելու էին և Մինէն։

Նամակը վերջացած էր չատոնց, բայց ան դեռ մինչ թուղթը ձեռքին, աչքերը վերջին տպիսուն նայած էր խորասուզուած. կ'ը-

ձևս կը կարգար դեռ. սակայն իրօք ո՛չ կը կարդար, ո՛չ ալ նոյն իսկ կը մտածէր։ Ճմլող, քարէ զգացում մը կրծքին վրայ, անդարձ կորուստի մը բուռի գիտակցութիւնը գլխուն մէջ՝ արձանացեր էր։

Հովը ուժգին թափով մը զարկաւ յանկարծ. պատուհաններուն, ապակիները սարսռացին ու հնոյ ձայներու ամբողջ վոհմակ մը չրջանակի ճեղքերէն ներս սուլեց։

Մինէ սթափեցաւ կաչկանդումէն, թևերը քիչ մը բարձրացուց, ու ծխամգի նմանող վայրի ձայնով մը։

— Մախեցի՛, արուհաս ծախեցի.— ձըւած ակռաներուն մէջէն ու ձեռքի նամակին հետ միասին գէմքին վրայ իյնալու սկզբան։

Ակընթա՛րթ մը։

Խոհէն ցատկեց տաքի, նամակը նետեց գըրոցը, կզպեց. հագուստին գարակէն դուրս քաշեց հաւըլաքը, հագաւ արագ ու մինչև ոտքերը հասնող կոճակներու մինչև վերջինը կոճկելով՝ վար իջաւ սանդուղքներէն։

Ցատկեց մօրաքրոջը, որ մինչև ընթրիք նորէն կը վերադառնայ. քապիւչոնը անցուց գլուխը ու նետուեցաւ փողոց ուժգին հովին մէջ՝ գէպի ընկերուհիին տունը։

«Պէտք չէ մտածել, պէտք է մոռնա՛լ. այդ բոլորը մէկ անգամ ընդմիշտ գլխէն դուրս վանելու է. մէկ անգամ ընդմիշտ»։

Դուռը բացողը Արուսեակի մայրն էր։

— Դո՞ւն ես։ Այ ի՜նչ անսանելի հով. չո՜ւտ գոցէ դուռը։ Եկո՛ւր նայէ՛ նեռը սըրիչ հիւր ալ կայ.— ըսաւ կինը ու նորեկը առաջնորդեց փողոցի գրան կից փոքրիկ սենեակը, ուր Արուսեակ ապատղաւ կան դիւրքով դէպի մուտքը կը նայէր. մինչ անոր դէմը՝ լամպը կըրող սեղանին մօտիկ՝ նստած էր Գրիգորիկ ծանկերուն դրած գրքի մը հետ խազալով։

— Վա՞յ, դուք նորէն հոս էք.— հարցուց Մինէ տեսակ մը չհաւատալ կատակով։

— Շոգենաւէն կը դառնայի, օրիորդը պատուհանը գոցելու վրայ էր, դուրսն ալ գարշելի հով, հանդիպեցայ վայրկեան մը.— կարկըտից ազան՝ ձեռքը անոր մկրնտելով։

— Գարշելի հովը, իմարիկ. բոլոր յանցանքը անորն է,— վրայ բերաւ Մինէ ծիծաղելի լրջութեամբ մը ու քապիւչոնը գլխէն ուսերուն ձգելով։— Այդ գարշելի հովին ձեռքէն արդէն անկարելի է այս ծովափէն հանգիստ անցնիլը. ամէն բան տակըռնուվրայ կ՚ընէ՝ հապ՛ուստ, մազեր և ըստ երևոյթին նաև սրտեր...

— Բազդակից մարդիկ իրար կը փընռատեն, զարմանալու ինչ կայ.— յարեց Արուսեակ՝ մեկամազձոտ յոգնած անփութութեամբ մը բազկաթոռին մէջ տեղաւորուելով։— Անդադար ու ճամբէն չհեղած կեանք մը իմս, այդ տեսակ գծէն ելած կեանք մըն ալ պարան գըբի-

գորիկինը. արդէն ճիշդ այդ մասին կը խօսէինք, երբ դուռը զարկիր։

— Ուրիշ խօսքով՝ ձեզի խանդարեցի.— ժպտացաւ Մինէ՝ վերջին բառը բուն ազգային չարամտութեամբ մը ընդգծելով։

— Բնա՛ւ։

— Սակայն կը հետաքրքրուէի դիտելու՝ սա ի՞նչպէս է, որ պարոն Գրիգորիկի կեանքն ալ այդպէս յանկարծ «գծեն եղած» է դարձեր։ «Քու գծէն եղած» կեանքիդ պատմութիւնը շատ եմ լսեր, բայց պարոն Գրիգորիկինը նորութիւն է ինծի համար։

— Ձեզի համար գուցէ, բայց գժբաղդաբար ո՛չ ինծի համար.— պատասխանեց ինքը ազան վերին ասպիճանի յուսահատ դէմք մը առնելով։

Յետոյ՝ ձեռքի գիրքը քիչ մը այս ու այն կողմը դարձուց ծունկերուն վրայ ու վշտաբեկ ձայնով մը աւելցուց.

— Է՛, օրիո՛րդ Մինէ, դուք դեռ էք ձեր կեանքի շիտակ ուղին ու հաստատ քայլերով առաջ կ'երթանք. դուք ի՞նչ գիտէք հոգեկան վարանումի, ներքին ինքնիրմէ դժգոհութեան խաչանգիչ զգացումները. դեռ աւելին. ուղղակի զաւեճանութիւնը դէպի իր եսը, դէպի իր ուժերը՝ իր տաղանդը։ Մարդ զգայ, որ ինքը ձիրք ունի ու չընորհք, որ առեղծուած է գեղարուեստներու պաշտամունքին համար և տեսնէ, թէ ինչպէս իր կամքին հակառակ կ'անցնին օրերը ապարդիւն կեանքի չնչին գործերուն մէջ. ուժերը կը մնան առանց գործադրութեան և աստուածային կայծը, որ հոգիիդ խորքը կը պլպլայ, չի' արծարծեր ոչ մէկուն զգացումները. և ներչնչմանդ մաքերը, որ մթնշաղի առանձին վայրկեաններուն հոգիիդ եթերին մէջէն կը գիտակնի, անդառնալի ու անհետ կը կորչին անօգուտ. անօգուտ մարդկութեան համար, յառաջդիմութեան համար անօգուտ, անօգուտ ապագային համար։

Ու ընդոստ չարժումով մը գիրքը դրաւ սեղանին՝ չարունակելով դառնասիրտ.

— Դուք կրնա՞ք ըմբռնել այն անտանելի կեանքը, որ ես կը վարեմ։ Մտածեցէ՛ք անգամ մը. ամբողջ օրը փոշոտ, տաք ու նեղ գրասենեակին մէջ, անվերջ հաչեւտարկութեան վրայ կըքած. թըւանշանները, յաւիտենական թըւանշաններ, որոնք հոգիիդ ոչինչ չեն խօսիր. մինչ միտքդ իր ամբողջ թարմութեամբը, իր բովանդակ բանաստեղծական գերագրգռութեամբը բա'ց կը ձգտի՝ մարդագետնի առուակներուն անդադրում վէմերը վճռելու, անտառներու չըշխենին մէջէն թռչունին սրտին գաղտնիքները կարդալու։ Հաշուապահ մը, որ բթացած ուղեղով ամեն իրիկուն տուն կը դառնայ, հոն աւելի ազատ գիտակցելու համար, որ իր պահի վսեմ կոչումէն օր մըն ալ կորսնցուց անդարձ։

Մինէ՝ ինքն ալ չգիտեր ինչու՝ սկսաւ սրտնեղիլ։

— Ձմարիա դեռ չհասկըցայ՝ ինչո՞ւ համար է այդ բոլոր տանջանքը. ապէ՛կ, ինչո՞ւ ուրեմն չէք հետևիր ձեր «պոէտի վանմ կոչումին», ինչպէս որ կ՚ըսէք։

— Արգելքներ, անվերջ արգելքներ, ազնի՛ւ օրիորդ, որոնք մեր անճոռնի իրականութեան մէջ տաղանդներուն առջև պատնէշ կը գտչեն։

— Պարա՛պ խօսքեր. տաղանդը իր ճամբան կը բանայ. իսկական ուժը պատնէշներ չի ճանչնար, բարեկա՛մ. տաղանդի դէմ արգելք չկայ.— բացականչեց Մինէ ինքն ալ տաքնալով։

— Ա՛խ, օրիո՛րդ, կան, գժբազդաբար տաղանդի համար ալ արգելքներ կան.— հծծեց տղան մելամաղձոտ գլուխը երերցընելով։

Մինէի կռնակն ի վար կարծես յանկարծ պաղ ջուր լեցուցին, ցընցըւեցաւ ու չրթունքը խածած՝ աչքերը ձգեց գետին։

Անդրադարձեր էր իր վիճակին վրայ։

Այդ տղան իրաւունք ունէր. արգելքներ կային։ Չէ՞ որ ինքն ալ հիմա իր արուեստի վաճառանոցէն կու գար։

«վաճառանոցէ՛ն...»

— Այսինքն գոնէ ընդհանրապէս առած.— չարունակեց երիտասարդը նոյն կտրուած չեչռովը։— Բացառիկ ուժեր կան իհարկէ, բացառիկ ընդունակութիւններ, որոնք անխափան ամէն բան առաջ տալ կրնան իրենց կոչումին ծառայելու համար. բայց տիկա ամէն մարդու բան չէ, ամէն տաղանդի ալ բան չէ։ Ես կը հասկընամ ձեզի. դուք ինքզինքնիդ աչքի առակ ունիք, երբ այդպէս վստահօրէն՝ արուեստը արգելք չի ճանչնար կ՚ըսէք. բայց դուք, օրիո՛րդ, հազուագիւտներէն էք, մի՛ մոռնաք։

— Իմ մասին չխօսինք.— ընդհատեց աղջիկը կոչում։

— Մի՛ վրդովիք. ես ձեր այդ հպարտ համեստութիւնը անչուշտ վիրաւորել չեմ ցանկար. սակայն և անկարող եմ չկրկնելու, որ դուք արդէն միշտ իմ զարմանքիս ու հիացումիս առարկան էք եղած. ձեր արուեստը, ձեր հոգեկան ուժը, կամքը, ես իրրև չնաչխարհիկ եւ բևեռքի մը կը նկատեմ, որուն առջև մարդ ակամայ խոնարհի պիտի։

Մինէ ծնօտները սեղմած՝ ձեռքի դժգոհ ու զայրացկոտ չարժումմը ըրաւ. երիտասարդը սոխուեցաւ իր ներբոդը ընդհատելու. ժըպտեցաւ ու կցկց.

— Իսկ սովորական մահկանացուներս թոյլ էակներ ենք. կեանքի մանր պէտքերուն ու ընտանեկան կապերուն տակը ա՛լ աւելի չզիջուած։ կեանքի հոսանքը ուժով է. տնային պէտքեր, հոգեր, քոյր, մայր կը կաչկանդեն, կը խեղդեն տաղանդն ալ, արուեստն ալ։ Մարդ նախ դիմադրել կը մաածէ, վերջը կ՚ըսահիպոէի քիչ մը տեղի տալու։ Մէյ մըն ալ կը տեսնես ինկեր ես հոսանքին ճիշդ մէջտեղը, որ իր ահագոռոյն ալիքներուն վրայ վար կը քշէ քեզի ալ միւս հազարաւորներուն հետ, միւս հազարաւորներուն պէս։

Եւ աթոռին վրայ չակըռելով՝ փոխուած ու կատակող չեչոով մը ասլլցուց խակոյն։

— Բայց, է՛, մարդ ամէն բանի վերջապէս կը վարժըւի, այդպէս ալ հասանքն ի վար. երբ մանուանդ օրիորդ Արուսեակի նման վիճակակցի մը ընկերութիւնը ունի իր հետ. չէ՞, օրի՛որդ։ Օրիորդ Մինէն չի հասկընար, թէ ինչ ըսել է գծեն ելած. բայց դուք ու ես, մենք իրար կը հասկընանք. այնպէս չէ՞։

— Այո՛ դժբազդաբար.— պատասխանեց Արուսեակ կեղծ հառաչանքով մը ու նահատակուհիի մը դէմքը հագնելով։

Ցանկարծ փայլակի աչք ծակող ճերմակ լոյսը ողողեց ակընթարթի մը սենեակը. և յաջորդող խլացուցիչ որոտը տան պատերը դղրդացուց։

— Յիսո՛ւս-Քրիստոս.— բացականչեց Արուսեակ սարսափած։

Մինէ ալ ցընցըւեցաւ։

— Ա՛խ, օրիորդ, խօսքի բռնըւեցանք, իսկ տունը հիմա ինծի կ՚ըսպասեն. չատակեմ քանի անձրեւը չէ սկսեր.— ըսաւ երիտասարդը ոտքի ելլելով։

— Այո՛, այո՛, և՛ս ալ.— կրկնեց Մինէ արագ իր մտածումներուն մէջէն. տեսակ մը ցրտած ու մելամաղձոտ, չարժումներն ալ, խօսուածքն ալ։

Փողոցի դրան ներքը իրարու ձեռք տուին։

Դրիգորիկ կ՚ուզէր ընկերանալ օրիորդին մինչև տուն, բայց աղջիկը բացարձակապէս մերժեց՝ պնդելով որ ինքը այդ փողոցներուն մէջ առանձին երթալու փոյթ չընէր և որ ընդհանրը քանի մը քայլ ալ տեղ է։

Ու սրացաւ դէպի դուրս դէպի ձախ. մինչ տղան ծռեցաւ դէպի աջ, որուն եռևէն հովը իր ամբողջ թոքերովը կը փչէր։ Հազիւ երկու քայլ երեր էր փողոցին մէջ, որ յանկարծ ոտքը դէմ տուաւ գետնին, կեցաւ, զարձաւ ետ ու պոռաց խոր մռնչին մէջ.

— Կը տեսնէ՞ք, օրի՛որդ Մինէ, ինծի հովը ինչպէս կը քշէ. որ կ՚ըսեմ չէք տալատար։ Ես միշտ հովերուն հետ, որոնք ինծի վա՛ր կը հրեն, տա՛ճն, դէպի ընտանիք. իսկ դո՞ւք, դուք միշտ հովերուն հակառակ. հապա՛։

Ու սրախօսութենէն կատարեալ գոհ՝ գլուխը կծկեց օձիկին մէջ ու սկսաւ գլխէ վազել հովի թևին տակ։

Մինէ ծանր կը քալէր. տիպուած էր ծանր քալելու։ Շէնք-չընորհք կռիւ մըն էր Մարմարայի հարաւէն իր վրայ գրոհ տուող օդի վիթխարի հասանքին հետ, որ իր հազարաւոր խառնակիչ ձեռքերը աղջկան հագուստներուն մէջը խրած՝ եռ-եռ կը մղէր։

Մինէ մէկէն հաճոյք զգած այդ վայրագ դիմադրութենէն, սիրտը սկսաւ արագ բաբախել, գլուխը ուելի ծռեց հովին դէմ՝ հարու տալու դիրքով մը ու չունչը հրահրած՝ կրկնակի ուժ տուաւ քայլերուն։

«Հասանքին դէմ, հասանքին դէմ...»։ կը փափաար իրարու գամուած ձնծաններուն մէջէն։

Իրմէն երկու քայլ աջ ծովն էր, որ նայնպէս հովին հետ կռուի բռնուած՝ զայրոյթէն կ'ոռնար, կը գալարէր բոլոր մկաններովը անոր քամյքին չնեղմարկըելու համար ու իր կատաղութեան լորձունքը խոշոր փեռթերով կը նետէր դուրս քարափին վրայ մինչեւ աղջկան ոտքերուն տակ։

Ու վե՛րն ալ մէկը հերստած կը մոլլտար ամպերուն մէջ խո՛ւլ, հեռաւո՛ր ու սպառնալից որոտումով մը։

Ամե՛նքն ալ թաղուած հոծ խաւարին մէջ, որը մեզմիլ չէին կըրնար հոս ու հոն անկըուած լապտերները իրենց փոշոտ ու մրոտ ապակիներուն ետեւէն. և յոյս տալու փոխարէն՝ իրենք կը դողդըղային իրենց թրթըռացող ապակիներովը, երկիւղէն ակռանները իրարու զարնող վախկոտի մը պէս։

Մինէ թևքաւեցաւ ձախ ու իրենց փողոցը մտնել կ'ուզէր, որ հարկադրըուեցաւ պատը բռնելու ու քայլ մը եւս առնելու։ Փողոցէն ու ծովէ քացէն փչող հովի երկու հոսանքները հա՛ա իրարու ձուլուելով անդիմադրելի թափ մը առեր էին, որուն դէմ աղջիկը յանկարծակիի եկաւ։

Իր այդ ակամայ նահանջէն ա՛լ զայրացած՝ սեղմեց բռունցքները կրծքին, կծկեց բոլոր մկանները ու ամբողջ ծանրութեամբը հովի առանձգական լանջին վրայ ինկած՝ փորձեց այդ անկիւնէն անցնելու դէպի դիմացի պատը։

Չկրցաւ։

«Անցնի՛մ պիտի, ես անցնի՛մ պիտի»։ պռատց կատղած, վայրի, յամառ չեչոտով մը հովի դէմքին. ու կամքի գերագոյն ճիգով մը կծկըեցաւ, ուսերի՛ խոնարհեցաւ վար, հրո՛ց, ոտքին մէկը փոխած էր արդէն. քա՛յլ մը, քա՛յլ մըն ալ...

Անցած էր...

ԺԶ

Մազերը խառնակ, անխնամ հագուստով, ձեռքերը մէջքին, անվերջ կ'երթեւեկէր Մինէ փոքր սենեակին երկայնքովը. չո՛րսնակ դուռնէն մինչեւ պարտէզի վրայ նայող բաց պատուհանը, ուրկէ առաջի պայծառ լոյսին հետ առատ ներս կը խուժէին թաց հազէն բարձրացող նուրբ գոլորշին ու անձրեւէն լըւացուած ծաղիկներուն արթնցող բուրումը։

Մինէ կը քալէր չրթունքները պինդ սեղմած, ճակատը կընճռոտ

ու կեզրնացած մտածման մը վրայ։ Ամեն անգամ վա՛րը առնգաւոր զարնելուն՝ կանգ կ՚առնէր չնչարգել ու ականջ կը դնէր լարուած, սարսափէն սրտատրոփ։ Մի՛ գուցէ նկատը Հրանտը ըլլար։ Թէեւ անոնց անհամբերութեամբ մէկուն անոր կ՚ըսպասէր ժամերէ իվեր։

Ամբողջ գիշերը մաքառումի, կչռելու, ինքզինքը համոզելու, ցաւի ու յուսահատ արցունքներու անընդհատ չղթայ մըն էր եղած։ Եւ այդ լեզի առնջանքի երկունքէն ծներ էր վերջապէս առաջուան լոյսին հետ իր հին վճռի անսոդք վաւերացումը միայն, թէ անցեալի ձգտումներէն վերջնօրէն ձեռք վերցընել իր բանը չէ՛ր, թէ իր ու Հրանտի մէջ եղած կապը ոչինչ բաղդատուր բերել չէ՛ր կրնար ո՛չ իրեն, ո՛չ ազգէն. պէտք էր խզել։

Դուռը զարկի՛ն. վա՛րը։ Սարսուռ անցաւ ազջկայ մարմնէն։

Կեցած տեղը արձանի պէս քարացած՝ լսեց, թէ ինչպէս մօրաքոյրը խոհանոցէն գնաց դուռը բացաւ, ճանչցաւ Հրանտի ձայնը, որ հինգ հետ պահ մը խօսքի բռնուեցաւ։ Խօսակցութիւնը կարճեցաւ յանկարծ ու Մինէ որոշեց ազգէն քալուածքը, որ հիմա առնգաւորներէն վեր կ՚ելլէր։

Սիրտը կեցաւ ակընթարթ մը զարնելէ։

— Ո՞ւր ես։ Բարե՛ւ, Մինէ՛. ի՛նչ կ՚ընես հոս։

Հնչեց ազգ զուարթ ձայնը գեռ հագիւ սենեակի սեմին վրայէն. ու թեւերը առաջ մեկնած՝ չտապեց դէպի ազջիկը։

— Կեցի՛ր, կեցի՛ր, մի՛ մօտենար...

Անճանաչ, յուսահատ հնչիւն մըն էր, որ Մինէի չրթունքներէն դուրս թռաւ։

Հրանտ ցնցուեցաւ, կեցաւ ու նոր նկատեց ազջկան գունատ ու այլակերպ դէմքը։

— Մինէ՛, դուն հիւա՞նդ ես. ի՞նչ է պատահեր.— բացականչեց ազգն տարտամ նախազգացումով մը ինքն ալ դողը թռցընելով։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ... ինձի լսէ՛, Հրանտ. երէկ քեզի ինչ որ ըսի, ինչ որ մեր մէջ անցաւ, իտարէկ, գիտե՞ս դուն, վայրկեանի խուսափուկ արամադրութիւն մըն էր միայն. անշուշտ լուրջ կարեւորութիւն չե՞ս տար այդ բոլորին. ատիկա անկարելիութիւն է։

— Մինէ՛... — մէյն կրցաւ արտասանել երիտասարդը, այնքան անսպասելի էր կրած հարուածը։

Իսկ ազջիկը վրայ առաւ իսկոյն՝ ամբողջ մարմնով դողդոջուն.

— Լսէ՛ ու մի՛ գժուարացըներ գործս. չգիտե՛մ, կրնա՞ս երեւակայել, թէ հիմա ինչ կը դառնայ մէջս։ Բայց, է՛, կրնաս թէ ոչ նա՛յն է վերջապէս. այս ամբո՛ղջ, ամբողջ գիշերը խորհեր եմ հոս. խնդրի ամե՛ն կէտը, ամե՛ն կողմը. չկա՛յ, ուրիշ ելք չկա՛յ. և հետաւ նոյն իսկ քու օգտիդ։ Լսէ՛, Հրա՛նտ, եթէ հիմա արեւսաս թողած քու եաեւէդ ալ գամ, ես երբեք արտանց քեզի ներել պիտի չկրնամ.

ու գուցէ քիչ-քիչ պարզապէս յափշտակիչ մը, ընդունակութիւններս բռնաբարող մը դառնաս աչքիս. տեսակ մը բռնաւո՛ր, բռնատա՛ր։ Մինչ գո՛ն, Հրա՛շտ, գուն իմ միակ սէրս ես. ու իմ այդ զգացումս պէտք չէ որ իմոյ ու լռիթի։ Ես կ՚ընտրեմ քեզմէ հեռա՛ւ, մի՛շտ հեռու, բայց սիրտս քեզմով լեցուն ու մաքերս ալ միա՛տ յափշտակուած դէպի քեզի։ կը տեսնո՞ս. պէ՛տք է, որ գուն ինծի հասկընաս. պէտք չէ մեղադրե՛ս ինծի։

Հրաշտ կեցած էր մէկ ձեռքով քովի սիւտին յենած, գլխարկը գետ ձեռքը, տարօրինակ ժպտուն-տխուր դէմքով մը, որ հետզհետէ խոժոռ արտայայտութիւնն մը առնի տալու. աչքերը հաւաքուեցան, չէթուեցան երկու անկիւնները կախուեցան վար. ազնիւ աչքերուն դէմ կարծես տասնեակ մը տարի ծերացուս։

Երբ Մինէ լռեց՝ ազան առանց ոչինչ առարկելու գլուխը քիչ մը տուի բարձրացուց, չոկըեցաւ, դարձաւ եա ու դէպի գո՛ւռը։

— Հրա՛շտ... — պոռաց ազնիկը խելագար ձայնով մը։

Տզան ակամայ կեցաւ ու նայեցաւ եա։

Լո՛ւռ...

Մինէ երկչոտ, դողդոջ ու վարան երկու քայլ մօտ եկաւ։

— Կ՚ուզես այսպէս ձգես ու երթա՞ս. առա՞նց ինծի բառ մը ըսելու։

— Ի՞նչ կ՚ուզես որ ըսեմ.

Լսուեցաւ ազու փոխուած ձայնը էր ու խէթ չնչուով մը, որուն խակոյն կծու երգիծանքը յայտնուեց.

— Դուն արդէն ըսի՛ր պէտք եղածը. գուցէ և պէտք եղածէն աւելին։

Հիւանդ ժպիտ մը եկաւ դէմքը ու կ՚ուզէր ետքէն դէպի գուռը։

— Հրա՛շտ, Հրա՛շտ, սպասէ՛, եթէ ինծի կը սիրես, եթէ ինծի...։

Այսպէս ձգես երթա՞ս. անկարելի՛ է. ես կը խենթենամ։ Սպասէ՛, դուն պէտք է ինծի հասկրնաս, դո՛ւն...։ Ձե՛ռքդ, ձե՛ռքդ տուր ինծի...

Ու անհամարձակ քնքուշութեամբ մը երիտասարդի ձեռքին դպաւ։

— Թո՛ղ, հոգիդ սիրես, այդ դերասանական ձեւերը մէկդի. չընորհքդ պահէ՛ բեմին. ալ ի՞նչ կ՚ուզես ինձմէ։ Մի՛ վախնար՝ դուն չե՛ս խենթենար։

Ու արդէն ձգած եւած էր սենեակէն։

Այդ արհամարհանքը լափաի հարուածի մը պէս իջաւ ազնիկայ ղլխուն։ Շշմած ու անշարժ մնաց իր կեցած տեղը. երկու ձեռքը գետ տաւջ մեկնած՝ բան մը բռնել ուզողի դիրքով, ծնօտը կախուած, դէմքը երկար, բերանը բաց ու աչքերը անխմաստ փայլով մը։

Երբ վարի դրան դռնփնալը լսեց, սոսկալի ցաւ մը ծակեց սիրտը, կաչկանդումը լուծուեցաւ ու մէկ գազափար մը միայն գտաւ գանգին տակ. վազի՛լ, հասնի՛լ ազան եահէն...

Դողացող ձեռքերով, բոլորովին մեքենաբար գլխարկը չառած մաղերուն անցուց ու կրկնոցը ուսերուն նետելով՝ սլացաւ սանդուղքները վար։

— Ո՞ւր այդպէս նորէն խենթի պէս. Հրանտը ինչո՞ւ չի մնաց.— հնչեց խոհանոցէն մօրաքրոջ զարմացած ձայնը, երբ Մինէ արտաքուստ տան դուռը կը բանար։

Աղջիկը ոչի՛նչ լսեց. դոցեց դուռը ուժով մը։

Ո՛չ փողոցի ցեխը, ո՛չ լճացած ջուրերը ոչի՛նչ չնչմարելով՝ աճապարեց դէպի նաւամատոյց, ուր կառքերը կը կենային։ Յաւակեց առաջին հանդիպած դոց կառքին մէջ, որուն դուռը վերէն կառապանը արդէն բացեր էր։

— Շո՛ւտ, չո՛ւտ, արա՛գ.— պոռաց մարդուն կռնակին։

— Ո՞ւր.— հարցուց կառապանը՝ իր նստարանէն դէպի կառքին ներսը ծռիլ ուզելով։

Ո՞ւր...

Եւ իրաւ ո՛ւր. ուր պիտի գանէր ազատ. տո՞ւնը. Մինէ վախցաւ Հրանտի մօրը երեսը նայելու գաղափարէն անգամ. ինչ էր ըսելու անոցինները։ Եւ ի՞նչ պիտի ըսէր վերջապէս ազատ, ի՞նչ կրնար ըսել. ի՞նչ խորհուրդ. չէ՞ որ ալ ամէն բան վերջացած էր, կորա՛ծ, կորըսա՛ծ...

— Բայց ո՞ւր.— կրկնեց կառապանը վերէն արդէն զժգոհ ու անհամբեր։

— Ինչ՛. մէ՛կ է. ո՞ւր որ կ՛ուզես. միայն հեռո՛ւ, հեռո՛ւ, քաղաքէն դո՛ւրս։

Ա՛ս այլեւս հրաման էր. բեկուած, թոյլ ուժասպառ ազաչանք մը միայն։

Կառապանը ձերմերկոտած երկայն պեխերուն տակէն ակամայ ժպտեցաւ, իր բարձունքէն զարկաւ դոցեց կառքին դուռը, կասկածոտ երկմտաբեմքամբ մը չարժեց գլուխը, իր աչխէտ ձիերուն վազաքչանք մը մռընտաց ու սանձերը թոթուեց։

Եւ կառքը սլջ ու ձախ ցեխի անձրեւ մը սրսկելով՝ ծովուն դուրգընթաց վար սրացաւ։

Մինէ անկիւնը ինկած՝ գլխքը թաչկինակին մէջ՝ կու լար։

ԵՍԻ ՄԱՐԴԸ

Թատերակ

Գրուած է Թիֆլիս 1901-ին
Տպուած է Պետերբուրգ «Ծաղիկ»-ի մէջ

ԵՍԻ ՄԱՐԴԸ

Ա Ն Ձ Ե Ր

ՄՈՒՇԵՂ ՏԷՐԵԱՆ. 35-ը անց, խոշոր, թիկնեղ, թուխ. կլոր մօրուք. հաւտու խօսուածք. ծանր շարժումներ:

ՈՐԲԵԽԱՅՐԻՆ՝ քոյրը. 40-ի մօտ, գէր, կարճ. հիւանդոտ:

ԱՐԱՔԻԻ՝ վերջինիս աղջիկը. 20-ի շուրջը. փոքրահասակ. առատ սեւ մազերով. աշխուժ ու եկուն:

ԱԲՐԱՀԱՄ՝ Տէրեաններուն ազգական. կէս-ծեր, ծոյլ ու դանդաղ:

ԿԻՆԸ Աբրահամի. ցամքած ու թափթըփած, բայց երիտասարդ դեռ:

ՍՐԲՈՒՀԻ՝ ասոնց աղջիկը:

ԱՐՄԵՆԱԿ. հասոծն երիտասարդ մը, բուռթ դէմքով. սափրած. երկար ու չոր:

ՍԵԴՐԱԿ ՄԻՆԱՍԵԱՆ. 25-ի մօտ. դէմքը բարի, ինքը նրբակազմ:

ԱԶՆԻՒ՝ քոյրը. նզբօրմէն երեք-չորս տարուէ մեծ. նիհար. երազկոտ աչքեր. մուխ գոյնի հագուստ:

ՄԱՅՐԸ՝ այս երկուքի. ժիր պառաւ մը:

ՄՄԲԱՏ կարճ ու կլոր. մօրուքի մէջ կորած արտայայտիչ դէմք:

ՇԱՀԱՆԵԱՆ. խելացի հայեացքով. սեւուլիկ. թալմ երիտասարդ մը. կարծես միշտ բարկացած:

Անցքի տեղը Պոլիս

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Պարզ սենեակ մը. կահերը համեստ ու կոկ. պատուհանին մօտիկ գրասեղան: Առաու:

Ա

Սեղրակ զբաղուած է գրասեղանին առջեւ: Քիչ մը լուռ: Դուրսէն կը լսուի անորոշ խօսակցութիւն մը, որ կը մօտենայ:

Ս մ բ ա տ — (Մտնելով) *Հը՞ը· բարի լո՛յս:*

Ս ե դ ր ա կ — *Ախ՞ր է· առաուն կանուխ:*

Ս մ բ ա տ — *Ախ՛ր:* (*Անգամ մը դեպի դուռը նայելէն եետը՝ ծոցէն կը հանէ հատակ մը ու կը դնէ տրուճ առջեւը:*)

Ս ե դ ր ա կ — *Ի՞նչ բան է սա:* (*կը բանայ:*)

Ս մ բ ա տ — *Վճի՛ռը:*

Ս ե դ ր ա կ — *Վճի՛ռը: Արդէն պատրաստո՛ւր ես· դիշերը քունդ չատրաւ, երեւի:*

Ս մ բ ա տ— *կը կնքեմ ու կը յանձնեմ:*

Ս ե դ ր ա կ — *Խակո՛յն: Արդէն Շահանը այսօր հոս է գալու:*

Ս մ բ ա տ — *Յիսո՛ն կը կրկնես, որ զգուշ: Աչերդ զոհը չսանձ:*

Ս ե դ ր ա կ — *Շահանը ճարպիկ ոտայ է, իր գործը գիտէ:* (*Նամակը արագ աչքէ անցընելէն վերջը՝ կը բաղուի մտածման մէջ:*)

Ս մ բ ա տ — *Եւ մանաւանդ, տղաւածս: Այսպէս ուրեմն· չուտով հաչիւնիս կը մաքրըւի, պարո՛ն Մուշեղ:*

Ս ե դ ր ա կ — (*Նամակը ծոցին մէջ դնելով*) *Մուշե՛ղը· սա ալ գնաց: Գիտե՞ս, տարօրինակ բան է· երբէք գիշեր ժողովին մէջ խըմպիրը լինձի համար չա՛ս էր պարզ· մտանիչ մը կար մէջտեղը, ա՛ն ալ իր երբեմնի ընկերները մատնող մը, դաւաճան մը· ուրեմն վեր-*

Ջացուռ. մա՛հ. ու ձայնս տուի։

Ս մ բ ա տ — Ձէ՛, արևչտուէթիւն մազթէինք պիտի, որ ոստիկանապետի քիթը մտած ինչեր ըսես ընէ։

Ս ե դ բ ա կ — Բայց դիա՞ս, հիմա՛, երբ պարտականութեան պաշտօնական վերարկուն ուսերուս չկայ, երբ մարդն է, որ մէջս կ'ըզդայ ու կը խօսի, երբ... չատ տարօրինակ է ճշմարիտ։ Ամբողջ դիշերը երկա՛ր, երկա՛ր մտածեր եմ։

Ս մ բ ա տ — (Դիրք մը բռլաւելով՝ անփոյթ) Նոր ծխել սկսողի առաջին սիրախառնուրդը. կը սորվիս՝ կ'անցնի։

Ս ե դ բ ա կ — Ժամանակին մեր ընտանիքները բաւական մօտ են եղած իրարու. այսպէս եօթը-ութը տարի մը կայ. այն ատեն Իւսկիւտար կը բնակէինք։

Ս մ բ ա տ — (Անտարբեր) Հա՞։

Ս ե դ բ ա կ — Անոնց ու մեր տունը, այսպէս, կից էր իրարու։ Վերջը եղաւ դաւաճան գնաց. կ'ըսէին՝ Թուռնտ ազգասէր է. ես ալ դեռ բոլորովին Թարմ, հազիւ տասնըութը տարեկան տղայ մը... (Կը կտրէ խօսքը, պահ մը կը մտածէ ու յանկարծ կը ժպտի՝ դառնութեամբ գլուխը ցրնցնելով։) Եթէ վէպի մէջ ըլլար՝ չհնծռու է պիտի ըսէի։

Ս մ բ ա տ — (Միջոց իր գրիճի նեց. կէս բեռան։) Ա՛ա ի՞նչը։

Ս ե դ բ ա կ — Իմ առաջի՛ն, պատանեկան սէրս անոր քրոջ աղջիկն է եղած։ Ես հիմա, երբ կը մտածեմ, որ պիտի երթար ու գար, ու այդ մարդու մահուան գործը՝ (ճամակը վերցնելով) իմ ձեռքերէս պիտի անցնէր։ Տարօրինակ զգացում է, ճշմարիտ։

Ս մ բ ա տ — (Դիրքը փակելով։) Հոս տարօրինակ ոչինչ չկայ. տասը կ'ըսեն կեանք։ Բարեկա՛մ, հի՛ն, նո՛ր, ընկե՛ր, ոչի՛նչ չհարցնես. կեանքը չհարցըներ, մենք ալ հարցընելու իրաւունք չունինք։

Ս ե դ բ ա կ — Բայց մէջերնիս սիրտ կայ վերջապէս։ Կարելի՞ է չմտածելը

Ս մ բ ա տ — Այս տեսակ գործերու մէջ ո՛չ սիրտն է բանի պէտք ո՛չ ալ այդ քու հին դարմանը հովին տալը։ Կը վարժըի՛ս։ Դէ՛, ցո՛ր։

Ս ը դ բ ա կ — Ազկ. ո՞ւր այդպէս չտապ։

Ս ե դ բ ա կ — Փոսը գործ ունիմ։ (Խուրա։)

ՓԸ

Սեդրակ կը կենայ, կը վերցընէ ծանր շարժումով մը նամակը, կը բռնէ ձեռքը ու կը մնայ անշարժ մտածման մէջ։ Կողմնակի դուռնէն կը մտնէ Ազնիւ ու պահ մը դիտելէն վերջը։

Ա. զ ն ի ւ — Ամբաւը դնա՞ց։

Ս ե դ ր ա կ — Ինչպէ՞ս...

Ա. զ ն ի ւ — Զեռքիդ ինչ բան է։

Ս ե դ ր ա կ — (Աճիւնգիսաց պաճել ջանալով։) Զեռքի՞ս, ոչի՛նչ։ Զի՞ս տեսներ. նամա՛կ։

Ա. զ ն ի ւ — Ի՞նչ տեսակ նամակ է, որ վրան այդպէս կը դողաս։ Ի՞նչ կայ մէջը։

Ս ե դ ր ա կ — Մէ՞ջը... մէջը՝ ոչի՛նչ։ Ոչինչ, ինչպէս կեանքի մէջ ամեն բան, ինչպէս կեանքը ինքը։ Եւ թէև տաիկա ամենքս գիտենք, բայց չէ որ կեանքին վրայ ալ կը դողանք։

Ա. զ ն ի ւ — Այդ նամակին մէջ բան մը կա՛յ, Սեդրա՛կ։

Ս ե դ ր ա կ — կա՛ն ք մը կայ մէջը, կ'ըսեմ քեզի. չի՞ս հաւատար. կեա՛նք մը, ոչնչութիւն մը։ Մէջը... (Աչեամարաճիով նամակը կը ճեռէ գրասեղանիճ աչէր ու կը կպպէ։) Մէ՛ջը, սիրելի՛ս, երես մը թուղթ կայ ու երկու կաթիլ չորցած թանաք. ահա, ճշմարտութիւնը, որ քեզի համար չափազանց հետաքրքիր է, էէ՞։

Ա. զ ն ի ւ — (Քիչ մը լուռ ու տխուր դիտելէճ ետքը։) Սեդրա՛կ, ա՛լ չեմ կրնար համբերիր, քու արհամարանքդ ինծի կ'ըսպաննէ. ալ մինչև հո՛ս, կակո՛րդս է հասեր։

Ս ե դ ր ա կ — (Ապշած։) Ի՞նչ։

Ա. զ ն ի ւ — կարելի է, իրա՛ւ, ես քեզի չեմ կրնար հասկընալ. դուն ուսուցիչական տղայ. չգիտեմ... Միայն ծա՛նր է, չա՛ս ծանր, Սեդրա՛կ։ Գիտես որ իմ միակ ուրախութիւնս դուն ես, իմ միակ ղեկտրութիւնս։ Ես ի՞նչ ունիմ քեզմէ զատ աշխարհիս երեսին։

Ս ե դ ր ա կ — (Կը բռնի ձեռքը, կը գրասեցնի մեղմութեամբ. ու ճիճի ալ մօտը նստելով՝ առաջը ձեռքը բոլնելու։) Ես քեզի ի՞նչ եմ ը-րեր, հոգի՛ս։

Ա. զ ն ի ւ — է՛, քեզի համար ես եղած չեղած, բնաւ կարեւորութիւն չես իսաբ. բոլորովին ուրիշ մէ՛կը, կարծես, օտա՛ր մը։

Ս ե դ ր ա կ — Օտա՞ր. դո՞ւն. ինծի՞ համար։

Ա. զ ն ի ւ — է՛. հապա ի՞նչ։

Ս ե դ ր ա կ — (Մտածկոտ։) Շիտակ է, կան բաներ, որոնց մասին քեզի հետ խօսելէ խոյս եմ տուեր. բայց ի՞նչ արհամարանք, ի՞նչ բան. երեխա՞յ ես։

Ա. զ ն ի ւ — Հապա ինչո՞ւ ուրեմն։

Ս ե դ ր ա կ — Ա՛յնպէս... (Ծամծմելով) գործի խնդիրներ. ամեն բան ըսելը անյարմար է և արժէ՞. ինչո՞ւ իզուր անհանգստութիւն պատճառեմ քեզի։

Ա. զ ն ի ւ — Անհանգստութի՛ւն. գիտէի որ սա պիտի ըսես։ Իսկ այդպէս չատ ազէկ է, հա՞, երբ հետատատ ոչինչ չգիտեմ. ու ի՛նչ խնդիր բաներ ըսես՝ կ'անցնին մտքէս։

Սեդրակ — Ինչ բաներ, օրիորդի համար։

Ազնիւ — Ինծի աչքերս բաց կոյրի տեղ մի դներ։ Ինչ գործ ունիս դուն չարուհանակ այդ Սմբատին հետ. անվերջ, անվերջ լեզուի կռւ տաք. անկէ հաքը այդ գնուհին, այն միւս սև ազան, կռւ գան կ'երթան սուսիկ-փուսիկ. սա ինչ նամակներ են վերջապէս, չարուհանակ կ'ըսատանաս ու կը դրնս։

Սեդրակ — (Նզդալով) Ուրիշ խօսքով՝ վրաս կարգին ատիկատնական հրսկոզութիւն կայ։

Ազնիւ — Զգիտե՛մ. ես անգամ մը վարժուեր եմ քու վրադ իրրև պզտիկ եղբօրս վրայ նայելու, հոգ ընկլու, մտածելու։ Ինչ ընեմ, ուրիշ կերպ չեմ կրնար։

Սեդրակ — Հա՛, քուրի՛կս, իհարկէ։ Միայն իզուր բաներու վրայ սիրտ մի հատցըներ։

Ազնիւ — Է՛, վե՞րջը։ Գիտե՞ս, որ քու ըրածդ կրակի հետ խաղալ ըսել է։

Սեդրակ — Ճ՛իշդ է, չատ զգուշալի չէ խազացած գերեզմնիս. բայց ի՞նչ ընես. ամեն ժողովուրդի վիճակուած չէ անդորր ու բազդաւոր գերեզ խազալը. վտանգաւորներ ալ կան։ Պատմութեան մեզի բերած ու տուած գերը ասիկա է, ի՞նչ կրնանք ընել։ Եւ վերջապէս, սիրելի՛ս, կեանքի հետ խաղալն ալ իր հաճոյքը ունի։ Մեռնիլը մեռնիլ է, այս ձեւով թէ այն, նոյն չէ՞. քիչ մը փիլիսոփայօրէն պէտք է նայիլ գործին։

Ազնիւ — Ա՛խ, Սեդրա՛կ, մի՞թէ ուրիշ ճամբայ չկայ։

Սեդրակ — Ջա՛լ եղիր, դատարկ բան է։ Ամեն բան...

Ազնիւ — Սո՛ւս, մայրիկը։

Մայրը — (Դուրսի ճագուսով, ճակտի դռնիճէն։) Ողորմի Աստուած ձեզի, հեթանոսնա՛ր։

Ազնիւ — Ողորմի Աստուա՛ծ, մայրի՛կ։

Սեդրակ — Ազէ՛կ. կիրակին ըսենք՝ կիրակի է. այսպէս լաւ օրով ի՞նչ գործ ունիս եկեղեցին։

Մայրը — Սո՛ւս, ազա՛յ, գո՞ն ինչ գիտես։ Սուրբ Գէորգին այսօր երկու մոմ վառեցի։ Բազդդ բաց է. սո՛ւս եղիր, սո՛ւս։

Սեդրակ — Ի՞մ բազդս։

Մայրը — Եթէ գիտնաս այս գիշեր ի՞նչ երազ եմ տեսեր վրադ։ Սուրբ Գէո՛րգ թող յաղթէ, սուրբ ձիաւո՛ր, զօրաւո՛ր...

Սեդրակ — Ինչևէ. նորէն ազէկ որ սուրբ Գէորգին ես գո-

ցեր. բոլոր ճնացած լալկան ու բազմաչարչար սուբրիներուն մէջ ամէնա գոնէ մէկ հատիկ էկիկ-մարդն է. մարդու չնորհք կայ վրան. տակը ձի, ձևաքը գէնք.

Մ ա յ ր ը — Մեղա՜յ, մեղա՜յ, ինչե՜ր կը խօսի։

Ս ե ղ բ ա կ — Հապա՛ հապա՛։ (Դիմաւորկը վերցրնելով։) Եթէ Շահանը գալու ըլլայ՝ կ'ըսես որ սպասէ։ Ես խակոյն կը վերադառնամ։

Ա. զ ն ի ւ — Սա ահուլի՞կը։

Ս ե ղ բ ա կ — Հա՛։ (Դուրս։)

Մ ա յ ր ը — (Ներեցեք կարօտով կը ճայի) Շէնքդ-չնորհքդ սիրեմ, զաւա՛կս։ Գուն անոր ըսածներուն չսա ականջ մի՛ դներ. անոր սիրտը ոսկի է։ Երէկ գիշեր, գիտե՞ս, ինչ տեսնամ երազս, Ազնի՛ւ... և ինչպէս ալ ելաւ. անմիջապէ՛ս. մեռնիմ սուբրը գօրաբեանդ. գեռ եկեղեցիէն ոտքս գուրս չէի դրեր, որ հանդիպեցայ Օհաննէս էֆէնտիին. չիփ-չիտակ խօսք բացի. գացի վրան՝ թէ տղաս եկեր է Եւրոպայէն, թէ գուն պէտք է անիկա գոլ գովդ առնես, չնորհքով գործ մը տաս։ Մարդը քիչիկ մը մըտմտած. ըսաւ՝ հոգդ մը՛ներ, բան մը կ'ընենք. Սեդրակը, ըսաւ, աչքը բաց տղայ է։ Գիտե՞ս, Օհաննէս էֆէնտիին գործերը, կ'ըսեն, հիմա չա՛տ ազէկ ևն։

Ա. զ ն ի ւ — (Գլուխը օրեվով։) Լ՜, մա՛յր, եթէ գեռ քիչ մըն ալ Եւրոպա մնար գէշ չէր ըլլար։

Մ ա յ ր ը — Ամա՜ն, ազջիկ. քանի՞ փարա կոչ տամ անոր Եւրոպային. տրլաձն ալ ի՞նչ էր որ. խեղճ-մեղճ բաներ։ Սա՜նկ, չնորհքին գործի մը մառնէ հիմա, ու չուտով ալ առաջ անցնի։ Խաչը իմս է, գօրութիւնը ևս գիտեմ։

Ա. զ ն ի ւ — (Հպարտացած ձեւով։) Հապա, գիտե՛ս... ի հարկէ։

Մ ա յ ր ը — (Որ պատուհանին էր մօտեցած՝ դուրս ճայելով։) Գա՛, մեզի կոչ գայ, Ազնի՛ւ. իրա՛ւ որ մեզի կոչ գայ։

Ա. զ ն ի ւ — (Անցատրեր) Ո՞վ է որ։

Մ ա յ ր ը — Մուշեղը. սա՛ որ կ'ըսեն՝ մասնութիւններ կ'ընէ։

Ա. զ ն ի ւ — (Յանկարծ վեր ցատկելով պրուկն սասկիկ յուզուած) Ո՞վ... (Կը հնչէ դրան զանգը։)

Մ ա յ ր ը — Գա՛, խակոյն ճանչցայ. հիչ չէ փոխուիր. գնա՛, գընա՛, գոչոը բաց. ի՞նչ է տեսիր. որ ելեր եկեր է մեզի։ Գնա՛, բա՛ց։

Ա. զ ն ի ւ — (Յուխ, ցնորք) Ո՛չ, ո՛չ, ես... ես չեմ երթար. ինքէ գնա՛. կեցի՛ր. ըսէ՜... ըսէ՜ տուէնը մարդ չկայ։

Մ ա յ ր ը — Խելո՞ւ ես, ի՞նչ ես. տա տեսակ մարդոց քէֆին դիպչելիը ազէկ չէ. գնա՛, գնա՛ բաց։ (Նորէն կը հնչէ դրան զանգը։)

Ազնիւ — Ո՛չ. ես չեմ երթար։

Մայրը — Քա՛, փախուկ է։ (Վրան ծեկելով՝ մէջի դուռնեն առաջ դուրս)

Ազնիւ — (Զգուշ կը մօտենայ պատուհանին, վարագոյրի եզերքէն կը նայի ցած ու յանկարծ կը ձգէ ու կը փախչի կոպմնակի դռնեն դուրս)

)

ԲԸ

Մայրը — (Ձակտի դրան մէջ՝ խնգալով) Հո՛ս հրամեցէք, ա՛յս կողմ։ Ապիւի սենեակները աւելի զով ըլլալուն, մենք այս կողմը կը նստինք միշտ։ կը ներէ՛ք, քիչ մը տակն ու վրայ է, բայց...

Մուշեղ — Խնդրե՛մ, խնդրե՛մ։ Ուրեմն ինծի ճանչցա՞ք, հա՞։

Մայրը — Հապա՛. տեսած պէս։ Նստեցէ՛ք։ Հասուն մարդիկը քիչ կը փոխուին։

Մուշեղ — Այո՛։ Իսկ պարոն Սեդրակը տունը չէ՞։

Մայրը — Ո՛չ. գուրս ելաւ։

Մուշեղ — Մե՛ղք. հետը քիչ մը խօսելիք ունէի։

Մայրը — կարծեմ չուտով դայ պիտի։

Մուշեղ — Իսկ ինչպէ՞ս է օրիորդը. ա՞ն ալ մինչ հոս չէ։

Մայրը — Ա՛ն... հո՛ս է ան. երեւի վերը։ (Կ'երթայ դէպի կոպմնակի դուռը ու բարձր կը կանչէ) Ազնի՛ւ, Ազնի՛ւ, վա՛ր եկուր, չո՛ւտ, նայէ՛ ով է եկեր։

Մուշեղ — Բայց խնդրե՛մ անհանգիստ չըներէք։

Մայրը — Ա՛խ, ի՛նչ անհանգստութեան բան կայ։ Իսկ Սեդրակիս հետ ի՞նչ բան է ձեր խօսելիքը։

Մուշեղ — Ոչի՛նչ. ա՛յնպէս փոքրիկ տեղեկութիւն մը։ Իսկ դո՞ւք ինչպէս էք. ձեզի հանդիպիլը այնպէս դժուար է հիմա։

Մայրը — Այո՛. այսպէս բոլորովին կարըւեցանք իրարմէ. սա ծով քաղքին մէկ ծայրը մենք ինկանք, մէկալ ծայրն ալ դուք։

ԳԸ

Ազնիւ — (Դոզնոցը հանած է, գուցաւ. դէպի ներս յառաջացայով լուրջ ու կարճ) Բարի՛ էք եկեր։

Մուշեղ — (Որ ապշինկր նեմարելուն պես ոտի եր ելած, բաւականաց ու ետեւ դիտելեն վերջը) Բայց ի՞նչպէս փոխուեր էք, օրիո՛րդ։

Ազնիւ — Արդէն ժամանակ է...

Մ ու շ ե ղ — Ո՛չ. ես ատիկա ըսել չեմ ուզեր։ Դեռ կեանքը ձեր առջեւն է։

Ա. զ ն ի ւ — (Հեգնոտ ժպիտ) Կը կարծէ՞ք։

Մ ու շ ե ղ — Անշո՛ւշտ։ Ու կը ցանկամ բոլոր սրտովս։

Ա. զ ն ի ւ — (Հայեացքը կը ձգէ գետին)։

Մ ու շ ե ղ — (Տեսակ մը հրամայական) Եղէ՛ք բազդաւոր։

Մ ա յ ր ը — Բայց նստեցէ՛ք, ոտքի վրայ մնացիք։ Իսկ նորէն դուբսերը դնալու միտք չունի՞ք։

Մ ու շ ե ղ — Ո՛չ։

Մ ա յ ր ը — Չհաւնեցաք, երեւի, գաւառի կեանքին։

Մ ու շ ե ղ — (Տհաճ) Ի՞նչ կայ հաւնելու կամ չհաւնելու. կեանքը ամեն տեղ ալ նոյն տափակ կեանքն է. ամե՛ն տեղ ալ նո՛յն իրարու ձեռքէ խլելու կռիւը ու նո՛յն յաւիտենական անօթինե՛րը։

Մ ա յ ր ը — Իրա՛ւ է, իրա՛ւ. հիմա ապրուստը չատ է աուղցեր. ուաելիքը՝ կրակի գին. ազքատները որ ըսես...

Է

Սեղրակ կը մտնէ ճակտի դռնէն ու զարմանքի, վախի յանկարծ շարժումով մը կանգ կ'առնէ պահ մը։ Կը նայի իր գրասեղանին ու աւելի հանդարտ ու հարցական կը դառնայ Մուշեղին։

Մ ու շ ե ղ — (Ոտքի) Անշուշտ ինծի չէիք սպասեր։

Ս ե դ ր ա կ — Անկեղծ խօսելով... ո՛չ։

Մ ու շ ե ղ — Կը տեսնէ՞ք. իսկ ես ձեզի յիշեցի. հի՛ն բարեկամներ։ Մէյմէ՞ն աստիճան զարմացաք։

Ս ե դ ր ա կ — Ինչո՞վ կրնամ ձեզի ծառայել։

Մ ու շ ե ղ — (Ժպտուն) Ինծի՞. ոչինչո՛վ։ Կը ցանկայի միայն ձեզի հետ առանձին քանի մը խօ՛սք։

Ս ե դ ր ա կ — Ինդրե՛մ, մայրի՛կ, քիչ մը առանձին թողէ՛ք մեզի։ (Մայրը ու աղջիկ դուրս)։

Ը

Ս ե դ ր ա կ — (Երբ դուռը կը գոցուի) Ինդրե՛մ։

Մ ու շ ե ղ — Այդպէս կ'ըշտապէ՞ք։ Ըսենք, իհարկէ, կան մարդիկ, որոնց հետ երկար խօսիլն անգամ չանցանք է. այնպէս չէ՞։

Սեդրակ — (Բաղախոսար) *Ներեցէ՛ք։ Ես հետաքրքիր եմ միայն ձեր ըսելիքը չուտով գիտնալու։*

Մուշեղ — *Լա՛ւ։ Իմ ըսելիքս... բայց նախ հա՛րց մը. ինչո՞ւ կը պատասխանէք, եթէ կամենաք։*

Սեդրակ — (Բաղախոսար) *Հարցուցէ՛ք։*

Մուշեղ — *Դուք անդա՞մ էք յեղափոխական կազմակերպութեան։*

Սեդրակ — *Դուք ի՞նչ կը կարծէք. կը պատկանի՞մ, թէ ոչ, յեղափոխական կազմակերպութեան։*

Մուշեղ — (Ծպտուն) *Ես ի՞նչ կրնամ գիտնալ։*

Սեդրակ — *Բայց գիտնաք պիտի։ Ես առաջին անգամ ձեր անձին վրայ տեսայ յեղափոխական գործիչ մը և ձեզմէ ու ձեր օրինակէն ուսայ յեղափոխութեան պատկանիլը։*

Մուշեղ — (Խնդալով) *Բայց ատիկա հին պատմութիւն է։ Երիտասարդութեան երազանքներ, երիտասարդութեան փընտռտուք և երիտասարդութեան խարխափում։*

Սեդրակ — *Ես ալ հիմա երիտասարդ մըն եմ, ճիշդ այն տարիքին մէջ, ուր դուք էիք ասկէ 7-8 տարի առաջ։ Մի՛ մեղադրէք, որ ես ալ նուիրուիլ տենչամ, ազատութիւն երազեմ ու հայրենիքի մը համար խարխափիլ, ինչպէս որ կ'ըսէք։*

Մուշեղ — *Ես մեղադրանքի խօսք չըրի։ Եւ չնորհակալ եմ ձեր անկեղծութենէն։ Եւ որպէսզի չմտածէք, թէ պարապ հետաքրքրութիւնն է ինծի հոս բերողը։* (Ծոցի գրպանի բլքեռուն մէջեն ծալած թուղթ մը հանելով՝ կը մեկնի անոր) *Ընդունեցէք, խնդրեմ։*

Սեդրակ — (Առանց առնելու) *Ի՞նչ բան է։*

Մուշեղ — *Դիպուածը այնպէս բերաւ, որ ոստիկանապետին մօտ քանի մը նամակներ իմկան ձեռքս ու այս նամակին մէջ ձեր անունը հանդիպեցաւ աչքիս բաւական վատանդաւոր նախադասութիւնով։* (Թուղթը fառացած Սեդրակի ձեռքը կոխելով) *Դուք ներքև քով։ Ահա՛։* (Թուղթը fառացած Սեդրակի ձեռքը կոխելով) *Դուք իհարկէ լսել անգամ չէք ուզելու, եթէ ըսեմ, որ բոլորովին իզուր տեղը ձեզի փորձանքի մէջ մի՛ ձգէք. բայց գոնէ գրեցէք ձեր ընկերներուն, որ քիչ մը աւելի զգուշ ըլլան. և չսա մի՛ վատահիք Սիրաք Մելքոնեան անունով անձին։*

Սեդրակ — (Ապշած) *Մելքոնեա՞ն... Սիրա՞քը։*

Մուշեղ — *Նամակը չմոռնաք պատռելու ու այս բոլորը, իհարկէ, միայն մե՛ր մէջ։ Դէ՛, ուրեմն մնա՛ք բարով։* (Դուրս)

Սեդրակ կ'ընկերակցի անոր մինչեւ ճակտի դուռը. կը դառնայ. կը կենայ. ծանր-ծանր կը բարձրացընէ ու կը կարդայ թուղթը: Վերջը կը ծալէ ու կը դնէ գրպանը՝ ունքերը կիտած, դէմքը խոժոռ:

Ա զ ն իւ — (Նեռս վազելով՝ ետապ) Ի՞նչ կ'ըսէ, Սեդրա՛կ: Ըսածն ի՞նչ էր:

Ս ե դ ր ա կ — Ոչի՛նչ:

Ա զ ն իւ — (Ձեռքերը կը ծալէ կուրծքին ու ոտքն գետին տոփելով կրճոս ու պահանջկոս) Սեդրա՛կ, ըսի՛ս պիտի ինծի՛ ի՞նչ ըսաւ քեզի այդ մարդը:

Ս ե դ ր ա կ — Ըսածը... չդիտեմ. գիտեմ միայն, որ ինծի անմիջական կապնաւորութեամբ ազատեց:

Ա զ ն իւ — (Սարսափած) Ի՞նչ:

Ս ե դ ր ա կ — Ապուչնի՛ր, ապուչնի՛ր. դեռ մինչեւ հիմա ամենաարբական քանդերը չկրցան սորվիլ. անուններ գրել, այսպէս ամբողջ, ա՛ն ալ այս տեսակի նամակի մը մէջ, ուր երկու տող վերը... Չէ, չեն խրատուիր, պարապ բան է: Եւ ահա՛ նամակը ինկեր է նորէն ոստիկանութեան ձեռքը:

Ա զ ն իւ — Է՛, եաքը՞:

Ս ե դ ր ա կ — Ալ ի՞նչ եաքը. այդ մարդը վերցուցեր է գաղտուկ ու ատեր ինծի է քերեր:

Ա զ ն իւ — (Ուրախութեան բուռն բախում մը) Տեսա՞ք, տեսա՞ք հիմա: Ես գիտէի՛, ես հաստատ գիտէի, որ անիկա այնպէս գէշ մարդ չէր կրնար ըլլար. այնպէս, ինչպէս որ կ'ըսեն: Բայց Աստուած իմ, այս ինչ փոթածքէ ազատեց մեզի: Ապրի՛, ապրի՛. կը տեսնո՞ս, ի՛նչ ոսկի սիրտ ունի եղեր:

Ս ե դ ր ա կ — Բայց մայրիկին բան մը չըսես. կը վախնայ:

Ա զ ն իւ — Ան վարը մայրիկին հետ կատակներ ըրաւ. կ'երեւար որ չատ գոհ է. և դուն ինչո՞ւ միտքին վար չկար մինչեւ դուռը. տիկա քաղաքավարի չէ. և ի՞նչ ըսիր երեն. յայտնիցիր անչուշտ որ երախտապարտ ես և որ իր ըրած այս բարիքը այլեւս երբեք մոռնալու չես:

Ս ե դ ր ա կ — Ինծի հիմա հանգիստ ձգէ՛, Ազնիւ, գլուխս զբաղուած է ուրիշ բանով. գործեր ունիմ վերջացընելիք: Վրաս պարտաւորութիւն ունիմ, որ պէտք է լրացընեմ:

Ա զ ն իւ — Ես քեզի չեմ հակընար: Մարդը քու կեանքդ ազատեց, դուն նաեւ ես ալ պիտի ինչ բանիդրու վրայ կը մտածես: Քու ամենէն մեծ պարտականութիւնդ հիմա այդ մարդն է:

Սեդրակ — (Նեղսիրտ) Հասկցա՛նք։ Զգէ ըսի քեզի՝ այդ մարդը մէկդի։ Ի՞նչ ես կեցեր հոգիիս վրայ։ Զգէ՛ ինծի առանձին։

Ազնիւ — (Վիրաւորուած) Վաղնահղդ աւելորդ է. չնորհակալ եմ։

Սեդրակ — Թո՛ղ, Ազնի՛ւս, մի՛ նեղանար. բայց անհրաժեշտ գործ ունիմ վերջացընելու. հիմա ժամանակ չունիմ իմ մասիս մըտածելու։ Մարդս երբ գործ մըն է յանձն առեր՝ պարտական է կատարելու. ամենէն առաջ պարտաւորութիւնը։ Իմ անձնական խնդիրներս մասին կը մտածեմ ետքը. կը մտածենք միասին ետքը, քիչ մը ետքը։

Ազնիւ — Ազէկ, թող ըլլայ քիչ մը ետքը։ Վերջացո՛ւր գործդ. ատ ի՞նչ նշանաւոր գործ է որ։ Ազէկ, կը խօսինք քիչ մը ետքը։ (Դուրս)։



Սեդրակ — Այո՛, ասիկա վերջը. (Դրպանի ճաւակը սեղանին վրայ դնելով)։ Նախ... նախ այդ միւսը։ (Ուրիշ ճոտի սեղանին առջեւ ու գզրոցին կը նայի ճաւակը վճռագիրը)։ Նախ ասիկա՛։

Կը բանայ, կը դնէ սեղանին, կը հանէ գզրոցէն կնիքը, կը նայի. կը թանաքոտէ ու նորէն ծանր կը դնէ ցած։ Կամաց կ'ելլէ ոտքի, կը վերցընէ միւս նամակը, կը դիտէ մտաւոյզ, կը վերցրնէ եւ վճռագիրը միւս ձեռքովը, ու ծանր ծանր, աչքերը անթարթ կէտի մը յառած, երկու ձեռքերը կ'ըսկսի կշռելի նժարներու պէս շարժելու։ Դադար պահ մը, վճռապէս կը նետէ նամակը մէկ կողմ, կը նստի շտապ արագ կը բանայ նորէն վճռագիրը, կը բարձրացնէ կնիքը թղթին վրայ, իջեցընել կ'ուզէ, որ կէս ճամբին կանգ կ'առնէ. Բարացում։ Դուրսը ռանտածայն. կը կնքէ յանկարծ ուժով, տեսակ մը վախով կը նիքը կը ձգէ բաց գզրոցը, կը կռթէ ու ինքն ալ անմիջապէս սեղանէն ետ կը քաշուի։

Սեդրակ — (Մտճոպին դեմ) Ա՛, Շահա՛ն։

Շահան — Ի՞նչ կայ չկայ։

Սեդրակ — Նա՛, հո՛ն է, վերցո՛ւր։

Շահան — Ի՞նչը։

Սեդրակ — (Մտճոպին կ'ընէ, առանց ինքը այն կողմ նայելու) Հո՛ն, հո՛ն, սեղանին վրայ։

Շ ա հ ա ն — (Թուղթը առագ աչքի անցընելէն ետքը) *Ա՜խ, արդէն… Աս ե՞րբ վճռըւեցաւ։*

Մ ե ղ ր ա կ — *Երէկ գիշե՛ր. ժողո՛վ էր։*

Շ ա հ ա ն — *Լա՛ւ. կը յուսամ, ես ալ երկար սպասցընել չեմ տար։* (Կը դնէ ծոցը)։

Մ ե ղ ր ա կ — *Իսկ հիմա գնա՛։ Հոս այլ ևս ո՛չ մէկ խօսք այդ մասին.* (Խովի սենեակը մտնելիւ կ'ըսէ)։ *Ես ինքս կու գամ իրի-կունը քեզի. պէտք եղածը կը խօսինք։*

Շ ա հ ա ն — *Լա՛ւ։* (Քիչ մը կը մտածէ. մտախոհ ու ծանր կ'ուղղուի դուրս)։

Մ ե ղ ր ա կ — (Կը նետուի բազկաթոռին մէջ եւ կը ծածկէ դէմքը երկու ձեռովք)։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Ծառախիտ պարտէզ: Ձախ տան մուտքը: Ճակատը պատ, վրան փողոց տանող փայտէ դուռ մը: Ոստերով աւելի խիտ է ծածկըւած աջ կողմը, ուր դրուած են փոքր կլոր սեղան մը ու երկու-երեք աթոռ: Սեղանին վրայ ափսէի մը մէջ շիշ մը օղի, գաւաթիկներ ու աղանդեր: Ճիւղերէն կախուած է լապտեր մը:

Ա

Ծառերուն ետեւէն իրիկնադէմի կարմիր ժժգոյն լոյս:

Որբեւայրին կը կարէ կարը խիստ աչքերուն մօտեցուցած: Ծովը աթոռին վրայ կարի պարագաներ: Քիչ մը աւելի առաջօք Մուշեղ ու Սրմանակ նարտ կը խաղան. Աբրահամ նստած կը դիտէ:

Ա բ ր ա հ ա մ — Խաղը գարձաւ:

Ս ր մ ե ն ա կ — Ո՛չ, ո՛չ, ինչո՞ւ: Ա՛յ, միայն թէ մանր չի գայ: (Ազաչելով) Ա՛յ, զարի՛կս, անուշի՛կ զարիկս, ո՛տքդ պագնեմ, զարի՛կս, մանրուք չի գաս: (Կը նեհէ) Թո՛ւ, բաղդ չունիմ որ:

Ա բ ր ա հ ա մ — Դէ՛, ալ խաղիդ խերը տես:

Ս ր մ ե ն ա կ — Ո՛չ: Դեռ ձեռք մըն ալ ունիմ:

Մ ո ւ շ ե ղ — Կը կարծե՞ս: (Զարերը շարժելով հրամայական ու վստահ) Դէ՛, զա՛ր, հայէ նայինք, զո՛յգ մը· գէտե՞ս ա՛, խոչորկեկ: (Կը նեհէ:)

Ա բ ր ա հ ա մ — (Հիացած) Ո՛հ:

Մ ո ւ շ ե ղ — Ապրի՛ս:

Ս ր մ ե ն ա կ — (Ձեռքի խոռերը նաստին մէջը բաւիելով) Է՛, պրաւօ բան է, էֆէնդի՛ս, ձեզի հետ խաղալ չըլլար: (Ոտքի):

Ա յ բ ի ն — Ո՞վ տարաւ, նայինք։

Ա բ մ ե ն ա կ — Իհարկէ, նորէն ձեր եղբայրը։ Զարը որ չի գայ՝ ի՞նչ կրնաս ընել։

Մ ու շ ե ղ — Զարը որ չի գա՛յ։ Ա՛յդպէս որ նախ ազաչես ու պաղատիս՝ իհարկէ որ չի գար։ Զարն ալ մարդոց պէս է. հրամայէ՛ ու կը կատարեն։

Ա բ մ ե ն ա կ — Է՛, հրամանը ի՞նչ ընէ, ինդիւքը ի՞նչ։ Մարդ բաղդ պիտի ունենայ, էֆէնտիս։ Ես արդէն բաղդ չունիմ որ։

Ա բ բ ա հ ա մ — (Որ զբաղուած է օդի լեցրնելով) Բաղդը իհա՛րկէ, բայց բանը եկած գարձն օգտաբեր դիտնալն է։ (կը կոնծէ)։

Մ ու շ ե ղ — (Թերեւ մը Աւմենակի ուսին զարնելով) Մարդուս բաղդը ինքն է, ի՛նքը, բարեկա՛մ։

Ա բ մ ե ն ա կ — Է՛, վերջապէս։ (Մօտը աթոռի մը վրայ դրած թուղթի փաթեթը վերցրնելով) Ուրեմն, էֆէնտի՛ս, վաղը բերեմ ձեր գըբտուճնեակը։

Մ ու շ ե ղ — Այո՛։ Բայց անպատճառ հասցրնես. գետ ուրիշ բաներ ալ ունիմ արտադրել տալու։

Ա բ մ ե ն ա կ — Ինչպէս որ կը հրամայէք, էֆէնտիս։ (Բոլորին) Ձեր խոնարհ ծառան։

Մ ու շ ե ղ — (Գլխով կ'րնէ։)

Ա յ բ ի ն — Երթա՛ք բարով։

(Աւմենակ դուրս պարտէզի դուռնեն)։

ԲԸ

Ա բ բ ա հ ա մ — Խեղճ ազայ է. գլխուն տուած։

Ա յ բ ի ն — Ո՞վ ըսաւ. դուք անոր գլուխը ծռած քալելէն մի խաբուիք։ Ա՛յ, Մուշեղ, խօսքիս նչան դիր դուն. անիկա իր ազաչելովն ու պաղատելովը տես քանի մը տարիէն մինչեւ ուր կը հասնի։ (Կարծ ժպտվելով) Բնչի պէս ցից ըլլալն ալ բան չէ. մարդ խնդրել ալ պիտի գիտնայ։ Մէկ ուրիշը քու տեղդ, այսպէ՛ս փաչային մօտիկ, այսպէս բարեկամ, մինչեւ հիմա արդէն գործերը չտկած կ'ըլլար ու կսկիծ գուշար մը մէկդի դրած։

Մ ու շ ե ղ — Բայց ան տանեն, փոխանակ բարեկամը ըլլալու, կը դառնար անոր ծառան։

Ա յ բ ի ն — Ծառա՛յ։ ինչո՞ւ ծառայ։ Հապա մինչեւ ե՞րբ այդ քու ամօսկան տանըհինգ ոսկիովը։ Փոստաբա՞ն. մինչեւ ե՞րբ։ չուներն չատ են փոստաբաններըը։ Հերիք է փաչային բառ մը ըսես, քիպի համար խոհյն մարդավարի տեղ մը կը ճարէ ու մենք ալ վերջապէս բանի մը կը նմանիք։

Մ ո ւ շ ե ղ — (Ահաւասիկ) *Բանի՛դ գնա՛, բանի՛դ գնա։*

Ա յ ր ի ն (Ուսերը ցրնցելով՝ կարը կը վերցնէ ու կը մտնէ տուն)։

Գ

Ա բ ր ա հ ա մ — (Ինչ մը եսէր) *Այս քանի օրը փաշային մօտը եղա՞ր ես։*

Մ ո ւ շ ե ղ — *Չէ՛։ Անցած չաբաթ իրիկուն էր, կարծեմ։ Կանչեր էր. հիւանդ էր քիչ մը ու կտաբըտած։ Երկար դանդաղեցաւ. նոքին ձեռքակոխութիւններ են եղեր գաւառները, դէզով նամակներ են ըղուրեցած։ Թափեց առջևս։ «Դէ՛, տեսէ՛ք, կ'ըսէ, յիմար չե՞ն այդ մարդիկը. եթէ իրենց չեն խնայեր, գոնէ ժողովրդին խնային, կ'ըսէ»։ Բղռնըւածներէն մէկուն համար հարցուց՝ թէ կը ճանչնամ. ըսի՝ ատնունով լսեր եմ. ալ ոչի՛նչ չըսաւ։ Այնպէս չուն մարդ է որ. ու այնպէս մարդոց պարտաւորիլ դիտէ ու իրեն կապել։ Ես չատ քիչ մարդու եմ հանդիպած, որու հետ խօսիլը այնպէս հետաքրքիր ըլլայ, ինչպէս փաշային հետ։*

Ա բ ր ա հ ա մ — *Ան ալ քեզի համար միևնոյն բանն է ըսեր։*

Մ ո ւ շ ե ղ — *Դիտե՛մ. այս տեսակ իրար ակռայ ցոյց տալը սովորաբար փոխադարձ կ'ըլլայ։ Այն իմ հարցաքննութեանս գիշերն էր. հինգ-վեց ժամ չարունակ խօսեր էինք ու գէտ չէինք վերջացեր, իսկ ես արդէն դիտէի, որ վրան ազդած եմ. ես ալ իրմէն էի ապրըտւած։ Ի՛նչ տարօրինակ գիշեր էր ան... էր՛, իմ հարցաքննութիւնս... (Կ'իյնայ իր մտերուն մէջ. ինչ մը լուռ. յանկարծ)։ Դիտե՞ս, Յակոբեանը մեռեր է։*

Ա բ ր ա հ ա մ — *Ո՞ր Յակոբեանը. սա՞, որ գուն բռնել տուի՞ր։*

Մ ո ւ շ ե ղ — (Գլխով կ'րնէ թերեւ)։

Ա բ ր ա հ ա մ — *Բանդի՞ն մէջ։*

Մ ո ւ շ ե ղ — *Այո՛. կիրակի գիշեր։ (Ինչ լուռ) Եօթը ամիս... աւելի չդիմացաւ։*

Ա բ ր ա հ ա մ — *Ա՜, արդէն հիւանդոտ մարդուն մէկը. անիկա դաբան ալ աւելի երկար ապրելու չէր։*

Մ ո ւ շ ե ղ — (Մտածկոտ) *կը ցաւի՛մ, կը ցաւի՛մ, բայց ի՞նչ կրնայի ընել։* (Տեսակ մը ինքն իրեն հեռ) *Ինչո՞ւ էին այդքան յիմար, ինչո՞ւ իմ անունս մէջտեղ ձգեցին. հին-հին նամակներ, յիմար խուզթեր, ինչո՞ւ էին պահեր, ինչո՞ւ անպատճառ ե՜ս։ Ատ միևնոյնն է, թէ անոնք իմ անունս յայտնեցին. ես ալ սխալեցայ իրենց անունը յայտնելու։ Ի՞նչ ընեմ, եթէ ուրիշ կերպ կարելի չէր. ինչո՞ւես պէտք է վրաս առնէի այդ բոլորը. ո՛չ, ես ախորժակ չունիմ բանդերուն*

մէջ փաթլու իմ ջահիլ օրերու յիմարութիւնս համար։ Ես ամէն բան չխտակ ու պարզ ըսեր եմ, ես ազատեր եմ ինծի. եթէ կրնան թող անոնք ալ իրենց գլուխը մամաճան։ Անոնց սիրուն չէի կրնար էշ-նահատակ դառնալ։

Աբրահամ — Իմարկէ՛։ (օգի լեցրնելով)։ Աչխարհիս բանը ատանկ է. եթէ դուն չի տաս ուրիշներու գլխուն, ուրիշները կուտան քու գլխուդ։ Ինծի նայէ՛։ (կը կոնծէ)։

Մուշեղ — (Զայրացած) Դուն ալ փնչերդ ժողվեցիր ու ելար ինծի սիրա տալու։

Աբրահամ — Ինչ սիրա տալու բան կայ. ըսել կ՚ուզէի, որ չսա բարակը մանել չարժեր։

Մուշեղ — (խոժոռ) Ձիմա՛ր ես դուն։ Ուրիշ բան է խզճալը, ուրիշ բան է զղջալը։ Ես զղջալ չեմ սիրեր. ամենէն անմիտ բանն է ատիկա. և պէ՛տք ալ չունիմ զղջալու։

Աբրահամ — Ես ի՞նչ ըսի որ։

Մուշեղ — (խիստ) Վերջ տուր։

Աբրահամ — (Ժամայցոյցը նայելով) Շոգենաւս ժամանակն է. երթա՛մ։ Ինծի՛ նայէ. ինծի սո՛ւկ կէս ոսկի մը չէիր կրնար նորբէն... Միջնորդի գործ մը կայ. յոյս ունիմ չուառով գլուխ հանեմ. այն ատեն...

Մուշեղ — (Դրպանէն ոսկի դրամ մը սեղանին նետելով) Աղէ՛կ, աղէ՛կ։

Աբրահամ — (Օգի լեցրնելով) Հատ մըն ալ ճամբու համար։ Կենա՛ցդ. Աստուած առաջնորդիչն ատյ։

ՊԱՐ

Այրին — (Դեռ ներսէն) Ա՛ս ի՞նչ անասպասելի բան։ Հրամեցէ՛ք խնդրեմ, հրամեցէ՛ք։ Մուշե՛ղ, նայէ քեզի ինչ անասպասելի հիւր եմ բերեր։

Սեդրակ — (Ոբեւայրիին նետ տաճ դուռնին պատեհ մտնելով՝ բոլորին) Բարե՛։

Մուշեղ — Ա՛, պարո՛ն Սեդրակ. խնդրե՛մ, խնդրի՛մ։

Այրին — Մուշեղը մեզի ըսաւ որ վերապարձեր էք Եւրոպայէն։ Է՛, մայրիկդ, ո՞վ գիտէ, ինչպէս ուրախ է։ Ցը՛ ցը՛ ցը՛, որ վրան կը նայիմ՝ հաւատալս չի գար։ կը յիչէ՞ք Արաքսիա հետ կը վազվզէիք սանդուղներէն վե՛ր, վա՛ր. պատառ մը տղայ էիր։ Երթա՛մ, երթա՛մ Արաքսիին զրկեմ, ինչքա՜ն պիտի ուրախանայ։

Աբրահամ — Ինծի ալ կը ներէք։ (Ոբեւայրիին նետևեն կը մտնեն տուն)

Ե

Մ ե դ ր ա կ — Այս դիշեր քրոջս հետ հո՛ս Թորոսեաններուն հիւր կ'ինք։ Առիթէն օգտուելով՝ ակայ ձեզի իմ պարագաս կատարելու։

Մ ո ւ շ ե ղ — Ի՞նչ պարագա։

Մ ե դ ր ա կ — Նամակի մասին է խօսքս. խորապէս չնորհակալ եմ ձեզի ձեր այդ բարեկամական ազնիւ վարմունքի փոխարէն։

Մ ո ւ շ ե ղ — (Փորձելով) Բայց դուցէ տակը հաչիւ մը ունիմ։ Չէ՞ որ... Անշուշտ դիտէք, թէ ես ինչ սարսափելի մարդ եմ։

Մ ե դ ր ա կ — (Վստահ) Ո՛չ. չունիք ո՛չ-մէկ հաչիւ։

Մ ո ւ շ ե ղ — Շնորհակալ եմ և ե՛ս ձեր այդ չիտակ դատողութեան համար։ Բայց նստեցէ՛ք, խնդրե՛մ, ոտքի վրայ մնացիք։

Մ ե դ ր ա կ — Ներեցէ՛ք. ես այնպէս վայրկեան մը միայն։

Մ ո ւ շ ե ղ — Նստեցէ՛ք։ Անկեղծ խօսելով՝ չատ ուրախ եմ որ եկաք։ Դուք ինձի իմ տաք գլուխ օրերս կը յիշեցնէք, որոնք որքան ալ անմիտ եղած ըլլան, դարձեալ սիրելի են ամեն մարդու։ Երբ մարդ դեռ կը հաւատայ ամեն տեսակ պայթուցիկ բառերու, ամեն հովէ կ'ոգեւորուի և (ներքնատան բառերը բնդգծելով) ժողովուրդին ծառայելու պահանջը մէջը կ'եռայ։ (Կր ծիծաղի)։ Չէ՞։

Մ ե դ ր ա կ — Ինչո՞ւ կը խնդաք. մի՞թէ ժողովուրդին ծառայելը...

Մ ո ւ շ ե ղ — Թողէ՛ք, ի սէր Աստծու։ Դուք դեռ միայն գրքերէն կը ճանչնաք այդ անկատար նախիրը, որ ժողովուրդ կ'ըսուի. մտէ՛ք մէջը վերջը ձեզի հետ կը խօսիմ։ Իսկ մարդո՛ւ մէջ, հասո՛ւն, տառա՛ղ մարդու մէջ ոչ-ոքին ծառայելու պահանջը չկայ, ո՛չ ժողովուրդին, ո՛չ ալ մէկ ուրիշին։ Կայ ուրիշը իրեն ծառայեցնելու բնական պահանջը. սաիկա կը հասկնամ։

Զ

Ա ր ա քս ի — (Տան սեմին յանկարծ պարտեզ վազելով) Ա՛յ, սիրուն անակընկալ մը։ (Աչխուժ ձեռք կուտայ) Բարե՛ ձեզի։ Ըսենք ճիշդ չէ։ Ես գիտէի որ գայիք պիտի, ես հաստատ գիտէի որ գայիք պիտի։

Մ ե դ ր ա կ — Ի՞նչպէս. գիտէի՞ք որ այսօր գայի պիտի։

Ա ր ա քս ի — Այսո՛ր, թէ վա՛ղը. բայց գիտէի որ գայիք պիտի։ Թէև դուք հիմա, ո՛չ, մնծ մարդ էք, գիանական, եւրոպական, բայց վերջապէս սիրտ ինձի բսաւ, որ գայիք պիտի։

Մ ո ւ շ ե ղ — Ինծի՛ նայէ, Արտաքսի՛. հիմա արտիդ ըսածներըդի՛ր մէկդի ու նախ և առաջ գնա՛ պարտն Սեդրակին համար (օղիի սեղանը մատնանիշ) մաքուր գաւաթիկ մը բե՛ր։ Հայտե՛ նայի՛մ, հասա՛կդ տեսնեմ։

Ս ե դ ր ա կ — Ո՛չ, ո՛չ, ես չնորհակալ եմ. ես ըսի արդէն, որ միայն վայրկեան մը։ Եւ վերջապէս ես օղի չեմ ալ խմեր։

Մ ո ւ շ ե ղ — Ուրինք լաւ գինի։

Ա ր տ ա ք ս ի — (Ներքուստ շարժումով) Ինչպէս իսկոյն։

Ս ե դ ր ա կ — Դուք չատ բարի էք, օրիո՛րդ. միայն... միայն արդէն ուշ է, արդէն...

Ա ր տ ա ք ս ի — Ձեմ հասկընար։ Ան տանն սա ի՞նչ գալս էր, ի՞նչ երթալ։ Պարա՞պ խօսք։ Իսկո՛յն։ (Կը վազէ տուն)։

Ս ե դ ր ա կ — Օրիո՛րդ...

Է

Մ ո ւ շ ե ղ — Թողէ՛ք։ Թող բերէ՛։ Կը տեսնէ՞ք Արտաքսիս, ի՛նչ խելօք աղջիկ է դարձեր։

Ս ե դ ր ա կ — (Մտածկոտ) Ըսա երեւոյթին չա՛տ կը սիրէք։

Մ ո ւ շ ե ղ — Այո՛, տան կենդանութիւնը ա՛ն է ու իմ մխիթարա՛նքս։

Ս ե դ ր ա կ — Ի՞նչպէս. ուրնին մխիթարանքի կարօտ ունիք. ուրնին գոհ չէ՛ք ձեր կեանքէն։

Մ ո ւ շ ե ղ — Գո՞հ։ Ո՞վ է գոհ աշխարհիս երեսին։

Ս ե դ ր ա կ — Այո՛, կ'ենթադրէի, որ դուք ալ դժբաղդ մըն էք ըլլալու։

Մ ո ւ շ ե ղ — (Ներսպամիս)։ Ա՛խ, դո՛ւք ու ձեր այդ խոչո՛ր խոչոր բառերը։ Դժբա՛ղդ, ինչո՛ւ։ Այո՛, այնքա՛ն, ինչքան ամեն՛ մարդ, որ ապրելու հաւատալու չափ ապուշ չէ և ճակտին տակը աչքեր ունի կեանքի տաղտուկն ու դատարկութիւնը տեսնելու համար։

Ը

Արդէն բաւական մթնած է

Ա ր տ ա ք ս ի — (Ձեռքը շիշ մը գինի, երկու բաժակ ու թեւին տակ սփռոց մը)։ Ահա՛ ձեզի և գինին։

Մ ու շ ե ղ — Լ՛, թողնենք հիմա այդ բոլոր փիլիսոփայութիւնը մէկդի։ Հիմա դուք իմ հիւրս էք. և ես ուրախ եմ։

Ա ր ա ք ս ի — Եւ ի՛նչպէս ուրախ։ (Ափսոցը կը վոռ սեղանին, կը դնէ գինին, օղին ու բաժակները վրան)։

Մ ու շ ե ղ — Ա՛յ, տղի՛ Արաքսիա։ Ո՛հ, պահծու գինին է դուրս հկնէր։ Եթէ գիտնաք, պարո՛ն Սկզբակ, թէ տակիս ի՛նչ մասնաւոր պահէ մըն է ձեզի համար։ Գրեթէ ամեն իրիկուն կոխ կայ սեղանին վրայ այդ գինիի սիրուն։ Մէյ մը համ տեսէ՛ք։

Ա ր ա ք ս ի — Կեցէ՛ք սա լապտերն ալ վառեմ։ (Կը բարձրացնէ արուին՝ ճրագարեհն կախուած լապտերը վառելու)։

Մ ու շ ե ղ — Ահա՛ տսիկա իմ օղիս. ես կերակուրէն առաջ առանց օղիի չեմ ըլլար։ Գինին հացին վրայ. անոր ժամանակը վերջն է։ Ա՛յ, պարո՛ն Սկզբակ, լաւ ուտելն ու լաւ խմելը կը սիրեմ, ի՛նչ ըսեմ քեզ պահեմ։ Ամեն անախորժութիւն նորէն կերպ մը կարելի է տանելիլ, երբ մարդ չնորհքով ուտելիք ուղեղայ ու այսպէս պատուական խմելիք։ Գիտէ՞ք, համեղ պատառի մը համար ի՛նչ ոճիրներ կը գործուին։

Ս ե դ ր ա կ — (Նստած է խոժոռ ու մռայլ)։

Ա ր ա ք ս ի — Ա՛յ, այսպէ՛ս։ (Կը խառնէ արուն մը ու կը ցոյէ սեղանին ճակատը երկուքին մէջտեղը գինի լեցընելով)։ *Դէ՛, ուրեմն ձեր կենա՛ցը, բարի՛ եկաք։*

Մ ու շ ե ղ — Ձեր կենա՛ցը, բարեկա՛մս։ կեանքը կարճ է ու անիմաստ. և մենք չենք, որ կեանքը փոխենք պիտի. ձեր կենա՛ցը։

Ս ե դ ր ա կ — Շնորհակա՛լ եմ։

Ա ր ա ք ս ի — Ձէ՛, չեզա՛ւ. բերէ՛ք բաժակնիդ. ի՞նչ կը մտմտաք այդպէս խորը։ (Կը զարնեն բաժակները)։ *Ձէ՛. Եւրոպան ձեր վրայ չէ եկեր դուք հիմա մի՞չա էք այսպէս թթուած։*

Ս ե դ ր ա կ — (Ծիծաղելով) *Թթուա՞ծ։ Ո՛չ։*

Ա ր ա ք ս ի — (Բերկրանքով)։ *վա՛յ, ձեր ծիծաղը։ Գիտէ՞ք, ամենեւին չէ՛ք փոխուած. մի՛ևնոյն հին Սկզբակը։ Առաջին նայուածքիս մէյնայն ա՛յնպէս քիչ մը ուրիշ տեսակ երեւցաք։ Նորութիւնը սա մօրուքն է. քիչ մըն ալ ա՛յնպէս դէմքերնուդ ուրիշ բան մըն է եկեր։*

Ս ե դ ր ա կ — Ի՞նչ բան, օրինակի համար։

Ա ր ա ք ս ի — Ա՛յնպէս... ես ալ չգիտեմ. տեսակ մը... վերջապէս էրիկ-մարդ էք դարձեր։ Դէ՛, պատմեցէ՛ք, նայիմ, այս քանի տարին ինչե՛ր տեսաք, ինչե՛ր ըրիք։

Մ ու շ ե ղ — Բայց նախ բաժակ մըն ալ գինի լեցո՛ւր, որ պատմիչը իր ուժերը ժողվէ. թէ չէ՝ այսպէս չո՛փ-չոր։

Ա ր ա ք ս ի — Ձի՛չդ է։ (Լեցընելով) *Ահա՛։*

Ա յ բ ի ն — (Տաճ սեմհեն) Հիւանի պէյն է, Մուչե՛դ։

Մ ու շ ե դ — Ո՞վ։ (Դժգոհ)։ Այս վայրկեանիս (Հիւրին) կը նեայբէք ինծի։ փաստաբա՛ն մըն է, պաշտօնակից ընկերս։ կ՚աշխատիմ հնար եղածին չափ չուռտով գլխէս ցանելու։ Ցոյս ունիմ, որ էնէ մինչեւ վերադարձս։ Դէ՛, Աբաքի՛, քեզի նայիմ, հիւրդ էի ձանձրանայ։ (Դուրս)։

Ա բ ա ք ս ի — (Նեղուհեն) Դուն դործիդ գնա՛. մենք դեռ մեր մանկութենէն վարժուած ենք չձանձրանալու, երբ իրարու հետ ենք. էհ՞։

Ս ե դ ր ա կ — Այո՛։ Եւ այդ բոլորը ուրեմն դեռ կը յիշէ՞ք։

Ա բ ա ք ս ի — Ո՛չ. ամենևին. ո՛չ մէկ բան։ (Ցանկարծ եւ փոխուած ձայնով) Հապա այդ տեսակ հարց կու տա՞ս։ Իսարկէ. կը յիշեմ. հապա ի՞նչ գիտցաք. ամե՛ն, ամ՛են բան։

Ս ե դ ր ա կ — (Փպտուցն) Մի՞թէ։

Ա բ ա ք ս ի — Ամենքը ձեզի՞ կը կարծէք. գացիք Եւրոպա ու ալ ամեն բան մոքէ անդին նետեցիք. ձեր հին ծանօթնե՛րը, բարեկամուհի՛ները... բարեկամուհի՛ն։

Ս ե դ ր ա կ — Իզո՛ւր։ Ձեր մեղադրանքը սխալ է։ Ես Եւրոպա ալ ձեր մասին յաճախ մտածեր եմ։

Ա բ ա ք ս ի — Իրա՞ւ։ Ա՛յ, տեսիկա սիրուն է. ա՛յ, հիմա ուրախ եմ։ Դէ՛, ուրեմն ես ալ խոստովանիմ։ Ես ալ ձեր մասին չա՛տ եմ մտածեր. և չա՛տ չատ. ա՛յնպէս, երբեմն վրաս բան մը կու գար, կ՚ըսէի՝ նամիս նամակ մը պիտի։

Ս ե դ ր ա կ — Բայց չգրեցիք։

Ա բ ա ք ս ի — Մտածեցի, որ վրաս խնդաք պիտի, որ երևի դուք ինծի արդէն մոռցած էք բոլորովին։ (Ցանկարծ) կը յիշէք այն աղուհանը ձեր գրած նամակները, դուք որ գիւղն էիք։ Ես դեռ անոնք բոլորը պահեր եմ. անկէ եաքը քանի նուիրած նկարներդ, այն ատաղձի գիրքը, մի՞ածդ է, կապոյտ երեսով։

Ս ե դ ր ա կ — (Փպտուցն՝ աղջկայ այֆերուց մէջ բաղուած. երկուքն ալ աւմուխով ինկած են սեղանին)։ Մարդ իր պատանեկութիւնը երբե՛ք չի մոռնար. մանաւանդ իր պատանեկութեան ընկերուհին։

Ա ր ա ք ս ի — Այնպէս չէ՞։ Հապա մեր գպրոցը. դեռ աչքերուս դէմն է այն պզտիկ պարտէզը, ուր մանչ-աղջիկ բոլորս միասին թափուած կը խաղայինք։ Դուն որ միշտ մօտերս էիր. կը յիշե՞ս Արուսեակը, ա՛ն, որ ալուէսի դունչ ունի կ'ըսէիր։

Մ ե ղ ր ա կ — Լսեցի՛ որ Ամերիկա է գացեր, հա՞։

Ա ր ա ք ս ի — Այո՛, հօրը մօտ։ (Միծպռելով) Օր մըն ալ որ միասին անուշը գողցանք պահարանէն, հո՛ն, մեր իսկիւսարի առնը։

Մ ե ղ ր ա կ — (Նկպալով, ոգեւորուած) Իրա՛ւ, իրա՛ւ. բալի անուշ էր, միթքս է։ Գողցած բանը միշտ անուշ է, ինչո՞ւ։

Ա ր ա ք ս ի — (Յանդիմանական, ծիծաղելի լրջութեամբ) Գողցած բա՜նը, հա՛։ Կը յիշե՞ս։

Մ ե ղ ր ա կ — Ի՞նչը։

Ա ր ա ք ս ի — Անգամ մը որ կռուեր էինք. ու քանի՞ օր իրարու հետ չէինք խօսիր. թէև չարունակ չորս դիս կը դառնայիր։

Մ ե ղ ր ա կ — Իրա՞ւ։

Ա ր ա ք ս ի — Իմ սիրտս ալ այնպէս քեզի հետ խօսիլ կ'ուզէր, այնպէս կ'ուզէի հետդ ըլլամ։ Միթքս է, բոլո՛ր մանրամասնութիւնները։ Իրիկուընը նստեր էի մեր մեծ թթենիին տակը ու կը բանէի. դուն ալ հո՛ն, սա՛նկ, չորս-հինգ քայլ անդին գնդակիդ հետ կը խաղայիր. և դիտմամբ. կը կարծես՝ չէի հասկնար։ Անգամ մըն ալ գընդակդ չիտա՛կ փչերուս տակը. եկար առնելու. չրթունքներդ ուռա՜ծ, յամա՜ռ. այնպէս ծածաղելի էիր. ու այնպէս սիրտս խնդթի պէս կը նեռէր։ Ծռեցայ, որ գտնեմ տամ. դուն ալ ծռեր էիր դէպի աթոռս...։ Է՛, ալ չե՛մ յիշեր, չեմ յիշեր։

Մ ե ղ ր ա կ — Բայց ես կը յիշեմ։ Յանկարծ մեր գլուխները եկան իրարու. ես երկու ձեռքով բռնեցի քեզի ու թուշդ պագի։

Ա ր ա ք ս ի — Բայց ես ալ բարկացայ վրադ։

Մ ե ղ ր ա կ — Հա՜. ատիկա միթքս չէ՛։

Ա ր ա ք ս ի — Հա՛, միթքդ չէ՛։ Ան ատեն ալ ըսիր՝ «Գողցած բանը անուշ է»։ ատոր համար ալ այս բոլոր պատմութիւնը հիմա միթքս ինկաւ։

Մ ե ղ ր ա կ — Է՛, ետքը՞։

Ա ր ա ք ս ի — Ետքը ի՞նչ։ (Նկպալով) Աւիր գնդակդ ու փախար։

Մ ե ղ ր ա կ — (Յանկարծ կը վերցնէ բափով գինիին շիշը ու բաժակները լեցնելով) Եկո՛ւր, Արաքսի՛, եկուր խմենք մեր մանկութեան մեր միասին անցուցած կեանքի ու յիշատակներուն կենացը։

Ա ր ա ք ս ի — (Ջերմ) Խմե՛նք։

Բաժակները կը զարնեն իրար սրտանց։ Տան դրան մէջ կ'երեւայ Մուշեղ։

Մուշեղ — Հրաչալի՛ս, Ա՛յ, ատոր հաւնեցայ։ Շուտով բաժակ մըն ալ ինձի. ու չարուենակենք երեքով։

Սեդրակ — (Բոլորովին սպափած կ'ելլէ ոտքի) Ո՛չ, ներեցէք. անմիջապէս պէտք է մեկնիմ։

Արաքսի — Բայց ինչո՞ւ կ'ըշտապէք.

Սեդրակ — Մերիններըը ինձի կ'ըսպասեն. ես եկայ միայն մէկ վայրկեանի համար. բայց ահա՛ արթընցան հին յիշատակներ։

Մուշեղ — Հին ու նոր թող խառնըւին իրարու ու մենք կը դառնանք լաւ բարեկամներ։

Սեդրակ — (Գլուխը կը կախէ)։

Արաքսի — Ջէ՞ք պատասխաներ։

Սեդրակ — Շնորհակալ եմ անշուշտ։ Շատ չնորհակալ եմ։ (Մեկնելու շարժում)։

Մուշեղ — Ուրեմն ցտեսութիւն։

Արաքսի — Եւ չո՛ւտ. ու չո՛ւտ-չուտ։

Բոլորը միասին կ'ուղղըւին դէպի տան դուռը։

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Առաջին արարի սենեակը: Ցերեկ է.

Ը

Շահան ու Սեդրակ կեցած են դէմ-դէմի. Շահան ազատղական. Սեդրակ խոր մտածման մէջ աչքերը կէտի մը յառած. քիչ լուռ:

Սեդրակ — Ուրեմն վա՞ղը:

Շահան — Այո՛, վա՛ղը. և վատահ եղէք. բոլոր պատրաստութիւնները տեսնըւա՛ծ, ամէն բան կարգի՛ն: վա՛ղը կ՚ըլլայ Սանդալեամեան գիրկը. հո՛ն որչափ կ՚ուզէ խոզ մատնութիւններ ընէ իր քեֆին, կ՚ուզէ բոլոր սատանաները ձերբակալել տայ:

Սեդրակ — (Ինքն իրեն) Ուրեմն վա՛ղը:

Շահան — Աստուծմո՛վ, անպատճա՛ռ: Դէ՛, սիրելի՛ս, կը յայտնես ուր որ պէտք է: (Ծուզուած) Եկո՛ւր համբուրենք, ո՞վ գիտէ՝ ինչ կրնայ պատահիլ: (Ձը գրկուին) Ողջ ձեռք չե՛մ իյնար, սաոր հատզուած եղիր: (Պինդ ըսկերոջ ձեռքը թափ տալով) Ինծի չմոռնա՛ք: (Դնալի դուռը):

Սեդրակ — (Յանկարծ) Շահա՛ն... կեցի՛ր: Աբգհօք... արդհօք կարելի չէ՞ քանի մը օր յետաձգել իր:

Շահան — Յետաձգե՞մ. և ինչո՞ւ:

Սեդրակ — Ա՛յնպէս. ենթադրենք խնդիրը մեր կողմէն որևէ բարդութիւն մը առանայ:

Շահան — Չե՛մ հասկնար: (Դժգոհ) Մարդոց այս տեսակ լարուած դրութեան մէջ կարելի չէ պահել. ե՛ս, ըսենք, նորէն ոչինչ, բայց ընկե՛րս: Յետաձգելը միշտ վտանգաւոր է: Եւ վերջապէս դուք ձեր բոլոր հաշիւները պարտաւոր էիք առաջուց մտածելու:

Սեդրակ — Աղէ՛կ։ (Վճռաբար) Գնա՛, գնա՛ քու գործդ կատարելու։ Միայն լսէ՛։ (Ընդգծելով) վազը առատ մինչև ժամը ինը հիւրանոցդ ինծի կ'ըսպասես. բայց անպատճա՛ռ, կը լսե՞ս, անպատճառ. պաշտօնապէս կը պատուիրեմ քեզի։ Եթէ ճի՛շդ մինչև ինը չեկայ՝ ազա՛տ ես, ըրէ՛ քու պարտքը։

Շահան — Լեզուիդ տակը բան մը կայ, Սեդրա՛կ։

Սեդրակ — Վա՛զը, վա՛զը. առատ՛ւն։

Շահան — Լա՛ւ, կ'ըսպասե՛մ։ (Դուրս)

Բ

Հազիւ Շահէն հեռացած՝ Սեդրակ կ'ըշտապէ դէպի միւս դուռը։

Սեդրակ — Ազնի՛ւ, Ազնի՛ւ. մի գա՛ր։ (Ու կ'ըսկսի սենեակին մէջ արագ երթեւեկելու ձեւերը գրպանը դրած ու լարուած դէմքով)։

Ազնիւ — (Դռան մէջ) Ի՞նչ է։

Սեդրակ — Մուչեղը ուրնեն հաստատ ըսաւ որ պիտի գայ։

Ազնիւ — Այ՛։

Սեդրակ — Այո՛ր։ Բայց հաստատ՛ ա։

Ազնիւ — (Ուսերը գրնցելով) Ճաշէն առքը նորէն կը հանդըպիմ, ըսաւ։ Քանի որ կանչեր է՝ կ'ուզէի տեսնեմ, ըսաւ։

Սեդրակ նորէն մտասոյզ կ'ըսկսի երթեւեկը. լարուած ու ջղային։

Ազնիւ — (Բլոյ մը դիտելեն եսէը, կասկածոտ) Ա՛ս ի՞նչ տեսակ գործ ունէիս դուն անոր հետ, որ բաներ կանչեր ես ու այդպէս անհամբեր կ'ըսպասես։

Սեդրակ — Հը՛մ։

Ազնիւ — Ինչի՞ հետ եմ. չե՞ս լսեր։ Ի՞նչ կը մտածես այդպէս խորը-խորը։

Սեդրակ — Ե՞ս։ կը մտածեմ... կը մտածեմ, որ մարդու մէջ մարդը հրքնք չի մեռնիր, որ լաւի ու անմոռաքուր գործի զգացումը մարդուս մէջ կայ ու կայ միշտ, որչափ ալ որ մարդ գիտամբ ուբանալ ուզէ։ կա՛յ. գուցէ մոխրի տակ, գուցէ ժանգոտած, բայց կայ։ Մոխիրը խառնող ձեռք մը պէտք է, որ ազնիւ կայծերը պլպլան։

Ազնիւ — Խոտրկէ՛, եղբա՛յրս, այդպէ՛ս է։

Սեդրակ — Ա՛, չատ խորն է մարդուս սիրտը, թափանցելը դժուար. ա՛ւր աչք պէտք է ու կարեկցող ջերմ զգացում. հապ ի՞նչ կրնայ տեսնել սխի ու վրէժի աչքերը կապած դիցուհին։

Ազնիւ — (Վախցած) Ի՞նչ ոխ, ի՞նչ վրէժի մասին կը խօսիս։

Սեդրակ — Դո՞ւն ինչու վախցար։ Մտածմունքներ են, կ'անցնին մաքէս։

Ազնիւ — Սեդրա՛կ, Սեդրա՛կ, ի՞նչ է մաքինդ, ի՞նչ գործ ունիս դուն Մուշեղին հետ, ի՞նչ կ՚ուզես, ի՞նչ կ՚ըսես։ Հոգի՛դ սիրես, Սեդրա՛կ, եթէ ինծի կը սիրես, եթէ մայրդ կը սիրես։

Սեդրակ — (Սառած) Ախ՞թէ ես, ի՞նչ եղաւ քեզի։

Ազնիւ — Ես հիմա կը հասկնամ. արդէն չատոնց կասկած մը կար մէջս։ Արդէն այս վերջին օրերը դուն բոլորովին ուրիշ տեսակ ես։ Դուն քու խզճիդ հետ է որ կը կռուիս։ Մի՛ ծածկեր ինծմէ, Սեդրա՛կ. ես հիմա ամէն բան պարզ կը տեսնեմ, լոյսի պէս։ Լսէ՛ ինծի՝ ձեռքդ արիւնոտ մի՛ ըներ. վերջը ամբողջ կեանքդ կը դղջաս ու քաւել չես կրնար։ Դուն արիւն թափելու համար սահմանուած մարդ չես։

Սեդրակ — Բայց իմ մտածածս ընդհակառակը...

Ազնիւ — (Վախով) Դո՞ւն էր։

Սեդրակ — (Ուրախ) Մուշե՛ղը. անպատճառ ա՛ն է։

Ազնիւ — (Կը վազէ պատուհանը, կը նայի ու այլայլած) Ա՛ն է, կեցի՛ր։ Թող զարնէ, զարնէ՝ երթայ։

Սեդրակ — Ի՞նչ կը խօսի։ (Դեպի դուռը)։

Ազնիւ — (Կր ճեռուի աւազ դրաճ առաջ՝ ամուր դուռը ելլելը արգիլելով)։ Ո՛չ, չե՛ս երթար։ (Բռմաբար) Զգի՛ մի մտնէք այդ մարդուն սրիւնը։

Սեդրակ — Ազնի՛ւ, խելքդ գլուխդ ժողվէ՛։ Չգէ՛ կ՚ըսեմ քեզի, յանկարծ կ՚ելլէ կ՚երթայ։ (Ուժով՝ դուռը)։

❧

Ազնիւ վշտաբեկ կեցած է պահիկ մը։ Դուրսը ոտքի ձայներ ու խօսակցութիւն։ Աղջիկը կ՚ուզուի, կը փոխէ դէմքի արտայայտութիւնը ու սպասող հայեացքը դէպի դուռը։

Մուշեղ — Բարև ձեզի, օրիո՛րդ, անդամ մըն ալ։

Ազնիւ — Իակ մենք վախցանք, որ ալ չէք գալու։

Մուշեղ — Ո՛չ. քանի որ խոստացայ։

Սեդրակ — Անցնի՛ր նեղեակս։

Ազնիւ — (Ծիծաղելով) Ո՛, ո՛չ։ Պարոն Մուշեղը հիմա իմ հիւրս է։ (Եղբօրը) Կանչեր էիր, եկաւ առաուն, թո՛ղ տունը ըլլայիր։ Հիմա այլ ևս ան ինծի համար է եկած։ Չէ՞, պարո՛ն Մուշեղ։

Մուշեղ — (Զարմանքի) Եթէ օրիորդը այդ պատիւը ինծի կ՚ընէ։

Ազնիւ — (Առուեստական շատախօսութեամբ) Քանի՛-քանի տարի

է անցեր այն հին օրերէն, դեռ չնորհքով միասին չենք եղած, իսկ պատմելու բան որչա՞փ։ Նստեցէ՛ք, խնդրեմ։

Ս ե ղ բ ա կ — Թո՛ղ· այդ բոլորի մասին մէկ ուրիշ անգամ, Աղնի՛ւ։

Ա. զ ն ի ւ — Ինչո՞ւ։ Դուն ձգէ քու գործդ մէկ ուրիշ անգամի։

Ս ե ղ բ ա կ — Հերի՛ք է կատակը։ կարևոր բաներ ունինք խօսելու։

Ա. զ ն ի ւ — Ինչէ՞ն գիտես, որ իմ խօսելիքս կարևոր չէ։

Մ ու շ ե ղ — (Զուարթ) Օրիորդը իրաւունք ունի։

Ա. զ ն ի ւ — (Նեբօրը, մեղմ) Մի՛ բարկանար։ Ըհրա՛խ եղիր, քիչ մըն ալ եղիր անփո՛յթ։

Մ ու շ ե ղ — Ինչ սիրուն տրամադրութեան մէջ էք այսօր, օրիո՛րդ։ Սրտանց ուրախ եմ։ Եկէ՛ք լանք ձեր քրոջը, պարոն Սեդրա՛կ, թողէ՛ք ձեր լուրջ խօսակցութիւնը մէկ ուրիշ անգամի։

Ս ե ղ բ ա կ — Բայց··· բայց···

Ա. զ ն ի ւ — Առանց բայցերու։ Ա՛յ, եթէ գեղեցիկ բան մը ըն՞ն կ՚ուզես, կ՚երթաս վերէն սիկառ բերելու։ (Մուշեղին) Ես գիտեմ, որ դուք ծխել կը սիրէք։

Մ ու շ ե ղ — Չեմ մերժեր, օրիո՛րդ։

Ա. զ ն ի ւ — Թէև առնը ծխող չկայ, բայց մեծ քեռիս չաո նուբար ծխող է· միայն սիկա՛ռ, ան ալ լաւը· անոր համար կը պահենք։ (Նեբօրը) Վե՛րը, կլոր սեղանին վրայ։

Ս ե ղ բ ա կ — Ինքդ իջնես չես երթար։

Ա. զ ն ի ւ — (Դատակի ձեւով) Ես, ըսի՛, կարևոր խօսելիք ունիմ պարոն Մուշեղին հետ։

Մ ու շ ե ղ — (Ծիծաղով) Քանի որ այդպէս է՝ բերէ՛ք, պարո՛ն Սեդրակ։ Արդէն կանոնց կամքը կատարե՛նք պիտի· ուզենք-չուզենք։ Մեր ճակատագրական դժբաղդութիւնը։

Ս ե ղ բ ա կ — Ըսէ՛ք՝ կանոնց կապրի՛զը։ (Դիզոն դուրս)։

Մ ու շ ե ղ — Այսօր հիանալի էք տրամադրուած։

Ա. զ ն ի ւ — (Նեբօրը կը հեռեւի աչքով՝ եւ յանկարծ եռ դառնալով՝ ձայնը փոխուած) Ինծի՛ լսեցէք, պարոն Մուշեղ, եթէ ձեր կեանքը ձեզի թանկ է, եթէ ձեր ընտանիքի կեանքը ձեզի թանկ է, կ՚ազաչեմ ձեզի, կը պաղատիմ, թողէ՛ք Պոլիսը, որչափ կարող էք չուտ· թողէ՛ք Պոլիսը, հեռացէ՛ք, հեռացէ՛ք։

Մ ու շ ե ղ — (Բոլորովին մռայլ ու հանդարտ եղած է ոտքի) Եւ ինչո՞ւ։

Ա. զ ն ի է — Ինչուն ես ի՛նքս ալ որոշ չգիտեմ, միայն հետացէ՛ք։ Նախազգացումս ինծի կ՚ըսէ, որ յանկարծ դժբաղդութիւն մը կը բերէ ձեր գլխուն ալ, ուրիշներուն ալ։ Հեռացէ՛ք։

Մ ու շ ե ղ — Ձեր եղբօր ըսելի՞քն ալ սա՞ի կա է։

Ա. զ ն ի է — Չգիտե՛մ, ես ոչինչ չգիտեմ։ Ես բոլորովին ինծմէ է, որ կը խօսիմ։ Եւ եղբօրս ո՛չ մի խօսք այս մասին։ Ես... ես...։

ԸՆ

Ս ե դ ր ա կ — (Փայտուճ) Ահա՛ և սիկառը։ Ինդրե՛մ։ Դէ՛, Ազնի՛ւ, հիմա կարծեմ այլևս...

Մ ու շ ե ղ — Քանի որ ձեր եղբայրը կը պնդէ, թողէ՛ք, օրհ՛ուդ, թողէ՛ք մեզի վայրկեան մը առանձին։

Ա. զ ն ի է — Բայց...

Մ ու շ ե ղ — (Հանգիստ ու հանգստացնող ձեւտով մը) Թողէ՛ք, օրհ՛ուդ, թողէ՛ք։ (Ազնիւ ուսերը ցընցելով կ՚ելլէ դուրս)։

ԲԸ

Մ ու շ ե ղ — Հետաքրքիր եմ, թէ ինչ եմ լսելու։

Ս ե դ ր ա կ — Գիտէ՞ք, մեր այն վերջին իրարու հանդիպիլը իմ վրաս խիստ ազդած է ու երկար մտածելու նիւթ տուած։

Մ ու շ ե ղ — Ե՛ս ալ ձեր վրայ եմ մտածեր։

Ս ե դ ր ա կ — Ուրեմն ուրիշի լաւ։ Եւ ես հասայ այն եզրակացութեան, որ կամքի տէր մարդ մըն էք դուք, կեանքի չարն ու բարին հասկցող և որ ձեր արդի, ինչպէս ըսեմ, ո՛չ-ազգային բանակին մէջ ինկած ըլլալը տեսակ մը ձախորդ դիպուած է միայն։

Մ ու շ ե ղ — (Ջուսպ) Եաթը։

Ս ե դ ր ա կ — Ուր ամենէն ուրիշի դուք ինքներդ էք տանջուողը, ինչպէս կ՚ենթադրեմ։

Մ ու շ ե ղ — Եւ հիմա ձեր ըսելի՞քը։

Ս ե դ ր ա կ — Ըսելիքս... չատ պարզ։ Պէտք է միայն ձեր կղզիէն քայլ մը, ձեր խղճի ձեղի թեւլզրած վանեմ քայլը, և դուք կըրնաք ամեն բան իր բնական վիճակին դարձնել։ Այդ տեսակ քայլը անվախ ու կարուկ բնաւորութիւնները միայն կրնան ընել. դուք կրնա՛ք ընել. դուք պարտակա՛ն էք ընելու։

Մ ու շ ե ղ — Եւ այդ քա՞յլն է։

Ս ե դ ր ա կ — Անցնի՛լ նորէն ձեր բանակը. այսինքն հայուն

բանակը. հո՛ն, ուր դուք կը պահականիք, ուր եղած էք երբեմն և որ թողած էք... մարդկային բնական ինքնապաշտպանութեամբ կամ զայրոյթէ մղուած. թէ չէ՝ ինչո՞ւ համար ձեր խելքի ամէր մէկը ըսաոր փաչայի մը ձեռքը գործիք պիտի դառնար. դրամի՞ համար. չեմ հաւատար: Ներեցէք, որ այսպէս մերկ կը խօսիմ: Միաքս գլուխ եմ բոլոր մտածածս ըսեմ ձեզի:

Մուշեղ — Ըսէ՛ք, ըսէ՛ք:

Սեդրակ — Հիմա իմ առաջարկս սա է: Դուք արտաքուստ կը մնաք այնպէս ինչ որ էք, կը պահէք ոստիկանատան հետ ձեր բոլոր կապերը, մինչև անգամ, եթէ կ'ուզէք, ցոյց տուէք քիչ մը աւելի ջերմեռանդութիւն: Մինչդեռ ներքուստ, ա՛յ, կ'աշխատիք գործերը խաճելու, կարեւոր թղթերը ձեռք բերելու, տեղեակ պահելու, կը հասկընա՞ք: Մէկ խօսքով՝ կ'ըլլաք ամենախոչոր ա՛ւժ մը, սառա՛ր մը մեր ազգի ազատութեան գործին:

Մուշեղ — Ըսէք խնդրեմ. դուք որո՞ւ անունով այդ առաջարկը կ'ընէք ինծի:

Սեդրակ — Ինչ որ ըսի և ինչ որ կ'ըսեմ՝ կը խօսիմ ձեզի միայն և միայն իմ անունէս. տեսայ ձեզի և յանկարծ ըմբռնեցի թէ ինչ մեծ դեր կրնաք խաղալ:

Մուշեղ — Իսկ ես կարծեցի, որ պաշտօնական մարմին մը կը խօսի ձեր բերնով:

Սեդրակ — Ո՛չ. բայց երբ ձեր համամտութիւնը ունենամ, բնականաբար իսկոյն պիտի ջանամ կապ մը գտնելու մեր վերին մարմնին հետ, ինչ ձեւով և ինչ չափով որ դուք յարմար դատէք. և այնպէս, որ ձեր անձն ու ձեր դերը բոլորովին վարագուրուած մնայ և ամէն կասկածէ դուրս: Եթէ ուզէք և եթէ աւելի յարմար մէկը չունենանք՝ ես պատրաստ եմ ձեր գործիքը, ձեր միջնորդը դառնալու: Ինծի ըրած ձեր լաւութիւնը կ'ուզեմ փոխարինեմ արժանի կերպով մը: Ինչ որ դուք եղաք ինծի համար, ինչ որ դուք ըրիք ինծի համար, կ'ուզեմ որ ըլլաք և ընէք ամբողջ հայ դատին համար:

Մուշեղ — Ձեր ամէն բան բաց խօսելու որոշման դէմ և ձեր բերած այս անսպասելի առաջարկին դէմ՝ անշուշտ կ'ըմբռնէք, որ ես իրաւունք ունիմ պահանջելու ձեզմէ բացարձակ անկեղծութիւն:

Սեդրակ — Պահանջեցէ՛ք:

Մուշեղ — Ի՞նչը աւելի առաջարկութիւնը ընելու ինծի:

Սեդրակ — Սրդէն ըսի:

Մուշեղ — Ո՛չ. ձեր հոգեբանութեան մասին չէ իմ խօսքս. կը հարցընեմ արտաքին դրդիչը. որևէ սպառնալի՞ք մը, վտանգ մը կը տեսնէք իմ անձիս դէմ:

Սեդրակ — Վտանգ կամ սպառնալիք չդիտեմ: Բայց քանի

որ ինծմէ բացարձակ անկեղծութիւն կը պահանջէք՝ պարտական եմ ըսելու, որ ամէն կողմ ձեր վրայ չատ կը խօսին, և կը խօսին իբրև մեր ժողովուրդի թշնամի մարդու մը վրայ, իբրև հայ դատին վնասակար մարդու մը մասին։

Մուշեղ — Որ պէտք է մէջտեղէն վերցընել։

Սեդրակ — Ձեմ գարմանար եթէ այդ տեսակ զգացումներ ունեցողներ ալ գտնուին։ Ոբ կռիւ կայ, տանջանք, հարուած, մահ ու տառապութիւն, բնական ցանկութիւն մըն է հակառակորդի գլխուն ուսածը անէծքը թափուած տեսնելը։ Բազմութիւնները միշտ ալ պարզամիտ են ու խակամիտ։

Մուշեղ — Ինծի հետաքրքրողը բազմութիւնները չեն։ Բայց նոյնը կը մտածեն անշուշտ նաև անոնք, որոնք այդ բազմութիւնները կը ղեկավարեն։ Ի՞նչ կը կարծէք։

Սեդրակ — կը կարծեմ որ, եթէ չիտակ է ձեր ըսածը, եթէ իրաւ որ ղեկավար մարդոց հոգիին մէջն ալ ձեր դէմ ոխ կը մխայ, նորէն այդ հիւանդոտ հոգեբանութիւնները բժշկելու ամենէն չիտակ ճամբան իմ ըրած առաջարկս է։ Եւ ձեր ըրած այդ նկատողութենէն ետև կամ այն եզրակացութեան, որ իմ առաջարկս ո՛չ միայն մնծ բարիք մը կը դառնայ ու մեծ օգուտ հայ յեղափոխութեան հանդէպ. այլև միաժամանակ ձեր օգտին ու ձեր անձին հանդէպ։

Մուշեղ — Այդպէ՞ս։ Աղէկ։ (Ինչ մը խորհելեն ետքը) Գիտէ՞ք ինչ. ես կ'ուզէի այս մասին ձեզի հետ երկար խօսիլ, բայց հիմա հոս քիչ մը անյարմար է, ժամանակ ալ հիմա չունիմ։ Եկէք անգամ մը ինծի և կը խօսինք աւելի հանգամանօրէն. կ'ուզէ՞ք վաղը։

Սեդրակ — Վա՞ղը։ Ո՛չ, ինչո՞ւ վաղը. ես կու գամ ձեզի այսօ՛ր իսկ, իրիկո՛ւնը։ Ես չեմ հանգստանար մինչև որ միտքս դրած բան մը իր վերջնական ձևը չառնէ։ կու գամ ձեզի այս իրիկուն։

Մուշեղ — (Շեօ տլու դիմիր դիտելով) Աղէ՛կ, քանի որ այդպէս կ'ըլլապէ։ Իմ քրոջս ապագը կը ճանչնաք, Աբրահա՛մը, Մանուկեան։ Անոնց տունը հոս ձեր թաղն է. իրիկունը ես հոն եմ ըլլալու. կ'ըսպասեմ ձեզի։ Այո՞։

Սեդրակ — կու գամ անպայման։

Մուշեղ — Ուրեմն առայժմ....

Սեդրակ — Իսկ դուք մտածեցէք ըսածիս։

Մուշեղ — կը մտածենք, կը մտածենք մեր մասին։ (Երկուքով դուրս)։

Է

Մի ,ս դռնէն իսկոյն ներս կը մտնէ Ազնիւ, յուզուած եւ ուժասպառ կ'երթայ կ'իյնայ բազկաթոռին մէջ, քիչ մը վերջը ուրախ ներս կը մտնէ Սեդրակ։

Սեդրակ — Դուն հո՞ս ես։

Ազնիւ — (Սր ճեռուի եղբօրը դէմը ու աճուր ձեռքը խլելով) Սեդրա՛կ, եթէ ինծի կը խղճաս, եթէ կը մեզքնաս մայրիկը, եթէ քեզի համար բան մը սուրբ է աչխարհիս երեսին՝ մի՛ գնար, մի՛ գնար այս իրիկուն Մուշեղին։

Սեդրակ — (Որ առաջ ապշած էր, վերջն բառերուն ձեռքը ես կը ֆաշէ զայրոյթով) Ի՞նչ։ (Մատովը աղջկայ ելած դուռը ցոյց տալով) Ուրեմն...

Ազնիւ — Մի՛ գնար, Սեդրա՛կ, կ'ապաչեմ քեզի։

Սեդրակ — Սա ինչ նորութիւններ են։ Հանգստացի՛ր, հանգստացի՛ր։

Ազնիւ — (Ուրախացած ու եղբօր վիզը փաթըթելով) Ուրեմն չես երթար, հա՞։ Յո՛ւսք տուր, խո՛ստք տուր։

Սեդրակ — (Մեղմ ու խոժոռ)։ Դուն չգիտե՛ս թէ ինչ կը խնդրես։ Եւ քանի որ ականջ ես դրեր՝ գիտես ուրեմն թէ ինչու երթալ կ'ուզեմ։

Ազնիւ — Իմ սիրտս կ'ըսէ ինծի, իմ զգացումներս ինծի կ'ըսեն. մի՛ գնար։

Սեդրակ — (Նեղսիրտ) Բայց ինչո՞ւ է, ինչո՞ւ։ Կնկայ յիմա՛ր նախազգացումներ։

Ազնիւ — Սեդրա՛կ, հոգի՛ս, կեա՛նքս, վա՛ա է, վա՛ա, վա՛ա... Գնա՛ գալ չպիտի, գնա՛ ուրիշ օր մը, բայց ո՛չ այս իրիկուն։

Սեդրակ — (Թեւերը ազատել ջանալով) Թող գա՛յ, ինչ որ գալու է։ Ժամանակ չկայ սպասելու. ու ցածութիւն է, եթէ չերթամ (Ուժով կը խլէ իր բոջն ձեռքեն, բիչ մը հրէ ես, ու իմը դուրս)։

Ազնիւ — (Ծանր-ծանր ետեւն կ'իյնայ բազկաթոռին մէջ, ձեռքերովը դէմքը կը գոցէ ու կ'ըսկսի աննձայն հեկեկալու)։

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Պարզ ու փոքր սենեակ մը. խառնակ ու աղբատ կահաւորում: Իրիկուան դէմ:

ԸՆ

Նախ սենեակը մարդ չկայ. կը մտնեն Տանտիկինն ու Մուշեղը:

Մ ու շ ե ղ — (Ձորս-պին նայելով) *Մարդդ տունը չէ՞:*

կ ի ն ը — *Աբրահա՞մը: Տունն է:*

Մ ու շ ե ղ — *Դնա՛ կանչէ:*

կ ի ն ը — *վարը պարաէզն է. ազջիկներն ալ հոն են. Դո՞ւն ինչու այսչափ ուշացար. ըսիր՝ չուառով գալու եմ:*

Մ ու շ ե ղ — (Մտամոլար) *Հը՛մ:*

կ ի ն ը — *Ինչպէ՞ս թէ «Հը՛մ»:*

Մ ու շ ե ղ — *Հոս ինծի հարցնող չեղա՞ւ:*

կ ի ն ը — *Չէ՛:*

Մ ու շ ե ղ — *Այնպէս երիտասարդ տղայ մը, սուր մօրուքով:*

կ ի ն ը — *Չէ. ա՛չ-ա՛ք: Ինչ կայ որ: Բիթդ բնդանդ ինչո՞ւ ես կախեր:*

Մ ու շ ե ղ — *Դնա Աբրահամը վեր կանչէ:*

կ ի ն ը — *Էհ՛. ճաչի տանն այնպէս քիֆդ տեղն էր, ուրախ զուարթ: Մվ գիտէ՝ ինչ խնդի բանի վրայ նորէն բարկացեր ես: Արժէ՞: Քիֆդ նայէ՛, մա՛րդ Աստծու. աչխարհը փուճ է, փո՛ւճ. վազը միւս օրը մեռնի՛ս պիտի:*

Մ ու շ ե ղ — (Խայրուած) *Ի՞նչ:*

Կ ի ն ը — Դէ՛, խմարկէ՛, ո՞վ է ատեզացի. մեռնինք պիտի ամենքս ալ։

Մ ու շ ի ղ — Ա՛խ, ամե՛նքս ալ։

Կ ի ն ը — (Նցդալով) Երեխ, չես հաւատար, հա՞, որ մեռնիս պիտի։

Մ ու շ ի ղ — (Նեղկիրս) Դէ՛, թո՛ղ, խէր Աստծու, այդ պատարկ փիլիսոփայութիւնդ։

Կ ի ն ը — Ինչո՞ւ կը նեղուիս։ Շիտակը խօսելով՝ իմ հաւատալս ալ չի գար։ Ճո՛ւ, չատ անպիտան բան է. հո՛ն, հոգին ատկը, թո՛ղ, մո՛ւթը, որդի՛ը, դազա՛ղը, փո՛ւ, փո՛ւ, փո՛ւ։

Մ ու շ ի ղ — Հերիք է. յիմարութիւն պէտք չէ։ Գնա՛, Աբրահամը դրկէ՛ ինծի։

Կ ի ն ը — (Ձեռքը բաի տալով) Երթա՛մ, երթամ։ Բա՛, այս մեռնելու խօսքն ալ ուրկէ մէջ ինկաւ։ (Դուրս)

Ճ

Մ ու շ ի ղ — (Նեցուկ է աճապարժ, ոտքուկիւրը խառնած, աչքերը գետին, խոժոռ ու լուռ ալ)։

Ա բ ր ա հ ա մ — (Մտնելով) Ե՞րբ ես վերադարձեր, որ ես չիմացայ։ Ինչո՞ւ ես այդպէս տխուր մը։ Ի՞նչ է պատահեր։

Մ ու շ ի ղ — Պատահածը... դեռ ինքս ալ որոշ չգիտեմ. բայց հիմա կ'ըսուպի՛մ, խակ՛յն։

Ա բ ր ա հ ա մ — Բա՞ն մըն ես լսեր։

Մ ու շ ի ղ — Ինծի՛ նայէ. չուռով հոս է գալու Սեդրա՛կը, ա՛ն, Մինասեանները։ Գալուն պէս, կ'ելլես կ'երթաս հո՛ս, ձեր պահակոցը. ես իրենց մեծին հետ խօսքեր եմ արդէն։ Անիկա քեզի երկու ոտիկան կու տայ. կ'առնես կու գաս, հո՛ս, դիմացի սրճարանը, կը նստիս ու կ'ըսպասե՛ս։

Ա բ ր ա հ ա մ — Է՛։ Մի՛տքդ ի՞նչ է։

Մ ու շ ի ղ — Ես չոյս ունիմ որ այս բոլոր պատրաստութեանդ պէտք չենք ունենար, չոյս ունիմ որ անիկա ամեն բան կը պատմէ ինծի, կը պատմէ՛։ Բայց վերջապէս, ո՞վ դիտէ, եթէ կամքովը չըսաւ, ես կ'ըստիպեմ որ լեզուն բանայ։

Ա բ ր ա հ ա մ — Պէ՛, մա՛րդ, պարզ խօսէ, ես ալ բան հասկնամ։

Մ ու շ ի ղ — Դուն ըրէ՛, ինչ որ կ'ըսեմ քեզի։ Եթէ Սեդրակը ինծի հետ միասին առանձին դուրս գայ, բնա՛ւ չես երևար ու ոտիկանները ճանըռու կը դնես. խակ եթէ... (Դուրսէն frfիչ։ Մուտքի ակռանիչ կը դնէ)։

Ա բ ր ա հ ա մ — Ապրիլնե՛րն են։

Մ ու շ ե ղ — Իսկ եթէ անոնք՝ որ անիկա առանձին գուբս նկաւ, այն առանն... այն առանն դէմը կ'ուզարկեա ոսոխականները և խնդոյն ձերբակալել կուտաս։ Եւ կը տեսնե՞ք, լեզուդ կը բանա՞ս, թէ ոչ։

❧

կը մտնեն Թեւ-Թեւի՝ Սրբուհին մելամաղձոտ ու Աբաքսին որ կը քրքջայ։

Ս ր բ ու հ ի — Է՛, ձգէ՛։ (Թեւը հաճելով) Դուն արդէն խնդալ դիտես միայն։

Ա բ ա ք ս ի — Ըհը՛, մօրեզբայրս նկեր է։

Ս ր բ ու հ ի — Աչքդ լո՛յս. հանգստացա՞ր։

Ա բ ա ք ս ի — Զերթա՞նք, մօրեղբա՛յր. ժամանակ է կարծեմ։

Մ ու շ ե ղ — Հի՛մա, հի՛մա. քիչ սպասէ՛։

Ա բ ր ա հ ա մ — Կ'երթաս, ազջի՛կ, կ'երթաս։ Շտապե՞լդ ինչ է։

Մ ու շ ե ղ — (Ձորագին հայելով) Դու մօտդ թուղթ ու գրիչ չի՞ ճարուիր։

Ա բ ր ա հ ա մ — Ի՞նչպէս չէ. նեռը պատուհանին մէջ. տե՛ս։ (Դուրս, հետևեն եւ Մուշեղ)։

❧

Ա բ ա ք ս ի — (Կր փուռի բազմոցին ու խորունկ յօրանջ)։

Ս ր բ ու հ ի — Ո՜ւհ, ի՞նչ ալ խեղդուած օդ է հոս. մարդուս սիրտը ուելի կը սեղմուի։ (Տխուր) Ա՛խ...

Ա բ ա ք ս ի — Ինծի նայէ՛, չիմա՛ր, մե՛ղք է, մե՛ղք այդ ապուշ ազգ համար սիրա հատցնելը։ Ո՛չ մտմտայ, ո՛չ ուշ դարձուր։ Ընդհակառակը. նոյնիսկ եթէ գայ ու առջևդ ծունկ չոքի՝ նորէն երեսը մի նայիր։ (Իբր թէ առջեր չտեսնելու նեցը խօսելով) Ի՞նչ կը կամենաք, պարո՛ն. ինչո՞ւ էք չոքեր. խնդրե՛մ, խնդրե՛մ, կրնաք ոտքի ելլել. մեզք է, վարսիկիդ ծունկերը կը մաշի։ (Ինքնաին ձայնով) Աստոց հոխէն այսպէ՛ս կու գան։

Ս ր բ ու հ ի — Է՛, կ'բսե՛ս։ վերջապէս ամենքը քեզի պէս չեն։

Ա բ ա ք ս ի — Ան առանն նայէ՛ ու լա՛ց, չիմարի պէս։

Ե

կը մտնեն Տանտիկինն ու Սեդրակ: Արաքսի տեսածին պէս քացականչութիւն մը կ'արձակէ ու նստած տեղը քարացած կը մնայ: Տղան ալ զարմանք:

Կ ի ն ը — Հրամեցէ՛ք, նստեցէ՛ք, այս վայրկեանիս՝ Աղջիկնե՛ր, վազեցէ՛ք, իմա՛ց տուէք Մուշեղին, որ հիւրը եկեր է: (Սրբուհի դուրս):

Զ

Կ ի ն ը — Նստեցէ՛ք, խնդրեմ: Իսկո՛յն, իսկո՛յն:

Ս ե դ ր ա կ — (Կը մօտենայ ու ձեռք մեկնելով Արաքսիին): Ես բնաւ չէի սպասեր ձեզի հոս հանդիպելու:

Ա ր ա ք ս ի — Այո՛. մարդուս կը պատահին այդ տեսակ դժբաղդութիւններ:

Ս ե դ ր ա կ — (Ժպտելով) Աւիկա չէր իմ բաածս: (Կիները դուրս):

Է

Ա ր ա ք ս ի — (Ցանկարծ) Ըսէ՛ք խնդրեմ, միայն անկե՛ղծ ու պա՛րզ: Այն... ձեր առաջին հանդիպումէն իվեր ինձի նորէն տեսնելու ցանկութիւնը չունեցա՞ք:

Ս ե դ ր ա կ — Ազուռր հարց է:

Ա ր ա ք ս ի — Ո՛չ, ո՛չ, խնդրեմ, առանց խոյս տալու: Այո՞, Թէ ո՞չ:

Ս ե դ ր ա կ — (Պարզ) Այո՛. օհնեցայ:

Ա ր ա ք ս ի — Ինչո՞ւ չկարծ ուրնին:

Ս ե դ ր ա կ — Ի՞նչ ըսեմ: Գործո՛ւմ. զբաղո՛ւմ. չյարմարեցա՛ւ:

Ա ր ա ք ս ի — Չյարմարեցա՞ւ: Լա՛ւ, չնարհակալ եմ: Եւ իհարկէ տակէ ետքն ալ նոյնպէս յարմարելիք չունին:

Ս ե դ ր ա կ — Ինչո՞ւ: Ո՛չ: Ասկէ ետքը յոյս չունիմ ընդհակառակը:

Ա ր ա ք ս ի — Մի՞թէ: (Կատակով) *Ուրնին դեռ սպասեմ:*

Ը

կը մտնեն Տանտիկինը. Աբրահամ, Մուշեղ

Մ ո ւ շ ե ղ — (Ուրախ դեմ գալով) *Ա՛յ, կ'ըսպասէի՛։*

Ս ե դ ր ա կ — *կարծեմ չուշացայ։*

Մ ո ւ շ ե ղ — *Օ՛, ո՛չ։*

Ա. բ ր ա հ ա մ — *Շատ ուրախ եմ, տղա՛ս, որ պատիւ ըրիք ինծի իմ տանս մէջ։ Նստեցէ՛ք, խնդրեմ. վարուեցէ՛ք ինչպէս ձեր սեփական տանը. իսկ ինծի կը նեղէք. քիչ մը գործ ունիմ։*

Ս ե դ ր ա կ — *Խնդրե՛մ, իմ պատճառովս ամենևին անհանգիստ չըլլաք։ Պարոն Մուշեղի հետ քիչ մը խօսելիք ունինք. ուրիշ ոչի՛նչ։*

Ա. բ ր ա հ ա մ — (Մուշեղին՝ վարանելով) *Ուրեմն... ես երթա՛մ։*

Մ ո ւ շ ե ղ — (Կտրուկ) *Այո՛։*

(Աբրահամ դեպի դուռը)։

Մ ո ւ շ ե ղ — *Բայց չըլլայ թէ մոռնաս։* (Հատիկ-հատիկ) *Միայն ա՛յն ժամանակ, երբ առանձին ըլլայ. առանձի՛ն։ Հասկցա՞ր։*

(Աբրահամ դուրս)։

Ը

Ա. բ ա ք ս ի — *Դուն առաջուց գիտէի՞ր, որ պարոն Սեդրակը գալու էր։*

Մ ո ւ շ ե ղ — *Այո՛։*

Ա. բ ա ք ս ի — *Հապա ինչո՞ւ ինծի բան չըսիր։*

Մ ո ւ շ ե ղ — *Ի՞նչ։ Հիմա, սիրուն՛իկս, դուն մեզի վայրկեան մը առանձի՛ն ձգէ։ Մենք գո՛րծ ունինք։*

Ա. բ ա ք ս ի — *Բա՞ն չունիս։ Ի՞նչ գործի ժամանակ է հիմա։*

Մ ո ւ շ ե ղ — *Թող որ չուտով վերջացնենք։ Պարոն Սեդրակի ճանըթան ալ բաւական տեղ մեզի հետ է. կ'երթանք միասին։*

Ա. բ ա ք ս ի — *Այո՞։ կու գա՞ք միասին։*

Ս ե դ ր ա կ — *Ամենա՛յն սիրով։*

կ ի ն ը — *Գալէ՛, աղջի՛կս։ Սրբուհին ալ մինակ է։*

Ա. բ ա ք ս ի — (Ծծգոհ) *Բայց քիչ մը կարճ կապեցէք գոնէ։*

(Խուրս կ'ըսոջ եսեւեն)։

Մուշեղ կ'երթայ կը փակէ դուռը. կու գայ աթոռ մը կը հրամցնէ. եւ կը նստին դէմ դիմի:

Մ ու շ ե ղ — Ուրե՞ն։

Ս ե դ ր ա կ — (Ծպտուն) Խօսելու կարգը հիմա ձերն է։

Մ ու շ ե ղ — Այո՛. և հիմա է, որ պիտի երևայ, թէ մեր մէջը խոր ու ճշմարիտ բարեկամութիւն մը պիտի հաստատուի՞, թէ ոչ։

Ս ե դ ր ա կ — կը յուսամ. և ատիկա կախուած է իմ ըրած առաջարկիս ձեր հիմա տալիք պատասխանէն։

Մ ու շ ե ղ — Թողէ՛ք, սիրելի՛ս, այդ վերացական դատողութիւնները մէկ կողմ. և անցնինք խնդրի իրական կողմին. խօսինք իսկական գործի մասին։

Ս ե դ ր ա կ — (Զարմացած) Այսի՞նքն։

Մ ու շ ե ղ — Իսկո՛յն։ Ես չիտակ քալող մարդ եմ։ Ըսէ՛ք ինծի, բարեկա՛մս, որո՞նք են այն մարդիկը, որոնք հիմա մութ անկիւն մը նստած իմ անձիս վրայ ձեռք բարձրացնել կ'որոճան։

Ս ե դ ր ա կ — Ի՞նչ։

Մ ու շ ե ղ — Դիտեմ, որ դուք կը ճանչնաք այդ մարդիկը։

Ս ե դ ր ա կ — Շատ կը զարմանամ ձեր այդ տարօրինակ հարցին։ Նախ ես ի՞նչ կրնամ գիտնալ, թէ ո՞վ ինչ կը մտածէ ձեր մասին։ Երկրորդ ալ՝ եթէ բան մը գիտնայի իսկ՝ միթէ կարելի՞ է, որ այդ մասին խօսիմ ձեզի։

Մ ու շ ե ղ — Ինչո՞ւ ոչ։ Ե՛ւ կարելի է, և՛ անհրաժեշտ։ Դուք այնքան խելացի էք, որ անշուշտ հասկընաք պիտի. թէ ինծի համար ինչ մեծ կարևորութիւն ունի անոնց անուններուը ճշդիւ գիտնալը։

Ս ե դ ր ա կ — Բայց այդ ուղղութեամբ գժբաղդաբար ես ձեզի օգտակար ըլլալ չեմ կրնար։ Մեր բուն նիւթի մասին, որուն համար որ եկած եմ, եթէ ինծի ըսելիք մը ունիք՝ ամբողջովին ձեր տրամադրութեան տակ եմ. եթէ ըսելիք մը չունիք՝ այն ատեն ներեցէ՛ք, (ոտքի ելլելով) ձեզի ժամավաճառ ընել չեմ ցանկար։

Մ ու շ ե ղ — (Մեղմ հեգնութեամբ) Ինչո՞ւ այդքան կ'ըշտապէք. ես դեռ պէտք ունիմ ձեզի։ Եւ վերջապէս մութ դուք ձեր քրոջ չա՞փ ալ անկեղծ պիտի չըլլաք դէպի ինծի։

Ս ե դ ր ա կ — Քո՞յրս. ի՞մ քոյրս։

Մ ու շ ե ղ — Այո՛, օրիորդ Ագնիւը. և խօսած է ինծի չատ պարզ ու բնական կերպով, ինչպէս վայել է իսկական բարեկամու-

թևան. անտեղի է բոլորովին ձեր այդ չեմ-ու-չումը, մանաւանդ որ ձեր ըսելիքն ալ բնաւ նորութիւն մը չէ։ Միայն կ'ուզեմ առուգել, որ աւելորդ սխալներ չգործուին։

Սեդրակ — (Մտածկոտ) Քոյրս վերջին առներեսը իրաւ որ չատ էր տարօրինակ. ո՞վ գիտէ ինչ յիմար բաներ պատմեր է ձեզի։ Անոր բոլոր վախը ան է, որ գլխաւոր փորձանք մը կու գայ որևէ կողմէ։ Ան իր տանու գործերէն զատ ուրիշ բանով երբեք զբաղուած չունի. և չարժեր որ լաւրջ կարևորութիւն տաք իր հնարած վախերուն։

Մուշեղ — Իմ ըսածս ալ ատիկա է. պատրաստ եմ լսելու ձեզի. զուք անչուչա ծանօթ էք այդ հարցերուն չատ աւելի խորը. սրբագրեցէ՛ք. թէ չէ՝ սահպուած եմ բնականաբար անոր ցուցումներովը առաջնորդուելու. սխալն ու ճիշդը կ'երևայ վերջը։

Սեդրակ — Ապէ՛կ. ի՞նչ է ըսեր քոյրս ձեզի։

Մուշեղ — Հանդիսաւ եղէք, գէշ բան մը չէ ըսած։ Ինդրեր է, որ առժամանակ մը պալսէն հեռացընել տամ քանի մը որոշ անձեր, որ իրենց ալ, ինծի ալ փորձանք մը չպատահի. և նախապէս խօսք է առեր ինծմէ, որ այդ մարդոց որևէ ձեռս պէտք չէ հասնի։

Սեդրակ — Կ'ապշիմ. քոյրս թէև միշտ իր խելքի ու վճռականի աղջիկ մըն է, գիտեմ. բայց այս տեսակի վարմունք մը բնաւ մտքէս չէի կրնար անցընել։ Եւ որո՞նք են այդ մարդիկը։

Մուշեղ — Ընդամենը չորս հոգի։

Սեդրակ — Անուններո՞րը։

Մուշեղ — (Նկատելով) Անուններըը բնկեր են մտքես. և ճիշդ տուա է, որ կ'ուզեմ ինծի օգնէք։

Սեդրակ — (Ինչ մը կը մտածէ և վճռապար) Կ'օգնեմ։ Հասաւ վայրկեանը, որ ամէն ինչ չիխ-չիխակ յայտնեմ ձեզի։ Աւելի կը պահանջէ թէ՛ գործին օգուտը, թէ՛ ձեր օգուտը և թէ՛ նոյնիսկ իմ օգուտս։ Այդ չորսը կամ տասնըչորսը ով ալ կ'ուզեն ըլլան, տասնըչորս չեն ձեր փնտռած մարդիկը. տասնըմեսամբ ձեր ենթագրութիւններն են և մասամբ ալ երևի քրօջս երևակայութիւնները. անչուչա զբրաղեցնող նամակ մը, բան մը կ'ուզեր է իր ձեռքը, թէև ես միշտ զգուշ եմ եղած։

Մուշեղ — Չե՞ր զրպարտեր. և ի՞նչ նամակ։

Սեդրակ — Ինծի քիչ մը զարմանք կը պատճառէ ճշմարիտ, որ զուք ձեր ունեցած որատեսութեամբ ու փորձառութեամբ չկրցաք զգալ կամ գուշակել, որ ձեր փնտռած մարդը կեցած է ձեր դէմը ու կը խօսի ձեզ հետ։

Մուշեղ — Ի՞նչ ըսել կ'ուզէք. այսինքն զուք...

Սեդրակ — Այո՛, ե՛ս։

Մուշեղ — Բայց գիտէ՛ք, որ ես կատակել չեմ սիրեր, երբ հարցը իմ անձի ու իմ կոչ մասին է։

Սեդրակ — Բացարձակապէս կ'ըմբռնեմ և կը խօսիմ կատարեալ լրջութեամբ ու չիտակութեամբ։ Ե՛ս էի յանձն առեր, որ մէկ անգամէն ձեզի հետ մեր հաշիւները մաքրեմ, ինքս անձամբ. սակայ համաձայնեցայ ձեր հոգին և սիրտս ինձի դրգեց, որ այլ կերպ ելլէ ամէ գործիմ։ Ահա տարօրինակ կերպով հիմա դուք գիտէք, ինչ որ այս ծուռ քաղաքին մէջ ձեզմէ պատ ոչ-ոք չգիտէ։ Հիմա ձեր ընելիքը ձեր ձեռքն է։

Մուշեղ — Ա՛յդպէս։

Սեդրակ — կը կրկնեմ ձեզի, որ ընդունիք առաջարկս. ա՛յդ ճանրով միայն կրնաք սրբագրել գժբազդ անցեալը։ Արհամարանքով չվերաբերուի՛ք խօսքերուս. ես հիմա մինակ եմ ու անզէն ձեր դէմը բայց գիտէք մեծ ուժ կայ եռեւս, հեռուն, ուր ձեր ձեռքը քնաւ չի հասնիր. և ձեր կեանքի հանդէպ յեղափոխութեան առած որոշումը հաստատ է ու վերջնական. խուսափիլ չէք կրնար։ Այդ որոշումը փոխել կրնաք միայն իմ ըսած պայմանովս և սակայ մասին մտածողն ալ միայն ես եմ։

Մուշեղ — Ուրիշ խօսքով՝ ըսել կ'ուզէք, որ իմ կեանքս կախուած է ձեր կեանքի ապահովութենէն։

Սեդրակ — Մ'չ. ձեր կեանքը կախուած է իմ առաջարկս ընդունելէն։

Մուշեղ — Լսեցի. չատ կրկնեցիք. բայց ես թքեր եմ ձեր վրան ալ, ձեզի զրկողներուն վրան ալ. ինծմէ չատ բարև կ'ընէք ու այդպէս կը զրէք։

Սեդրակ — Շատ կը ցաւիմ, որ թերի կը գնահատէք ձեր դէմ եղած ուժն ու սահմանութիւնը։ Վերջին անգամ մը կրկնեմ՝ մի՛ մերժէք առաջարկս։

Մուշեղ — (Ձայնիցով) Գացէ՛ք, գացէք։ Հասկցայ։ Հերիք է։

Սեդրակ — Պարո՛ն Մուշեղ, կ'ազաչեմ ձեզի, լսեցէ՛ք ինծի։ Մե՛ղք ենք, դո՛ւք ալ, ե՛ս ալ։

Մուշեղ — Գացէ՛ք, գացէ՛ք ու կատարեցէ՛ք ինչ որ յանձն էք առեր այդքան մեծ հերոսութեամբ։ Ինդրե՛մ, իմ մասին հոգ մի՛ քաշէք. իսկ ձեր մեղք ըլլալու մասին դեռ ազատ ժամանակ չատ կ'ունենաք մտածելու։ Ահա՛ դուռը։

Սեդրակ — Կ'երթամ։ Դուք իսկապէս հիմա մտանէք պիտի ինծի. բայց համոզուած եղէք, որ սակիս կ'ըլլայ ձեր վերջին մտածութիւնը։ (Դուրս)։

ԺԱՆ

Մուշեղ կեցած է մէջտեղը լուռ ու խոժոռ: Կողմնակի դռնէն կը մտնէ Արաքսի ու զարմանքով կը նայի շուրջը:

Արաքսի — Գնա՞ց: Արդէն գնա՞ց: Ո՞ւր է պարոն Սեդրակը:
Մուշեղ — (Ցուցած) Ի՞նչ:
Արաքսի — Պարոն Սեդրակը գնա՞ց:
Մուշեղ — (Իր մտածումներուն մէջէն) Այո՛, գնա՛ց:
Արաքսի — Բայց, չէ՞ որ պէտք է երթայինք միասին...: Գնաց առանձի՞ն:
Մուշեղ — (Ցատուկ շեշտով մը) Այո՛, առանձի՛ն:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

Ընդարձակ սենեակ մը, շատ քիչ կահեր: Ճակատը՝ փողոց նայող երեք պատուհան. պատուհաններուն տակը երկար բազմոց: Առատ գորգեր ու բարձեր: Մուտքը աջէն ու ձախէն:

Ա

Մուշեղ փռուած է բազմոցին, ծխախոտի թանձր մուխի մէջ, մռայլ, ակնապիշ: Քիչ վերջը ներս կը մտնէ Որբեւայրին, նախ հեռուէն կը դիտէ. լուռ, հանգիստ քայլերով կը մօտենայ անոր՝ գլխու կոզմէն, ու քիչ մըն ալ այդպէս դիտելէն վերջը:

Ա յ ր ի ն — Է՛, հերիք է վերջապէս: (Մուշեղ բնդոս վեր կը ցատկէ): Ինչո՞ւ այդպէս վախցար:

Մ ու շ ե ղ — (Նորէն փռուելով) Դո՞ւն ես:

Ա յ ր ի ն — Հոգի՛դ սիրես, վերջապէս բառ մը ըսէ: Ի՞նչ է սակայն եթէկ գիշերըընէ իվեր. քիթէդ իյնողը հազար կտոր կ'ըլլայ. ի՞նչ է պատահեր:

Մ ու շ ե ղ — Ոչի՛նչ. ի՞նչ պիտի պատահի: Ինծի համ թոյլ վայրկեաններուս տեսան ու երես առին. ահա՛ բոլորը ինչ որ պատահեր է:

Ա յ ր ի ն — Աս ո՞վ:

Մ ու շ ե ղ — Երևխաննե՛ր:

Ա յ ր ի ն — Ո՞վ է որ սակայ:

Մ ու շ ե ղ — Ո՞վ է. հը՛մ. որ կը մտածեմ կատղիս կու գայ: Ես այնպէս խղճամ, այնպէս սրտանց հետը վարուիմ, և ան... ան ոչ

դիակ պիտացս նստած ինչո՞ւ կը մտածէր այդ միջոցին... Դէ՛, գնա՛, գնա՛ ու հիմա մարդոց լուսաթիւն ըրէ՛:

Ա յ բ ի ն — Հապա՛. ես որ քեզի կ'ըսեմ:

Գ

Յանդարծ ուժով կը բացուի ծախի դուռը: Մուշեղ նորէն ընդոստ վեր կը թռչի. կը մտնէ Արմենակ:

Մ ու շ ե ղ — Ի՞նչ է այսօր ամենքդ ալ այդպէս յանկարծ. չե՞ս կրնար քիչ մը աւելի կամաց:

Ա բ մ ե ն ա կ — Ներեցէ՛ք, էֆէնդի՛ս:

Ա յ բ ի ն — (Ծիծաղով) Զեզի ա՞վ բացաւ դուռը:

Ա բ մ ե ն ա կ — Սրտապին բարեկամութեան ու խորին յարգանքի տաչև դռները ինքնին կը բացուին, տիկի՛ն:

Մ ու շ ե ղ — (Զար) Ի՞նչ ուներս:

Ա բ մ ե ն ա կ — Բերի գող կոպէկի գործը: Արտագրած եմ բոլոր, մէյն երկու կէտ կայ, որու մասին ձեր կամքը կ'ուզէի իմանամ. նախ որ...

Մ ու շ ե ղ — Ազէ՛կ, ազէ՛կ. դեռ քիչ մը հանգստացի՛ր. վե՛րջը, նէ՛րսը:

Ա բ մ ե ն ա կ — Ինչպէս որ կը հրամայէք, էֆէնդի՛ս: (Տիկնոջ դառնալով) Հա՛, ի՞նչ պիտի ըսէի: Դուք կարծեմ Մինասեաններուն հետ քիչ մը ծանօթութիւն ունիք, չէ՞:

Ա յ բ ի ն — Ո՞րը:

Ա բ մ ե ն ա կ — Ա՛ն, որոնց ազան նոր դարձաւ Եւրոպայէն:

Ա յ բ ի ն — Ա՛, այո՛. ինչպէս չէ: Ի՞նչ կայ որ:

Ա բ մ ե ն ա կ — Այսօր իմացայ, որ երէկ գիչեր ձերբակալեր են: Եւ կ'ըսեն թէ չատ ծանր յանցանք կայ վրան:

Ա յ բ ի ն — Ի՞նչ կ'ըսէք. խե՛ղճ տղայ: Վրայէն ատանկ բան չէր երեւար:

Ա բ մ ե ն ա կ — Է՛, տիկի՛ն, վրայէն պիտի չնայիլ. ժամանակները չա՞տ են գէշցեր. դուրսէն որ կը նայիք՝ կարծես գառնուկներ ըլլան: Այնպէս չէ՞, էֆէնտի՛ս:

Ա յ բ ի ն — (Մուսեղին) Դուն բան գիտէի՞ր: Ինչպէս է որ չըսիր մեզի:

Մ ու շ ե ղ — (Յանկարծ ոտքի ելլելով՝ Արմենակին) Նա՛, երթա՛ք ներս, մեր գործին:

Ա բ մ ե ն ա կ — Ինչպէս որ կը հաճիք, էֆէնդի՛ս: (Միասին դուրս):

Գ.

Որբևայրին կը վերցնէ կարի զամբիւղը, կը նստի բազմոցին։ Հազիւ է սկսած աշխատելու, որ կը մտնէ Աբաքսի՝ ծաղկեփոնջ մը սեղմած կրծքին։

Ա յ բ ի ն — Աս ի՞նչ անագին փունջ է, աղջի՛կ. պարտէզը ալ ուրիշ ծաղիկ չկար։ Խե՜նթ ես դուն։

Ա բ ա ք ս ի — (Բաղդատուր ու երես առած) Չա՛, մամա, խենթ եմ. այս գիշեր ալ խենթ երազ մըն եմ տեսեր։

Ա յ բ ի ն — Թէ ի՞նչ։

Ա բ ա ք ս ի — Իբրև թէ դեռ գպրոց կ'երթամ. աղջիկ-ազայ լեցուած գպրոցին բակը կը խաղանք. խոշոր դնդակ մըն էր, կը նետէինք իրար. յանկարծ այդ անագին դնդակը սեղմեցի կրծքիս ու փախայ դռնէն դուրս. ի՞նչ կը վազեմ. առաջ փոզոցն էր, ետքն ալ դաշտեր ու դաշտեր, մարգեր ու արտեր. նախ բոլոր ընկերներս ալ կը վազէին ետևէս, որ անագին ծաղկեփունջը խլեն ձեռքէս. ծաղկեփունջ էր, դնդակ չէր կրծքիս սեղմածս։ Գայլ քիչ-քիչ բոլորն ալ ետ մնացին. կը լսէի, որ մէկը ուժեղ-ուժեղ չնչելով յամառ կը վազէր ետևէս և քալուածքը ազու էր։ Ես գլուխս չէի դարձներ, բայց գիտէի թէ վազողը ով է։ Սասեկ յոգներ էի, դժուար չունչ կը քաշէի, բայց այնպէս բաղդատուր էի և փունջս ամբողջ կրծքիս սեղմած ի՞նչ կը վազէի։ Բայց կ'ըզգայի, որ ետևէս եկողը քիչ-քիչ կը մօտենար ինծի. մէկ-երկու անգամ ձեռքին մատները դպան ուսիս, մէջքիս ու թևերուս. իմ ալ խնդալս կու գար. հա՛, հա՛, բռնուէի պիտի, որ մէկէն իմ մէկ արթընցայ. երկու ձեռքս սեղմեր էի կրծքիս ու սիրտս տեղի պէս կը թրբռտար։

Ա յ բ ի ն — Է՛, երազներդ ալ քեզի պէս խենթ ու խելառ։

Ա ի ա ք ս ի — Ատոր համար ալ իմայ պարտէզ ու այս փունջը կապեցի։ Կարելի է, որ այսօր կ'ելլէ կուգայ։

Ա յ բ ի ն — Քա՛, ո՞վ։

Ա բ ա ք ս ի — Ետևէս վազող տղան երազիս մէջ։

Ա յ բ ի ն — Է՛, որ կ'ըսեմ փախուկ ես։

Ա բ ա ք ս ի — Չէ՛, մամա, խօսքս Սեդրակի մասին է. երէկ խօսք տուու, որ կու գայ։

Ա յ բ ի ն — Քա՛, ո՞վ։

Ա բ ա ք ս ի — Սեդրակը, ըսի, Մինասեան։

Ա յ բ ի ն — Ցնդած բաներ մի՛ խօսիր։ Մինասեան Սեդրակը կառավարութիւնը բաներ է ու հիմա բանտն է։

Ա. բ ա ք ս ի — կառավարութիւնը ո՞վ է բռներ։

Ա. յ բ ի ն — հո՞ւլ ես։ Սեղրակը։

Ա. բ ա ք ս ի — (նեղսով) կառավարութիւնը ի՞նչ է ըրեր Սեղրակը։ Դուն ալ երազ ես տեսեր, մամա՛։

Ա. յ բ ի ն — երազ չէ, իրաւ է ըսածս։ Երկկ գիշեր կոխեր են տունը. խուզարկեր են մինչև առաւտ և տարեր են բռնած։

Ա. բ ա ք ս ի — (Հեգնեցեր կարծես ըմբռնելով) Երկկ գիշեր. մինչև առաւտ. տարեր են բռնած։ (Յանկարծ եւ դեպի դուռը նետուելով, յուսահատ պոռոցով) Մօրեղբա՛յր, մօրեղբա՛յր։

Ա. յ բ ի ն — Քա՛, ի՞նչ եղաւ քեզի։ կամաց։ (Թևէն բռնելով) Մօրեղբայրդ գործ ունի։

Ա. բ ա ք ս ի — (Հպատակելու նիգով) Ձգէ՛։ Մօրեղբա՛յր, մօրեղբա՛յր...

Գ

Մ ո ւ շ ե ղ — (Իր դռան մէջ) Ի՞նչ է ան. ի՞նչ կայ։

Ա. բ ա ք ս ի — (Դէմը վազելով) Մօրեղբա՛յր, լա՞ւ ես, լա՞ւ ես։

Մ ո ւ շ ե ղ — Ինչը։ Ինչ է եղեր քեզի։

Ա. բ ա ք ս ի — Որ Սեղբակը բռներ են։

Մ ո ւ շ ե ղ — (Սառը. ես վաճելով) Է՛, ի՞նչ ընենք. ատոր համա՞ր ես ձայնդ ալխարհք ձգեր։

Ա. բ ա ք ս ի — (Շուար) Բայց... բայց... բռնած են զրեր։

Մ ո ւ շ ե ղ — (Ախոյս) Քեզի չի վերաբերող բաներուն մի՛ խառնըւիր ու դնա՛ բանիդ։

Ա. յ բ ի ն — Շիտա՛կ է, չիտա՛կ, ազջի՛կս, գնա՛ գործիդ։ Երեւի, բան մը ըրեր է. թէ չէ կառավարութիւնը ձրի հա՞ց ունի կերցնելու։ Ալ վատնութիւն ըսած բանը չէ մնացեր աշխարհս երեսին։ Հիմակուան ճահիլները բոլո՛րն ալ անպէտք բռներ, բոլո՛րն ալ։ (Դուրս)։

Դ

Ա. բ ա ք ս ի — (Որ մօրը խօսելու ատենը իր մտերուն մէջ եր բաղուեր, յանկարծ բաւ կու տայ ինքզինքը)։ Ա՜հ, ա՛ւտ է. անկարելի՛ բան։ Ձէ՞, մօրեղբա՛յր, ա՞ւտ է, չէ՞։ Ըսէ, դուն կ՛իմանա՛ս. իրա՞ւ է։

Մ ո ւ շ ե ղ — Այո՛, այո՛. վերջ տուր միայն. գլուխս ցաւեցուս։

Ա. բ ա ք ս ի — Այո՛... (Հանգիստ) Է՛, ի՞նչ պիտի ընենք այն ատեն։ Ձէ՞ որ դուն մեծ մարդիկ կը ճանչնաս. ատիկան փաչան ալ բաներկամդ։

Մ ո ւ շ հ ղ — (Խոժոռ) *Եաքը՞:*

Ա ր ա ք ս ի — (Մուշեղի վրայ նետուելով՝ ադաչաճոմով) *Մօրհղբա՛յրս, անգի՛ն մօրհղբայրս:*

Մ ո ւ շ հ ղ — (Ի՛ր բռնի ածուր գլուխը ու ցայելով շե՛շտ ածուր աչխեռուն) *Ինծի նայէ՛, տեսնո՛մ: Ի՞նչ գործ ունիս գուն այդ տղուն հետ:* (Ետ հրելով ու գուշակելով) *Հը՛ը՛· սա էր ուրեմն: Առաջարկ, մտառջարկ:*

Ա ր ա ք ս ի — (Կոտրուած) *Մօրհղբա՛յր...*

Մ ո ւ շ հ ղ — (Մռայլ) *Դնա՛, դնա՛, հեռացի՛ր դուն ալ· դուն ալ:*

Ա ր ա ք ս ի — *Ի՞նչ կ'ըլլայ· անգամ մը որ խօսիս փաչայիդ· ան քու խօսքդ չէի կոտրեր:*

Մ ո ւ շ հ ղ — (Զար ու ակռաձերուն մէջէն) *Դնա՛, կ'ըսեմ քեզի· դո՛ւրս· ու ալ չհամարձակի՛ս դիմացս բառ մը արտասանելու:*

Աբաքսի ակնթարթ մը կը նայի ապշած. դէմքը լացի կը ծամածռի. գլուխը կախ՝ կամաց կ'ելլէ դուրս:

2

Մ ո ւ շ հ ղ — (Սեղմած ակռաձերով ինչ մը կը ցայի ածուր եսեւեն. եւ ուժով մը ետ կը հրէ կից սենեակին դուռը) *Արմենա՛կ, Արմենա՛կ:*

Ա ր մ ե ն ա կ — *Էֆէնդի՛ս:*

Մ ո ւ շ հ ղ — *Քալէ՛· արթնանք: Կը խօսինք ճանբին:*

Ա ր մ ե ն ա կ — *Ինչպէս որ կը հրամայէք, էֆէնդի՛ս: Իսարկէ, ճանբին ալ կրնանք խօսիլ:*

Մ ո ւ շ հ ղ — (Որ կը մտածեր) *Դուն կարծեմ աղջի՞կ մը ունիս, չէ՞:*

Ա ր մ ե ն ա կ — *Ո՛չ, էֆէնդի՛ս. երկո՛ւ հատ:*

Մ ո ւ շ հ ղ — *Երկո՞ւ. ուրեմն գէշ: Երեւի կը սիրե՛ս:*

Ա ր մ ե ն ա կ — *Կ՛, իսարկէ, էֆէնդի՛ս:*

Մ ո ւ շ հ ղ — *Եւ ինչո՞ւ համար:*

Ա ր մ ե ն ա կ — *Մարդ իր զաւակը...*

Մ ո ւ շ հ ղ — *Որովհետեւ մարդ ըսուածը տխմար մըն է: Գուցէ կը կարծես, որ աղջիկներդ ալ քեզի կը սիրեն. չէմ՛ը: Բոլորը սո՛ւտ է, սուտ: Բոլորը չոզոքաբերութիւն է միայն, բոլորը քծնանք ու հաշիւ: Մէ՛կ ակռ կայ միայն, մէ՛կ՝ որը սուտ չէ, որ կեղծ չէ, և որու մասին ամենքը կեղծաւորութեամբ կը լռեն:* (Պինդ կռծիին զարնելով) *Ինքզինքի՛ն սէրը, ինքզինքի՛ն: Աշխարհս մարդ միայն ինքզինքն է որ կը սիրե, կ'ուզէ ըլլայ աղջի՛կդ, քո՛յրդ, եղբայրդ, ազգակա՛նդ, ի՛նչ կ'ուզէ ըլլայ: Սո՛ւտ է, ուրիշը սիրել չկա՛յ. հասկցա՞ր: Քալէ, քալէ՛ երթանք:*

Կ'ուղղուի ծախ դուռը, ուրկէ արագ ներս կը նետուի Որբեւայրին լրար անցած:

Ը

Ա յ բ ի ն — Մուչո՛ղ, Մուչո՛ղ. Մինասեանններուն Ազնի՛ւն է։

Մ ու շ ե ղ — (Սառը) Ի՞նչ կ՚ուզէ։

Ա յ բ ի ն — Կ՚ըսէ՝ հետդ խօսի պիտի. երեւի, եղբօրը մասին։

Մ ու շ ե ղ — (Ձար) Ըսէ՛ որ տունը չեմ, ըսէ՛ որ··· (Ընդհատելով)։ կեցի՛ր։

Ա յ բ ի ն — Է՛, ի՞նչ կարիք կայ. ազուոր չի փախչիր։ Մէկ երկու խօսք ըրէ՛ ու ճանրու դի՛ր։

Մ ու շ ե ղ — (Մռայլ) Թող գա՛յ։

(Որբեւայրին դուրս)։

Ը

Մ ու շ ե ղ — Իսկ դուն կ՚ըսպասե՛ս մէկ-երկու վայրկեան, չէ՞։ Նաեւ՛ ներսի սենեակը. երկար չի քաշեր. քանի մը վայրկեա՛ն միայն։

Ա բ մ ե ն ա կ — Ինչպէս որ կը հրամայէ՛ք, էֆէնդի՛։ Կ՚ըսպասեմ, ի՞նչ ընես. դուք ձեր գործը տեսէք։ (Կը մտնէ կից սենեակը)։

՟

Որբեւայրին կ՚առաջնորդէ Ազնիւը ներս եւ ինքը իսկոյն կամաց կ՚երթայ դուրս։ Ազնիւ վայրկեան մը կանգ կ՚առնէ դրան մօտ՝ գլխարկի սեւ ու նուրբ ծոպին տակէն դիմացինը դիտելով։ Մուշեղ ալ կեցած է տեսակ մը կռուի պատրաստ, սպասողական դիրքով։ Բիչ լուռ։

Մ ու շ ե ղ — Ինծի՛մ, օրհո՛ղդ։ (Աթոռը մատնանիշ)։ *Ձեր կա՞մքն է։*

Ա զ ն ի ւ — Եղբայրս բանան է, պարո՛ն Մուշեղ։

Մ ու շ ե ղ — Գիտե՛մ։

Ա զ ն ի ւ — Եւ երէկ իրիկուն, ձեզի գալէն անմիջապէս առքը։

Մ ու շ ե ղ — Գիտե՛մ։

Ա զ ն ի ւ — Եւ կ՚ըսեն, իբրեւ մէկ ձեր մասը կայ մէջը։

Մ ո ւ շ ե ղ — ձի՛չդ է։

Ա զ ն իւ — ձի՞չդ է։ (Մուշեղ գլխով կ՚ընէ)։ Ուրեմն... ուրեմն... Բայց ինչո՞ւ։

Մ ո ւ շ ե ղ — Ինչո՞ւ. դեռ կը հարցնէ՞ք։ Դուք փոխանակ երէկ ինծի՛ խորհուրդ տալու որ Պոլսէն հեռանամ, այդ խորհուրդը դուք վաղուց ձեր եղբօրը տալու էիք, որ պատիւն ազատէր իր բարեբարի կեանքին դէմ դարան չլարէ։

Ա զ ն իւ — Սո՛ւտ է. իմ եղբայրս մարդասպան չէ՛։

Մ ո ւ շ ե ղ — Այսինքն ինքը անձա՛մբ, իսկապէս, հազիւ թէ այդ-չափ քաջութիւն ունենար. բայց կան և ուրիշի ձեռքով մարդասպաններ, և սոսկալի ամենազզուելիներն են. ձեր եղբայրը սոսկումէ է։

Ա զ ն իւ — (Որ աւերարք կը ճայիր աւոր. յանկարծ կը նետուի ոտ-ներս) Մի՛ հաւատաք, մի՛ հաւատաք, մի՛ հաւատաք։ Ձեր ոտքերն ինկած կ՚աղաչեմ ձեզի, կը խնդրեմ ձեզի, մի՛ ընէք. պարո՛ն Մուշեղ, մի՛ ընէք։ Խնայեցէ՛ք դոնէ մօրս, խնայեցէ՛ք մեր հին բարեկամութեանը. մի թէ այդ բոլորը ձեզի համար ո՞չ մէկ նշանակութիւն չունի։

Մ ո ւ շ ե ղ — Ելէ՛ք, ելէ՛ք ոտքի։ Մեզադրեցէ՛ք ձեր եղբայրը։ Իր մեղքը իր վիզը։

Ա զ ն իւ — Լա՛ւ. ան թող մեղաւոր ըլլայ. բայց մե՞նք. մսա-ծեցէ՛ք մեզի, մսածեցէ՛ք ինծի. դոնէ ինծի՛ համար, պարոն Մուշե՛ղ, դոնէ ինծի՛ համար։ (Լալով) Վերջապէս պարտական՝ն էք մսածելու, վերջապէս իրաւունք չունի՛ք իմ կեանքս այսպէս խորտակելու. և ասիկա արդէն երկրո՛րդ անգամ, երկրո՛րդ։

Մ ո ւ շ ե ղ — Ելէ՛ք, օրիո՛րդ. ելէ՛ք, խնդրեմ։ (Կը բարձրացնէ թեւէն ու կը ցատեցնէ բազմոցին) Ի՞նչ ըսել կ՚ուզէք, օրիո՛րդ...

(Ազնիւ դեմքը ծածկած կու լայ)։

Մ ո ւ շ ե ղ — Ինչպէ՞ս թէ երկրորդ անգամ. ես ձեզի ի՞նչ եմ ըրեր. ե՞րբ։

Ա զ ն իւ — (Յանկարծ, կրճոս, տարուած. դեմքը բանալով) Դո՛ւք դո՛ւք. ոչի՛նչ. ամենևին։ Ձեզի համար ի՞նչ. ձգեցի՛ք, ելաք գա-ցի՛ք. ձեզի՞ ինչ, ձեզի ի՞նչ, որ կնոջ մը կեա՛նքը, բա՛զդը, երիտա-սարդութի՛ւնը թոռմեր էր, չորցեր։

Մ ո ւ շ ե ղ - (Տարուած) Ա՞յն աաեն, երբ... երբ ես... (Ընդհա-տելով)։ Ուրեմն իմ զգացումներս ինծի չէին խաբած, ուրեմն դուք լուրջ...

Ա զ ն իւ — (Դառն հեգնութեամբ) Լո՛ւրջ...

Մ ո ւ շ ե ղ — Եւ ոչի՛նչ չըսիք։

Ա զ ն իւ — Ի՞նչ պիտի ըսէի։

Մ ո ւ շ ե ղ — Ոչ իսկ չնչին ցոյց մը։ Դուցէ...

Ա զ ն իւ — (Սթափելով, ապշած) Բայց ինչո՞ւ համար հիմա այս բոլորի մասին խօսեցայ ձեզի։

Մ ու շ ե ղ — (Ծաւիր հայլով կ'երթայ, կը չեմուի պատին ու մամոյր խօսուածով) *Ուրիմն եղեր է մէ՛կը աչխարհիս երեսին, ուրիմն եղեր է մէ՛կը։ Ուրեմն կը սիրէի՞ք ինծի, հա՞, կը սիրէի՛ք առանց ոչինչ յայտնելու, առանց ինծմէ որևէ չահ, որևէ փոխարինութիւն սպասելու. տարօրինա՛կ է, հաւատալն անգամ տարօրինակ է։* (Ինչ լուռ.) *Իսկ վե՞րջը*

Ա. զ ն ի ւ — *Ինչպէ՞ս։*

Մ ու շ ե ղ — *Բայց վերջը ինծի տանեցիք, ինարկէ, մանաւա՛նդ այս վերջին տարին։*

Ա. զ ն ի ւ — (Պարզ) *Ինչո՞ւ։*

Մ ու շ ե ղ — (Ցմծիծաղ) *Անշուշտ ձեզի՛ ալ են պատմեր, թէ ես ի՞նչ մարդ եմ։*

Ա. զ ն ի ւ — *Ձեր մասին չատ բաներ կը խօսին, ճի՛շդ է, և մէկը միւսէն աւելի գէշ։ Բայց ես... ես միշտ խորհեր եմ, որ ուրիշի հոգին հասկընալը չատ դժուար բան է, մանաւանդ խոր ու յամառ մարդոց։ Ես գիտեմ, որ դուք ուրիշներուն չատ կարևորութիւն տալոդներէն չէք, իսկ այդ տեսակ մարդիկը հասարակութենէն չեն սիրուիր։*

Մ ու շ ե ղ — (Զարմացած, յափշտակուած) *Ո՞վ ըսաւ ձեզի այդ բոլորը։*

Ա. զ ն ի ւ — *Եւ վերջապէս կան չա՛տ ձախորդ կեանքի պարապաներ, երբ ստիպուած ենք այն տեսակ բան մը ընելու, որու համար մենք չէինք ստեղծուած։*

Մ ու շ ե ղ — (Վայրի ու բուռն ծիծաղ ու ինչ հանդարտած) *Ա՜հ, ի՜նչ ապուշ է կեանքը։ Մենք մեր բազդը ո՛ւր ըսես կը փնտռենք, ու չենք նայիր միայն մեր ձեռքին տակը, ուր անիկա դրած է. իսկ երբ ան՛ կը տեսնենք՝ արդէն ո՛ւշ է։ Ի՞նչ կ'ըլլար, որ այս խօսակցութիւնը մենք եօթը տարի առաջ ունենայինք։ Ո՞վ գիտէ, գուցէ բոլոր բովին ուրի՛շ, ա՛յլ կը դառնար աչխարհը մեզի համար։*

Ա. զ ն ի ւ — (Ներզկոտ) *Եօ՛թը տարի առաջ, ույո՛, եօթը տարի առաջ...* (Սթափելով) *Բայց, է՛, խօսինք միայն եղբօրս մասին։ Թողէ՛ք, խնդրեմ, թողէ՛ք այդ բոլորը։*

Մ ու շ ե ղ — (Ոգեւորուած) *Ինչո՞ւ, ինչո՞ւ թողնեմ. երբե՛ք։ Ա՛յ, եթէ դուն ուզենաս... լսէ՛. դուն այդքան քաջ ես եղեր ու անկախ՝ բոլոր հասարակութեան կարծիքին հակառակը դառնալու, մի՞թէ չե՞ս կարող, մի՞թէ չե՞ս ուզեր այդ ճանրովը չարունակես։ Եկո՛ւր, արհամարէ՛ բոլոր մեզի չրջապատողները, բոլոր մեր հակառակորդները, և դուն ճի՛շդ առանք աւելի կատղեցնելու համար, տո՛ւր ձեռքդ ինծի. և մենք ձեռք ձեռքի...*

Ա. զ ն ի ւ — (Խորին վշտով) *Թողէ՛ք, թողէ՛ք. ալ անցած է այս խօսակցութեան ժամանակը։*

Մուշեղ — Ինչո՞ւ։ Բազդը բռնելը ուշ չէ երբեք. եթէ իրա՛ւ որ ինծի կը սիրես։

Ազնիւ — (Դեմքը գոցելով) Ա՛խ, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ։

Մուշեղ — (Յաղթական) Կը սիրե՛ս, չէ՞, կը սիրե՛ս։ Ալ ի՞նչ ուրիշն. թէքեր ենք բոլոր ապուչնեռւն ալ վրան, խելօքներուն ալ, անոնց բաժին ալ ու իրենց դաստզուխնեռւն ալ վրան։ Բաւական է մե՛նք բազդաւոր ըլլանք, բաւական է գոհ ըլլանք մենք մեզմո՛վ։ Ալ ի՞նչ ատկէ անդին։ Տո՛ւր, Ազնի՛ւ, առ՛ւր ձեռքդ ինծի. առ՛ւր համարձակ. զա՛րկ պինդ ապառկ մը այդ միմոս հասարակութեան երեսին. և հաւատա՛, քեզի կ'երկրպագեմ ես, աստուածուհի մը պէս, թևերուս վրայ կը պառցնեմ քեզի։ կը սիրե՛մ, կը գգուե՛մ, կը փարիմ քեզի, կեանքիս պէս։ Նայէ՛ ես քառասունի մօտիկ մարդ եմ. սիրահարած պատանիի մը խօսքերը չէ՛, որ կը լսես։

Ազնիւ — (Վախով) Թողէ՛ք, թողէ՛ք, հոգինիդ սիրէք։ Խօսի՛նք եղբօրս մասին. եղբայրս բանսն է։

Մուշեղ — (Գրգռուած) Ա՛, «եղբա՛յր», «եղբա՛յր» երկու խօսքէն մէկը։ Ջոր ու կտրուկ) Քու եղբայրդ իմ թշնամիս է. վերջացո՛ւ. ուրիշն և քու թշնամիդ, եթէ իրաւ որ ինծի կը սիրես։ Այս վայրկեանէս սկսած ալ ոչի՛նչ դոյութիւն պիտի չունենայ քեզի համար. առ՛ւն, առ՛ղ, ա՛զդ, ազգակա՛ն, ոչի՛նչ, ոչի՛նչ։ Ե՛ս, միայն ե՛ս։ Իսկ ինծի համար ալ միայն դո՛ւն։ Կ'ուզե՞ս, կ'ուզե՞ս ինծի՛ հետ, միա՛յն ինծի հետ, հիմա՛, հո՛ս, անմի՛ջապէս, բոլո՛ր իմ թշնամիներուս հակառակ, բոլո՛ր աշխարհի գիմաց. եթէ իրա՛ւ որ ինծի կը սիրես։ Հա՞, կ'ուզե՞ս, կը սիրե՞ս։

Ազնիւ — (Շուար, վախով) Մենք... մենք իրար չենք հասկըներ։ Ես... չգիտեմ ի՞նչ կը խօսիք։ Ես սկսայ միայն խնդրելու, որ դուք... (Լացուկառաչ) Ա՛խ, ի՞նչ չահ ունիք դուք, եթէ կեանքս վերջնականապէս խորտակէք։

Մուշեղ — (Սառն ու ծաղրով) Այդ ո՞րչափ զբաղուած էք դուք ձե՛ր կեանքի խորտակումովը. և միա՛յն ձեր կեանքի. իհարկէ քո՛ւ եղբո՛րդ։ Իսկ ե՞ս։ (Ծիծաղ)։ Ա՛հ, ի՞նչ փոյթ, քեզի՞ ինչ իմ կեանքս։ Ահա՛ քու բոլոր սէրդ, ահա՛ ձեր բոլորի սէրը։ Ապերախտնե՛ր, չդղրդրթնե՛ր. չե՛մ ուզեր, չէ՛. ինծի պէ՛տք չէ ձեր սէրը. ո՛չ ձեր սէրը, ո՛չ ձեր համակրանքը. ինծի պէ՛տք չէ ո՛չ-ոքի սէրը։ Գնա՛, գնա՛, ի՞նչ գործ ունիս հոս, գնա՛ եղբօրդ եաւէն. ինչո՞ւ ես ևկեր ինծի, ի՞նչ կ'ըսպասես ինծմէ։ (Հեգնելով) Որ քու կեանքդ չխորտակե՞մ, հա՞. խնայե՛մ եղբայրդ, հա՞, որ վաղը ևլէ գնդակ մը ղրկել տայ կուրծքս՞ ու միանին նստիք ու խնդաք ապուչութեանս վրայ։ Սակայն այդ անմիտները պզտիկ բան մը մոռցեր են. մոռցե՛ր են, որ ես զեռ մեռած չեմ։ Գնա՛, գնա՛ ըսէ՛ այդ քու եղբօրդ ու այդ քու եղբօրդ եղբայրներուն, որ ես դիտեմ ինչպէս պէտք է ձըզ-

մել պատերուն տակէն սազացող օձերուն գլուխը: Դնա՛, դնա, ըսէ, որ ինծի զարնելը այնպէս գիւրին գործ չէ. գնա՛ իմ վրաս ձեռք բարձրացնողը չէ՛ ծնուեր: Լսեցի՞ր. գէ՛, գնա՛ հիմա: Գնա՛ ու ըսա՛ տեղ՛ք սիրեցէ՛ք իրար: Իսկ ես թքե՛ր եմ ձեր վրայ. ձե՛ր ու ձե՛ր աչերուն վրայ: (Ուժով մը կը բանայ կից սենեակին դուռը): Է՛, Արմենա՛կ: Գալէ՛. քալէ՛ երթանք, ես պատրա՛ստ եմ, ես մաքրեցի՛ հաչիւներս: (Կը մտնէ ներս, դուռը եսեւեն ամուր գոցելով):

Ազնիւ, որ վերջի խօսքերու միջոցին բարձրացեր էր իր տեղէն ու սարսափած քարացեր, բոլորովին ուժասպառ կ'իյնայ նորէն բազմոցին վրայ: Ներս կը վազէ Արաքսի, մայրն ալ ետեւէն:

Ա ր ա ք ս ի — Ո՞ւր է, ո՞ւր է (Ազնիւը տեսնելով՝ վրան կը ձեռուի): Իրա՞ւ է, իրա՞ւ է, որ Սեդրակը... (Կ'ուզէ գրկել):

Ա զ ն ի ւ — (վեր կենալով) Մի՛, մի՛, ձեռք մի՛ տար ինծի:

Ա ր ա ք ս ի — Ա՛խ, հոգ մի՛ ընէք. ոչինչ չկայ, անշուշտ սխալմունք մը կայ մէջը: Ես արդէն մօրեղբօրս խնդրեցի. ես նորէն կը խնդրե՛մ. անիկա ճար մը կ'ընէ:

Ա զ ն ի ւ — (Յոգնած) Զգիտեմ, ճշմարիտ, ալ ի՞նչ կարիք կայ այս բոլոր կեղծ ու չինծու ձևերուն:

Ա յ ր ի ն — (Խեր) Ի՞նչ...

Ա ր ա ք ս ի — Ինչպէ՞ս թէ:

Ա զ ն ի ւ — Է՛, ալ ինչո՞ւ կը ծածկէք. ուևէորդ չէ՞: Չէ՞ որ արդէն հասաք ձեր նպատակին. եղբայրս արդէն բանտն է:

Ա յ ր ի ն — (Կատազած) Ինչո՞ր կու տայ լեզուին: Եղբայրդ բանտն են դրեր, մեղապրէ՛ եղբայրդ. մեղի՞ ինչու կը բամբասես: Մենք ինչացու ենք հոս:

Ա զ ն ի ւ — Դո՛ւք... դո՛ւք: Է՛, ես ոչինչ չունիմ ձեզի հետ: Բայց վախցէ՛ք, վախցէ՛ք երկինքէն. ամեն բանի պատիժը կու գայ:

Ա յ ր ի ն — Աս ազջկան խելքին է եկեր:

Ա ր ա ք ս ի — Ազնի՛ւ, հոգի՛ս, հաւատա՛, որ հոգիիդ մեղք կ'ընես: Ես չգիտեմ անգամ թէ ինչ կ'ըսես:

Ա զ ն ի ւ — Չգիտե՞ս, հա՞. ոչի՛նչ չգիտես: Չգիտե՞ս նաև թէ եղբայրս մատնողը ո՞վ է, հա՞. չգիտե՞ս որ քեռիդ է:

Ա ր ա ք ս ի — (Վախցած, այլայլած) Քեռի՞ս... ի՞մ...

Ա զ ն ի ւ — Հապա՛, հապա՛, քո՛ւ, քո՛ւ... (Կր փղձկի. բայց յանկարծ կը սրբէ աչերը ու ձեռքը բաւ տալով) Է՛... (Դուրս):

Ժ-Ն

Ա. բ ա ք ս ի — Ազնի՛ւ, Ազնի՛ւ։ (Կ'ուզե նեռուի ամոր եսեւեն, մայրը կը կենայ դրան առջեւը ու չի թողներ: Մայր ու այջիկ պահ մը դեմ դեմի· լուռ· վերջր բոլորովին բեկուած։) *Մա՛յր, իրա՞ւ է։*

Ա. յ ր ի ն — Ի՞նչը։

Ա. բ ա ք ս ի — Իրա՞ւ է, որ մօրեղբայրս... (Ու չի շարունակեր)։

Ա. յ ր ի ն — Ա՛խ, ան խելառը ըսաւ, դուն ալ հաւատացիր։ Ի՞նչ գործ ունի Մուշեղը անոր եղբօրը հետ։

Ա. բ ա ք ս ի — Մա՛յր, մա՛յր, չիսա՛կ ըսէ· եթէ ինծի կը սիրես, մայր... (Լալով կ'իյնայ մօրը կուրծքը)։

Ա. յ ր ի ն — (Ինքն ալ յուզուած. շոյելով) *Ես ի՛նչ գիտնամ, աղջիկս. հանգստացիր· ես ալ չգիտեմ. երեւի տակը բան մը ըլլալու է· անշուշտ Սեդրակը բաներ մը երած ըլլալու է։ Մի՛ լար՝ զաւակս, մի՛ լար։ Մեզի՞ ինչ· էրիկ մարդու գործեր են. քեզի՞ ինչ· մի՛ լար, աղջի՛կս, մի՛ լար· բան չկայ։*

Ա. բ ա ք ս ի — Բան չկա՛յ։ (Մօրը գրկին խլուելով) *Բան չկա՛յ, երբ Սեդրակը բաներ են ու նեռներ են բանտը. և ի՛մ մօրեղբայրս, ի՛մ...* (Յանկարծ) *Բայց ասոր վերջը գէ՛չ է, մայրի՛կ· ասոր վերջը...*

Փողոցէն կը լսուի ատրճանակի պայթիւն։

Ա. յ ր ի ն — (Դող եկած) *Սա ի՞նչ էր։* (Պայքիւնը կը կրկնուի)։ *Յիսո՛ւս Քրիստոս· ի՞նչ բան է ասիկա։ Ջըլլայ թէ նորէն մարդ պարկին։ Մուշեղը դեռ դուրս չելաւ, չէ՞։ Նե՞րսն է, չէ՞։ Մուշեղը դեռ առնէն չելա՞ւ, չէ՞։* (Կը վազե կից սենեակը)։

Ա. բ ա ք ս ի — (Իր տեղը կեցած է առաձացած, ականջ դնելու սպասողական դիրքով, սարսափած։ Դուրսը փողոցին կը լսուի խուճ ապուռ մը պատուհաններուն տակ)։

Ա. յ ր ի ն — (Անապատաճիռով կը վազե ճորեն ճերս ու դեպի պատուհանը։ Յանկարծ պես՝ վայրի ճիչ մը կ'արձակե ու խենթի պես կը ճեռնի միւս կողմի դռնեն դուրս) *Մուշե՛ղ, Մուշե՛ղ։*

Ժ-Ր

Ա. բ մ ե ն ա կ — (Միաժամանակ ճերս կը վազե ճակառակ դռնեն, առանց Ֆեսի, շուար, սարսափած) *Տիկի՛ն, տիկի՛ն...*

Ա. բա ք ս ի — (Կ'երթայ դեմը ու ամբողջ ճասակովը ուղղուած՝ ճրամայական, խուլ, խեղդուած ձայնով մը) *Ի՞նչ եղաւ. ըսէ՛ք։*


Ա. բ մ ե ն ա կ — (Դողալով) *Օրիորդ...*

Ա ր ա ք ս ի — (Ականաւոր ու բռունցքներր սեղմած) *Լսէ՛ք, լսէ՛ք։*

Ա ր մ ե ն ա կ — (Ընդհատ, դողդոջ, սոսկումէ)։ *Հո՛ն, հո՛ն, մեր փողին մանկիկնը... գնդակը. ֆը՛չ, ակռանչիս տակէն։ Իսկ մյուսը... ա՛յնպէս, աւելի բարձր հասակով, մօրուքը սև՛-սև, ուղի՛ղ էֆէնտիին վրայ։ Ո՜հ, ո՜հ...* (Ձեռքով աչքերը կը փակէ)։ *Շիտա՛կ ճակատին մէջտեղը... իսկո՛յն վար ինկաւ, իսկո՛յն։ Ո՜հ, ո՜հ, Աստուա՛ծ իմ։*

Ա ր ա ք ս ի — (Նեղդուած ձայնով, աչքերը յառած օդին մէջ, ձեռքերը կը պարզէ կամաց կամաց դէպի վեր, երկիւղած)։ *Ազնի՜ւ... Ազնի՜ւ։*

Այդ միջոցին դուրսը ամմուկը սաստկացած է։ Վերջի խօսքերուն դուռները կը բացուին թափով. քանի մը մարդիկ կը մտնեն ներս, հա-նա, քան մը ներս բերելու զգուշութիւններով։ Իառեր, խօսքեր հրամաններ։ Արաքսի տեսածին պէս՝ թնդեւ ճիչ մը կ'արձակէ եւ ուշաթափ կը փռուի գետին։ Այս բոլորը միասին, կարճ ու արագ։



ՈՒՐՈՒԹԻ ՀԱՄԱՐ

Թաշիրակ

Գրուած է Թիֆլիս 1903-ին

ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ

ԱՆՁԵՐ

ՄԻՆԱՍԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՅՐԸ՝ աշխուժ ծերուկ մը, կարմիր այտերով, ճերմակ մազերով:
Իր զաւակներն են յաջորդ չորսը.
ՄԱՐԻԱՄ՝ միջին տարիքի, դիւրագրգիռ, ջղային կին մը. մազերը, հագուստն ու շարժուձեները թափթփած:
ՅԱԿՈԲ՝ 30-ի մօտիկ երիտասարդ մը, կծկըւած աչքերով. խօսուածքին, շարժումին ու հագուստին մէջ պչրանք:
ՍԻՐԱՆ՝ սեւ առատ մազերով. տխուր աչքերով. սեւ ու պարզ հագուստով, 26-27 տարեկան:
ՆՈՒԱՐԴ՝ լուրջ ու հանդարտ աղջիկ մը, 17-18 տարեկան:
ՍԱՀԱԿ ՊՕՂՈՍԵԱՆ՝ փոքրահասակ, գունատ, մեղմ դիմագծերով. նիհար ու կացը ցրիւ:
ՕՀԱՆՆԷՍ ՇԱԼԵԱՆ՝ թիկնեղ, խոշոր մարդ մը. բաց ու արեւառ դէմքով:
ՏԻՐՈՒՀԻ՝ տարիքոտ նիհար աղջիկ մը. կարծես միշտ չարացած. միշտ ալ ահագին շալ մը ուսերուն:
ԳԱԼՈՒՍՏ՝ կար ու չոր երկարահասակ մարդ մը, ալեխառն. քարշ կու գայ հազալով ու աղօթք մրմնջելով:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Ա

Հին սենեակ մը, հին կահեր:

Դիշերը է: Սիրան նստած է լամպին տակ, մեծ բազկաթոռի մը մէջ ու կը բանի: Դիմացը սեղանին միւս կողմը կեցած է Սահակ ու ջղածգօրէն լրագիր մը կը ծալծլէ:

Սահակ — (Մտածումներուն մէջէն) Ճի՛շդ է. իրաւունք ունիս:

Սիրան — Միւսները քեզմէ ինչո՞վ են աւելի:

Սահակ — (Ուղղուելով ու լրագիրը նետելով մէկդի) Տե՛ս, Սիրա՛ն, երբ այդպէս կը խօսիս, կարծես իմ վրաս ալ տեսակ մը վստահութիւն կու գայ, կարծես ես ալ կ'ըսկսիմ ուժերուս հաւատալու: Չէ՞, Սիրա՛ն, ես ալ ուժ մըն եմ, ես ալ աշխատասէր մը. թող ըլլայ համեստ, թող ըլլայ վոքր. ի՞նչ փոյթ: Սրբագրիչ մը. ի՞նչ է որ. ո՞վ կու տայ անոր անունը խմբագրատան մէջ. բայց ամեն մէկ յօդուածի մէջ, ամեն քի ալ գրածին մէջ ինծմէ բան մը կայ, կտոր մը: Ճիշդ է, ինչո՞ւս պէտք ուրիշներուն կարծիքը, բաւական է որ դուն կը գնահատես իմ աշխատանքս ալ, իմ հոգիս ալ: Քու գնահատումն է իմ վարձս. մնայն քո՛ւս:

Սիրան — (Ձեռքի գործը բռղած՝ ուշադիր ու լուրջ կը ցայի տըղուն):

Սահակ — Ի՞նչ եղաւ քեզի. ինչո՞ւ այդպէս տխուր կը նայիս ինծի:

Սիրան — (Սթափելով) Տխո՞ւր. ո՛չ: Այնպէս. կարծիս քիչ մը գլուխս...

Սահակ — Հապա՛ որ կ'ըսեմ: Դէ՛, թո՛ղ, ալ մի՛ բանիր:

Սիրան — Չէ՛. պէտք է վերջացընեմ. վաղը գալու է՝ տանի:

Սահակ — (Նեղսրտած) Է՛, ամբողջ տունը քու վրադ, բոլոր հոգն ու աշխատանքը ուսիդ, դիշերներն ալ այդ ասեղը: Չէ՛, տիկա արդէն բոլորովին աւելորդ է:

Սիրան — Որ չբանիմ՝ ծայրը ծայրին չի գար:

Բ

Ներսը ազմուկ. երկուքն ալ կը դառնան դէպի կից սենեակը տանող դուռը, որ քիչ մը վերջը կը բացուի ու կը մտնէ Յակոբ գլխարկը գլխին, գաւազանը թեւին տակ, թուղթ մը գալարելով երկու ձեռքով:

Յ ա կ ո բ — (Ձոր ու կռուան) *Ա՛ա քու գործդ չէ՛։ Դուն քու գործիդ խառնուէ։ Գալէ՛, Սահա՛կ։*

Մ ա ր ի ա մ — (Սեմին վրայէն, չար) *Իհարկէ Թողնեն քեզի, որ ամբողջ օրը փուսխս կռնակիդ ու առաստաղը ուսումնասիրես։*

Յ ա կ ո բ — *Այո՛, այո՛, հրամմեր ես. մինչև չը պառկիս, մինչև առաստաղը չուսումնասիրես՝ ոչինչ չի գրուիր. առանց մտածելու ոչինչ չի գրուիր։*

Մ ա ր ի ա մ — *Ա՜խ, քու խենթիս-մենթիս խազմզուկները։ Մարդավարի գործի մը չըկպչի՞ս։ Պարա՜պ մարդ ես, պարա՜պ։*

Յ ա կ ո բ — *Ա՛, ինչ աչխատող մըն եմ ես, է՛։*

Մ ա ր ի ա մ — *Է՛, ես ու դուն մէ՞կ ենք. ես հիւանդ ու ակար կնիկ մը։*

Յ ա կ ո բ — *Հիւա՜նդ, հիւա՜նդ. գլուխնիս ուռեցաւ լսելէն։*

Մ ա ր ի ա մ — (Խայթուած) *Լեզուդ քեզի քաչէ՛։ Երեսուն տարեկան մարդ պիտի ըլլաս չուտով ու մինչև հիմա հօրդ ու քրոջդ հացը կ'ուտես։*

Յ ա կ ո բ — *Բայց դիտե՞ս՝ երկար ըրիր. ո՞վ է քեզի դատաւոր կարգեր իմ գործերուս վրայ. ամեն տեղ ալ քիմիդ խոթես պիտի։*

Ա ր ա ն — (Յանդիմանական) *Յակո՛բ, մեծ քոյրդ է։*

Յ ա կ ո բ — *Մե՛ծ, մե՛ծ. է՛, ալ հերիք է։ Կ'տեսցանք քու հիւանդութենէդ ալ, քու տըտրտէդ ալ։* (Կատղած) *Եւ վերջապէս ինչա՞ս ես դուն հոս։ Դուն արդէն կարգըւեր ես, սատկիր հոս քու բաժինդ, ինչո՞ւ ես ձգեր մարդդ, ինչո՞ւ ես եկեր նորէն մեր վզին։*

Ա ր ա ն — (Զայրացած nsfի ցատկելով) *Յակո՛բ...*

Մ ա ր ի ա մ — *Ձայնդ քեզի քաչէ, սրիկա՛յ, դուն ո՞վ ես, որ ես բեսիս...*

Հայրը ու Նուարդ կը մտնեն ճակատի դռնէն։

Հ ա յ ր ը — Սա ի՞նչ բան է նորէն։

Մ ա ր ի ա մ — Դուրս վազա՛ք, հա՛յր, դուրս վազա՛ք տա՛ւ իրերը։ Դուն... դուն իմ երեսիս... իմ երեսիս... իմ... իմ... (Շուրջը կը կտրի ու կը թուլնայ։)

Սիրան ու Նուարդ վրայ կը վազեն օգնելու ու կէս մը գրկած ներս տանիլ կ'ուզեն։

Մ ա ր ի ա մ — (Ուժերը հաւաքելով, յեղուած ֆոյերուն ու ճնչյաս)։ Աստուած քեզի ալ իմ օրս ձգէ. դուն ալ ուրիշներուն կարօտ ըլլաս։ Դուն ալ...

Մ ի ր ա ն — Հանգստացի՛ր, հանգստացի՛ր։

Կը տանին կից սենեակը։

Հ ա յ ր ը — Հիմա դուն ըրածիդ կը հաւնի՞ս։ Հազիւ էր աս երկու օրը քիչ մը ազէկցեր. հիմա նորէն լաց, դեղ, ջիղեր, իրարանցում։

Յ ա կ ո բ — Ինքն է սկսողը. ես ի՞նչ ընեմ։ (Կոկորդը ցոյց տալով) Ալ հոս է հասեր, ալ համբերել կարելի չէ։

Հ ա յ ր ը — (Կտրուկ) Քեզի ըսեր եմ՝ ես ազմուկ չեմ սիրեր։

Յ ա կ ո բ — (Սաճակին) Եղբա՛յր, կը տեսնես. ես կ'ըզբաղուիմ մեր հանրային կեանքի հարցերովը, խնդիրներովը, որ մարակեմ, քննադատեմ մեր կեանքի ախտերը. իսկ անոնք ինծի անպատճառ վաճառականի մը գրասենեակը կոխել կ'ուզեն։ Բայց ո՛չ։

Հ ա յ ր ը — (Ակնարքներ) Բայց պատրաստ առակը կ'ուտես։ Ամ մէկը չիտակ է։

Յ ա կ ո բ — (Ուսերը ցնցելով) Հը՛. զարմանալի էք բոլորդ ալ։ Ա՛հա, մօրս թողած աս մէկ տունը չէ՞, որ պատառ մը հաց կու տայ մեզի. ինչպէս որ դուք՝ անանկ ալ ես։ կարծես թէ ինքդ ես չիներ։

Հ ա յ ր ը — (Խոժոռ) Հայտէ՛, հայտէ՛. ես քեզի հետ գլուխ ելլել չեմ կրնար։ Արդէն քեզմէ խեր չկայ, գնա՛, գլուխդ քարը։ Միայն կը կրկնեմ՝ ես տան մէջ ազմուկ չեմ սիրեր։ Հասկըցա՞ր. հանդիստ կ'ուզեմ ես։

Յ ա կ ո բ — Դուք իմ հանդիստս մի խռովէք, ձեր հանդիստին

ձեռք առած չկայ։ (Սանակին) *Բայէ՛, ուշացանք։ Է՛, տրամադրութի՛ւն կը խռչնէն ասանք մարզու վրայ։*

Սահակ — (Տխուր, լուռ ու մտածկոտ կը հեռեւի անոր)։

Հայրը — (Ետեւնուն ինչ մը ցայելնի եսքը, ձեռքը բաւ կու տայ) *Է՛...* (Դուրս կ'ելլէ կռմռնակի դռնէն)։

Ե

Միւս դռնէն կը մտնեն Սիրանն ու Տիրուհին։ Սիրանը ուժասպառ ու ծանծրացած դէմքով։

Տիրուհի — (Անտարբեր բլլալու ջանքով) *Ազէ՛կ, ազէ՛կ. սովորական պատմութիւն։ Դեռ չվարժըւեցա՞ր։*

Սիրան — *Ա՛։* (Կը նետուի աթոռին) *Յոգնած եմ, յոգնած եմ։*

Տիրուհի — *Բան չկայ. ես յոգնած չե՞մ։* (Կը նստի սեղանին առջեւը) *Ամբողջ օրը դպրոցը. հիմա ալ վերը, ա՛յ, այսչափ տետրակ ունիմ սրբագրելու։*

Սիրան — (Ինքնիրեն, ձայնը հաւ տալով. ձանձրոյրով) *Եփէ՛, սրբէ՛, մաքրէ՛. երէ՛կ, այսօ՛ր, վա՛ղը. և նաեւ՛ հաս, բանէ՛, բանէ՛, բանէ՛. ինչո՞ւ. ինչո՞ւ այս բոլորը։ Նոյն սենեակը, նոյն պատերը, նոյն հիւանդը, նոյն կռիւը, նոյն հոգերը, նոյն չարութիւնը։ Ա՛լ յոգնա՛ծ եմ, յոգնած...* (Յանկարծ) *Է՛։* (Կ'ելլէ կը մօտենայ պատուհանին ու ինչ մը կը ցայի դուրս) *Տի՛ս, Տիրուհի՛, տի՛ս, ի՛նչ բազէ է՝ բլլայ մարդ հո՛ն, հեռո՛ւն, հեռո՛ւն, հո՛ն սարերուն վրայ։*

Տիրուհի — *Իսկ այդ սարերէն նոր լուր չունի՞ս։*

Սիրան — *Ի՞նչ։*

Տիրուհի — (Փայելով) *Ծալհանէդ։*

Սիրան — (Վշտոտ) *Է՛, Թո՛ղ կատակը. հիմա սիրտ չունիմ։*

Տիրուհի — *Ինչո՞ւ կատակ։ Հիմա ինծի ըսել կ'ուզես, որ քու զգացումներդ այնպէ՛ս, միայն...*

Սիրան — (Անյարմար) *Զգէ՛, հոգիդ սիրես։* (Տափցած) *Զգացումներ, զգացումնե՛ր. ի՞նչ զգացում։* (Ուտրըւած) *Եւ վերջապէս դուն գոնէ գիտես, որ ես կապուած ալչիկ եմ։*

Տիրուհի — *Հա՛, այդ մէկին արդէն խելքս երբե՛ք չէ հասեր։ Շիտակ ըսէ՛, Սիրա՛ն, դուն լրջօրէն կը մտածես՝ կարգըւիս Սահակի հետ։*

Սիրան — (Նեղսիրտ) *Զգիտե՛մ, չգիտե՛մ, ոչինչ չգիտեմ. Թո՛ղ։*

Տիրուհի — *Բայց ես գիտե՛մ։ Ինչո՞ւ ես խօսք տըւեր. սիրուն բան չէ։*

Սիրան — Ինչո՞ւ։ Հապա ի՞նչ ընէի, երբ ամբողջ տարի մը չուքի պէս հանէս կը պոռտէր. երբ գիտէի որ իր միակ ուրախութիւնը ես եմ աշխարհիս երեսին. անուէր, միս-մինակ. ունի-չունի, մայր մը ունի, կէս-խենթ, կէս-խելօք։ Ինչպէ՞ս մնայէի, երբ դողալով, վախվըխելով դէմս ուղղակի հարց դրաւ։ Եւ վերջապէս այն տանը իմ զգայուններս ալ կարծես քիչ մը աւելի ուրիշ տեսակ էին։ Զգիտեմ ի՞նչ եղաւ ինծի հետ։

Տիրուհի — (Հեգնոտ) Իրա՞ւ, չգիտե՞ս։ Նայէ՛ այն լեռները, ի՞նչ սիրուն են։ (Ոտքի ելլելով խորհրդաւոր) Սիրա՛ն, հետէ՛ սրտիդ գնա՛ ուր քեզի կը կանչէ. ականջ դիր բնութեանդ այդ ներքին ձայնին։ Ես գիտե՛մ ինչ կը խօսիմ. մի խաղար բաղդիդ հետ։

Սիրան — Բա՛ղդ. ես արդէն բաղդ չունիմ որ։

Տիրուհի — Բաղդդ եկեր է քու դուռդ. ան ի՞նչ ընէ, որ դուն տեսնել չես ուզեր։ Սիրան, լսէ՛ ինծի. նե՛րս գո։

Սիրան — Է՛, մարդ որ բաղդ ունենայ, անիկա առանց իմ ուզելուս ալ, առանց իմ ներս առնելուս ալ, ա՛յ, այսպէս իջ հասած տեղս, (Դուռը մատնացոյց) կը բանայ ու ներս կու գայ...

2

Կը բացուի դուռը, կը մտնէ Օհաննէս Ծալեան, ետեւէն Նուարդ։ Երկու աղջիկները ապշած ու վախցած վեր կը ցատկեն ու քարացած կը նային երթալ։

Օհաննէս — (Երկար կօշիկներ, կարճ ու գոգ ժաճեր, ցած կրլոր գլխարկ. համբուրդի արտաքին) Ձէ՛ք սպասեր։ (Առաջ գալով, ջերմ) Բարև ձեզի, օրիո՛րդ Սիրան։

Տիրուհի — Է՛, Սիրա՛ն, հիմա ասոր ի՞նչ կ'ըսես։

Սիրան — (Լուռ է ու կը կախե գլուխը)։

Օհաննէս — Ի՞նչ է պատահեր։

Սիրան — (Սթափելով) Ոչի՛նչ, ոչինչ։ (Խօսքը փոխելով) Այդ ե՞րբ էք եկեր դիւղէն։

Օհաննէս — Ճի՛շդ կայսրանէն է որ կու գամ։ Թէև խիստ սոխպոզական ալ գործ ունիմ, բայց և այնպէս չկրցայ ձեր տան առջեւէն անցնիմ առանց հանդիպակու։

Նուարդ — Եւ չատ ալ ազնիւ ըրիք։

Տիրուհի — Է՛, ի՞նչպէս էք, տեսնենք. ի՞նչ նորութիւն։

Օհաննէս — Ի՞նչ նորութիւն կ'ուզէք ինծմէ, օրիորդ։ Ես գիւղի ու սարի մարդ. հողը պահպանողական տարր է. հողի հետ գործ ունեցողը նորութիւն չունի։

Մ ի ր ա ն — (կատոտով) երնէ՛կ ձեզի. ո՛վ գիտէ ինչ հրաշալի է հիմա հոն ձեր բնութիւնը։

Օ հ ա ն ն է ս — Այո՛. այդ մէկը ճիշդ է։ Ինչ որ կայ բոլորը ձեզի՝ քաղքցիներուդ. միայն բնութիւնը մերն է, բնութիւնը մեզմէ չէք կրնար խլել. մնո՛ծ, բա՛ց, վեհ բնութիւնը։ Ամէն անգամ քաղաքէն վերադարձիս, երբ երկաթուղիէն կ'իջնեմ ու ձիս դէպի ագարակը կ'ըսկսի բարձրանալ մեր սարահարթի կրծքէն, ա՛, չգիտէ՛ք, ինչ լեցուն ու բուռն զգացում մըն է, որ կ'ուռեցընէ սիրտս. ինծի, կենսալից ու հպարտութիւն տըւող բան մը կայ սարերուն վրայ։ Ձեր քաղաքներուն մէջ կարծես մարդ տեսակ մը կը պզտիկնայ, կը սեղմուի, կը կապուի. կեանքն ալ կարծես տեսակ մը կապանքի մէջ է հոս, չունի իր ազատ ընթացքը։ Ա՛յ, իմ սարերուս վրայ, հո՛ն ուրիշ բան է, հոն ես ազատ եմ. հոն մարդ եմ ես։

Տ իր ու հ ի — (երկմիտ) Բայց և այնպէս կան քաղքի մէջն ալ բաներ, որ ձեզի վար կը քաշեն ձեր այդ սարիրէն։

Օ հ ա ն ն է ս — (ժպտուն) Անշուշտ ինչպէս որ կը տեսնէք։ (Նուարդին) Բաժակ մը սառը ջուր կու գտնուի՞։

Ն ու ա ր դ — Իսկոյն՝ իսկոյն. (կը վազէ դուրս)։

Է

Մ իր ա ն — Իսկ ինչպէ՞ս եղաւ այն ձեր նոր հողերուն պատմութիւնը։

Օ հ ա ն ն է ս — Հիմա մասամբ ալ ատոր համար եմ եկած։ Հիանալի գործ է, գիտէ՛ք, սքանչելի ծրագիր։ Բայց պէտք է իսկոյն մէկ-երկու հազար. գնա՛ ու գտիր։

Մ իր ա ն — Բայց չէ՞ որ մէկուն համար կ'ըսէիք. ա՛ն, որ յանձն էր առեր տալ ձեզի, եթէ դուք գործը գլուխ բերէք։

Օ հ ա ն ն է ս — Ա՛խ, ա՛ն. անոր վրայէն չուր խմեցինք։

Մ իր ա ն — Ինչո՞ւ։

Օ հ ա ն ն է ս — (ժպտուն) Բանէն երեւաց, որ ծերուկին հաշիւը քիչ մը բարդ տեսակի էր։

Մ իր ա ն — Բա՞րդ. ի՞նչպէս թէ, ե՞ս կեցաւ ուրեմն։

Օ հ ա ն ն է ս — Չէ՛։ Տալը, կ'ըսէ, բոլոր արտաւս. կ'ըսէ, կ'ուզեմ ձեզի օգնեմ. բայց գիտէ՞ք, կ'ըսէ, պահեր էի աղջկանս օժիտին համար։ (Խնդալով) կ'ըմբռնէ՞ք, չէ՞։

Մ իր ա ն — Ա՛խ։ (Յանկարծ) Է՛, ի՞նչ կայ. աւելի աղէկ։ (Ծպտուով) Մթթէ աղջիկը այդպէս անպէ՞տքն է։

Օ հ ա ն ն է ս — Ո՛չ։ Խելո՛ք, կրթուած։

Տ ի ր ու հ ի — Գուցէ ափեղ կամ սարիքդա։

Օ հ ա ն ն է ս — (Ժպտուն) Ընդհակառակը։

Մ ի ր ա ն — (Տեսակ մը չարացած) Ուրի՞մն... ուրի՞մն...

Օ հ ա ն ն է ս — (Ծիծաղելով) Ուրեմն ինձի խորհուրդ կու տաք։

Մ ի ր ա ն — Ես... ես իրենչ. խորհուրդ տամ, թէ ոչ.

Օ հ ա ն ն է ս — (Միշտ կատակով) Չէ՛, ըսէ՛ք. ուրեմն ինձի խորհուրդ կուտաք։

Մ ի ր ա ն — (Յանկարծ հաստու ու ջղուս) Այո՛, իհարկէ՛։ Ինչո՛ք, կրթըւած, գեղեցիկ, ինչպէս որ կ'ըսէք. վրան ալ օժիտ։ կ'երթաք, կը գնէք ձեր նոր հողերը, կ'իրագործէք ձեր ծրագիրները, որ այնքան թանկ է ձեր սրտին։ (Բոլորովին ջղուս) Իհարկէ՛, իհարկէ՛. կը զարմանամ, որ դեռ կը վարանիք։

Օ հ ա ն ն է ս — Իրա՞ւ։

Ը

Ն ու ա ր դ — (Բերելով ու հրամցնելով ջուրը) Տեսէ՛ք, սառուցի պէս։

Օ հ ա ն ն է ս — Մ՛այ, չնորհակալ եմ։ (Բաժակը ես տալով կ'ելլէ ոտքի. ու Սիրանին) Վաղը կէսօրին մօտերը առ՞էնն էք։

Մ ի ր ա ն — (Յաւած) Ես առէնն եմ միշտ, ինչպէս որ դիտէք։

Ն ու ա ր դ — Վա՛յ, արդէն երթալ կ'ուզէք։

Օ հ ա ն ն է ս — Այո՛, իմ սիրելի բարեկամաւհիս, թէև կը ցաւիմ։ (Սիրանին) Գիտէ՞ք, ես գիւղը յաճախ կը յիշէի մեր այն ձմեռ գիշերներու երկար խօսակցութիւնները. ա՛յ, հո՛ տ, վառարանին երկու կողմը, լամպի չոյող լոյսին տակ, այնպէս անկեղծ, ջերմ ու սրտանց. կը յիշէ՞ք։ (Նկատելով) կարօտեր եմ. վաղը կու գամ, ու կը նստինք, կը խօսինք նորէն անգամ մը. համաձա՞յն էք։

Մ ի ր ա ն — (Ջերմ) Խնդրե՛մ, խնդրե՛մ։

Օ հ ա ն ն է ս — (Ձեռքը մեկնելով) Ուրեմն առայժմ ցտեսութիւն։

կը բարեւէ ու բոլորն ալ կ'ուղղուին դէմի դուռը. Նուարդն ու Օհաննէսը դուրս, Սիրանը դրան մէջ. անորոշ խօսակցութիւն. միայն Տիրուհին է կեցած եր նախորդ տեղը անշարժ։

Ր

Մ ի ր ա ն — (Ծանր հայլերով ես կու գայ, կը կենայ ինչ մը սեղանին գլուխը մտախոհ, վերջը կ'անցնի կը նստի իր սովորական բազկա-

բռնին մէջ, կը խառնէ կարբ տեսակ մը ցրուած, կը վերցնէ բանուածքը, կը յարդարէ ու կ'ըսկսի բանելու. բայց ինչ-ինչ կը ձգէ ծուռկին, ձեռքերը աճապարժ, աչքերը անքարար կեցի մը յառած՝ կը մնայ լուռ ու լարուած:)

Տիրուհի — (Լուռ կը դիտէ, կամաց մը կը մօտենայ եսեւեն ականջ բազկաթոռին ու երկու բեւով կը յենուի ցոյն բազկաթոռի թիկունքին: Յած ու յուսակ ձայնով) *Ուրեմն վազը:*

Սիրան — (Վախցած կը շրկըռի ընդոստ, բարկացած կը ցայի հովրնցի աճուր, վերջը տեսակ մը ամրչցած կը կախէ գլուխը կրծքին):

Տիրուհի — *Ուրեմն վա՛զը:*

Սիրան — *Զգէ՛ ինծի հանգիստ:*

Տիրուհի — *Հանգի՞ստ:*

Սիրան — (Խոր ու երազկոտ): *Ա՜խ, եթէ գիտնայիր, ինչպէս պաչանել կ'ուզէի, ինչպէս սիրել կ'ուզէի ես այդ ազան:*

Տիրուհի — *Հա՞:*

Սիրան — *Ես կ'ուզէի ամբողջ էութիւնս անոր տամ, ամբողջ հոգիս:*

Տիրուհի — *Որ կ'ըսէի՛:*

Սիրան — (Յանկարծ կ'րնդհատէ) *Ո՛չ, ո՛չ. թո՛զ: Մտածելն անգամ դէշ է. տասը մասին խօսիլն անգամ դէշ է: Թո՛զ:* (Ինչ լուռ ու երազկոտ) *Բայց... որչա՜փ, որչա՜փ ազէկ կ'ըլլար. կ'օդնէի ես իրեն, կ'աշխատէինք միասին, կ'ոգևորուէինք միասին, իր տարիքուն վրայ, իր բնութեան մէջ, իր աշխատանքին հետ, հո՛ն, վե՛րը, բա՛ցը, լա՛յն, մինա՛կ... վայ, ի՜նչ դիւրին է երջանիկ դառնալը:*

Տիրուհի — (Տխուր ու ներզնոս) *Այո՛, դիւրի՛ն:*

Սիրան — (Խայրուած) *Է՛, ձգէ՛, դուն ալ. ի՞նչ ես հոգիս մտար: Պէտք է կարել, պէտք է խեղդել, պէտք է մոռնալ, մոռնալ:*

Տիրուհի — *Իսկ ի՞նչ դիւրին է երջանիկ դառնալը:*

Սիրան — (Յանկարծ արտաքին վիր ցատկելով ոտքի) *Իսկ այս տուֆը, իսկ հիւանդ քո՞յրս, իսկ հա՞յրս. որո՞ւ թողնեմ. մեղք չէ՞ Նուարդը. հապա Սահա՞կը. ամենազժբաղդ մարդը կը դառնայ աշխարհիս երեսին:*

Տիրուհի — (Ինքն ալ բարձրանալով արտաքին մէջտեղն) *Իսկ զո՞ւն, իսկ զո՞ւն:*

Սիրան — (Բռունցքներր սեղմած հայր մը կ'րնէ դեպի ընկերուհին) *Ի՞նչ կ'ուզես, ի՞նչ կ'ուզես դուն ինծմէ. հաճո՞յք կ'ըզգաս ինծի չարչըրկելէն: Հերի՞ք չէ որքան ես ինքս իմ մէջս կը. կռւիմ, ես ինքս ինծի հետ:*

Տիրուհի — (Զայրոյթի շարժումով մը) *Զգիտե՛մ: Գիտեմ միայն որ քու բրածդ յանցանք է:*

Սիրան — *Ի՞նչ:*

Տիրուհի — Դուն չորցնել, դուն գոնել կ'ուզես ինչ որ քու մէջդ կ'ունես է ինչ որ դուն ես, քու խորհո՛ւրդդ, քու էութի՛ւնդ։ Զգո՛ւշ. վերջը ամբողջ կեանքիդ մէջ ոճիրդ քաւել չես կրնար։ Թրաձ բաղդը ալ ես չի գառնար։ Զգո՛ւշ, կ'ըսեմ քեզի։ Նայէ՛, անկեանք տարիներու ամբողջ շղթայ մը քաշ կու տաս քու հոգիդդ, չլուացող գիշերներ կը մաչես անկողնիդ մէջ, շատ ու մուռ գալով ու քեզի հարց տալով. «Չէ՞ որ ես ալ կարող էի ապրիլ»։ (Ինչ լուռ) կարող էի՛։ (Մըսկոս կծկումով մը) Ա՛, այդ «էի»-ն, որ մարդուս երակները կը սառցնէ։ էի՛... (Դիմացէն ու մտածկոս) կարող էի՛...

Սիրան — (Մօս գալով, կարեկցոս) *Տիրուհի, Տիրուհի*։..

Տիրուհի — (Սթափելով՝ յանկարծ) Հա՛. իսկ դուն, իսկ դուն դեռ կարո՛ղ ես։ Գիտե՞ս ատ ի՞նչ բաղդ է։ Յիմար մի ըլլար. ո՛չ հայր, ո՛չ քոյր, ո՛չ աչխատանք, ո՛չ անձնուիրութիւն, ո՛չ այդ քու բարութիւնդ, ոչ այդ քու ապուշութիւնդ, ոչի՛նչ, ոչի՛նչ չի օգներ, ոչի՛նչ չի կրնար լեցընել կնոջ էութեան մէջ այն սոսկալի պարապը, այն... ա՛հ (Ձեռով կը ծածկէ դէմքը։ Ու յանկարծ բանալով) *Սիրա՛ն*, կեանքդ կը գառնայ քօս, կիսա՛տ, ծո՛ւռ։ Մի՛ ըներ, մե՛ղք ես, հոգի՛ս, մի՛ ըներ։ Մարի՛կ երէ՛ խօսքիս. վաղը երբ Օհաննէսը գայ քու խօսքդ ուզելու՝ ելի՛ր, վառէ՛ տանդ բոլոր ճրագները, հագի՛ր ամենէն նուրբ ու ամենէն ազնիւ հագուստներդ, գնա՛ իր դէմը ու ըսէ՝ «Ահա՛ ես»։ վերջը... վերջը... (Ոգեւորութիւնը ինկած) վերջը ճրագները կը մարէ՛ք մի՛ առ մի՛։ երբ կեանքի ջահը կը վառի, ճրագներու պէտք չկայ։ (Ինչ մը ատեն լուռ, կարծես կը մրսի) Դէ՛, ես երթամ վեր... տարակներս պրպտելու։ (Բոլորովին ցալին մէջ փաթթուած կ'ելլէ դուրս)։

Սիրան — (Նախ կեցած է աճուրժ, վերջը դանդաղ կը հաւաքէ օրագն-արտոնը բաց լուսամուտին դէմ. կը նայի ծայրը, ձեռքերը ծալած. հայեացքը դուրս ու թաղուած խոր մտածմունքի մէջ)։

Հայրը — (Կը մտնէ, վրան գիշերանոց երկար վերարկու. գլխուն գլխակ. հայելիին առջեւը բան մը կը փնտռէ, աչքին տակեն դիտելով աղջիկը)։ Նորէն նստեր ես մթա՛մթնակ. ատ ի՞նչ յիմար սովորութիւն ես ըրեր. ի՞նչ կը նայիս հոն։

Սիրան — Ոչի՛նչ, հայրի՛կ. սարերը։

Հայրը — Սարե՛րը. կէս գիշերին սարերը։ Մէյ մը սըւոր քիմիթա-բերնին նայեցէ՛ք. ի՛նչ կայ, ի՞նչ ունիս։

Սիրան — Զգիտե՛մ, հայրի՛կ. (Ինքզինքով) Սիրաս նե՛ղ է, նե՛ղ։

Հայրը — Դէ՛, իմարկէ՛, ամբողջ օրը որ տան մէջը փակուիս քեզի որ կ'ըսեմ, գնա՛ քիչ մը դո՛ւրս, պաըաէ՛, բացուէ՛...

Սիրան — Ա՛յո, ա՛յո, դո՛ւբսը, բա՛ցը, բա՛ցը։ (Կը փուռի աթոռին ու կ'ըսկսի օրօրուիլ, կարծես երազի մէջ, լեզուն իր նեսը խօսելով, ծաւիր, ընդհատ ու ցրիւ) *Դո՛ւբսը, հեռա՛ւն, մարդ իջնէ վագոնէն ու սարահարթի կուրծքն իվեր... մեծ, վսեմ բնութեան դիրկը, թարմ ու կենսալից։ ու ելլե՛ս, ելլե՛ս, մինչև... և ըլլայ գիշեր, թող ըլլայ գիշեր, ո՛չ լոյս, ո՛չ ճրագ։ Ջէ՛, հայրիկ, ճրագներու պէտք չկայ, երբ կեանքի ջահը կը վառի։*

Հայրը — (Երկիւղով եւ նոգածու կը մօտենայ) *Աղջի՛կ, դուն չկրմ ունիս։ Տեսնե՛մ ձեռքդ։*

Սիրան — Ոչի՛նչ, ոչի՛նչ։ ոչինչ ալ չունիմ։ (Կ'ուզէ յուզումն ու լացը զսպէ, չի կրնար. դէմքը կը ծածկէ ու կը հեծկլտայ)։

Հայրը — Ի՞նչ եղեր է քեզի, աղջի՛կս։ Ի՞նչ ունիս։ Ա՛ս էր պակաս։ Հանդստացի՛ր։ (Կը ծոյէ աճոռ գլուխը)։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Ա

Ցակոբ .փոռւած է օրթան աթոռին ու կ'օրուի: Սահակը կեցած է պատուհանին տակ: Սեղանի վրան մեծ ափսէի մը մէջ դիզուած են լըւացուած պնակներ ու բաժակներ: Սիրան կը սըրբէ, կը չորցնէ ու կը դնէ հետզհետէ պահարանը: Հայրը կեցած է աղջկան քովը, ինքը բաճկոնով է. շապիկին թեւերը վեր ժողուած ու ամեն մէկ ձեռքը քանի մը հատ գինեի պարապ շիշեր:

Հ ա յ ր ը — Դուն ինծի լսէ: Այսօր բոլոր պատրաստութիւններդ կը տեսնես, վաղը առաւ կանուխ կ'ելլենք կ'երթանք. գիւղի անուշ օդ է, կը թարմանաս քիչ մը, քոյրս ալ կ'ուրախանայ, փեսաս ալ. այսպէս տասը-տասնըհինգ օր մը կը մնանք ու կը դառնանք: Ինծի համար ալ օգտակար է:

Ս իր ա ն — (Անփոյթ) Լ՛, հայրի՛կ, գործ չունի՞ս:

Հ ա յ ր ը — (Տարցած) Ի՞նչպէս թէ «գործ չունիս»· վաղը միւս օրը որ դուն ալ ելլես ու հիւանդանա՞ս, եաքը ի՞նչ ընենք· սա ինչի՞ կս նմանս. յայտնի է որ ամբողջ գիշերը քուն չես առեր: Ես Աբամին հարցուցի. կ'ըսէ՝ Ջայլին է, ղրկեցէ՛ք գիւղը՝ հանգստանայ ու օդ փոխէ:

Ս իր ա ն — (Անտարբեր ուսերը կը թոթուէ):

Հ ա յ ր ը — Դուն ալ որ հիւծոդնաս՝ ալ ինչի՞ կը նմանինք: Չէ՞ որ ամեն բան քեզի կը նայի. կը դառնանք ծովը թափելու բան:

Ց ա կ ո բ — Իսկ հո՞ս, տունը-տե՞ղը ամբողջ երկու չաբաթ: (Ծպտուով) Աւոր մտին ալ մտածո՞ր կս:

Հ ա յ ր ը — Հո՞ս. հապա դո՞ւն ինչ կս. տհագին մարդ· սորվէ՛ վերջապէս· տան պէտքերը դուն կը հոգաս, Նուարդն ալ կ'օգնէ քե-

պի, Մարիամն ալ կնրակուբին կը նայի։ (Պրտնգին) *Դուն այսօր քու հազուստ-մազուստդ պատրաստէ՛. մնացածը ես կիտեմ։* (Իր ճիշտուն նետ կ'երթայ դուրս)։

Բ

Յ ա կ ո բ — (Ոտքի երթալով, ձեռքերը գրպանը կը մտցնէ ու դեմը կը կենայ) *Այսպէս ուրեմն. վազը կ'երթաք գիւղ. հիանալի՛, հիանալի՛...* (Քիչ մը լուռ) *Հայց ինձի նայէ՛, Սիրան, ատ քու ըրածդ ազուռր բան չէ։*

Ս ի ր ա ն — (Աջխատանքը ընդհատելով) *Ի՞նչը։*

Յ ա կ ո բ — *Աղէկ, աղէ՛կ. մենք իրար կը հասկընանք, չէ՞։ Պիտի երթաս, գնա՛, միայն, խնդրեմ, ինձի տխմարի տեղ մի՛ դներ։*

Ս ի ր ա ն — *Ի՞նչ կը խօսիս, Յակո՛բ։*

Յ ա կ ո բ — *Ես արդէն բաւական ժամանակ է՝ նկատեր եմ, որ քու մտքինդ ատիկա է։ Մխաներու տուած գլխու ցաւն ալ քեզմէ է, անոնք դրդոն ալ դուն ես։ Իզո՛ւր. իզո՛ւր, այդպէս զարմանք մի՛ կեղծեր։ Ես քեզի ալ, անոնք ալ, ա՛յ, այսպէս կարծես ափիս մէջը։ Ես ձեր բոլորի մտքերն ալ պարզ կը կարդամ։* (Հանիկ-հանիկ) *Դուն քու մէջդ որոշեր ես՝ գործերդ կարգադրես, ծնրուկն ու հլանդը նետես իմ ու Նուարդի վիզը և ինքդ...*

Ս ի ր ա ն — *Ամօ՛թ է, ամօ՛թ, տղա՛յ։*

Յ ա կ ո բ — *Եւ ինքդ հանգիստ երթաս քու քեֆիդ. կրնա՞ս ուրանալ։*

Ս ի ր ա ն — (Վրդովուած) *Որ ես... որ ես...* (Պահ մը կ'րնդհատէ, շեշտ կը ցայի աչուր ու յանկարծ բոլորովին փոխուած ու արիշտ աղիին նետելով) *Աղէ՛կ, հիմա ըսածդ ի՞նչ է։ Այո՛, ես վճռեր եմ՝ թողնեմ ու երթամ քիչ մըն ալ իմ ազատութիւնս վայելելու։ Ի՞նչ, իրաւունք չունի՞մ. ատ ի՞նչպէս է, որ միայն ե՛ս իրաւունք չունիմ. միայն ե՛ս. ինչո՞ւ։*

Յ ա կ ո բ — (Ահռամարաճով) *Ա՜հ, իրաւո՛ւնք, իրաւո՛ւնք. փախչիս պիտի՝ փախիր. ալ ատ խոչոր բառե՞րդ ինչացու են։ Դնա՛, գընա՛ քու քեֆիդ, քու զուարճութիւնդ։ Միայն ես քեզի կ'ըսեմ, որ այդ քու ըրածդ նեղ ու կապիտ եսականութիւն է։ Դուն կաչկանդել կ'ուզես ինձի, առջևս քար կը նետես, գուն խանգարել կ'ուզես ինձի ու իմ ծրագիրներս։* (Դղրդուած) *Ա՜խ, վար կը քաշէք գուք ինձի, կը խլէք ազատութիւնս. վա՛յ, վա՛յ, դէպի ձեր տուն ու խանութի մանրիկ-մանրիկ գործերը, դէպի կնանքի այդ չնչին աև աշխատանքը։ Դուք բոլորդ։* (Արկածած կ'ելլէ դուրս)։

Գ

Սիրան — (Կեցած է fառացած)։

Սահակ — (կր մօտենայ ամուր ու վրդովուած) *Սիրագ մի՛ կատրիր, Սիրա՛ն. ուշ մի՛ դներ. ան յիմար է բոլորովին. յիմար ու...*

Սիրան — *Ո՛չ։ Յիմարը ե՛ս եմ, ե՛ս։ Ան ի՞նչ յանցանք ունի. անիկա հիմա ալ կը պահանջէ միայն ան, ինչ միշտ հիմա տեսար է ու սորվեր։* (Վշտոտ) *վա՛ր կը քաշեմ. մանր, սև աշխատանքի. ես անոր համար վարի մարդ եմ, վա՛րը, վա՛րը։*

Սահակ — *Է՛, Թո՛ղ, բան չունի՞ս։*

Սիրան — *Բայց ծանր է, ծանր։* (Մտածելով) *Է՛յ, այս հօթը թէ ութը տարի է մայրիկիս մեռնիլը։ Ես եմ քաշեր սա տղուն բոլոր հոգը. զրկեր եմ ինծի ամեն բանէ, որ ան ոչինչ պակաս չունենայ. և ինչ յոյսեր, ինչ երազներ, իմ մեծ եղբայրս էր, իմ մէկ հատիկ եղբայրս էր։ Է՛, որ Աստուած չի տայ, չի տար։ Երևի իմ ճակտիս ալ տսիկա չ գրուած, որ զրկուած մնամ ամեն մխիթարանքէ, ամեն բաղդէ։ Ուրիշներն ալ եղբայր ունին։*

Սահակ — *Ո՞չ, Սիրա՛ն, մի՛ խօսիր այդպէս։ Տե՛ս, ես ալ բաղդի մէկ չատ սիրեկանը չեմ ու չա՛տ չա՛տ եմ մտածեր այդ բոլորի վրայ։ Ո՛չ. կեանքը այդպէս ամբողջովին չի զրկեր ոչ-մէկը. չէ՛. ամեն մարդուն բաղդի կտոր մը կայ. կա՛յ, Սիրա՛ն։* (Յափշտակութեամբ աջակայ դեմքին կախուած ու երկիւղած ոգեւորութեամբ)։ *Առանց այդ բաղդի կտորին խո՛տա ծանր, խո՛տա անիրաւ կը դառնար կեանքը։ Ամեն մարդուն բաղդի կտոր մը կայ։*

Սիրան — (Երկչոտ) *Բաղդի կտոր... այո՛... այո՛։* (Յանկարծ) *Եւ եթէ յիմար չեմ՝ պինդ կը բռնես. ամուր կը փաթթըսես բաղդի այդ կտորին, ու բաց չես թողներ, ո՛չ մէկ պայմանով։ Կը մտածես միայն քեզի, քու կեանքդ ու քու սիրտդ։*

Սահակ — (Միշտ ոգեւորուած) *Այո՛, Սիրա՛ն. քու կեանքդ, քու սիրտդ։*

Սիրան — *Ա՛յ, այն ժամանակ չես ըլլար վարի մարդ. ու ո՛չ-ոք ալ չես մտածեր, ո՛չ ուրիշը, ո՛չ դիմացինդ։*

Սահակ — *Այո՛, ո՛չ-ոք, ո՛չ ուրիշը, ո՛չ դիմացինդ։*

Սիրան — (Կ'ուզդուի ձիգ, ու ապշած կը ճայի պահ մը յամառ) *Դո՞ւն ես տսիկա ինծի ըսողը, դո՞ւն։ Սա երազ է, յիմար երազ։* (Զգայիցս չար ծիծաղով մը կը յենուի սեղանին ու ճակատը բռնելով) *Ա՛հ, գլուխս, գլուխս։*

Սահակ — *Այո՛, ե՛ս եմ։ Իրա՛ւ է, մինչև հիմա ես քեզի պաշտեր եմ քու այդ անձնազոհ, անձնուէր բնաւորութեանդ համար,*

բայց վերջապէս ամէն բան սահման մը ունի։ Ա՛յ, այդ ուրիշները, այդ քու զիմացիններդ ինչպէս կը փոխարինեն քեզի։ Ես չեմ կրնար տյլևս անանել, թէ դուն ինչպէս կը տանջուիս այս տան մէջ։ ալ հերի՛ք է։ Տո՛ւր, Սիրա՛ն, տո՛ւր ձեռքդ ինծի ու ելի՛ր երթանք։ Կ'ապրինք կերպ մը։ գիտե՛ս, ապրուստս մեծ բան մը չէ։ ի՞նչ փոյթ, Կ'ապրինք ինչպէս կրցանք։ Դուն աչխատանքի ազջիկ ես։ ես ալ Կ'աչխատիմ ուելի, դուն Կ'ոգևւորես ինծի։

Սիրան — (Իսլորովին ծգոյն ու կարծես ուժասպառ կամաց մը կը սանի ցած ու կը նստի արտոին)։

Սահակ — (Վախցած ու շուար, առաջ գալով) Սիրա՛ն, ի՞նչ եղաւ քեզի։ Թո՛ղ, մեղայ, Սիրան։ Թողնե՛նք։ ալ չեմ խօսիր, ալ ո՛չ մէկ բառ։ երթա՛ք, երթա՛ք։ ի՞նչ ունիս։ ի՞նչ Կ'ուզես։ Ջուր տա՞մ, Սիրա՛ն, Ջուր Կ'ուզե՞ս։ (Կես մը առջևը չոքելով՝ աղօթելու պես) Սիրա՛ն...

Սիրան — (Ցոգնած) Ելի՛ր, ելի՛ր։ չա՛տ անխելք բան է կեանք բռնացը։ անիկա կը խաղայ մեզի հետ։ կը խաղայ ու կը խնդայ վրանիս։

Սահակ — Ներէ՛ ինծի, Սիրա՛ն եթէ քեզի վչտացուցի։

Սիրան — Ես՞ զ ատյայ։ ի՞նչ ներեմ քեզի, ի՞նչ ներում կը խնդրես։ Տո՛ւր ձեռքդ ինծի։ Շատ բարի ատյայ ես դուն, չա՛տ բարի, չա՛տ մարդուր ատյայ, չա՛տ... (Յանկարծ տղու ձեռքը բաց կը թողնե ու վախցած կը ցատկե ոտքի) Դո՞ւռն էր։ դուռը զարկի՞ն։

Սահակ — (Ոտքի ելլելով իմիկ ալ) կարծե՛մ։ ինչո՞ւ վախցար։ երևի որևէ հիւր մը։ ժամանակ է, ես ալ երթամ։

Սիրան — (Յանկարծ) Ո՛չ, ո՛չ։ Ձեռքի՛ր։ հո՛ս, քո՛վս, մի՛ երթար։

Սահակ — Բայց... բայց գիտես, որ ուշացեր եմ արդէն։ և դեռ հանդիպելու եմ ապարան։ անհրաժեշտ է։

Սիրան — Ո՛չ, ո՛չ, մի՛ևնոյն է։ մի՛ երթար։

Սահակ — (Վարաճ) Ազէ՛կ, քիչ մըն ալ մնամ։ իսկ դուն գնա՛ լուացուէ։ դէմքդ փոխուի գոնէ։

Սիրան դուրս։ Սահակ սպասողական։

Կը մտնեն Հայրը ու Օհաննէս։ Սահակ իսկոյն կը փոխուի, սառն դէմք մը կ'ըստանայ ու կը քաշուի քայլ մը հետ։

Հայրը — (Դեռ սեմեն) Այո՛, այո՛, հրամեցէ՛ք։ վա՛յ, Սիրանը հոս չէ՛։ կը ներէ՛ք, իմարկէ, հազուադա այսպէս քիչ մը շատ ագեզ...

Օ հ ա ն ն է ս — Տգի՞ղ, ա՞յդ, աչխատանքի հագուստը. ընդհակառակը. ամէնէն կը վայլէ ձեր ճերմակ մօրուքին։

Հ ա յ ր ը — Նոր տակառ մը գինի եմ նուէր ստացեր ու չիշերը քաշելու վրայ եմ. բայց պատուական գինի, դիտէ՞ք. զրկեր է իր սեփական ագիճէն. բաժակ մը ըներեմ, տեսէ՛ք։

Օ հ ա ն ն է ս — Շնորհակալ եմ. ճաշէն առաջ մովորութիւն չունիմ, և ընդհանրապէս խմիչքի հետ չատ բարեկամ չեմ։

Հ ա յ ր ը — (Առհամարաձիով) Հա՞։ Դուք գիտէք, թէև, չիտակը, խելքս չի հասնիր։ Ձեր տարիքին մեր ժամանակը...։ (Դեպի դուռը կանչելով) Սիրա՛ն, Սիրա՛ն։ Այս վայրկեանիս, պարոն Ջալեան, տեսնեմ ո՞ւր են կորեր բոլորն ալ։ (Դուրս)։

ե

Օ հ ա ն ն է ս — (Ներս կը դառնայ՝ դեպի առաջ գալով ու ճոր կը տեսնէ Սահակը) վա՜յ, պարո՛ն, դուք այստե՞ղ էիք. չնկատեցի։ Ներեցէ՛ք, խնդրեմ։

Ս ա հ ա կ — (Սառն) Ոչի՛նչ, ոչինչ,

Օ հ ա ն ն է ս — (Ջերմ) Բարև՛ ձեզի։ Ի՞նչպէս էք։

Ս ա հ ա կ — Շնորհակա՛լ եմ։

Օ հ ա ն ն է ս — (Իր վրաց ու իր հագուստը ճայելով) Ինչո՞ւ այդպէս զաբմանքով կը նայիք ինձի, այդպէս քննական։

Ս ա հ ա կ — (Եփորուած) Քննակա՞ն, ի՞ս. ամենևին։

Օ հ ա ն ն է ս — (Ծպտելով) Ուրեմն անդիտակից է։ Ժուրնալիստի վարժութիւն, երևի։ Ի դէպ. անցեալներդ ձեր մկկ յօդուածը կարդացի։ Վերնագիրը... չգիտե՛մ. ա՛յն, երիտասարդներու գաւառը չճնալու մասին. կը յիշէ՞ք։

Ս ա հ ա կ — Այո՛ կարծեմ։

Օ հ ա ն ն է ս — (Միօs ժպտուն) Ի՞նչպէս կարելի է, բարեկա՛մս, այդ տեսակ բաներ գրել։ Վերջապէս ժամանակ է՝ քիչ մըն ալ երեւոյթի պատճառները ուսումնասիրելու, հասկընալու. քիչ մը այնպէս դիտակցօրէն խնդրին մօտենալու. թէ չէ, այդպէս, օդին մէջ բացականչութիւններով ու ձեր յաւերժական «պէտք է այսպէս» ու «պէտք է այնպէս»ը. ի՞նչպէս թէ «պէ՛տք է»։

Ս ա հ ա կ — (Ծեծամաբար) Ուրեմն ձեր կարծիքով պէտք չէ՞։

Օ հ ա ն ն է ս — Ցամենայն դէպս ճարտասանութեամբ ու հինցած ձևաչներով բան չենք չահիր. ամենէն առաջ պէտք է հասկնալ։ (Սիգար հրամցնելով) Ինդրե՛մ, չէի՞ք կամենար։

Ս ա հ ա կ — (Ձոր) Ո՛չ, շնորհակալ եմ։

Օ հ ա ն ն է ս — Չէ՞ք ծխեր։

Մ ա հ ա կ — Ո՛չ, կը ծխեմ. բայց... ո՛չ այստեղ։

Օ հ ա ն ն է ս — Եւ ինչո՞ւ։

Մ ա հ ա կ — (Բաց ճասկրցնելու ետեւով) Օրիորդը չը սիրեր ծխախոտին մուխը։

Օ հ ա ն ն է ս — (Միծաղելով) Ախ, օրիորդի՞ն համար։ Է՛, ոչինչ։ (Առաջարկելով) Հա՛տ մը, այնպէս, կոնդրաբանառավ. մի՛ վախնաք։

Մ ա հ ա կ — Ո՛չ, չնորհակալ եմ, արդէն ըսի։

Օ հ ա ն ն է ս — Իզո՛ւր։ Եւ վերջապէս պէտք է վարժեցքնել օրիորդն ալ։ Ենթադրենք յանկարծ ամուսինը ծխող մը եղաւ. այն ատո՞ն։

Մ ա հ ա կ — Այն ատեն, երեւի ամուսինն ալ կ'աշխատի կնոջ ներկայութեանը չծխելու, կամ գուցէ եւս սորվելու։

Օ հ ա ն ն է ս — Ա՛, այդ մէկը ոչ։ (Միծաղելով) Ես ուզէի կը նախադասեմ կնոջմէս բաժնըւիլ, քան ծխախոտէս։ (Կը վառէ)։

Մ ա հ ա կ — (Լուրջ) կան մարդիկ, որ այդ աչքով չեն նայիր կնոջ վրայ։

Օ հ ա ն ն է ս — Է՛, բարեկա՛մ, թողէ՛ք։ Հաւատացէ՛ք ինծի, եթէ ձեր կինը ձեզի սիրեց, ձեր ծուխն ալ կը սիրէ, ձեր մուխն ալ։

Մ ա հ ա կ — Ուրիշ խօսքով՝ որովհետեւ ինծի սիրեց, պէտք է դառնայ հոլու հպատակ։

Օ հ ա ն ն է ս — Պէ՛տք է, թէ ոչ, ճչմարիտ, չգիտեմ. ես «պէտք է»-ներու բարեկամ չեմ, ինչպէս ըսի. բայց այդ այդպէս «է»։

Մ ա հ ա կ — (Հեգնոտ) կը կարծէ՞ք։

Օ հ ա ն ն է ս — Բայց դուք իզուր կը վրդովիք. կնոջ գուցէ ամենէն ուժգին սիրած բանը հպատակիլն է։

Մ ա հ ա կ — (Մաղձոտ) Ո՛չ ամէն կնոջ։ Ո՞վ գիտէ՝ դուք ինչ կը հասկնաք կին ըսելով։

Օ հ ա ն ն է ս — Ի՞նչպէս թէ։ (Ծիդալով) կը հասկընամ, ինչ որ դուք. կինը... կինը... (Կը մտնէ Սիրանց)։

2

Օ հ ա ն ն է ս — Ա՛յ, կի՛ն, օրինակի համար։ (Կատակով) Չկարծեմ որ հակառակ կարծիքի ըլլաք։

Մ ա հ ա կ — Է՛, դառարկ խօսակցութիւն է. թողնե՛նք։

Օ հ ա ն ն է ս — Ինչո՞ւ. ընդհակառակը, մանաւանդ հիմա կնոջ մը ներկայութեան։

Մ խ ի թ ա ր — Խօսքը ինչի՞ մասին է։

Մ ա հ ա կ — (Տափցած) Փիաո՛մ, գիտե՛մ, որ չատ կան այդ տե-

աակի կանայք, որոնց ամենէն սիրած բանը հպատակիլն է, ինչպէս որ կ՚ըսէք, որոնք ո՛չ կամք ունին, ո՛չ դիտակցութիւն, որոնք խաղալիք են էրիկ-մարդու ձեռքը։ (Կնոջ) *Բայց... Բայց կը սխալիք, ամեն կին այդ ձեր կարծածը չէ, ամեն կին չէք կրնար ձեր քեֆի ուզածին պէս դարձընել։*

Օհաննէս — (Խիստ հանդարտ) *Լա՛ւ, դիցուք թէ. ինչո՞ւ այդպէս կը տաքնաք։*

Սահակ — (Ինքզինքը սանձելով) *Ես... Ես տաքցած չեմ։ Այս իմ սովորութիւնս է, երբ վէճի բռնուիմ։ Մանաւանդ... մանաւանդ երբ խնդիրը իմ սրտիս մօտիկ... իմ սրտիս մօտիկ սկզբունքներու մասին է։ Ո՛չ, կինը էրիկ-մարդու հրուշակաքը չէ՛։ Կի՛նը, իսկական կինը, կի՛նը, այնպէս ինչպէս ես կ՚ըմբռնեմ, էրիկ-մարդու ուժն է, անոր ներշնչումը, դիցուհին, առաջնորդը։ Ես այդպէս կ՚ըմբռնեմ։*

Օհաննէս — (Անվոյր) *Զգիտեմ այն սանն էրիկ-մարդը ինչ է ձեր կարծիքով։*

Սահակ — *Ի՞նչ։*

Օհաննէս — (Դեպի կից սենեակին դուռը) *Ա՛յ, և մեր փոքրիկ նկարչուհին։*

Բ

Նուարդ — (Ուրախ-ուրախ կը ներս դեպի տղան. գլխարկով) *Բարև՛, բարև՛։ Ես արդէն ճանբան մտածեցի, որ եկած պէտք է ըլլաք։ Բարև, Սահա՛կ։*

Սահակ — (Սրտացին) *Իսկ ես այլևս երթամ, Աիրա՛ն. չատ ուշացայ։*

Սիրան — (Ոչինչ չի պատասխաներ)։

Սահակ — *Պէտքի գործ է, ան ալ ուրիշի գործը։*

Սիրան — (Ուսը կը ցնցէ տեսակ մը անփոյթ)։

Սահակ — *Ցեմ ուշանար. գնամ, կարգադրեմ ու նորէն կուգամ։*

Սիրան (Անտարբեր) *Ինչպէս որ կ՚ուզես։*

Սահակ — *Ուրեմն առայժմ ցը։* (Ծալեանցին բերեր մը գլուխ տալով) *Պարո՛ն։*

Օհաննէս — *Երթաք բարով, պարո՛ն Պօղոսեան։*

Սահակ — (Խուրս)։

Բ

Օհաննէս — Օրի՛րդ, չըլլա՞յ թէ վչտացաւ։

Սիրան — (Դժկամ) Ա՛խ, ո՛չ. ան արդէն առաջուց կ'ըսէր, որ պիտի երթայ։

Օհաննէս — Ինծ ոտայ է։ Զգիտե՛մ, մարդուս մէջ քիչ մըն ալ «ես» ըլլալու է։ Այնպէս քիչ մը հպարտութիւն, ինքնավստահութիւն. վերջապէս բնական պահանջ մը ի՛նքը վարող ըլլալու, ի՛նքը վերը, ի՛նքը տէրը։

Նուարդ — (Յափշտակուած) Այո՛, այո՛, անպատճա՛ռ։

Սիրան — (Կարծես ամչցած գլուխը կր կախէ) Բնաւորութիւնները տարբեր են, պարո՛ն Օհաննէս. ամեն մէկը իր տարբեր առաւելութիւններով։

Նուարդ — Գիտէ՞ք, Սահակը հիանալի ոտայ է։ Միայն.. միայն, քիչ մը այնպէս... ի՞նչպէս ըսեմ, կարծես հրեշտակ ըլլայ։

Օհաննէս — (Խնդալով) Ի՞նչ։ Ա՛խ, դուն, աստանա՛յ։ Իսկ նկարչութի՞ւնը ինչ վիճակի է։

Նուարդ — (Աչխուժ) Մի՛շտ լաւ։

Օհաննէս — Եւ իհարկէ մէյ մըն ալ ծրագիրները։

Նուարդ — Անշո՛ւշտ. ինչի՞ է նման իմ կեանքս առանց այդ ծրագիրներուն, առանց գեղարուեստի։ Ես ինչո՞ւ համար եմ ապրելու, եթէ մէկս եզած այդ չնորհքէն բան մը ծնելու չէ։

Օհաննէս — (Ուրախ) Այո՞։

Նուարդ — (Ոգեւորուելով) Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք. ա՛յ, մէյ մը աւարտեմ հոս նկարչական վարժարանս։ Կը տեսնէք քանի մը տարիէն, կը տեսնէ՛ք. արդէն քոյրս ալ խոստացեր է՝ ամեն կերպ օգնել ինծի։

Օհաննէս — (Սիրաւիճ) Այո՞։

Սիրան — (Կոտրուած) Այո՛։ (Կատակով) Օրական եթէ երկու օճիկ ուելի բանիմ անոր ծախքը կը հանեմ։ Ես ալ ժամանակ մը ունեցեր եմ իմ ծրագիրներս, ես ալ երբեմն երազեր եմ, թէ բան մը պիտի դառնամ, բայց իմ ճամբաս ուրիշ կողմ էր բնկած։ Պէտք է տան մասին հոգայի դեռ չատ թարմ տարիքէս, պէտք է... (Դառն ծիծաղելով) Պէտք է վարը ճնայի, վա՛րը, մանր, սեւ աչխատանքի...

Նուարդ — (Առնուած) Ի՞նչ ըսել կ'ուզես, Սիրա՛ն։

Սիրան — (Կտրուկ, վճռական) Բայց ինչ որ ես ինծի համար չեմ կրնար, ուրիշի համար կրնամ։ Ա՛ռ ալ դեր մըն է վերջապէս։ Ընելու եմ ձեռքէս եկածը, որ սա՛ գոնէ ազատ ըլլայ ինքզինքը իր

հակառակներուն նուիրուելու. Թող սա ապրի գոնէ իր ուզածին պէս ու իր համար։

Օհաննէս — Ա՛ն ալ, բայց գուք ալ։ Իզուր այդպէս գառնացած կը խօսիք։

Նուարդ — (Ուրախացած) Չէ՞, պարո՛ն Սհաննէս, գուք ըսէք, խնդրեմ։ Երբևէն ահա՛ առանկ, այնպէս սիրտս կը կտրէ որ...

Օհաննէս — Հապա, Նուարդ, դուն մեզի համա վայրկեան մը առանձին ձգէ՛։

Սիրան — (Վախցած) Ո՛չ, ո՛չ, ինչո՞ւ։ կեցի՛ր, Նո՛ւարդ

Նուարդ — (Զարմացեալ կը ցայի մեյ մը Էրոջը, մեյ մը տղու երեսին, ու ցպարս) Խնդրե՛մ, խնդրե՛մ, եթէ ես ձեզի կը խանգարեմ։ (Դուրս)։

Սիրան — (Աննահատ շարժում մը կ'րնէ, կարծես կանչելու)։

Օհաննէս — Թողէ՛կ, Թողէ՛ք երթայ։ Ես վերջը սիրտը կ'առնեմ։

Սիրան — (Ընթրուած կ'երթայ կարի սեղանին առջեւը, ջուրս, խառնակ շարժումով մը սպիտակեղէնները կր վերցնէ, կը դնէ, կարծես զբաղուած է)։

Օհաննէս — (Որ մօտենայ աւուր ու սեղանէն մկրատը վերցնելով՝ ժպտուն) կարծեմ վերջապէս պէտք է այս հանդոյցը կարենք։

Սիրան — (Անոր ցայելի խուսափելով) Ինչ հանդոյց։

Օհաննէս — (Միշտ ժպտուն) Նա՛, ո՞ր տեղէն սկսինք... (Ցանկարծ վճռաբար մկրատը կր դնէ սեղանին) Գիտէ՞ք ինչ. ես կողմնակի ճամբաները չեմ սիրեր։ Եւ վերջապէս ինքներդ ալ չատ լաւ կ'ըզգաք անշուշտ, որ...

Սիրան — Թողէ՛ք, Թողէ՛ք, խնդրեմ։

Օհաննէս — Ինչո՞ւ։ Ո՛չ։ Ես մինչև հիմա ուղղակի խօսելու քաչուկացայ, զսպեցի ինծի, կարծես վախ ունէի, որ կ'ըչտապեմ, գուցէ և աւելորդ հպարտութիւն. բայց վերջապէս ալ չեմ կրնար։

Սիրան — Կ'ապաչեմ ձեզի, պարո՛ն Օհաննէս, կը խնդրեմ ձեզի, Թողէ՛ք, լռեցէ՛ք։

Օհաննէս — Ինչո՞ւ սակայն։ Եւ վերջապէս արդէն ուշ է ետ երթալու համար։ Եթէ սխալած եմ, եթէ զգացումներս խաբեր են ինծի, եթէ գուք նոյնը չէք զգար դէպի ինծի, է՛, աւելի վատ. բայց լռել, ո՛չ, ալ չեմ ուզեր։

Սիրան — (Կամաց մը կը սաւի ու կը ցսի. գլուխը հակ)։

Օհաննէս — *Տեսէ՛ք, ես սարի մարդ եմ, ես ձեզի ամէն բան իր անուռնովր պիտի ըսեմ։ Ես չգիտեմ սա ինչ բան է, որ ինծի այսպէս դէպի ձեզի կը քաշէ։ Ես չգիտեմ անգամ, թէ իսկապէս ձեր մէջ ի՞նչն է, որ այսպէս սրտիս զարկաւ։ Միայն բնազդներս կ՚ըսեն ինծի՝ «Գնա՛», կը դրդեն ինծի՝ «Գնա՛, ա՛ն է»։ Իսկ ես սաստիկ կը հաւատամ իմ բնազդներուս, իմ միակ իսկական ղեկավարս անոնք են եղած կեանքիս մէջ, և երբեք ալ չեն խաբած։ Ահա՛ ես ձեր առջևն եմ. հիմա ամէն բան դիտէք։* (Միջադեպով) *Հիմա ալ խորհուրդ կուտա՞ք երկուան պէս, որ երթամ Յովսէփեանի աղջկանը։*

Սիրան — *Դուք ի՞նչպէս կը տանջէք ինծի։ Միթէ չէ՞ք զգար, որ ձեր վարմունքը վատ է, վատ է...*

Օհաննէս — *Վա՞տ։ Ներեցէ՛ք, ո՛չ։ Եւ վերջապէս ձեր մէկ խօսքովը կրնաք վերջ դնել։*

Սիրան — *Վե՞րջ... Բայց չէ՞ք տեսներ միթէ, ի՞նչպէս խառնակ է գլուխս, ինչպէս ես ինքս իմ առիս չեմ, ինչպէս... վատ էք, վա՛տ, վատ։ Ի՞նչ ըսեմ ես ձեզի, ի՞նչ կ՚ուզէք որ ըսեմ ձեզի. ես խօսելու անգամ կը վախնամ. այլևս ամէն բան կարծես չափը հատած է դարձեր։ ա՛յն մտածումները, այն պարտաւորութիւնները, որոնք ես երկար-երկար տարիներ չատ բնական եմ համարեր ու ապրեր, այսօր ինծի ծուռ կը թուին, չիմաց, սխալ։ Կը հասկնա՞ք, ես հիմա այլևս չգիտեմ՝ ի՞նչը բանեմ, ի՞նչը թողնեմ։*

Օհաննէս — *Այսինքն ի՞նչպէս, պարզ չեմ ըմբռներ։*

Սիրան — *Թողէ՛ք ինծի այսօր, պարո՛ն Օհաննէս, կ՚ապաչեմ ձեզի։ Կը տեսնէ՛ք, ես նորմալ դրութեան մէջ չեմ։ Յանկարծ... և վերջը ամբողջ կեանքս կը զղջամ. ես այսօր կը վախնամ ինքս ինծմէ, ես այսօր կրնամ ընել ամէն չիմարութիւն. գաք իմ գլուխս պատյա կու տաք, դուք կը քաշէք ինծի, դուք կը դրդէք ինծի. աղէկ չէ, չէ։*

Օհաննէս — (*Վիրաւորուած*) *Ներեցէ՛ք, օրիո՛րդ, կը տեսնեմ, որ սխալ գործեցի։ Ես կը հեռանամ։* (*Կ՚ուզէ գնալ*)։

Սիրան — (*Ցանկարծ առաջ նետուելով՝ բռնել*) *Պարո՛ն Օհաննէս, պարո՛ն...*

Օհաննէս — (*Կեռ ճաքիլն կանգ առնելով*) *Օրիո՛րդ։*

Սիրան — (*Կը մօտեցայ աճուր, կը կենայ դիմը ու ճիճաճով*) *Վիրաւորուեցա՞ք։*

Օհաննէս — *Ո՛չ, օրիո՛րդ, իրաւունք չունիմ։*

Սիրան — (*Պաղատանքի-փաղաքշանքի*) *Մի՛ վիրաւորուիք, կը խնդրեմ ձեզի։ Հասկցէ՛ք ինծի։ Հասկցէ՛ք հոգեկան վիճակս։ Կը խօսինք ուրիշ անգամ մը, երբ գլուխս աւելի պարզ ըլլայ* (*Ձեռքը մեկնելով*) *Մի բարկանա՛ք։*

Օհաննէս — (Կը բռնէ ձեռքը ու կը նայի իրար ջերմ ու երկար. լուռ. վերջը կամաց) *Ուրիմն... ե՞րբ գամ։*

Միրաան — (Տղու դէմքին կախուած, տարուած) *Ե՛րբ որ կը կամենաք։*

Օհաննէս — *Վա՞ղը, միւս օր, կիրակի՞։*

Միրաան — *Ե՛րբ որ կը կամենաք։ Ուրիմն ալ չէ՛ք վշտացած։*

Օհաննէս — *Վշտացա՞ծ, հիմա՞։* (Երկու ձեռքով աւելցած մրճ ալ բաւի կու տայ աւնր ձեռքը ու կը բողնէ զուարթ ու աշխուժ) *Ո՛չ· հիմա ես ուրախ եմ միայն, ո՛ւրախ, բոլոր սրտովս։ Այսօր թէ վաղը, երբ որ կ՚ուզէք· բայց իմ պատասխանս ես առի արդէն։* (Յափրշտակուած) *Անո՛ւ իմ պատասխանս, դո՛ւք, ձեր դէմքը, ձեր նայուածքը· անո՛ւ իմ պատասխանս ձեր աչքերուն մէջ։ Յըտեսութիւն։* (Կ՚ուրս)



Միրաան — (Աւնր եսեւեն նայելով ես-ես կ՚երթայ մինչեւ ճակտի դուռը, ուր կը մնայ՝ բիրկ տուած. գլուխը չնճած պատին։ Վերջը յանկարծ վայրի ուրախութեամբ կը նետուի առաջ, կը բռնէ ամուր արտուի մը բիկուցիեն ու ճարեն կը բազուի իր մտերուն մէջ)։

Հայրը — (Կը մտնէ ձեռքը շիշ մը գինի ու բաժակ մը) *Ա՛յ, մէյ մը համը տեսէք։* (Զարմանքով կը նայի շուրջը)։ *Վա՛յ, դնա՞ց· դուռը գոցուզը ա՞ն էր։ Ախո՜ւ։* (Վար պնելով ձեռքիններր)։ *Տեսա՞ր, Սիրան, որ կ՚ըսէի՝ ճիշդ 65 չիշ է դուրս գալու։ Բան մը որ կ՚ըսեմ, ըսածս դիտեմ· 63 չիշ եղաւ· երկու չիշի չափ ալ ոթած ու խմած՝ ճիշդ քեզի 65։ Տեսա՞ր հիմա աչքիս չափը։*

Միրաան (Յրիւ) *Հը՛մ։*

Հայրը — *Ինչպէ՞ս թէ «հըմ»։ Ադէկ յոգնեցայ, հա՛։ կատա՞կ է, ամբողջ տակառ մը։ Բայց հիանալի գինի է, Սիրա՛ն, աքանչելի գինի։* (Շիթը լոյսին բռնելով) *Ա՛յ, հիմա քեֆս տեղն է։*

Միրաան — (Սրտնեղ) *Է՛, երնեկ քեզի, որ քանի մը չիշ գինիով այդպէս ազեւորուիլ կրնաս։*

Հայրը — *Վա՜հ. դուք որ բերնի համ չունիք. դուն ի՞նչ գիտես՝ ինչ բան է գինին։ Ո՛չ դուն, ոչ ալ անիկա, յիմա՛րը, ձգեց զըներս։ Է՛, ներ երիտասարդներդ, դուք արդէն ոչ մէկ բանէ համ առնելու չնորհքը չունիք, ոչինչ վայելել չէք կրնար, ո՛չ մէկ բանով գինովնալ չգիտէք։ Մինք ուրիշ տեսակի մարդիկ էինք մեր երիտասարդ օրերուն։*

Միրաան — (Մտածկոտ) *Դուցէ իրաւունք ունի՛ս, հա՛յր։*

Հայրը — (Ծաղրով) *Դուցէ՛։ Ինչպէս թէ «դուցէ»։*

Սիրան — (Յանկարծ) *Ձիշդ է, հայրի՛կ։ Տո՛ւր ինծի, տո՛ւր ինծի քու գինիէդ։ Ես ալ կ՚ուզեմ խմիմ քու գինիէդ։* (Բայլ մը առաջ երթալով) *Ե՛ս ալ կ՚ուզեմ...*

Հայրը — (Զարմանքով) *Ըհը՛։ Նո՞ր խելքի եկար։* (Տեսակ մը գինիին ջիբը պաշտպանելու շարժուձեով) *Համբերէ՛, համաց-համա՛ց։ Գինին աննման բան է, ի՞նչ կարծեցիր։ Միայն իհարկէ այսպէս ընտիր ու անապակ գինին։ Գինիին ու բարեկամին միա՛յն ընտիրը։ Մնացածը Ծո՛յն է։*

Սիրան — (Յափշտակուած) *Այո՛, ընտի՛րը, ընտիրը, միայն ընտի՛րը...* (Աննզուսպ ուրախութեամբ) *Հայրի՛կ, գինիին ու բարեկամին միայն ընտիրը։*

Հայրը — (Ապշած կը նայի անոր) *Վա՜հ։ առանց խմելու գինովցա՞ր։* (Կասկածոտ) *Զըլլա՞յ թէ արդէն խմիր ես։*

Սիրան — (Լիասիրտ ծիծաղելով կը նետուի բազկաթոռի մէջիքն, գրեթէ պառկած, տարածած թեւերով) *Հապա՛, հայրի՛կ, խմի՛ր եմ։ Հա՛, խմի՛ր եմ, խմի՛ր եմ։*

Հայրը — *Ե՛րբ։ Աա ի՞նչպէս, որ ես չիմացայ։ Դողուն՛ի՞։* (Ծիծաղելով) *Հա՞, հա՞, հա՞, հարբե՞ր ես։*

ԳՒՇ

Տիրուհի — (Գլխարկով նակտի դռնեն) *Վա՜յ, հայրի՛կ, քեզի տեղն է։*

Հայրը — (Միշտ ծիծաղելով) *Սիրանը... Սիրանը հարբեր է։*

Տիրուհի — *Չէ՜ հա։* (Աղջկան դառնալով) *Սի՛րան...*

Սիրան Ընտի՛ր, ընտի՛ր գինի։

Հայրը — (Միշտ ծիծաղով կը վերցընէ ջիբը) *Դողցեր է գինիէս դողցեր է։ Ա՛յ, չէի կրնար երեւակայել։* (Խուռն)։

Տիրուհի — (Գլխարկով, նովաճոցը ձեռքին կեցած է աղջկան դեմը, աչքերը ամբարձ անոր դէմքին)։

Սիրան — (Կամաց մը կը բարձրանայ ու կը նստի հանգիստ) *Իմ վիճակս ելաւ, Տիրուհի՛։*

Տիրուհի — *Այո՛։ կը տեսնե՛մ։*

Սիրան — *Ուրախ չե՞ս։*

Տիրուհի — (Մտածկոտ) *Ուրիշն դէպի սիրած սարերդ...* (Հեգնոտ) *Ախ՛ղա Սահակ։*

Սիրան — *Չ՛, ինչո՞ւ խեղճ. ես անոր ի՞նչ էի տալու. կ՚անցնի քանի մը օր, կը վարժուի, վերջացաւ գնաց։*

Տիրուհի — (Գլխով կ՚ընէ) *Հը՛մ։ Հօրդ համար ալ մեծ անա-*

կընկալ է ըլլալու. այնպէս սորված է քու թևիդ տակ ու քու հոգածութեան։

Սիրան — Իմ պարտքս կատարեր եմ ես, կարծեմ։

Տիրուհի — Անչո՛ւշա. հիմա ալ կարգը Նուարդինն է. նըկարչութիւն-մկարչութիւն, տառնք դատարկ բաներ են, հարուստ մարդու ժամանց. թող նստի տունը ու տունը պահէ։

Սիրան — Ոչ. ինչո՞ւ։ ես Նուարդի համար կ'աշխատիմ նորէն հեռուէն ալ. որչափ որ կրցաւ թո՛ղ չարունակէ. թող առաջ երթայ...

Տիրուհի — Այնպէս որ կը սիրայ միայն հիւանդը. անոր գործ դէշ եղաւ։ Առանց քեզի ան չի դիմանար այս տան մէջ։ Հոգին կը հանուն։

Սիրան — Է՛, ի՞նչ ընեմ, քիչ մըն ալ թող միւսները մտմտան։ (Դրգռուած) վերջապէս... ես ալ մարդ եմ վերջապէս։ Ա՛յ, որ այսպէս եա կը նայիմ անգամ մը իմ ապրած կեանքիս. ինչի՞ է նման. անապա՛ս. մանր-մունր հոգեր, ցաւեր, ու գո՛րշ, գո՛րշ։ Ո՛չ, ո՛չ, ալ չե՛մ կրնար, ա՛լ չեմ ուզեր. ես ալ ունիմ իմ պահանջներս, և՛ ալ կ'ուզեմ զգամ ու ապրիմ։ Ես ալ կ'ուզեմ ապրիմ, Տիրուհի՛, կը հասկընա՞ս, ես ալ կ'ուզեմ ապրիմ։ կ'ուզեմ ապրիմ ինձի համար, վերջապէս անգամ մըն ալ ինձի համար։

Տիրուհի — (Ընկճուած) Ապրէ՛, ապրէ՛, պէտք է ապրիլ։

Սիրան — Բայց դո՞ւն ինչու այդպէս։ Ուրախ չե՞ս։

Տիրուհի — Է՛, թո՛ղ ինձի։ Նախա՛նձ։

Սիրան — Անհե՛թք։

Տիրուհի — (Դառն) Չէ՛, կատակ չէ՛ ըրածս։ Այսօրւընէ մեր ճանապարհները ալ կը բաժնուին իրարմէ։

Սիրան — Ինչո՞ւ։

Տիրուհի — Մինչև հիմա կարծեր էի, մենք միշտ ենք զոյգ երթալու։ Ու պինդ համոզուած էի, որ այդ բոլորը պայրոյթի, բոզքի ալիքներ են միայն, որ կու գան ու կ'անցնին սրտիդ վրայէն, ինչպես եկեր ու անցեր են իմ վրաչէս։ Ես քեզի ալ ինձի նման կարծեցի. ինձի նման անընդունակ ապրելու ինձի քեզի համար, ինձի նման միայն աշխատասէր ձեռք մը ուրիշներու կեանքը դիւրացնելու։ Սխալուեր եմ. քու մէջդ կ'ինն է նստած. ապուշը միայն ե՛ս եմ եղեր աշխարհս երեսին։

Սիրան — (Վրայ իյնալով՝ կարեկցոտ) Տիրուհի՛, Տիրուհի՛...

Տիրուհի — (Խիստ ու իրմեն հեռու պահելով) Ա՛ ո՛չ. իզո՛ւր։ Դուն կը խղճաս ինձի։ Աաիկա վա՛տ բան է, քեզի համար չա՛տ է վատ։ Խղճալը չա՛տ ուեւտրդ ու չա՛տ անյարմար բնո՛ւ է իրեն համար ապրիլ ցանկացողին։ Ով իրեն համար ապրիլ կ'ուզէ, խղճալը պէտք է մէկդի դնէ։ Գնա՛ քու ճանբադ ու եա մի՛ նայիր երբե՛ք. երբե՛ք, ո՛չ ինձի, ո՛չ միւսներուն։ Այդ ճանբով գացողը եա նայելու չէ. յիշէ՛ Ղովտին կինը. քարէ արձան կը դառնաս։

ԺԲ

Սահակ — (Արագ կը ճեռուի ճերս) Ահա՛ և ե՛ս։ Որ ըսի չեմ ուշանար։

Սիրան — (Յուզուած ու չոր) Այդպէս վստա՞հ ես, որ չես ուշացեր։

Սահակ — Անչա՛ւշտ։ Փողոցին անկիւնն ալ տեսայ ձեր հիւրը, որ կ'երթար։

Սիրան — Իսկ ինծի կը թուի, որ չա՛տ ուշացար, չա՛տ։

Սահակ — Է՛հ, կրքով մի խօսիր. դեռ հագի՛ւ կէս ժամ անցաւ։ Տե՛ս, այնպէս չտապեր եմ։ Զգէ՛։ Երևի բարկացեր ես, որ էլանցի քեզի, բայց վերջապէս երեխայ չե՛ս. պէտք է հասկնայիր, որ պարտականն էի երթալու։

Տիրուհի — Պարտակա՞ն, պա՛րտք։ Ի՞նչ բան է պարտքը։

Սահակ — (Կատակով) պա՞րտքը...

Տիրուհի — (Սիրացին) Ինչո՞ւ ես անհանգիստ։ Քալ եղի՛ր, անփոյթ ու ետ մի՛ նայիր. յիշէ Ղովախն կինը... (Խուրս)։

ԺԳ

Սահակ — (Զարմանքով ու ծիծաղով) Դեռ բարկացա՛ծ ես։ Արժէ՞, հոգի՛ս։ Ազէ՛կ, թո՛ղ, կը բարկանաս մէկ ուրիշ անգամ։ Հիմա այնպէս, չգիտեմ ինչու, սիրտս տեսակ մը լիքն է, ու հետգ խօսիլ կ'ուզէի. եկո՛ւր, նստէ՛։

Սիրան — (Սեղանին վրայ բանով մը զբաղուած. բիկուճեր տրդուն) Սահա՛կ։

Սահակ — Հա՞։

Սիրան — Քեզի բան մը ունիմ ըսելու։

Սահակ — Հապա՛։

Սիրան — (Կես մը դեպի տղան դառնալով) Զգիտեմ ինչպէս սրտայոյզեմ միտքս, որ ինծի սխալ չհասկընաս։ Դուն գիտես, որ քեզի սրտանց կը համակրիմ ես, բայց... բայց պէտք է որ անգամ մը պարզ խօսիմ։

Սահակ — (Անհանգիստ) Ի՞նչ բան է ատիկա։

Սիրան — Ոչինչ։ Չվշտանաս. միայն ինծի կը թուի, որ մենք իզուր խօսք ենք տուած իրարու. մէջտեղը կարծես թիւրիմացութիւն մը կայ, տեսակ մը... Ես ու դուն, անշուշտ, չատ լաւ բարեկամներ ենք, չատ լաւ ընկերներ, անչա՛ւշտ. բայց... բայց ամուս-

նական կապ՝ ո՛չ։ Չե՞ս նեղանալու, չէ՞, որ այսպէս պարզ հետդ կը խօսիմ. ես պարտական եմ քեզի հետ պարզ ու անկեղծ ըլլալու. այնպէս չէ՞։ (Ինչ մը լուռ)։ Այնպէս չէ՞։

Սահակ — (Յուզած) Ինչպէ՞ս։

Սիրան — Ինծի կը հասկընա՞ս չէ՞։ (Ինչ մը լուռ)։ Այնպէս նկատէ, որ մեր մէջ ո՛չ այն հին խօսակցութիւնն է տեղի ունեցեր, ո՛չ ալ այս։ Այո՞։

Սահակ — Ինչպէս որ կը կամենաս։

Սիրան — Եւ մեր յարաբերութեան մէջ ոչինչ պէտք չէ փոխուի. ինչպէս առաջ։

Սահակ — Ինչպէս որ կը կամենաս։

Սիրան — Գիտե՞ս, բարեկամութեան համար բոլորովին ուրիշ տեսակ մարդիկ կը յարմարին իրարու, ամուսնութեան համար ուրիշ։ Ես ու դուն միշտ հրաշալի բարեկամներ ենք եղած իրարու. ու այդպէս ալ պէտք է որ մնանք։ Այնպէս չէ՞։

Սահակ — Ինչպէս որ կը կամենաս։

Սիրան — Շա՛տ, չա՛տ չնորհակալ եմ քեզմէ։ Ուսերէս ահագին բեռ մը գլորեցիր։ Շնորհակալ եմ քեզմէ չա՛տ, չա՛տ, անչա՛փ։ (Դուրս)։

ԺԴ

Սահակ — (Քարացած կեցած է աչքերը մեկ կէտի. վերջը կամաց կը մօտենայ սեղանին ու դանդաղ շարժումով մը կը վերցնէ գրքոյկը)։

Նուարդ — (Կը մտնէ, կը նայի շուրջը- լուրջ ու մտածկոտ կը մօտենայ տյուն) Սահա՛կ, քոյրս ինչո՞ւ այսպէս տղուր է այս քանի օրը. ի՞նչ կը կարծես։

Սահակ — (Բեկուած) Զգիտե՛մ։

Նուարդ — Իսկ ես գիտեմ. ես հիմա կը հասկընամ. մե՛նք ենք, մե՛նք, անոր ոտքերը կապողը. մենք բոլորս՝ եղբա՛յրս, քոյրս, ես։ (Խորհրդաւոր) Ես յիմա գիտեմ։

Սահակ — Այո՛... կապո՛ղը։ (Առանց անոր նայելու) Մնաս-բարո՛վ, Նուարդ։

Նուարդ — Կ՚երթա՞ս։ Բայց ո՛չ. ես չեմ ուզեր, որ մեզի համար ան դժբաղդ ըլլայ։ Չէ՞, Սահա՛կ, պէտք չէ՛, որ քոյրս դժբաղդ ըլլայ։

Մահակ — *Թող... թող ըլլայ... երջանիկ։* (Կը բղձկի ու զբաղպել ջանալով կ'ուզէ դուրս):

Նուաղդ — (Ցուզուած ու յամառ) *Չէ՛, չէ՛...*

Մահակ — *Թող ըլլայ երջանիկ։* (Տխուր ու խորունկ) *Մնա՛ս բարով, Նուա՛ղդ։* (Լալով կը բռնուէ աւնր ձեռքը ու դուրս):

Նուաղդ — (Ապշած ու յուզուած կը ցայի եսեւեն):

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Ա

Սիրան — (Կը հաւարէ շապիկները սեղանին վրայ ու կու տայ Աբրիճին, որ բերէ մը կը ճայի օձիքի բանուածին ու կը դնէ իւր վրայ)։ *Երե՛ք, չո՛րս, հի՛նգ, վե՛ց, սա ալ հօթը. երեք հատը անցած անգամ տարիր, եղաւ տասը. միայ երկուքը։* (Սեղանին ես խաւսելով, եւ իւր շուրջ մը առնելով՝ տեսակ մը զգուշած) *Ան ալ հաքը. չկըրցայ հասցընեմ. այս քանի մը օրը... այնպէս գործերս... գլուխս խառն էր չատ։ Ու ակար եմ քիչ մը։*

Գալուստ — (Փաթթելով շապիկները իր սեւ կապոցին մէջ) *Չէ, հիւանդանալը սովորդ է. քեզի պէս աղչիկը իրաւունք չունի հիւանդանալու։ Աստուած կը պահէ քեզի. ամբողջ տան մը նեցուկն ես դուն, պառաւ հայրիկիդ, ազբար-քուրիկիդ։ Աստուած է օրհներ քու ծնունդդ։*

Սիրան — (Բարկացած) *Հապա՛, օրհնո՛ր է։*

Բ

Մարիամ — (Ողմնցակի դրան մէջ) *Դեղս դեռ չեկա՞ւ, Սիրա՛ն։ Բարե՛ւ Գալուստ։*

Գալուստ — *Բարե՛ւ։ Նորէ՞ն դեղ։*

Սիրան — *Դեղագիրը տուի հայրիկին, որ չինել տայ։*

Մարիամ — (Ներս մտնելով) *Օ՜ֆ, ինչո՞ւ ես Թողեր անոնց վրայ, անոնց որ միայ տասը տարի սպասէ. հոգերնիո՞ն է։* (Նստելով, ինքնաւին) *Վա՛յ։*

Գալուստ — *Դիտե՛ս, այդչափ դեղը ազէկ չէ։*

Սիրան — (Նեղսիրտ) *Հազար անգամ ըսեր եմ՝ դեղ ու բժիշկ փոխելով բան չըլլար։*

Մ ա ր ի ա մ — (Դրգռած) *Է՛, ան մէկալ բժիշկը ոչինչ չէր հասկընար. ասկէ մէկը նորէն բանի մը նման է, կարծես։ Տեսնե՛նք։ Է՛ ճակտիս սեւ են գրեր, Գալո՛ւստ։*

Գ ա լ ո ւ ս տ — *Կ՛անցնի. ասկէ ալ կ՛անցնի։ Շուտով կը հաչտեցընենք քեզի մարդուդ հետ, կը հանգստանաս, կու գան ուրախ օրեր։*

Մ ա ր ի ա մ — *Ինծի համար ուրախ օրեր չկան։ Ուրախ օրերը Աստուած տուեր է ուրիշներուն, տուեր է ասոնց, տուեր է ամենուն, մոռցեր է միայն ինծի։ Դուն իմ մարդս չե՛ս ճանչնար. անիկա մա՛րդ չէ, գէշ է անիկա. ասոնման հաչտըւի անոր հետ։ Ա՛խ Աստծու կրակին գայ, որ ինծի ասկէ օրը հասցուց։*

Գ ա լ ո ւ ս տ — *Մի՛ ըսեր, մի՛ ըսեր։*

Մ ա ր ի ա մ — (Լացկոտ) *Է՛, երբ պիտի Աստուած մահ տայ ինծի, որ ազատուիմ։ Ե՛ս ալ, ասո՛նք ալ. ասս աղջի՛կն ալ։*

Մ ի ր ա ն — *Մա՛րիամ։*

Մ ա ր ի ա մ — *Գիտե՛մ, գիտե՛մ. ես բնե՛ւ եմ ամենուն վրայ, բա՛ւ և քեզի համար։ Ես վերջապէս ո՞վ կ՛ուզէ մինչև վերջը իր գլխուն ինծի նման անպէտք, տրանջող ու ցաւագար կնիկ մը ունենայ։ Կը մեռնի՛մ, կը մեռնիմ՝ կ՛ազատուի՛ք ամենքդ ալ։*

Գ ա լ ո ւ ս տ — (Ոտքի ելլելով ու պատրաստուելով իր կապոցը վերցնելու) *Աստուած իր սեղծածը երբեք չի մոռնար, Մարիա՛մ։ Աստղ ալ մի՛ նայիր աշխարհքին. ատիկա մե՛ղք է, մեծ մեղք։ Տե՛ս, ունես հայր, եղբայր, քոյրեր։*

Մ ա ր ի ա մ — (Ահռամարաճով) *Է՛, ո՞վ որու. ամեն մարդ իր համար է միայն. Հա՛, ասս աղջիկը, նայէ՛, ուրիշ բան է։ Եթէ քովս ասս աղջիկն ալ որ չըլլար՝ ալ չգիտեմ ի՛նչ կ՛ըլլար վիճակս։*

Մ ի ր ա ն — (Խոժոռ) *Հերի՛ք է, Մարիա՛մ, հերի՛ք է. վերջացո՛ւր։*

Գ

Ն ու ա ր դ — (Աջագ կը նետուի ներս՝ կուրծքն ու մաւմիները մեծ գոգնոցի մը մէջ. ձեռքին ատաղ մը։ Մտերիմ ժպիտով գլխով կ՛ընէ Գալուստին կը մօտենայ Սիրանին) *Այսչափը հերի՞ք է, երի՞նգը։*

Մ ի ր ա ն — (Կը նայի վայրիվերոյ) *Հերիք է։*

Գ ա լ ո ւ ս տ — (Ոտ նայուածքով կը նետուի աղջկան) *Տեսէ՛ք, տեսէ՛ք. ա՛յ, իմ անուշիկ սիրունիկս, այս ի՛նչ հիանալի տանտիկին ես դարձեր։ Տեսնե՛մ։* (Տեսակ մը ետաջը դառնալով) *Տեսնե՛մ։*

Մ ա ր ի ա մ — (Ժպտուն) *Հա՛, ասս երկու օրը ախորժակի է եկեր. ինկեր է Սիրանին եաւէն, թէ ձգէ՝ ես եմ եփելու, խո՛ղ սորվիմ։*

Գ ա լ ո ւ ս տ — (Բնիւեաճիով կը ծոյէ ալջկաճ մագերը) *Սորվէ՛, աղջիկս, սորվէ՛, ոսկի մազերդ սիրե՛մ։* (Երագկոտ հառաչանքով) *Իսկը, իսկը, մայրդ։ Աստուած ողորմի հոգուն։ Դէ՛, մնաք բարով։*

Մ ա ր ի ա մ — Ինծի նայէ՛, Գալուստ, չէ՞ր կրնար անգամ մը զեղարանը հանդըպիս։

Գ ա լ ո ւ ս տ — Հանդըպի՛մ։

Մ ա ր ի ա մ — Հոգիդ սիրես, կ'ըսես որ... (Միասին դուրս)։

Ն ո ւ ա ր դ — (Կեցած է լարուած, մէյ մը ձեռքի ամանին, մէյ մը fրոջը նայելով. բան մը ըսել կ'ուզէ բայց կը դժուարանայ)։ *Սիրա՛ն... Գալուստին ըսէիր, որ ինծի համար ալ բերէ այդ օձիքներէն. դըժուար բան մը չէ։ դուն ալ որ քիչ մը օգնես կարգին կը բանիմ։*

Մ ի ր ա ն — (Կը ծեփուի, շեշ կը նայի fրոջը, nr գլուխը կը կախէ ու կը խաղայ բրիճին հետ։ Քիչ լուռ։ Քայլ մը անոր մօտենալով) *Ըսէ՛, նայիմ, քեզի ի՞նչ է պատահեր։ Այդ փոքրիկ գլխուդ մէջ բաներ մը կը դառնան։*

Ն ո ւ ա ր դ — *Ոչի՛նչ, ի՞նչ պիտի ըլլայ, կ'ուզեմ բանիմ։*

Մ ի ր ա ն — Եւ ինչո՞ւ։

Ն ո ւ ա ր դ — *Դուն ինչո՞ւ կը բանիս։*

Մ ի ր ա ն — Ես... ես ուրի՛շ։ Հապա նկարեի՞դ։

Ն ո ւ ա ր դ — (Անհանգիստ) *Ան... ան... դեռ... առայժմ. չը գիտեմ, տեսնենք։* (Յանկարծ կտրուկ) *Է՛, ձգէ՛, ձգէ։ Մէկ կողմ դի՛ր հիմա ինծի. հիմա իմ մասին խօսելու ժամանակ չէ. հիմա...*

Մ ի ր ա ն — (Խիստ) *Հապա՞։*

Ն ո ւ ա ր դ — *Ո՛չ, Սիրա՛ն, ո՛չ։ չեմ ուզեր, կը լսե՞ս, չե՛մ ուզեր։ ալ մի մտածեր իմ մասին։ հոգ մի՛ ըներ, մի՛ մտածեր մեր մասին։ Որքան մեզի համար չարչարուեր ես, հերի՛ք է։ Չարչարուեր ես երեք չորս տարի մայրիկի հիւանդութեան ժամանակ։ Անկէ ետքն ալ չարչարուեր ես մեզի համար՝ Մարիամը, եղբայրս, ես։ Ալ հերիք է։ կ'ըսէիր, որ քեզի համար չես ապրած, որ քեզի ոչինչ չի յաջողիր, որ անբաղդ ես։ Սո՛ւտ է, գնա՛, տե՛ս։* (Ոգեւորուած) *Գնա՛, Սիրան, գնա՛. ոչինչ հոգդ չընես. ես կ'ընեմ բոլոր ձեռքէս եկածը։ Գնա՛ այդ քու սիրած լեռներդ, հո՛ն դիմացը, որ Օհաննէսն ալ այնչափ կը սիրէ։ Ա՛խ, ի՛նչ լաւ, անհման տղայ է Օհաննէսը։ ես կ'ուզեմ, որ դուն գոհ ըլլաս, բաղդաւոր։ ըլլաս ուրախ, երջանիկ։ Գնա՛ Սիրան, գնա՛։*

Սիրան — (Որ կը լսեր լուռ ու աչքերը լայն բացած, յանկարծ կ'ըսկսի բուռն ու անգուսպ ծիծաղ մը: Ու ծիծաղին մէջեն) *Հա՛. այդպէ՛ս... այդպէ՛ս ես վճռեր... Դէշ չէ՛... Դէշ չէ՛... Բաղդատոր, երջանի՛կ...*

Նուարդ — (Ապշած) *Ի՞նչ կայ այստեղ խնդալու։*

Սիրան — (Յանկարծ խնդուքը կտրելով ու նուամայական) *Դնա՛. դնա՛ դուն ինքդ. դնա՛ ու բրինձդ լըա՛։*

Նուարդ — *Բայց... ես...*

Ե

Սահակ — (Ներս մտնելով) *կարելի՞ է։*

Սիրան — (Սառն) *Վա՛յ։ Խնդրե՛մ։* (Հեգնոտ) *Այս անգամ արդէն ճի՛շդ ժամանակին եկար։*

Սահակ — *Ինչպէ՞ս։ Մի՛ վախնար՝ ես քեզի չեմ անհանգըստացնելու, վայրկեա՛ն մը միայն։ Ա՛յնպէս, փոքրիկ հաշիւ մը, որ պէտք է կարգադրեի։*

Նուարդ — (Կամաց մը կ'ելլէ դուրս)։

Զ

Սիրան — (Սեղանին վրայ բանի մը ոսկի դնելով) *Ասիկա առեր եմ քեզմէ զանազան ժամանակ։ Ուզեցի երէկ բերեմ, բայց որչափ այս ու այն կողմ ինկայ՝ չկրցայ ամբողջացընել։ Շատ չնորհակալ եմ։*

Սիրան — (Դառն ժպիտով) *կը հասկընա՛մ, իհարկէ՛։ Փոքրիկ հաշիւները պէտք է մաքրըւին։ Աղէ՛կ։ Ուրեմն... Ուրեմն վճռեր ես մաքրես ինծի հետ քու բոլոր հաշիւներդ։*

Սահակ — (Ուսերը ցնցելով) *վճռողը ես չէի. դուն վճռեցիր։*

Սիրան — *Բայց խոստացար՝ որ բարեկամ ենք մնալու։*

Սահակ — *Վրա՞ս կը խնդաս, Սիրա՛ն։* (Լուրջ) *Ես այս տան մէջ այլեւս գործ չունիմ։ Ես... ես... է՛...* (Դէպի դուռը)։

Սիրան — (Հրամայական) *Սահա՛կ։*

Սահակ — (Կանգ առնելով) *Ի՞նչ է։*

Սիրան — *Մօ՛տ եկուր։*

Սահակ — *Է՛, ի՞նչ հարկ կայ։ Թո՛ղ ինծի, Սիրա՛ն, թո՛ղ ինծի՝ երթամ։*

Սիրան — *Ո՛չ, չե՛ս երթար։*

Մ ա հ ա կ — կը տեսնե՞ս, ինչպէս քու ձեռքիդ մէջէն եմ դուս։ Ես վճռեր էի դամ, յանձնեմ ու հեռանամ։ Այս վայրկեանիս ալ չեմ ուզեր մնամ. ուելորդ տեղը իրարու սիրտ պիտի ծակենք։ Բայց... բայց դուն կ'ըսես՝ ո՛չ. և ահա՛ գամուեր եմ, չե՛մ կրնար երթալ, չեմ կրնար՝ իմ բոլոր կամքիս հակառակ։ Ա՛խ, Սիրա՛ն, դուն հետս չսա պէչ խաղ խաղացիր, չա՛տ։

Մ ի ր ա ն — Ինչո՞ւ։

Մ ա հ ա կ — Բայց ո՛չ, ո՛չ. ես քեզի չեմ մեղադրեր, ո՛չ։ Քեզի խելքէ հանեցին։

Մ ի ր ա ն — Ինծի՞։

Մ ա հ ա կ — Կը կարծես ես աչք չունի՞մ։ Ես առաջէրնէ ալ այդպէս բան մը զգացեր էի կարծես։ Անիկա առաջին օրէն իր օգերը փաթթեց քու չուրջդ. բայց ես վատահ էի քու վրադ, վատա՛հ, ինչպէս Աստծու վրայ։ Բայց ո՛չ, ո՛չ. ես քեզի չեմ մեղադրեր, երբեք։ Մեղաւորը ե՛ս եմ. դիտե՛մ. ես ո՞ւր, ան ուր. մանաւանդ մարդ, ձեռներէց, քա՜ց ապաշա՛յ. իսկ ե՞ս. խե՜ղճ-ոզորմելի սրբապրիչ մը. ես ինչ։

Մ ի ր ա ն — Ե՞ս քե՞զ։

Մ ա հ ա կ — Դիտեմ. դիտեմ որ քեզի արժանի չեմ։ Այլ ին-չո՞ւ ինծի յոյս տուիր, Սիրան. ինչո՞ւ ինծի քեզի կապեցիր. ինչո՞ւ թողուցիր, որ ես քու մէջդ մարմնացնեմ իմ ամբողջ կեանքս. ին-չո՞ւ, եթէ այսպէս մէկ հարուածով խորտակելու էիր բոլոր յոյսերս, մխիթարանքս, կեանքս, բաղդս։ Ո՛չ. դուն միայն իմ սէրս չէ, որ ոտքի տակ տուիր, այլ և ամբողջ հաւատս. ալ ո՛չ մէկ մարդու չեմ հաւատար ես, ալ ոչ մէկ բարութեան չեմ հաւատար ես, ալ չեմ հա-ւատար ոչ մէկ վեհութեան, ո՛չ մէկ անձնուիրութեան. բոլոր մար-դիկը նոյնն են, միայն իրենց հաճոյքը. բացառութիւն չկայ, առե-րեւոյթ է միայն։

Մ ի ր ա ն — Ըսէ՛, ըսէ՛, իրաւունք ունիս։ Վէ՞րջը։

Մ ա հ ա կ — Ո՛չ։ Սիրա՛ն, ես քեզի չէ՛ որ կը մեղադրեմ։ Ո՛չ։ երևի կեանքն է այսպէս։ Բայց եթէ հիմա սիրտս տեսնել կարողա-նայի՛ր։ Ա՛խ ինչո՞ւ եմ ապրելու. իմ կեանքս արդէն երբեք ոչ-մէկ խորհուրդ չէ ունեցեր. չէ հետաքրքրեր ոչ-ոքի. իմ սառն, իմ մի-այնակ կեանքս։ Դուն էիր միայն որ ջերմութիւն ու յոյս թափեցիր մէջս. ու թափ տուիր հոգիս, հաւատ ներշնչեցիր։ (Ցուսահատ) ին-չո՞ւ։ Ես թոյլ ոգայ եմ, դիտե՛մ. կեանքի համար անպէտ. դիտե՛մ. բայց ինչո՞ւ այսպէս երեսիս զարկիր իմ չնչին ու անպէտ ըլլալս. ես գոնէ պատրանքի մէջ էի, ես գոնէ կարեւորութիւն էի տուեր ին-ծի. չէ՞ որ դուն, քու հոգիդ ունեցող կին մըն էր ինծի կապուած։ Եթէ գիտնաս՝ ինչպէս հպարտ էի ես... (Աղջուցիկեն խեղդուելով) ես քեզի կը պաշտէի, ես քեզի աստուած էի չէ՞ր... (Յանկարծ բնդիա-

տելով). Է՛, չգիտե՛մ, ինչո՞ւ այս բոլորի մասին քեզի կը խօսիմ հիմա. ինչո՞ւ սոխակիկիր, որ խօսիմ. հաճո՞յք կ'ըզգաս մինչ, որ ինծի ա-հեղորդ անգամ մը կը նըւաստացընեմ առջեդ։ Թո՛ղ, թո՛ղ երթամ։ Եթէ անիկ եղի՛ր, ինչ կրնաս... կը ցանկամ՝ որ երջանիկ ըլլաս։ Ան... ան միւսը քեզի համար չէ։ Իսկ ինչ պատահի... որ քեզի օր մը ձչուառ ըգաս, ինչ պատահի, որ վշտակից մարդու մը սիրտ բանալու պէտք ունենաս, յիշէ՛ այն առն ինծի. յիշէ՛, որ կայ մէկը, որ միայն քու յիշատակովդ կ'ապրի, քու անուանովդ... Մի վախնար. ես անհանգիստ չեմ ըներ քեզի. ալ աչքիդ անգամ չեմ երեւար. հե-ռա՛ւ, որքան կարելի է հեռու...

Սիրան — (Որ մինչեւ ինիմա կը լսեր խոժոռ ու անշարժ, յան-կարծ զայրացկոտ, հատու շարժումով մը կ'ելլի ոտքի։) Ո՛չ. այս բոլորը վե՛ր է իմ ուժերէս, վե՛ր է, վեր... (Ու կանգ կ'առնէ բռունցքները սեղմած աչերը ամպարձ)։

Սահակ — (Վախցած) Ներէ՛, Սիրա՛ն, ինչ քեզի վշտացուցի։ Դո՛ւն էիր ինծի խօսիլ տըւողը։ (Ու ինչն ալ կը կենայ անոր դէմ շատ ու անշարժ, չիմանալով ինչ ընէ։)

Է

կը մտնէ Յակոբ եւ Հայրը

Յակոբ — (Գլխարկը հանելով) Ես մարդու վրայ, մէկ անգամ որ նայիմ հերի՛ք է։ Հը՛, հիմա կը տեսնէ՞ք. որ կ'ըսէ՛ի։

Հայրը — Դէ՛, ըսէ՛, հոգի հանեցիր. ի՞նչ է որ։

Յակոբ — Ոչի՛նչ, ի՞նչ պիտի ըլլայ։ Տեսած օրէս չսիրեցի ես այդ մարդը. այնպէս եակատ, ինքնավստահ, քիթը վե՛ր։ Եւ վերջն ալ այսպէս խայտառակ կերպով ինքզինքը ծախէ՛, այսպէս ափաշ-կարա մէկ-երկու հազարի համար։

Սահակ — Աա ո՞վ, է՛։

Յակոբ — Ո՞վ պիտի ըլլայ։ Ա՛յ, ձեր յարգած ու փառաբանած պարոն Ծալեանը։ Դուք դեռ ձեր գլխուն դրէ՛ք ու անոր տափակ փրազներովը հիացէ՛ք։

Հայրը — Ի՞նչ է եղեր որ Ծալեանը։

Յակոբ — Յովսէփեանին աղջիկը գիտե՞ս, էէ՞, սա՛ մեծ քի-թովը։ Դէ՛, աչերնիդ լոյս. չուտով հարսնեւոր էք դառնալու։ (Զատա-խինդ) Հը՞, ի՞նչ կ'ըսես, Սիրա՛ն։

Սիրան — (Հանգիստ) Ազէ՛կ. դիցո՛ւք թէ՝ չգիտեմ՝ ի՞նչ կայ հոս զարմանալու։

Հ ա յ ր ը — Շիտա՛կ կ՚ըսէ, ի՞նչ ես իրաւ անցեր. չնորհքով ազջիկ, վրան ալ հարստութիւն։

Յ ա կ ո բ — Շնորհքո՛վ, այո՛. մինչև անգամ չափազա՞նց չնորհքով. այնքա՛ն չնորհքով, որ իր չնորհները... Բայց, է՛ ի՞նչ ըլլաս. քի՞չ կան կոտոշուտոր ամուսիններ. գոնէ ասոր կոտոշները ոսկիէ պիտի ըլլան։

Ս իր ա ն — (Զգուանքով) Ամօ՛ր է։ Չէ՞ որ դուն էիր չարունակ Յովսէփեանի աղջիկը գովողը. հիմա՞ եղաւ դէշ։ Աւտր կ՚ըսէն՝ ազատ ու զգուելի բամբասանք։ (Դուրս)։

Յ ա կ ո բ — Բամբասա՞նք։ Հա՛, ատիկա էր պակաս, պիտի բամբասէի որևէ կարիէրիստ Ծալեան մը։

Հ ա յ ր ը — Գնա՛, գնա՛ բանիդ։ Ծանօթ ազայ է. ի՞նչ հարկ կայ գէշ-մարդ ըլլալու։ (Դուրս)։

Ը

Յ ա կ ո բ — Տեսա՞ր դուն ճարպիկ ժարդը։ Գործերը չտկեց, քաշուեցաւ մէկդի։ Աակէ ետքը պատրաստ դրամ. կի՛ր, խմէ ու քեֆդ նայէ։

Ս ա հ ա կ — (Տեսակ մր սրափելով) Կեցի՛ր. ուրեմն սա հաստա՛տ վերջացած բա՞ն է։

Յ ա կ ո բ — Հապա ի՞նչ։ Թէ՞ կը կարծես պիտի սպասէր, մինչև երթայիր ու քու բարեհաճութիւնդ յայտնէիր։

Ս ա հ ա կ — Ինչքա՜ն ուշինչ... ոչի՛նչ չի կարեր։ Եթէ այդպէս է, ես... (Յանկարծ կ՚բռնուտի)։

Յ ա կ ո բ — Դուն ի՞նչ։

Ս ա հ ա կ — Ես այս վայրկեանիս մեծ սխալ մը ըրի. մեծ, ապուշ սխալ մը։

Յ ա կ ո բ — Ի՞նչ սխալ։ (Անփոյթ) է՛, ի՞նչ ալ որ ըլլայ, հոգդ մի՛ ըներ. քու ամբո՛ղջ կեանքդ մեծ ապուշութիւն մըն է արդէն ինքնին. քա՛ւ ու ի՛մ, ու մեր նմաններուս։ Ճարպիկ պէտք է ըլլաս, ճարպի՛կ, այս աշխարհիս երեսին. ու միայն քու մտքին պէտք է մտածես։ Ինչացո՞ւ է խելքը, տապանդը, հասարակութեան ցաւերուն համար չարչըրուիլը, ուրիշներու մտքին մտածելը. ինչացո՞ւ է հոգևական բարձրութիւնը, նուրբ զգացումներ ունենալը։ Ահա՛, ա՛յ, գըրպաննիս ծակ կը պարունք քեզի հետ։

Ս ա հ ա կ — (Յոխ) Այո՛, այո՛։ Բայց... ուրիմն կ՚ըսես. ուրիմն։ (Յանկարծակի բուռն ուրախութիւնմբ) վա՜հ, այն ատեն, ըսէ է, ամեն բան կորած չէ դեռ, կորա՞ծ չէ դեռ։

Յ ա կ ո բ — Ա՛յ, յիմար, ինչո՞ւ կը խօսիս։ Ի՞նչը չէ կորած.

խո՞լբզ։ (Ցանկարծ ալաճջ դնելով) *Լսէ՛, լսէ՛. սա իր ձայնը չէ՞։* (Բարկացած) *Թո՛ւ. Ո՛չ. սա ասանկ չի վերջանար։ Ես քու ոտքդ այս առէնէն կը կարեմ։* (Դուրս կողմնակի աջեն)։

Ձակտի դռնէն կը մտնեն Նուարդն ու Օհաննէսը

Ն ո ւ ա ր դ — (Նգդումեբես) *Խնդրե՛մ, խնդրե՛մ։ Այո՛, ի՞նչպէս չէ։ Այս վայրկեանիս իմաց առա՛։* (Աջխուժ) *Իսկո՛յն, իսկո՛յն* (Դուրս կողմնակի ձախեն)։

Մ ա հ ա կ — (Ուրախ դեմք կ'երեսյ, ճաճղխաւոր ու ջերմ) *Բարե՛ ձեզի, պարո՛ն Ծալեան։ Սա ի՞նչ նորութիւններ, ի՞նչ անակընկալ։ կը չնորհաւորեմ բոլոր սրտովս, կը չնորհաւորեմ։*

Օ հ ա ն ն է ս — (Զարմանքով) *Ի՞նչ բան։*

Մ ա հ ա կ — *Ազէ՛կ, ազէ՛կ, ալ ի՞նչ հարկ կայ ծածկելու. ձեր գաղանիքը խլեր ենք սրդէն։ Արդէն գիտե՛նք որ նչանուած էք։*

Օ հ ա ն ն է ս — (Ապշած) *Ո՞վ ըսաւ ձեզի։*

Մ ա հ ա կ — «*Հաստատ ապրիլբէ*», «*հաստատ ապրիլբէ*», *ինչպէս որ կ'ըսենք մենք մեր լրագրական ոճով։*

Օ հ ա ն ն է ս — *Երեւի, օրիորդ Սիրանը...*

Մ ա հ ա կ — (Ծիծաղելով) *Դիցո՛ւք. դիցո՛ւք և օրիորդ Սիրանը։ Է՛, հիմա ի՞նչ կ'ըսէք. հիմա ալ կը ժխտէ՞ք։*

Օ հ ա ն ն է ս — (Վարաճ, տեսակ մը դժգոհ) *Քանի որ ձեզի յայտնողը ինքը օրիորդն է։*

Մ ա հ ա կ — *Ուրա՛խ եմ, հաւատացէ՛ք, բայց՛ր սրտովս ուրախ։* (Խլելով աճոր ձեռքը) *կը ցանկամ ձեզի բազդաւոր կեա՛նք, յաջողութիւն, երջանկութի՛ւն։*

Օ հ ա ն ն է ս — (Ինքնամփոփ) *Շնորհակա՛լ եմ։*

Մ ա հ ա կ — *Իսկ առայժմ ցտեսութի՛ւն։ Մնաք-բարով։* (Աջխուժով դուրս)։

Օ հ ա ն ն է ս — (Նախ զարմանքով կը նայի աճոր եսեւեն, վերջը կը գրնգէ ուսերը. գլխարկը կը նետէ սեղանին ու տեսակ մը ամնամքեր կը դառայ ճակատակ կողմի դրաճը)։

Մ ի ր ա ն — (Կը մտնէ ծանր, գուշաս ու գուռսպ. ձեռք կուտայ Օհաննեսին, ետեւ եղածին չափ նեռու մնկնելով ձեռքը)։

Հ ո ա ն ն է ս — Սա ի՞նչպէս փոխուեր է, օրիո՛րդ։ Ի՞նչ ունիք։

Մ իր ա ն — Ոչի՛նչ, ոչի՛նչ։ Շա՛տ ուրախ եմ, որ եկաք այսօր։ Շա՛տ չնորհակալ եմ. թէ չէ այս հոգեկան դրութիւնը անտանելի է։ Զարչարանք է, վերջը որչափ չուտ, այնքան աղէկ։

Հ ո ա ն ն է ս — Ի՞նչ է պատահեր։

Մ իր ա ն — Անցած օր դուք ինծի ինչ որ ըսիք, ինչ որ յայտնեցիք, այդ բոլորի համար ես ձեզի չնորհակալ եմ իմ բոլոր սրտովս. դուք ինծի մեծ, շա՛տ մեծ պատիւ ըրիք ատով. ես հպարտ եմ ուզակի, որ չահեր եմ ձեր համակրանքը։ Միայն... չե՛մ կրնար։ Ես վճռեր եմ երբեք չամուսնանամ։

Հ ո ա ն ն է ս — Եւ ինչո՞ւ։

Մ իր ա ն — Ամեն մարդ իր ճանբան ունի. ամեն մարդ իր խաչը և իր ճակատագիրը։ Եւ վերջապէս ի՞նչ է իմ արժէքս, ի՞նչ եմ տալու ես ձեզի. միայն խանգարեմ պիտի ձեր յաջողութիւնը. դուք ունիք անագին ծրագիրներ, որու համար պէտք է գրամ, պէտք է հոգ. ուրիշները ձեզի կը բերեն. ես ի՞նչու արգելք եմ ձեր ճանբային։ Ո՛չ։

Հ ո ա ն ն է ս — Բայց իմ փնտռածս ձեր փոխադարձ զգացումն է, ձեր մտերմութիւնը, ձեր կենակցութիւնը։

Մ իր ա ն — (Թուխը նակած) Ըսա երևոյթին ամեն մարդ այդ բաներուն իրաւունքը չունի։

Հ ո ա ն ն է ս — Ո՛չ, այդ հանելուկներէն ես բան չեմ հասկընար։ Ըսէ՛ք պարզապէս, ուզակի երեսիս. ըսէ՛ք, որ չէք սիրեր և կը վերջանայ։

Մ իր ա ն — (Լուռ ու յուզուած կը սեղմուի սեղանին).

Հ ո ա ն ն է ս — Ըսա՞ս. չըսա՞ս... (Կը բռնե ձեռքին)։

Մ իր ա ն — (Ակայաճեռով) Թողէ՛ք ձեռքս։

Հ ո ա ն ն է ս — Եթէ կ՚ուզես, որ թողնեմ՝ խօսէ՛ պարզ։

Մ իր ա ն — Ա՛խ...

Հ ո ա ն ն է ս — Եւ ուզածս բուռ մըն է միայն. կը սիրե՞ս թէ ոչ։

Մ իր ա ն — Քանի որ կ՚ըսաիպէք, քանի որ ուրիշ ելք չունիմ, քանի որ...

Հ ո ա ն ն է ս — (Ծիծաղկոտ ու յաղթական) Թողէ՛ք այդ քանիորներուը։ Կա՛րճ. այո՞, թէ ո՞չ։

Մ իր ա ն — (Վերջին մահառումով մը) Ո՛չ։

Հ ո ա ն ն է ս — (Խնդոյն կը ձգէ աղջկան ձեռքը եւ բոլորովին փոխուած) Ա՛խ. (Քայլ մը ետ. ինչ լուռ)։ Ա՛ս արդէն ուրիշ բան է. կը նեղէք. ես երեւի սուիլի իմ զգացումներովս կը տանջէի, քան աչքերովս։ Ինչպէս. ներեցէ՛ք, որ ձեզի ալ, ինծի ալ այս չիմար դրութեան մէջ դրի։ Իմ միակ արդարացումս ան է, որ իմ զգացումներս դէպի ձեզի շատ խորն են եղած, խոր ու կոյր։

Սիրան — Ո՛չ, ոչ, չեմ կրնար, չե՛մ ուզեր. ձեր դէմը կեղծիք չեմ ուզեր։ Սուտ ըսի. ես ձեզի միշտ սիրեր եմ, և աշխարհիս ամենէն երջանիկ կինը կը դառնայի, եթէ կարող ըլլայի կեանքս ձեզի կապելու։ Ա՛ռ կ'ըլլար իմ ճշմարիտ կեանքս։

Օհաննէս — Ուրի՞շն...

Սիրան — Երնէ՛կ անոնց, որոնք չատ ալ ու ձախ չեն նայիր, երբ ապրիլ կ'ուզեն. առաջ մարդիկն են ատոնք։ Դո՛ւք ալ ատոնցմէ էք, պարո՛ն Յովհաննէս. դուք ալ ուժի մարդ էք. գոցէք ձեր ճանբան հպարտ ու վատա՛հ։ Դուք պարտական չէք խնայելու. դուք պարտական էք միայն ապրելու, դուք պարտական էք միայն գործելու։

Օհաննէս — Է՛, ակո՛ւր աչխատինք, ապրինք միասին։

Սիրան — Ես չեմ կրնար ձեր ճանբովը։ Իմ ամբողջ կեանքս անցեր է ուրիշներու համար, ուրիշներու հոգերով. եւեթ մէջս արդէն քնութիւն է դարձեր։ Հիմա իմ անձնական ճանբաս բռնելու համար պէտք է հրեմ ուրիշները, պէտք է ոտքի տակ տամ անոնք, որոնց համար ապրեր եմ մինչև հիմա։

Օհաննէս — Ես խորապէս կը գնահատեմ քու այդ դիտատ ու նուրբ հոգիդ։ Ջուկիններուդ համար ալ բան մը կը մտածեմ. հոգ մի՛ ըներ։

Սիրան — Ո՛չ, ո՛չ այդ տեսակ բան մտքէ չանցընէք։ Ես այս բոլոր բեռը նետեմ ձեր ա՛ռջը. երբե՛ք, երբե՛ք. ես այդ թշնամութիւնը չեմ ըներ ձեզի. դուք ինձի ի՞նչ կը կարծէք։ Զգացէ՛ք ինձի՝ ձգեցէ՛ք մեր թշուառ կեանքը մեզի ու հեռացէ՛ք։

Օհաննէս — Բայց, Սիրա՛ն, քու սիրելդ գիտնալս ատոր ես ի՞նչպէս կրնամ հեռանալ։ Ա՛հա՛ կը յայտնեմ։ Այս վայրկեանէս դուն իմ կինս ես։

Սիրան— Ա՛խ, դուք ինձի չէք հասկընար, դուք ինձի չէք հասկընար։

Օհաննէս — Ի՞նչ կայ չհասկընալու. ըսէ՛, խօսէ՛. ես կը հարթեմ. կը հարթեմ ինչ ալ որ ըլլայ։

Սիրան — Ճակատագիրը չէք հարթեր։ Թողէ՛ք ինձի, հեռացէ՛ք, մոռացէ՛ք։

Օհաննէս — Դուն չգիտես, ինչ որ կը խօսին չրթունքներդ, Սիրա՛ն։ Դուն չես ըմբռներ, թէ ի՞նչ կը պահանջես ինձմէ։

Սիրան — (Սառց) Ես ձեզմէ ոչինչ չեմ պահանջեր։

Օհաննէս — Դուն անկարելին կը պահանջես և՛ քեզմէ, և՛ ինձմէ։

Սիրան — (Կոտրուած) Անկարելի՜ն. գուցէ՛, այո՛, անկարելին։ Ներեցէ՛ք ինձի։ Չէ՛, ալ չեմ պահանջեր, բայց կը խնդրեմ, կը պաղատիմ քեզի, Օհաննէ՛ս, կ'ապաչեմ քեզմէ այդ անկարելին։ կարէ՛, զատիմ քեզի, Օհաննէ՛ս, կ'ապաչեմ քեզմէ այդ անկարելին։ կարէ՛,

կարէ մեր մէջ ամէն կապ. ալ մի՛ պար, մի՛ խօսիր, մի՛ տեսնուիր ինծի հետ։ Ես այլեւս ուժ չունիմ քեզի դիմադրելու. ես քու ձեռքդ եմ. բայց պէտք չէ՛, լաւ չէ. իմ խիղճս չի տանիր։ Կ'ազատիմ քեզի. իմ սիրուս համար, եթէ իրաւ որ կը սիրես ինծի, եթէ քիչ մը յարգանք ունիս դէպի ինծի։

Օհաննէս — (Կեցած է լուռ ու խոժոռ)։

Սիրան — *Խօ՛սք տուր, խօ՛սք տուր ինծի։ Ըսէ՛, որ խօսք կու տաս։*

Օհաննէս — (Վիրաւորուած) *Բռնի կին առնել չեմ կրնար անշուչտ։*

Սիրան — (Մօտենալով) *Նեղէ՛ ինծի։*

Օհաննէս — *Բայց անմիտ բաներ են ըսածներդ ու անօգուտ։*

Սիրան — *Լռէ՛, ալ վերջացուր։ Դիտե՛մ, գիտեմ, որ քաղցր է որ կը թռչի ձեռքէս։*

Օհաննէս — *Ո՛չ, դուն չես սիրեր ինծի, Սիրա՛ն։*

Սիրան — (Դառն ժպիտով մը կը բռնկի, կը բարձրացրնէ տյուն ձեռքը, երկար ու աւետ կը սեղմէ շրթունքներուն. եւ իսկոյն ալ ետ կը հռետի եւ երեսը ածգիկ դարձնելով) *Դէ՛, ալ գնա՛, գնա՛...*

Օհաննէս — (Ենդալով) *Բայց ո՞ւր. երեխա՛յ ես դուն։ Աւով պատմութի՞ւն կը վերջանայ։*

Սիրան — (Աւանց գլուխը դարձնելու) *Գնա՛, գնա՛ կ'ըսեմ քեզի. ալ մի խօսիր։*

Օհաննէս — *Ազէ՛կ։ Հիմա ես կ'երթամ, Սիրա՛ն, կ'երթամ գիւղ։ Դուն հանգստացի՛ր. հանգստացո՛ւր չիլկրդ։ Եւ քիչ մըն ալ աւելի խոր նայէ կեանքին վրայ։ Մենք ուշխարհք չենք ևկած միայն ուրիշներուն համար. և ուրիշ անգամ ալ աշխարհ գալու չենք։ Եւ դուն որ այդպէս ամէնքը կը խղճաս՝ մտածէ՛ վերջապէս, որ ես ա՛լ մեզք եմ։*

Սիրան — (Ասոսիկ յուզուած) *Ա՜խ, դո՛ւն, դուն...*

Օհաննէս — *Սիրա՛ն, գիտցի՛ր, որ օր ու գիշեր անհամբեր քեզմէ լուրի եմ սպասելու։ Ինծի չատ չըսպասցընես. հոգիս չատ խոր է կապուած քեզի, Սիրա՛ն, քու կարծածէդ չատ աւելի։*

Սիրան — *Ա՜խ, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ...*

Օհաննէս — *Սպասեմ պիտի քու թեթեւ մէկ նշանիդ։ Յանուա՛ն, Սիրա՛ն։* (Արագ դուրս)։

Սիրան — (Անշարժ կեցած է արձանի նման, դէմքն ու բեւեռը գալարած)։

Ժ.Ա

Ճակտի դրան մօտ կ'երեւայ Տիրուհին, քիչ մը լուռ կը դիտէ եւ ծանր, յուշիկ քայլերով կը մօտենայ Սիրանին, առանց նկատուելու։

Տիրուհի — (Ցանկարծ) *Այո՛, ըսի՛ քեզի՝ ես չեմայիս, քար կը կտրես։*

Սիրան — (Կը ցրնցըւի. ու ետս դանդաղ շարժումով մը գլուխը կը դարձընէ ետեւ)։

Տիրուհի — *Քեզի էըսի՞. ես չեմայիս, քար կը կտրիս. ահա՛ այդպէս։*

Եւ երկուքն ալ խէթ ու չար նայուածքով մը երկար կը նային իրար. լուռ եւ յամառ։

ՃԱՆԱՊՈՒՆ ՎՐԱՅ

Թատերակ

Գրուած է Թիֆլիս 1904-ին

ՃԱՆԲՈՒՆ ՎՐԱՑ

Ծովեզերեայ ամարանոցի մը պարտէզը

Ձախ կողմը քարէ լայն սանդուղներ կը տանին դէպի քնակարանին պատշգամը, աջ կողմը ամբողջովին բաղնիներով ծածկըւած ցածլիկ պատ մը ու վանդակէ փոքրիկ դռնակ: Հետուն, ծառերուն մէջէն, կ'երեւայ ծովի ցոլուն հայելին: Դէպի առաջ ահագին ծառի մը բունին տակ ոզորէ թեթեւ նստարան մը, մարմար սեղան ու պարտէզի աթոռներ. ամբողջ յատակը փափուկ դեղին աւազ:

Պայծառ առտու է:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Ա

Մարգար — (Քիչ մը կոպիտ, հիչ մը միամիտ բարի մարդ մը: Կեցած է աւետարժ, աչքերը յառած գետին ու կը լսէ: Դլխուն ֆես. աճեթեւ բանկոնին վրայէն ամբողջ մարմինը ծածկող սպիտակ գոգնոցը հաւաքած, փաթթած է մէջքը, ձեռքը տուփ մը):

Վահրամ — (Երեսունեւ մօտիկ վայելչակազմ երիտասարդ մը հատու շարժումներով ու չարացած շեշտ մը խօսուածքին մէջ: Կը պատմէ հանգիստ)... *Իսկ իրենք սուսիկ-փուսիկ կը քաշուէին անտառը ու մութը կոխելուն պէս ձորին մէջէն ճանրաձին կը չարունակեին: Հիմա պահականոցին մէջը չէներ-չնորհք սարսափ է իսկոր. կ'ըսեն՝ գևեր են, անոնց հետ գլուխ կելլել չըլլար:* (Քմծիծաղ): *Գևե՞ր, իհա՛րկէ, արուեստն ու քաշուքթիւնը արդէն գև են ևղեր մի՛ չա: Իսկ թէ անոնց*

հետ գլուխ եկնել չըլլար, հա՛, սատո՛կը հաւատամ. գազափարով մը ոգեւորուած ու կեանքէն ձեռք վեր առած մարդկանց հետ գլուխ եկնել չըլլար:

Մ ա ր գ ա ր — Ի՞նչ ըսեմ, ազա՛. Աստուած յաջողէ. մխայր ղզուչ եղէք, զգո՛ւշ. կլակի հետ չեն խաղար:

Վ ա հ ր ա մ — Խաղալու ժամանակը անցեր է: Լ՛, ինչ և է, Յոզնե՛նք: (Շուրջն ու պատգամը դիտելով): Իսկ հո՞ս ինչ կայ չը կայ: Տո՞ւնն են:

Մ ա ր գ ա ր — (Անցարբեր ուսը գրնգելով): Լ՛հ:

Վ ա հ ր ա մ — Օրի՞որդն ինչ բանի է:

Մ ա ր գ ա ր — Ի՞նչ օրիորդ:

Վ ա հ ր ա մ — Նա՛, ձե՛րը: Քանի՞ օրիորդ կայ հոս:

Մ ա ր գ ա ր — Մարի՞ն: (Հեգնոտ): Հարո՛ւստ, սիրո՛ւն, ազա՛տ, ո՛չ ցաւ ունի, ո՛չ պակաս. անոր տիրոջը քեզի՞ն տուներ:

Վ ա հ ր ա մ — (Մտատոյզ): Շիտակ է: (Զղային շարժումով մը ծառեն տերեւ մը փրցնելով): Իսկ անդին հազարներ կան, որոնք ցաւ ալ ունին, պակաս ալ, ու քեռներո՛վ:

Մ ա ր գ ա ր — Լսե՛նք, չիտակը խօսելով, սառնց մէջ (Արեւամարհանքով տուրը մատնանիշ) նորէն ամենէն ազէկը անիկա է. քիչ մը յամառ, քիչ մը երես առած, բայց բարի սիրտ ունի: Անցած օր երկար-բարակ ինծի խօսեցուց. հարցուց մեր տան մասին, երկրի մասին, քու մասին:

Վ ա հ ր ա մ — (Խայտուած): Ի՞մ մասին: (Ծպտուհով) Եւ ի՞նչ:

Մ ա ր գ ա ր — Ես ի՞նչ գիտեմ, ծնո՛ղքդ, ազգությի՛ւնդ: Չէ՛, ես մարդը մէկ նայուածքով կը ճանչնամ. առջի օրը որ աս տունը առաք դրի՝ «աս աղջիկը բարի աղջիկ է» ըսի, և նայէ՛, խօսքս եկաւ:

Բ

Հ ա բ ե ն ց — (Բառասունի հակուող լայն ու բարձրահասակ մարդ մը, կնոր մօրուքով. ականջներեր Ֆեսին տակ: Կ'երեւայ սանդուղներուն վերեն: Ձեռքերը տափաչին գրպանը): Դէ՛ եկուր դուն Աբթին եղիր ու մի՛ բարկանար: Պէ՛ մարդ, ես ներսը նստեր եմ կ'ըսպասեմ ու կ'ըսպասեմ քեզի, դուն հոս ուրիշներուն հետ անուշիկ-անուշիկ խօսքեր ես բռնուեր:

Մ ա ր գ ա ր — (Թեմը շտապելով ձեռքի տուփը ականր կու տայ ու յարգալիր եռ կը բաշուի սանդուղին վրայ՝ ականր ճանբայ տալով): Դեռ նոր եկայ, հիմա: Ճանբան պատահեցայ քրոջս տունն.

Հ ա բ ե ն ց — (Սանդուղներեն իջնելով ծանր-ծանր ու միեւնոյն ժամանակ տուփը բանալով): Հա՛, սա քու ոգեպահանդ: Տիկինս անցած

օր բաներ մը կ'ըսէր։ (Ձակէին տակէն վաճրամը դիտելով)։ *Ոչի՛նչ։ կարիճ տղայ կ'երևնայ։* (Մարգարին) *Դուն գնա՛ բանիդ։*

Մ ա ր գ ա ր — (Դուրս)։

Հ ա բ ե ն ց — *Ի՞նչ է հրամանքիդ անունը։*

Վ ա հ ր ա մ — (Ժպտուն)։ *Անունս վահրամ է, վարդանեան։*

Հ ա բ ե ն ց — *Հա՞։ վարդանեան. ատ ի՞նչ չատ ալ վարդան կայ դուբանցիներուն մէջ։*

Վ ա հ ր ա մ — (Կտրուկ) *Իսկ ես որո՞ւ հետ պատիւ ունիմ խօսելու։*

Հ ա բ ե ն ց — (Զարմացմով)։ *Աչիկա կարծեմ գիտնաս պիտի։*

Վ ա հ ր ա մ — *Իզուր տեղը կը կարծէք։*

Հ ա բ ե ն ց — (Խոժոռ ու հատիկ-հատիկ։ *Ինծի Հարոնց Արթին կ'ըսեն Պօլսի հրապարակին վրայ. ատ ամբարանոցին ալ տէրը։*

Վ ա հ ր ա մ — *Այո՛. ձեր ամբարանոցը չատ սիրուն է, մանաւանդ դիրքը։ Ոսփորի այս սքանչելի կատրին վրայ։ Սև ծովի զով հովը չունչին գիմաց։*

Հ ա բ ե ն ց — (Շոյուած)։ *Իրաւացի՛ ես. լաւ ճաշակ ունիս, ինչպէս կը տեսնեմ։* (Այդ միջոցին բացած է արդէն ձեռի տուփը, հատ մը հատացա կը հանէ մէջէն, կը դնէ շրթունքին, տուփը անդամին ու կը վերցնէ լուցկին)։ *Հա՛, ի՞նչ պիտի հարցնէի. երևի, գո՛ւն...*

Վ ա հ ր ա մ — (Ծիծաղկոտ)։ *Ես «գուն» չեմ, նախ՛քան։*

Հ ա բ ե ն ց — (Զարմացմեն աճեարժ կը մնայ վառած լուցկին ձեռքը)։

Վ ա հ ր ա մ — «*Դո՛ւք*»։

Հ ա բ ե ն ց — (Ուռնցց դիրքն ու ձայնը փոխելու)։ *Ես կ'ուզէի հարցընեմ. դու... ուք, երևի կը ճանչնաք հոսանդի քամիանն. ի՞նչ տեսակ մարդիկ են։*

Վ ա հ ր ա մ — *Ինչո՞ւ կը կարծէք, որ ես ճանչնամ պիտի քամիանն։*

Հ ա բ ե ն ց — *Է՛, անանկ։ Դուբանցի տղայ, հոս-հոն կը մտնէք, կ'ելլէք, վերջապէս երիտասարդ ալ էք։ Երիտասարդ մարդը ատ տեսակ բաներով կ'ոգևորուի, յեղափոխութիւն կ'ուզէ, ազատ ըլլալ կ'ուզէ, իր պարլամնտը կ'ուզէ, ալ ի՛նչ պիտնամ։*

Վ ա հ ր ա մ — *Է՛, աչխարհքիս ո՞ր ծայրը ապուշներ չը կան։*

Հ ա բ ե ն ց — *Մ՛չ, ապրի՛ս։ Իսկոյն կ'երևնայ որ հասուն տղայ ես։ Շիտա՛կ է, ո՞րտեղ ապուշներ չը կան։ Բայց երանի թէ միայն ես։ Ապուշ ըլլային, մերիններըը աւազակ ալ են, անիրաւ, լիրբ աւազակ ալ ըլլային, մերիններըը աւազակ ալ են, անիրաւ, լիրբ աւա-*

զակներ, աւազակներուն սմննէն դէչը· աւազակը գոնէ դիշերը, մութին մէջէն, ծածուկ անկիւնէ մը կը յարձակի վրադ· իսկ աս սրիկաները օրը ցերեկով քու սեփական բնակարանիդ մէջը քեզի կը կոխեն: Ու դուն դեռ սուս ու փուս նստիս պիտի հետևրնին խօսիս, ճա՞րդ ինչ· կատա՛ծ ոարդիկ:

Վ ա հ ր ա մ — Մինչէ ձեզի նեղո՞ր են:

Հ ա բ ե ն ց — Նեղո՞ր են, մի՞: Հապա Մարգարը քեզի չէ՞ ըսեր: երկու տարիւր յիսուն հատիկ դևլին ոսկիս առին ձեռքէս: Ալ խընդիրք, համոզել, սպառնալիք, ոչինչ չօգնեց: «Դուք գիտէք, մեր ձեռքէն ոչինչ չի գար· մեզի այսպէս է հրամայուած»: Վրանին ալ որ նայիս, լորտ կը նմանին, հագուած սքուած:

Վ ա հ ր ա մ — (Կատակով): Է՛, ինչ ջնաս ունի, պարո՛ն Հարենց, ձեզի համար երկու տարիւր յիսուն ոսկիին խօսքը կ՚ըլլայ:

Հ ա բ ե ն ց — Հա՛, աղբար, բայց մարդուս ճաթիլը կու գայ· սո՞նկ խլէզին մէկը գայ անցնի դիմացդ, խնդայ, խօսի ու առանց մատը մատին դպցնելու, գրպանէդ ուզածը առնէ ու երթայ: Եւ վերջապէս երկու տարիւր յիսուն ոսկին ալ ծովը նետուելիք փարա չէ: Ազէ՛կ, առնելիքնին ըլլայ· չե՛ն մարսեր· ինծի Հարենց Աբթին կ՚ըսեն, չեմ ձգեր, որ մարսեն, ես անոնց քիթէն բերնէն կը հանեմ: (Ու բարկացած կր վառէ սիկառը):

Մ ա ր ի — (Նուրբ ու հանգիստ աղջիկ մր, հաճ-հաճերիկու տարեկան. դեմքն ու խօսուածքը երազուն: Կու գայ ծովուն կողմէն ծառերուն մէջէն: Հագուստը թեթեւ ու ներմակ. ներմակ գոց հովացոց մրն ալ դրած է վիզը, ու թեւերն ալ երկու կողմէն ազոր վրայ): Վա՛յ, պարո՛ն վահրամ:

Վ ա հ ր ա մ — Բարե՛ ձեզ, օրիո՛րդ Հարենց:

Մ ա ր ի — Ո՞ւր էք, չէք երեւար այս քանի ժամանակ է· երեւի չախորժեցաք մեր կողմերէն:

Հ ա բ ե ն ց — (Ձիաճ ու զգուռւած): Իսկ դուն ինչդ ուր ես· մէջառղ չը կաս· ժամ մըն է մայրդ քեզի կը հարցընէ· ի հարկէ նորէն ծովուն ափը: Հոգիդ սիրե՛ս, սի՞րտդ ալ չի նեզտնար առանկ ժամերով աւազին վրայ· նայէ՛, հա՛, նայէ՛· ինչ կայ՝ չդիտեմ որ: Ա՛ս ծով, ա՛ս ջուր, ա՛ս ալ աւազ· չը՛ուի չը՛ուի, չը՛ուի· քունդ ալ չի տանիր· չիտակը հինգ վայրկեան որ հոն նստիմ, իմ քունս կու գայ:

Մ ա ր ի — Դուն ուրիշ· դուն ուր ալ որ նստիս, հինգ վայրկեանէն քունդ կու գայ:

Հ ա ր ե ն ց — (Սեղանին սիկառի տուփը վերցրնելով)։ Գալէ՛, քալէ՛, պարապ մի՛ խօսիք. գնա՛ նայէ՛ մայրդ ի՞նչ կ՚ընէ։ (Սանդուղի ոտիկն կանգ կ՚առնէ, կասկածով կը նայի Վահրամին ու տեսակ մը մտերմօրէն)։ Դիտէ՞ք ի՞նչ կայ. ի՞նչ որ խօսեցանք, ազէկ է, որ մեր մէջը մնայ. բերնէ բերան խօսքը կը մնծնայ. կը հասկընա՞ք, չէ՞. իսկ ատ անպիտանները բոլորը կապը կտրած մարդիկ են, ամեն բան կրնայ ապատուիր։ (Միծաղկոս)։ Ինչ որ խօսեցանք, սա՞նկ մեր մէջը, հա՞։

Վ ա հ ր ա մ — (Զգուաճոով)։ Անհոգ եղէք, պարո՛ն։ Ո՞վ է այս աստիճանի ողորմելի մարդոց մասին բերան բացողը։

Հ ա ր ե ն ց — (Զրմբռնելով)։ Ինչպէ՞ս... (Ցանկարծ, աճուրդի կապելով) Այո՛, այո՛, չա՛տ ապրիս, չնորհակալ եմ։ Երթա՛ս բարով, ատանկ երբեմն-երբեմն այցելեցէ՛ք նորէն մեր Մարգարը. ես չատ գոհ եմ իրմէն, աս երեք տարի է մեր ծառայութեանն է։ (Սանդուղեւրով կը բարձրանայ ու կը մտնի տուն)։

Բ

Մ ա ր ի — (Լուրջ ու բռունցքը սեղմած)։ Եղբայրս վիրաւորե՞ց ձեզի։ Պէտք չէ՛ որ վիրաւորուիք, պարո՛ն Վահրամ։

Վ ա հ ր ա մ — Բայց ամենևի՛ն, օրիո՛րդ, մտքէս չանցնիր։

Մ ա ր ի — (Սրտանց)։ Այո՛, ատանկ. չատ ուրա՛խ եմ։ (Եւ յանկարծ խօսքը փոխելով)։ Է՛, ի՞նչպէս էք. գո՞հ էք, մեր Պոլսէն։

Վ ա հ ր ա մ — (Ուսը կը ցնցե)։ Ի՞նչ ըսեմ. ինծի քիչ կը հետաքրքրէ։

Մ ա ր ի — Ի հարկէ՛, դուք այնքան տեղ էք եղեր. այնքան տեղ էք տեսեր։

Վ ա հ ր ա մ — Ա՛խ, ո՛չ այդ պատճառով։

Մ ա ր ի — Հապա՞։

Վ ա հ հ ա մ — Բայց ներեցէ՛ք. օրիո՛րդ, ձեզի չը խանգարեմ, կարծեմ ըսին, որ ձեր մայրը ձեզի կ՚ըսպասէ։

Մ ա ր ի — Ոչի՛նչ. փոյթ չէ։

Վ ա հ ր ա մ — (Ցանկարծ)։ Ուրեմն դուք այդպէս կը սիրէք ծովը։

Մ ա ր ի — (Զարմանք ու ժպտուն)։ Այո՛. ինչո՞ւ հարցուցիք. և չա՛տ։ Ես չատ կը սիրեմ թէ՛ իր հանգիստ ժամանակը, իր օրօրքը, թէ՛ իր ալեկոծութիւնը, իր խռովքը. բայց մանաւա՛նդ այդ ալեկոծութիւնը. մարդ կարծես կը փոխուի, կը յափշտակուի, կը մոռնայ աշխարհքն ալ, ինքզինքն ալ, իր տխրութիւնը, իր վիշտը։

Վ ա հ ր ա մ — (Կը խնդայ թեթեւ)։

Մ ա ր ի — (Ստորւած)։ Ինչո՞ւ կը խնդաք։

Վ ա հ ր ա մ — Ներեցէ՛ք, օրիո՛րդ, բայց այնպէս տարօրինակ է այդ բառերը ձեր շրթունքին. տխրութի՛ւն, վի՛շտ։

Մ ա ր ի — Դուք անցած անգամ ալ ատոր նման բան մը ըսիք ինծի. և դիտե՞ք, ինծի չատ պայծոյթ պատճառեց։

Վ ա հ ր ա մ — (Լուրջ)։ Իրա՞ւ։ Ներեցէ՛ք, կը ցաւիմ։ Ես... ես միայն ըսել կ'ուզէի... ձեր չուրջը գեղեցկութիւն, առատութիւն, դարդարանք ու զբօսանք. դուք այդպէս գեղեցիկ, այդպէս երիտասարդ. ձեզի համար ի՛նչ վիշտ, ի՛նչ տխրութիւն. ատոնք բառեր են, որոնց իմաստը դուք չգիտէք բարեբաղդաբար։ Բնութիւնն ու քաղաքակրթութիւնը ձեր վրան առատ թափեր է ամեն պարգեւ. դուք վայելքի ու զուարթութեան համար էք ծնուած։

Մ ա ր ի — (Հեգնոտ)։ Իրա՞ւ։ Շատ չնորհակալ եմ։

Վ ա հ ր ա մ — (Ցանկարծ)։ Ձէ՞, չէ՞, այդպէս չէ՞։

Մ ա ր ի — (Սառն)։ Թողէ՛ք խնդրեմ։ Ուրիշ բան խօսինք։

Վ ա հ ր ա մ — (Ջերմ)։ Դժգո՛հ էք. դո՛ւք ալ էք դժգոհ։ Ձէ՞. ըսէ՛ք, ըսէ՛ք պարզ. այս բոլոր փարթամութիւնը ձեզի ձանձրոյթ կը պատճառէ ու բոլոր այս միջավայրը ձեր սրտին ոչինչ չի խօսիր. չէ՞, ըսէ՛ք։ Ա՛հ, ես գիտէի, ես զգացի. ձեզի հետ առաջին խօսելուս զգացի։

Մ ա ր ի — Զգացի՞ք. ինչը՞։

Վ ա հ ր ա մ — Որ դուք ալ դժբաղդ մըն էք։

Մ ա ր ի — Եւ ուրա՛խ էք՝ ինչպէս կը տեսնեմ։

Վ ա հ ր ա մ — Այո՛. ինչո՛ւ ծածկեմ։

Մ ա ր ի — Իսկ ես չէի երեւակայեր, որ դուք այդպէս չար էք։

Վ ա հ ր ա մ Ձա՞ր։ Մի՞թէ ասիկա չարութիւն է։ Թերեւս. չգիտեմ։ Յամենայն դէպս այսքանը ճիշդ է, որ մանաւանդ պատճառ մը չունիմ բարի ըլլալու։

Մ ա ր ի — Ինչո՞ւ։

Ն ա հ ր ա մ — Է՛, թողնենք։

Մ ա ր ի — (Սրտացի)։ Ո՛չ. ըսէ՛ք. պէ՛տք է որ ըսէք։

Վ ա հ ր ա մ — Ի՞նչ ըսեմ ձեզի։ Ինչի՞ նման է ինծի պէս մարդուն կեանքը։ Ուրիշներու մանկութիւնը գոնէ ունի իր երջանիկ երազները. ես միայն պանդխտութիւն տեսայ ու կարիք։ Ամբողջ պատանութիւնս անվերջ ճանկըռտո՛ւք մը եղաւ ու անվերջ թափառո՛ւմ պատառ մը հացի համար ու պատառ մը ուտման։ Եւ հիմա ա՛ս ի՛նչ երիտասարդութիւն է. կատղած չան զայրոյթը սրտիդ մէջ, ամբողջ մարթըւոց ժողովուրդի մը մորմոքը կոկորդիդ, ակռաներուդ առակ վրէժը խածած, իսկ չուրջդ հլու, խոնարհ, լքուած ու վախ. մարդ

չը կայ. առնականութիւն չը կայ, հոգիի չարժում չը կայ, ազատ վերերու խոյանքը չը կայ։

Մ ա ր ի — (Նազկոս)։ Այո՛, ազատ վերերու խոյա՞նքը...

Վ ա հ ր ա մ — Կայ միայն բնազդական ապուշ ցանկութիւն մը տակալու. թող խլեն, թող խեղդեն, թող գլխուն տան, թող առնանգեն, ի՛նչ կրնանք ընել. միայն թէ կերպ մը դիմանանք. քարշ տանք մեր գոյութիւնը։ (Բարկացած)։ Ինչո՞ւ։ ինչի՞ է պէտք այդ տհաճ գոյութիւնը։ Աթիկա մա՛հ է, մահ, ամենատհակալի մահը. հոգիին մահն է աթիկա։ Կծկուեր է մեր մէջ հոգին ո՛չ ցանկալ գիտէ, ո՛չ ձգտում ունի իր ցանկացածին պէս ապրելու, ո՛չ կռիւ գիտէ, ո՛չ դիմադրութիւն, ո՛չ նոյնիսկ մեռնիլ գիտէ այդ հոգին։

Մ ա ր ի — (Նազկոս)։ Այո՛, կծկուեր է մեր մէջ հոգին. մենք ո՛չ ցանկալ գիտենք, ո՛չ ալ մեր ուզածին պէս ապրիլ...

Վ ա հ ր ա մ — (Ցանկարծ կ'ըսպափի ու զարմանքով տեսը կը ցայի ացոր)։

Մ ա ր ի — Այո՛, մենք մեռնիլ անգամ չգիտենք։

Վ ա հ ր ա մ — Ուրեմն դո՞ւք ալ համաձայն էք, օրիո՛րդ։

Մ ա ր ի — (Միտս Նազկոս) Ա՛, այո՛, այո՛, բացարձակապէս։

Վ ա հ ր ա մ — Ներեցէ՛ք, ձեզի ախորժուցի։ Իսկ ես, օրիո՛րդ, չէի ուզեր ձեր յիշողութիւններուն մէջ գէշ քաչմարի մը տպաւորութիւնը թողնեմ։ Եկէ՛ք քիչ մըն ալ ուրիշ բան խօսինք. աւելի ուրախ բան մը, աւելի յարմար այս սքանչելի չրջապատին։ Տեսէ՛ք, ի՛նչ գեղեցիկ է այս օդը, այս ծովը, այս առաուն։

Մ ա ր ի — (Ծաւր ու մեղմ)։ Այո՛. այս օ՛դը, այս ծո՛վը, այս առաուն։ (Ցանկարծ յափշտակուած ու հատու)։ Այո՛, առաո՛ւ։

Վ ա հ ր ա մ — Այսի՞նքն, օրիո՛րդ...

Մ ա ր ի — Տուէ՛ք ձեր ձեռքը։ (Իարու ձեռ բռնած)։ Ուրեմն առաո՞ւ։

Վ ա հ ր ա մ — Ձեզի ի՞նչպէս հասկնամ, օրիո՛րդ։

Մ ա ր ի — (Հնչուն ծիծաղով մը)։ Ինչպէս որ կը կամենաք։ (Աշխուժ կը խլէ ձեռքը. կը վազէ սանդուղներէն վեր ու սանդուղի գլխեն)։ Ինչպէս որ ձեզի համար աւելի ախորժելի է։ (Կը մտնէ տուն)։

2

Վ ա հ ր ա մ — (Կեցած է արձանի պէս, աչքերը տեսը ցայի կեսլց, աճապարժ, աճապարանքով)։

Մ ա ր գ ա ր — (Բիչ մը ետը կը մտնէ ցեռս. զարմացած կը ցայի ացոր ու մօտենալով)։ Ի՞նչ բանի կս հոս մինակ։

Վ ա հ ր ա մ — (Ցնցրելով)։ Դո՞ւն ես։

Մ ա ր գ ա ր — Ի՞նչ կայ հոն։ Դևե՞ր ես տեսեր, թէ՞ փերիներ։ Շատո՛նց է, որ էֆէնդին գացեր է։ Ան ի՛նչ կ՚ըսէր քեզի։ Բալէ՛ երթանք, ներսը կը խօսինք. ձեռքս գործ ունիմ։

Վ ա հ ր ա մ — (Կտրուկ)։ Ո՛չ. ես դառնալու եմ քաղաք։

Մ ա ր գ ա ր — Վա՜յ. չէ՞ որ հիմա եկար քաղքէն։

Վ ա հ ր ա մ — Մէ՛կ է։ Չէ՛, ես հոս մնալ չեմ կրնար։ Հոս ձեր օդը, ջուրը, չդիտե՛մ. հոս ամեն բան ուրիշ տեսակ է։ Արդէն գալս ալ ուշլորդ էր. ինչպէս եղաւ, չի կրցայ դիմադրել, ելայ եկայ։

Մ ա ր գ ա ր — Ինչե՛ր կը խօսի այս խելառը։ Ի՞նչ է պատահեր քեզի։

Վ ա հ ր ա մ — Խելա՞ռ... (Հեգնոտ)։ Երևի՛, թէ չէ... է՛, իհարկէ խելառութիւն։ (Ցանկարծ աչխուժ ու զուարթ, պինդ-պինդ զարնելով Մուրգարի ուսին)։ Մնաս-բարով, մնաս-բարով։ (Դեպի պարտեզին դուռը)։

Մ ա ր գ ա ր — Վա՜յ. իրա՛ւ որ խենթ է։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Ընդարձակ ճաշի սեղանակ մը:

Ձակատը դուռ, որ լայն ու պայծառ լուսաւորուած միջանցքը կը տանի: Աջ կողմը քարձր ու խոր պատուհաններ: Ձախ պատը գրեթէ ամբողջապէս բռնած է ընկուզէ ահագին ճաշի դաբանը: Սեղանակին մէջտեղը մեծ ու ճաշակաւոր սեղան. աթոռները նոյնպէս մեծ-մեծ ու կաշի: Սեղանին վրայ կախուած է խոշոր չվառած լամպ մը: Թանձր վարագոյրներ դրան ու պատուհաններուն: Վառ է միայն մոմ մը դարանին առջեւը:

Ա

(Տեսարանի սկիզբին միջանցքով կ'երթան ու կու գան տեղեակ, ծառայ մը, երկու սպասուհի, ափսեներով, խմիչներով, ամաններով):

Մ ա ր ի — (Բաց պատուհանին դէմ փուռած է օրան արուբին ու դէմը հովուն տուած կ'օրօրուի՝ ձեռքերը դրած գլխուն տակը):

Ն ե կ տ ա ր — (Տեսոս կին մը ներկապատ, զուգուած ու փարթամ կ'երեւայ սեմին վրայ): *Ձե՞ս լսեր. քեզի՛ կ'ըսեմ, ելի՛ր:*

Մ ա ր ի — (Անփոյթ օրուելով): *Ըսէ՝ տունը չեմ:*

Ն ե կ տ ա ր — *Տունը չե՞ս, կէս-գիշերի՞ն:*

Մ ա ր ի — *Ըսէ՝ հիւանդ եմ:*

Ն ի կ տ ա ր — *Է՛, ո՞վ պիտի խաբես:*

Մ ա ր ի — (Համբերութենէ ելած): *Ըսէ՝ մեռեր եմ:*

Ն ե կ տ ա ր — *Քու խելքի՛դ է եկեր: Մամաս՝ անգամ մը ըրած՝ Տիկին Միլքոնը, Թունուզները, Արալեաններուն. ամօթ չէ՞. ես ի՞նչ ըսեմ անոնց:*

Մ ա ր թ — (Դէզ ու ուռած, կը դարձնցնէ օրուկը ու կը դառնայ հարսնիճ)։ *Կ'ըսես որ մեռե՛ր եմ, հասկցա՞ր, մեռե՛ր եմ, մեռե՛ր եմ ես անոնց համար։ Ո՞վ են աստնք, Թուխուզ-Մուխուզ, ես չեմ ճանչնար, չեմ ուզեր ճանչնալ։*

Ն ե կ տ ա ր — *Սբսոր նայեցէ՛ք. մարգու ալ որ չի հաւնիր. ինչի՞դ վրայ ես աստանկ քիթդ վեր քաչեր։ Հարևնցին աղջի՛կը, մե՛ծ բան. ուրիչներուն աչքերը կապեցէ՛ք. եաևնիս պարտքով լեցուն. աստր վրա՞յ ես հպարտացեր։*

Մ ա ր թ — (Վեր բռչելով ցնսած տեղը)։ *Ինչե՞ր կը խօսիս, ա՛յ կնիկ։ Հիւր է եկեր, գնա՛ ներս, նստէ՛, խօսէ՛. աստանկ նշանաւոր մարդիկ, գնա՛, ինծմէ ի՞նչ կ'ուզես։ Ես չե՛մ ուզեր, չէ՛, ես կ'աստացեր եմ աս բոլորէն. մինչև հոս, կտիորդս է հասեր ձեր ու անոնց ըսածն ու խօսածը։*

Բ

Հ ա ր ե ն ց — (Ներս մտնելով) *Նորէն կը կըզբաի՞ք հարս ու տալ։*

Ն ե կ տ ա ր — (Վրայ փրթելով)։ *Հա՛. կը կըզբաի՛նք, քի՞ֆդ եկաւ. քեզի ալ խօսելու բան է պէտք։*

Հ ա ր ե ն ց — *Չէ՛, չէ՛, ես քեզի մեղայ, ըսողը ես չէի. բարի յաջողո՛ւմ. կըզւեցէ՛ք, կըզւեցէ՛ք։* (Կ'ուզե դուրս)։

Ն ե կ տ ա ր — *Կեցի՛ր։ կեցի՛ր ու լսէ՛. նայէ՛ քուրիկդ ինչե՛ր կ'ըսէ. նայէ՛, ի՞նչ նորութիւններ, բերանդ բաց մնայ։*

Հ ա ր ե ն ց — *Հապա՛ նայինք։*

Մ ա ր թ — (Ցոցնած ու ադերսող)։ *Է՛, Թոզէք ինծի հանգիստ։ Ի՞նչ կ'ուզէք ինծմէ. Թոզէ՛ք ինծի իմ մաքիս հետ։*

Հ ա ր ե ն ց — *Մաքինդ ի՞նչ է որ։*

Մ ա ր թ — *Քեզի՞ ինչ. որ ըսեմ՝ ի՞նչ պիտի հասկնաս։*

Գ

Մ ա յ ր ը — (Գեր ու տկար, գեղեցկութեան մնացորդ. ծապելով կը մտնէ սենեակը)։ *Շո՛ւտ, չո՛ւտ, ներս. հիւրերը բոլորովին մինակ են մնացեր։*

Ն ե կ տ ա ր — (Ծաղրելով իր ամուսինը)։ *Ա՛ռ քեզի։ Հասկցա՞ր հիմա։ Աս մէ՛կ։* (Ձայն տալով տալոջը)։ *Ը՜հ, վերի արաին ցորենը։* (Դուրս)։

Գ

Մ ա յ ր ը — Ի՞նչ կայ նորէն։ Ա՛ս լամպը ինչո՞ւ չեն վառեր։

Մ ա ր ի — Ես ըսի՛ չվառեն։

Մ ա յ ր ը — Ինչո՞ւ։

Մ ա ր ի — Առանկ աւելի ազկ է, աւելի առանձին. ձգէ՛։

Հ ա ր ե ն ց — Կ՚երևնայ, չուտով ճղնաւոր ես դառնալու։

Մ ա ր ի — Ի՞նչ կայ որ։ Ա՛ս անհամ-անհոտ կեանքէն հազար անգամ աւելի ազկ չէ՞։

Հ ա ր ե ն ց — Անհամ-անհոտը դուն ինքդ ես, ի՛նքդ, կեանքը ինչո՞ւ կը մեղադրես։ Ո՛չ քաղաքավարութիւն գիտես, ո՛չ մարդավարի ըսել-խօսիլ, ո՛չ չուրջդ եղող երիտասարդներուն հետ վարուիլ։ Ի՞նչ բանի վրայ կը տրտնջաս։ Փա՜ռք Աստծու, ի՞նչդ ենք պակաս ըրեր։

Մ ա յ ր ը — Ձգէ՛, ձգէ՛ ազջիկը հանգիստ. գնա՛ ներս։

Հ ա ր ե ն ց — Ձգիտե՜մ։ Քանի կ՚երթայ այս ազջիկը տարօրինակ կը դառնայ։ Իսկ ատ տատ-տատանըմինդ օրը բոլորովին է անհամ-ցեր։ Շատ հո՛գս։ (Դուրս)։

Ե

Մ ա յ ր ը — Լաւ քնութիւն չէ, ազջի՛կս, չիտակ կ՚ըսէ։ Հայրդ ալ ճիշդ քեզի պէս էր, անո՛, ի՞նչ տարաբաղխութիւն։ Ըսէ՛, խօսէ՛, կո՛ր, խմէ՛, քեֆդ նայէ՛։ Աչխարհքը աս է որ կայ։ Ալ ուրիչ ի՞նչ կ՚ուզես, ի՞նչ կը մտմտաս, ի՞նչ կը փնտռես.

Մ ա ր ի — Իրա՞ւ։ Աչխարհքը ա՞ս է, որ կայ. տատնկ անչա՛րժ, տատնկ պագա՛ծ, տատնկ տափա՛կ։ Ոչ, մայրի՛կ, աչխարհքը աս չէ որ կայ։ Աչխարհքը մէկ ուրիչ տեսակ է, ես դեռ կ՚ըսպասեմ, աչխարհքը դեռ պիտի գայ. աւելի տա՛ք, աւելի թա՛րմ, աւելի վի՛ր... Անիկա դեռ պիտի գայ։ (Տոտռւած)։ Եթէ չը կայ, եթէ պիտի չը գայ, ալ ի՞նչի է պէտք այս կեանքը։

Մ ա յ ր ը — (Ցեցուելով ալչկայ արտրիճ ու ծոյելով աճոռ մագերը) Աստնկ մի՛ խօսիր, զաւա՛կս. մե՛ղք է։ Նորէն փառք տուր Աստծու։ Ելի՛ր, ելի՛ր, հագի՛ս. գնայ փիչ մը վրաց-գլուխդ կարգի դիր ու ներս եկուր։ Ազկ չէ, որ չիրևաս։ (Կը ճամբուրի ճակատը ու դուրս)։

Մ ա ր ի — (Անշարժ ու աճնպտռաճ փռուած է իր ափոռին)։

Ե ր ու ա ն դ — (Ինչ մը եսիր կ'երեւայ դրան մէջ. ածիլուած դէմք, երկար մազեր, երկար սեւ փողպատ)։ *Կարելի՞ է, օրիո՛րդ։*

Մ ա ր ի — (Առանց դիրքը փոխելու) *Ո՛չ։*

Ե ր ու ա ն դ — *Վա՜յ, ներեցէ՛ք։* (Քաշուիլ կ'ուզէ)։

Մ ա ր ի — (Առանց դիրքը փոխելու)։ *Եկէ՛ք, եթէ միայն ձեզի դրկող չէ եղեր։*

Ե ր ու ա ն դ — (Մօտենալով)։ *Դրկո՞ղ. քա՜ւ լիցի։ Ըսին միայն՝ քիչ մը ակար էք։*

Մ ա ր ի — *Սո՛ւտ են ըսեր։*

Ե ր ու ա ն դ — (Բմմնիծաղ)։ *Այո՛, կը հասկնա՛մ. ներսի օդը ա՛յնպէս, քիչ մը... ի՞նչպէս ըսեմ... թէև պատուհանները բաց են։*

Մ ա ր ի — *Պատուհանները բաց են, բայց հոգիները դոց։*

Ե ր ու ա ն դ — (Ժպտուն)։ *Կարճ ու ազդու։*

Մ ա ր ի — *Նստեցէ՛ք։*

Ե ր ու ա ն դ — *Շնորհակալ եմ։* (Աթոռ մը առնելով)։

Մ ա ր ի — *Ո՛չ, հո՛ս ինձի մօտիկ։*

Ե ր ու ա ն դ — (Նստելով)։ *Թէև... սիրկա քիչիկ մը հակառակ է իմ սկզբունքներուս։*

Մ ա ր ի — *Հակառա՞կ. ի՞նչը։*

Ե ր ու ա ն դ — *Կրակէն ո՛չ այնքան հեռու, որ մըսիս, ո՛չ ալ այնքան մօտիկ, որ այրիս։*

Մ ա ր ի — *Է՛, դուք միակ մարդն էք, որուն հետ խօսիլ կարելի է, դուք ալ լուրջ խօսիլ չդիտէք։*

Ե ր ու ա ն դ — *Կը ցաւիմ, օրիո՛րդ։ Բոլոր առաքինութիւնները միասին չեն ըլլար։*

Մ ա ր ի — (Ցանկարծ ուղղուելով ու ջերմ)։ *Իսկ ե՛ս, ես ընդհակառակը, կ'ատեմ ձեր այդ գոլ սկզբունքը։*

Ե ր ու ա ն դ — (Միամտիւով)։ *Ո՞ւլ։*

Մ ա ր ի — *Այո՛։ Թէ սառն է՝ սառոյց, թէ տաք է՝ կրակ. բայց ո՛չ երբեք այդպէս գոլ ու գաղջ։*

Ե ր ու ա ն դ — *Բայց սառոյցն ու կրակը կը մաչեն մարմինը։ Եւ այն ատեն ի՞նչ կը մնայ ձեր այդ սքանչելի կերպարանքէն։*

Մ ա ր ի — *Թողէ՛ք այդ յիմար հաճոյախօսութիւնները, թէ չէ, ա՜յ, ձեզի ալ կը ըրկեմ ներս, անոնց քովը։*

Ե ր ու ա ն դ — (Լուրջ)։ *Ներեցէ՛ք։ Ես իրօք քանդակագործ կը*

պաչեմ մարմնի ձևերն ու անոնց գեղեցկութիւնը. ու կ'ուտեմ այն բոլորը, որ այդ ձևերը կը խաթարէ. ես կ'ուտեմ մահը, ես կ'ուտեմ վիշտը, ես կ'ուտեմ բոլոր բուռն յուզումները։

Մ ա ր ի — Իսկ ես քանդակագործ չեմ, պարո՛ն Երուանդ։

Ե ր ու ա ն դ — Բայց մոռէլ, և սքանչելի մոռէլ։ Եւ վերջապէս մի՛ մոռնաք, որ սառն ու հուրը կը մաչեն և կեանքը։ Այդ բեռներով քառասունի ալ չէք հասնիր։

Մ ա ր ի — (Ծիծաղ)։ Քառասո՜ւն. կեանքը քառասո՜ւն տարի։ (Ոգեւորուած)։ կեա՛նքը, բարեկա՛մ, օ՛ր մըն է միայն, օ՛ր մը։

Ե ր ու ա ն դ — Ի՛նչ ամիկա. երբ գլուխնիդ կապած նատիք անկիւնը ծալլապատիկ և երբ ձեր թոռները գան ձեր ճերմակ մազերը քաշքշելու, ա՛յ, ան ատեն կը խօսիմ ձեզի հետ կեանքի մասին։

Մ ա ր ի — (Կ'իյնայ աթոռին ու օրուելով)։ Խորհուրդ կու տամ, որ հիմակուընէ փնտռէք ձեզի ուրիշ խօսակից։

Է

Մ ա ր գ ա ր — (Սեմէն)։ Օրիո՛րդ։

Մ ա ր ի — Ի՞նչ է։

Մ ա ր գ ա ր — Վահրամն է եկեր. կ'ըսէ՝ ըսելիք ունի ձեզի։

Մ ա ր ի — (Ոտքի)։ Ազէ՛կ. կանչէ՛ հոս։

Մ ա ր գ ա ր — (Վարանոտ)։ Հո՞ս։

Մ ա ր ի — Այո՛. բեր հո՛ս։

Մ ա ր գ ա ր — Հիմա՞։

Մ ա ր ի — Այո՛. իսկո՛յն։

Մ ա ր գ ա ր — (Դուրս)։

Ը

Ե ր ու ա ն դ — Ձեզի չը խանգարե՞մ։

Մ ա ր ի — Դեռ ո՛չ (Փպտուն)։ Երբ որ խանգարէք, ձեզի իմաց կու տամ։ Շանո՛թ է ձեզի։

Ե ր ու ա ն դ — Մի՞թէ։ Ո՞վ է որ։

Մ ա ր ի — Մեր Մարգարի քրոջ տղան։

Ե ր ու ա ն դ — (Հեգնոտ)։ Ներեցէ՛ք, պատիւ չունիմ ծանօթ ըլլալու։

Վահրամ ու Մարգար կ'նրևւան դրան մէջ: Մարգար կը քաշուի ետ: Վահրամ քայլ մը կ'ընէ ներս եւ օտարի հանդիպելով կանգ կ'առնէ ումքերը կիտած:

Ե ր ո ւ ա ն դ — (Աջխուժ դեմը վազելով) Վա՛հ, Վահրա՛մ:

Վ ա հ ր ա մ — (Զարմացած): Դուն հոս ի՞նչ գործ ունիս:

Ե ր ո ւ ա ն դ — Ես դրացի մարդ եմ, իմ մէկ օտքս միշտ հոս է: (Երկմիտ) Դո՞ւն հոս ինչ գործ ունիս:

Մ ա ր գ — Իսկ ինծի արդէն բոլորովին մոռցար:

Վ ա հ ր ա մ — (Օրիորդին ձեռ տալով) Այս քանի տարի է, չէի տեսներ: (Ուրուանդին) Երե՞ք, չո՞րս: Հը՛. քու փարիզի նշանաւոր տալիէդ մի՞ոգդ է:

Ե ր ո ւ ա ն դ — Բայց ամենևին չե՛ս փոխուած: Անչո՛ւշտ, միշտ ալ նոյն իդեալիստը, չէ՞: Ա՞խ, դո՛ւն: Աւարտեցի՞ր:

Վ ա հ ր ա մ — Ո՛չ, ինծի պէս մարդիկը իրաւունք չունին ուսարտելու: Եւ վերջապէս (Ձեռքը բաի տալով) ինչո՞ւ համար: Իսկ դո՞ւն. նորէն քու ցեխերո՛ւդ հետ ու ծեփերուդ:

Ե ր ո ւ ա ն դ — Իհարկէ՛: Բանով մը կեանքը պէտք է լեցնենք, թէ չէ՞. ցեխը ինչո՞վ է պակաս: Շա՞տ ժամանակ է, որ Պոլիս ես:

Վ ա հ ր ա մ — Այսպէ՛ս, ամի՛ս մը:

Ե ր ո ւ ա ն դ — Ու կը մնաս երկա՞ր:

Վ ա հ ր ա մ — Ո՛չ:

Ե ր ո ւ ա ն դ — Եւ ո՞ւր:

Վ ա հ ր ա մ — Երկիր:

Ե ր ո ւ ա ն դ — Երկի՞ր. հիմա՞. այդ հալածանքին ու սարսափներուն մէջ:

Վ ա հ ր ա մ — Այդ հալածանքին ու սարսափներուն մէջ ամբողջ ժողովուրդ մը կ'ապրի:

Ե ր ո ւ ա ն դ — Աա՛նկ է, բայց... բայց վերջապէս դուն... եւ ի՞նչ ես ընելու հոն:

Վ ա հ ր ա մ — Երևի, ընելիք մը կը ճարուի:

Հ ա ր ե ն ց — Պարո՛ն Երուանդ, հո՞ս էք: (Աչքերը լարած կը նայի ետեւ եւ յանկարծ Վահրամը նանչնալով կ'ապշի):

Ե ր ո ւ ա ն դ — Հո՛ս ենք։ Հրամեցէ՛ք դուք ալ։ Ծանօթ չէ՞ք։

Հ ա բ ե ն ց — (Խեր)։ Կը ճանչնամ. բարե՛։ Շատ ազէկ էք ըրեր, որ եկեր էք. երեւի եկեր էք մեր Մարգարին օգնելու։

Մ ա ր ի — (Առաջ գալով եւ կտրուկ)։ Ո՛չ. եկեր է ինծի հետ տեսակցելու։

Հ ա բ ե ն ց — (Կատած բայց ինքզինքը զսպելով)։ Ա՛խ. որ այդպէս է, չը խանգարենք։ Պարոն Երուանդ, մենք նստելու ենք վիսաի. չէի՞ք ընկերանար։

Ե ր ո ւ ա ն դ — Սիրով. ես կռիւէ փախչողը չեմ. երթա՛նք։ Վահրա՛մ, մենք հոս անմիջապէս դիմացը կը բնակինք, երբ ալէդ առաջ եկո՛ւր անգամ մը տեսնըւինք։

Վ ա հ ր ա մ — Կը տեսնըւի՛նք։

Հ ա բ ե ն ց — (Յամառ կը դիտէ մեկ մը Վահրամը, մեկ մը իր ոյրը, մինչեւ որ դուրս կ'ելլայ Երուանդի հետ միասին)։



Վ ա հ ր ա մ — (Երբ միւսները բոլորովին կը հեռանան, ձայնը կը դառնայ աղջկան)։ Ինծի կանչե՛ր էիք։

Մ ա ր ի — Իսկ եթէ չը կանչէի, դուք ինքներդ գալու չէի՞ք։

Վ ա հ ր ա մ — Ո՛չ։

Մ ա ր ի — Դիտէի՛։ (Փպտուն)։ Կը տեսնէի՛ք, որ մուաք ունիմ ձեր հոգին։

Վ ա հ ր ա մ — (Ցանկարծ)։ Օրիո՛րդ Հարենց, լաւ է վերջ տանք այս խաղին։ Ես կը հասկնամ, դուք սաստիկ էք չրջապատուած ու պաշարուած ըլլալու. ես կը հասկնամ, որ դուք վարժուած էք ամենուն հետ ալ այսպէս... Ինչպէս ըսեմ... Բայց ես, ես չեմ կրնար, ինչպէս ամենքը. ես ուրիշ կերպ կը հասկնամ ձեր վարմունքը։ Ծովը թողած օրէն ջուր չը տեսած սպունգի պէս ծարաւ է հոգիս. ծարաւ գգուանքի, անուշ խօսքի մը, ջերմ ակնարկի մը։ Ես... ես չեմ կըրնար, ինչպէս ամենքը. ես... (Խօսքը կը կտրէ ու ինչ մը լուռ)։

Մ ա ր ի — (Աչքերը գետնեն ձայնը բարձրացնելով խօսակցին) Խօսէ՛, խօսէ՛։

Վ ա հ ր ա մ — (Խելագարի պես դեպի աղջիկը վազելով)։ Մարի՛... (Ինքզինքը զսպելով)։ Է՛, ես գիտեմ, որ վերջը յիմարութիւն մը ընելու եմ անպատճառ։ Բայց ինչո՞ւ. ի՞նչ իմաստ։ Դուք դեռ չգիտէք ալ՝ ո՞վ եմ ես, ուրկէ՞ կու գամ և կ'երթամ ո՞ւր։

Մ ա ր ի — Եւ ինչի՞ պէտք գիտնալը։ Ինծի՞ ինչ։ Ես գիտեմ միայն, որ դուն եկեր ես, որ դուն հոս ես։ Երկա՛ր, չա՛տ երկար եմ

սպասեր քեզի, անվե՛րջ չլուսցող դիչերներով, ամբողջ երազուն ցե-
րեկներով. տարինե՛ր, տարինե՛ր։

Վ ա հ ր ա մ — Տարինե՞ր։

Մ ա ր ի — Այո՛։ Իմ անուրջներս ըսեր էին ինծի, որ գայիր պիտի, և գայիր պիտի ծովէն, անպատճառ ծովէն, այդ ալիքներուն վրայէն, երիտասարդ, ուժեղ ու գեղեցիկ. գայիր պիտի ու դուրս պիտի քաշէիր ինծի իմ մոխրագոյն տազտուկէս. քաշէիր ինծի դուրս, սեղմէիր կրծքիդ, Թող ըլլայ օր մը, Թող ըլլայ անգամ մը. երբ ես ալ ապրէի պիտի վերջապէս, հասկընայի պիտի՝ Թէ ինչո՞ւ է առաած մեզի կեանքը, Թէ ինչո՞ւ այսպէս յիմարի պէս կը Թըփըռտայ սիրտս կրծքիս տակ, Թէ ատ ի՞նչ կարօտ է ու սպասում, որ կ'ապրէ ինծի։ Դոնէ օ՛ր մը, դոնէ օ՛ր մը, երբ ես ալ ապրէի պիտի վերջապէս։

Վ ա հ ր ա մ — (Կարծես բարկացած, կը խլէ աղջկայ ձեռքը)։

Մ ա ր ի — Կը յիշե՞ս մեր առաջին հանդիպումը ծովուն ափը, երբ մակոյկդ խրեցաւ մեր ծովեզրի աւազին ու դուն դուրս ցատկեցիր քու պարզ չարժումովդ. եկար դէպի ինծի ու հարցուցիր Մարգարիտը քու այդ պարզ ու չիտակ լեզուովդ։ Այդ վայրկեանէն քու ամեն մէկ խօսքդ սրտիս է խօսեր ու քու ամեն մէկ նայուածքդ քու հոգիդ է բացեր ինծի։ Եւ ինչքա՜ն նման է այդ հոգին իմինիս։ Դուն ճիշդ կ'ըսէիր, այս հարուստ միջավայրին մէջ ես միշտ աղքատ եմ եղած, ճիշդ ա՛յնքան, որքան և դուն։

Վ ա հ ր ա մ — Ես աղքա՞տ. ո՞վ ըսաւ քեզի։ Ես հարուստ եմ հիմա։ Մարի՛, անէա՛ւ հարուստ, ճիշդ այնքան որքան և դուն։

Մ ա ր ի — Աւտոր համար էր, որ իրար կը հասկնայինք ու կը փնտռէինք իրար։

Վ ա հ ր ա մ — (Յանկարծ գրկելով ու համբուրելով)։ Եւ գտա՛նք իրար, գտա՛նք, գտա՛նք։

Կը մնան գրկուած, լուռ։ Լուռ ալ կը բաժնուին իրարմէ ու աղջիկը կը մօտենայ բաց պատուհանին։ Վահրամ քայլ մը ետ կ'ընէ ու կը մնայ անշարժ ձեռքը ճակտին։

Մ ա ր ի — (Մազերը ետ ըրելով նախեն ու խոր շունչ առնելով բարմ օդին մէջ)։ Ա՜խ, Աւտուած իմ։

Վ ա հ ր ա մ — Ո՛չ. դուն պէտք է գիտնաս և հէնց առաջին վայրկեանէն։ Ես կորսուա՛ծ մարդ եմ, Մարի՛. ես տուեր եմ գլուխս ալ, ուժերս ալ, օրերս ալ և բոլորը ինչ որ ունիմ։ Ես իմս չե՛մ, Մարի՛, ես երթալու եմ չուտով, ես եկած եմ երթալու համար. երթալու, մեռնելու, որովհետև գնացողին զարձ չկայ, հոնկէ զարձ չկայ։

Մ ա ր ի — (Վրայ վազելով ու գոցելով ամուր բերանը)։ *Մի՛, մի՛, թո՛ղ, թո՛ղ հիմա այդ բոլորը, թո՛ղ աչխարհքը, թո՛ղ ամեն բան, մոռցի՛ր ամեն բան։ Եթէ կ՚ուզես, կը խօսինք ուրիչ անգամ։ Հիմա լռէ՛, լռէ՛ ու նայէ՛ աչքերուս։ Չիտա՛կ, խո՛րը, խո՛րը, այդպէ՛ս... այդպէ՛ս...* (Երկու ձեռքով ամուր գլուխը դրնած)։ *Ի՛մս. ամբողջովի՛ն իմս, միա՛յն իմս։* (Քիչ մը լուռ։ Վերջը կամաց կը բողնէ գլուխը ու մեղմ)։ *Դէ՛, հիմա գնա՛. ալ ո՛չ մէկ խօսք. գնա՛. Թող ո՛չ-ոք ու ոչի՛նչ չպատռէ մեր այս վայրկեանը։* (Կը համբուրուին։ Շեուկով) *Գնա՛... գնա՛...*

Կամաց ու խիստ հանդարտ կը բաժնուին իրարմէ ու ջերմ կը նային իրար, մինչեւ որ Վահրամ ծանր կը հասնի դրանը ու գլխուն վերջին շարժումով մը կ՚ելլէ դուրս։ Մարի կեցած է արծանի պէս, առանց դիրքը փոխելու եւ ո՛չ-մէկ շարժում։

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Փոքը ու հասարակ վարձու սենեակ մը

Դռներ ճակտէն ու մէկ կողմէն: Մահճակալ մը, քանափէ, սեղան, երկու աթոռ, մէկ-երկու պայուսակ: Սմանն ինչ խիստ հասարակ ու մաքուր:

Ա

Սարիկեան — (Կարճահասակ, ծանրաձարժ երիտասարդ մը խելացի աչքերով: Նսեմած է սեղանին առջեւը ու կը հետեւի ընկերոջը քայծին, աչքերը սեղանին յառած, ուր մատովը բան մը կը գծէ):

Վահրամ — (Կ'երթեւեկէ սենեակին մէջ, մերթ կանգ առնելով ընկերոջ դէմը): *Է՛, գէշ ու կոպիտ բան մը կայ մարդուս հոգիին խորը, ինչ կ'ուզես ըսէ: Ե՞ս, հիմա ուրախանա՞մ մեր գործերու այսպէս ձախ երթալէն, թէ ինչ է՝ ամիս մը կամ երկու դեռ հոս եմ մնալու: Բայց կը հասկնա՞ս:*

Սարիկեան — *Արդէն բոլորովին աւելորդ ներքազգացութիւն է ըրածդ: Դուն ի՞նչ յանցանք ունիս, որ մարդիկ են բռնուեր և որ քու երթալդ յարմար չէ այժմ. պատահմո՛ւնք:*

Վահրամ — *Անշո՛ւշտ: Բայց որ սիրտս իր խորքէն գոհ է այսպէ՞ս: Ա՛, ես կ'ուզէի խեղդեմ այս զգացումը, կ'ուզէի այրեմ, խաբեմ, որ հետքն ալ չմնար: Բայց ի՞նչ ընեմ, ո՛չ խեղդել կրնամ, ո՛չ կեղծել:*

Սարիկեան — *Է՛, սիրելի՛ս, մարդ ես դուն ալ:*

Վահրամ — *Այո՛, շատ անպիտան բան է այդ մարդը:* (Քիչ մը լուռ): *Շատ անպիտան և կեա՛նքը: Ծիլդ հիմա՞ պիտի հանդիպէր*

այդ կակը ճամբուս վրայ, հմմա՞, հո՞ս, երբ մէկ ոտքս չոգենաւն է արդէն։ Ես ինչո՞ւ, ինչո՞ւ, ի՞նչ իմաստ, ի՞նչ կարիք. միայն աւելի վիշտ պատճառելու համար, նո՛ր վիշտ ու նո՛ր դառնութիւն. ուրիշ ի՞նչ։

Մ ա ր ի կ ա ն — Ուրեմն կը ցանկայիր, որ այդ աղջիկը դէմդ ելած չըլլա՞ր։

վ ա հ ր ա մ — (Միւամպաններս)։ Միամի՛տ։ Ինչի՞ է նման իմ կեանքը, իմ անձնական կեանքը, առանց այս երկու չարթուներն։ Անծայր անապատ մը չոր ու տաչեր։ Աւիկա միակ օազն է, Սարի՛կ, միակ օազը իմ ամբողջ ճանրուս վրայ։

Մ ա ր ի կ ա ն — (Տխուր ու երազուն)։ Օա՞զ... լա՛ւ ըսիր։

վ ա հ ր ա մ — Բազդի օազը, ուր վայելքի ազբիւրը կը գլգլայ։ (Բեկում)։ Բայց ահա, աւազէն յոգնած, խորչակէն կիզուած, հազիւ ոտք դրած այդ դալար վայրը, հազիւ հպած չոր շրթունքդ այդ յորդ ազբիւրին, դէ՛, ելի՛ր նորէն ոտքի, մա՛րդ, ելի՛ր ու գնա՛ ճանրադ, քու ճանրադ մահու, տապի ու տառապանքի։

Մ ա ր ի կ ա ն — (Մռայլ ու խիստ)։ Մի՛ տրտնջար։ Չէ՞ որ դուն համեցիր բազդի այդ ազբիւրէն. բայց որքա՞ն, որքաննե՛ր կան, որ քու ճանրէդ կու գան ու կ'երթան ու այդ միրաժը չտեսան անգամ.

վ ա հ ր ա մ — (Ցանկարծ բուռն շարժումով մը կր դառնայ թեկերոջր ու կաբեկցոս)։ Սարի՛կ... (Շեշտ ու լուռ կր ցայտին խրար։ Կր զարնուի դուռր)։

Բ

վ ա հ ր ա մ — Մա՛ք։

Մ ա ր ի — (Սեմհն, ժպտուն)։ Կարելի՞ է։

վ ա հ ր ա մ — (Դեմը վազիլով) Վա՛յ, ես քեզի դեռ ուշ կ'քապասէի։

Մ ա ր ի — (Սարիկեանին՝ մտերիմ)։ Բարև՛ ձեզի։ (Վաճրամին)։ Ուշ գալ չէի կրնար. արդէն երկար ալ չեմ մնալու. հանդիպեցայ մէյն քանի մը վայրկեանով։

Մ ա ր ի կ ա ն — Ինծի կը ներէք։ (Կոլմնակի դեղեն դուրս)։

Գ

վ ա հ ր ա մ — (Բաւելով աղջկայ ձեռքեն դեպի բաճափեն)։ Եկո՛ւր՝ եկո՛ւր, այնպէս կարօտեր եմ քեզի, այնպէս կարօտեր եմ քեզի։ կարծես օր չէ, տարի է։ (Կր գրկէ ու կր ցատին իրար կիպ)։

Մ ա ր ի — Ինչո՞ւ այդպէս տխուր ես նորէն։

վ ա հ ր ա մ — Ե՞ս, տխո՞ւր. ամենևի՛ն։

Մ ա ր ի — Է՛· ես չդիմե՞մ։ Ա՛յ, այս ծալքը ունքերուդ մէջտեղը, ա՛յ։ (Կը ջախ տալու նակացը)։ *Ի՞նչ է պատահեր ըսէլու։*

վ ա հ ր ա մ — Ոչի՛նչ, ոչի՛նչ· քանի որ դուն քովս ես՝ ոչի՛նչ։

Մ ա ր ի — Իսկ երբ քովդ չե՞մ։

վ ա հ ր ա մ — (Հառաչով) *Հա՛, այն ատեն ատանկ ախորժելի հիւրեր չեն ինծի այցելողները· տեսա՛ր մը բողոք, ինքս ինծմէ զըժգոհութի՛ւն, ներքին խայթի պէս բաներ··*

Մ ա ր ի — (Ոտ ֆռշտուելով ու յանդիմանական) *Վահրա՛մ···*

վ ա հ ր ա մ — Այո՛, այո՛· ես գիտեմ· ինծի պէս մարդը իրաւունք չունի անձնական երջանկութեան· այս ձանրով գացողը իրաւունք չունի իր երջանկութիւնը փնտռելու։

Մ ա ր ի — Ինչո՞ւ, ինչո՞ւ· ընդհակառակը։ Դուն մինչեւ հիմա տուեր ես ամէն բան· դուն մինչեւ հիմա ըրեր ես ամէն բան՝ քու ժողովուրդիդ համար· դուն վճարեր ես քու պարտքդ։ Հիմա քիչ մըն ալ ապրէ քեզի համար· Թող գան հիմա քիչ մըն ալ ուրիշները, թո՛ղ չարչարուին քիչ մըն ալ ուրիշները։

վ ա հ ր ա մ — (Խոժոռ)։ *Ուրիշները իրենց տեղը, ես ալ իմ տեղս։*

Մ ա ր ի — Գիտե՛մ, գիտե՛մ, հոգի՛ս· գիտե՛մ, որ գործի հոգին ես· կը կարծես աչք չունի՞մ։ (Հպարտ)։ *Եւ արդէն ուրիշ կերպ կըսիլի ալ չէ· բոլոր ընկերներդ կը նային քեզի, դո՛ւն ես պլուխը, դո՛ւն, դո՛ւն, դո՛ւն իմ քա՛յլս, դուն իմ արև՛ս, դուն իմ հերո՛սս։*

վ ա հ ր ա մ — (Կոտրուած ու ծպրեալով)։ *Ի հարկէ, հերո՛ս։*

Մ ա ր ի — Բայց ճիշդ ատոր համար ալ քեզի խնայես պիտի։

վ ա հ ր ա մ — Մարի՛, նորէ՞ն հին երգը։

Մ ա ր ի — Ակէ՛կ, ազէ՛կ, մի՛ բարկանար· կ'երթա՛ս, երկիրը ալ կ'երթաս· ե՛տքը, գարուն՝քի՛ն։ (Ծպտուն)։ *Կ'երթա՛նք միասին։*

վ ա հ ր ա մ — Միասի՞ն· դո՞ւն։ երևակա՛յ։

Մ ա ր ի — Ինչո՞ւ· միթէ անկարելի՞ է։

վ ա հ ր ա մ — (Կտրուկ)։ *Ատոր մասին ա՛լ խօսք չըլլայ, Մարի՛։ Այդ ուղղութեամբ այլեւս չմտածե՛ս։ Երթա՛ք։ իմ թեւերս պէ՛տք է ազատ ըլլան հո՛ն։*

Մ ա ր ի — Ակէ՛կ, ազէ՛կ, ձգէ՛, մի՛ մտածեր։ Թող հիմա ապրի՛նք, Թո՛ղ որ ծծենք այս վայրկեաններուն մինչեւ մրուրը, իսկ վերջը Թող գայ, ինչ որ գալու է։ (Ու բոլոր ուժովը կը գալարի տեղը վիզը։ Լուռ։ Կը լսուի դրացի մեղմ բաղխումը։ Երկուքն ալ կը ցնցուին ու կը բարձրացնեն գլուխնին)։

Մ ա ր ի — (Ինազականաց սոսրափով մը ու փսփսուքով)։ *Եկա՛ւ··· եկա՛ւ···*

վ ա հ ր ա մ — (Շուար)։ *Ո՞վ։*

Մ ա ր ի — Չգիտե՞մ··· (Ոտքի կ'ելլէ այլեւս ծփելով ու ջանալով

վախը զապէ) *Ի՛նքս ալ չդիտեմ։* (Նորեն կը լսուի բալխումը ինչ մը աւելի ուժեղ)։

Վ ա հ ր ա մ — Մա՛ք։

Պ

Տ ա ն տ ի կ ի ն ը — (Զոր կեռպարաճիւ մը կծկուած շրթունքներով)։ *Ան մեծ մօրուքով տղան է, լայն գլխարկով։*

Վ ա հ ր ա մ — Ո՞վ, ի՞նչ։ Հա՛, աղէկ, աղէ՛կ։ Տարէ՛ք ընկերոջս անհնակը, ըսէ՛ք հիմա կու գամ։

Տ ա ն տ ի կ ի ն ը — (Խուրս)։

Ք

Մ ա ր ի — (Հանգիստ)։ *Ո՞վ է։*

Վ ա հ ր ա մ — Ընկե՛ր մը։

Մ ա ր ի — Ինչո՞ւ է եկեր։

Վ ա հ ր ա մ — Ի՞նչ գիտեմ. երեւի գործ մը։ Բայց դո՞ւն ինչու այդպէս վախցար։

Մ ա ր ի — Զգիտեմ. այնպէս վատ էր. կարծես սիրտս... ճիշդ ըսէ՛, վահրա՛մ, ոչինչ չկա՛յ։

Վ ա հ ր ա մ — Վա՛յ, երեխա՛յ ես, ի՞նչ պիտի ըլլայ։ Ա՛յ, երթամ նայիմ՝ ինչ կ'ըսէ. երկու վայրկեանէն կուգամ։

Մ ա ր ի — (Վախցած կը բռնէ թեւէն)։ *Չէ՛, չէ՛, կեցիր. ես երթամ վերջը. ես արդէն երթամ պիտի։ Ուրեմն վազը կու գաս մեզի։*

Վ ա հ ր ա մ — Կու գամ։

Մ ա ր ի — Բայց կանո՛ւխ։

Վ ա հ ր ա մ — Կանո՛ւխ։

Մ ա ր ի — Դէ՛, ցտեսութի՛ւն։ (Երկու ձեռքը կու տայ տղուն ու յամառ կը նայի անոր աչքերուն)։ *Վա՛յ, աս ի՛նչ ապուշ զգացում է մէջս. այնպէս սիրտս կը ճմլէ. կարծես ալ երբե՛ք չեմ տեսնելու քեզի։*

Վ ա հ ր ա մ — (Փոխնիփոխ համբուրելով անոր երկու ձեռքերը)։ *Ա՛խ, դո՛ւն, իմ անգի՛նս, հանգստացիր։ Ինչպէ՞ս թէ՝ չես տեսնելու։ կու գամ վազը առաւոտ կանո՛ւխ, կ'իջնենք նորէն ծովուն ա՛փը, ձեր այն թա՛ւ պուրակին եռւը, կը փռուինք նորէն ժայռին կողքը, աւազին վրայ ու կը սաւառնինք նորէն վե՛ր, դէպի այն աչխարհները, ուր մոռացումն է ամեն հոգնդէնի, ուր ձուլումն է հոգիներու, ձա՛ւլում բնութեան այն մե՛ծ հոգիին, որուն մէկ կտորն ալ մենք ենք։ Եղա՞ւ։*

Մ ա ր խ — (Զուարթ ու յախճապաղած)։ *Եկո՛ւր, եկո՛ւր, մխայե կանո՛ւխ, կանո՛ւխ։* (Աւագ կը ճեռուի տղուն վիզը, կը համբուրուին ու դուրս)։

Գ

Վ ա հ ր ա մ — (Աջխուժ կ'երթեւեկէ ինչ մը սենեակին մէջ. վերջը կ'երթայ, զուարթ ու լի շարժումով մը կը բացայ թափով կից սենեակին դուռը)։ *Բարև՛, Դաւի՛թ։*

Դ ա ւ ի թ — (Հասուն տարիքի լայն մարդ մը. լայն մօրուքով, լայն գլխարկով։ Սեմին վրայէն) *Ըսին՝ հի՛ւր ունէիր. գնա՞ց։*

Մ ա ր խ կ ա ն — (Կը մտնէ Դաւթի ետեւէն, լուռ կը կենայ ճեռուն եւ տխուր, ուշադիր կը հետեւի շարունակ Վահրամին)։

Վ ա հ ր ա մ — *Այո՛։ Նոր լո՞ւր։*

Դ ա ւ ի թ — (Հոս հաշելով սենեակին մէջ)։ *Հոստեղ ինչոր կնկան հետ կայ։* (Ծիծաղելով մատը թափ կու տայ Վահրամի վրայ)։ *Է՛հ, մեր տղա՛յ։ Խելո՛ք ես, տղա՛ր, խելօքը դուն ես. հաճելին օգտակարին հետ։ Պէտք է քիչ մը բարեխառնութիւն։*

Վ ա հ ր ա մ — (Ծիծաղ ու հրամայական)։ *Թող յիմարութիւնները։*

Դ ա ւ ի թ — *Ուրիչ խօսքով՝ դործդ խանգարեցի։ Կը ներ՛ս, սիրելիս, կը ցաւիմ, բայց...*

Վ ա հ ր ա մ — (Նեղսիրտ)։ *Քեզի բան կը հարցընեմ՝ նոր լուր չկա՞յ։*

Դ ա ւ ի թ — *Ինչպէս չէ։ Որ չըլլար՝ ինչո՞ւ էի այս կրակ թափուող կէս-օրին ճանրայ հլլելու գալու։ Ամենէն առաջ ուրախը բանի. ո՛չ Յակոբն է բանուած, ո՛չ Մինասը. ձերբակալուածները բոլորովին երկրորդական մարդիկ են։*

Վ ա հ ր ա մ — (Անզուսպ բերկրանքով)։ *Ի՞նչ կ'ըսես։ Վա՛յ, կարծես սրտէս քար մը ինկաւ։ Ի՛նչ ուրախ եմ, ի՛նչ ուրախ եմ։*

Դ ա ւ ի թ — *Հապա՛. իզուր տեղը չէր որ քեզի խանգարեցի։*

Վ ա հ ր ա մ — (Ինչ մը լրջանալով)։ *Ուրեմն... ուրեմն իմ երթալուս արգելք չկայ այլեւս։* (Մտածկոտ)։ *Ուրեմն ճանբան բաց է. ուրեմն...*

Դ ա ւ ի թ — *Հա՛, հա՛. ալ ինչ ուրեմն-ուրեմն։* (Սարկեաճին)։ *Ուրախութենէն լեզուն կապուեցաւ։ Չգիտեմ, ինչ կայ ուրախանալու։ Դուն ալ կ'երթաս, մի՛ վախնար, դուն ալ կ'երթաս ու կը դառնաս էչ-նահատակ մը։ Դո՛ւն ալ, մենք ալ, բոլո՛րս ալ, դեռ չատ ճնշճ է պէտք այդ կրակին։ Ա՛ռ, նայէ՛։* (Ծոցէն նամակ մը հանելով կը նետէ աջոր առջեւը սեղանին)։

Վ ա հ ր ա մ — (Խնդոյն կը վերցնէ ու կը բանայ)։

Դ ա ւ ի թ — (Միջն Վահրամ կը կարդայ)։ *Ես քեզի միայն ուրախ լուրը տուի. տխուրները հոս են, դէզերո՛վ. ինքդ կարդա՛, ես սիրտ չունիմ։* (Ինչ մը լուռ)։ *Դէ՛չ է, գէչ։ Ձմմարիա չգիտեմ, ասոր ծայրը ո՛ւր պիտի երթայ։ Ցուսահատելու բան է։ Երբեմն կը մտածեմ՝ անմիտ բան է ըրածնիս. միևնոյն է, ելք չկայ։*

Վ ա հ ր ա մ — (Ցանկարծ ընթերցումը ընդհատելով)։ *Ե՞լք. կ'ըսես՝ ելք չկա՞յ։* (Նամակը ցոյց տալով)։ *Ուրեմն Թողնենք այսպէ՞ս, Թողնե՞նք։ Բայց կեա՞նք է ասիկա, ապրի՞լ է ասիկա, ասանկ ապրի՞լ կ'ըլլայ։* (Կտրուկ) *Ո՛չ, ո՛չ, հազա՛ր անգամ ոչ. կամ տա՛կը, կամ վրան։*

Դ ա ւ ի թ — (Տխուր)։ *Դեռ կարդա՛, դեռ կարդա՛։*

Վ ա հ ր ա մ — *Է՛, ինչ կարդամ։* (Նամակը կը ցեցէ սեղանին)։ *Նո՞ր պիտի կարդամ. ինչ պիտի դրէ, որ նոր ըլլայ։* (Ինչ մը լուռ ու վերջը հանգիստ ձեւով մը) *Ե՞րբ է Տրապիզոն մեկնող առաջին շոգենաւը։*

Դ ա ւ ի թ — *Այսօր ի՞նչ է, երեքշաբթի՛։ Ուրեմն վագը չէ միւս իրիկո՛ւնը։*

Վ ա հ ր ա մ — (Մտածկոտ)։ *Ըսել է դեռ երկու օր։ Նախ պէտք է որ Սարգիսը տեսնեմ։ Գնելու բաներ ալ կան։ Հա՛, պիտի գնամ և կղզի. վերջն ալ··· Հազի՛ւ, հազի՛ւ, երկու օրը հազիւ։ Բայց ինչ որ է, պէտք է հասնիմ։ Լսէ՛. վագը հաւաքուի՛նք վերջին անգամ մը։*

Դ ա ւ ի թ — *Հաւաքուի՛նք։*

Վ ա հ ր ա մ — *Կէս-օրէն առա՛ջ։*

Դ ա ւ ի թ — *Կէս-օրէն առաջ։*

Վ ա հ ր ա մ — *Բու մօ՛տը։*

Դ ա ւ ի թ — *Իմ մօտս։*

Վ ա հ ր ա մ — *Դուն կը կարդադրե՛ս։*

Դ ա ւ ի թ — *Ես կը կարդադրեմ։*

Վ ա հ ր ա մ — (Խուռը մտածութիւն)։ *Դէ՛, երթաս-բարո՛վ։*

Դ ա ւ ի թ — (Միջադելով)։ *Վա՛, անուչէ՛ն, Թող մէյ մը խօսինք։*

Վ ա հ ր ա մ — *Խօսելու բան չկայ։*

Դ ա ւ ի թ — (Սարիկեանին)։ *Որ բռընկեցաւ՝ պրծաւ։*

Վ ա հ ր ա մ — *Դնա՛, գնա՛. մտածելու, կարգի բերելու բաներ չատ կան գլխուս մէջ։ Թողէ՛ք ինծի առանձին. պէտք ունիմ վայրկեան մը ինքս ինծի հետ մնալու։*

Դ ա ւ ի թ — *Ազէ՛կ. մնացի՛ր։* (Սարիկեանին առջեւէն աջցնելու տեղ)։ *Մե՛ծ բանի վրայ է. յիմա՛ր ենք մենք ամե՛նքս ալ։* (Խուրս)։

Է

Վ ա հ ր ա մ — (Կեցած է ձեռքերը եռեւեց յենած սեղանին, աչքերը գետին, աճուպար ու մտասոյզ)։

Ա ր ի կ ե ա ն — (Կամաց մը կը մօտենայ, կը կենայ դիմացը. մեղմ)։ Ուրեմն վաղը չէ, միւս իրի՛կուն։ Վճռուա՛ծ է, և այդպէս դիւրի՛ն։

Վ ա հ ր ա մ — Դիւրի՞ն, կը կարծե՞ս։ Այո՛, երբե՛մն, ասկէ քանի մը չաթաթ առաջ, առիկա չա՛տ էր դիւրին։ Ի՞նչ էր որ կեանքը ինծի համար. ըլլամ թէ ոչ՝ նո՞յնը չէր. ի՞նչ էի կորցնելու։ Բայց հիմա պին ունի կեանքս, հիմա արեւս արժէք ունի ինծի համար։ Եւ վերջապէս այդ աղջի՛կը, այդ բիւրեղ հոգին։ Ես չա՛տ լաւ գիտեմ, որ վայրի, որ անսիրտ քան է իմ ըրածս. բայց ուրիշ ի՞նչ կրնամ ընել։

Ա ր ի կ ե ա ն — (Տեսակ մը ծամծմելով)։ Ինծի լսէ՛, վահրա՛մ։ Դուն... դուն հիմա պէ՛տք չէ որ երթաս... լա՛ւ չէ որ երթաս։ (Պարզ ու կտրուկ)։ Դուն դեռ չե՛ս երթար։

Վ ա հ ր ա մ — Բայց ի՛նքդ ալ գիտես, չէ՞, թէ ի՞նչ ստիճան կարիք կայ մարդու։

Ա ր ի կ ե ա ն — Անշո՛ւշտ։

Վ ա հ ր ա մ — Ուրե՞մն։

Ա ր ի կ ե ա ն — Գործը չի մնար, անհոգ եղիր։ Լսէ՛։ Բաղդը ինծի չէ տուեր ոչինչ և ես չունիմ ոչինչ կորցընելու։ Այսօր չէ, վաղը, գալու էի և՛ ալ քու եաեդդ։ Վաղը ժողովին կիրպ մը կը յարմարցնենք և հիմա և՛ս կ՚երթամ քու տեղդ։ Վերջապէս մեեանո՞ն է, չէ՞։ Դուցէ բոլորովին քեզի փոխանակել չկրնամ, բայց կ՚ընեմ ինչ որ կրնամ։ Իսկ դուն դեռ ապրէ՛ քիչ մը քու բաղդդ, ապրէ՛ քեզի համար, (Կատակով) ապրէ՛ քիչ մըն ալ ինծի համար. վերջը... վերջը օր մըն ալ, երեւի, դուն կու գաս իմ փոխարէնը ու կ՚ըլլանք սէր։

Վ ա հ ր ա մ — (Հանգիստ)։ Այսպէ՞ս ուրեմն։ Վա՛տ չէ, հիանալի։ Ինարկէ՛, դուն անձնուէր ու ազնիւ գինուոր մըն ես, անոսաան քու պաչոսնիդ գլխուն, իսկ ես մա՛նր հոգի մը, անձնական վայելքներուս եաեդէն ինկած։

Ա ր ի կ ե ա ն — (Վրդովուած) Վա՛հրամ։

Վ ա հ ր ա մ — Ո՛չ, ո՛չ, դեռ մի՛ պարծենար սրտիդ խորքը. ես քու կարծածդ չե՛մ։

Ա ր ի կ ե ա ն — Վահրա՛մ, ամօ՛թ է, ինչե՛ր կը խօսիս։

Վ ա հ ր ա մ — Դուցէ՛, չգիտեմ. բայց քու բսածիդ անմիջական պատասխանն էր, որ տուի։ Այդ սեաակի... քնքուշ առաջարկու-

թիւններ ամէն մարդու կարելի չէ ընել, նոյնիսկ ամենաազնիւ դիտումներով։ (Խիստ) Ինչ որ քարոզեր եմ ուրիշներուն, նոյնը և ինծի, երկու չափ չի՛ պիտի ըլլայ դաղափարի դործին մէջ. երթալս պէ՛տք է, ուրեմն պէտք է երթամ։

Սարիկեան — Ես միայն քեզի թեթևութիւն տալ ուզեցի. կա՛ն բացառիկ վայրկեաններ։

Վահրամ — Բացառիկ ոչինչ չկայ, բացառիկ ոչինչ չի պիտի ըլլայ։ Ճիշդ է, մինչև հիմա ուելի դիւրին էր ինծի համար այդ քայլը, բայց ատոր արժէքն ալ չա՛տ ուելի քիչ էր։ Կայէնի նուէրն էր ատիկա, չոփ-չոր գլուխ մը, անպէտք ամենուն, անպէտք և իրեն։ (Ձեռմ) Հիմա ուրիշ է։ Հոգիին հոգի կը բերեմ ես հիմա նուէր. զոյգ մը բաբնկած հոգի մեր ժողովուրդի հոգեկան բաբնկումին, զոյգ մը թա՛րմ հոգի ապագայի ուելի արեւոտ օրերուն։ Մէ՛կ նուէր մը ու երկո՛ւ սիրտ, կեանքո՛վ-սիրո՛վ դողդոջուն, երջանկութեան անուրջներո՛վ թրթռտուն... Թող քաղցրանա՛յ քիմքը աղտոտութեան մոլախի։ (Թափով կը վերցնէ գլխարկը)։ Այո՛, վազը չէ, միւս իրիկուն։ (Դեպի դուրս)։

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Ա

Թեթեւ շինուած պատկեռն մը

Ձակատը երկփեղկ լայն դուռ՝ անմիջապէս պարտէզի վրայ: Սենեակը անկարգ. ճօճ ու ծիգ աթոռներ, սեղան ու եռոտանիներ. եռոտանիներուն վրայ թաց լաթով պատած կաճեր: Ամեն կողմ՝ աթոռներուն, գետնին ու սեղաններուն՝ թափուած են ոլորած թղթեր, գրքեր ու նկարներ: Հոս ու հոն մէկ-երկու արծան ու պատկեր:

Դուրսը սաստիկ հով է: Ծառերուն ճիւղերը կ'օրօրուին ու կը քսուին դրան ապակիներուն: Հեռուէն ծովուն շառաչը խուլ ու միապաղաղ: Մութ է:

(Նախ ինչ մը ատեն մարդ չկայ: Կը մտնեն միասին Երուանդ ու Վահրամ):

Երուանդ – Ահա՛ և իմ ճգնարանս: Քեզի համար ասկէ աւելի առանձին տեղ չեմ կրնար գտնել: Կեցի՛ր մոմս վառեմ: (Կը վառէ սեղանիկն վրայի մոմերը): Կը հաւնի՞ս:

Վահրամ — (Աջակ շուրջը ակնարկ մը նետելով): Հիանալի՛, հիանալի՛. ճի՛շդ որ ճգնարան:

Երուանդ — Այո՛: Երբ դուրսի աշխարհքի ունայնութիւնը ինծի կը տաղտկացնէ, կու գամ կը քաշուիմ իմ այս պատկեռնիս չորս պատերուն մէջը և հայեացքս յառած հո՛ն, ծովո՛ւն ու այս ծառերուն՝ կը թաղուիմ մտածումներուս ու իմ ներքին աշխարհքիս մէջ: Կը մտածեմ ու կ'աշխատիմ: Մարդս ինքն իր մէջ, ինքն իր ներքին, իր սիրած, իր չինած, իր ուզած աշխարհքին մէջն է, որ կրնայ միայն գոհ ըլլալ: Թէ չէ՝ դուրսի աշխարհքը ա՛չ մէկ բան իր տեղը

չէ դրած. ամեն բան հակառակն ու անմիտ։ Դէ՛, նստէ՛. ինչքա՞ն ուրախ եմ, որ եկար. նստի՛նք, խօսի՛նք, յիշենք անցեալը, մեր ուսանողական քաղցր օրերը։

Վահրամ — Երևակայէ՛, որ այսօր քիչ մը դժուար հարց է առիկա. ես փոքրիկ խնդիրքով մըն եմ եկեր քեզի։

Երուանդ — (Ծիծաղով)։ Հասկցա՛յ, հասկցա՛յ։ (Կատակով)։ Բայց առաջուընէ ըսեմ որ չունիմ։

Վահրամ — Ի՞նչ։

Երուանդ — (Բերքն ու ցուցամատը իրար խեղով)։ Մի՛ վախնար, կը ճարեմ։

Վահրամ — (Ժպտուն)։ Չէ՛ անհոգ եղիր. այս անգամ խնդրածս պարտք չէ։ Կամ եթէ... կ'ուզես, այո՛, բայց քիչ մը ուրիշ տեսակի։

Երուանդ — Խրթին կը խօսիս։

Վահրամ — Չէի՞ր կրնար, ա՛յսպէս, կէս ժամուան մը չափ քու այս ցեխանոցդ ինծի փոխ տայիր։

Երուանդ — (Զարմանքով)։ Աչխատանո՞ց։ Խնդրե՛մ, խնդրե՛մ, եթէ քեզի որևէ բանի մը պէտքի գալ կրնայ։ Ամբողջովին, իր եզած-չեզածով, բոլորը քու տրամադրութեան տակ։

Վահրամ — Այո՛։ Շնորհակալ եմ։ Այն տեղն կը խնդրէի որ իմաց տայիր օրիորդ Հարևնցին, որ ես հոս եմ. և խնդրե՛մ, ինչքան կարելի է շուտ։

Երուանդ — (Ապշած)։ Վա՛յ. այսպէս ըսուած... ժամադրութիւն մը. դո՞ւն... (Աչքերը շփելով)։ Վահրա՛մ, ասիկա դո՞ւն ես։

Վահրամ — Դնա՛, գնա՛, առաջ իմաց տուր, եաքը կը զարմանաս։

Երուանդ — (Սաստիկ զուարճացած)։ Մեր վահրաճն ու սիրային ժամադրութիւն. աքանչելի է, աքանչելի։ Նա՛, ալ ուխարհքիս երեսին անկարելի բան չկայ։ Չէ՛, ազբա՛ր, մեր Պօլսի օդը վրագ եկեր է։ Ա՛յս վայրկեանիս (Կ'երթայ կը կոխէ գանգին կոճակը)։ Եւ ինչպէս կը տեսնեմ ճաշակդ ալ տեղն է։ Տեսէ՛ք, է՛, ո՛ր տեսակէն է կուսը մեկներ. Հարևնցին աղջի՛կը։ (Կը ցատ սեղանին առջևը ու երկու տող խօթծելով)։ Ոչի՛նչ, ոչի՛նչ. պատւո՛։

Բ

Մարիամ — (Տասնրհինգ-տասնվեց տարեկան ցիւար ու բուխ աղջիկ մը, հայեացքը միշտ գետին, ձեռքերը գոգնոցին։ Կը մտնէ ու դռան մօտ կը կենայ)։

Երուանդ — (Վեր ցատկելով ճամակը կը դնէ աղջկան ձեռքը)։

Ա՛ռ սա նամակը, կը տանիս դիմաց ու ինքդ քու ձևոքովդ կը յանձնես օրիորդ Մարիին։ Հասկցա՞ր։

Մ ա ր ի ա մ — (Գլխով ի՛ըն)։

Ե ր ու ա ն դ — Բայց չո՛ւտ, հիմա՛, անմիջապէ՛ս։ Հապա՛, քեզի տեսնեմ։

Մ ա ր ի ա մ — (Կ՚ըսապէ դուրս)։

Վ ա հ ր ա մ — Ի՞նչ աղջիկ է սակայն։

Ե ր ու ա ն դ — Խեղճ որբ մըն է։ Հազիւ է ազատուեր վերջին կոտորածէն։

Վ ա հ ր ա մ — Ո՞ր կոտմերէն։

Ե ր ու ա ն դ — Հաստատ չդիտեմ. կարծեմ Տրապիզոնի մօտերէն։ Չէ՞ որ մենք ալ ան կոտմերէն ենք մօրս դծով։ Տիպի՞կ դէմք է, չէ՞։

Վ ա հ ր ա մ — (Տխուր) Այո՛, չա՛տ։

Ե ր ու ա ն դ — կեանքը դրեր է իր կնիքը։ Մ՛յ, նայէ՛։ (Կը վերցընէ եռոտանիի մը վրայի ծեփիկ երեսեղ բաց լարը ու կը մօտեցընէ մոմը)։ կը հաւնի՞ս։

Վ ա հ ր ա մ — Վա՛յ, քանդակե՞ր ես։ Յաջո՛ղ է, չա՛տ յաջող։

Ե ր ու ա ն դ — Հապա ի՞նչ ընէի. մէյ մը, որ չա՛տ տիպիկ էր, իսկոյն աչքս խածաւ. մէյ մըն ալ, որ որքն ու խեղճը moderne ապրանք է հիմա, կը քշուի։ (Մոմը սեղանին դնելով)։ Վա՛, սա ի՛նչ սոսկալի փոթորիկ է. վա՞յ, թէ չեկաւ, մե՛ր ազայ։

Վ ա հ ր ա մ — Ո՞վ։

Ե ր ու ա ն դ — Ո՞վ պիտի ըլլայ. Մարի՛ն։

Վ ա հ ր ա մ — (Զարգ) կու գա՛յ։

Ե ր ու ա ն դ — (Կը նայի ու կը խնդայ) Ուրեմն... ուրեմն արգէն ձուկը ուռկանիդ մէջն է։ Բարի յաջողո՛ւմ։ Ոչի՛նչ. գուցէ քիչ մը քարբիզ, քիչ մըն ալ տարօրինակութիւն, բայց en somme, ոչի՛նչ, դէշ աղջի՛կ չէ՛։ Իսկ անոցի՞ք, բան գիտե՞ս։

Վ ա հ ր ա մ — (Անտարբեր ուսը կը ցրնցէ)։

Ե ր ու ա ն դ — Պա՛հ, կ՚երեւակայեմ Հարենցի կատղած դէմքը։ (Ուրախութենեն ծափ կու տայ)։ Սքանչելի բան է դուրս գալու. վաղը երթամ քիչիկ մը վէրքը քրքրեմ, տեսնեմ պոռայ պիտի։ (Քիչ մը լռե.)։ Ուրեմն ալ կը դառնաս Պօլսեցի, տուն-տեղ. երեւի տասնեակ հազար մըն ալ կը փրցընես. աղբարը չա՛տ է աքլորանալու, բայց մայրը կակուղ է՝ կու տայ։ Եւ... և Միաս-բարո՛վ երկիր-մերկիր,

ժողովուրդ-մողովուրդ և որ ըսա կարգին։ (Մեհրմօրեն աւնոր ուսին զարնելով)։ *Է՛, կեանքն իր ճանրան ունի, տղա՛ս։*

Վ ա հ ր ա մ — (Լուռ ու ջեղս կը նայի աւնոր)։

Ե ր ու ա ն դ — *Հապա՛. երազը որքան ալ սիրուն ըլլայ ու աստուածներէն ղրկըւած, երա՛զ է նորէն. ուչ կամ կանուխ արթընանք պիտի։ Է՛, հոգի՛ս, հոգէ ևնք չինուած ու կապուած հոգին։* (Սիրս տալու ու մխիթարելու ջեղսով մը)։ *Դուն առաջինը չե՛ս, ո՛չ ալ վերջինը։* (Ցանկարծ խօսուածքը փոխելով)։ *Բայց քիչ մը աւելի դրական խօսինք. հիմա ի՞նչ է քու միտքդ։*

Վ ա հ ր ա մ — (Կարծես արթնցած) *Ինչպէ՞ս։*

Ե ր ու ա ն դ — *Երևի, նոր ծրագիր մը, բան մը կ'ուենեանաս։ Հիմա ի՞նչ ընել ես մտադիր։*

Վ ա հ ր ա մ — (Մտամոլար)։ *Ինչ ընել եմ մտադի՞ր։*

Ե ր ու ա ն դ — *Հա՛, հա՛։*

Վ ա հ ր ա մ — (Ուսը կը ցրնցէ)։

Ե ր ու ա ն դ — (Խնդալով)։ *Այսի՞նքն։ Շա՛տ բան չհասկցայ քու ուսէդ։*

Գ

Մ ա ր ի ա մ — (Կը մտնէ ու կը կենայ դրան մէջ)։

Ե ր ու ա ն դ — *Նա՞, տուի՞ր։*

Մ ա ր ի ա մ — (Գլխով կ'րնէ)։

Ե ր ու ա ն դ — *Կարգա՞ց։*

Մ ա ր ի ա մ — (Գլխով կ'րնէ)։

Ե ր ու ա ն դ — *Բան չըսա՞ւ։*

Մ ա ր ի ա մ — (Գլխով բացասական)։

Ե ր ու ա ն դ — *Ազէ՛կ. գնա՛։*

Մ ա ր ի ա մ — (Կ'ուզուրւի դեպի դուրս)։

Վ ա հ ր ա մ — *Ազջի՛կ, կեցի՛ր։* (Կ'երթայ ու առաջց այլևայլութեան կը բռնէ աւնոր ծնօտը ու դէմքը կը բարձրացնէ դեպի վեր, դեպի լոյսը)։ *Ի՞նչ է քու անունդ։ Ի՞նչ. Մարիա՞մ։ Ա՛ռ ե՞րբ էր, որ ձեր գիւղը կոխեցին։ Առաջ հարկէ մորթեցին քու հայրդ, եղբայրներդ, քար ու քանդ ըրին տուն ու տեղդ, ունիմ-չունիմդ, քշեցին տարին քոյր ու հարսներդ, չէ՞։ Մնաց մայրդ, ան ալ չորցաւ, չորցաւ, մինչև հատաւ ու վերջացաւ։*

Մ ա ր ի ա մ — (Կ'րսեղի ևնծկլտալու՝ ձայնը խեղդել ջանալով)։

Վ ա հ ր ա մ — *Ազէ՛կ, ազէ՛կ, բան չկայ. սովորակա՛ն պատմութիւն։*

Ե ր ու ա ն դ — Ինչո՞ւ կը տանջես խեղճը։ Թո՛ղ որ երթայ։

Վ ա հ ր ա մ — (Առանց անոր խօսքերուն ուշ դարձընելու)։ *Մի՛ լար, աղջի՛կ, լալու բան չկայ։*

Ե ր ու ա ն դ — Թող լայ, վնաս չունի։ (Թեթեւ մը աղջկան բեւեռ հրելով) *Գնա՛, գնա՛։*

Մ ա ր ի ա մ — (Դուրս)։

Ե

Ե ր ու ա ն դ — Թող լայ, վնաս չունի. կը թեթեւնայ։

Վ ա հ ր ա մ — (Վայրի խնդուքով) *Թեթեւնա՛յ, լա՛յ՝ որ թեթեւնայ... Իսկոյն կ'երեւայ, որ սաբատիելի քնքուշ սիրտ ունիս, է՛։* (Յանկարծ լուրջ ու բարկացած) *Ո՛չ, չիմա՛ր, ո՛չ, առիկա լալով չէ թեթեւնար, ո՛չ լալով, ո՛չ ալ քանդակելով. առիկա քու գիտցած ցաւերէդ չէ՛։ Ո՛չ թէ լալ, այլ...* (Խօսքը կ'ընդհատէ Մարիի ներս մտնելը տեսնելով)

Զ

Մ ա ր ի — (Կը մտնէ առագ, երկար աննշուճոցի մը մէջ ամբողջովին փաթթուած։ Մազերը հովեն թափուած են նակտին ու իմին ալ շնչաս)։

Ե ր ու ա ն դ = Ա՜հ, օրիո՛րդ Մարի։ Խնդրե՛մ։ (Աննշուճոցը աղջկայ ուսեն առնելով)։

Մարի ու Վահրամ հարցական ու տեսակ մը յարձակողական կեցած են իրարու դէմ ու կը նային իրար։

Ե ր ու ա ն դ — (Վահրամին) *Եթէ ինծի պէտք ունենաս՝ սեղմէ՛ կոճակը։* (Դուրս)։

Է

Մ ա ր ի — Առաւն չեկա՛ր։

Վ ա հ ր ա մ — Եկո՛ւր, եկո՛ւր նաեւ։ Փառո՛ս... ինչպէ՞ս ըսեմ, որ քեզի համար պարզ ըլլայ... Արդէն դուն... դուն... է, ինչքան

կարճ, այնքան լաւ։ Մարի՛, վազը այս ժամանակ պիտի ըլլամ չոգենաւին վրայ, դէպի Տրապիզոն։

Մ ա ր ի — (Կեցած է անշարժ ու անխօս)։

Վ ա հ ր ա մ — Ես արդէն քեզի ըսեր էի։ Չէ՞, դուն գիտէիր, որ ասիկա պատահելու էր. եղաւ իմ կարծածէս քիչ մը աւելի կանուխ։ (Ինչ մը լուռ)։ Դուն գիտե՞ս, չէ՞, թէ ես որքան... Դուն կը հասկընա՞ս, չէ՞, հիմա իմ դրութիւնս։ (Ինչ մը լուռ)։ Ինչո՞ւ ես լաւ, չխօսի՞ս։

Մ ա ր ի — (Հանդարտ վերցնելով անձրեւանոցը աթոռին)։ Երթաս բարո՛վ, բարեկա՛մս, բարի ճանբա՛յ։ (Կ՚ուղղուի դէպի դուրս)։

Վ ա հ ր ա մ — Մարի՛, Մարի՛։

Մ ա ր ի — Դեռ ըսելի՞ք ունիս։

Վ ա հ ր ա մ — Թո՛ղ, Մարի՛, թող այդ սառնութիւնը, թո՛ղ այդ կեղծիքը։ Մօտ եկուր, խօսէ՛։

Մ ա ր ի — Ի՞նչ կ՚ուզես, որ ես խօսիմ քեզի, երբ դուն ինքդ ամեն բան վճռեր ես ու կարգադրեր։ (Ծաղրով) Վազը այս առնն կ՚ըլլաս չոգենաւին վրայ, դէպի Տրապիզոն։ Երթա՛ս-բարով, ուրիշ ի՞նչ կրնամ ըսել։ Ես ո՞վ եմ որ, ես ինչպա՞ս եմ որ. քեզի համար ի՞նչ նշանակութիւն ունի իմ գոյութիւնս, ի՞նչ արժէք։

Վ ա հ ր ա մ — Մարի՛։

Մ ա ր ի — Լ՛, ձգէ՛, հոգիդ սիրես։

Վ ա հ ր ա մ — Ես վճռեր եմ, ինչ որ պարտական էի վճռելու. ուրիշ կերպ վարուիլ չէի կրնար։

Մ ա ր ի — (Զարտցած)։ Լ՛, պարտակա՞ն, պարտակա՞ն, միայն երբ խօսքը ուրիշներուն համար է։ (Անձրեւանոցը նորեն աթոռին նետելով)։ Իսկ ինծի՞, ինծի պարտական չե՞ս։

Վ ա հ ր ա մ — Դո՛ւն, սիրելի՛ս... առ ուրիշ բան է։

Մ ա ր ի — (Հեգնեռեռ տաճնալով)։ Ես կ՚ապրէի ինծի համար, գոհ թէ դժգոհ, իմիններուս հետ, ես ալ անոնցմէ մէկն էի. դուն եկար չուռ տուիր մէջս ամեն բան. նոր կեանքի յոյսեր, նոր չարժում, նոր յոյզեր։ Ես հիմա օտար մըն եմ իմիններուս մէջ, խորթ ու կորըւած իմ առնս մէջ։ Մինա՜կ, մինա՜կ, երբ դուն քովս չես, մինա՜կ բոլորովին, երբ քու չունչդ չի չոյեր ինծի։ Եւ ահա՜ կ՚ըսես, որ ձգես պիտի ու երթաս, (ծաղրով) որ վազը այս առնն կ՚ըլլաս չոգենաւին վրայ, դէպի Տրապիզոն։

Վ ա հ ր ա մ — Ա՛յ, եկեր եմ, որ խօսինք, կարգադրենք։ (Մօտենալով կը բռնէ ձեռքը)։ Ըսէ՛, ընե՛մ, ինչ որ կրնամ։

Մ ա ր ի — (Ցուսահատ գլուխը օրօրելով)։ Խօսելու ոչինչ չկայ. ես դիտեմ քեզի. վճռեր ես ու պիտի երթաս. պիտի երթաս ու մնանիս։

Վ ա հ ր ա մ — Չէ՛. ինչո՞ւ. այդպէս ալ սև մի՛ տեսներ։

Մ ա ր ի — Է՛, ձգէ՛, սակը քու արուեստը չէ. դուն ինքդ ես ըսեր՝ «գնացողին դարձ չկայ»։

Վ ա հ ր ա մ — (Ուսերը ցրնցելով)։ Ո՞վ գիտէ. քա՛զդ։

Մ ա ր ի — (Բիչ մը ատեն կը նայի աւուր շեշտ ու լուռ եւ յանկարծ յարով կը փարթրուի վիզը)։ Մի՛ երթար։ Ես չեմ կրնար ապրիլ առանց քեզի, չե՛մ կրնար, հոգի՛ս, կեա՛նքս։ Եկո՛ւր, եկո՛ր լսէ՛ ինծի։ (Աւելի ամուր սեղմըւելով տուն, կը հաշէ բազմոցին վրայ)։ Ես ամէ քեզի բոլորը, ինչ որ ունիմ, բոլորը ինչ որ կրնամ ունենալ, ա՛ռ, առ՛ր, առ՛ր ընկերներուդ, Թո՛ղ տանին, Թո՛ղ ուզարկեն. մինչէ տակա գործ չէ՞։ Մինչէ տակա հերիք չէ՞։ Բայց դուն մի՛ երթար, դուն մնացի՛ր հոս, մնացի՛ր մօտս. մնացի՛ր ինձի համար, քու Մարիդ համար։

Վ ա հ ր ա մ — (Թաղելով դէմքը աւուր բեւեռուն մէջ)։ Ա՜խ, իմ խե՛ղճ Մարիս, իմ բազդս, իմ դժբաղդս։

Մ ա ր ի — Մե՞ղք է, չէ՞, մեղք է քու Մարիդ։ Միայն քեզի ունի աչխարհիս երեսին, միայն քեզի՛, քեզի՛. չե՞ս Թողներ տնիկա, վահրա՛մ, չե՞ս Թողներ տնիկա երեսի վրայ։

Վ ա հ ր ա մ — (Կոտրած)։ Ա՜խ, չդիտե՛մ, չդիտե՛մ...

Մ ա ր ի — (Սիրտ առած)։ Կ՚ապրինք միասին, ի՛նչնեք հոսկէ, ինչ որ կրնանք, ինչ որ մեր ձեռքէն կու գայ։ Չե՞ս երթար, չէ՞, վահրա՛մ։ (Ամուր գալարուելով) Իմ արե՛ւս ես դուն, դուն իմ չո՛ւնչս ես, առանց քեզի լո՛յս չկայ, օ՛դ չկայ առանց քեզի. կեա՛նքս ես դուն, կեա՛նք, կեա՛նք...

Վ ա հ ր ա մ — (Ցանկած կ՚ուզուի բնդոս ու դեռ այլեայ բեւեռուն մէջ, ականջ կը դնէ դեպի դուրս. ուր փոթորիկը աւելի կ՚սաստկացած, հովը կատաղի ու մերթ բնդ մերթ փայլակ)։ Իսկ հո՞ւ... Իսկ հո՞ւ... Սը՛ս. լսէ՛, լսէ՛. չե՞ս լսեր, Մարիամն է որ կուլայ։

Մ ա ր ի — (Ալեծած)։ Ի՞նչ Մարիամ, խե՞ղճ ես. հովն էր, վախեց տերևներուն մէջէն։

Վ ա հ ր ա մ — (Աղջկայ գիրկնեն եր-եր բաշուելով)։ Մարիա՛մը, Մարիամը, բոլո՛ր Մարիամները։ Ա՜յ, գիւղը, որ կ՚ապրի. ամբո՛ղջ գիւղը. ա՛յ, տա՛յրը, նզբա՛յրը։ Նայէ՛ գիւղի՛րը, գիւղի՛րը, բոցի՛րը։

Մ ա ր ի — (Վախցած)։ Ինչե՞ր կը խօսիս, վահրա՛մ։ Ի՞նչ բոց, ի՞նչ բան, աչքիդ կ՚երեւայ. փայլակն էր որ անցաւ։

Վ ա հ ր ա մ — Հապա այդ թչուառնե՞րը, որ կը կանչեն, կը կանչեն ցաւով ու տանջանքով, կը կանչեն բոցերուն մէջէն, կը կանչեն կիրճերուն մէջէն, կը կանչեն ճանըապայ ցոյց տալու, կը կանչեն կուրծքը դէմ տալու. ամբողջ գիւղի՛ր, գիւղի՛ր, ամենքը մէ՛կ բերան, ամենքը մէ՛կ ձայնով... Չե՞ս լսեր, ականջ դիր։

Մ ա ր թ — (Ինքը սարսափահար ու աչխատելով որ հանգստացնէ)։ *Ատիկա ծո՛ւմ է, հոգի՛ս. ծո՛ւմ է կատզեր ու կը մռնչէ։*

վ ա հ ր ա մ — (Ոտքի կը ցատկէ տեսակ մը յաղթական)։ *Այո՛. ատիկա ծռմ է կատզեր ու կը մռնչէ. ատիկա ծռմ է ցո՛ւբ ու տա-ռապանքի, որ կատզեր է վերջապէս, որ կատզեր է ու կը մռնչէ։ Ա՛տ է ճանըան, ժոզովուրդի մը բարձրացման, ժոզովուրդի մը ազատ-ման միակ ճամբան։* (Մեղմացած)։ *Դէ՛, Մարի՛, տո՛ւր ինծի վերջին համբոյր մըն ալ ու մնաս-բարով։* (Դիմարկը սեղանին վերցնելով)։ *Ամեն մարդ իր ճանբան։*

Մ ա ր թ — (Կը նետուի աճոր նաւթուն վրայ, կը կենայ ձիգ ու հպարտ, ձեռքի վճռական շարժումով մը)։ *Ես կ՚արդիլե՛մ քեզի։*

վ ա հ ր ա մ — (Ապշած)։ *Ինչպէ՞ս։*

Մ ա ր թ — *Ես կ՚արդիլեմ քեզի։*

վ ա հ ր ա մ — *Բայց հայրենիքս է, որ կը կանչէ։*

Մ ա ր թ — *Ես կ՚ատե՛մ քու հայրենիքդ։*

վ ա հ ր ա մ — (Խիստ)։ *Մարի՛, քու հայրենի՛քդ ալ է։*

Մ ա ր թ — *Ի՞մ։ Իմ հայրենիքս գո՛ւն ես և միայն դուն. իմ ամեն ինչս դո՛ւն ես, և միայն դուն. քեզմէ դուրս ոչինչ չկայ, ոչի՛նչ, ոչի՛նչ։*

վ ա հ ր ա մ — *Թո՛ղ, Մարի՛, թո՛ղ. ես իմս չեմ։*

Մ ա ր թ — (Տիրաբար)։ *Դուն ի՛մս ես, ի՛մս, իմս։*

վ ա հ ր ա մ — *Զգիտես՝ ինչ կը խօսիս։*

Մ ա ր թ — *կեցի՛ր։ Ուրեմն վճռա՞ծ ես, վերջնապէս։*

վ ա հ ր ա մ — *Վճռողը ե՛ս չեմ։ Վճռողը հոգեպէս ինկած ժոզո-վուրդի մը ազնըւացման պահանջն է, սորուկ ու ոտքի տակ ինկած ժոզովուրդի մը յուսահատ ճիգը։*

Մ ա ր թ — (Զոր)։ *Ե՞րբ պիտի մեկնիս։*

վ ա հ ր ա մ — *Ըսի՛ արդէն, վաղը այս առն կ՚ելլամ Սև ծո-վուն վրայ։*

Մ ա ր թ — *Սև՛... այո՛, սև՛։ Եւ ասիկա քու վերջին խո՞սքդ է։*

վ ա հ ր ա մ — (Ուսը կը ցնցէ)։

Մ ա ր թ — *Ազէ՛կ։ գիտցի՛ր և ի՛մ վերջին խօսքս։ Վաղը այս առն մեր առնը կ՚ըսպասե՛մ քեզի։ Զուչանա՛ս, վահրա՛մ, եթէ իմ կեանքս արժէք մը ունի քեզի համար։*

վ ա հ ր ա մ — (Վախցած)։ *Մարի, Մարի՛, չես ըներ այդ չիմա-րութիւնը։*

Մ ա ր թ — *Ո՛չ, պէ՛տք է։ Կ՚ըսես պէտք է, որ երթաս. ուրեմն պէտք է։ Գնա՛, ես բանի արժէք չեմ քեզի.ո՛չ կրնամ, ո՛չ կ՚ուզեմ. միայն դիտցի՛ր, որ երթաս պիտի դիակիս վրայէն։*

Վ ա հ ր ա մ — Բայց քու ըրածդ անգութ բան է, Մարի՛, անգութ ու աւելորդ։ Իմ տանջանքս հերիք է ինծի։ Խո՛սք տուր ինծի. ըսէ՛, ըսէ՛, որ այդ տեսակ անողոք քայլ չես առներ, Մարի՛, ըսէ՛, որ դատարկ սպառնալիք էր ատիկա։

Մ ա ր ի — (Վիրաւորուած)։ Սպառնալիքը չի՛ վայլեր դէմքիս, վահրամ, ինչպէս և քեզի՛։ Լեզուս խօսեր է քեզի մի՛շտ և միա՛յն ճշմարտութիւնը։ Պիտի գայ, ինչ որ գալու է անխուսափելի, ինչ որ պրուած է ճակտիս։ (Աննկարեւնցը աթոռին վերցընելով)։ Վաղը այս ժամին կ՚ըսպասեմ քեզի։

Վ ա հ ր ա մ — Մարի՛...

Մ ա ր ի — (Արցունքները զսպելով)։ Կ՚ըսես՝ ուրիշ ելք չունիս, կ՚ըսես՝ ատիկա է քու ճանրագդ, քու պարտքդ։ Ես կը հասկընա՛մ քեզի, և գիտե՛մ որ անուժ եմ։ Գնա՛։ Միայն հասկըցի՛ր, որ ես ալ ուրիշ ճանրաց չունիմ։ Ես իմ հոգիս տուի քեզի, անվերապա՛րձ, անվերապա՛հ... Աւանդ հոգի չեմ ապրիր։ (Աննկարեւնցը կը նեռի ուսերուն)։ Եթէ կ՚ուզես ապրիմ՝ մնացի՛ր, մնացի՛ր մօտս, բայց կամքո՛վդ, բայց առա՛նց խղճի խայթի, եթէ կրնաս։ Ես արգելք մը չե՛մ քեզի, ես չեմ ուզեր արգելք ըլլալ քեզի։ Ես չե՛մ ուզեր, որ քեզի նուաստ զգաս ինծմով, ես կ՚ուզեմ որ դուն հպա՛րտ ըլլաս ինծմով։

Վ ա հ ր ա մ — Մարի՛, այդ բեռը մի՛ դներ խղճիս։

Մ ա ր ի — Ի՞նչ բեռ։ (Խարխդաւոր)։ Դուն լսեր ինծի, մեռնիլ պիտի դիանայիր։

Վ ա հ ր ա մ — (Թափով)։ Ո՛չ. ես այդ տեսակ մահուան համար չըսի քեզի։

Մ ա ր ի — (Տխուր)։ Ի՞նչ. ուրեմն կ՚ուզես, որ հոգիս չորնայ ու կծկըռի. չէ՞ որ դուն կ՚երթաս կծկըռած հոգիները բանալու։

Վ ա հ ր ա մ — (Յափշտակուած ու աղաչաձիով)։ Իմ անգին աղջիկս, իմ ազնի՛ւ աղջիկս, չէ՛, չե՛ս ըներ, այդ խենթութիւնը, չե՛ս ըներ։ Դուրջէ կարողանամ չուտով վերադառնալ։

Մ ա ր ի — (Տխուր կը ցրցկէ ուսը)։

Վ ա հ ր ա մ — Դուրջ՛ և... ո՞վ գիտէ. դուրջ դուն ալ, դուրջ քեզի ալ... այն ատեն իմաստ կ՚ունենայ կեանքիդ զոհը։ Բայց այսպէ՞ս. անկարելի է։ Աւելորդ արիւն է ատիկա, բոլորովի՛ն աւելորդ...

Մ ա ր ի — Աւելորդ է՝ արգիլէ՛։ Քու ձեռքդ է ամեն ինչ։ Վաղը այս առեն կ՚ըսպասեմ վճռիդ։ (Կ՚երթայ դեպի դուռը)։

Վ ա հ ր ա մ — (Խեղճի պես կը նեռուի վրան՝ բռնելու, արգիլելու գրկելու շարժումով մը)։

Մ ա ր ի — (Յանկարծ կը դառնայ, պաշտպանուելով եւ կը բաւուի դեպի դուռը ու ձեռքի խոտոր արգիլումով մը)։ Ո՛չ։

Վայրկեան մը քարացած կը դիտեն իրար։

Մ ա ր խ — (Ցանկարծ կը կծկըւի անձրեւոցին մէջ ու դուրս)։

Վ ա հ ր ա մ — (Նախ կեցած է ինչ մը ատեն անշարժ, ինչ-ինչ կը քուլցայ, ձեռքերը վար կը սահին ու ինք սւ բերնին կ'իյնայ բազկաթոռին. հեծկլտուք)։

Դուրսէն կը լսուի հովին թափը, ծառերուն վայրի իրարանցումը ու ծովուն խուլ աղմուկը։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

Ընդարձակ սրահ մը

Ճակատը լայն ու բաց դուռ մը, որ ծովահայեաց պատշգամբը կը հանէ. դրան երկու կողմէն երկու մեծ լուսամուտ: Ձախէն կողմնակի խորքի դուռը Մարիի սենեակը կը տանի, աջէն առջեւի դուռը դէպի դուրս: Թեթեւ ու հարուստ կահաւորում: Առատ կանաչ ու ծաղիկներ մեծ ու փոքր թաղարներու՝ մէջ թէ՛ ներսը եւ թէ պատշգամին վրայ:

Արեւը մայր է մտած: Երկինքն ու ամպերը, պատշգամն ու ներսը ամեն բան ողողուած է վերջալոյսի նարինջ-կարմիր պայծառ ճաոագայթներուն մէջ:

Ա

Մ ա ր ի — (Կեցած է ձեռիերը եռին, մէջքն ու գլուխը յետած պատշգամի դրացը եւ հայեացքը հեռուն)։

Մ ա յ ր ը — (Նստած կը կարդայ: Ջիչ մը լուռ: Ետքը կ'ըզդուշաբեր կարդալ ու կը նայի աղջկան) *Է՛, հերիք չէ՞, աղջի՛կս։*

Մ ա ր ի — (Կը ցնցըւի, կը նայի մօրը, ետուրջը ու վերջը ետեւն ծովուն)։

Մ ա յ ր ը — Մէյ մը իմանայի՛ ի՞նչ ունիս գլխուդ մէջ, ի՞նչ կը մտմտաս առանձին անվերջ, աղջի՛կս, ի՞նչ կը մտմտաս։

Մ ա ր ի — Նայէ՛, մայրի՛կ, ի՞նչ կարմիր երկինք է։

Մ ա յ ր ը — Ատիկա՞ է մտմտուքդ։

Մ ա ր ի — Նայէ՛, մայրիկ, արիւն ըլլայ կարծես։

Մ ա (ր ը — Հա՞։ (Կարը ծողվելով)։ *Աղուոր իրիկուն է։*

Մ ա ր ի — Այո՛, մայրիկ, իրիկո՛ւն։ (Մտածկոտ ձեռնաձալով դրռնիկն) *Այսպէս ուրեմն, նկատ իրիկունը։*

Մ ա յ ր ը — Ինչպէ՞ս։

Մ ա ր ի — Եկա՛ւ, կ'ըսեմ, իրիկնաւնը, կարմի՛ր, աբի՛ւն իրիկուներն։ (Տեսակ մը յոգնած շարժումով կը նստի բազկաթոռին)։

Մ ա յ ր ը — Երբ որ ատանկ կարմիր է իրիկունը, կը նշանակէ եղանակները փոխուելու են։ Ալ ի՞նչ երկար բարակ մտածելու բան կայ հոս։ Ելի՛ր, ելի՛ր, վա՛ր նկուր, երթանք քիչ մը այգին, կը բացուի՛նք։

Բ

Ե ր ու ա ն դ — (Կ'երեւայ սեմին)։

Մ ա յ ր ը — Ա՛յ, ի՛նչ ազկ եղաւ, որ եկաք, պարո՛ն Երուանդ։ Առէ՛ք Մարին ու իջէ՛ք այգին։ Եկէ՛ք ընկուզենիներուն տակ։ (Դուրս)։

Գ

Ե ր ու ա ն դ — (Մօտենալով օրիորդին)։ Բարե՛ ձեզի. ի՞նչ բանի էք։

Մ ա ր ի — (Դլուխը կը բարձրացնէ ու լուռ կը նայի անոր)։

Ե ր ու ա ն դ — Ի՞նչ էք նստեր հոստեղ մինակ։

Մ ա ր ի — Ես... (Ինչ մը մտածելէն եսը)։ Կ'ըսպասեմ։

Ե ր ու ա ն դ — Կ'ըսպասէ՞ք։ (Ժպտուն) *Որո՞ն կամ ինչի՞ն։*

Մ ա ր ի — Ինչի՞ն։ (Ինչ մը մտածելէն եսը)։ *Ոչինչի՛ն։*

Ե ր ու ա ն դ — Ոչինչի՞ն։ Հրթին է։

Մ ա ր ի — (Լուրջ ու խորհրդաւոր, իր սեմնեակին դուռը վտանգիւ բացելով)։ Ա՛յ, տեսէ՛ք։

Ե ր ու ա ն դ — (Հայեացքը կը լարէ դեպի դուռը, վերջը ժպտուն ու հարցական կը նայի օրիորդին)։

Մ ա ր ի — Չէ՞ք տեսներ։

Ե ր ու ա ն դ — Ի՞նչը։

Մ ա ր ի — Չէ՞ք տեսներ։

Ե ր ու ա ն դ — Մո՛ւթ է հոն. երեւի ձգուած են վարագոյրները։

Մ ա ր ի — Ձգուած են ձի՛ր վարագոյրները. երբ որ բոլո՛ր կը տեսնէք։

Ե ր ո ւ ա ն դ — (Նեղսալով)։ *Այսօր ի՜նչ կատակի էք տրամադրուած։ Մինչդեռ երեւակայեցէ՛ք, մարդիկ մեղանչական են, միշտ դէշ բաներ կը մտմտան... Երեւակայեցէ՛ք, ես կարծեր էի, որ դուք հիմա գրգռուած ու ջղային էիք ըլլալու, գոնէ, ա՛յնպէս, քի՛չ մը։*

Մ ա բ ի — *Եւ ինչո՞ւ։*

Ե ր ո ւ ա ն դ — *Չէ՞, որ դնաց մեր հերոսը. մե՛ր կամ ձե՛ր, ինչպէս որ կ՚ուզէք։*

Մ ա բ ի — (Հանգիստ)։ *Գնա՞ց. արդէ՞ն։*

Ե ր ո ւ ա ն դ — *Գոնէ երթալու էր. երէկ գիշեր մթէ ձեզի ոչինչ չըսա՞ւ։*

Մ ա բ ի — (Հանգիստ) *Այո՛, ամեն մարդ իր ճանքան ունի երթալու։*

Ե ր ո ւ ա ն դ — *Հրաշալի՛ է, հրաշալի՛ է ձեր այդ անվրդով չարժումը։ Չէ, ես չէի սխալած։ Ես իսկոյն ըմբռնեցի, որ ձեզի համար, սա՛նկ սիրուն քարբիզ մըն էր ասիկա, ուրիշ ոչինչ. և բարեբա՛ղդաբար։ Ես տեսնել չեմ կրնար այն տանդխմենդալ տափակութիւնը, որով երկու էակ կը փակչին իրար ու կը ճճան, և ալ ուրիշ ոչինչ տեսնել չեն ուզեր ո՛չ չուրջը, ոչ վերը, ո՛չ կեա՛նք, ո՛չ գեղեցկութիւն։ Մէկ խօսքով՝ չո՛ւտ նեղ բան, չո՛ւտ արխայիկ ու գռեհիկ։*

Մ ա բ ի — (Նազկոս)։ *Այո՛. չուտ արխայիկ ու գռեհիկ...*

Ե ր ո ւ ա ն դ — *Ա՛յ, ես կը հասկընամ ձեր զգացումը։ Գուցէ ինքներնիդ ալ չէք գիտակցիր, բայց ձեր հոգին moderne է։ Եւ ես ատիկա է որ կը պաշտամ ձեր մէջը, ձեր այդ լա՛յն, բա՛ց հոգին։ Ոչ գեղեցկութիւնն է՝ հոն ալ կը հակիք. իսկ գեղեցկութիւնները չատ են, չատ ու չուտ, չուտ ու վազանցիկ, այսօր կայ, վաղը հատաւ։ Այսպէ՛ս, քիչ մը զայրոյթ, քիչ մը ճակատը կնճռել, վերջն ալ ձեր այս սքանչելի փիլիսոփայութիւնը. «ամեն մարդ իր ճանքան»։*

Մ ա բ ի — (Լուրջ)։ *Իսկ ես քեզ։*

Ե ր ո ւ ա ն դ — *Ինչպէ՞ս։*

Մ ա բ ի — *Իսկ ե՞ս քեզ, ե՞ս քեզ. ի՞նչ կը կարծէք։*

Ե ր ո ւ ա ն դ — (Ժպտուն)։ *Ե՞ս քեզ... Ես քեզ նո՛ր ծագիկ ու նո՛ր մեղր։* (Խորհրդաւոր)։ *Կեանքը վայելել դիտալը ընտիր հոգիներուն բաժինն է։*

Գ

Ն ե կ ա ա ր — (Կը մտնէ լուռ ու խաժոռ)։

Հ ա բ ե ն ց — (Սաստիկ գրգռուած)։ *Ո՛չ. ես արդէն չափը անցաւ, ես արդէն...* (Տեսնելով Երուանդը կացի կ՚առնէ, բայց զայրոյքը զըս-

պելու աճկարող՝ կը շարունակէ)։ *Լ՛, դուք տանու մարդ էք, վնաս չունի։ Դուք ըսէ՛ք գոնէ, պարո՛ն երդուանդ, դո՛ւք ըսէք։ Ա՛ս ի՛նչ խայտառակութիւն, այս ինչ սկանդալ։* (Մարիին) *Հապա՛, հապա, ասանկ է, երբ մարդ երես կու տայ խոհանոցի ծառաներուն։ Ըսէ՛ նայի՛մ, հիմա ինչով պիտի դոցես ուրիշներուն բերանը։ Ինկեր ենք արար աչխարհքին բերանը, կը լսե՞ս, արար աչխարհքի։*

Մ ա ր ի — (Լուռ ու հանդարտ կը նայի եղբօրը)։

Հ ա ր ե ն ց — *Ի՞նչ կը նայիս երեսս ի վեր։ Բեզի՛ կ՛ըսեմ. չե՞ս լսեր։*

Մ ա ր ի — (Մեխենաբար) *կը լսե՛մ, կը լսե՛մ, արար-աչխարհքի։* (Ցանկարծ կարծես սթափելով) *Աչխարհքի՛։ Ատ ո՞ր աչխարհքէն կը խօսիս ինձի։*

Հ ա ր ե ն ց — (Նախ ապշած կը նայի ինչ մը) *Բիթի՞ս կը խնգաս։ Հոս մինակ դուն չես, հոս մեր անունն ալ կայ, հոս մեր պատիւն ալ կայ։ Չէ՛, չեմ թողներ որ մեր անունը ձգես ամենուն բերանը։ Կը հասկընա՞ս՝ ինչ կ՛ըսեմ։*

Մ ա ր ի — կը հասկընամ, ինչպէս չէ... քո՞ւ անունդ... քո՛ւ անունդ...

Հ ա ր ե ն ց — (Բիրս)։ *Թո՛ղ այդ յիմար խօսուածդ։* (Աւելի հանգիստ, բայց կտրուկ)։ *Լսէ՛, Մարի, քեզի մէկ անգամ ընդմիշտ կ՛ըսե՛մ, որ այդ... այդ տղան միւս անգամ հոս ոտք չդնէ՛ պիտի։ Հասկցա՞ր։*

Մ ա ր ի — (Ցանկարծ, կ՛ուղղուի, կը նայի պատի ժամացոյցին ու ժամացոյցը մատնանիշ ընելով, հանգիստ)։ *Իսկ եմէ հիմա՛, հո՛ս, այս վայրկեանիս ներս մտնելու ըլա՞յ։*

Հ ա ր ե ն ց — Հիմա՞, հո՞ս, հո՞ս... (Բայլ մը կ՛ընէ ծօտեցնելու իրոջը ու վանկերը ծանր շեշտելով)։ *Ուրեմն այս բոլորին տակը բան մը կա՛յ։ Ինձի նայէ՛, տեսնեմ։ Իրա՞ւ է, որ դուն գացեր ես անոր բնակարանը։*

Մ ա ր ի — (Պարզ) *Այո՛. յաճախ։*

Ն ե կ տ ա ր — (Բարձր ու սուր ֆրիչ մը կ՛արձակէ եւ հպարտ ու արհամարհոտ կ՛ացցնի ու կ՛ելլէ դուրս)։

Հ ա ր ե ն ց — (Կեցած է սարսափեն բերանը բաց, առանց գիտնալու ինչ ընելը)։

Ե ր ու ա ն դ — (Ես ֆաուած, ժպիտ մը շրուցիչին անկիւնը)։

Ե

Մ ա ր գ ա ր — (Հագուած ու ֆեսով, կը մտնէ տխուր, ձեռքը ծոցը)։

Մ ա ր ի — (Տեսնելուն պէս կը սպրդնի, ես-ես կ՛երթայ դողդոջուն, միջնէն կը հասնի բիկնաթոռի մը, բիկուճին կը բռնէ մեխենաբար, կը յենուի ու կը մնայ անշարժ)։

Մ ա ր գ ա ր — (Մաճր կուգայ շիտակ դեպի աղջիկը ու զգուշ ձեռքը ծոցին հանելով նամակ մը կը մեկնէ աճառ)։ *Բա՛ւ, որ ասիկա ձեզի յանձնեմ անմիջապէս։*

Մ ա ր ի — (Խեղդուած)։ *Ո՞ւր է ի՛նքը։*

Մ ա ր գ ա ր — *Ինքը… գնա՛ց։*

Մ ա ր ի — (Մաճր առաջ կը բերէ ձեռքը եսեւեն, կ՚առնէ նամակը առանց իսկ վրան նայելու, հանգիստ պատռելու կ՚րսկսի)։

Մ ա ր գ ա ր — (Վրան նեստուելով, արգիլելու շարժումով մը)։ *Ի՞նչ կ՚ընէք, ի՞նչ կ՚ընէք, օրիո՛րդ։ Բաւ՝ չա՛տ, չա՛տ կարեւոր բան է. բաւ՝ որ անպատճա՛ռ, իակո՛յն յանձնեմ ձեզի. բաւ՝ չտպահեմ, որ չա՛տ, չատ կարեւոր է։*

Մ ա ր ի — (Կը դադրեցընէ պատռելը)։ *Ո՞ւր է ի՛նքը։*

Մ ա ր գ ա ր — *Ի՞նքը։ Ինքը՝ ըսի՝ գնա՛ց։ Դրի չոգնաւ։*

Մ ա ր ի — (Հանգիստ եւ կանոնաւոր շարժումով մը կը շարունակէ պատռելը)։

Մ ա ր գ ա ր — *Բայց… բայց, օրիո՛րդ… բայց…*

Հ ա ր ե ն ց — (Կը մօտենայ ու կը հասնի Մարգարի բեւեռը)։ *Ինծի դարձի՛ր, նայիմ, ի՛նչ կը զրուցես։*

Մ ա ր գ ա ր — *Մ՚ինքան համոզեցի, որ չերթայ, ազա՛. առանկ գէշ ժամանակներ են։ Զլսեց։ Է՛, Աստուած հեռը։*

Հ ա ր ե ն ց — *Ա՛ հ՞ա։ որո՞ւ մասին կը զրուցես։*

Մ ա ր գ ա ր — *Վահրա՛մը, ազա՛, քրոջս ազան։*

Հ ա ր ե ն ց — *Ո՛հ… քո՛ւ… ա՛ն… է՛, ի՞նչ է եղեր։*

Մ ա ր գ ա ր — *Երկի՛ր գնաց։*

Հ ա ր ե ն ց — *Երկիր գնա՞ց։*

Մ ա ր գ ա ր — *Հա՛, ազա՛. հիմա ճանրու դրի. հանկէ կու գամ։ Անոր չոգնաւը, ահագի՛ն, ապիտա՛կ, մեր եաւէն կու գար. չուտով հասկէ պիտի անցնի։*

Հ ա ր ե ն ց — (Ապշած կը դառնայ Մարիին, ինչ մը կը դիտէ ու դառնալով նորեն Մարգարին, մեղմացած)։ *Աղէ՛կ. գնա՛ գործդ։*

Մ ա ր գ ա ր — (Դուրս)։

Զ

Հ ա ր ե ն ց — (Մաճր ու մեղմ)։ *Ա՛ս ի՞նչ բան էր, Մարի։ Ինչպէ՞ս հասկընամ քիչ մը առաջուան ըսածներդ։*

Մ ա ր ի — *Ինծի հանգի՛ստ թող։*

Հ ա ր ե ն ց — (Սիրաշահելով)։ *Աղէ՛կ, մի՛ վշտանար. գուցէ քիչ մը խիստ խօսեցայ, բայց… բայց առանկ բա՞ն կ՚ըլլայ։* (Հեռվինեն գաւարթանալով) *Վայրկեան մը հաւատացի բոլորովին. ի՞նչ պիտամ,*

դուն անանկ տարօրինակ բաներ ունիս երբեմն. ինտո՞ր իմանայի, որ խաղ էր ըրածդ։

Մ ա ր ի — Զգէ՛ ինծի հանդիստ։

Հ ա ր ե ն ց — Ազէ՛կ, ազէ՛կ։ (Նոր ծուռիկ մը առնելով)։ Բայց ի՞նչ սկանդալ պիտի ըլլար, Աստուած իմ, եթէ իրաւ եղած ըլլար, ի՛նչ չի գոռար սկանդալ։ Նկատա՛ր, Նկատա՛ր։ (Դուրս)։

Է

Մ ա ր ի — (Կեցած է աճապարժ դեռ միջոց յեղած աթոռին, աչքերը անքարթ կէտի մը յառած)։

Ե ր ու ա ն դ — (Կամաց մը մօտենալով) Անցա՛ծ ըլլայ։

Մ ա ր ի — Թողէ՛ք, խնդրեմ, քիչ մը ինծի առանձին։

Ե ր ու ա ն դ — Է՛ բան չունի՞ք։ դարտա՛կ բան. scène de famille! կը պատահի։ (Խնդալով) Բայց... խոստովանեցէ՛ք, ՛չարացա՞ք, չէ՞, որ վահրամը գնաց։ Անչո՛ւշտ, ո՛չ ինքնին անհաճոյ, խնդիրը հո՛ա չէ. բայց, սա՛նկ, կանացի զայրոյթ մը, որ անիկա կարեց ձեր այդ ոսկի չղթաները, որ չմնաց փրցուց սանձերը։

Մ ա ր ի — (Նախ լուռ ու լուրջ կը նայի անոր, վերջը սրտացաւ ու նպարս) Սանձեր ծամողը գետնէն գացողներն են. վերէն խօսցողը սանձի չի՛ գար։

Ե ր ու ա ն դ — (Երկմիտ)։ Ա՛, իհարկէ...

Մ ա ր ի — (Հպարտ) Եւ ան չէ՛ր ըլլար ան, ինչ որ է՛, եթէ հետը։ Իսկ ես սիրեցի անոր համար, որ ան է՛ր, ինչ որ է՛ր։

Ե ր ու ա ն դ — (Խնդալով) Կը հասկընա՛մ. դեկատա՛նս և էմպրեսիոնի՛զմ. գեղարուեստի վերջի՛ն խօսքը։ Որ կ՛ըսեմ՝ արտիստի հոգի ունիք։

Կը լսուի շոգենաւի խռպոտ սոյլը։

Մ ա ր ի — (Խայթուածի պէս կը ցնցուի, կը սեղմէ ծնօտն ու բռունցքները, առաջ ետ նայելու)։ Ա՛հ։

Ե ր ու ա ն դ — (Նախ կարծես չի հասկրնար, վերջը ծռելով դէպի պատշգամը)։ Ա՛խ, շոգենա՛ւը։

Ը

Մ ա ր գ ա ր — (Ներս ցատկելով՝ աջէն դէպի պատշգամ)։ Նա՛ւը, նա՛ւը։

Անոր ետեւէն կու գան մայրը, Նկատառ եւ Հարենց. բոլորն ալ կ՛անցնին պատշգամ։

Հ ա ր ե ւ ն ց — (Ակնարկելով տեսնել) *Ի՞նչ ալ չիք նաև է ընարեր. փառանի՞ն ուրկէ է, չես հասկընար որ։*

Թ

Ե ր ու ա ն դ — *Երթա՛նք, օրիո՛րդ։ Թաչկինակ մըն ալ դուք չարժեցէք ձեր այդ սանձակոծին։ Ճի՛շդ է, քչիկ մը չատ էր յիմարաւուն. բայց, է՛, ի՞նչ ըրած, ատ ալ վերջապէս բոլոր վերերէն թռչող մարդոց թոյլ կողմն է։ Բան չկայ. երթա՛նք։*

Մ ա ր ի — (Լուրջ ու խեղդուած)։ *Սպասեցէ՛ք դեռ։*

Ե ր ու ա ն դ — *Նորէ՛ն հիանալի։ Դուք այսօր ինձի ուղղակի կ՚ապչեցնէք ձեր չարժուձևերուն ու ձեր խօսքերուն այդ ատիճանի պլատոնիկութեամբը։ Ա՛, հրաշալի էր մանաւանդ քիչ մը առաջ ձեր այն նշանաւոր նամակը պատռելը, ձեր այն պատուածային անդորրութիւնը։ Ատոր փոխարէն ի՞նչ պիտի ընէր, եթէ ուրիշ մը ձեր տեղը ըլլար. լա՛ց, կի՛րք ու յուզում, (Մաղրով) կա՛մ, ո՞վ գիտէ, գնդակ մը ճակտին։ Ըսէ՛ք, ապուշութիւն չէ՞։*

Մ ա ր ի — (Սառն ու յամառ՝ գամած է աչքերը տղուն)։ *Իհարկէ՛, իհարկէ՛։*

Մ ա ր գ ա ր — (Պատգամի դռնեն)։ *Մօտեցա՛ն, մօտեցա՛ն, օրիո՛րդ։* (Կ՚ըսապէ նորեն եռ ու բաշկինակ կը շարժէ)։

Միւսներն ալ խմբուած են ու յենուած են վանդակին։

Ե ր ու ա ն դ — *Երթա՛նք, չանցնի՛։ Վերջին բարև մը.* (Կատակով) *վսեմ հրաժե՛շտ մը դոնէ։*

Մ ա ր ի — (Ամբողջ մարմնով կ՚ուղղուի, սաստիկ լարուած ու լուրջ)։ *Այո՛, իակո՛ն, ա՛յս վայրկեանիս։* (Կը մտնէ իր սենեակը)։

Ժ

Ե ր ու ա ն դ — (Նախ կ՚երթայ դեպի պատգամ, եռ կու գայ նորեն ու մօտենալով աղջկան սենեակի դռանը) *Դէ՛, օրիորդ։*

Ներսէն ատրճանակի պայթիւն։


Ե ր ու ա ն դ — (Սարսափահար կը բարձրացնէ ձեռքերը)։ *Ա՛հ...*

Մ ա յ ր ը — (Անառած ներս վազելով) *Ի՞նչ բան էր ատիկա. ո՞ւր է Մարին։*

Երուանդ խելագարի պէս կը նետուի աղջկան սենեակը։ Մայրն ու միւսներն ալ անոր ետեւէն։ Ձիչ, շփոթ, սարսափ։

Կը մնայ միայն Մարգարը պատշգամի դռներուն մէջ ապշած ու շուարած, ահագին կարմիր թաշկինակը ձեռքին։

Լուռ։ Եւ դուրսը աւելի մօտիկէն կը լսուի շոգենաւին սոյլը, աւելի խռպոտ ու աւելի յաղթական։



Վ Ե Ր Ջ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՆ

Լևոն Շանթի երկերուն ամբողջական հրատարակութիւնը

Առաջին հատորը լոյս է տեսած Մայիսին. Գեղարուեստական գրուածներ (1891–1894)
1. «Մնաք-Բարովի իրիկունը», 2. «Լեռան ապրիկը», 3. «Երազ օրեր», 4. «Դուբսեցիներ», 5. «Երգեր»:

Երկրորդ հատորը լոյս է տեսած Օգոստոսին. Գեղարուեստական գրուածներ (1896–1904)
1. «Վերժին», 2. «Դարձ», 3. «Դերասանուհին». 4. «Ես-ի մարդը», 5. «Ուբիչի համար», 6. «Ճանբուն վրայ»:


Երրորդ հատորը կը յանձնուի մամուլին ապրիլին. Գեղարուեստական գրուածներ 1909–1921)
1. «Հին ատաւածներ», 2. «Կայսր», 3. «Կինը», 4. «Ճղճայատածը», 5. «Ինկած բերդի իշխանուհին»:

Յաջորդ հատորը ամբողջապէս նուիրուած է հայ գրականութեան ուսումնասիրութեանը. մեր հին ու նոր, անցիր ու դրուագ բանահիւսութեան ամփոփ ու ամբողջական պատկերացումը: Մամուլին կը յանձնուի յառաջիկայ ձմեռ և կը կրէ իններորդ հատոր անունը:

Այս չորս հատորներուն միանուագ բաժանորդ գրուողը կը վճարէ տասը տոլար, կամ երկու և կէս անգլիական, կամ քսանհինգ լիրանական լիրա:

Բաժանորդագրութենէ դուրս իւրաքանչիւր հատորի գինն է՝ եօթը լիրանական լիրա, կամ տասնըվեց չիլին, կամ երեք տոլար և քսան սէնթ:

Հեղինակի հասցէն՝ *Léon Chanth. Collège Arménien ; rue Wadi Abou Djémil, 127, Beyrouth, Liban.*





A II 27105